

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ

Յ Ա.

ՊՈՆՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ

Մ Ա Ս Ն Ա.

ՀԵՏԱԶՉՑԱԿԱՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Ի ՊՈՆՏՈՍ

Յ. Գ. Կ. ԱՆԳԵՐՍՄԵՐ

Մ Ա Ս Ն Բ.

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՀՆԱԽՕՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՉՑՈՒԹԵԱՆ

Ի ՊՈՆՏՈՍ ԵՒ Ի ՓՈՒՔՐ-ՀԱՅՍ

ՓՐ. ԵՒ ԵՒԳ. ԿԻՒՄՈՆ ԵՂՐԱՐՅ

ԹԱՐԳՄԱՆԵՅ

Վ. ՅԱԿՈՎԲՈՍ Վ. ՏԱՇԵԱՆ

ՄԻԻԹ. ՈՒԻՏԵՆ



Վ Ի Ե Ն Ն Ա

ՄԻԻԹ ԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1919.

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ

- Ժ. Շտրեք Մ., Հայաստան, Զրդաստան եւ արեւմտեան Պարսկաստան քարեշական-ատրեստանեայ սեպագրերու համաձայն: Թրգմ. Հ. Բ. Պիլէգիլճեան: 1904: Էջ Է+222: Փր. 3.—
- ԺԱ. Խաչաթեանց Գր., Հայ Արշակունիք ըստ Մովս. Խորենացոյ, կամ նոր ուսումնասիրութիւններ Մովս. Խորենացոյ մասին: Թրգմ. Արսէն Ս. Սիմոնեանց: 1906: Էջ Ը+124: Փր. 1.50
- ԺԲ. Պեղեքսըն Հ., Հայերէն եւ դրացի լեզունները: Թրգմ. Հ. Թ. Կէտիկեան: 1907: Էջ ԺԱ+257: Փր. 5.—
- ԺԳ. Հիւրջում Հ., Հին Հայոց տեղոյ անունները: Թրգմ. Հ. Բ. Պիլէգիլճեան: 1907: Էջ ԺԶ+443: Փր. 7.—
- ԺԴ. Պեղեքսըն Հ., Հին հայերէնիցուցական դերանունները: Թրգմ. Հ. Ե. Տաշեան: 1907: Էջ Է+90: Փր. 2.—
- ԺԵ. Գալեւքեարեան Հ. Գ. Վ., Կենսագրութիւն Սարգիս Արքեպիսկոպոսի Սարաֆեան եւ ժամանակին հայ կաթողիկեայր: 1908: Էջ ԺԳ+433: Փր. 5.—
- ԺԶ. Աճառեան Հ., Հայերէն նոր բառեր նորագիւտ Մնացորդաց գրոց մէջ: 1908: Էջ 38: Փր. —.60
- ԺԷ. Կիւրճեարեան Բ. Ժ. Վ., Եղիշէ, քննական ուսումնասիրութիւն: 1909: Էջ ԻԸ+458: Փր. 7.—
- ԺԸ¹. Ակիւնեան Հ. Ն., Տիմոթէոս Կուզ հայ մատենագրութեան մէջ: Էջ 1—60:
- ԺԸ². Աճառեան Հր., Հայերէն նոր բառեր Տիմոթէոս Կուզի Հակածառութեան մէջ: 1909: Էջ 61—106: Փր. 1.50
- ԺԹ. Ակիւնեան Հ. Ն., Զարարիա Եպ. Գնունեաց եւ իւր տաղերը: 1909: Էջ ԺԲ+87: Փր. 1.—
- Կ. Ակիւնեան Հ. Ն., Կիւրիոն Կաթողիկոս Վրաց: 1910: Էջ ԻԷ+315: Փր. 5.—

ՊՈՆՏԵԿԸՆ ՈՒՍՈՒՄՆԸ ՍԻՐՈՒԹԻՒՆԷ

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ

ՀԻՉ.

ՊՈՆՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ

ՄԱՍՆ Ա-Բ.



Վ Ի Ե Ն Ն Ա

Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն

1919.

ՊՈՆՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ

ՄԱՍՆ Ա.

ՀԵՏԱԶՕՏԱԿԱՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Ի ՊՈՆՏՈՍ

Յ. Գ. Կ. ԱՆԳԵՐՍՋՆԻ

ՄՍԱՆ Բ.

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՀՆԱԽՍՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԵԱՆ

Ի ՊՈՆՏՈՍ ԵՒ Ի ՓՈՒԳՐ-ՀԱՅՍ

ՓՐ. ԵՒ ԵՒԳ. ԿԻՒՄՈՆ ԵՂԲԵՐՑ

ԹԵՐԴՄԱՆԵՑ

Հ. ՅԱԿՈՎԲՈՍ Վ. ՏԱՇԵԱՆ


ՄԻՒԹ. ՈՒՍԵՆ



Վ Ի Ե Ն Ն Ա

ՄԻՒԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1919.



Ուրախ ենք որ այսօր կրնանք աւարտել գործ մը, որ տարիներ յառաջ գրուած եւ նաեւ տպագրութեան սկսած՝ երկար բնդհատումներ ունեցած է այլեւայլ պատճառներով: Նախնարար «Հանդիսի», մէջ լոյս տեսած մասս առ մասս, եւ այն՝ երկար բնդմիջումներով՝, այժմ՝ լոյս կը տեսնէ առանձին գրքով: Ընդհատման պատճառներէն կը յիշենք յատկապէս մեր երկարատեւ բացակայութիւնն եւ աչաց տկարութիւնն անոր համար որ թերութեանց առիթ եղած են: Յատկապէս գործոյս առաջին մասը տպագրուած է այսպիսի պարագայից մէջ, որով դժուարին էր հսկել ամէն մանրամասնութեանց վրայ: Ասով այլեւայլ անհաճոյ վրիպակներ սարդած են՝ նաեւ առանձինն տպագրութեանս մէջ: Ռբշափ սակայն այժմ կրնանք տեսնել՝ այս վրիպակաց մեծագոյն մասը դիւրին է ուղղել նոյն իսկ ընթերցողին կողմանէ. միայն քանի մ'էջեր էի են վրիպակներով:

1 Հմմտ. ՀԱ. 1909, էջ 309-312, 362-368. - 1910, էջ 18-22, 83-88, 144-149, 190-192, 221-224. - 1912, սիւն 164-170, 237-250. - 1914, սիւն 139-156, 453-479, 609-625, 718-740. - 1915, սիւն 76-95. - 1916, սիւն 13-67:

2 Մանաւանդ էջ 108-112. Ի մասնաւորի սրբագրելի են այսպէս՝ (էջ 108) բռածեփ. - (էջ 109) նկարագրութիւնն... Փագիմնիտիս... - (էջ 111) Οἰνιάται... Φαζημῶνα κώμη, - (էջ 112) Φαζιωνιτών... Φαզիմնիտիսի... (անդ՝ ծան.) Νεαπολίτιν... Φαζημῶνα... τήν... προσαγορεύσας... (անդ՝ ծան. 1) «... վարը կը յիշատակենք,»: - Մնացեալ վրիպակներն ամբողջ գործոյն մէջ դիւրաւ կ'ուղղուին. եւ աւելորդ համարեցանք Ուղղելեաց ցանկ մը դնել, որ բաւական երկար կ'ըլլար:

Ներկայ Հատորս առաջին եւ այն՝ ուղեգրական մասերը կը պարունակէ «Պոնտական Ուսումնասիրութիւնք», երկասիրութեանց շարքին Եարունակութիւնը կը կազմեն՝ գործոյս մէջ անընդհատ յիշուած՝ Արծանագրութեանց յրատարակութիւնն ու լուսաբանութիւնը. եւ դարձեալ՝ պատմական կարեւոր ներածութիւն մը: Որչափ մեզի ծանօթ է՝ լոյս տեսած է յաջորդ Հատորին առաջին կէտը, այսինքն՝ Արծանագրութեանց մէկ մեծ մասը. եւ այն՝ գիտնականէ մը՝ որ իւր Ուղեգրութիւնը չէ հրատարակած Ուսումնասիրութեանց շարքին մէջ, այլ ուրիշ տեղ մը¹: Արծանագրութեանց այս առաջին քաժինը, որ լոյս տեսած է նոյն գիտնականէն², մեծ բնորոնելութիւն գտած է գիտնոց կողմանէ, որոնք կը գովեն զայն իբրեւ օրինակելի երկ մը, մեծ իմամբով

1 Henry Grégoire, Rapport sur un voyage dans le Pont et la Cappadoce, *ի* Bull. Corr. Hell. XXXIII, 1909, p. 3-170, *երեք քարտէսներով*:

2 J. G. C. Anderson. F. Cumont et Henry Grégoire, Studia Pontica. III, Recueil des Inscriptions grecques et latines du Pont et de l'Arménie, Fasc. I Bruxelles 1910, p. 258. Բազմաթիւ մատենախօսական-ներէն յիշենք L. Jalabert եւ G. Jerphanion *ի* MFO. V, 1 (1911), p. XXX-XXXVIII. Վերջին գիտնականս, որ մեծագործ ուսումնասիրութեանց ձեռնարկած է Գամրաց, աշխարհի մասին, կարեւոր բնութիւններ ըրած է Պոնտոսի մասին ալ: Յիշենք միայն հետեւեալքը. P. G. de Jerphanion, Ibora-Gazioura? Etude de Géographie Pontique, *ի* MFO. V, 1 (1911), p. 332-354. ուր բաժնելով երկուքը՝ զիրորս կը գտնէ արդի Իվէր-էօնի տեղը: Գրութիւնս կարեւոր է Հելլենոպոնտոսի, Պողմոնականին եւ Բ Հայոց սահմանաց համար: Դարձեալ՝ P. G. Jerphanion, Notes de Géographie Pontique, I. Kainochorion, II. Pédochthoë, *ի* MFO. (Բէյրութ) V, 2 (1912), p. 135-141 եւ 142-144 (Տխտ. ԺԸ-ԺԹ): Կենդորդին ըլլայ արդի Մահալլա-կամ Էէվկիր-Կալէսի: - Պետոթթոյէ, արդի Բեղոխտոն, կոչուած նաեւ Հերակղէոպոլիս, քստ ժամանակաց եւ պատմական պարագայից՝ վերաբերած է Ա եւ Բ Հայոց: Զանց կ'անունը այս եւ այլ գիտնոց ուրիշ գրութիւնները յիշել այս տեղ:

երկասիրուած, պատմական-աշխարհագրական տեղեկութեամբ լի հիմնական եւ սքանչելի գործ մը: Առ այժմ հրատարակուած Գ մասը կը պարունակէ արժանագրութիւններն՝ Ամիսոսի, Նէոկղաւղիոպոլսոյ, Փազիմնիտեայ, Լմասիոյ, Եւքայիտայ, Գաղատականի սահմանագծին, Զելայ եւ Գազիւայ: Երկրորդ կէսը, որ ընդ մամուլ կ'ըսուի, պիտի պարունակէ արժանագրութիւնները՝ Սեբաստոպոլսոյ, Սեբաստիոյ, Կոմանայ, Նէոկեսարիոյ, Տրապիզոնի, եւ ապա՝ Նիկոպոլսոյ եւ Փոքուն-Հայոց: Թէ նրբ կ'աւարտի այս վերջին բաժինը, եւ մանաւանդ նրբ ի գլուխ կ'ելէ ամբողջական գործը՝ շնք զիտեր, մանաւանդ այս համայնաշինչ պատերազմի շրջանէս ետքը: Յամենայն դէպս՝ առանց ի նկատի ունենալու մնացեալ Մասերն ալ, ներկայ հատորս՝ նաեւ այս փճակիս մէջ՝ յինքեան ամփոփ եւ օգտակար գործ մըն է իբր գիտնական-ուղեգրութիւն մը:

Ի վերջոյ յարմար տեսանք կցել Տեղեաց անուանց ցանկ մը, որով աւելի դիւրութիւն կ'ըլլայ ուզուած տեղերը գտնելու: Իւրաքանչիւր պատշաճ տեղեր նշանակած ենք՝ քաց ի հին կամ նոր համագօր անուններէ՝ նաեւ գործոյս Հատածները (§§) եւ գլուխները՝ իրենց էջերով, որոնք քաց աստի նշանակուած են նաեւ իւրաքանչիւր իջի վրայ: Այս ամէնը՝ կը յուսանք՝ օգտակար կը դատուի մեր ընթերցողներէն: Չենք կրնար փակել այս տողերն՝ առանց յիշատակելու այն դառն կսկիծը, զոր զգացած ենք եւ կը զգանք այս ա՛ռելի քնաջնջման տարիներս, որուն ենթարկուած է ընդհանուր Հայութեան հետ՝ նաեւ Պոնտոսի եւ Փոքր-Հայոց հայութիւնն, որուն համար առանձնապէս հետաքրքրական էր այսպիսի հրատարակութիւն մը:

ՊՈՆՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ

Առիթ ունեցանք ժամանակին՝ համառօտ տեղեկագրութեան մը մէջ՝ մատնանիշ ընել նշանաւոր երկասիրութիւն մը, որ նոր լոյս տեսնել սկսած էր, «Պոնտիկան Ուսումնասիրութիւն» (Studia Pontica) հաւաքական անուան ներքեւ: Թէեւ այսօր ալ տակաւին վերջնականապէս աւարտած չէ, բայց գոնէ ամբողջացած է ուղեգրական մասը: Հնասիրտ ուղեւորաց նպատակն եղած է, այլեւայլ ուղեւորութեամբք, հետազօտել Պոնտոսի (— այն ընդարձակութեամբ՝ որ այս անունը կը կրէր իբր հռոմէական նահանգ, —) եւ Փոքուն Հայոց՝ նոյնպէս իբր հռոմէական շրջանին տարածութեամբ՝ ամէն կողմերը, պրպտելով նոյն ժամանակի մնացորդներն ու աւերակները, առանձնապէս ուղիներու գծերը, հաւաքել արձանագրութիւնները, եւ ջանալ հնագոյն բնակավայրերուն արդի տեղերը կարելոյն չափ ճշգրտել: Թէ այս ամէնուն մէջ որչափ յաջողած են՝ պիտի ցուցնէ յաջորդ հետազօտական ուղեգրութիւնը, զոր մեր ընթերցողաց կը ներկայացընենք թարգմանութեամբ:

Ուղեգրութիւնս երկու անջատ մաս է, տարբեր հեղինակաց ալ գործ, մին՝ անգղիներէն բնագրով, միւսը՝ գաղղիներէն, եւ սակայն զերար լրացընելով ամբողջութիւն մը յառաջ բերած են: Առաջին մասը՝ «Հետազօտական Ուղեւորութիւն ի

Պոնտոս՝ զործ է ԱՆՏԷՐՆԷՆ՝, որ արդիւնք է զանա-
զան ուղեւորութեանց: Ինչպէս Յառաջարանին մէջ
կը նշանակէ², Հեղինակը Փոքուն Ասիոյ կենդրոնա-
կան եւ արեւելեան զաւառները՝ որոշ ծրագրի մը
հետեւելով՝ հետազօտելու սկսած է 1896ին³, եւ
անոր նուիրած է 1899ի ամառուան ամիսները՝ շրջա-
գայելով Արեւելեան Գաղատիան ու Պոնտոսի մէկ
մասը, Յուլիսի վերջին կիսուն եւ Օգոստոսին ու-
ղեկից եղած են իրեն նաեւ J. A. R. Munro եւ F.
B. Welch, որոնք իրեն հետ միացած են Սամսոնի
մէջ Յուլիս 19ին, եւ այնուհետեւ միասին հետա-
զօտած են Եւզոկիոյ գաշտավայրը (հին՝ Գաղիմանի-
տիս) եւ մաս մ'այն գծին՝ զոր կը յուսային այն ա-
տեն ցուցնել եւ յետոյ իրօք յաջողած են ապա-
ցուցանել իբր կարեւոր Հռոմէական ուղեգրի մը՝
Սատաղայի սահմանագլխէն մինչեւ Բոսփոր, անց-
նելով Նէոկեսարիոյ (արդի՝ Նիկսար) եւ Պոմպէո-
պոլոյ (արդի՝ Թաշ-քէօփրիւ) վրայէն: Հեղինակին
նպատակն էր թէ եւ ամբողջ ուղեւորութեան լիակա-
տար տեղեկագրութիւն մը հրատարակել, երբ
տպաւորութեան թարմութիւնը տակաւին չէր խամ-
րած՝ ժամանակի անցմամբ. բայց արգելուած էր
անակնկալ ստիպողական զբաղումներով, եւ միայն
ժամանակ գտած էր ծաղկաքաղներ ընելու, որ լոյս
տեսած են «Հելլենական Ուսումնասիրութեանց»

1 Studia Pontica, I. A Journey of Explora-
tion in Pontus, by J. G. C. Anderson, of Christ Church,
Oxford, formerly fellow of Lincoln College. Bruxelles
1903. pp. 1—104. բազմաթիւ պատկերներով եւ ինն քար-
տէսներով:

2 Անդ, էջ 1—2:

3 Հեղինակին առաջին ուղեւորութեանց արդիւնք-
ները մեծաւ մասամբ հրատարակուած են «Հելլենական Ու-
սումնասիրութեանց» մէջ՝ Journ. Hell. Studies, 1897,
p. 396ff; 1898, p. 31ff եւ 340ff; 1899, p. 34ff եւ 280ff.

մէջ¹։ Նոյն թերթին միեւնոյն համարին մէջ Munro հրատարակած է մղոնաքարերու շարք մը, զորոնք միասին գտած էին Պոնտական ուղեգծին երկայնքը², եւ յետոյ հանգանակած է պատմական ուսումնասիրութիւն մը՝ «Արքունի եւ Հռոմէական Ուղիներ ի Պոնտոս»³, առանձնապէս մտադիր ըլլալով այն նոր ուղեգծին³։ F. Cumontի, որ առաջին ուղեւորաց շաղկին հետեւած է եւ անոնց գործն այնպիսի մեծ յաջողութեամբ լրացուցած ու ընդարձակած, բարեկամական խնդրանքը յետոյ բարեպատեհ առիթ եղած է Հեղինակին համար նոյն ուղեւորութեան լիակատար տեղեկագիրը յօրինելու՝ որչափ որ Պոնտոսի հետ կապ ունէր, այս անուան ընդարձակագոյն իմաստով։ Որովհետեւ, կ'ըսէ, եթէ նոյն իսկ կարենայինք «Պոնտոսի» ճիշդ սահմանները ճշգրտօրէն որոշել, չէինք կրնար զանի բոլորովին անջատ ու զատ նկատել իւր դրացի գաւառներէն։

Տեղեկագրութեան առաջին մասին մէջ, կը յաւելու, որ մասամբ Պոնտոսի եւ Գաղատիոյ միջեւ եղած եզրաշխարհով կը զբաղի, պարզաբանութեան միատարր յարակցութեան եւ պայծառութեան համար անհրաժեշտ երեւցած է տեղ տեղ մէկդի թողուլ հետազօտութեան ժամանակագրական կարգը։ Բայց այնուհետեւ նկարագրութիւնը կրկին կը կապուի ուղեշուին իրական գծին։ Ի վերջոյ Հեղինակը այսպիսի պակասութեանց համար՝ զոր ընթերցողը կրնայ գտնել, եւ որոնք իրեն ալ քաջածանօթ են՝ կը խնդրէ ընթերցողին ներսպամտութիւնն այն պատճառաւ որ իւր պաշտօնական պարտաւորութիւնքն այնպէս ծանրաբեռն կը ծանրանային իւր վրայ, որ պարապոյ դոյզն ժամանակ թողուցած են իրեն այս տեղեկագրիս պատրաստութեան եւ այս-

¹ Journ. Hell. Stud. 1900, p. 151ff.

² Անդ, p. 159ff.

³ Munro, Roads in Pontus, Royal and Roman. I JHS, 1901, p. 52 ff.

պիտի գործի մ'անհրաժեշտ պահանջած մանրամասն ուսումնասիրութեան համար: Սակայն, կը կնքէ իւր Յառաջարանը, մատեանս նաեւ այնպէս՝ ինչպէս որ է՝ կը ներկայացընէ իրբեւ նպաստ մը հետաքրքրական աշխարհի մը մերանրաւական ծանօթութեան:

Երկրորդ մասը բուն իսկ երկասիրութիւնն է եղբարց Փր. եւ Էւգ. Կիւմոն, «Ուղեւորութիւն հնախօսական հետազոտութեան ի Պանտսս եւ ի Փոքր Հայս»¹ բնականապէս շատ աւելի բնդարձակ ամէն կողմանէ, բնագրով, պատկերներով եւ քարտէսներովը²: Այն ուղեւորութիւնն՝ որուն նկարագրութիւնն է ներկայ երկասիրութիւնը, ձեռնարկուած էր 1900 տարւոյ գարնան՝ այն երկրին մէջ, ուր շրջագայած էին կանխաւ վերոյիշեալ գիտնականք (Anderson, Munro եւ Welsh), վերջին ուղեւորք, ինչպէս Յառաջարանութեան մէջ կը բացատրուի³, ջանացած են խորշիլ այն ճամբաներէն՝ զորոնք կտրած անցած էին նախընթացները. միայն թէ անհրաժեշտ էր կրկին անցնիլ այլեւայլ պատմական նիւտերէ կամ՝ բնակավայրերէ, ուր անոնք ալ եղած էին: Այս պարագային՝ շատացած են բնութեցողը խաւրելով անգղիացի աշխատակցին երկասիրութեան, անոր նկարագրութեանց վրայ երբեմն աւելցընելով նոր տեղեկութիւններ: Այս երկու տեղեկագրութիւններն բոս այսմ՝ զերբար փոփոխակի կը լրացընեն, այնպէս որ երկուքը միասին կ'ընդգրկեն Պանտսսի եթէ ոչ ամէն՝ զոնէ զլիսաւոր հին քաղաքներն եւ ուղիները:

¹ Studia Pontica, II. Voyage d'exploration archéologique dans le Pont et la Petite Arménie, par Franz Cumont, professeur à l'Université de Gand, et Eugène Cumont, prof. à l'École de Guerre. Bruxelles 1906. pp. 105—375, քարտէսք՝ Ժ—ԻԷ եւ լնդհանուր քարտէսիկ մը, բազմաթիւ մեծ եւ փոքր պատկերներ:

² Անգ. էջ 107—109:

Երկու հեռախոյութեանց տարածութեան սահմանները, կը շարունակէ, իրարու բոլորովին ճշգիւ շէն զուգարկոյիր: Անդերսըն գեղերած է աւելի Գաղափայի կէ Գոնտոսի սահմանազրութեան բուն վրայ. իրենք յառաջացած են աւելի յառաջ, դէպ ի Հոյսատան: Արեւելեան այս երկրորդութիւնը կարած անցած էին 1894ին՝ Hogarth եւ Yorke, եւ 1891ին Hogarth եւ Munro.² Սակայն, կը յաւելու, անոնց ուղեգրերը շատ քիչ շօշափման կէտեր ունին ներկայ ուղեւորութեան հետ. եւ անոնց խոյարհութիւններէն օգտուած է գլխաւորաբար արձանագրութեանց հաւաքման համար:

Երկու եղբայր ի միասին կատարած ուղեգնացութեանց ատեն գործը բաժնած էին ձեջերնին՝ իրենց աստիութեանց համաձայն: Եւզ. Աիւման յանձն առած էր, կ'ըսուի, ուղիները ծրագրել եւ աշխարհագրական գննութիւնքը ծանօթագրել. ինքը՝ Փր. Աիւման՝ պատասխանատու է երկրին արձանագրութեանց եւ հնարասութեան մասին եղած տեղեկութեանց: Ներկայ հատորիս պատրաստութեան ժամանակ ալ Եւզ. Աիւման գծած է քարտեանները, որոնք սահմանուած են լրացրնելու եւ ուղղելու Անատոլիոյ այս մասին ցոյժմ մեր ունեցած շատ թերակատար քարտեանները. իսկ ինքը՝ Փր. Աիւման՝ ձեռնարկած է խմբագրելու բնագիրս եւ հրատարակելու արձանագրութիւնները՝: Բայց, կ'ըսէ, ուրիշ գրադումներով պատաղած՝

¹ Հմեռ. Yorke, ի «The Geographical Journal», VIII, 1896, p. 450ff.

² Modern and ancient roads in eastern Asia Minor ի «Roy. Geogr. Society, «Suppl. Papers», III, 1893, p. 643ff.

³ Արձանագրութեանց մասը, որուն իւրաքանչիւր թուերը կարգաւ եւ յաճախ կը յիշուին ներկայ հատորիս ձեջ, եւ գլխաւորներուն գանուելու տեղերն ու ոմանց ալ պարունակութիւնը համառօտիւ կը յիշատակուին, տա-

ստիպուած էր յաճախ մէկգի թողուլ եւ նորէն սկսիլ այս երկասիրութիւնը, եւ կը վախճայ թէ երկիս մէջ զգալի ըլլան այս ընդհատումները: Սակայն կը յուսայ թէ նաեւ այսպէս՝ ինչպէս որ է, օգտակար հանգանակութիւն մըն է արեւելեան Փոքուն Ասիոյ ծանօթութեան համար, որ ցայժմ շատ քիչ խուզարկուած է: Յաջորդները, — կը կնքէ իւր խօսքը՝, — պիտի աւարտեն այս գործը:

Մեր թարգմանութեան մասին ալ քանի մը դիտողութիւններ ունինք ընելիք: Թարգմանութիւնն ամբողջական է: Թերեւս մէկ երկու տեղ ամփոփուած ըլլալու էին Ծանօթութեանց մէջ յետնագոյն բիւզանդեան մատենագրաց կոչումներն՝ ըստ իմաստին: Բայց այս մէկ երկու տեղերն այնքան աննշան են՝ որ չէր արժեր ծանրանալ, եւ ամբողջութիւնն որեւէ կերպով խանգարել: Աւելի իրաւամբ քանի մը տեղ աւելորդ էր պահել այն

կաւին լոյս տեսած չէ՝ որչափ մեղի ծանօթ է: Բաց աստի լոյս պիտի տեսնէ Պատմական Ներածութիւն մը: Հեղինակը վերջերս կատարած է ուղեւորութիւն մ'ալ Կոմագենէ եւ Եփրատեօիա աշխարհները: Այս ամէնուն մասին ներկայ երկէս յառաջ ու ետքն ալ՝ բազմաթիւ հրատարակութիւններ ըրած է այլեւայլ տեղեր, գործք հոս մի առ մի յիշել աւելորդ կը համարինք: Մաս մը յիշուած են գրքիս մէջ այլեւայլ տեղեր:

1 Ի վերջոյ շնորհակալ կ'ըլլայ այն ամէնուն՝ որոնց անսկիզբութեամբ կամ պաշտպանութեամբ կարելի եղած է ձեռնարկել եւ յաջողութեամբ գլուխ հանել այս հետազոտական արշաւանքը: Աւելորդ կը համարինք մի առ մի յառաջ բերել այն ամէն անունները՝ սկսեալ Բեղգրոյ Հասարակաց կրթութեան Նախարարէն մինչեւ Տրասպիզոնի Սերաստիոյ եւ Կարնոյ Օսմ. Իշխանութիւնները: Առանձնապէս կը յիշատակուի Պր. Otto Benndorf ի Վիեննա, որ Ուղեւորաց արամադրութեան ներքեւ գրած էր՝ իրենց Վիեննա եղած ժամանակը՝ Ասորիական Հնախօսական Ընկերութեան հասցած յիշատակարանները:

Հարեւանցի գիտողութիւնները թէ յիշեալ տեղերն այսօր որչափ յոյն բնակչութիւն մնացած է, նոյն իսկ ի բնէ հայկական բնակավայրներու մէջ: Նկատելով Հեղինակին տեսակէտը՝ այս գիտողութիւններն արդարացի էին. մեզի համար անշուշտ աւելորդ՝ բայց հոս հոն ցրուած քանի մը նման նախադասութիւններ կրճատելով՝ համառօտութեան կողմանէ օգուտ մը չէր ըլլար. ուստի թողուած են անոնք ալ: Ասոր փոխարէն օգտակար էր թերեւս յաւելուլ հայկական բաժինը: Միջոց մը միտք ունէինք ընուլ այս թերոյթը: Բայց գործադրութեան համար բաղմամբիւ արգելքներ կային: Նախ գործը չափազանց ծանրաբեռնել պէտք պիտի ըլլար. եւ երկրորդ՝ օգուտը համեմատաբար քիչ: Գրքին նպատակն է երեւան հանել հռոմէական շրջանի հնութիւնքն, եւ երկրորդաբար՝ զլիսաւոր կէտերու մասին՝ ակնարկել բիւզանդեան շրջանը: Արդ ճիշդ յիշեալ հնագոյն շրջանէ հայկական աղբիւրներն ու յիշատակարանք շատ քիչ են, — կամ հազիւ ծանօթացած, — այնպէս որ տակաւին երկար ուսումնասիրութեանց պէտք կայ լիովին պարզաբանել կարենալու համար այս ամէն կողմանց հայ ժողովրդեան պատմութիւնն, որ կանուխէն ստիպուած էր անջատ ապրիլ Մեծ Հայոց իւր հայրենակիցներէն: Ներկայ գրքիս մտադիր բնութեցումն իսկ պիտի ցուցնէ թէ երկրիս բնակավայրներուն մեծ մասն այս շրջանին կը ներկայանայ օտար կերպարանօք մը, յիշատակարաններն ըլլալով կամ պետական կամ ինքնօրէն քաղաքներու, որոնք իբր հելլենացման կենդրոն կը նկատուէին եւ իրենց յիշատակարանաց իբր պաշտօնական լեզու կը գործածէին բնականապէս յունարէնը (լատիներէնը՝ գրեթէ միայն հռոմէական զինուորական վարչութեան կողմանէ): Նաեւ առանձնականք իբր ժամանակին համաշխարհական եւ քաղաքակրթութեան լեզու՝ յունարէնը գիտէին ու կը գործա-

ձէին: Սակայն այս քաղաքային կեանքէն դատելու չէ միշտ բուն ժողովրդեան կեանքը, որմէ սակայն քիչ են յիշատակարանները: Իսկ այն ժամանակը, ուսկից կրնայինք աւելի առատութեամբ յիշել հայ աղբիւրն ու յիշատակարանները, գրքիս ծրագրէն դուրս կը մնայ, նաեւ Բիւզանդեան այն շրջանը՝ երբ այս երկիրներուս մեծագոյն մասն՝ ինչպէս նաեւ գրքիս շրջանէն դուրս մնացող դրացի երկիրներուն մեծ մաս մ'ալ միասին կը կազմէին Հայկական բանակաթեմը, որ Բիւզանդեան պատմութեան մէջ այնպէս մեծ դեր խաղաց: Ա'արժէ որ այս ամէն կողմերուն պատմութիւնն առանձինն ուսումնասիրուի, — ցայժմ իսկ ծանօթացած աղբիւրք բաւական առատ ատաղձ կը մատակարարեն, — սրով երեւան հանուի հայ ժողովրդի բաւական ստուար մասի մը անցեալը: Գրքիս նման ապագայ հետազոտութիւնք՝ չենք տարակուսիր՝ աւելի պիտի ճօխացընեն ու դիւրացընեն այսպիսի հետաքրքրական ձեռնարկ մը: Եթէ ներկայ երկը դրդիւ մ'ըլլայ այն ամէն կողմանց մեր ազգայնոց՝ աւելի ուշագիր ըլլալու իրենց շուրջ գտնուող հնութեանց՝ ինչ լեզուաւ եւ ինչ ազգէ ալ ըլլան, մեր աշխատութիւնը լիովին իր նպատակին հասած կ'ըլլայ: Մէկ երկու տեղ մեր աւելցուցած գիտողութիւնքն ինքնին կ'որոշուին:

Առջմանց մէջ այն ամէն տեղերը՝ որոնք մատչելի էին նախնեաց թարգմանութեամբ, բնականապէս գրուած են՝ բնագրին քով՝ այն թարգմանութեամբ: Ուր կ'առջմանց իմաստը Հեղինակն որեւէ կերպով բացատրած էր՝ գրուած են բնագիրներն առանց թարգմանութեան: Միւս տեղերն աւելցուցինք թարգմանութիւնը: Սակայն՝ ուր աշխարհիկ լեզուաւ գրած ենք, նշան է թէ ազատ թարգմանութիւն մըն է, միայն բոս իմաստին եւ ոչ բառացի, որուն պէտք չենք տեսած, կարեւոր տեղեր միայն ի բաց առնելով:

Այսպիսի երկի մը մէջ՝ ուր բազմաթիւ հին անուանց քով ամէն քայլին կը հանդիպին նորեր, եւ այն՝ թուրքերէն անուններ զաւառական արտասանութեամբ, բաւական խառնակութեան վտանգ կայ: Միօրինակութեան համար որոշեցինք ամէն անունները մետրոպեան ուղղագրութեամբ գրել (Ռուսահայոց համեմատ): Եթէ թրքերէն անուններն ստով քիչ մ'անսովոր երեւոյթ ալ առնուն՝ մեծագոյն օգտին փոխարէն դոյզն է վնասը: Բայց ուր թաւ տառերը կարելի էր գործածել՝ նախընտրեցինք զանոնք, որով +էջ, +ե-ի-ի-, Բ-ը եւն (փխ. իէջ, իեօրէ-, Գ-ը, եւն) բացառարար նաեւ յաճախ կրկնուող Գ-ը (լեռ, փխ. «Գ-ը»): Ասոնք՝ բաց անկէ որ երկու գրական լեզուաց հաւասար հնչիւններ են, աւելի համապատասխան ալ են թրքականաց: Ուր շփոթութիւն մը կրնար ծագիլ՝ փակագծի մէջ աւելցուցինք միւս ուղղագրութիւնը (եւ կամ եւրոպական տառերով): Բնական է որ պահէինք սովորական հայ ձեւերը, ուստի օրինակի համար Սէք-տէ-, Մ-ը-ը-ն եւն, թէեւ բնագիրը գրէր ըստ նորագոյնին «Սը-ը, Մ-ը իճ-ն» եւն: Քանի որ վերջնական միակերպ ուղղագրութիւն մը կը պակսի երկու բաժնի Հայոց մէջ, այսպիսի դժուարութիւնք միշտ երեւան պիտի գան:

Կը ցաւինք որ մեր կամքէն անկախ շէնք կրնար զարգարել այս էջերը բնագրին բազմաթիւ գեղեցիկ նկարներով տեղերու եւ հնութեանց, եւ մանաւանդ բազմաթիւ քարտէսներով, որոնք առանձին կարեւորութիւն մ'ունին այս կարգի հետազոտութեանց համար: Նաեւ ընդհանուր քարտէս մը՝ ուր նշանակուած ըլլային նոր հետազոտութեանցս արդիւնքները, անկարող եղանք կցել: Բնագրին մէջ նշանակուած են իւրաքանչիւր տեղւոյ վերաբերեալ պատկերները («Պակ.» համառօտութեամբ) եւ քարտէսները (թուով):

Ասով պէտք չի մնար հոս մանրամասն թուելու այն ամէնք :

Արշափ ալ մեր սկզբունքն բլլայ՝ թարգմանութիւն մը՝ բնագրին հաւատարիմ մնալով հանդերձ՝ ըստ կարելւոյն ազատ ընել, կը տեսնենք վերջին պահուստ որ յաճախ բաւական ստրկական եղած է : Պարապոյ ժամանակ չունենալով՝ ամբողջն ի հիմանց բարեփոխելու, այս եւ նման թերութեանց համար, որոնք անմտազրութեան արդիւնք բլլան, կը յուսանք թէ ներդաժնութեան կ'արժանանանք :

Մ Ա Ս Ն Ա .

ՀԵՏԱԶՕՏԱԿԱՆ ՈՒՂԵԻՈՐՈՒԹԻՒՆ Ի ՊՈՆՏՈՍ

Յ . Գ . Կ . ԱՆԳԵՐՍԸՆԻ

ՀԵՏԱԶՕՏԱԿԱՆ ՈՒՂԵԻՈՐՈՒԹԻՒՆ

Ի Պ Ո Ն Տ Ո Ս

Ա. Իսկելիբէ Ամասիա:

§ 1. *Իսկելիբ*: — Պոնտոս մտայ Իւլիւսէ, ուր
Հասոյ Յունիս Չին իրիկունը, Անկիւրիոյ եւ Գան-
գրայի (Չանգրի կամ Աիանդրի) ճամբով: Քաղաքը
Հռոմէական ուղւոյն մօտը կ'իյնայ, այն ուղեգծին
որ Նեոկեսարիայէն դէպ ի արեւմուտք կ'երկարէր՝
Ամասիայէն ու Գանգրայէն անցնելով: Ապացոյց է
Պոմպէոս Բաստի մղոնաքարը, այժմ ազուցուած
կամրջին մէջ՝ որ ձգուած է քաղաքին մէջէն Հոսոզ
դետին վրայ¹: Մղոնաքարին կրած թիւն է 80 m. p.
(80 Հազար ոտք = 74½ անգղիական մղոն կամ
120 քիլոմետր,) ուղեգծին սկզբնաւորութիւնը
(caput viae “գլուխ ճանապարհին”) բլաւով յայտ-
նապէս Ամասիա, որ իբր 74 անգղ. մղոն հեռու է
Իսկելիբէ²: Ուստի կ'երեւայ թէ քարն իւր նախնա-
կան տեղւոյն մօտերը մնացած է. բայց միւս կող-
մանէ տարակոյս չկայ թէ քարն այս տեղը բե-
րուած էր Աղիւսի հովտէն, որովհետեւ այժմու քա-
ղաքն ուղեգծէն քանի մը մղոն վեր կ'իյնայ՝ բլուր-

¹ CIL, III, Suppl. 6897.

² Ըստ հանդուցեալ ուսուցչապետ Գ. Հիրշֆելդի՝ որ
մղոնաքարը գտած է, քաննու չորս ժամ հեռու:

ներու անել բազմ մը մէջ, ուսկից որեւէ եւր շիւղ՝ բայց միայն լեռներու վրայէն զժուարակոխ արահեաններով:

Իսկելիք տաճկական քաղաքներու երրորդ գասակարգէն է, որ «*Էրզրում*» մը կը նստի Պեղեցիկ գիւղք Մուշի՝ երկայն ու նեղ ձորի մը ծայրը, որ լի է պարակներով ու այգեստաններով: Ատեւր ջրուած կանգնած են՝ մերկ քարածայրի մը գագաթը թառած հին բերդի մը վեհաստիւ աւերակները: Ներսը հիմայ բնակելի աներով լի է, բայց տակաւին կեցած են պարուպոյց գունն ու անկիւնները. (Պակ.): Բլրան սաքը կը գանուին երկու վիմափոր կոշտ գործուած գամբաններ, մին՝ Պարիական ճակատով եւ սրածայր յարկով, միւսը՝ բոլորածե յարկով եւ պսակաքուով մը՝ զոր վեր կը բռնեն երկու սիւներ որ առիւծազլուխ խոյակներով են եւ զարգարուած են մաշած քանդակազարգով մը, որ ըստ երեւութիւն կը ներկայացրնէ երկու թեւաւոր անձեր, ձախ ձեռքով անօթ մը բռնած, եւ թռուցիկ աջին մէջ՝ առարկոյ մը (թերեւ՝ ստ): Բայցի զգեակէն՝ հնութեան շատ քիչ մնացորդներ կը տեսնուին: Արտուի թէ արդի քաղաքն անագանագոյն ժամանակի հիմնարկութիւն մըն է, եւ թէ հնագոյն քաղաքին գիւղքն եղած ըլլոյ ձորին աւելի վարը պարակներուն մէջ: Քաղաքիս հին անունն անորոշ է: Արեւրդ կ'առաջարկէր նոյնացրնել Արտու-Նե-ձ-ձ-ձ-ձ-ձ հետ. եւ այս թելագրութիւնն ընդունած էր Ռամսէյ՝: Բայց այս տեսութեան սխալ ըլլալն ապացուցուեցաւ մեր գտած այն արձանագրութեամբն՝ որ յիշեալ քաղաքին գիւղքը կ'որոշէ այժմու Աէզիր-Քէօփրիւի կողմերը (տես վարը՝ § 41): Առաջարկենք առ այժմ՝ համարիլ Պարտի-Բր (Dadybra,) որ Բիւզանդեանց ժամանակ եպիսկո-

¹ Ramsay, Hist. Geogr. of Asia Minor., p. 320 n.

պոսանիստ եղած է եւ զոր Կոստանդին Ծիրանածին
կը յիշէ իբր Պափղագանդոյ բանակաթմեմն վեց
քաղաքներէն մին¹ :

§ 2. Իսկելիրէն ելլելով Յունիս Յին՝ Հեաա-
գոսեւ սկսոյ Հոսմէական ուղեգիծը դէպ ի Ամա-
սիա: Գէպ ի Չորում տանող ճամբան ժամ մը եւ
աւելի ալ՝ պարտեզներուն մէջէն, որ գետին երկու
եզերքները կարգաւ տողում կը ծածկեն, սլորապը-
տոյս դառնալով՝ մեզմ լեռնագրերու վրայէն
կ'իջնայ դէպ ի Աղիւս գետ, ուր Իսկելիրէն կը հաս-
նաի Չ¹/₂ ժամու մէջ: Գետը կ'անցնիինք զուտ
Անատոլեան սճով լաստանաւակով մը, որ հար-
թայատակ եռանկիւնի գետակուր մըն է՝ զոր եր-
կայն ձողերով յառաջ կը մղեն: Փոխապրութեան
այս նախնական կերպն այժմու պիտոյից համար
բաւական է. որովհետեւ ուղեգիծն այժմ լիակա-
տար անկամութեան մէջ է, եւ աւելարական կա-
ռաց երթմեակութեան շի գործածուիր: Տարակոյս
չկայ թէ Հոսմէական ուղին կամուրջ մ'ունէր հաս,
բայց որեւէ հետք մը չկրցանք տեսնել: Թերեւս
մեծ սխալ մը չենք գործեր բնդունելով թէ այս
տեղ ուր կ'իսած ենք Պանտական հողի վրայ²:
Գետն անցնելէն աւար վայրիկեան վերջն անցանք
Թ—չլ—բ—բ—բ—նի ագարակէն (չէ՞՞՞՞), Իսկելիրէն

¹ De Them., p. 30.

² Տակաին անորոշ կը մնայ Պափղագանդոյ եւ
Գաղատական Պանտասի մէջ եղած ճշգրիտ սահմանագիծը:
Մէկ կողմանէ այժմ գիտենք (§ 41) թէ Պափղագանդոս Թաւ-
շան-ապի հիւսիսակողմը կը տարածուէր բաւական միջոց
մը Աղիւս գետէն անդին (գետին արեւելակողմը.) եւ թե-
րեւս նոյնպէս էր հաս ալ: Միւս կողմանէ՝ Պանտաս կը տա-
րածուէր մինչեւ Աղիւս գետ՝ Թաւշան-ապի հարաւակողմը
(Սարարոն՝ էջ 561—2, եւ վարը § 42.) եւ շատ հաւանա-
կան է թէ գոնէ Չորումի գաւառը Գաղատական Պանտասի
մէջն էր:

9.9 անգղ. մղոն հեռու¹. և այժմ բլրոց մէջ նեղ հովտէ մը վեր կ'ելենք: Թուղուբուբունէն 50 վայրկեան ետքը կը հասնինք Հ-Քէյ գիւղը՝ հովտին ձախ եզրը, և ասկէ դարձեալ 27 վայրկեան ետքը՝ հարաւ-արեւելեան ուղղութեամբ երթալով՝ կ'անցնինք Բ-Բ-օղլուն, նեղ ձորին միւս կողմը, ուսկից շրջան մը կ'ընենք Տ-տի (Tul) մօտ և դարձեալ կը հասնինք շիտակ ճամբան՝ Բարա-օղլունէն մէկ կամ երկու մղոն անդին: Այս գիւղերէն և սչ մէկուն մէջ հնութիւններ գտանք: Հովտան երթալով կը նեղնայ և կը փոխուի կրճի մը (ածկ. Բ-ղ-ղ), որ օձապտոյտ կը դալարի գէպի վեր մացառապատ բլուրներու մէջէն՝ մինչև որ իբր մերձաւորապէս ժամէ մը կը հասնի դադաթը, որ ջրաբաշխ է Աղիւսի (Հալիս) և Հիբիկի (Իբիս) գետաջրերուն: Արահեար կ'իջնայ այնուհետև հեղեղատէ մը՝ որ կը բացուի գէպի Չորումի դաշտը, ուղեւորին էլիսն գիւղը հասնելէն քսան վայրկեան յառաջ, Գագաթն անցնելէն քիչ մը ետքը կը գտնենք որ արահեար հեղեղատուած տարուած է, և մեր սոյլին ճամբոյ մը գտնելու համար ստիպուած ենք ձախակողմն ելլել: Հոս գժբախտաբար մեր ճամբան կորսնցուցինք, այնպէս որ անջրպեաներու շափերը խանգարեցան. սակայն Թուղուբուբունէն մինչև Չորում եղած հեռաւորութեան ամբողջ անջրպեան իբր վեց ժամ է: Ելեմին գիւղը կը գտնուի այն բլրոց եզերքն՝ որ Չորում դաշտը կը սահմանապատեն, քաղաքէն մէկուկէս ժամ հեռու: Երկուքին մէջտեղը կ'իյնայ Գ-ըջ- (Gurdju «կիր-

¹ Ար հեռաւորութեանց անջրպեաները ճշգրտուկորոշութիւն հաշուած են անուաչափի մը (trocheometer) օգնութեամբ գտնուած շափերուն համեմատ: Անուաչափը կապուած էր իմ բեռս կրող կառքին (սոյլին՝ որադ) անուղին: Այս շափերը կը ցուցնեն թէ ժամու մը ներկայացուցած հեռաւորութեան անջրպեար շատ փոփոխական քանակութիւն մըն է:

ճի») գիւղը, ուր՝ ուրիշ արձանագրութեանց հետ (Թ.Իւ. 208—211)՝ դատյ նաեւ պատճենն մ'աւանդական թղթակցութեան Աւուհայի Արգար արքային եւ Քրիստոսի: Նոյն թղթակցութեան ուրիշ մէկ հատակոտորը յետոյ երեւան ելաւ Հաջի-քէոյ գիւղին մէջ (Թ. 223):

§ 3. Չորրորդ ձեռքըստ: — Չորումի դաշտը կերպով մը կը նմանի անկանոն 8 թուականի ձեւին, այսինքն՝ անոր նման կազմուած է կրկին՝ վերին ու վարի՝ դաշտերէ, որոնք իրարու կը կապուին պարանոցաձեւ հոփտով մը, որուն մէջէն Չորումի գետին հաւաքուած ջրերը (Չորմ-Վայ) կը հոսին դէպ ի հարաւ եւ կը թափին Եէնիջէ գետը (Եէնիջէ-Վայ) որ Մէջի-Եւրոպէ-գետին մէկ օժանդակն է: Վարի դաշտն աւելի ընդարձակ է եւ աւելի բերրի, եւ հին ժամանակները ձիթապտուղ ալ կը բերէր: Յանուցիր տարածուած անհետաքրքրական քաղաքը պարանոցին վերը կ'իյնայ, իբր երկու միոն հեռու այն բլուրներու եզրէն՝ որոնք դաշտը կը սահմանապատեն արեւելքէն, ճիշդ այն կէտին վրայ, ուր Գանգրա-Ամասիա ուղին (որուն կը վերաբերի Գեկոսի միւնաքարը, Թ. 448,) կը կտրուի այն վաճառականական մեծ պողոտայէն¹, որ Աեսարիայէն սկսելով դէպ ի հիւսիս կ'ընթանայ՝ անցնելով Եոզղատէ, Ալաջայէ (Աարիսայի մօտ) եւ Մարզուանէ՝ դէպ ի Սամսոն (Ամիսոս): Իւր այս գրից պարտական է քաղաքս նորերս յո-Մասարըճ-Միւն բարձրանալը: Բայց իւր կարեւորութիւնը կապուած չէ միայն նորագոյն ժամանակներու հետ: Գէպ ի հարաւ-արեւելք մեղմով բարձրացող գետնին վրայ՝ շատ տկար գրից մէջ՝ կանգնած է ընդարձակ շորեքկուսի դղեակ մը, շորս անկիւնները պաշտպանուած բոլորչի

1 Տես վարը՝ § 5:

2 Հմտ. § 12 վարը:



աշտարակներով եւ իւրաքանչիւր կողման մէջտեղը երկու շորեքկուսի աշտարակներով, որուն համար կ'ըսուի թէ շինուած բլայ Սուլթան Սուլէյմանէ: Պարիսպները գրեթէ ամբողջովին շինուած են հին ատաղձներով, — շինուածաքարեր, սիւներ, գերեզմանաքարեր, որոնց ոմանք արձանագրութիւն ունին. — իսկ պարսպին ներքը, ինչպէս կը նշանակէ Համիլտըն¹, սանդղաշար մը՝ «որ պարիսպներուն ժայռէքը կը հանէ, ամբողջովին շինուած է խոտորնակի գրուած սիւներով:» Աւելցընէ Համիլտըն թէ բերդին շինութեան գործածուած այս սիւներն ու քարերը բերուած կ'ըսուին Վաբ (կամ Վալէ) Հէմրէ՝ Էյիւլի մօտ. (տես վարը § 10): Անտարակոյս այս աւանդութիւնն արժանահաւատ է: Թէ քաղաքին եւ թէ գերեզմանոցներուն մէջ գտնուած հին քարերուն առատութենէն, ինչպէս նաեւ գրից բնութենէն ու աշխարհագրական կարեւորութենէն դատելով՝ նախապէս մէտ էի Չորումը գաւառին գլխաւոր հին նիսաը նկատելու: Սակայն փաստերը հազիւ տարակուսի տեղիք մը թողուն թէ քաղաքին մէջ այժմ գտնուած հնութեան մնացորդներուն մեծագոյն մասն՝ եթէ ոչ ամբողջը՝ ուրիշ տեղէ մը բերուած բլան²: Ռամսէյ (Hist. Geogr. p. 318 ff.) Չորումը կը նոյնացընէ Եւրոպի հետ, որ Հելլենոպոստոսի քաղաքներէն մին էր, եւ որուն մասին կը յիշատակուի թէ Հոնաց յարձակման ենթարկուեցաւ 508ին³: Եւրայիտա՝ որ նախնաբար Ամասիոյ ենթարկեալ էր, կանուխէն եպիսկոպոսանիստ եղաւ, եւ յետոյ (յամենայն գէպս 680 Յ. Ք. տարիէն

1 Hamilton, Researches, I, p. 378.

2 Երախտապարտ եմ Պր. Վիմենի՝ որ իւր քննադատութեամբ իմ առաջի տեսութիւնս ուղղելու նպատակը:

3 Թէոփանէս, էջ 161. Կեդրենոս՝ Ա, էջ 633: Եւրայիտայի մասին Ռամսէյի տուած տեղեկութեանց վրայ կրնանք աւելցընել՝ Մաղաղաս, էջ 380 (հրտ. Բոն քա-

յառաջ) Ին-ն-է-լ-ն-ի (autokephalos) եպիսկոպոսարանաց աստիճանին բարձրացաւ: Ռամսէյի բերած ապացոյցներն այն դաւառի մասին՝ որուն մէջ փնտռելու ենք քաղաքը, վճռաբար համոզիչ են. եւ դո՛նէ կրնանք ընդունիլ թէ Չորում կը համարուէր Եւքայիտայի: Բաւական որոշ են Հելլենոպոնտոսի սահմանները: Ութ քաղաք ունէր¹, որոնց ամենուն արդի տեղերը՝ ի բաց առեալ միայն Ղեւքայիտա՝ ապահովապէս ճշգրտուած են. այսինքն՝ Ամասիա, Չելա, Իբորա (Տուրհալ՝ § 31,) Անդրապա (Աէզեր-Քէօփրիւ՝ § 41,) Ամիսոս, Ղեւնդոպոլիս-Չալիքոս (Ալաչամ) եւ Սինոպ: Ուստի կը տեսնուի թէ Հելլենոպոնտոս անուամբ յայտնապէս կը նշանակուէր այն աշխարհն՝ որ կը գրանուէր մէկ կողմանէ Աղիւս գետոյն եւ միւս կողմանէ այն գծին մէջ տեղ, որ կ'անցնէր Իբորայի արեւելքէն եւ Չելայի դաշտին հարաւակողմէն, պարունակելով միանգամայն Աղիւսի եւ Սինոպի մէջ եղած ծովեզերքի շերտը: Ասով նաեւ Չորումի շրջակայ դաւառն ալ որոշ կերպով ներփակուած կ'ըլլայ: Համաձայն են նաեւ արձանագրութեանց տուած փաստերն՝ որչափ ծանօթ են. Հելլենոպոնտոսի անունը կը գտնենք երեք մղոնաքարերու վրայ, որոնց երկուքը՝ Չորումի եւ Ամասիոյ ուղեգծին մէջտեղը (Թ. 450—451,) երրորդը՝ Չելայի դաշտին հարաւարեւմտեան եզրին մօտ (Թ. 664.) մինչդեռ աշխարհին հնագոյն Գիոսպոնտոս անունը² կու տայ Աէզեր-Քէօփրիւի արձանաքարը (Թ. 434.) Գարձեալ Եւքայիտա օրւան մը ծամբով հեռու էր Ամա-

դարի.) Թեօփանէսի Շարունակողը՝ էջ 11 (Աեւոնի Ե. Թագաւորութեան օրով.) եւ էջ 354 — Գէորգ Մենակեաց՝ էջ 850 (հրտ. Բոն քաղաքի, Աեւոնի Չ. օրով.)

¹ Յուստինիանու Օրէնք՝ Novell. XXVIII, Հերոկղէս՝ 701:

² Հմմտ. նաեւ Թ. 449, տող 11. (Չորումէ իբր 15 մղոն արեւելք.)

սիայէն¹, եւ կը գտնուէր Գանգրա տանող ճանապարհին վրայ, ուր փախաւ Մակեդոնիոս՝ երբ Հոնք քաղաքն առնելու մտաւ էին²: Արդ Հելլենոպոնտոսէն դէպ ի Գանգրա տանող ուրիշ ճամբայ մը չկայ բաց անկէ՝ զոր այժմ կը կտրենք կ'անցնինք³: Աւստի պայծառ է այն եզրակացութիւնը թէ զԵւքայիտա համարելու ենք Հաջի-բէօյի մօտերը տեղ մը,

1 Բողանդեանց Acta Sanctorum, Փետր. 7 Նախաբանութեան մէջ կը պատմուի (Ա. ԹԷՊԵՐՆԻ ՏԷՐՆԷ Ամստրացոյ վարքէն առնելով). «Իսկ կին սմե բարեպաշտօն զի անուն նորա էր Եւսերի մեծատուն յոյժ, խնդրեաց զմարմին նահատակին Քրիստոսի. գինով եւ իւղով կազմեաց զսուրբ նշխարս նորա, եւ պատեաց ի սուրբ կտաւս, եւ տարեալ է ի Եւքայիտայ [----- Էւքայիտայի հանդիպումսն] եւ եղ ի տան իւրումն եւն. (յոյն բնագիրը կ'ըսէ εἰς οἰκίον ζαυτῆς, ἐν πόλει Εὐχαίτων «Ի տան իւրում, ի քաղաքին Եւքայիտացոցն») Հմմտ. նաեւ Յունիս 5, էջ 595 = Migne, Patrol. Gr. 120, p. 1044. — [Հայ բնագիրը գրինք մենք ըստ Սոփ. (Վենետ. 1854.) ԺԶ. էջ 80 ուր չկայ Լատինականին փակագծեալ գիտողութիւնը՝ Եւքայիտայի մէկ օրւան հետո ըլլալու մասին, ինչպէս չկայ յիշեալ յունականին մէջ ալ: Եւքայիտայ տանը հայ բնագրաց մէջ՝ որոնք յետոյ խմբագրուած կամ որեւէ չափով փոխուած են՝ կ'երեւայ նաեւ յունական նոր հնչման համեմատ. այսպէս՝ «Տարեալ ի գիւղն որ կոչի Եւքայիտայ մերձ ի քաղաքն Ամստիա, եւ եղ ի հանգստեան» եւն (Վարք եւ Վկյր. Վենետ. 1874, Ա. էջ 549.) եւ Թէոդորոսի Սարատելատի Վարուց մէջ ալ կը գրուի «եզին ի տապանի եւ տարեալ հանգուցին ի Ժառանգութիւն նորա հայրենի գեղջն Եւքայիտայ» (անդ՝ Ա. 580) Մեր ձեռագրաց մէջ ալ նոյն կրկին ձեւերը հին եւ նոր հնչմամբ կը կրկնուին. (տես՝ «Յուցակ», էջ 1086.) շփոխելով ուրիշ տեղերը: Մտադրութեան արժանի է՝ հայ բնագրաց միւս «գիւղ», գրելը: —]

2 Թէոփանէս՝ անդ:

3 Թէպէտ եւ կայ անշուշտ շրջուն ճամբայ մը Սուրու-Օփայէն՝ Օսմանջիկի եւ Կօշ-Հիւարին վրայէն, բայց այսպիսի ուղեգիծ մը խնդրէն դուրս է:

ուր արդի ուղեւորն առաջին գիշերը կ'անցընէ՝ երբ Ամասիայէ դէպ ի արեւմուտք կը ճամբորդէ:

Կրնանք բաւական ուրիշ նոր փաստեր ալ աւելցընել, որոնք վերջնականապէս կը հաստատեն թէ հին քաղաքին տեղն էր Էլէւ-Չէլէքէ կամ Թէ+էէ-+էօ, գիւղը¹, Չուրուձէն 15 մղոն արեւելք եւ Հաջի-քէօյէն 4 կամ 5 մղոն արեւմտեան հիւսիսարեւմուտք: Եւքայիտա նշանաւոր էր իբր հանգստարան իւր պաշտպան սրբոյն՝ Ս. Թէոդորոսի, որուն համար կ'աւանդուէր թէ մօտերը վիշապ մը սպաննած ըլլայ². Եւ քաղաքին հռչակն իբր մեծ սրբավայր՝ սրբոյն տապանաւ, ուր բաղմաթիւ հրաշքներ եւ բժշկութիւններ կը կատարուէին³, հաւանօրէն այն պատճառներէն մին էր, ինչ-

1 Երկու անուններն ալ սովորական են: Հաւանօրէն ուղղագոյն յորջորջանքն է՝ Էլէւ-Չէլէքէ-Թէ+էէ-+է:

2 Բուլլանդեանց Acta Sanct. Փետր. 7: — Քաղաքը մեծցած էր այն տեղոյն մօտ՝ ուր հրաշքը կատարուած էր: Հմեռ. Johannis Euchaitorum Metropolitae quae supersunt, ed. de Lagarde (JAbh. Göttinger Ges. 1882), p. 205, ուր կ'ըսուի թէ անկոխ անապատ երկրէն ելաւ բաղմամարդ քաղաք մը (ἐξ ἔρημίας ἀβάτου πολυάνδρουσαν ἔχετε πόλιν), կորստեամբ մահաբեր դազանին (λύμης ὀλεθρίου θηρίου) եւ բժշկութեամբ անբժիկի եւ բաղմապիտի ախտից. — էջ 132⁴ Մարտիրոսին այս քաղաքն ու շրջակայքն անկոխ անապատէ բաղմամարդ քաղաք ու դաւառ դարձաւ (ἡ τοῦ μάρτυρος αὐτῆ πόλις καὶ παροικία ἦν ἐξ ἔρημίας ἀβάτου πολυάνθρωπον πόλιν τε καὶ χώραν ἀπέδειξε). ԺԱ դարուն սպրոզ այս եպիսկոպոսը մանրամասն կը ստորագրէ (էջ 160 եւն) եկեղեցւոյն շէնքութիւնը, ուր աշխարհքի ամէն կողմերէն ուխտաւորք կը հաւարուէին Սրբոյն տօնին օրը (էջ 131): Նոյն եպիսկոպոսը յորինած է վերաառութիւն մ'ալ «ի պատկեր արքային (կոստանդիանու Մոնիմարի) որ յուքայիտացւոց քաղաքին (անդ՝ էջ 34, n. 57 εἰς τὴν ἐν Εὐχαΐτοις εἰκόνα τοῦ βασιλέως):

3 Թէոդորոսի վարուց Պէջ (J. Analecta Bollan-

պէս կ'ենթադրէ Ռամսէյ¹, որոնց համար կանուխէն ինքնագլուխ եպիսկոպոսարանի բարձրացաւ: Սրբոյն Թէոդորի, որ յունական եկեղեցւոյն զինուորական մեծ սրբոց մին եղաւ, այս յարգական պաշտօնն անցած էր նաեւ Տաճկաց՝ մահմետական ձեւի մը վերածուելով, եւ շարունակուելով կը պահուէր Էլիվան-Չէլէքիի Գէրվիշներու մէկ հաստատութենէն ալ: Այժմ՝ կենդանի է տակաւին միայն Գէրվիշներու եւ անոնց պաշտաման յիշատակը. եւ նուիրական աւանդութիւնը (*իερὸς λόγος*) մտնուած է: Բայց այսպէս չէր ժ.Ձ. դարուն, երբ Վան Բուսբէկ (*Van Busbeek*, լատ. ձեւով *Busbequius*) եւ իրեն ընկերակից զիւանազէտներն անցան այս գիւղէն՝ երբ Ամասիա կ'երթային Սուլէյման Ա. սուլթանը տեսնելու: Հանս Գերնշլամ² բաւական երկայն նկարագրած է Գէրվիշներն ու անոնց սրբարանը, աւելի համառօտ՝ Վան Բուսբէկիւր «Թուրք շորք Տաճկական զեսպանութեան» (*Legationis Turciae Epistolae quatuor*) գրութեան մէջ, ուր կ'ըսէ. «Յետոյ եկանք Թէքե-Քէոյ (*Theke-*

*diana*⁴, II, p. 367) կ'ըսուի՝ թէ այսօր ալ հոն (այսինքն յեւրոպիոսա) կը կուտի ժողովուրդն («ազգ մարդկան ընդ երկնիւք») ամեն կողմանէ՝ վասն զի Տէր բազմաթիւ հրաշքներ եւ բժշկութիւններ կ'ընէ հոշակասօր վկային Թէոդորոսի նշխարաց (մարմնոյն) ձեռօք (*ἐνθα παί γὼν ἐκ τῆς ὑπ' οὐρανὸν τὸ γένος τῶν ἀνθρώπων συναθροίζεται* եւն): [Վերոյիշեալ տպագրեալ հոյ ընագիրք պարզ կը յիշեն թէ հոն «զիշատակն կատարելով» (Սոփ. ժ.Ձ. 80) կամ «եւ կատարեն զյիշատակ Ս. Թէոդորոսի» (Վարք եւ Վ.Վ.Ս. Ա. 549):] —

¹ Ռամսէյ՝ էջ 318.

² Hans Dernschwams *Orientalische Reise*, ed. H. Kiepert (*ի „Globus“*, Bd. LII, p. 54 ff.) *Կիրերդ կ'ըսէ՝ Վանքս արդէն կը ճանչնայ՝ Scheich-'Alwan-Tekki, jessi անուանակոչութեամբ՝ ամենամեծ հեղինակութիւնը. այն է՝ Հաջի-Խալիֆա տաճիկ աշխարհագրին գործը շարունակողը:*

Thioi, այսինքն՝ Tekke-Keui.) Հոս շատ բան սոր-վեցանք Տաճկաց կրօնաւորներէ՝ որոնք Գէրվիշ կը կոչուին, եւ որոնք հօննշանաւոր շինութիւն մ'ունին. եւ կը պատմեն Խըտըլէզ (Chederle՝) հերոսի մը մասին՝ նշանաւոր թէ մարմնոյն եւ թէ հոգւոյն գերազանց զօրութեամբն, որուն համար կ'առաւ-պելեն թէ նոյն ըլլայ մեր Ս. Գէորգայ հետ. անոր ալ կը վերագրեն այն ամէնը՝ զորասոր համար կ'ըսեն մերինները, այսինքն թէ՛ մեծ եւ զարհուրելի վիշապ մը սպաննելով ազատած է առջեւը ձգուած կոյսը: Ասոր վրայ ուրիշները կ'աւելցընեն շատ բաներ ալ, եւ բոտ կամս կը կարկատեն, ՝ Գեղը շատ մօտ է այն տեղոյն՝ ուր Սրբոյն քաջագործութիւնը կատարուած է: Գերնշվամ կ'ըսէ. «Ար պատմեն նաեւ Վիշապի մը մասին, որ հօն բնակած ըլլայ. լերան վրայ վերը կանգնուած է քարերէ նշան մը 6 ոտք երկայնութեամբ՝ որչափ երկայն եղած կ'ըսուի վիշապը: Լերան տակը սպիտակ մարմարաքար մը, որուն վրայ սմբակաձեւ նշան մը կը տեսնուի, Ս. Գէորգայ սքանչելիքն եղած կ'ըսուի,»

Գիւղին մէջ կը գտնուին բազմաթիւ մարմարեայ ագնիւ եւ ուրիշ կոփածոյ քարեր, որոնք գեղեցիկ մզկիթին եւ աներու շինուածոց մէջ գործածուած հիւսուած են, ինչպէս նաեւ քանի մ'արձանագրութիւններ. (Թ. 212 եւն) Այս գաւառին յիշատակարանք հետաքրքրական յիշատակներ կը մատակարարեն Ս. Թէոդորոսի ընծայուած յարգութեան, եւ յաճախ կը հանդիպինք Թէոդորոս եւ Թէոդորոս անուանց, եւ կը յիշատակուին մենաստանին պաշտօնեայք. (Թ. 196—7) եւ նաեւ հիւանդանոց մը, որուն յանձանձիշ վերակացուն էր նոյն սրբոյն անունը կրող բժիշկ մը՝ Այժ-

1 Այսինքն՝ Թէոդորէ ըստ երեւութին. Գերնշվամ կ'անուանէ զայն՝ Chedir-Ilez.

2 CIG, 9256 — Nr. 217.

մու քաղաքն իւր դիրքը փոխած է գէպի արեւմուտք այնպիսի տեղ մը՝ որ աւելի յարմար է աշխարհագրական պայմաններուն. բայց այն հին կրօնական եռանդեան՝ որ նկարագրական էր Եւքայիտայ համար, մէկ մասը թերեւս պահուած ըլլայ նաեւ այժմու քաղաքին բնակչաց մէջ, զորոնք ուղեւորք միաբերան վկայութեամբ կը նկարագրեն իբր մահճետականաց սնապաշտ եւ մոլեռանդ խրմբակ մը՝:

Էլ վան-Չէլէբի գիւղը՝ արեւելեան ծայրը կ'իյնայ բլրոտ գաւառին անբեր մէկ մասին, մերթ բուրովին մերկ եւ մերթ ծածկուած ցած մացառնեքով, զոր ստիպուած է կտրել անցնիլ Չորու մէկ եկող ճամբան՝ մինչեւ որ հասնի Չէքէրէք-սուի (հին՝ Սիլ-լու) օժանդակ մէկ բազկին աւելի հաճոյատեսիլ հովիտը, որ գետին եղբրէն կ'ընթանայ Ամասիա տանող ճամբան: Գիւղէն քսան վայրկեան հեռուն աղբիւրի մը քով՝ որ խճուղւոյն մօտը կ'իյնայ, մղոնաքար մը կայ՝ նախնաբար կանգնուած Տ. Պոմպոնիոս Բաստէ՝՝ Ներուայ եւ Տրայիանու նուիրակէն, բայց յետոյ կրկին արձանագրուած Աւր. Պրիսկիանոս նախագահէ (praeses) Գիոկղետիանու եւ Մաքսիմիանու օրով (թ. 449): Հռոմէական ուղին կ'ընթանայ այնուհետեւ հովտին երկայնութեամբ Ալլէր-ն² եւ Չոլ-ն³ գիւղերուն

¹ Համիլտըն կը յիշէ «այլեւայլ անգամ իրեն ուղղուած մոլեգին եւ վայրագ նայուածքները նանրապաշտ բնակչաց կողմանէն» (էջ 378): Նման լեզու մը կը գործածէ Ainsworth. եւ Հուման կ'ըսէ՝ «Այս խուլ անկիւնը իբր 10-000 թուրք մոլեռանդ բնակիչ ունի եւ հազիւ 300 հայ» (էջ 85): Ես կը կարծեմ թէ աւելի բիրտ (ungentil) ժողովուրդ մըն է եւ ապահովապէս անշահագրգիռ հնութեանց մասին:

² Էլ վանեն 45 վայրկեան (90°):

³ Հաջի-բեդէն իբր 1¼ ժամ (320°): Համիլտընի Tchaana գրեթե տեղական հնու մը կը ներկայացընէ, վասն

ներքեւէն, որոնք լեռնաքամակին հիւօհային ստորոտին մօտիկ կ'իյնան, եւ Աւղատի ու Հաջի-քէօյի մէջտեղէն:

§ 4. Հաջի-քէօյ եւ Ետունիս: — Հ-ջէ-ւէօյ՝ որ Չորումի եւ Ամասիոյ մէջտեղ եղած միակ կարեւոր տեղն է՝ Ելվանէն մէկ ժամ հեռու է դէպ ի արեւելեան հարաւարեւելք, կոհականման բլրագաւառին մէկ եզերքը, որ Ակ-Տաղի զանգուածէն զառիվայր կ'իջնայ: Այժմ գաւառին վարչական կենդրոնն է. բայց թէ աւանդութիւնն եւ թէ տեսքը կը ցուցնեն թէ հնագոյն հիմնարկութիւնը չէ: Համանուն տեղերէն երբեմն անձահօրէն կը զանազանուի յորջորջանօքս՝ Հ-ջէ-ւէօյ Ա-շ-տի. եւ այս Ա-շ-տ՝ գիւղ մըն է՝ իբր ժամ մը հեռու դէպ ի հիւսիս (343⁰)՝ բլուրներուն ոտքը: Ասիէ դէպ արեւելք՝ քանի մը վայրկեան անդին՝ ոչ մեծածաւալ բլրակ մը կայ, որ հաւանօրէն հին նիստ մը կը ներկայացընէ, եւ գիւղն ալ հնութեան մնացորդներէ զուրկ չէ: Մեծ վիմաքարեր կը տեսնուին թէ հին մզկիթին եւ թէ աղբիւրներուն շինութեանց մէջ. (որոնց մէջ կայ անարձանագիր քար մ'ալ գարդաքանդակուած չորս ծաղկեպսակ եզնագլուխներով.) իսկ անթիւ քարեր գործածուած են նոր գեղեցիկ մզկիթի մը շինութեան համար²: Սիւներ առատութեամբ կը գտնուին, եւ մզկիթին քով եղած հովանոցի մը (՝ւէօչն) սիւնամոյթերը կը հանգչին խոյակներու վրայ. որոնց մէկ մասը կորնթական ճաշակաւ է, մաս մը՝ ծաղկե-

ղի շ երկու ձայնաւորաց մէջ կը կորսուի. կամ կը կախուղնայ յ հնչման:

1 Համբլուրն (էջ 275) կը գրէ Afhat կամ Aurhat. Փոքուն Ասիոյ կիբերդեան նոր քարտեպին մէջ (Chanykoffի համեմատ) Archat. [Ըստ P. Girardի՝ Aelkhat-Hadjji-Keui]:

2 Մզկիթին աշտարակին (՝մինարէն) խորխոր կը տեսնուին այլեւայլ հին վիմաքարեր՝ որ վերակոփուած չեն:

քանդակ բիւզանդեան ոճով, եւ մաս մը կոշտ դոր-
ժուած յեանագոյն ժամանակէ: Բայց ամէն կողմէն
կը հաստատուէր թէ այս մնացորդաց մեծագոյն
մասը հոս բերուած է Աւգասէ, եւ շատ քարեր ալ
նոր կը բերուէին մեր այցելած ժամանակը: Աւերջին
դիւղս երթալով եւ քննութիւն մը կատարելով՝
բոլորովին համոզուեցայ այս բնուածներուն ճշմար-
տութեան: Գիւղին գերեզմանոցը լի է ցանուցիբ
սփռուած՝ քառակուսի կոփուած եւ ձեւակերտուած
վիմուքարերով եւ մոյթերով, եւ մզկիթն ու աղ-
բիւրները շինուած են հին քարերով. իսկ գեղին
մէջ տեղը կը կենան փոքր ուղղանկիւն շինութեան
մ'աւերակները, որուն համար կ'ըսեն (թերեւս ուղ-
ղութեամբ) թէ քաղաքի մ'եղած ըլլայ: Համկտըն
ուրիշ աւերակներ ալ տեսած է, որոնք իմ ուշա-
դրութենէս վրիպեցան, — եթէ տակաւին գոյու-
թիւն ունին: Համկտըն Հաջի-քէոյէ մեկնած է
Աւգաստ այցելելու համար: «Գաշան իջնալէն ետքը,
կ'ըսէ, ժամ մը ձիափարելով հասանք հիւսիսա-
կողման ցած բլուրները, ուր գոյնագոյն մարմարի
սիւներու եւ վիմուքարերու բեկորներ թափուած
ցանուած էին մացառներու եւ մորենիներու մէջ,
եւ ասոնց մօտ՝ գլխաւոր պատերու եւ կամարածեւ
ներքնաշինութեանց (հիմնամասանց) մնացորդներ,
որոնց համար կ'ըսէին թէ հին եկեղեցւոյ մ'աւե-
րակներ ըլլան: . . . Աւրհատի » մզկիթին պատերուն
եւ մերձակայ աղբիւրին մէջ ալ բազմաթիւ կտոր-
ներ կան նոյնպիսի քարերու: » Հոս է ուրեմն այն
հին քաղաքին նիստը, որ կը համապատասխանէ
այժմու Հաջի-քէոյին: Արեւէ արձանագրական փաստ
մը չէ գտնուած քաղաքին անունը որոշելու հա-
մար. բայց դաւառին մէջ կատարած իմ հետազո-
տութիւնս գտնէ կարեւոր արդիւնք մ'ունեցաւ:
Ինչպէս այժմ պիտի տեսնենք՝ տեղւոյս դիրքը ճշգիւ

կ'իյնայ այն կցման կէտին վրայ, ուր Գանդրայէն եկած ուղին կը միանայ Տաւրուձէ (այժմ՝ Նէֆէզ) եկած ճամբուն, որ գէպ ի Ամասիա կը տանի, եւ Պեւտինգերեան Տախտակին մէջ այսպէս կը նկարագրուի՝

Tauio XIII Tonea XXX Garsi XXX
Amasia.

Արդ Պաղոմէոսի տախտակին հետ համեմատելով կը տեսնուի որ Garsi կը ներկայացընէ Պաղոմեայ *Káρισσα ξδ' γο" μα' γο"*. (տես Պաղ. Է 4, 9.) մինչդեռ Tonea նոյն է յայանապէս յաջորդիս հետ՝ *Ἐτωνία ξε' μα' L"* (տես Պաղ. Է. 6, 9.) եւ որովհետեւ առաջինը Գաղատիոյ կը վերաբերի եւ վերջինը՝ Գաղատական Պոնտոսի, բոլորովին բացայայտ է՝ (ինչպէս մասնաւոր ըրած էր Ռամսէյ՝ էջ 260) թէ Տախտակը հոս ալ կրկնած է այն սխալմունքը՝ զոր գործած է Անկիւրիայէ Արքեւայիս տանող ճամբուն նկատմամբ¹, եւ կայաններու ծիշկկարգը յեղաշրջած է։ Այսպիսով Երանէ կ'ըլլայ առաջին կայանն Ամասիայէ գէպ ի Տաւրուձ տանող ճանապարհին, եւ Աւղատի քով եղած բնավայրը միակն է որ ցայժմ գտնուած է նոյն ճանապարհին առաջին հասածին վրայ։ Այս եզրակացութիւնը կը ստիպէ գմեղ XIII թուականն ուղղել [XX]XIII(I), որովհետեւ այս նիսար 31 1/2 անգղ. մղոն հեռու է Ամասիայէ։ Պաղոմեայ տախտակին մէջ Ետանիայի բռնած գիրքը գտնէ այնչափ կը համաձայնի մեր նոյնացուցած այս սեղւոյն հետ որ Ամասիոյ հարաւարեւմուտքը կ'իյնայ։ Բայց իւր այն գիրքն իբր թէ Աարիսայի հարաւարեւելակողմն

¹ Պոնտոսի սյուեւոյլ բաժիններուն համար Պաղոմեայ տուած քաղաքացանկերուն ճշգրտութիւնը կը հաստատուի ամեն ճանօթ իրողութիւններով եւ ամեն նոր գիւտով։

² Ռամսէյ՝ Պատմ. Աշխ. էջ 254, 260 եւ ի JHS, XIX (1899), p. 101.

եւ Տաւրուսի արեւելեան հարաւ-արեւելահողմը գտնուի՝ անհամաձայնելի է մեր յառաջ բերած փաստին հետ: Սակայն կարելի է որ թուականներն ուղղութեամբ աւանդուած չըլլան մեզի. — եթէ $\mu\alpha' \Lambda'' \gamma''$ ուղղենք փոխանակ $\mu\alpha' \Lambda''$ ընթերցուածին՝ ամէն պարագայք համաձայնած կ'ըլլան, — եւ յամենայն դէպս այն տախտակին նշանակած աշխարհագրական դիրքերը չեն կրնար ընդունուիլ առանց ուրիշ անկախ կողմանէ հաստատութիւն մը գտնելու: Եթէ մէկն այս կանոնիս մասին տարակոյս մ'ունենայ՝ մտածելու է թէ նոյն Պաղոմեայ համեմատ իբր թէ Սեբաստոպոլիս Ամասիոյ հիւսիս-արեւելքը կ'իյնայ, եւ Չելա՝ կոմանայ հարաւ-արեւելքը եւ Նէոկեսարիոյ հարաւային հարաւարեւելքը (!):

§ 5. Հին ժամանակները Ետոնիոյ հովտին մէջ կը ծաղկէր ձիթենին, ինչպէս նաեւ Պոնտոսի մեծագոյն մասին մէջ, թէեւ այսօր շատ ցանցառ կը տեսնուի հոն: Եթէ նաեւ Ստրաբոն բացայայտ յայտարարած չըլլար՝ պէտք էինք նոյնը հետեւցրնել հին ձիթամամուլներու (մասարայ) ծանրաքարերուն առատութենէն, որ ամբողջ գաւառիս ամէն կողմ ցանուած կը գտնուին: Հետաքրքրական ուսումնասիրութեան մը մէջ Paton եւ Myres գիտնականք քննութեան առած են ձիթամամուլի խնդիրը¹: Հոն կը ցուցուի թէ մամուլը կազմուած էր երեք կարեւոր մասերէ՝ մամլոյ-սանդէ, լծակէ եւ ծանրաքարէ (ճնշաքարէ), որ կամ կապուած էր պտուտակին՝ որ կը դառնար մայր-պտուտակի մէջ եւ այս մայրը ծակուած էր լծակին ծայրը, կամ վեր կը բռնուէր կազմածով մը՝ այնպէս որ լծակին ծայրը կը կենար: Չեմ յիշեր թէ մամլոյ-սանդ տեսած ըլլամ երբեք, որ թերեւս զարմանալի չէ՝ նկատելով այն պարագան թէ որչափ դիւրին էր այսպիսի քարերը փոխել միշտ կարելոր ջրա-

¹ JHS, XVIII (1898), p. 209 ff.

կուրի: Բայց ճնշել կամ ծանրոց-քարերը սովորական են: Նկատած եմ այսպիսի քարեր Հաջի-քէոյի շրջակայ զիւղերը, Չորուսի վարի դաշտին մէջ, այն հովտին մէջ՝ որ Սեբաստոպոլսէն դէպ ի հարաւարեւմուտք կ'երկարի, դարձեալ՝ Արաիկ-Օվա, Գազիմնիտիս (կազ կամ «Գազ»-Օվա), Ամանայ մօտերը, եւ Փանարէա գաւառին մէջ՝ որ «ձիթաբեր եւ գինաւէտ» էր¹: Պոնտական ծանրոց-քարերը կը յիշեցընեն մամլոյ այն տեսակը, որ մինչեւ նորերս ալ կը գործածուի յԱրգինունտա կալիւմնոսի մէջ, եւ զոր Պատոն կը նկարագրէ² այսպէս. «Լծակին ծայրը ուղղահայեաց կը կտրէ մայր-պտուտակը՝ որուն մէջ կը դառնայ փայտեայ մեծ պտուտակը, ազատ ծայրը դէպ ի վեր՝ իսկ լծակին մէջ յարմարած բունը դէպ ի վար: Պտուտակին լայն գլուխը կը կրէ ծակած տախտակ մը՝ որմէ մեծ քար մը կախուած է փայտեայ բոյթ երով (սփռիչներով) որոնք ազուցուած են թորիծածեւ փորոքներու մէջ անոր երկու կողերէն: Պտուտակին գլուխը տախտակէն դուրս ազատ կը պտուտակի քարին վերի երեսին վրայ եղած խոռոչին մէջ: Բաժակածեւ խոռոչը պոնտական բոլոր քարերու վրայ՝ զորոնք տեսած եմ, երբեք չի պակսիր: Ամէնէն սովորական տիպարն է՝ քառակուսի քար կենդրոնական խոռոչով եւ թորիծեալ փորոքներով՝ որոնք կողերուն երկայնքին մինչեւ կէսը խորունկցուած են (Տիպար 1³): Յաճախ խոռոչը թորիծ-փորոքներուն հետ կապուած է զոյգն խորութեամբ փորուած ալոսով մը, սովորաբար ուղիղ՝ բայց երբեմն նաեւ շեղածեւ կողերով. (Տիպ. 2 եւ 3): Երբեմն ալ վերին երեսի խոռոչը միայն

¹ Ստրաբոն, էջ 556՝ ἐλαιόφυτος καὶ εὐόινος

² Անդ՝ էջ 210 ff.

³ Այստեղ «Տիպար. 1-7», նշանակուածները կը ցուցընեն այն պատկերները՝ զոր Ուղեւորն ներկայացուցած է յէջ 15: —]

կայ՝ առանց կողմնակի փորձքներու (Տիպ. 4.) երբեմն ալ նոյնը շարունակուած չէ մինչեւ շուրթը (Տիպ. 5.) Ուրիշ տեսակ մը (Տիպ. 6.)՝ զ՝ կողմնական փորձքներ ունի եւ զ՝ ակօս, այլ վերին երեսին մէջտեղը շորեքկուտի ծակ մը՝ որուն կենդրոնը բուրսաձեւ խոռոչի ձեւով կ'ըլլայ, իսկ անկիւններուն մօտ կը գտնուին զոյգ մը շատ փոքր ու ծանծաղ ծակեր. մինչդեռ ուրիշ մը այսպիսի ծանծաղ ծակ ունի իւրաքանչիւր անկիւն եւ դարձեալ կենդրոնական խոռոչ մը (Տիպ. 7.) Այն ամէն քարերը՝ որոնք կողմնակի թորիծ-փորձք չունին, յայտնապէս կանոնաւոր շրջանակի մը մէջ կը դրուէին:

§ 6. Հռոմէական ուղին Երուսաղէմէն կը շարունակուի դէպի արեւելք՝ Հաջի-քէօյի դետահոյվտին երկայնութեամբը՝ Հաջի-քէօյէ մէկ ժամ անդին Քէօտէ-Էյիք՝ զիւրը կը գտնուի Աոստանդիանոսի մզննաքար մը, որ կը կրէ թուականս՝ XXXI m. p. եւ Հելլենոպոնտոս գաւառին անունը (Թ. 450). կան նաեւ քանի մը մնացորդներ՝ սակաւաթիւ արձանագրութեամբք (Թ. 236 եւն): Ժամ մը եւ քառորդ մ'աւելի անդին՝ Բէքոն՝ զիւրին ներքեւ եղած գերեզմանոցին մէջ՝ գտանք Աոստանդիանոսի ուրիշ մզննաքար մ'ալ Քէօտէ-Էյիքի մզննաքարին շարքերէն (Թ. 451): Յայտնապէս այս տեղերուս մօտերը գտած էին Բուսբէկեանք այն մզննաքարը՝ զոր կը հրատարակենք մեր Յաւելուածին մէջ՝ թուովս 452: Այլ-էլի՛ զիւրէն՝ որ ճամբէն վեր կը մնայ մէկ մզնն հեռաւորութեամբ եւ ձորի մը (« Կէրէ ») մէջն է, ելլելէն քիչ մ'ետքը հովիտը կը բացուի լայնածաւալ դաշտի մը, որ ալեձեւ կ'իջնայ դէպի Չէքէրէք-Իրմակ (« Ըրմագ » գետ): Այս դաշտին

1 Հմմտ. Համբլարն, անդ՝ էջ 374 ff. Perrot, Exploration, p. 366.

2 Perrotի տախտակին վրայ նշանակուած՝ Keu-saib. անգղական հնչու մն է Keusseib.

արեւելեան եզերքէն, Բաղնիշէ գիւղէն իբր երեք մղոն անդին, նախ կարճ վերելք մը կայ ելլելու, որուն կը յաջորդէ զառիթափ էջք մը դէպ ի Հիւրիկի (Իրիս) գեղադուարձ հովիտը, այն գետին՝ զոր Թուրքերը «Վանաչ գետ» (Եէշիլ Իրմակ) կը կոչեն, եւ որուն ափունքը Ամասիոյ պարտէզն են: Մեր ծամբան գետը կ'անցնի բազմակամար կամրջէ մը, որուն կամարներուն մէկ մասը հին աղիւսակերտ մըն է՝ հաւանօրէն Բիւզանդեան ժամանակ շինուած. եւ պտտելով պարտէզներուն եզերքէն երկու մղոնէ աւելի երկայնութեամբ՝ կը մանենք Անատոլեան քաղաքներուն ամէնէն նկարագեղը, «Հոռոմ Բաղ-գազը»¹:

Բ. Ամասիայէ Տախում:

§ 7. Հռոմեական ուղին մինչեւ իւր Ամասիա ծանապարհադուխտը (caput) հետապնդելու առնելով նկարագրութեանս մէջ ստիպուած էի հետազօտութեանս ժամանակագրական կարգէն քիչ մը շեղիլ: Երբ Յունիս ճին Էլվան-Չէլէրի հասայ՝ որոշեցի առ ժամս շարունակել ծամբան գէպ ի արեւելք, այլ Հաջի-քէօյէ մինչեւ Ամասիա մնացած ուղեմասին հետազօտութիւնը թողուլ այն ժամանակին՝ երբ պիտի ուղեւորէի դէպ ի ծովեզր Սամսոնի ուղղութեամբ: Ուստի վերադարձայ Չորում, ծամբու շրջան մ'ընելով տեղերէս՝ Ալէր-նի (3/4 ժամ արեւելք), Էնի-էօյ (1 1/2 ժամ)՝ որ Էլվանին ճիշդ հիւսիսակողմն է եւ անկէ ժամ մը հեռու (առնուած տեղեկութեան համեմատ), Կառ-նի (3/4 ժամ)՝ կոհակաձեւ հովտին գիմացի կողմը, եւ անցնելով Սիկիկ կիրճը, առանց այս

¹ Տես վարը՝ § 8:

² Հռոմանի տախտակին վրայ այսպէս գրուած է անունը. բայց ուղիղ ձեւը կ'երեւայ թէ ըլլայ Կառ-նի-նի (Կառ-նի-սերայ):

ամեն տեղերը նշանակուելու արժանի բան մը գտնելու: Գունիս 8ին Չորու մէն ելլելով ուղեւորեցայ հարաւ-արեւմտեան ուղղութեամբ դէպի Տաւիում: Ժամէ մը կտրեցինք Չորումի գետը եւ դուրս ելանք այն նեղ հովտէն՝ որ գաշտին վերին մասը վարինին հետ կը կապէ: Սայլս խաւրելով ուղղակի եէնիջէ՝ որ ճամբուն աջակողմը կ'իյնայ՝ Չորումէ 10¹/₃ անգղ. մղոն (հաշուոյն համեմատ՝ 3 ժամ), եէնիջէ-Չայի ձախ օփին վրայ, խոտորեցայ՝ ճամբուն արեւելակողմն ինկած քանի մը գիւղերն այցելելու: Հ-Դ-Դ-Դ-Դ-Դ գիւղը՝ որ ¹/₃ ժամ դէպ ի արեւելեան հարաւարեւելք հեռու կ'իյնայ Բոլորոշանէ (որ ինքնին եէնիջէէ ¹/₂ ժամ հեռու է դէպ ի արեւելեան հիւսիսարեւելք), գտայ Ներուայ մէկ մղոնաքարը, որ կը կրէ թուականս 50 m. p. (թ. 444) եւ յունական արձանագրութեան մը մէկ հատակոտորը (թ. 250): Եէնիջէի հարաւակողմը քիչ մ'անդին հասանք երկայն լեռնաքամակը՝ որ Քէօսէ-Տաղ կը կոչուի եւ որ կ'երեւայ ինծի թէ Գաղատական Պոնտոսի հարաւային սահմանը կը ցուցնէ: Յաջորդ ութ օրերու ուղեւորութիւնս Գաղատիոյ սահմանաց մէջ էր, եւ այս տեղւոյ կը վերաբերի միայն այնչափ՝ որչափ Հարսադինի մղոնաքարին վրայ լոյս կը սփռէ: Նախ կ'ենթագրէի թէ այս մղոնաքարը վերաբերելու է ճամբու մը որ հարաւէն կամ հարաւ-արեւմուտքէն դէպի Չորում կու գար. եւ միայն երբ դէպ ի Սամսոն ճամբորդած ատենս Ալաջա վերագարձայ (Յուլիս 12)՝ անոր բուն նշանակութիւնը կրցայ գտնել: Վասն զի երբ Ալաջայէ Հաջիքէոյ տանող ճանապարհին մասին հետազոտութիւններ կը կատարէի՝ տեսայ թէ Մէջիդ-էօղլուի ընթացքին հետեւող ճամբան չափազանց դժուարին է եւ բոլորովին անկարելի առեւտրական կառաց երթեւեկութեան համար. բայց թէ կայ նաեւ ուրիշ ճամբայ մը որ Չորումի ուղիէն կը շեղի գաշտին հարաւային ծայրէն,


եւ Հաջի-քէոյ կը հասնի՝ Սէրայ գիւղին վրայն
անցնելով: Առնելով Հարսագինի մզմոսքային
գիւղը՝ կը յուսայի թէ ասի ապացոյց մը կրնայ ըլ-
լալ թէ աս էր Հռոմէական ճամբան դէպ ի Եսա-
սիա. եւ շխարուեցայ: Հոս կը նկարագրեմ ուղ-
ւոյն ընթացքը՝ Գաղատական մասին վրայէն հա-
մառօտիւ միայն անցնելով:

§ 8. Տառխուտ (Քիւրիւկ-Նէֆէզ) կ'ընայ
երկայն լեռնաքամակի մը ստորը, որ դէպ ի ա-
րեւելք եւ արեւմուտք կ'երկարաձգի, եւ ջրաբաշին
է Կապպադոզի (Cappadox՝ Կապուտակ, այժմ՝
Գէլիջէ-Իրմակ) գետոյն բազմաթիւ օժանդակնե-
րուն: Ճամբան երթալով վեր կ'ելլէ հիւսիս-ա-
րեւմտեան ուղղութեամբ: Գիծը կը մասնանշէ
Տաճը - Հասն գիւղը, Նէֆէզէ 4.82 անգղ. մղն
հեռու դէպ ի հիւսիսային հիւսիս-արեւմուտք,
ուր Սեպտիմիս Սեւերոսի եւ Կարակալայի հին-
գերորդ մզմոսքաբը կը գտնուի՝ իւր նախնական
տեղէն ոչ հեռու: Գիւղին մէջ հնութեան սակաւ
մնացորդներ կան. եւ արդի անուան նմանութիւնը
Պեւտինգերեան Տախտակի Tomba անուան հետ՝
կրնայ զմեզ հրապուրել ընդունելու երկուքին նոյն
ըլլալը, ինչպէս արդէն առաջարկած են Ստերէտ՝
եւ Ռամսէյ¹: Անշուշտ Պեւտինգերեան Տախտակը
Tomba տեղը կը դնէ արեւելեան ուղղութեամբ
դէպ ի Եւագինա տանող ճամբուն վրայ. բայց ճա-
նապարհաց խտորմամբ յառաջ եկած շփոթու-
թիւնն այնչափ մեծ է որ բանաւոր պատճառ կայ
ենթագրելու թէ յետեւառաջութիւն մը տեղի
ունեցած ըլլայ: Յամենայն դէպս Tomba եւ
Tonea (այսինքն Etonia, տես § 4՝ վերը) անուանց

¹ Արձանագրութիւնը հրատարակուած է իմ ընդօրի-
նակութեան համեմատ՝ CIL, III. Suppl. 14 184^u.

² Sterrett, Epigraphical Journey, p. 310.

³ Ramsay, Hist. Geogr. p. 261.



նմանութիւնը կրնայ նպաստել արգարացընելու մեր քննած ճամբուն վրայ զանուող քաղաքներուն կարգին յեղաշրջումը¹: Ինծի բռն թէ Tamba տաճկերէն բառ մըն է եւ կը նշանակէ «աղտոտ», չեմ գիտեր՝ որչափ ճիշդ է. բայց եթէ ալ ըլլայ՝ որեւէ առարկութիւն կամ արգելք մը չէ նոյնացման, այլ ընդհակառակն նոր փաստ մը Տաճկական այն ընդհանուր սովորութեան՝ իրենց լեզուին բառերուն համաձայն ձեւ մը տալու հին անուններուն²:

Տամբա Հասանէն կը սկսի ուղին զալարելով վեր ելլել ջրաբաշխ լերան վրայ եւ անկէ կ'իջնայ Բողաղ-քէօյի գետը, որուն ընթացքին կը հետեւի մինչեւ Պրէքէյի աւերակները՝ Տաւուսէ 15՝9 մղոն կամ 25 կիլոմետր հեռու: Պտերիայէն ելլելով՝ կը կտրէ ցած բլուրները հիւսիս-արեւելեան ուղղութեամբ մը, հաւանօրէն Վուլայի արեւելակողմէն անցնելով, եւ Վիջիլիէ անցնելէն ետքը կը հասնի այն գետին հովիտը, որ դէպ ի արեւելք կը հոսի Էսկի-Եսպարի քովէն դէպ ի Ալաջա:

§ Ծ. Էսկի-Եսպար (Կարիսա?) — Այս կողման իմ հետազոտութիւնս արգիւնաւէտ չեղաւ: Ո՛չ միայն կորսնցուցի Հոսմէական ուղեգիծը, այլ նաեւ զժբախտաբար մոռցայ այցելելու Էսկի-Եսպար գիւղը: Երկու ամիս վերջը Մարզուանի Ամբրիկեան Հաստատութեան Պատ. Գ. Է. Վայա եւ Դր. Կարինզարն (Rev. G. E. White եւ Dr. Carrington) անդամներէն լսեցի թէ գիւղին մէջ կան մղոնաքարեր եւ հնութեան ուրիշ մնացորդներ: Բարեբախտաբար Պր. Munro իւր ուղեւորութեան ատեն՝ երբ Անկիւրիա կը վերադառնար,

¹ Տես վերը՝ § 4: Հագիւ թէ հաւանական ըլլայ Հիւրթէլտի կարծիքը թէ Tomba եւ Tonea միեւնոյն տեղույ կրկն անուններն ըլլան. (տես իւր յօդուածը՝ G. Hirschfeld, Tavium, ի Sitzb. Berl. Akad. 1883):

² Սակայն տես § 11 վերջը եւ § 12 վերջերը:

յաջողած է այս գիւղն այցելել. եւ գտած է երկու մղոնաքարեր՝ բազմաթիւ ուրիշ մնացորդներու հետ, ինչպէս՝ առիւծաքանդակ մը, քրիւսոնէական գերեզմանաքարեր, եկեղեցական ճարտարապետութեան կտորներ: Մղոնաքարերէն մին շատ մաշած է եւ շարաշար կրկնադրուած: Միւսը կանգնուած է Ար. Բասիլեւսէ՝ որ Սեւերոս Աղեքսանդրոսի նուիրակն (legatus) էր, եւ կը կրէ թուականս XXIII, ուստի քիչ մը հեռուէն հոս բերուած ըլլալու է. որովհետեւ Էսկի-Եսպար ճամբու «գլխէն»՝ Տախումէ՝ չի կրնար Հռոմէական 30 մղոնէ պակաս հեռաւորութեամբ ըլլալ¹: Գիւղը շինուած է այն տեսակ նկարագրական հողաբլրոց միոյն քովը՝ որոնք հին բնակատեղիները կը մատնանշեն, եւ թերեւս ներկայացընէ Տախտակին Garsi տեղը, Պաղոմեայ Աւրէս կոչածը, զոր Ռամսէյ կ'ուզէր տեսնել երկու կամ երեք մղոն հեռու գէպի հիւսիս-արեւմուտք այժմու Ալ-Վ կոչուած կենդրոնէն՝ ուր «մուտիր» մը կը նստի²: Նոյն ինքն Ալաջա զուրկ չէ հնութեան մնացորդներէ. բայց ասոնք բերուած ըլլալու են մօտակայ գիւղէն. ասոնց մէջ կայ մղոնաքար մը որ նախնաբար տեսանելի էր, բայց այժմ գետնանկողնոյ մէջ եղած պատի մը հիման մէջ հիւսուած է երեսը ներս դարձած:

§ 10. *Կալի-Հիւսար* — Ալէ (կամ Աւր) Հէսար³ ամուր բերդը, որ Էսիւկէ քանի մը մղոն հիւսիս կ'իյնայ (2¹/₂ ժամ հիւսիս-արեւմուտք Ալաջայէ), կ'արժէ որ քանի մը խօսքով անցողակի յիշատակուի: Խոտաքարի (trachyte) խրոխտ,

¹ Մղոնաքարը հրատարակուած է՝ CIL, III, Suppl. 14184⁴⁹. Էսկի-Եսպար՝ Բողազ-բէջէ 4 ժամ հեռու կը հասնուի եւ Ալաջայէ՝ 1 ժամ գէպի արեւմուտք:

² Ռամսէյ՝ Պոմ. Աշխ. էջ 280, Ծան.:

³ Տես Համբլտըն, անդ՝ Ա, էջ 381, եւն.:

մենակաց եւ կրկնակատար ապառաժ մըն է, բլրոց մէջ եղած փոքրիկ դաշտէն 400 ոտք վեր բարձրացած, եւ իւր ստորոտը կը գտնուին այլեւայլ ընդարձակ շինութեանց աւերակներ (որ հաւանօրէն տաճկական են՝ բայց մասամբ շինուած հին ատաղձներով), որոնցմէ ներքին կմախքէն քիչ մ'աւելին միայն մնացած է այժմ: Շրջակայ գիւղերուն մէջ, յատկապէս Կ-լէ-Հիւսար-էէջ գիւղը (կէս ժամ դէպ ի արեւմուտք), բազմաթիւ մնացորդներ կան Բիւզանդական շրջանէն, վիմաքարեր, սիւններ, խոյակներ եւ սակաւաթիւ արձանագրութիւններ: Ըստ երեւութիւն այս գղեակն ապաստանարան էր անպաշտպան Կարիսայի բնակչաց համար՝ Սարակինեան արշաւանաց խռովալից ժամանակները, Կարիսայի հետ այն աղերսն ունենալով՝ զոր ունէր Ակրոյենոս՝ Պրիմեեսոսի, կամ Սիվրի-Հիսար՝ Պետինոսի հետ: Բերդին անունն անստոյգ կը մնայ: Եթէ ընդունինք Ռամսէյի՝ նոյնացումը, այն ատեն Կալէ-Հիսար ըլլալու է յետին դարերուն հռչակաւոր *χάστρον Χαρσιανόν* (ամուրն ք-ը-ի-ն-ն)՝ քարտեան բանակաթեմի զինուորական կենդրոնը: Սակայն այս բանակաթեմին նախնական կորիզը կամ կենդրոնամասն էր անշուշտ Ա-լէն Կ-դ-դ-դ-ի-ի-ի (պարունակելով զBas-silica Therma, Նիւսա, եւ Պոզանդոս՝ մայրաքաղաք ունենալով զԿեսարիա.²) եւ արաբացի հեղինակաց տուած տեղեկութիւնքը՝ զոր Տոմաշէկ յառաջ կը բերէ³, կը ցուցնեն գիրք մը որ Կալէ-

¹ Ռամսէյ, Պամ. Աշխ. էջ 259-60:

² Const., De Them. p. 30 (հրատ. Բոն քաղաքի.) Gelzer, Die Genesis der Byz. Themenverfassung, p. 101 ff. (հայ թրգմ. տես Ազգ. Մաս. ԽԳ.) Հմմտ. Հե-րոկղէս, էջ 698, 5 ff.

³ Tomaschek, ի Festschrift f. H. Kiepert p. 148 ff.

Հիսարէնն աւելի արեւելք էր, յայտնապէս Ակ-
Տաղի սահմանին մէջ տեղ մը¹ :

§ 11. Բայց դառնանք: Ալաջայի բարերեր
դաշտէն, որ Հիւսէյին-Օվա կը կոչուի, դէպ ի
հիւսիս կ'ընթանայ Հոռմէական ուղին Հարա-
Բաշա կոչուած կիրճէ մը մինչեւ Բաբ-Յալ-Բէ-Է-Է
(Համիլտոնի «Թէ-Է-Է-Հարա» կոչածը), ուր կիրճը
նեղ հովիտ մը կը դառնայ, եւ քանի մը մղոն
ետքը կը բացուի դէպ ի Չորումի դաշտին վարի
մասը, Սաբէնէյի գիւղին մօտ: Հոս մեր ճամբան
արեւելք կը դառնայ, եւ բաց դաշտէն կ'անցնի՝
Հարսագինի հարաւակողմէն՝ դէպ ի Սէրայ: Թէ-Է-Է
գիւղը՝ որ Հարսագինէ մէկ ժամ արեւելք կ'իյնայ,
կը գտնուի 577 մղոնաքարը, կանգնուած Պոմպո-
նիոս Բաստէ, եւ որ իմ շափմանցս համաձայն
իւր նախնական տեղւոյն մօտն ըլլալու է (Թ. 445):
Վ'երեւայ թէ Թէ-Է-Է-Է-Է հին բնակատեղի մըն է:
Թէ գիւղին մէջ եւ թէ շուրջը հնութեան բազմա-
թիւ մնացորդներ կան, սիւներ, ձեւակոմուած
կամ ուրիշ վիմաքարեր, մեծ գերեզմանաքարեր,
ձիթահնէնի ծանրոց-քարեր, եւ մարմարեայ ազ-
նիւ աթոռ կամ գահ մը խաչ քանդակուած մէկ
կողմը, եւ ուրիշ մը կանակը: Այս մնացորդները
մասնանիշ կ'ընեն թէ նոյն տեղը հին ժամանակաց
գիւղ մը կար եւ եկեղեցի մը: Սէրայ գիւղն անց-
նելէն քիչ մը ետքը ճամբան կը սկսի բարձրանալ
Ակ-Տաղի խոնարհագոյն դարերը, եւ ժամէ մը կը
հասնի Շէյ-Մահա-Քար՝ որ ձորի մը մէջ կ'իյնայ
Սէրայի ճիշդ արեւելքը: Ալաջայէն մինչեւ հոս
եղած անջրպետն է 32.14 անգղ. մղոն: Գիւղն ըն-
ծայեց երկու արձանագրութիւններ (Թ. 252—3):

¹ Տոմաշէկ նոյնը Սերաստիոյ արեւելակողմը կը գնէ
Իպսալա (հին Hypsele) եւ Կոչ-Հիսար տեղերուն մէջտեղ,
ինչի կ'երեւայ թէ այս գիրքը քիչ մը շատ աւելի դէպ ի արե-
ւելք է:

Ասիէ կը սկսի սեպ դասիվեր եւք մը՝ 700 ոտք բարձրանալով քառասուն վայրկենի մէջ ճիշդ հիւսիսային ուղղութեամբ մինչեւ 2-րէջ գիւղն որ կեցած է հանդիպայերան մը վրայ, որ վար կ'իջնայ Շէյ-Մուստաֆա գետոյն եւ ուրիշ աւելի արեւմուտք եղած վտակի մը մէջտեղը. հոս գտայ արձանագրութիւն մը (Թ. 251): Ուրիշ գառիվեր եւք մը 300 ոտք բարձրանալով՝ կէս ժամէ մը կը հասցընէ զմեզ լերան գագաթը՝ որ 1300 ոտք բարձր է գաշտէն. եւ ասիէ կը սկսի մեր ճամբան աստիճանաբար իջնալ ալեձեւ լեռնադարերուն վրայէն եւ գալարելով ցած կաղնեթփուաներու մէջէն եւ հոս հոն անցնելով մշակուած հողի կտորներէ՝ զորոնք գաղթական Չէրքէաները նորերս գործած են, մինչեւ որ լեռնագագաթէն սկսեալ մէկ ժամէ եւ քսան վայրկենէ կը հասնինք գաղթականաց Տանին (Tanin) գիւղը: Հոս տեղ հեռու չենք Հաջի-քէոյի հովտին եզերքէն, եւ ալեձեւ գետնին վրայէն մէկուկէս ժամ ձիով ճամբորդելով քաղաքը կը հասնինք: Լերանցամէջ պարանոցէն մինչեւ հոս իջած ենք 1000 ոտք եւ Շէյխ-Մուստաֆայէն սկսեալ 15.7 մղոն ճամբայ կտրած: Ճամբան հիանալի կերպով դիւրին է, եւ նաեւ իւր արդի վիճակին մէջ որեւէ դժուարութիւն չունի բեռնակառայ երթեւեկութեան համար:

Իմ չափմանցս համեմատ՝ Ալաջայէ մինչեւ Էտոնիս եղած հեռաւորութիւնն է 47.84 անգղ. մղոն (77 քիլոմետր) կամ 51 m. p. — Տաւիումէ եղած ամբողջ անջրպետն է իբր 85 m. p. Պր. Կիւմոնէ (Cumont) ընդունեցայ 1901 տարւոյ Յունիս Չին մղոնաքարի մը պատճենը որ նորերս գտնուած էր « յԱւղատ Հաջի-քէոյ, ի Մէջիդ-էօղիւ », եւ

¹ Անշուշտ հասկցուածն է Հաջի-քէոյի դեպք: Մէջիդ-էօղիւ դեպք Հաջի-քէոյէն չ'անցնիր: [Ո. Կիրերդի նոր քարտէսին վրայ Մէջիդ-էօղիւ գրուած է իբր երկրորդ ա-

պատճենը խաւրած էին Մարզուանի Ամբրիկեան մեր բարեկամները (Թ. 446), Կ'ըսուի թէ քարը կը կրէ արտասովոր թուականս CXXXVI. Ատի անտարակոյս սխալ ընթերցուած էն է. գոյութիւն չունի որեւէ ճանապարհի « Իլ-է », մը, որմէ Հաջի-քէոյ կարենայ 136 m. p. Տեառւ ըլլալ: Քարին գտնուելու տեղւոյն տարտամ նկարագրութեամբն անորոշ կը մնայ թէ արդեօք Ամասիա-Պանգրա ուղեգծին թէ Ամասիա-Տաւիում ուղւոյն կը վերաբերէր: Բայց աւելի հաւանական կ'երեւայ երկու կարելիութեանցս վերջինը. եւ փոքրիկ սրբազրութեամբ LXXXVI կարգալով (L փխ. Cի)՝ հիւնայի կերպով յարմար կու գայ. եւ ասով մղոնաքարը պիտանի հաստատութիւն մը կ'ըլլայ այն եզրակացութեանց՝ որոնց հասած էինք արդէն:

Մեր ճշգրտումներն անհրաժեշտ կ'ընեն Տաւտակին տեղեկութիւնը բարեփոխել. այսինքն ընթերցուածս՝

Tauio XIII Tonea XXX Garsi XXX Amasia փոխել ընել՝

Tavium XXX Karissa XXX (Թէքեէ-քէոյ) XXIII Etonia XXXIII Amasia.

Եթէ ուղեղ է Tomba՝ Տամբա-Հասունի հետ նոյն գնելը, պիտի ունենայինք՝ Tavium V Tomba XXV Karissa, եւն. բայց՝ որովհետեւ XXX թիւը կ'երեւայ թէ ուղեղ կը ներկայացընէ Taviumի եւ Karissայի (Garsi) մէջ եղած հեռւորութիւնը, Տաւտակը կրնայ իրաւունք ունենալ՝ երբ զTomba կը գնէ Տաւիումէ դէպի Եւազինա տանող ճամբուն վրայ. (§ 12 վերջերը): Շատ հաւանական է թէ Տաւտակին մէջ պակասած է կայան մը Պարսի եւ Ետոնիա տեղերուն մէջտեղ, եւ թէ այս կայանն է այժմ անանուն բնակատեղին ի Թէքեէ-քէոյ:

նուն մը Հաջի-քէոյի. թերեւս վերջնոյս պաշտօնական անունն է:]

Գ. Միհրդատին-Եւագինա:

§ 12. Յունիս 16ին դարձեալ Պոնտոսի ծագափունքները հասայ: Աէօշէ (Keuhne) կամ Geune՝ ինչպէս երբեմն կը կոչուի անուղիղ կերպով, փոքրիկ քաղաք մըն է կամ մեծցած գիւղ մը Եոզղատէն 20 մղոն (6 ժամ) հեռու գէպ արեւելք՝ Աբաստիա տանող ճամբուն վրայ, եւ Պոնտական հին Թագաւորութեան հարաւարեւմտեան անկիւնը կ'իյնայ: Իւր անունն որ իբր «հին» կը նշանակէ՝ «կիսաւերկամ աւերակ» իմաստով¹, ինչ ալ ըլլայ անուանս ծագումը, շատ լաւ կերպով կը պատկերացընէ տեղւոյն ներկայ վիճակը: Վարչական կենդրոն մըն է՝ բայց միայն «Է-դէ-է» մը խոնարհագոյն աստիճանի: Տեղւոյն աշխարհագրական նպաստաւոր դիրքէն կրնար սպասուիլ թէ կարեւորութիւն մ'ունեցող տեղ մ'ըլլար. բայց Եոզղատի հիմնարկութիւնն ու արագ բարգաւաճումը դատապարտած է զանի աննշան դիրք մ'ըլլալու. վասն զի իւր հին ուղեգծէն հեռացուցած է վաճառականական այն մեծ պողոտան՝ որ Աեսարիայէն Սամսոն կ'երթայ: Եոզղատի շատ մօտ ըլլալով, որով պէտք չկայ գէպ ի արեւելք ուղեւորելու ժամանակ հոս դադար մ'ընելու, նոյն իսկ «Է-դէ» մը շունի: Հին ժամանակները շատ տարբեր էր: Աէօհնէն մերձաւորապէս երեք մղոն անդին գէպ արեւմուտք՝ հին ուղեգծերու ցանցակերպին համար շատ կարեւոր հանգոյց մը կար, ուր ոչ նուազ քան վեց ուղիներ իրարու կը հանդիպէին: Այստեղ գէպ ի արեւելք Տաւիումէ Աբաստիա տանող ճամբան կը կտրէր առեւտրական այն ուղին՝ որ Աեսարիայէն եւ Թերմայէ («Աբբունի Զերմուկք» Basilica Therma, այժմ՝ Տէրշէնէ Հ-

¹ [Ակնարկուածն է «Է-դէ» (պարսկերէն), որ կը նշանակէ «ձեր», եւ «հին, մաշ», Ծ. թ. 1]

էմ) կու գար դէպ ի Ամիսոս երթալու համար. եւ ուրիշ ճամբաներ կը բաժնուէին՝ արեւելեան հիւսիս-արեւելք ուղղութեամբ՝ դէպ ի Սերաստոպոլիս, եւ հիւսիս-արեւելեան ուղղութեամբ՝ դէպ ի Ջելա: Առաջինը այժմ Սերաստիա տանող պողոտան է: Երկրորդը նաեւ համեմատաբար նորագոյն ժամանակներս մնացած է դէպ ի Սեւ Եոզլ տանող պողոտան, — «**Ջէրթ-էօլ**» (= «**Ճորթէ Եօլ**»՝ արքունի ճանապարհ), ինչպէս թախճալից կ'ըսեն տեղացիք, — եւ երբեք ալ բոլորովին անգործածական չէ եղած. բայց **Իճա-չ-չը** շինութեամբ առեւտրի մեծագոյն մասը գարձած է Եոզլատի վրայէն անցնող շրջուն ուղեգծին, որ հին ուղւոյն հետ կը միանայ Այաջայի հարաւակողմը քիչ մը հեռուն: Միւս երկու՝ դէպ ի Սերաստոպոլիս եւ Ջելա տանող ճամբանները հիմայ ինկած են: Այսչափ ճանապարհներու խառնուելու տեղն իրաւունք ունէինք կարեւորութիւն մ'ունեցող քաղաք մը սպասելու. բայց ասոր արգելք եղած էր քիչ հեռուն դէպ ի հարաւ գտնուող հոյակապ նիստ մը, որ այժմ **Աբդի-Նի-Ալէ** կը կոչուի, կէօհնէէն իբր վեց կամ եօթ մղոն հարաւ-արեւմուտք, եւ ժամ մը կամ քիչ մ'աւելի հարաւայն կէտէն՝ ուր Սամսոն տանող հին ճամբան կը կարէր **Էթրէ-էօլ** («կոր-գետ», ածկ. «էյրէ» ծուռ, կոր) գետը, որ Եոզլատէն դէպ ի կէօհնէ օձապտոյտ կը գալարի արեւելեան ուղղութեամբ, եւ ասկէ՝ կէօհնէ-սու անունն առնելով՝ կը դառնայ դէպ ի հարաւ, եւ յետոյ դէպ ի հարաւ-արեւմուտք՝ **Ատալիի քովէն**, եւ կը խառնուի **Անակ-սու գետին** հետ՝ Օսման-Փաշա-Թէքեէ տեղւոյն մօտերը տեղ մը: Բերդը թառած է վսեմ եւ պայծառ եզրաւու-

1 Այս գետին ընթացքը սխալ նշանակուած է քարտէսներու վրայ՝ որոնց ամենքն ալ չ. **Աբերդի** կը հետեւին: Չ. **Աբերդի** նորագոյն քարտէսը՝ զոր դժած է Շանտրի երկատիրութեան (Chantre, Mission en Cappa-

բաժ սարածագի մը վըայ՝ որ քանի մը հարիւր սոք բարձր կանգնած է այն լեռնագծէն՝ որ կէօհնէէն դէպ ի հարաւ-արեւմուտք կ'երկարի, եւ եզրափը կը կազմէ այն բլրաշխարհին՝ որ դէպ ի արեւմուտք կը տարածուի մինչեւ Եոզղատ, եւ կը խոնարհի կ'իջնայ դէպ ի Էգրի-էօզ: Լեռնագծին եզրը եւ գետը կը կազմեն եռանկիւնի մը երկու կողերը՝ գազաթնակէտն բլլալով կէօհնէի մօտ. եւ Էգրի-էօզի օժանդակ մէկ բաղկին՝ որ կայէին ներքեւէն վար կը հոսի, փոքրիկ հովիտը այս գազաթնակէտը հատուածելով՝ կը ստեղծէ ճամբու դիւրին գիծ մը՝ Ալաջայէ եկող ճամբուն, որ բերդին ճիշդ ստորոտէն կ'անցնի եւ կը տանի Թերմա (Արքունի ջերմուկ) եւ կեսարիա: Բերդը կը զբաւէ ամէն ուղեւորի աչքը, երբ Եոզղատէն դէպ ի արեւելք կու գայ, եւ իւր հորիզոնին վըայ տեսանելի կը մնայ մղոններով՝ ամէն ուղղութեամբ: Տարակոյս չի կրնար բլաւ թէ այս վեհատեսիլ բերդն բլայ Մէհրդ-դէն (Mithridation, Միհրդատակերա), Տրոկմացուց երեք ամբոյններէն (φρούρια) մին՝ զոր = Պոմպէոս տուաւ Բրոզիտարոսի՝ անջատելով Պոնտական թագաւորութենէն՝: Անկէ ետքը Գա-

doce) համար, շատ աւելի կը խոտորի ուղիղէն քան իւր հնագոյն քարտէսները. եւ ցաւով կը տեսնեմ թէ Ռ. Կիբերդ Փոքուն - Ասիոյ իւր նորագոյն քարտէսին մէջ (1:40 .000) ընդունած է իւր հանգուցեալ հօր դասաւորումը, որուն հետեւութիւնն սյն եղած է որ Քէօհնէի եւ Տերզիլիի մէջ եղած ամբողջ աշխարհամասն անոյս կերպով սխալ եղած է: Օրինակի համար՝ Տերզիլի շատ աւելի արեւելք գրուած է, (Տերզիլիէն 12 վայրկեան անդին կետէ մը 330° ուղղութեամբ՝ Արգէոսի ամենարձր կատարը 177.50 կը ցուցնէ.) դարձեալ Եսպըր-թաշ՝ որ կէօհնէ-էօզի վըայ է, դոնէ 12 կիլոմետր աւելի վար հարաւ գրուած է (իրականութեան մէջ կէօհնէն 15 կիլոմետր հեռու է):

Ստրաբոն, էջ 567:

դատից մաս մնաց: Նոյնութիւնը կը հաստատուի աւերակաց երեւութէն ալ, որոնք այնպէս են ինչպէս կրնայինք սպասել Գաղատական նստի մը մէջ: Ակառան ընդարձակ դագաթան վրայ՝ որ այժմ ցած մացառներով ծածկուած է, քիչ բան կը մնայ տեսնելու՝ բացի վերելքի ճամբուն հետքերէն եւ հոս հոն պատուարներու մնացորդներէն. բայց վարի քաղաքին՝ որ հիւսիսակողման մեղմ դարին վրայ շինուած էր, տարածութիւնը կը ցուցնէ կործանած թափթրփած կոշտ եւ անկովի քարերէ պարիսպը, որ քառակուսոյ մ'երեք կողերը կը պատէր՝ շորորդ կողն ըլլալով նոյն ինքն վերնաբերդ-ակառան: Շրջապատ պարիսպը նոյն կոշտ շինուածակերտութիւնը կը ցուցնէ՝ զոր տեսանք Գաղատական բազմաթիւ բնակատեղիներուն մէջ 1898ին: Աստուած ամէն քարերն ուրիշ տեղեր տարուած են. ասոնցմէ բաւական մեծ քանակութիւն մը կը գտնուի շրջակայ գիւղերս՝ Մէնէր-Քէյլի՝ ներքեւի դաշտին մէջ (սեան բներ եւ վիմաքարեր), Բ-բ-լի՝ հիւսիսակողմը² (քանի մը վիմաքարեր եւ արձանագրութիւն մը՝ թ. 254), Աէօնէ (սիւններ, վիմաքարեր, գերեզմանաքարեր, եւ արձանագրութիւններ՝ թ. 255—6), ինչպէս նաեւ Աէօհնէի հիւսիս-արեւելեան կողման գիւղերը: Գէ-լ-ը Էլէէ՝ գիւղը՝ որ դէպ ի հիւսիս ժամ մը հեռու է, քանի մը հ-բ-լ-ը (tumulus) կայ, բայց խեցեղէններ եւ ուրիշ մնացորդներ չեն տեսնուիր:

Միհրգատիոն ժամանակաւոր անուն մըն էր, որ տեղի տուաւ հնագոյն յորջորջանայ՝ Հ. ու մէական եւ Բիւզանդական ժամանակները: Պեւտինգերեան Տախտակի չափազանց խառնակութենէն որոշ կէտ մը իբր ստոյգ երեւան կու գայ, այն թէ՛ Տաիուսմէն արեւելք եղած մէկ կէտին վրայ, ուր

1 Այլեւն իբր 20 վայրկեան (90.5° ուղղութեամբ) հեռու է եւ Աէօհնէն 1 1/2 ժամ:

2 Այլեւն 1 3/4 ժամ հեռու (8° ուղղութեամբ):

անդդ. մղոն՝ կամ 24 կիլոմետր) հեռու կ'իյնայ Եւազինայ արեւմտակողմը եւ XX Հռոմէական մղոն (18. 80 անդդ. մղոն կամ 30 կիլոմ.) հեռաւութեամբ՝ Տաւրոսի արեւելակողմը: Այս ամէն թուերուն վրայ լոյս պիտի սփռէ Եոզղատի տեղն եղած կայանի մը գոյութիւնը, թէ այս կայանն իրականին ըլլար ի վերջոյ Tomba, եւ թէ Saralio, այսինքն՝ Պաղոմեայ Saralosը, որ՝ Տրոկմացուց քաղաքներէն մին ըլլալով՝ զժուարաւ կրնայ կեցած ըլլալ այն տեղը՝ ուր այս թուերը (ξδ' L^α μα' γ^α) զանի կը զեւեղեն, Եւազինայ հարաւարեւելակողմը:

Եւազինա յետոյ կոչուեցաւ Վերինոպոլիս (Verinopolis²) ի պատիւ Վերինայ՝ Լեւոն կայսեր (457—474) կնոջ, եւ քիչ մ'ետքն եպիսկոպոսանիստ եղաւ: Վերջին գարերուն մէջ իբրեւ կարեւոր բերդ մը կ'երեւայ նախ Բուկելարեան բանակաթեմին՝ յետոյ Քարսեան բանակաթեմին մէջ³:

Դ. Եւազինայէ Սերաստուպոլիս:

§ 13. — Հռոմէական ժամանակներուն իրաց համար՝ Կեօհնէ Գաղատիոյ ամենավերջին անկիւնը կ'իյնար, ուր կը կապուէր Կապպադոկիոյ հետ մէկ կողմանէ եւ Գաղատական Պոնտոսի հետ միւս կողմանէ: Գաղատական Պոնտոսի սահմանագիծը Գաղատիոյ հանդէպ կ'անցներ հաւանօրէն Կեօհնէի հիւսիս-արեւելքը ձգուող Ջրաբաշխին երկայնութեամբն եւ լեռներուն վրայէն մինչեւ Չորոսմի

¹ Եոզղատէն մինչեւ Բարալի եղած անջրպետն է 14.92 մղոն. գրեթէ նոյնչափ է մինչեւ Կալէ եղած հեռաւորութիւնը շխտակ ճամբով:

² Խամօէյ՝ անդ, էջ 247: և ն:

³ Կոստանդին, de administr. imperio, p. 225. (հրատան քաղաքի) տես Gelzer, անդ:

մտնէ զեար. իսկ ճամբան կ'անցնի նեղ ձորէն՝ որ հիւսիս-արեւելեան ուղղութեամբ կ'ընթանայ բաւական մղոն տեղ: Մէկ ժամէն եւ 48 վայրկեանէն հասանք Չէքքէզներու Այլ-լը գիւղը՝ զեարն աջ ափին վրայ, ուսկից շեղեցանք՝ անօգուտ այցելութիւն մ'ընելու Թէքիր գեղին՝ որ ձախ կողմը գէպ ի բլուրները 35 վայրկեան վեր կ'իյնայ, փոքրիկ օժանդակ-գետակի մը գլուխը՝: Այլվայրէն 38 վայրկեան անդին Թէքիր-Իօզիւ գետը կիրճ մը կը մտնէ եւ դառնալով խիստ շրջան մը կ'ընէ գէպ ի հիւսիսային հիւսիս-արեւմուտք: Ասպանին մուտքէն ետքը կը դառնանք գէպ ի արեւելք՝ ալեձեւ դարերու վրայէն կէս ժամու մէջ հասնելով Իչքէ-յէ-ի (Եաղջըլարէ 12:17 մղոն հեռու) գիւղը, որ ճամբու շիտակ գծէն իբր 10 վայրկեան աւելի հաբաւ կ'իյնայ:

Մինչեւ այս տեղ հին կեանքի շատ քիչ հետքեր գտայ եւ ոչ փաստ մը այն մասին թէ հին ճամբուն գծին հանդիպած ըլլամ. սակայն մեր բռնած ճամբան շիտակ է եւ Եաղջըլարն անցնելէն ետքը որեւէ կարելիութիւն չկայ ուրիշ տարբեր գծի մը¹: Իզէքիլիւկէն քանի մը վայրկեան գէպ ի հարաւ հին բնակավայր մը կայ՝ որ Ո-շ-իլ-է-է-ի-ի-ի կը կոչուի. բայց հնութեան մնացորդներէն շատ քիչ բան կայ տեսնելու՝ բայց եթէ գերեզմանոցին մէջ քանի մը քարեր, որոնց մին անարձանագիր մղոնաքարի մը կը նմանի: Այն տեղւոյ մօտ՝ ուր Չէքքէք-Իրմակ (հին՝ Սկիւլաքս) գետը կ'անցնուի, գիւղէն վար կէս ժամէն քիչ մ'աւելի հեռու², մեր ճամբուն կու գայ կը միանայ այն երբեմն գործածական նշանաւոր առեւտրական պո-

1 Թէքիր՝ Այլվայրէն իբր 290⁰ ուղղութեան մէջ է:

2 Դասե ճամբուն առաջին մասին մէջ շատ քիչ կարելիութիւն կայ տարբեր ուղեգծի մը համար:

3 Եանդի (Yangi, Եանդը) երկու ժամ աւելի անդին է գէպ ի արեւելք:

զրտայն, որ կեսարիայէն գալով՝ Ռուստիկիինի եւ կարա-մազարայի վրայէն՝ կ'երթայ դէպ ի Չելա, Ամասիա եւ Մամսոն. թէպէտ եւ այսօր կ'երեւայ թէ վաճառականութիւնը թողած լքած է այս ճամբան եւ անոր փոխարէն ընտրած միւս գծերը՝ Եոզղատի եւ Սերաստիոյ վրայէն, մասամբ որովհետեւ հոս խճուղին կը պակսի եւ մասամբ որովհետեւ Դէվէջի-Տաղ լեռն իբր պատուար արգելք կը կանգնի լեռնուղոյն դէմ: Բայց թէ ճամբուս կարեւորութիւնը սահմանափակուած չէր միայն մերձաւոր անցեալով՝ բաւական են ցուցնելու այն հաստատակաւոյց կամուրջին աւերակները, որ այժմ քէ-է-է-է-է-է-է- (կտրած կամուրջ) կը կոչուի, եւ որոնք այսօր ալ կը գործածուին գետէն անցնելու համար: Կամուրջն ունի երկու կամարներ՝ որոնք յեցած են կենդրոնական կամարակալի մը վրայ, որուն արտաքին երեսի դրուագը քայքայած տարած է հոսանքին բռնութիւնը: Ներքին շինուածքի կմախքը կը բաղկանայ քարերէ՝ որ կրաղիւսի (կեմենտ) մէջ թաղուած են: Տակաւին լաւ պահուած երկու կամարամոյթերուն երեսը դրուագուած է խնամով շորեքիւսի կոփուած քարերով: Կամուրջն՝ եթէ Հռոմէական չէ, գոնէ Սելջուկեան հնագոյն շրջանէն է:

§ 14. Մերմոնաս (°) — Երկու ճամբաներ կը բաժնուին Կէ-ւ-ւ-ւ գիւղին արեւելակողմը քիչ մը անդին, իսկ գիւղը $5\frac{1}{4}$ մղոն հեռու է Իգէրի-յիւկէ դէպ ի հիւսիս-արեւելք: Աճառականական ճամբան կողմնական հովտէ մը վեր կը բարձրանայ մինչեւ Կադիչէհէր եւ յետոյ կտրելով անցնելով Դէվէջի-Տաղը՝ կը տանի Չելա, մինչդեռ Սերաստոպոլիս տանող ճամբան կ'անցնի գլխաւոր հովտին կենդրոնէն, որ հովիտը զառիվեր դէպ ի լեռ կ'ելլէ նախ հիւսիսային կողմը եւ յետոյ հարաւային կողմը կը հասնի երկայն ու նեղ լեռնաքամակ մը՝ որ գետը աչքի տեսութենէն

կը ծածկէ: Ճամբաներու երկճղման մատերը կրնանայինք յուսալ հին բնակատեղի մը գտնել. եւ արդեամբք ալ շրջակայ գիւղերը, յատկապէս Կարալի եւ Բէլլէ-է-էջ, լի են հնութեան մնացորդներով, — սիւներ¹, կոփածոյ կտորներ, շինութեան քարեր եւ քանի մ'անարձանադիր գերեզմանաքարեր: Հին տեղւոյն գիւղը բոլորովին բացառյալ չէ. բայց թերեւս Քիլիսէ-էջ (նանդիէ 1 ժամ հեռու գէպի հիւսիսային հիւսիս-արեւելք) ամէնէն աւելի հաւանականութեան իրաւունքն ունենայ: Հին անունը կրնայ շատ լաւ Սերմուս (Sermusa) ըլլալ, զոր Պտղոմէոս² Գաղատական Պոնտոսի մէջ կը դնէ, եւ Եւագինա-Չելյա ճամբուն վրայ (§ 20) այնպիսի գրից մէջ կը ղետեղէ վերաբերութեամբ Պլեւրամիսի, որ գերազանցօրէն կը յարմարի մեր այս տեղւոյն: Քաղաքն երկու անգամ յիշատակուած է Պելոփոնզերեան Տախտակին մէջ, այսինքն՝ (-) նախ՝ ուղեգծիս մէջ՝

Zela XXXII Stabulum XXII Seramisa XVI Neocaesaria. եւ (է) երկրորդ ուղեգծիս մէջ՝

Euagina XXIII Saralio XXII Zama XXXV Aquas Aravenas [Տէրդէլլէ-Համմ] XX Dona XX Sermusa XVI Siva [Եօղոնն շէնոմ] . . . Mazaca Cesarea.

Այս երկու ճամբաներուն առաջինն ապահով ուղիղ չէ, որովհետեւ Չելյայէ նէոկեսարիա տանող ճամբան պէտք է որ Կոմանայէ անցնի: Ստրաբոն³ որ զարձեւալ կը հանդիպի իբր „ad Stabulum“ Եւագինայէ Կոմանա տանող ճամբուն վրայ, անշուշտ նշանակելու է Սերաստոպոլիսը, որ տեղ մը չէ յիշուած: Երկրորդ ուղեգծիւ խառ-

¹ Կարալի գիւղին գերեզմանոցին մէջ եղած մէկ սիւնը շատ կը նմանի մաշած եղծուած մղանաքարի մը:

² Պտղոմ. Ե. 6. 8: Սերմուսայի մասին հմմտ. Ramsay, Hist. Geogr. of Asia Minor, p. 262.

նուրդ մըն է այլեւայլ ուղիներու, եւ կը պարունակէ Տէրղիլի-Համամէ եկող ճամբայ մը որ Սիվայի վրայէն (Եօղ-ն շէ-ր կամ Ե-ղ-նէ-ս՝ ինչպէս որ տեղական արտասանութիւնն է) կը տանի Կեսարիա: Արդ Sermusa-յի կրկին յիշատակութիւնը գուշակել կու տայ թէ անի ճամբաներու միացման կէտի մը վրայ դիրք մ'ունէր. եւ մեր այս նիստը կ'իյնայ ճիշդ այն կէտին վրայ՝ ուր Եւագինա-Սեբաստոպոլիս ուղին կը կտրէ Ջելայէն Կեսարիա տանող ճամբան՝ որ անշուշտ կրնայ Սիվայի վրայէ անցած ըլլալ: Տախտակին մէջ ամէն անգամ Sermusa անուան կցուած XVI m. p. թուականը բաւական ճշգրտութեամբ կը ներկայացընէ Քիլիսէ-քէոյի եւ Սուլու-Սէրայի մէջ եղած հեռաւորութիւնը¹: Սակայն Տախտակին խառնակութիւնն այնչափ մեծ է որ գրեթէ անօգուտ է անկէ որոշ փաստ մը հանելու ջանալը:

§ 15. Եթէ ուղիղ է մեր այս նոյնացումը՝ Սերմուսա քիչ մը հեռուն կ'իյնար Սեբաստոպոլիս տանող այն ճամբէն՝ որ Քիլիսէ-քէոյի եւ գետին մէջտեղէն կ'ընթանայ: Մէկ ժամ հեռու գէպ ի հարաւ-արեւմուտք Ուլ-է-ղ (Երբեմն Ալ-է-ալ կոչուած) գիւղէն, գետի մ'ափը՝ որ Դէվէջի-Տաղի զառիթափներէն կ'իջնայ եւ լեռնագծին ձեղքուածքի մը մէջէն կը հոսի եւ կ'երթայ կը թափուի Չէքէրէք-Իրմակի մէջ, կը գտնուի աւերակ գերեզմանոց մը՝ բազմաթիւ սիւներով եւ այլ-եւայլ տեսակ քարերով, որոնք՝ ինչպէս նաեւ Ուլուբաղի մէջ եղած մնացորդները՝ հաւանօրէն Սեբաստոպոլսոյ կը վերաբերին: Այլեւայլ գիւղերու մէջ ձիթահանի ճնշաքարերու գտնուիլը կը

¹ Քիլիսէ-քէոյ՝ Կաղիշիհէրէ կէս ժամ անդին կ'իյնայ, ուսկից մերձաւորապէս 4 մղոն է մինչեւ Եօնջալի՝ ըլլուրներու վրայէն անցնող ճամբով: Վերջին գիւղէն մինչեւ Սուլու-Սէրայ 12՝62 մղոն է:

ցուցրնէ թէ հին ժամանակները հովանի ամէն կողմ ձիթ ենին կը մշակուէր: Աւլուբաղէն անդին ճամբան փոքրիկ աղի լճի մ'եզերքէն կ'անցնի, եւ լեռնազխոյն շորս գին բոլորելով կը մանէ Ս--լ--Սէր--) գեղը՝ Հոռմէական կամրջի մը վայէն, որուն ծնօտորմին վայ է այն հանրածանօթ արձանագրութիւնը (Թ. 286) որ կապագողկացուց աշխարհին Առիանոսի վարչութիւնը կը յիշատակէ: Կամրջին քովն եղած գերեզմանոցին մէջ կայ Գորգիանու Գ. մէկ մղնաքարը (Թ. 472), որ անկատար ձեւով արդէն հրատարակուած է:

§ 16. Մեքսատուրիս: — «Ջրաբերդ» (Ս--լ--Սէր--) «Ջրային պալատ» յարմար անուն մըն է գեղիս, որ կանգնած է բարձունքի մը գլուխը՝ մէկ կողմանէ Չէքէրէք-Իրմակի գլխաւոր գետաբազկին եւ միւս կողմանէ փոքրիկ օժանդակբազկի մը մէջտեղը, որ հարաւ-արեւելքէն հոսելով կու գայ: Այս հողաբլրակը՝ ինչպէս քաջածանօթ է՝ կը ծածկէ Սէր--դ--լէ--Հէր--լէ--դ--լէ--քաղաքին աւերակները: Քաղաքը վերահիմնարկութիւն մըն էր հնագոյն կարան (Karana)² գիւղին, որ երբեմն Ջելայի ենթարկեալ էր եւ յետոյ մաս

¹ Սուլու-Սէրայ՝ Աւլուբաղէ 5¹/₄ մղն (11¹/₂ ժամ) հեռու է:

² Սորարոն, էջ 560. տես W. M. Ramsay ի «Revue des ét. gr.» 1893, p. 252, որ յառաջ կը բերուի Սորարոնի բնագրին՝ Ռայնախի (M. Reinach) առած ընդունելի մէկ լուսարանութիւնը, որուն կը հաւանի ինքն աւայսինքն՝ τελευτήσαντος δ'έκείνου (այս է 'Ατελόγειος) ταύτην μὲν τὴν μερίδα οὐ πολλὴν οὖσαν ὑπὸ Ῥωμαίοις εἶναι συμβαίνει, καλουμένην ἐπαρχίαν (καὶ ἔστι σύστημα καθ' αὐτό) πολίχμιον οὐνοικισάντων (αὐσինքν Ῥωμαίων) τὰ Κάρανα, ἀφ'οὗ καὶ ἡ χώρα Καρανίτις λέγεται. Բնագրին մէջ եղած փոփոխութիւնը միայն այն է որ αὐτὸς կարն եղած τὸ γուրս ձգուած է:

եղաւ այն իշխանութեան՝ զոր Անտոնիոս կամ Աւգոստոս շնորհեց Ատեպորիքս իշխանին, որ Գաղատացի շորրորդապետական սոհմէն էր: Ասոր մահուանէ ետքը (3—2 Ն. Ք., տես թ. 286) այս փոքրիկ իշխանութիւնը կցուեցաւ Հռոմէական պետութեան եւ Գաղատական Պոնտոսի մէջ խառնուեցաւ: Այն ատեն կարանա փոխուեցաւ «քաղաքի» (πóλις) անոր նոր շրջապատին մէջ հաւաքելով բնակեցրնելով բոլոր շրջակայ վիճակին բնակիչները¹. եւ քաղաքն իւր այս ծննդեան օրէն սկսաւ հաշուել իւր թուականութիւնը: Շատ բնական էր ենթադրել թէ նոյն ժամանակն առած ըլլայ նաեւ իւր «Սերաստոպոլիս» յորջորջանքը: Սակայն Ստրաբոն այս նոր անունը չի յիշեր: Նոյնպէս նաեւ զՍերաստիա կը յիշէ միայն անոր հին անուամբը՝ «Մէթուդուլ» (Մեծ քաղաք): Ուստի կրնանք Ռամսէյի հետ՝ հետեւեցրնել թէ այս նոր յորջորջանքները շնորհուած ըլլան միայն 19 Յ. Ք. տարիէն ետքը: Բայց թերեւս անապահով ըսն մ'ըլլայ Ստրաբոնի լուծեան վրայ միայն հիմնել փաստ մը. որովհետեւ չի յիշեր նաեւ (Պոնտական) Լաւողիկէի անունը՝ որ կ'երեւայ թէ նոյնպէս վերահիմնարկութիւն մըն է իւր յիշած կիզարի (§ 35) տեղւոյն. եւ սակայն ապահովապէս իւր ժամանակն ալ սովորական գործածական էր այս անունը: Այս խնդիրը կրնար վճռուիլ կոպտոսի մէջ գտնուած մէկ արձանագրութեամբը, որ հրատարակուած է՝ ի ClL, III, Suppl. 6627 (= Eph. Epigr. V, Nr. 15), եթէ ընդունուի Մոմսէնին շանակած ժամանակը: Արձանագրութիւնը կը հաղորդէ այն զինուորաց անուանացանկը որովք Եգիպտոսի մէջ այլ-

¹ Նման «բն-ի-լը-բի-ն» (συνοικισμός քաղաք մը ժողովուրդ բերել բնակեցրնել) համար՝ որ տեղի ունեցած է ի Փազիմոն-Նէպոլիս՝ տես § 41:

² Ramsay, ի Rev. des ét. gr. անդ (էջ 252):

եւայլ զինուորական աշխատութիւններ գլուխ հանած են, եւ ասոնց մէջ կայ զինուոր մ'ալ Սերաստոպոլէն: Մոմէն այս յիշատակարանն Աւգոստոսի ժամանակէն կը դնէ, եւ մենք պիտի շարնդ գնինք իւր այս տեսութեան դէմ պայքարելու: Միայն նշանակենք թէ հաւանական չէ թէ Տիբերիոսի ժամանակէն աւելի անագանագոյն ըլլայ նոյնրորովհետեւ Գանգրա տակաւին չէ առած իւր «Գլուխ-նիւ-դոն-ը» տիտղոսը, որ հաւանօրէն առնուեցաւ Վալիգուդայի պատուոյն համար:

Սուլու-Սերայ իմ հաւաքած արձանագրութիւններէս (Թ. 285, եւն) մէկ քանին արդէն հրատարակուած են, բայց ասոնց ոչ ամէնքը՝ ճշգրտօրէն: Նորագիտներէն երկուքը մասնաւոր հետաքրքրութեան արժանի են: Թ. 288 արձանագրութենէն կ'իմանանք թէ այն Սեւերիանոսը, որուն բանակը Պարթեւաց ձեռօք ոչնչացաւ Ելեգիայի (Elegeia) քով 161ին Յ. Ք., չէ՛ ինչպէս մինչեւ այժմ կը կարծուէր թէ ըլլար՝ Պ. Եղիոս Սեւերիանոս Մաքսիմոս, Արաբիոյ նախնիք. այլ՝ Մ. Սեղատիոս Սեւերիանոս Յուլիոս Ռուփինոս, որ Պարթեւաց դէմ բանակին հրամատարն եղած էր իբր կուսակալ Վապագոսիկիա նահանգին, որուն մէջ առնուած մաս եղած էր Սերաստոպոլիս ալ իբր 106 Յ. Ք. տարիէն ի վեր՝ Երկրորդը՝ Թ. 290. նշմար մը կու տայ քաղաքիս ներքին քաղաքաբաշխական կազմակերպութեան մասին, որ ճշգիւ համեմատ էր Յունական-Հռոմէական սովորական տիպարին: Հրապարակական պաշտօնէութեանց մէջ կը յիշուին՝ Իշե-ն (Ἄρχων, Archon քաղաքապետ), Հ-ն-դ-ի-ս-դ-ի-ս (Θιασάρχης, Thiasarchus) եւ Ա-ն-ն-դ-ի-ս (Ἀγορανόμος, Agoranomus): Յատկապէս կարեւոր են Վայսերական Պաշտաման մասին եղած տեղեկութիւնքը: Սերաստոպոլիս քաղաքին

1 Տես Թ. 290ի մասին մեկնարանութիւնը:

ձէջ գոյութիւն ունէր քաղաքաբաշխական պաշտամունք մը կայսերաց, որուն քրմապետութիւնը ցկեանս ունէր Մ. Անտոնիոս Ռուփոս (տող 12—13): Իւր այս իշխանութեամբ ներկայացընել տուած էր շքեղ սուսերամարտութիւններ (*μυνομαχια*, մենամարտք) եւ գաղանամարտի տեսարաններ վայրի գազաններու (*χονγγέσια* գազանամարտեր): Ասիկայ կը ցուցընէ թէ սուսերամարտերու (*munera*) եւ գազանամարտերու (*venationes*) ներկայացման իրաւունքը տրուած չէր գաւառական քրմապետին: Ամենայն հաւանականութեամբ քաղաքաբաշխական քրմապետին (*ἀρχιερεὺς*, «քահանայապետ») պարտաւորութեանց մին էր, միայն թէ Ռուփինոս նոյն ներկայացումները տուած էր մեծ առատաձեւութեամբ: Բաց ի այս քաղաքաբաշխական քրմապետութեանէն՝ Ռուփոս ունէր նաեւ Պոնտապետի (*Ποντάρχης*, Pontarchus) կամ Պոնտոսի երիցապետութեան կամ քրմապետութեան պաշտօնը¹, «Ի Նէոկեսարիա՝ ի մայրաքաղաքին Պոնտոսի» (տող 7—8): Հոս «Պոնտոս. ըսելով կը հասկըցուի «Միջերկրեայ Պոնտոս» (Pontus Mediterraneus), այսինքն՝ Գաղատական Պոնտոս (Pontus Galaticus) եւ Պողեմոնական Պոնտոս (Pontus Polemoniacus), որոնք այս ժամանակ կապագողովկիոյ նահանգին մաս կը կազմէին: Այս գաւառը Աշխարհիկ (τὸ Κοινόν) մ' ունէր՝ որ կը բաղկանար Նէոկեսարիոյ, Ջելայի, Սեբաստիոյ, Ամասիոյ, Սեբաստոպոլիս եւ կոմանայ քաղաքներուն ներկայացուցիչներէ: Գումարումները տեղի կ' ունենային (ինչպէս մեր արձանագրութիւնը կը ցուցընէ) եւ խաղերը կը տրուէին (ինչպէս գրամները կ' ապացուցանեն) Նէոկեսարիա մայրաքաղաքին ձէջ: Այսպէս նաեւ Փոքր-Հայք (Armenia Minor), որ նոյնպէս կապ-

¹ Այս տիտղոսներուն համազօրաց կամ նշանակութեան մասին՝ տես արձանագրութեանց մեկնութիւնը:

պագովկիա նահանգին մաս եղած էր, ունէր իւր սեպհական շինարարական (τὸ Κοινόν) ու շարժարար ('Αρμενιάροχης, արձ. Թ. 358): Պողեմոնական Պոնտոսի կցմանէն յառաջ՝ որ տեղի ունեցաւ 63ին Յ. Ք., հաւանորէն Գաղատական Պոնտոս ալ ունեցած է իւր սեպհական աշխարհագորոյն որ Ամասիա կը գումարուէր, որով նոյն քաղաքը միշտ կը պահանջէր իւր իրաւունքն իբր «մայրաքաղաք» (μητροπόλις, տես տող 24) տիտղոսը կրելու, ճիշդինչպէս որ Պափղագոնիացիք աշխարհագորով մ'ունէին որ Գանգրա կը գումարուէր եւ տարբեր էր ցեղային՝ «Ժողովէն Գաղատացւոց կամ Գաղատիայ» (Κοινόν τῶν Γαλατῶν կամ Γαλατίας, հմմտ. արձ. Թ. 61):

Ե. Սեբաստոպոլիսէն Սեբաստիա:

§ 17. վերիսա: — Յունիս 21ին թողուցի Սուլու-Սէրայն՝ շարունակելով հետադարձել ճամբան «ի Տաւրոյ ընդ Սեբաստոպոլիս մինչեւ զՍեբաստիա» (a Tavo per Sebastopolim Sebastiam usque), ինչպէս կը բացատրէ Անտոնինեայ Ուղեգրութեան վերնագիրը: Կտրելով անցնելով ցած լեռնագիծը՝ որ վար կ'իջնայ դէպի գետը՝ Սուլու-Սէրայէ անդին, ճամբան կ'իջնայ Արտէմի-Օլէ կոչուած հովիտը, որ բարեբեր հողի երկայն ու նեղ շերտ մըն է եւ 16 կամ 17 մղոն ետքը կը բացուի ու կ'ընդարձակի Բոլբուսի հարուստ դաշտին, որուն վրայէն կ'անցնի Սեբաստիայէ եկող առեւտրական մեծ պողոտայն դէպի Եւդոկիա, Ամասիա եւ Սամոն: Մեծ ակնկալութեամբ դիտած էի դէպի այս բարեբեր աշխարհամասը, եւ այլեւայլ անգամ այցելեցի բազմաթիւ գիւղերը՝ որոնք հովտին երկու եզերքները կարգաւ շարուած են եւ դաշտին վրայ խայտատեսիլ սփռուած են, բայց յուսախաբ եղայ՝ հին կենաց շատ տկար հետքեր միայն գտնելով: Այս

§ 18. *Միայնայի Մեքաստիա*: — Միտքս դրած էի որ Բոլուսն ըլլայ իմ ուղեւորութեանս արեւելեան վերջին սահմանը՝ այս անգամուան համար. բայց պատշաճ գտայ ուղղել ճամբաս այցելութիւն մը տալով Սեբաստիոյ կուսակալին: Ասով առիթ ունեցայ կտրելու Հռոմէական ուղւոյն մնացեալ հատածն ալ, եւ այս մասին քանի մ'իբրողութիւններ միայն ունիմ յիշատակելու: Հռոմէական ուղին մեծաւ մասամբ նոյն գիծը կը բռնէ՝ զոր ունի այժմու խճուղին: Բոլուսէն կ'իջնայ դաշտն ի վար, որ քիչ մ'ետքը կը նեղնայ Չամլը-Բէլի (տճկ. «դէլ» քամակ լերանց) կողերով (հանգիպագօտիներով), եւ կը հասնի լերան ոտքը. եւ տկար գողուածէ մը գրեթէ ուղիղ գծով կ'ելլէ մինչեւ գագաթը՝ դաշտէն 1400 ոտք բարձր՝, ուսկից կը սկսի էջք մը 750 ոտք վար՝ հեղհեղատի մը կողէն՝ մինչեւ կալան-սուի հովիտը, որ Բիւզանդեան ժամանակաց Bathys Rhyax կամ Bathyrhyax կոչուածն է, որուն երկայնութեամբ կ'ընթանայ ճամբան ժամու մը չափ մինչեւ Էննի Խան: Քաղաքն այժմ «*سیار*» է եւ միշտ եղած է (ինչպէս նաեւ այսօր է) կցման կէտ այն ամէն ճամբաներուն՝ որ հիւսիսէն եւ արեւմուտքէն դէպ ի Սեբաստիա կը միտին: Ուստի տարակոյս չկայ թէ, ինչպէս Ռամուէյ կը թելադրէ², ներկայացուցիչն ըլլայ Սիար- (Siara) քաղաքին, ուր՝ Ուղեգրութեան համեմատ՝ Տաւիումէ դէպ ի արեւելք եկող ուղիղ ճամբան կը միանար Սեբաստոպոլսոյ վրայէն եկող շրջուն ճամբուն հետ (էջ 204—5, 214) Անունը տեղ մը (անդ էջ 204) խանգարուած եղած է Simos կամ³ Sinos, իսկ ուրիշ տեղ մը (անդ էջ

¹ Գագաթին վրայ եղած իջեւանը (Խան) Բոլուսի հարաւակողմէն 100 դէպ ի արեւելք կ'իջնայ:

² Անդ՝ էջ 262, 266, 308:

³ Թերեւս յառաջ եկած ուրիշ փոխանակիչ ձևէ մը

205) գրուած Fiarasi ձեւը ծագած է՝ ինչպէս Ռամսէյ կը նշանակէ, անկէ որ *si* սրբագրութիւնը փխ. *fi* գրութեան՝ աւելցուած է սխալագիր Fiara ձեւին վրայ, որ սխալաձեւը օրինակուած է նաեւ Պտղոմեայ քով *Փiara* (Պտղ. Ե, 6, 12) ձեւով: Պտղոմեայ քարտէսին վրայ քաղաքիս համար նշանակուած դիրքը հիանալի կերպով կը համաձայնի Եէնի-խան գրից հետ: Ապահովապէս սխալ է Ուղեգրութեան տուած հեռաւորութեան շափր՝ իբր թէ Ալերիայէ XII m. p. հեռու ըլլայ, եւ հաւանօրէն պէտք է ուղղել X[V]II՝. Եէնի խանի մէջ գտնուած հնութեան մնացորդները բազմաթիւ չեն. բայց անտարակոյս բաւական քանակութեամբ գործածուած ըլլալու են Սէլջուկեան ընդարձակ խանի մը շինութեան համար, որ շինուած է կարմրորակ աւազաքարի շորեքկուսի կոփուած վիմաքարերով: Ընդհանուր կանոն մըն է բովանդակ Փոքր-Ասիոյ մէջ թէ ուր Սէլջուկեանք կը շինեն՝ հոն հնութեան մնացորդները գրեթէ բոլորովին կ'աներեւութանան. եւ այս կանոնիս համար աւելի ակնյայտնի համոզիչ փաստ մը չե՛ք կրնար գտնել քան նոյն ինքը Սերաստիա:

Եէնի-խանէն ճամբան կալան-սուի աջ ափին երկայնութեամբ կ'ընթանայ մէկ ժամ եւ քսան

ΣΙΑΛΟΣ (Ռամսէյ, էջ 260, Ծան.) ուստի M գրուած փխ. AA տառերուն:

1 Եէնի-խանէն մինչեւ Չամլը-Բէլի գագաթը 7.57 մղոն է Իճուզոյն վրայէն. գագաթէն մինչեւ Օրթա-Էփրէն որ ճամբէն քիչ մ'աւելի դէպ ի արեւմուտք կ'իջնայ, 4.82 մղոն է (չափուած՝ ոչ թէ հին խճուղւոյն վրայէն որ անհետ-թեթ ճամբով մ'որրապտոյտ բլուրն ի վեր կ'ելլէ, այլ նոր շրջուն ճամբով, որ իմ անցած ատենս տակաւին կը շինուէր.) իսկ Օրթա-Էփրէնէ մինչեւ Բոլուս կը հաշուի մէկ ժամ: Հեռաւորութեան այս չափերուն գումարն է մերձաւորապէս 26 քիլոմետր կամ XVII m. p. (Բեդիր-կալէնէ մինչեւ գագաթն է 11.48 մղոն՝ հին խճուղւոյն վրայէն):

վայրկեան տեւողութեամբ մինչեւ գաշտին ծայրը, ուր գետը կիրճ մը կը մտնէ: Հոս գետոյ վրայէն անցնելով ձախ ափը եւ կէս ժամ ետքը կապանէն դուրս ելլելով՝ բլրաշատ գետնի մը վրայէն կ'ընթանայ մէկ ժամ եւ եօթն վայրկեան տեւողութեամբ մինչեւ Երզրդ-չայ: Ուրիշ լեռնոցի մը վրայէն 38 վայրկեան ձիափարելով կը հասնինք Ինջէ-սու, ուր տասն վայրկեան տեւող վերելք մը կայ եւ յետոյ 25 վայրկեան տեւող էջք մը մինչեւ Աղես գետը, որուն բնթացքին կը հետեւինք այնուհետեւ $2\frac{3}{4}$ ժամ մինչեւ «Սըւազ» (Սէ-բասթիա, Sebasteia): Եէնի Խանէ մինչեւ հոս ամբողջ հեռաւորութիւնն է 24,8 մղոն: Ուղեգրութեան համեմատ Սիարայի եւ Սեբաստիոյ մէջ եղած անջրպետն է XXXVI (անդ էջ 205, 214) կամ XL m. p. (էջ 204): Երկու թուերն ալ սխալ են: Ի՞մ շափմանս համեմատ ուղղելու է ճիշդ XXVI մղոն:

Զ. Վերիսայէ Զելա:

§ 19. Սեբաստիա երկու օր (Յունիս 24—25) մնալէն ետքը, ուր Բրիտանական հիւպատոսին՝ Անդէրսոնի (captain Anderson) բացակայութեան ատեն՝ որ իւր տունը ազնուաբար տրամադրութեան տակ զրած էր, իւր Ամերիկեան պաշտօնակցին Գր. Ջեւետի (Dr. Jewett) սիրալիր ասպնջականութիւնը վայելեցի, աճապարեցի վերադառնալ՝ Բոլուսի գաշտին հետազօտութիւնը վերոկսելու համար: Վառ գունով նկարագրուած տեղեկութիւն մը կ'ընծայէ աւերակներուն մասին, որ Աղիւսէն կէս ժամ հեռու՝ Ապսան-սույի աջ ափին վրայ գիւղ մըն է, համոզեց զիս ճամբէս խոտորելով այցելել նոյն տեղը. բայց ուրիշ բան չգտայ՝ եթէ ոչ գերեզմանոց մը (առանց կոփածոյ քարերու) եւ հին զիւղի մ'աւերակները գետոյն միւս

ափին վրայ: Յունիս 28ին նորէն մտայ Բուլուսի գաշտը եւ խուզարկեցի անոր բազմաթիւ գիւղերն գոյզն արգիւնքով մը: Այնուհետեւ մերձաւոր նպատակս էր Զէլ- (Zela, այժմ Zile): Միտքս գրած էի՝ եթէ կարելի ըլլայ՝ կտրելու անցնելու Սեբաստոպոլսէն Զելա տանող Հռոմէական ուղին, որուն մասին կարելի էր սպասել թէ պիտի կտրէր Գէվէջի-Տաղի գարեբը: Այսպէս ընել կարենալու համար՝ պէտք էր որ նորէն նոյն գիծն ընէի Արտիկ-Օվայի ամբողջ երկայնութեամբ, եւ ուրիշ գծուարութիւններ ալ արգելք կ'ըլլային: Աւտաի թողուցի այս ծրագիրը, եւ ընտրեցի ուրիշ ուղի մը, որ Զէքերէք-Իրմակի աջ ափին երկայնքէն կ'երթայ մինչեւ Գունդուզ (Gunduz, «Ան-ն-տի-ն» արձ. թ. 275) եւ յետոյ դառնալով բլուրներու մէջ եղած ձորէ մը՝ կը կտրէ Գէվէջի-Տաղի եւ Ակ-Տաղի մէջ եղած բաց լեռնադաշտը՝ Աիշիլ-Սէօյի-տ (Kizildja Suyut «Գըշըլ-Սէօյի-տ» կարմիր ուռի) գիւղին վրայէն, որ Գունդուզէ 1 ժամ 22 վայրկեան հեռու է գէպի հիւսիսային հիւսիս-արեւմուտք (արձ. թ. 276): Գիւղն անցնելէն ետքը՝ ճամբան ձախ կը դառնայ եւ ճիշդ գէպի արեւմուտք կ'ընթանայ հովիտներու շարքի մը մէջէն՝ երկու կողմերը բլուրներով պատած, որոնց կողերը պիտակուած ծածկուած են գիւղերով, մինչեւ որ Սիլիսի (Sillis) քով կը միանայ Սեբաստոպոլսէն Զելա տանող Հռոմէական ուղւոյն, որ գիծը պիտի նկարագրէ Պր. Աիւմն: Գրգըլջա-Սէօյիտի եւ Սիլիսի մէջտեղ հին կենաց ամենադոյզն հետքեր միայն գտայ, եւ վերջին գիւղն ալ չհասած՝ արդէն թողուցի ամէն հետախուզութիւն: Իրականին այնպէս հիւանդագին էի որ իրական արգիւնալից հետազոտութիւն մը չէի կրնար ընել, եւ շտապեցի Զելա հասնելու՝ առանց աջ կամ ձախ խոտորելու: Բարեբախտաբար Պր. Աիւմն իմ շաւղիս հետեւած է:

Հնախօսական տեսակիտով Չելա առանձնապէս յուսախաբ ընող տեղ մըն է: Հոս պէտք էր որ արձանագրեալ քարերը բաղմաթիւ ըլլային. բայց ասոնք գրեթէ բոլորովին անհետացած են: Գերեզմանոցի մէջ եղած քարերը շատ գէշ վիճակ մ'ունին. եւ բաղմաթիւ քարեր գործածուած են հետզհետէ եղած վերաշինութեանց մէջ այն բերդին՝ որ կղզիացեալ բլրոյ մը վրայ կը կանգնի, զոր Ստրաբոն «Շամիրամայ լեռ» կը կոչէ (Պտկ.): Քաղաքին մէջ նախնութաց ուղեւորներէն գտնուած են միայն սակաւաթիւ անարժէք արձանագրութիւններ¹, եւ ես ալ այն խեղճ ցանկին վրայ կրնամ աւելցընել միայն երեք հատ՝ դուզնաքեայ կարեւորութեամբ, եւ որոնց երկուքը Չերքէզները բերած էին Չելա՝ Սուլու-Սէրայի մօտերը եղած քրիստոնէական հին գերեզմանոցէ մը (Թ. 302, եւն):

Է. Չելայէ Եւագինա:

§ 20. Յուլիսի առաջին օրն ելայ Չելայէ եւ ձեռնարկեցի հետազօտելու այն երկիրը՝ զոր կը կտրէ Եւագինա տանող Հոռմէական ուղին, որ Պեւտինգերեան Տախտակին մէջ բաւական ճշգրտութեամբ այսպէս նկարագրուած է՝

Zela XXVI Ptemari XXVIII Aegonne.

Հարաւային հարաւարեւմտեան ուղղութեամբ կտրելով գաշտը՝ ժամէ մը հասայ Ար-ր-բ-ն-ու-ր («ցամաք աղբիւր») գեղը, որ քիչ մը աւելի վեր կ'իյնայ այն լեռնագծէն՝ որ գաշտը կը սահմանափակէ եւ կը բաժնէ Հիրիկի ջրաբաշխական գրութիւնը Սկիւլաքսի գրութենէն: Գիւղին գերեզմանատան մէջ մեր գտած Աոստանգիանու մղոնաքարը՝ որ Հելլենագոնտոս նահանգին անունը կը յիշատակէ

¹ Հ-Վ-ԷՆՆ. Ա. էջ 361. եւն. Perrot, Exploration, p. 379, Թ. 163 — 263 վարը:

(Թ. 467), ցուցուց թէ ճամբուն ուղեգծին հանգիստ էինք: Կուրուբունարէն քառասուն վայրկեան անդին սկսանք իջնալ ոչ մեծանիստ հովիտ մը, որ կ'ոռոգուի գետերով՝ որոնք Գէվէջի-Տաղէն կու գան եւ կը հոսին դէպի Ակիւլաքս: Այցելելով այն գիւղերը՝ որոնք հովտին եզերաց բլրաբազր կ'իյնան, մեծաւ մասամբ Գէվէջի-Տաղի խոնարհադոյն դարերուն երկայնքը, շգտանք ուրիշ արգիւնք մը՝ բայց միայն այն իրողութիւնը թէ հին ժամանակ այս տեղ ձիթենին կը մշակուէր: Ուղիղ ճամբան կ'ընթանայ Աւրուղի եւ 21 ֆուրսի (13.54 մղոն Չելայէ) վրայէն, եւ այժմ կը սկսինք ելլել այն լեռնագիծը՝ որ այս աւազանը կը բաժնէ 2էքէրէքի հովտէն: 2իֆթիքէն սկսեալ մէկ ժամու մէջ լեռնագագաթը հասնելով՝ մեր ճամբան կը սկսի իջնալ 2էքէրէքի մէկ օժանդակին ափին հետեւելով քառասուն եւ վեց վայրկեան տեւողութեամբ՝ մինչեւ Կամուշձիկ (Kamushdjik, «Գամուշձիկ»՝ եղեգնիկ), ուր ճամբան գետը թողլով՝ վար կ'իջնայ մեղմ ելեւէջներու վրայէն մինչեւ գետին ափերը 2տրուկ (Tehrük, «2տրուկ»): Չելայէն մինչեւ հոս ամբողջական հեռաւորութիւնն է 23 մղոն, եւ բնդհանուր ուղղութիւնը՝ հարաւ-արեւմուտք¹:

Չուրուկ հասնելով տեսայ թէ գիւղը հնութեան բաւական թուով մնացորդներ կը պարունակէ, ի միջի այլոց՝ երկու արձանագրութիւններ (Թ. 257—258). եւ հին բնակատեղի մը փնտռելու ատեն՝ առաջնորդուեցայ դէպ ի Կուլէ, որ կէս

¹ Այս իրողութիւնները կը ցուցնեն թէ այս գաւառիս ճամար քարտէսները տակաւին որչափ անհամապատասխան են: Ռ. Կիրեբաի նոր քարտէսին (1:400.000) վրայ՝ Չելայի եւ Չուրուկի մէջ եղած միջոցը 30.45 մղոն է (49 կիլոմետր), մինչդեռ Չուրուկի եւ Կէօհնէի մէջ եղած անջրպետը շատ աւելի փոքրիկ նշանակուած է. (մանրամասնութիւնքը տես § 21):

ժամ՝ բլուրներն ի վեր է՝ գեղ ի հարաւային հա-
րաւարեւմուտք: Տարակոյս շի կրնար բլալ թէ
հաս, գեղէն 900 սաք բարձրութեան վրայ, այն
հին քաղաքին տեղն է՝ զոր Տախասկը Պտէմարէն
(Ptemaris), իսկ Պաղամէս՝ աւելի ուզում թեամբ՝
Պլէւրամիս (Pleuramis¹) կը կոչէ, Զելայէն այն-
պիսի հեռաւորութեան մը վրայ՝ որ ճշգիւ կը հա-
մաձայնի Տախասկին տուած տեղեկութեան: Հիւ-
սիս-արեւելեան կողմէն մտնելով այս նստավայրը՝
հանդիպեցայ նախ շինուածքի մ'աւերակաց, որ
այժմ խառնակոյս մըն է թափած քարերու եւ
ցանուցիւր սիւներու: Ասոր գիմաց եկեղեցական
շինութիւն մը կայ, որուն յատակագծին մէկ
ուրուագիւր նախագիծը կը գնեմ (Պակ.), որչափ
որ կրցայ աւերածներուն խառնակութեան մէջ
ուրուագծել նոյնը: Աւղղանկիւնի շինուածք մըն
է, իբր 24 անգղ. կանդուն (yard) երկայն եւ 11՝
լայն, որուն ծայրը կրկին կողակաձեւ շինուածք մըն
է, որուն կենդրոնէն պատ մը կը շարունակուի միւ-
շեւ ամբողջ երկայնքին երեք-հինգերորդ մասը,
բաժնելով շէնքին ներքին մասն երկու կէտի՝
առանց ըստ երեւութին մէկէն միւս անցնելու
մուտքի մը: Այս կենդրոնական պատին ծայրը խա-
շաձեւ կարող ուրիշ պատ կը հանդիպի, որուն մէջ
երկու դռներ բացուած են՝ յիշեալ երկու հա-
տուածներուն մուտք տալու համար: Այսպիսով
ամբողջ շէնքը բաժնուած է երկու փոքրիկ մասուով՝
հասարակաց ներքնագաւթով մը, որուն ճակատի
պատը ծածկուած է թափած քարերուն տակ:
Արդակին ծայրը պատերը կեցած են տակաւին իբր
ինը կամ տասն սաք բարձրութեամբ: Քիչ մ'ան-
գին եկանք փոքրիկ վերնաբերդ մը, որ ամրացուած

¹ Պաղ. էջ. 6, 8 (հրատ. Müller-Fischer, Պարիս
1901, Firmin-Didot). Հին հրատարակութիւնը Pleumaris
կը կարգան:

էր երեք զատ զատ բոլորակեւ պարիսպներով, որոնց գրոհներ հինգ սոյք թանկեր է եւ տակաւին գեանեն վեր քանի մը սոյք բարձրութեամբ կեցած է: Ներքին շրջանակին մէջ նկատեցի այլեւայլ փորոքներ՝ ժայռին մէջ փորուած, որպէս զի քարերը մէջն ազուցուին: Կեցեղինաց բեկորներ եւ աղիւսներ ամեն կողմ խիտ առ խիտ թափուած սփռուած են: Գարեն քիչ մը վարը՝ նստին ներքեւէն կը սկսի սանդղաշարք մը, որ վար կը տանի զէպ ի բլրին սիրար. այժմ մանրաքարերով լեցուած է, բայց յայտնապէս կը տանէր զէպ ի ստորերկրեայ ջրամբար մը, նման ստորերկրեայ սանդղանցքերուն՝ յԱմասիա, Եւզսկիա, Թուրհաւ, Աւնիէ, Վարալար (Մանեգարգոս) եւն: Բնակավայրէս տաս վայրկեան անդին եւ ճիշդ արեւմտակողմը՝ գետին վրայ ձգուած էր քարէ կամուրջ մը, այժմ Քէ-Ի-Քէօփր- կոչուած, որով միայն կտոր մը թողցած է: Յայտնապէս ամուր շինուածք մըն էր՝ երեսը գրուագուած պնիւ կափուած շարժքերով քարերով, շատ նման Իզէրիլիկի քով եղած կամրջին՝ ս Չուրուկի քով գետն անուննէնք զիւրահուն է: Ընտելեան սակաւաթիւ թողորդներ կան Իւզվիր-ն (Euzviran) գիւղը, Չուրուկի Տիւսիսային հիւսիս-արեւմուտքը՝ կէս ժամ Տեառուր քրիստոնէական արձանագրութիւն մ'արձան կեցի (Թ. 259): Պղերամաթի արզի ներկայացուցին է Ի-Իկ (Isakli) խեղճ փայտի գիւղը, Լաթի-Քէզի՝ հարաւակողմը կէս ժամ Տեառուր արձանական սփ-ալիւն է:

§ 21. Պղերամաթի եւ Աւուզնի մէջ եղած ուղեգիծը պայծառ կերպով նշանակուած է նայի իսկ բնութեանէն. բայց ոչ ոքիչ փաստ մը եւ ոչ ոք հին կենաց ստուգիւ որեւէ հեռու մը քառայ փնտռելու

1 Տես § 13 վերջ:
 2 Լաթի-Քէպ՝ Չուրուկի 1/2 մղոն արեւմուտք է (ճամբու վրայէն):
 ՊՆՆՆ. ԱՆՆՆՆՆՆ.

Աէօհնէի մերձաւորապէս մէկ ժամ մօտերը: Քէսիք-
Քէօփրիւէն քիչ մը ետքը ճամբան կը թողու
գետը՝ որ լեռներու մէկ կրճէն դուրս կ'ելլէ,
եւ օժանդակ գետի մ'ընթացքն ի վեր կ'ելլէ մին-
չեւ ջրաբաշխ լեռը, ուսկից վար կ'իջնայ գետոյ
մ'ակունքները, որ դէս ի հարաւ կը հասի Ս-ըլ-նի
քովէն եւ կ'երթայ Աէօհնէ-Իօզ թափուելու, եւ
հետեւելով այս գետոյն ընթացքին մինչեւ Գ-
ըլ-ըլ-ըլ կը դառնայ կոհակակերպ գետնի մը
վրայէն՝ եւ Աէօհնէ կը հասնի Մանրամասնութիւն-
ները տախտակի ձեւով կ'աւելցընեմ հոս՝:

Իսակլիէն քանի մը մղոն անդին արկած մը
հանդիպեցաւ անուաշափիս, որով ճամբու այս հա-
տածին ճիշդ երկայնութիւնը չեմ կրնար նշանա-
կել. սակայն Տախտակին տուած XXVIII m. p.
չափը դժուարաւ կրնայ ուղիղ ըլլալ: Իրականին
մերձաւոր կ'երեւայ [X]XXVIII թիւը:

	1	Վայրկեան՝	0	Իսակլի (Isakli)
	"	54	Ձերկէզ-քէօյի	դիմացը աջ փին վրայ.
	"	43	Գեաէն անցումը՝	աջ փին երթալու.
	"	20	Ելլելու սկսիլ.	
	"	15	Գազաթ (վերելք	480 ոտք).
	"	2	Գէօք-Գէրէ-քէօյ	(Geuk - dere, "կէօք-տէրէ").
	"	11	Չախ գետափն անցնիլ	եւ ելլելու սկսիլ.
	"	18	Գազաթը (վերելք	425 ոտք).
	"	34	Բէյօրդու	(Beyordu).
	"	45	Գազաթ ջրաբաշխին	(վերելք 495 ոտք).
	"	75	Չէյն-էզ-դին	(Zein-ed-din).
	"	40	Դուրալդալլ	(Duraldaıl).
Իրր	"	30	Կէօտի-քէօյ	(Keuti-, "քէօթի- դէլ դիւլ).
"	"	50	Աէօհնէ:	

Ը. Ամասիայէ Սամսոն:

§ 22. Յուլիս 4էն 11 իմ ուղեւորութեանցս ասպարէզն էր կապագոփկիա, ուսկից դէպ ի հիւսիս վերագարձայ կեսարիայէն Ալաջա տանող հին առեւտրական ճամբով, որ կէօհնէի արեւմտքէն կ'անցնի: Ալաջայէն սկսեալ բռնեցի Հռոմէական հին ուղին (որ արդէն նկարագրուած է), մինչեւ Ամասիա, ուր հասայ Յուլիս 16ին, երեք օր յառաջ այն օրէն որ հանգիպելու էի իմ բարեկամներու՝ Պր. Munroի եւ Պր. Welchի ի Սամսոն: Քանի որ առջեւս 71¹/₂ մղոն ճամբայ կար ընելէք՝ չէի կրնար Ամասիա դանդաղիլ մնալ՝ հնութիւններ փնտռելու համար: Միայն ժամանակ ունեցայ այցելելու մէկ կամ երկու վիճափոր դամբաններ եւ մագլելելու բարձրաբերձ կանգնած կրաքարային քարաժայռը՝ ուսկից գղեակը վար կը նայի քաղաքին վրայ, որ 750 ոտք վարը նստած է գետին եզերքը (Պտկ.): Յաջորդ օրը վերսկսայ ճամբաս դէպ ի հիւսիս: Իմ կտրելու ճամբաս կարեւոր գիծ մ'եղած է պատմութեան ամէն ժամանակներու մէջ ալ եւ միշտ միեւնոյն ընթացքն ունեցած է: Աճապարանօք կատարած ճամբորդութեամբս չեմ կրնար շատ նոր բան աւելցրնել անոր մասին արդէն ծանօթ եղածներուն վրայ, բայց կան քանի մը իրողութիւններ որոնք արժանի են գրուելու: Ամասիայէն մէկուկէս ժամ ետքը ճամբան դուրս կ'ելլէ Տէրսական-Սուի կրճէն եւ կը մտնէ ընդարձակ հարուստ դաշտը Ս--լ--Օլ, Ստրաբոնի Բէլլոնիանը: Այս կէտէս կը բաժնուի դէպ ի Սամսոն տանող ուրիշ ճամբայ մ'ալ Լադիկի, Ահմէդ-Սերայի եւ կաւակի վրայէն: Երկու ճամբաներն ալ այսօր խճուղի են եւ կ'երեւայ թէ երկուքն ալ նոյնպէս Հռոմէական ուղիներ էին. որովհետեւ Ահմէդ-Սերայ՝ եղած մղոնաքարը K7 թուականաւ, որուն

1 Ահմէդ-Սերայէ մինչեւ Լադիկ (Ladik) կը հաշուի 5*

Համար կ'ըսուի թէ ուղեկողման մօտ փորուած հանուած է քառորդ ժամ կամ աւելի պակաս հեռաւորութեամբ գիւղին հիւսիսային հիւսիս-արեւմտակողմը, դժուարաւ կրնայ ուրիշ ճանապարհի «էլէ» մը հաշուել՝ բայց եթէ Ամասիայէ, որ՝ ինչպէս կը տեղեկանանք՝ 8 ժամ հեռաւորութիւն ունի¹, եւ ես գործնական չափումներովս այժմ սորվեցայ թէ բլրոտ երկրի մը մէջ մէկ ժամը յաճախ 3 անգղ. մղոնէ կամ 5 քիլոմետրէ ալ պակաս է: Ճամբաներու բաժնուելէն ետքը՝ մեր ճամբան դաշտին վրայէն կ'ընթանայ մինչեւ որ մտնէ կիրճ մ'որ յարմար կերպով կը յորջորջուի «Սատանայի ձոր» (Շէյն-է-Դէրէ), ուր գետոյն վրայէն կ'անցնի աջ ափը եւ կը միանայ Չորումէ եւ Մարզուանէ եկած ճամբուն, հետեւելով նեղ հովտին մինչեւ Խաւսա (Khavsa)², որ իմ չափմանցս համեմատ 26¹/₄ անգղ. մղոն հեռու է Ամասիայէ: Այս օրւան ամբողջ ձիավարութեանս միջոցին հանդիպած միակ նոր կտորն էր օդոյ անհարթութենէն բոլորովին մաշած մղոնաքար մը, որ կը գտնուի ճամբու գծին մօտ եղած գերեզմանոցի մը մէջ՝ Ալէ-է (Alevi) գիւղը, որ 15 մղոն հիւսիսային հիւսիս-արեւմուտք է Ամասիայէ (թ. 442):

Խաւսայէ Սամսոն եղած ճամբան հանրածանօթ է եւ կրնանք քանի մը դիտողութեամբ շատանալ: Խաւսայէ Կաւակ 21¹/₂ մղոն է խճուղոյն վրայէն, եւ ասկէ Սամսոն եղած հեռաւորութիւնը 23.65 մղոն է: Հին ուղւոյն հետքերը նշմարեցի

2 ժամ, իսկ Լագիկէ Ամասիա կը մնայ 6 ժամ, որ կը յարմարի Համիլդընի տուած տեղեկութեան (Ա. էջ 334, ծան.):

1 թ. 433 — Journ. of Philol. XI (1882) p. 156. Քարը մեծատուար է եւ դիւրին չէ փոխադրելը: Ռամսէյ սխալ յիշած պիտի ըլլայ՝ երբ նոյնը փոքրիկ մղոնաքարնէրէն մի կ'ըսէ: — Հմտ. վարը § 36:

2 Տես վարը § 37:

Կարա-Տաղի դարերուն վրայ, Խաւսայէ մէկուկէս ժամ հեռու. եւ գազաթան պահականոցէն („devrent“) որ կէս ժամ աւելի անդին է, կրնայ նոյնը տեսնուիլ որ կ'ընթանայ խճուղոյն երկայնքը՝ ութ վայրկեանի չափ աւելի վարը բլրոյ կողէն: Կաւակ նորէն օրինակեցի այն մղոնաքարին արձանագրութիւնը՝ զոր Hogarth եւ Munro հրատարակած են¹: Գեղէն մէկ ժամ հեռու (տրուած տեղեկութեան համեմատ) 170⁰ աստիճանի ուղղութեամբ՝ կրկնակատար եւ կոնաձեւ բլրոյ մը ծայրը կը գտնուի գիւղացիներէն Կւլէ (բերգ) կոչուած մը, ուր Սամսոնցի Պր. Ենիտումեան (Yenidoumian) այլեւայլ պեղումներ քրած է, եւ գտած է բազմաթիւ ուխտանուէր խեցեղէններ թրձակաւէ (terracotta), գլխաւորաբար ցլու գլուխներ եւ կանացի անձնիքներ (torso կոճղանդրի), որոնց մին աւելի կը կրէ („stephanos“) Մենք չկարծեցինք թէ արժանի բլրայ այցելութիւն մը տալու այս բլրին՝ որ Կաւակէն տեսանելի է. բայց յայտնապէս նոյն է՝ կոնաձեւ բլուր մ'իբր երկու ժամ հեռու Կաւակէ գէպի հարաւ-արեւելք.՝ որուն գազաթը գտնուած է՝ խեցեղինաց բազմաթիւ ուրիշ բեկորներու եւ թրձակաւէ արձանիկներու հետ՝ նաեւ արձանագրութիւն մը, որ առ Ապողոն Գիդ (իւմեւս) եղած ձօն մը կը յիշատակէ²:

Թ. Ամիսու — Փանարէա — Նէոկեսարիա:

§ 23. Յուլիս 19ին կէսօրէն ետքը հասայ Սամսոն եւ բարեկամներս նոյն օրը առտուն նաւէն ելած գտայ: Հաճոյք մըն էր, երկրին խորերն երկու ամիս յոգնեցուցիչ ճամբորդութիւն մ'ընե-

¹ R. G. S. Suppl. Papers, III, p. 98 (վարը Թ. 441):

² Տես արձ. Թ. 18 — CIL, III, 6976.

լէն ետքը՝ Սեւ ծովու հանդարտ աղօտ-կապոյտ ջրերուն քով գտնուիլ եւ Յունական հիւրանոցի մը համեմատական գիւրութիւններն ունենալ. եւ ուրախ էի քանի ժ'որ մնալուս՝ որ անհրաժեշտ էր մեր նոր ուղեւորութեան համար հարկաւոր կարգադրութիւններն ընելու: Երբ արդէն ճամբայ ելլելու մօտ էինք՝ յանկարծ պաշտօնական դժուարութիւններ ելլելով ստիպեցին օր ժ'աւելի կենալու եւ միայն ամսոյն 23ին առտուն կրցանք իրօք ճամբայ իյնալ: Մեր գլխաւոր նպատակն էր քննել Նիկսարի եւ Աղիւսի մէջ եղող աշխարհը՝ գտնելու համար թէ ասիկայ չէր արդեօք՝ Եփրատէն Բոսփորոս տանող մեծ բնուղին: Այսպիսի ճանապարհի մը հաստատութիւնն առաջնակարգ կարեւորութիւն ունեցող իրողութիւն մը կ'ըլլար՝ ո՛չ միայն Միհրդատեան պատմութեան եւ Հռոմէական վարչութեան տեսակիտով, այլ նաեւ նոր լոյս կը սփռէր այն սկզբան վրայ՝ որով առաջնորդուեցաւ Պոմպէոս երբ գիրքեր կ'ընտրէր կենդրոն-քաղաքներու համար, որոնք Յունական-Հռոմէական քաղաքակրթութիւնը պիտի տարածէին նոր աշխարհակալուած երկրին մէջ եւ ասով պիտի պատրաստէին զանիկայ վերջնականապէս ընդունուելու կայսրութեան մէջ: Երկրորդական նպատակ ժ'ալ էր աւելի խնամով հետազօտել Եւդոկիոյ դաշտը, այժմ կազ-Օվա (Kaz-Ova, «Գազ», —) կոչուած, Ստրաբոնի Գազիմոնիտիսը, որ երբեք յօրինուածօրէն քննուած չէր որեւէ ուղեւորէ մը: Երբ Աղիւս գետը վերադառնայինք՝ միտք ունէինք հետեւիլ նուազ ծանօթ ճամբաներէն մէկուն դէպի Անկիւրիա, ուր մեր միացեալ հետազօտական ուղեւորութիւնը պիտի աւարտէր:

Մեր բռնելիք ճամբան որոշելու ատեն՝ կրկին կարելիութիւններ կային մեր առջեւ. կամ մեր ենթագրեալ բնուղոյն հանդիպիլ Խաւսայի քով, կամ լեռները կտրել անցնիլ Նիկսարի ուղղու-

Թեամբ: Անհաճոյ բան մ'ըլլալով խճուղւոյն գիծը նորէն բռնել մինչեւ Խաւսա, ընտրեցինք վերջին ճամբան՝ որ առաջինէն կը բաժնուի Կաւակի քով: Երբ Սամսոնէ ելանք, երկինքը մթազնած էր ու սպառնալից, եւ հազիւ թէ 1500 ոտք ելած էինք՝ ծածկուեցանք թանձր ճերմակ մշուշով մը. որ չվերցաւ՝ բայց միայն երբ լեռնագագաթն (2525 ոտք) անցանք եւ մօտեցանք մեր գիշերելու իջեւանին ի Չակալ ("Չագալ", 1300 ոտք:) Երբ գիւղին մօտեցած էինք՝ պայթեցաւ սաստիկ սրտալից փոթորիկ մը՝ անձրևի տեղատարափ մ'ալ թափելով բլուրներուն վրայ դէպ ի հարաւ, բայց օդը չպարզեց: Յաջորդ օրը կտրելով միջանկեալ լեռնագիծը Կաւակ անցանք (2 ժամ), եւ հետեւեցանք այն ճամբուն՝ որ կը տանի Հէրէկ՝ Թաշ-Օվայի (հին Phanaroea) մէջ, ճամբան աւերած էն--դէ մ'ըլլալով՝ որ այժմ դարձեալ կը վերաշինուի: Կաւակէն ժամ մ'ետքը սկսանք Հաջիլար-Գաղի դարիվերքն ելլել հարաւային ուղղութեամբ եւ քսան վայրկենէն հասանք Չէրքէզներու կ--ւլ գիւղը: Հոս փոխեցինք մեր ուղղութիւնը դէպ ի հարաւ-արեւելք, եւ որչափ վեր վեր ելանք՝ այնչափ աւելի մտանք թանձր մշուշի մը մէջ՝ տեւական իջնող մանրամաղ թաթաւով մ'ալ, որ ամէն բան աչաց տեսութենէ կը ծածկէր եւ վերջին աստիճանի տառապագին կ'ընէր արդէն տաժանաւոր ճամբորդութիւնը: Գժուարութեամբ քալելով գխտորակաղնեաց, ուփներու, կաղնեաց եւ նաեւ եղեւնեաց կաթկթող անտառներէ, հոս հոն հանդիպելով ցօրենի կանաչ արտերու, երկու ժամէն գագաթը հասանք՝ ծովու մակերեւութէն 3350 ոտք բարձրութեամբ: Մէկ ժամ իջնալով՝ հասանք գետի մ'անկողինը, որ արեւելքէն արեւմուտք կը հոսի, եւ որուն ընթացքին հետեւեցանք մղուն մը, եւ յետոյ անցնելով գետը հունէ մը՝ ուղիղ անկեամբ դարձանք մեր առաջին ուղղութեան եւ կտրե-

ցինք ցած լեռնագիծ մը կէս ժամէն ու հասանք Ակ-Թաշ (Ak-Tash, 2700 ոտք):

§ 24. Երբ խեղճ հոճղաշէն գիւղը մտանք՝ զարմացանք մտախուզին մէջէն տեսնելով լճածեւ ջրոյ տարածութիւն մը՝ վարը դաշտին մէջ եւ ետեւը բարձր լեռնաշղթայ մը. եւ այն ատեն իրօք վերահասու եղանք թէ մեր բռնած ընթացքը շատ աւելի հարաւային եղած էր քան որչափ կը կարծէինք, եւ թէ հասած էինք հիւսիս-արեւելեան եզերքը Լ-ԴԷԼ-ԼՅԷ (Ladik Geul) Ստրարոնի Աίμυνη Στεφάνη կոչածին: Մեր ենթագրեալ բնուղւոյն հանդիպած էինք մեր կարծածէն աւելի շուտ՝ Լադիկէն 8 մղոն արեւելք եղած կէտ մը: Երկրորդ առաւուն (Յուլիս 25) կէս ժամ հիւսիսային լճափին երկայնքը ձիւփարեցինք գէպի արեւմուտք, որպէս զի այցելեանք բարձրագիւր գետնամասի մը վրայ եղած նիստը, որ ճահճացած ջրոյ երեսէն վեր կը բարձրանար կղզւոյ մը նման՝ ջրէն գրեթէ չըջապատուած: Ար կարծէինք թէ կրնայ ըլլալ ԱԷԶԷԷ (Kizari) կամ ԻԷԷԶԷԷ (Ikizari) բերդը՝ որ «լճին վրայ կ'իյնայ»¹. բայց գտանք որ փոքրիկ նիստ մըն էր՝ անադանագոյն պարիսպներու զոյգն մնացորդներով եւ խեցեթեկորներու անհետաքրքրական կտորներով: Գիւղ վերադառնալով՝ ճամբոյ ինկանք հարաւ-արեւելեան ուղղութեամբ մը: Քսանուվեց վայրկենէն հասանք բլուրներու ստքը, ուր անցանք գետ մ'որ Ակ-Թաշի ծիշտ ստորոտէն կը հոսի եւ կը թափուի լիճը, եւ քառորդ ժամէ մ'ալ հասանք փոքրիկ ջրարաշի լերան կատարը: Հոս կը համարինք թէ գծելու է Փ-ԶԷՄՆԷՄԷ (Phazimonitis) գաւառին արեւելեան սահմանը, որ (Ստրարոնի ճշգրիտ սահ-

¹ Ակ-Թաշ (Ak-Tash) 8-03 մղոն է Լադիկէն ուղիղ ճամբով:

² Ստրարոն, էջ 560 (ἐπίκειται τῆ ἀίμυνη) Տեա փարը § 35:

մանագծումը յառաջ բերելու համար) կը ցույցնէ այն գաւառը, որ դէպ ի արեւմուտք կը տարածուէր մինչեւ Ազիւս գետ՝ Ակ-Գաղի եւ Թաւշան-Գաղի շղթաներուն մէջտեղ՝ հարաւէն, եւ Հաջիլարի, Կարայի եւ Ներիան-Գաղի զուգընթաց լեռնաշղթային մէջ՝ հիւսիսէն: Աւար իջնելով Համիլարնի բռնած շաւիղը՝, քսան եւ հինգ վայրկենէն հասանք Սէպէտլի-Չայի աղբերակունքն, որ աջակողմէն կու գայ եւ կը հոսի նկարագեղ եւ գեղեցիկ անտառապատ կրճէ մը, որուն ուղղութեամբ կ'ընթանայ մեր ճամբան: Ժամէ մը դուրս ելանք կրճէն աւելի բաց հովիտ մը, Գե-ր-ի-կ (Destik) գիւղը հասնելէն 13 վայրկեան յառաջ:

Մինչեւ այստեղ հետեւած էինք այս ուղղութեան որ մեր ենթադրեալ ճամբուն ուղեգիծն ըլլալու էր, բայց որեւէ յոյս չկար վաստ մը գտնելու թէ ուսկից կրնար ճամբան անրնդ հաստ շարունակուած ըլլալ դէպ ի գետ գիմնդ գետակներուն վրայէն: Ասկէ ետքը խճուղոյն հետեւելով՝ անցանք Սէպէտլի-Չայը եւ հարաւակողման գեղեցիկ դարն ելանք, աստիճանաբար հեռանալով գետէն: Կէս ժամէն հասանք Բ-ր-բ-ոյ (Boraboy) գիւղը՝ գետի մ'ափը, որ դէպ ի հարաւ-արեւելք հոսելով՝ Հի-րիկ կը թափուի, եւ ուրիշ կէս ժամէ մը իջանք անոր ձախ ափն ի վար՝ մինչեւ որ եկանք Խատագի (Khatadi) ընդարձակ շէնին գիմացը, հովտին աւելի վարի կողմը: Հոս գետոյն դէպ ի ձախակողմը դարձանք եւ կէս ժամու սաստիկ էջքէ մ'ետքը Հիւրիկի հովիտը հասանք, որ բլուրներու մէջ խորին մէկ կրճէն դուրս կ'ելլէ յորձանուտ ու պղտոր: Հոս հովիտը հարթ ու վատ առողջ հողաշերտ մըն է՝ երկու կողմէն բարձր բլուրներով պատուած, բայց Gemishembeukeu, կոչուած խեղճ գիւղէն քիչ մ'ետքը (Խատագիէն 3/4 ժամ), ուր գետոյն վրայ

1 Համիլարն, Researches, I, p. 338 ff.

ձգուած է երկայն փայտեայ կամուրջ մը, կը սկսի բացուիլ այժմ Քաշ-Օվա կոչուած ընդարձակ դաշտը, որ հին Փանարեայի (Phanaroea) արեւմտեան կէտը կը կազմէ: Գաշտն եռանկիւնի ձեւով է, որուն գագաթնակէտը կ'ընայ Հիբիկ եւ Գայլ գետերու միացման տեղը, իսկ խարխուր կը կազմեն այն ցած բլուրները՝ որոնք մեղմով զառիվեր կ'երթան գէպի բարձր լեռները, Բողալի-Գաղ (Boğhalli-Dagh) եւ Եայլաջիկ-Գաղ¹, որոնք գէպի հարաւ մինչեւ Կաղ-Օվա կը տարածուին: Գիշերն անցուցինք Եռլաշն՝ հովուական գիւղը՝ հարաւային կոհակակերպ դարերուն վրայ, կամրջէն 53 վայրկեան, իսկ Ակ-Թաշէ 21.35 մղոն հեռու:

§ 25. Ըստ տեսանք թէ Գեառիկէն աստին խճուղւոյն հետեւելով հաւանօրէն շեղած էինք մեր պողոտայէն. բայց որովհետեւ մտադրած էինք ի վերջոյ Փաղիսոնիտիս վերագառնալ, կրնայինք ներկայիս նոյնը մէկդի թողուլ, եւ առ այժմ ձեռնարկել Քաշ-Օվայի հետադռուութեան: Յաջորդօրը (Յուլիս 26) նուիրեցինք գիւղերը խուզարկելու մինչեւ Հէրէի գոյնի մանրատը՝ Եօլաշանէ 13.54 մղոն հեռու: Փանարեայի մասին Ստրաբոնի նկարագրութիւնը թէ Պոնտոսի լուսագոյն մասն ըլլայ, որովհետեւ ձիթարեր է եւ գինաւէտ եւ ուրիշ ամէն բարիքներ ունի, (καὶ γὰρ ἐλαιόφυτός ἐστί καὶ εὖοινοσ καὶ τὰς ἄλλας ἔχει πάσας ἀρετάς) մասնաւորապէս կը պատշաճի այս ընտիր ու հարուստ դաշտին, որ արդարեւ ճշմարիտ պարտէզ մըն է՝ որ առատութեամբ կը հասցընէ ցորենեղէն, պտուղ, բանջարեղէններ ու ծխախոտ: Գիւղերն՝ որ հարաւային դարերու վրայ կամ մօտը կ'ընան՝ թաղուած են պարտէզներու մէջ, զորոնք կ'ուսոգեն բլուրներէն իջնող գետերը. եւ թէ գետոյն մօտերն

¹ Թերեւս Lithros եւ Ophlimos կոչուածները Ստրաբոնի քով (էջ 556-)

ինկոզ քանի մը գիւղերը նուազ բարգաւաճ են՝ պահասութիւնը անհոգ բնակչացն է՝ ոչ թէ հոգին: Գաշաին մէջ երկու մղոնաքար գտանք, մին XXV թուարկութեամբ 2-ի-7-ը գիւղը՝ Եօլաշանէն մէկ ժամ արեւելք եւ Սունիսայէ երկու կամ երեք մղոն հարաւային հարաւ-արեւելք (թ. 454), միւսը՝ XXX թուարկուած՝ Քիօօ գիւղը, Չալգարայէ քառասուն վայրկեան հեռու գեղ ի հարաւային հարաւ-արեւելք՝ բլրակողման մէկ ձորին մէջ (թ. 455): Երկուքն ալ հաշուած են Նիկիսարէն եւ Նեոկեսարիա-Ամասիա ուղւոյն կը վերաբերին, որ Պեւսինդերեան Տախտակին մէջ աւելի կամ նուազ ուզդութեամբ նկարագրուած է: Fidi արդի ներկայացուցիչն է այն քաղաքին, որ հոն կը կոչուի՝ Pidis (բցնկն.) XXVI m. p. Նեոկեսարիայէ, Պաղոմեայ քով Pida՝ Գաղատական Պոնտոսի մէջ: Հեռուորութեան անջրպետը շատ քիչ է, վասն զի մեր ճամբուն՝ որ շի կրնար շատ խոտորած բլլալ հին գծէն, մինչեւ Նիկիսար ունեցած շափն է 22-27 անգղ. մղոն Հերէկէն սկսեալ, ուսկից Ֆիդի իրր 6 մղոն հեռու է: Ասի XXX m. p. անջրպետ կու տայ, որ Ֆիդիի քարին ալ թուականն է: Գեղը դուրկ չէ հին մնացորդներէ: Արձանազութիւններ երեւան չելան. բայց շինուածաքարեր, մարմարներ եւ ուրիշ քարեր (մաս մը վրան խաշով) կը գտնուին հին մեծ մղկիթին, աղբիւրներուն եւ գերեզմանոցներուն մէջ: Հոս նշմարեցի այլեւայլ ճնշաքարեր ձիթահնէմանի, ինչպէս նաեւ բոլորաձեւ քարժ՝ ալ խորունկ փորքով, որ թերեւս երկանաքար մըն էր՝ որ կը գործածուէր ձիթապտուղը ճնշելու նախնական գործողութեան: Այս քարերուն գոյութիւնը վճռակի կը փարատէ Համիլդընի տարակոյտները Ստրաբոնի տուած «ձիթաքեր» (ἐλαιόφουτος) տիպոսին ճշգրտութեան մասին: «Ձիթենի չի բուսնիր, կ'ըսէ՝, այսօր այս տեղ, ոչ մշակուած եւ

նչ վայրենի. եւ նկատելով իւր բարձրութիւնն ու զիրքը՝ կը տարակուսիմ թէ երբեք ձիթաստան ծաղկած ըլլայ այս դաշտին մէջ: Բայց՝ ինչպէս արդէն նշանակեցինք՝, ձիթենին կը ծաղկէր Պոնտոսի այլեւայլ կողմերը, ուր այսօր այլ եւս չի տեսնուիր: Գաշտին բարձրութիւնը միայն 600 ոտք է, եւ ամառը ջերմութիւնը սաստիկ է:

§ 26. Գաշտին հիւսիսային մասին քննութիւնը թողուվ ուղեւորութենէն մեր վերագարձին՝ շարունակեցինք մեր ճամբան արեւելեան ուղղութեամբ դէպ ի նիւ--ր: Ստրաբոնի (էջ 556) նկարագրութիւնը կը ցուցնէ թէ Փանարէա գաւառը նչ միայն կը պարունակէր թաշ-Օլան, այլ նաեւ կը տարածուէր դէպ ի արեւելք մինչեւ Նիկսարի դաշտը: Աշխարհագրորէն առեալ՝ երկու դաշտերն իրարմէ անկախ աւազաններ են, (նախնարար՝ երկու լճեր¹), զորոնք իրարմէ կը բաժնէ բլրաշատ երկրի երկայն լեռնագօտի մը, որուն միջէն ուժգին ու արագահոս Գայլ գետն իրեն համար անցք մը բացած է: Հարաւակողմը բլուրները սաստիկ ու սեպարեբձ կը բարձրանան գետանձուկքէն վեր. բայց հիւսիսային ափին լեռնագօտին համեմատաբար ցած ու տափակ է, հանդիպակաց ափին բարձրաբերձ դարերէն երեւալով իբր երկայն եւ տափարակ դարատափ մը՝ որ դուրս ցցուած է ետեւի կողման Պարխար լեռանց երկնաբերձ պատուարէն: Գայլ գետին հարաւային կողմին երկայնքը բռնելով՝ հասանք լեռնագձին ոտքը, Գաղատական Պոնտոսի արեւելագոյն սահմանը, իբր քառասուն վայրկենի մէջ՝ շէրէկէ սկսեալ (Յուլիս 27). եւ իբր 3½ ժամ մեր ճամբան կը գալարէր դարերուն³ վրայ՝ գխտորակաղնւոյ եւ

1 Տես § 5 վերը:

2 Հ-ՊԼԻԸՆ, անդ. Ա, էջ 345:

3 Համիլդընի բռնած ճամբան գետին արեւի մասէն եղած է՝ գոնէ ժամանակ մը: Այս արահետն աւելի դժուար

սոճւոյ կարճաբերձ անտառներու միջէն, ելլելով 890 ոտք բարձր Հէրէկէ վեր, եւ աստիճանաբար իջնալով Նիկոսարի դաշտին եզրը: Հոս գետին վրայ ձգուած է հին քարէ կամուրջ մը՝ ճիշդ կրճին բերնին վրայ, երեք-քառորդ ժամ հեռու Հէրկի-Վիւմպէտ (Herkumbed «Հէր-Վիւմպէտ») շէնին արեւելահողմը, որ հարաւային ափին վրան է, եւ հանդիպակաց կողման Բ--շ--+էշ գիւղէն քիչ մ'անդին¹: Կամուրջն եօթը կատար ունի՝ հանգչած կամարածոյթերու վրայ, որոնք զօրացուած ամրացուած են եռանկիւնաձեւ յենարան-որմերով², եւ հարաւահողմը՝ ցամաքորմ մը: Հոսանքին ուղղութիւնն զէպ ի աջ ափն է, եւ հետեւաբար այս կողման կամարներն աւելի պէտք ունեցած են նորոգութեան: Հարաւային ափին առաջին ցած կլոր կամարը, որուն երեսը դրուագուած է բնտիր՝ անհարթ-կոփուած վիմաքարերով, եւ ետեւը շինուած է աւելի մանրողորկ ուղղանկիւն քարերով, անշուշտ կը ներկայացընէ նախնական Հռոմէական շինուածը: Երկրորդ կամարը շինուած է աւելի մթազոյն քարերով, որոնք աւելի ողորկ կոփուած են, մէջտեղը վիմաքարերէն քանի մը հատը «ազա» թողուած: Մնացեալ կամարները (որոնք՝ ի բաց առեալ մին՝ ամէնքն ալ սրածայր են), շատ աւելի ուշ ժամանակի եւ աղքատ շինուածողութեան գործ են, մեծաւ մասամբ կազմուած բլալով փոքր քարերէ՝ շաղախով իրարու կցուած, թէպէտ եւ հին ատաղձներ ալ գործածուած են: Յատկապէս վերջին կամարը կառուցուած է խառ-

րին է եւ (ինչպէս ըսուեցաւ մեզի) առեւարական կառաց երթեւեկութեան համար անգործածելի:

¹ Տես վարը՝ § 32:

² Նման են յենարան-որմերուն Մագնոպոլեայ կամրջին (վարը՝ § 33) եւ այն կամրջին, զոր Յուստիանոս շինած է Սիւրբերիս գետոյն վրայ ի Սիւկէոն՝ որուն պատկերը տես JHS, (1899), p. 67:

նակ ամեն տեսակ քարերով, որոնց մէկ մասը ատաղձի եւ կոփման արուեստի կողմանէ երկրորդ կամարին քարերուն հետ նոյն է: Այս կամարներու մէկուն հիմանց վրայ Համիրդըն Յունական արձանագրութիւն մը գտած էր¹, որ այժմ Բուզ-քէոյ կը գտնուի: Կամրջին լուսանկարը՝ զոր առինք, գծրախտաբար յաջողած չէր:

Ասկէ մինչեւ նիկսար ճամբան կ'անցնի տափարակ խոտաշատ գետեղերքէն՝ մէկ ժամ եւ յիսուն վայրկեան տեւողութեամբ, աստիճանաբար ելլելով դէպ ի այն կողմնակի հովտին բերանը, որուն մէջ կ'իյնայ քաղաքը: Հէրէկէ եղած ամբողջ հեռաւորութիւնն է 22·27 մղոն: Նիկսարի մէջ գտանք Կոստանդիանու մէկ նոր մղոնաքարը (Թ. 456), որ հիմայ գործածուած է իբր խարխիս Պր. Կիլիկիւնեանի տան ճեմելեաց (veranda) մէկ սիւնամոյթը վեր բռնելու, եւ որ վերաբերելու է այն երեք ճամբաներէն մէկուն՝ որոնք քաղաքս իրարու կը հանդիպին: Յետոյ այցեւելցինք եւ լուսանկարեցինք միջնաբերդը, որ կը պսակէ հիւսիս-կողմն եղող խիստ կղզիացեալ ժայռալեռը, եւ գեղեցիկ տեսարան մը կ'ընծայէ քաղաքին ու դաշտին վրայ² (Պտկ.): Իսկ մեր վերագարծին կրցանք բուն քաղաքին ալ մէկ լուսանկարն առնուլ (Պտկ.): Ճամբայ ելլելէ յառաջ՝ զննելու գացինք գեղեցկաչէն հին մզկիթ մը (որ յետոյ ամենաբարբարոս սոճով զարդարանաց վերանորոգութիւն մը կրած է), եւ գտանք մզկիթին մէջ երկու հետաքրքրական պղնձէ հին բազմաստեղն աշտանակներ, դրուագուած արծաթով եւ զարդարուած տեսարաններով՝ զորոնք այսպէս մեկնել կարճեցինք թէ ըլլան՝

¹ CIG, 4186 — Թ. 336, վարը՝

² Տես Համիրդըն, Ա. էջ 346. Wilson, Handbook of Asia Minor, p. 45.

Աստուածածին եւ Յիսուս Մանուկ, Ս. Գէորգ (կամ աւելի՛ Ս. Թէոդորոս) եւ Աիշապ, եւ այլն¹ :

Ժ. Կոմանա եւ Դազիմոնիտիս :

§ 27. Մեր մերձաւոր նպատակն էր ասկէ ետքը Կոմանա եւ Եւգոկիոյ դաշտը : Ամսոյն 28ին կէսօրէն ետքն ուշ ժամանակ ճամբայ ելլելով՝ կտրեցինք Նիկասարի դաշտը՝ մէկ ժամէն ու քսան եւ երեք վայրկեանէն մինչեւ Գէնէսէ (Denekse)² գիւղը, որ Թաթարախ-Դաղի ստորոտը կ'իյնայ անտառապատ կրճի մը մուտքին քով, որուն վրայէն ճամբան մէկ ժամու շափ բարձր ժայռախարակներու միջէն վեր կ'ելլէ դէպ ի բաց եւ ձուածեւ բարձրագաւառ մը (որուն բարձրութիւնը փոփոխական է՝ 1570 ոտքէն մինչեւ 1700 ոտք Նիկասարէն բարձր), եւ որ ջրաբաշխն է Գայլ գետոյն եւ Հիբիկ գետոյ միջեւ : Կրճանցքին ծայրէն քառորդի մը մէջ հասանք Օկտապ (Oktap) գիւղին գիմացի կողմը, որ գիւղը ճամբէն հինգ վայրկեան դուրս կ'իյնայ աջակողման բլուրներու ոտքը : Շեղեցանք ճամբէն՝ գիւղը քննելու համար, եւ վերադառնալով շիտակ ճամբան՝ կէս ժամէն անցանք Ալմուշ (Almush) գիւղը՝ որ կեցած է դաշտին եզերքը ձախ կողմը :

Շրջապատող բլուրներէն տասր վայրկեան ալ յառաջանալէն ետքը՝ կը սկսինք Հիբիկի հովիտն իջնալ գետածորի մ'երկայնութեամբ, որուն գետը վար կը հոսի Օմալ (Omala) անցնելէն ետքը,

¹ [Այս աշտանակները Սերաստի փոխադրուած են. եւ Կ. Պոլսոյ կայսերական թանգարանը պահանջած է զսանքը : — Ծն. Փ. Կ.]

² Այս ուղեգրիճը ստորագրած է Պր. Munro, ի R. G. S., Suppl. Pappers, 1893, p. 92 ff.

³ Դենեքսէի մէկ մղոնաքարը հրատարակուած է՝ ի Revue des études grecques, 1902, p. 333, Nr. 53 — վարը՝ Թ. 466 :

ուր քանի մը տարի յառաջ Hogarth եւ Munro գտան միոնաքարեր (Թ. 464—5): Այս ժամէն Հէրէկէն՝ Եայլաշիկ-Գաղի վրայէն անցնող՝ ճամբան կը հասնի աջակողմը, եւ ճամբաներու խառնման կէտէն քիչ մ'անդին՝ Թողուցինը Օմալա գետը, եւ խճուղին բռնելով բարձրագետնոյն երկայնութեամբ իբր 50 վայրկեան՝ անկէ խոտորեցանք Բիշէրի (Bizeri) գիւղն, ուր հասանք գիշերը վրայ հասնելէն ետքը, կտրած անցած ըլլալով 19 միոն տարածութիւն մը: Գեղին մէջ կան բաւական բազմաթիւ հին քարեր, ի միջի այլոց ձիթամամլոյ ճնշաքարեր, բայց արձանագրութիւն չգտանք: Հայոց Վանքին եկեղեցւոյն մէջ կայ դամբան մ'որ պատուած է մութ մարմնորէ ծնօտով մը՝ Աոմանայէ բերուած՝, ուր կ'ըսուի թէ ըլլայ Ս. Յովհ. Ոսկերբերանի գերեզմանը, որ վանքին իբր թէ հիմնագիրն եղած կը համբաւուի:

Յաջորդ օրը մեր բեռերն ուղղակի Եւգոկիա խաւրելով՝ այցելեցինք Զինձիէ-+էօյ, Բիզբրիէն քառասուն վայրկեան հեռու, ուր օրինակեցինք Անտոնինոս Պիոսի նուիրուած ձօնի մը մէկ հատակօտորը (Թ. 326). եւ յետոյ կտրելով այն արտեւանն՝ որ լեռներն արեւմուտքէն կը կապէ հովտին մէջ եղած մէկ բլրին հետ եւ որուն խարսխին վրայ կ'իյնայ Աիշէլ (Գըշէլ) +էօյ, ձիավարեցինք գէպ ի Սաւեր, որ ժամ մը հեռու՝ կը զըլբաշներու մէկ գիւղն է: Սասերայէն դարձանք գէպ ի աջ եւ բլրակողման գիւղերուն մէջ զուր տեղ հնութիւններ փնտռելէն ետքը՝ իջանք Գի-Վէնէկ-+էօյ գիւղը, որ կէս ժամ աւելի վեր կ'իյնայ այն քաղաքին աւերակներէն՝ որուն անունը ժառանգած է: (Պտկ. Հիրիկի հովտին՝ Աոմանայէ տեսնուած):

§ 28. Կոմսակա: — Աոմանայի տեղը կը նշանակուի նշանաւոր խարակով մ'որ Հիրիկի

1 Նոյն ծնօտին ուրիշ մէկ կտորը կրնայ տեսնուիլ գիւղին գերեզմանոցին մէջ:

վրան դուրս կարկառած է կամրջին քով, որով գետոյն վրայէն կ'անցնի խճուղին, Նէոկեսարիայէ իբր 26 Հռոմէական մղոն հեռու: Կարծես թէ քաղաքատեղին արձանագրելու եւ նուիրական քաղաքին յիշատակը մուսացութենէ փրկելու համար՝ կամրջին շինողները մերձաւորագոյն կամրջակամարին մէջ ագուցած են երկու արձանագրութիւններ, որոնց մին քաղաքին անունը կը կրէ, միւսը՝ մեզի միջոցներ կու տայ քաղաքին գործածած թուականութիւնը ճշգրտօրէն հաստատելու համար (Թ. 313): Բուն հողաբլուրը ծածկուած է խոտով ու մոլախոտերով, եւ վրան այժմ ուրիշ բան չի տեսնուիր՝ բայց եթէ քանի մ'անագանագոյն աւերակներ. մանրամասն խուզարկութեամբ ալ չգտանք խեցեղէնի նոյն իսկ բեկոր մը (Պտկ.): Ճիշդ կից կայ գերեզմանոց մը, ուր բաղնաթիւ մարմարաքարեր կան՝ ամէնքն ալ վերակոփուած կամ վերահաստուած: Մէջտեղը կը բարձրանայ շերիմ մը (turbe, «թիւրպէ») նշանակելու համար տեղոյն նուիրականութիւնը: Եւ տակաւին բնակատեղոյս հետ կապուած են կրօնական զրոյցներ: Աւերակներէն տասը վայրկեան դէպ ի արեւմտեան հիւսիսարեւմուտք մարմարեայ ժայռի խորանարդ մեծ զանգուած մը կղզիացեալ կեցած է դաշտին մէջ: «Ուխտատեղի» (Ziyaret, «չէ-չէ»՝ ուխտագնացութիւն) կը կոչուի, որովհետեւ աւանդութիւնը կ'ըսէ թէ Ս. Յովհ. Ոսկերերան հոս առանձնացած ըլլայ Կ. Պոլսէն իւր աքսորուելէն ետքը: Ժայռին մէջ այլեւայլ դամբաններ փորուած են: Ասոնց ամէնէն նշանաւորին՝ երեսը դէպ ի գետ է, եւ անտաշ կոփուած քուով ճակատ մ'ունի, մէջ-

1 Նախ յիշած է Tavernier (տպ. 1679, Ա. էջ 13.) եւ իրմէ ետքը՝ Համփլարն (անգլ. էջ 350.) H. J. Van Lennep, Travels in little known parts of Asia Minor, I, p. 323 (ուրուագծով); G. Hirschfeld, ի Sitzb. d. Berl. Akad. 1888, p. 892.

տեղն ալ մուտք մը: Քուածնօտին տակ երեք կամարներ կան՝ նախնաբար յեցած երկու սիւներու վրայ՝ որոնք այժմ անհետ եղած են, իսկ ճակատին ներքեւ քանդակուած է պարզ արձանագրութիւն մ'երկու տողով, որ շատ անգամներ ընդօրինակուած է՝ բայց ոչ երբեք լիակատար ճշգրտութեամբ (Թ. 316): Արձանագրութեան ներքեւ խորշ մը կայ, հաւանօրէն մէջը (աճիւնի) սափոր մը զետեղելու համար, եւ որ կը խփուէր սալաքարով, եւ տակաւին կ'երեւան կափարիչը բռնուելու ակնբեր: Աջակողման անկեան շուրջը կայ ուրիշ սենեակ մ'ալ՝ կռնակի պատին մէջ կոփուած բոլորատապանով (arcosolium) եւ յատակը՝ դէպի խոր փորուած վիմափոր երկու տապաններ, իւրաքանչիւր կողմը հատ մը: Ուրիշ վիմափոր տապան մ'ալ դէպ ի խոր փորուած է ժայռին գագաթը:

§ 29. Կոմանայէն մինչեւ Ե-դ-ի-է- (Թ-ի-ի-ն) 1 1/2 ժամու ճամբայ է ձիով՝ գետին ձախ ափին երկայնութեամբ մինչեւ կողմնակի հովտին բերանը, որ հովտին մէջ նստած է քաղաքը՝ իւր գեղանկար դրիւք կեցած դղեկին ոտքը, որ Բիւզանդեան ժամանակաց Դ-զի-մ-ն (Dazimon)՝ բերդն է: Նէոկեսարիայէն եղած հեռաւորութիւնը ծիշդ 30 անգղ. մղոն է: Ներքնաշխարհին ամէնէն ընդարձակ եւ լաւ խնամուած քաղաքներէն մին է Եւդոկիա. եւ իւր բարգաւաճումը շատ մասամբ պարտական է իւր նպաստաւոր դրից՝ Սեբաստիայէն դէպ ի ծովեզր տանող առեւտրական մեծ պողոտային վրայ ըլլալով, ծիշդ այն կէտին վրայ՝ ուստի կը բաժնուի Նիկկար տանող ուղին: Քաղաքին տեղւոյն յարմար դիրքը պայծառ կերպով նշանակուած է բնութեանէն ալ, եւ կրօնական պատմութեան մէկ պարզ

1 Նոյնացման մասին տես Ռ-ի-է-ն՝ Պամ. Աշխ. էջ 329 եւն, 220: Դղեակը կը նկարագրէ Հ-Ֆլ-ը՝ անդ, էջ 352 եւն, եւ Wilson, անդ՝ էջ 41:

դիպուածը պատճառ եղած ըլլալու էր որ դաշտին մեծ քաղաքը հին ժամանակները ճամբաներու այս կցման տեղը չէր կառուցուած : Առեւտրական ճամբան Հռոմէական ուղի մըն էր իւր բովանդակ ընթացքին մէջ, թէպէտ եւ Բոլուսէ (Վերիսա) մինչեւ Եւզոկիա եղած հատածին համար փաստ մը չէ գտնուած : Այժմ Եւզոկիա գտնուող երեք մղոնաքարերը (Թ. 460—462) կրնան կամ այս հատածին վերաբերիլ, կամ Կոմանա-Ամասիա ուղի-զծին : Վերջին ուղւոյն մասին գտնուած միակ հետքերն են՝ Հիրիկ գետի վրայ ձգուած կամրջի մ'աւերակները, զորոնք Համիլտրն տեսած է Եւզոկիայէ իբր 7 մղոն հեռուն¹, եւ երկու անընթեռնի մղոնաքարեր՝ զորոնք Թուրհալ գտանք :

§ 30. Արդի Կազ-Օվան հին Դազիմոնիտի (Dazimonitis) գաւառին հետ նոյնացրնելը՝ Ստրաբոնի պայծառ նկարագրութենէն (էջ 547) հանուած հին եզրակացութիւն մըն է : Հռոմէական ժամանակը դաշտս (կամ անոր մէկ մասը) Կայսերական կալուածք էր, ինչպէս կը ցուցնէ Մաւրիկիոս կայսերսահմանաքարը՝ զոր Munro եւ Hogarth գտած են դաշտին արեւմտեան ծայրը (Թ. 311) : Նախնաբար մաս եղած ըլլալով Կոմանայ մեհենական մեծ կալուածքին՝ «նուիրական երկրին»

¹ «Թոթաթէ իբր 7 մղոն հեռու. կ'ըսէ, ... յանկարծ հանդիպեցայ Իրիսի վրայ ձգուած կամրջի մ'աւերակներուն : Կամարակալներէն միայն մին Հռոմէական ճարտարապետութեան գործ մ'ըլլալը կը ցուցնէ՝ մարմորէ մեծ քարերով կառուցուած ըլլալով. աւելի ուշ ժամանակէ մըն են կամրջին մնացեալ մասն ու գետոյն աջ ափը լինուած քանի մը պատեր» (անդ՝ Ա. էջ 358) : Մենք այս կամուրջը շտեմանք. հաւանորէն այժմ գոյութիւն ալ է նոյնը գտնելը, որովհետեւ դաշտին կենդրոնամասը շտեմանային է : Բայց կրնայ ըլլալ նաեւ այն կամուրջը՝ որ վարը պիտի յիշուի, § 31 վերջը :

(*χώρα ἰσραήλ*)¹, կամ գրաւուած էր Պոնտական թագաւորներէն իբր արքունի կալուածք, եւ անկէ անցած նախ տեղացի իշխաններուն՝ զորոնք Հռոմայեցիք գրած էին, եւ յետոյ՝ Հռոմէական ինքնակարաց. եւ կամ արքունի հող եղած էր, երբ Գիւտեւտտի՝ Կոմանայի վերջին քուրմ-իշխանին մահուանէն ետքը (34—35 Յ. Ք.)՝ Հռոմէական Պետութեան հետ միացուեցաւ: Բիւզանդեան Կայսրներէն անցած էր՝ Տաճկաց Սուլտաններուն, որոնց ձեռքը կը մնար տակաւին ԺԷ դարուն, ինչպէս կ'իմանանք Տավերնիէ ուղեւորէն, որ կ'ըսէ թէ Եւզոկիա «իբն վերաբերող աշխարհին հետ կալուածք էր Սուլտանաց-մայրերուն» (Dowager-Sultana)²: Կալուածահողին կենդրոնը հաւանօրէն միշտ Գաղիմոն (Եւզոկիա) էր:

Այն յուսով որ այս բերրի դաշտին մէջ նոր փաստեր կարենանք գտնել՝ Յուլիս 30ին կէսօրէն վերջը մեկնեցանք Թոխաթէ: Քանի որ ես նոյն ատեն ընդերական ջերմէ մը բռնուած էի, որ ամբողջ ամառն կանոնաւորապէս վրաս եկաւ, շտակ է՛ր-Սոյէդ գացի՝ որ դաշտին հիւսիսային եզերքը կ'իյնայ, 9.18 մղոն հեռաւորութեամբ. մինչդեռ ընկերներս այցելեցին բլրակողման միջանկեալ գիւղերը, առանց բան մը գտնելու՝ բայց եթէ քանի մը գորշ մարմորէ սիւներ եւ վիմաքարեր՝ Եւզոկիոյ դիմացն եղած յոյն եւ հայ վանքերուն մէջ: Յաջորդ օրը բաժնուեցանք երկու խմբի: Ընկերներս բլրակողման գիւղերը կարգաւ այցելելու ձեռնարկեցին (Բէրէդ, Գորըն, Խար, Նէլէք, Չամբ,

¹ Հմմտ. Ստրաբոն, էջ 557, 559:

² «Այս բազմաբն իւր շրջակայիւքը կալուած է մայր-Սուլտանու հիւներուն» (apanage des Sultanes mères). տես Les six voyages de J. B. Tavernier, Paris 1681, p. 10. Ինքնակալական կալուածաց փոխանցման մասին տես Ramsay, Cities and Bishopries of Phrygia, I. p. 10 ff 354.

Չ-բ-+է-ւ, Իշէ-շ-ն, Օբէ-+է-ոյ, Ա-բ-բէէ) եւ հասան ինծի հետ միացան դաշտին մէջ եղած Գ-բ-բ-մ-մ-շէ-էրէ գիւղը: Հին քարեր գտան առաջին շորս գիւղերուն մէջ, մանաւանդ Գուրջու, ուր հին ընդարձակ շինուածք մը կողոպտուած էր հին գերեզմանացին համար քարեր գտնելու նպատակաւ. բայց արձանագրութիւններ չերեւցան¹: Ես ալ դաշտին գիւղերը քննեցի՝ առանց լաւագոյն արդիւնք մը ստանալու: Ահէր գիւղը (Նէջերի հարաւակողմը) քանի մը մնացորդներ կան, — սեանց բներ, խարխիւներ, շորերկուսի վիմաքարեր եւ քարատապան մը (sarcophagus): Կ-է-էէ (Ախիբէ 20) վայրկեան՝ ճիշդ արեւելք) հին նիստ մ'եղած կ'երեւայ. գիւղին մէջ բաղմամբիւ են հին քարեր, — շինուածոց շորերկուսի եւ ուրիշ քարեր, շորս կամ հինգ քարատապաններ, ծնօտի մաս մը, անոնց ոճով՝ զոր Կոմանայի մօտ տեսանք, եւ քանի մը բոլորչի փորորուած քարեր՝ որոնք թերեւս ձիթահանահանաց վերաբերին. իսկ խճուղւոյն երկու կողմը բռնող գերեզմանոցի մէջ կան շատ մը կոթողքարեր, որոնցմէ ոմանք կարելի է թէ մղոնաքարեր եղած ըլլան. որովհետեւ երկու հատին խարխիւնները նման են Խաւսայի մղոնաքարերուն: Գուրու մշէհէրիէն (Կա-է-էիէ հինգ վայրկեան արեւմուտք խճուղւոյն վրայ), դէպ ի յառաջ շարունակեցինք մեր ճամբան, եւ կէս ժամէն եկանք Կ-բ-բէ (քանի մը մնացորդներ՝ բլուրներուն խոնարհագոյն դարերուն վրայ, որոնց կը մօտենայ աստիճանաբար գետը՝ երբ դէպ ի հիւսիս կը ծռի. եւ շեղելով ճամբէն՝ որպէս զի այցելենք տաճկական աւերակ գիւղն եւ իջեւանը, որ այժմ Եէ-էէ-ի-ի-ի-ի-ի-ի-ի-ի-ի (Yükik-) կը կոչուի²:

¹ Յետոյ մեզի խարուեցաւ Գուրջուէ քրիստոնէական ասպանագրի մը պատճենը (Թ. 310):

² Համիլտըն՝ էջ 360 կ'ըսէ՝ «Խ-ն-+է-ոյ, իբր 7 մղոն հարաւային հարաւարեւելք» (Թուրհալէ):

դաշտին մէջ վարը (37 վայրկեան), ձիավարեցիւնք նեղ հովտին երկայնութեամբը՝ մինչեւ Թուրհուլ (42 վայրկեան), Եւդոկիայէ 26 մղոն հեռու:

§ 31. Գազիուրա-իւրա: — Նկարչագեղ դրիւք՝ բայց փոքրիկ աղտոտ «*Տ-տէրլէ*»¹ շինուած է գետոյն եւ կղզեացեալ կոնաձեւ բլրոյ մը ստորոտին միջեւ, որուն վրայ կանգնած են Բիւզանդական դղեկի մ'աւերակները՝ 200 որք բարձր յուսթի հովտէն: Հոս է առանց որեւէ տարակուսի, ինչպէս արդէն Համիլտըն ճանչցած է, Գաշիւրա (Gazioura) Պոնտական բերդին եւ արքայանիստ կայանին տեղը, ուսկից կ'անցնի Հիւրիկ գետը՝ երբ արեւմտքէն բոլորաձեւ հիւսիս կը ծռի՝, եւ որուն մօտ Ղուկուղղոսի Տրիարիոս տեղակալը սաստիկ պարտութիւն մը կրեց Միհրդատէ 67ին Ն. Ք.²: Ստրաբոնի ժամանակ ամայացած էր. բայց յետոյ կրկին կենդանացաւ իբր եպիսկոպոսանիստ Իբորա (Ibora) անուամբ, ինչպէս յայտնի է Ռամսէյի հաւաքած փաստերէն³. եւ այս վերջին անունը շատ լաւ կրնայ՝ ինչպէս թելադրած է Պր. Munro, միայն համառօտուած ձեւ մը ըլլալ հնագոյն անուան⁴: (Պտկ.) Բլրան կատարն եղած ամբութիւնները՝ որ մնացած են, յայտ-

¹ Ստր-բոն. էջ 547:

² Հմմտ. Munro, ի JHS, 1901. p. 58.

³ Ռամսէյ, Պտմ. Աշխ., էջ 326. եւն:

⁴ Իւր կարծիքն է թէ Gaz-ioura անուան երկու մասերը նախնարար երկու անջատելի տարերք ըլլան, եւ թէ վերջինս է Ibora ձեւով մնացողը, մինչդեռ թերեւս առաջինն ալ յաւերժացած ըլլայ՝ սաճկական կերպարանափոխութիւն մը կրած՝ Kaz-Ova անուան մէջ (Գաշ-Օվա. տճկ «գաշ» սագ. տես R. G. S., Suppl. Papers, III, p. 96, note, եւ JHS. 1901. p. 56, n. 2.) Դժուարին կ'երեւայ կարծեացս երկու մասն ալ ընդունիլ: — [Ես աւելի կը կարծեմ թէ անուան առաջին մասն է պարսիկ գաշ (gaz, յն. γάζα, գաշ) բառը: Գազիուրա ապահովապէս մին էր Միհրդատի գաշիւրա-իւրա (γαζοφυλακίον) եւ նաեւ հաստատուած

նապէս ՚Իւղանդեան շրջանէն են՝: Տակաւին կր տեսնուին գերաններու կտորներ՝ որոնք պատին մէջ հիւսուած էին. բայց որեւէ նշաններ չտեսանք դռներու՝ զորոնք Համիլդըն կը նկարագրէ իբրեւ մեծամեծ քարերէ շինուած, բարաւորաց, կողմնակի դրանդիններու եւ սեմոց՝ որոնք միակտուր քարէ կոփուած էին: Ստորերկրեայ սանդղաշարք մը կայ՝ որ վար կը տանի քարաժայռին սիրտը, նման անոնց՝ որ կը գտնուին Ամասիա, Եւգոկիա, Պղեւրամիս եւ ուրիշ տեղեր, ինչպէս յիշատակեցինք: Ամենաբարձր դարատափը հանող արահետին կողին վրայ հետաքրքրական արձանագրութիւն մը կայ (Թ. 306), քանդակուած քարաժայռին ուղղահայեաց երեսին մէկտապակին վրայ. սակայն ամենայն խնամքով ջանացուած է նոյնը եղծանել աւել: Եթէ արձանագրութիւնը վերականգնելու իմ փորձս ճշմարտութեան մերձաւոր է՝ կ'երեւայ թէ նոյնը զինուորական հրաման մ'եղած ըլլայ, որով խստիւ կ'արգելուէր օտարներուն սահմանագծերէն ներս մտնելու: Արձանագրութիւնը հնագոյն ժամանակէ է, եւ թերեւս Միհրդատեան շրջանին վերաբերի: Բլրան հարաւային կողմը Պր. Munro հանդիպած է հին խեցեղինաց այլեւ-

է թէ նախնարար հոն դրամ ալ հատուած է. (Head, Hist. num. p. 426.) Նոյն gaz բառէն յառաջ եկած կ'ըսուի նաեւ Ատրպատականի Գաշա (Gazaga) բերդին անունը. (Smith, Diet. of Geogr.) Ուստի ընդունելով Պր. Munroի ենթադրութեան երկրորդ մասը՝ Gazioura կրնար նշանակել «Iborajի գանձը»: Միայն թէ gaz նախդիրը (?) Պոնտական բազմաթիւ անուանց կազմութեան մէջ ալ կը մտնէ (Γαζακηγή, Γαζηλών.) որ կրնայ համոզել զմեզ ընդունելու թէ բնիկ լեզուին կը վերաբերէր: — F. C.]

. Hogarth կ'ըսէ (ի գիրս Wilson, Handbook, p. 41.) «Բերդին պարիսպներուն վարի մասերը հնագոյն շրջանէ մըն են», Ես հնագոյն ճարտարապետութեան որեւէ հետքեր չգտայ:

այլ բեկորներու, որոնք զժբախտարար վերջէն կորսուած են: Բեկորները կը ցուցնէին թխագոյն կամ ծիրանի համակենդրոն բոլորակներ կարմիր կամ բաց դեղին յատակի վրայ, եռանկիւնի խաշագծերու ծիրանի ցանցակերպ մը կարմիր յատակի վրայ, օձաձեւ գալարածոյ մը բաց գորշ շերտի վրայ, եւն: Քաղաքն ալ հնութեան մնացորդներէ զուրկ չէ: Փողոցի մը կողին վրայ եղած մեծաւ մասամբ անրնթեանի մղոնաքարէ մը զատ (Թ. 459,) եւ բաց ի ուրիշ մղոնաքարէ մը՝ ուր միայն քանի մը տառեր մնացած են, կան այլեւայլ վիմաքարեր եւ սիւներ, միանգամայն ուշ ժամանակի խոյակ մը, որոնք գլխաւոր մզկիթին կամ շինութեան մէջ ազուցուած են կամ քովը ինկած կը կենան. ուրիշ մզկիթի մ'առջեւ մարմարներ եւ ուրիշ վիմաքարեր. եւ սինամոյթեր ու քարեր՝ հին տաճիկ մենաստանի մը (tekke, «թէքէ») քով՝ որ այլեւայլ կապոյտ կղմինարէ մասեր գեռ ունի: Կսկ Զեյայի ճամբան գետոյն վրայէն անցնելու համար շինուած կամուրջը լի է սինամոյթերով, կոխածոյ քարերով, քրիստոնէական ժամանակի խաչանիշ եւ վարդազարդ քարերով, եւ ուրիշ վիմաքարերով: Բայց արձանագրութիւններ տակաւին չգտնուեցան:

Թուրհայէն ելլելով՝ Օգոստ. 1ին կէսօրէն ետքը եւ յաջորդ օրը նախրեցինք այցելելու գիւղերը, որոնք Աղ-Օվայի հարաւակողման եզերները կը պատեն, գործնականօրէն առանց արդիւնքի: Գիմուրտա (Dimurta) գիւղը գտանք հին բազնիք մ'երեք սրահով, եւ քարայտակով, մարմարեայ ընդունարաններով, եւ գմբեթաւոր տանեօք՝ օգփոխելու համար ծակերով, ինչպէս նաեւ արձանագրութեան մը մէկ հաստակոտորը (Թ. 307.) եւ այլեւայլ հին քարեր, ի միջի այլոց՝ ձիթահնձանձնչարարեր, եւ բոլորէի քարեր՝ կենդրոնք փորփուած, որոնք թերեւս կը գործածուէին ծնուած ձեթի իրր ընդունարան: Գերեւեջ՝ գտանք երկու

արձանագրութիւն (թ. 308—308^{bis}) եւ քանի մը մնացորդներ Բ-չ-է-է, վաճառագիւղը՝ որ իբր «Չ-Պէրլէ» է: Վերջին գիւղէս 27 վայրկեան անգին՝ Հիրիկ գետը վեց կամ եօթ վայրկեանի շափ կը հոսի բլուրներու ճիշդ ստորոտէն, եւ գետին վրայէն կ'անցնուի Տաճկաց ձեռքը շինուած կամրջով մը: Երեք քսաորդ ճամբէ մ'ետքը Էնդի- (Endis) գիւղն օրինակեցինք եղծուած աւրուած միջնաբար մը (թ. 309): Արգարաշներու Չերլէ գիւղը (20 վայրկեան արեւմուտք Ա-բ-շէ՝ Waras, որ Եւզոփայէն Չ ժամ հեռու է,) շինուած է ցած հողարլի մը քով՝ բլրագարին վերջին գոգին մէջ, որ յայտնապէս հին (թերեւս նախապատմական) նստավայր մըն է: Վարազէ ձիավարելով ետ դարձանք Եւզոփայ, ուսկից վերագարձանք Նիկոսար: (Օգոստ. 4.)

ԺԱ. ՆԵՈՒԿԵՍԱՐԻԱՅԷՆ ԱՂԻՍ զԵՈՒ:

§ 32. Այսուհետեւ կը մնար մեր միացեալ հետազոտութեան ամենէն գլխաւոր նպատակին հասնիլ: Պայծառ տեսնուած էր որ, եթէ ընդհանրապէս մեր ենթագրեալ բնուղին իրապէս գոյութիւն ունէր, անոր բնթացքը պէտք էր որ հետեւէր Գայլ գետոյ աջ ափին մինչեւ նոյն գետոյն Հիրիկ գետի հետ խառնուիլը, եւ անկէ ետքն ընթանար Սունիսայէ անցնելով եւ Սեպեալի-Սուի հովտին երկայնութեամբը մինչեւ Լագիկի դաշտու: Գայլ գետոյ եւ Պարխար լեռնաշղթայի միջեւ եղած մշակեալ դարերու վրայէն երկու ժամու մէջ ձիավարելով անցնելով՝ հասանք Բ-չ-է-է, ուր քանի մը մնացորդներ կան՝, եւ ուր՝ կամ որուն մօտը՝ գնելու ենք Նեոկեսարիոյ եւ Պիդայի մէջտեղ եղած կայանը, զոր Տախտակը Միր-Նէ (Mirones) կը կոչէ եւ X m. p. հեռու կ'ըսէ առաջին քաղա-

1 Արձանագրութիւն՝ թ. 336:

քէն, իսկ XVI m. p. վերջինէն: Բուզ-քէոյ այն բարձրաւանդակ դարատափին եղերբը կ'իյնայ՝ զոր արգէն յիշեցիւնք (§ 26) եւ որ բարձրաբերձ լեռնաշղթայէն ելլելով կը տարածուի մինչեւ այն գահալէժ կրճին ամբ, որուն միջէն կը հոսի Գայլ գետը: Այս դարատափը մեղմով կը սկսի բարձրանալ Նիկսարի գաշտէն եւ գրեթէ անզգալի կերպով կը մտի Թաշ-Օվայի մէջ միւս կողմը, բայց հոս հոն կը կարտուի հեղեղատներու խորին գետազոգերով, որոնք մակերեւութին ընդհանուր հարթ երեսը կ'ընդմիջեն: Այս հեղեղատներուն մէկին ստորաբը, որ Ման-Չոր (Manas-Dere) կը կոչուի, Բուզ-քէոյէ քառասուն վայրկեան հեռու եւ Ման-գիւղէն կէս ժամ անդին (Հերէկի մերձաւորայէս ճիշդ արեւելակողմը), քարաշէն միակամար գեղեցիկ կամուրջ մը կայ՝ հին հիմերու վրայ յեցած, որ կը ցուցընէ այս ուղեգծիս նախկին կարեւորութիւնը, մինչդեռ այսօր բոլորովին ինկած է: Ասկէ ետքը ճամբան շիտակ կը շարունակուի, խորշելով գիւղերէն՝ որոնք մեծաւ մասամբ բարձրագոյն դարերուն վրայ ինկած են, եւ կամ Պարխար լեռնաշղթային թիկանց ներքեւ բոյն դրած, մինչեւ Զէլխոր (Zilkhor) գիւղը՝ Թաշ-Օվայի մէջ, եւ անկէ՝ մինչեւ Գայլի գետախառնունքը Հիրիկի հետ:

Մեր սայլը շիտակ ճամբէն խաւրեցիներ, իսկ մենք խոտորեցանք գիւղերը պրպտելով՝ մեր բաղձացած փաստը փնտռելու գտնելու համար. բայց նոյն օրւան հետախուզութեան արդիւնքը շատ անգոհացիչ էր: Ուղեգծին մօտ, Գելի-ն (Geli-n

1 Նոյն օրւան ուղեւորութեան մանրամասնութիւնքն են՝ Մանասէ (Հերէկ 270°) դէպ ի Գելի-ին, 25 վայրկեան. — Գելիինէ՝ Այառ, 35 վայրկ. — Այառէ՝ Իմերի (Հերէկ՝ 252°), 1 ժամ. — Իմերիէ՝ Ֆերէնգի (Հերէկ՝ 240°), 12 վայրկ. — Ֆերէնգիէ՝ Խօլայ (Հերէկ՝ 217°), 11 վայրկ. — Խօլայէ Հոսան, 12 վայրկ. — Հոսանէ՝ Զիգի (Հերէկ՝ 190°, մէկ ժամ

կամ Gelyin) գիւղէն քիչ մը վարը, որ Մանասի-
 Զորէն անդին (արեւմտակողմը) կ'իյնայ քիչ մը
 հեռուն, հիանալի աղբերակն մը կայ, ծածկուած
 կամարաձեւ շինուածքով մը՝ որուն շինութեան հա-
 մար հին քարեր գործածուած են. եւ մէկուկէս
 ժամ ետքը Էմերի (Emeri) գիւղին մէջ՝ որ լեռան
 թիկանց ներքեւն է, հանդիպեցանք այլեւայլ մնա-
 ցորդներու, ի միջի այլոց՝ ժայռափոր գերեզման
 մը, մարմարեայ փոքրիկ քարատապան մը (sarco-
 phagus)՝ որ անտարակոյս աճիւնասափոր մըն էր
 (funeral urn.) իսկ մզկիթին մէջ մեծ սալաքար մը՝
 որ կոշտ քանդակուած արձանագրութիւն մ'ունի
 մեզի անձանօթ տառերով, (զորոնք համարեցանք
 թէ ըլլան հնագոյն հայերէն նշանագրեր.) ներքեւը՝
 խաչաձեւեր: Գիշերն անցուցինք Չէրի բարգաւաճ
 բայց անհիւրընկալ՝ գիւղը (ժամ մ'աւելի անդին,)
 Նիկսարէն 24 մղոն հեռու, եւ կը յուսայինք թէ
 յաջորդ օրն աւելի բարեբաստիկ պիտի ըլլար:

§ 33. Եւրաստորիա-Սրագնոպոլիս: — Գէւյ
 ի Զիզի ճամբորդած ժամանակ՝ անցանք Չէրի
 վերէն, որ մենակաց գիւղ մըն է դաշտին մէջ: Յա-
 ջորդ օրը (Օգոստ. 6) շուգելով բարեպատեհ առիթ
 մը ձեռքէ թողուլ՝ ձիավարեցինք դէպ ի գեղը,
 որ Զիզիէ՝ 28 վայրկեան հեռու է դէպ ի հարա-
 ւային-հարաւարեւելք: Հոս ամայացած գերեզմա-
 նոցի մը մէջ գտանք վերջապէս՝ որուն ակնկառոյց
 կը սպասէինք. Ներուայ (կամ Տրայանու) մէկ մղոնա-
 քարը՝ զոր կանգնած է Պոմպոնիոս Բասոս, եւ կը
 կրէ թուականս XXIII K', որ կը ցուցընէ թէ
 ճամբուն քլ-էն էր Նեոկիսարիա (Թ. 420): Այս
 մղոնաքարը կապակցելով Ներուայի միւս մղոնա-

հեռու.) 32 վայրկեան: Վերջին հինգ տեղերուն ամենքն ա-
 ճիւղ լեռան տակն են:

1 Զիզիոր դէպ ի Հերեկ ուղղութիւնն է 200°. դէպ
 ի Զիզի՝ 346°:

քարերուն հետ ի խաւսա, զգացինք թէ մեր փնտռած ապացոյցը մերձաւորապէս լիակատար եղած էր, եւ աւելի հանգիստ սրտով շարունակեցինք ձիաւարել գէպ ի գետախառնունքին տեղը՝ որ չորս մղոն հեռու է: Եւ պատորիա-Մագնոպոլեայ նստավայրը, զոր Համիլդըն ⁶ զուր տեղ կը փնտռէր, եւ կ'ենթադրէր թէ անհետացած բլայ երկրախօսական փոփոխութեան մը հետեւութեամբ¹, կեցած է ժայռաբլուր մը վրայ, որ Հիրիկ գետոյն աջ ափին կից է՝ գետախառնունքէն քիչ մը վարը եւ ճիշդ կրճին բերանը, ուսկից գետը բացած է իրեն համար անցք մը այն լեռնապատուարին մէջէն՝ որ Թաշ-Օվան կը բաժնէ ծովէն. (Պտկ.): Իւր այս գրից մէջ ոչ միայն կ'իշխէ կապանին՝ ամբողջ կրճին երկայնութեամբ մինչեւ Թեմիսկիւրայի (Themiscyra, այժմ Չարշէմբէ-Օվա) դաշտը, այլ նաեւ կը պահանջէ կամուրջը՝ որուն վրայէն բնուղին գետը կ'անցնէր, եւ որուն կամարակալները տակաւին վեր կը բռնեն ողնաթեք փայտեայ անցք մը (իբր շարունակութիւն խճուղոյն): Հին կամուրջը կը ներկայացընեն այժմ երկու խարխիւները (կամրջախելաց) եւ չորս կամարակալներ, ամէնքն այլ այնպէս շատ եւ այնչափ յաճախ անգամ նորոգուած, որ անհնարին է որոշել թէ որուն նման էր նախնական շինուածը (Պտկ.): Կամարակալները զօրացուած էին եռանկիւնի յենարան-որմերով², որոնք հիւսիսային կողմը բոլորովին քայքայուած տարուած են ջրէն, իսկ միւս կողմը տակաւին մնացածներն ալ յամենայն գէպս համակերտ չեն բուն կամարակալներուն հետ: Նորոգութեանց համար առատօրէն գործածուած են ծնօտի-քարեր եւ կոփածոյ վիմաքարեր, եւ խա-

¹ Անդ՝ էջ 343:

² Նման անոնց՝ զոր ունէր Գայլ գետի կամուրջը, ուսկից կ'անցնէր Ամասիա-Նեոկեսարիա ճամբան. (տես վերը § 28):

րիսխներուն (կամրջախեւաց) միոյն արդի երեւոյթը կը ցուցընէ թէ կամրջին կամարակապութիւնը գոնէ վերջին ժամանակի գործ է, ինչպէս կ'ապացուցանէ աղիւսակերտ շինուածքը եւ քրիստոնէական ժամանակի քարի մը ներկայութիւնը կամարին մնացորդաց մէջ՝ զարդարուն խաչով քանդակուած: Բուն նիստն այժմ բացարձակապէս զուրկ է մնացորդներէ, եւ ուրիշ բան չի տեսնուիր՝ բայց եթէ ուշ ժամանակի խեցեղէն բեկորներ՝ ցանուցիր սփռուած բլրոյն վրայ: Շրջակայ գիւղերն ալ նոր փաստ մը չընծայեցին՝ Մագնոպոլսի յետագայ ժամանակներու բախտի պատահարաց մասին պատմութեան պահած լուսութիւնն ընդհատելու համար: Թէ Պոմպէեան շրջանէն անմիջապէս ետքը անհետ չկորսուեցաւ, այլ շարունակեց ապրիլ (թերեւս ուրիշ անուամբ)՝ կ'ապացուցուի մերձակայ բերդին գոյութեամբն՝ որ այժմ Բողազ-Բէ-ան-Աւլէ՝ կը կոչուի, որ Բիւզանդական բերդերու սովորական ոճով կը գրաւէ զօրաւոր ու կղզիացեալ գիւղը մը բլրոյ մը վրայ, կրճէն իբր երեք-քառորդ մղոն վար (Պտկ.): Այցելեցիք բլրոյն ոտքն եղած գիւղը (Աւլէ-էօյ) բայց կէսօրուան տօթն այնչափ սաստիկ էր որ ստիպուեցանք ընդունիլ գիւղացւոց այն հաւաստումը թէ գազաթան վրայ արձանագրուած քարեր չեն գտնուիր, որով հրաժարեցանք անձամբ մեծ տաժանութեամբ ստուգելէն:

§ 34. Մագնոպոլէն մինչեւ Ս-նիս-² «Բողազ-Կէսան-Ապիւհ» միաբան աւանդութեամբ երկու ժամու ճամբայ կը հաշուի. բայց իրօք տեսանք թէ 5 մղոնէն միայն քիչ մ'աւելի էր: Փոքրիկ բայց հին գիւղ մըն է բլրոց մեղմ մէկ գարին վրայ, որոնք

1 Հ-Վերլէ՝ անդ, Ա, էջ 342 կ'անուանէ «Բողազ-Հիսան-Ապիւհ» (Boghaz-Hissan իսկ Boghaz-Kessan է «Պողազ-Բէ-ան-Աւլէ» կոկորդ կարող.)

2 Հ-Վերլէ, էջ 340:

դաշտը կը սահմանափակեն, եւ ունի հին մզկիթ մը եւ տաճկական բաղնիք մը, եւ ոչ սակաւաթիւ մնացորդներ Մագնոպոլսէն, ի միջի այլոց՝ հնարաւոր մզոնաքար մը (առանց տառերու հետքի,) եւ քանի մ'արձանագրութիւններ քիչ կարեւորութեամբ. (Թ. 331—333:) Յաջորդ 30 մզոն անջրպետին համար Հռոմէական ճամբուն որեւէ հետք չգտանք. բայց ուղեգիծն որոշ կերպով սահմանուած է բնութենէն: Ա'անցնի բաց ցորենաբեր երկրէ կէս ժամուշափ՝ մինչեւ որ կ'իջնայ կը հասնի Սէպէտի-Սու, եւ ապա կը հետեւի գետոյն մեղմիկ ալեծեւ եւ բերրի հովտին մինչեւ Գեստիկ գիւղը՝, ուսկից անոր մինչեւ Լագիկի դաշտ բռնած բնթացքն արդէն նկարագրած ենք: Ուղին որեւէ բնական դժուարութիւններ չունի. բայց որովհետեւ այժմ նոյնը այլ եւ այլ տեղեր կը գործածուի իբր ջրանցք մը՝ դաշտերուն սուղման համար, բնական է որ հիմայ կառաց երթեւեկութեան յարմար լաւագոյն վիճակ մը չունի: Թէ ինչո՞ւ արդեօք այս գիծը դէպ ի չէրէկ եւ Նիկսար տանող խճուղոյն համար մէկդի թողուած է եւ փոխարէն ընտրուած է նուազագոյն գիւրին եւ նուազ ուղիղ ճամբան լեռնաշղթային հարաւակողման վրայէն, խնդիր մըն է՝ որ չի լուծուիր զուտ արեւմտեան խելքով: Ճամբու այս հատածին մէջ հին կենաց հետքեր տեսանք միայն Զուդայ (Zudai) մեծ գիւղը (Սունիսայէ 1 ժամ 10 վայրկեան,) ուր կան այլեւայլ նրբաբանդակ քարեր եւ եկեղեցական ճարտարապետութեան պէսպէս հատակոտորներ: Գէստիկէ վերագարձանք մեր հին օթեւանը յԱկ-Թաշ, Αίμυνη Στιφάνη լճին հիւսիսային կողմը, Սանիսայէ 22.15 մզոն հեռու:

Բոլորովին ապահով չէ Հռոմէական ճամբուն ուղեգիծը Փագրմանիտիսի արեւելեան եզրէն մինչեւ

1 Այս հատուածին համար հմտ. Համիլդընի նկարագրութիւնը, անդ՝ Ա, էջ 339, եւն:

Խաւսա: Բնական բլլալու էր ենթադրել թէ ուղեգծին ուղղութիւնն էր լծին հարաւային ափին երկայնութեամբը՝ այնպէս որ անցնէր Լաուդիկէի (Լադիկ) միջէն. եւ այս տեսութեան վրայ յեցած՝ հետազօտեցինք դաշտին այն կողմը, բայց առանց արդիւնքի. (Օգոստ. 8.) Սէպէտիւր կրճէն եկող Լադիկէն անցնելու ուղղակի ծամբան ստիպուած է իւր ընթացքին մեծագոյն մասին մէջ դառնալ բլուրներուն եզերքէն, որպէս զի ազատ մնայ ճախճախուտ մօրագետնէն: Ճահճին հարաւարեւելեան անկեան մօտ (Ակ-Տաշէ 40 վայրկեան) փոքրիկ կղզիացեալ բլուր մը կայ (Tepe, «Թէփէ») սեպ դառիվայրնեւրով, իւր գագաթը կրելով Բիւզանդեան շինուածքի մ'աւերակները, եւ ուր ցանուցիր սփռուած կը գրտնուին կղմխտրներու եւ խեցեղէններու բեկորներ: Ուրիշ հնութիւններ չտեսնուեցան յաջորդ երկու օրերուն ուղեւորութեան ժամանակ ասկէ մինչեւ Լադիկ, թէպէտ եւ Ակ-Տաշի խոնարհագոյն դարերը պիտակուած են բազմաթիւ գիւղերով:

§ 35. Լաուդիկէ (Laodiceia): — Իւր ներկայ դրից մէջ քաղաքը նստած բլլալով ուրիշ ճամբու մը վրայ Ամասիայէն ու հարաւէն դէպ ի ծովեզր, որ ծամբան այժմ խճուղի է, իսկ հին ժամանակները հաւանօրէն Հռոմէական ուղի մըն էր¹, Լադիկ միշտ բաւական աստիճան մ'ունեցած բլլալու է բարգաւաճման, ինչպէս որ այժմ ալ ունի: Վարչական կենդրոն մըն է երրորդ աստիճանի («չ-յ-մ-գ-մ-ն-ի-ն») եւ թէեւ ընդարձակ քաղաք մը չէ՝ բայց աւելի մեծցած բլլալու է Համիդընի ժամանակէն ի վեր, երբ «փոքրիկ ու ողորմելի տեղ մըն էր, բայց քաղաք կը կոչուի, որովհետեւ արքունի մզկիթ մ'ունի երկու մինարէններով»: Լադիկի մէջ մեր գտած միակ արձանագրութիւնն է խեղճ տապանագիր մը, որ աւերակ փոքրիկ մզկիթին

¹ Տես վերը՝ § 22:

պատին մէջ ազուցուած է, եւ արդէն հրատարակուած է թ. Ռայնախէ՝ Պր. Ժիրարի (Girard) ընդօրինակութեան համեմատ (թ. 23): Սակայն քաղաքը հնութեան մնացորդներէ զուրկ չէ, որոնց մէկ մասը գերեզմանոցները կը զարդարեն եւ մաս մ'ալ մղկիթներու մէջ պահուած են¹: Կրաքարէ բարձր կոնաձեւ քարաժայռին գագաթը, որ քաղաքին կոնակը կը բարձրանայ, բերդի մ'աւերակներ կան՝ կ'ըսուի, որուն նկատմամբ տարակոչսունենալու չենք նոյնացընելու համար Ստրաբոնի յիշած կէտքէ՝ բերդին հետ², «որ, կ'ըսէ, ամուր բերդ մըն է այժմ աւերակ լճին ճիշդ կից (ἐπιχειται ἱὴ Λίανη)», իսկ մօտը կայ արբունի պալատ մ'որ այժմ հիմնայատակ եղած է. (Ստրբ. էջ 560): Համկղըն (էջ 337) այս բլուրը կը յիշէ իբրեւ յարմար դիրք մը բերդի մը համար, թէ եւ ինքը լսած չէր թէ աւերակներ գոյութիւն ունենան անոր վրայ: Այս նոյնացումը կը նպաստէ մեկնելու թէ ինչպէս Փաղիմնիախա գաւառի մանրամասն նկարագրութեան մէջ Ստրաբոն որեւէ կերպով յիշատակած չէ Լաւոզիկէն, որ այլուստ զարմանալի զանցառութիւն մը կ'ըլլար: Այն պարագան՝ որ նաեւ Պաղումեայ ցանկին մէջ նոյն զանցառութիւնը կը տեսնուի, կ'երեւայ թէ նպաստաւոր է Ռամսէյի կարծեաց թէ Պաղումեայ *Kiçara* տեղը սխալմամբ որոշուած է իբր մաս «Լաւիանսենէ Կողմնապետութեան» (Strategia Laviansene), եւ թէ իրապէս

¹ Հմմտ. Հովարդ, էջ 335 եւն:

² Գրուած՝ *Kiçar*, *'Ikkizari*. Անուան *Kizari* կամ *Kizare* մեւր կը հաստատուի Պաղումեայ *Kiçara* (Ե, 6, 24) մեւով, թէ նոյնացընենք երկուքը կամ թէ ոչ: Նոյնացումը կ'առաջարկէ Ռամսէյ (Պամ. Աշխ. էջ 69). բայց կ'ընդունի թէ նոյն անունը կրող երկու տեղեր ալ կրնան ըլլալ: Արդեամբք ալ տեղերու անուանց այսպիսի նոյնութիւն մ'անստօրբ բան մը չէ՝ երբ տեղերն այլեւայլ գաւառներու մէջ էին:

նոյն է Սորարոնի յիշած Աէշ-ըէ տեղւոյն հետ: Բլըոյն ոտքն եղող նոր քաղաքը, որ իւր անունը առած կ'երեւայ Միհրդատայ Եւպատորի մօր Լաւո-դիկէ անունէն¹, անշուշտ երկար ժամանակ իւր բնիկ հին անունն ալ պահած էր նորին հետ քովէ քով (*Kiζαρι ή και Λαοδίκεια* "Ափարի" որ եւ Լաւոդիկէ²): Սակայն նոր անունը վերջապէս վտարած է հինը, եւ նաեւ ցայսօր կենդանի մնացած է. բայց Փոքուն Ասիոյ մէջ բնիկ անունները միշտ դժուարաւ կը մեռնին:

§ 36. Նիկսարէ եւ Հերէկէ եկած արդի ճամբան Լադիկէ կ'անցնի, եւ անկէ կ'երթայ Խաւսա 13 մղն տեղ մացառապատ եւ ալեձեւ երկրի մը վրայէն: Մենք այս ճամբան կտրեցինք անցանք մինչեւ Հէլ- (Hillas) գիւղը՝ Լադիկէ 6½ մղն հեռու. բայց թէ երկրին երեւոյթը, թէ մինչեւ այստեղ հնութեանց բացակայութիւնը, եւ թէ այն մեր առած տեղեկութիւնը թէ Ահմէտ-Սէրայ գիւղը մղոնաքար մը կայ, պատճառ եղան մեզի ենթադրելու թէ բնուզին թերեւս լծին հիւսիսակողմէն կ'անցնէր: Հետեւաբար փոխեցինք մեր ծրագիրները եւ դարձանք գէպ ի Ահմէտ-Սէրայ, ուր հասանք մէկուկէս ժամու ձիափարութենէ ետքը բաց եւ ալեձեւ գետնի մը վրայէն: Գիւղը Տէրսական (կամ Սուսաշամ) - Չայ գետին հիւսիսային ափը կ'իյնայ՝ Լադիկի մերձաւորապէս ճիշդ հիւսիսակողմը, (ուսկից 2 ժամ հեռու կը հաշուի), եւ Սալիբի արեւմտակողմը կէս ժամու հեռաւորութեամբ, եւ միայն իբր կէս ժամ ալ հեռու միւս խճուղիէն՝ որ Խաւսայի ու Վաւակի վրայէն Սամսոն կ'երթայ:

Մղոնաքարը² քննելէն եւ յունական տապանագիր մը՝ որ աւելի երկայն է քան արժէ-

¹ Տես Th. Reinach, Mithridate Eupator, p. 54.

² Տես վերը՝ § 22:

տատուեցաւ՝ երբ յետոյ հեռաւորութիւնները շափեցինք¹:

§ 38. Խաւսայէն (Օգոստ. 10) ելանք բայ եւ մշակուած կողմնակի հովտէն, որուն բերանը կ'իջնայ քաղաքը, Սուսա-ւեչ²՝ գիւղին վրայէն, ուր այլեւայլ հին քարեր եւ արձանագրութիւն մը (Թ. 33) գտանք, լեռնաշղթային կատարը՝ որ ջրաբաշխ է Հիբրիկ եւ Ազիւս գետերու միջեւ (1 ժամ 10 վայրկեան), Հոս՝ Խաւսայէն 720 ոտք բարձրութեան վրայ՝ հիանալի տեսարան մ'ունէինք այն հովտին վրայ, որ վար կ'իջնայ կը տարածուի դէպ ի Ազիւս կրկին լեռնաշղթաներուն մէջտեղ, նախք թաւշան-Տաղի երկայն լեռնաշարին (որ ամբողջ ձամբուն երկայնութեամբ դէպ ի գետ կը տարածուի՝ Ամասիոյ եւ Պիմոլիսոյի գաւառամասն իբրեւ պատուար մը բաժնելով)՝ եւ Նեբիան-Տաղի հիւսիսային լեռնաշղթային՝ որ Փաղիմոնիտիս գաւառը կը բաժնէ Գաղելոնիտիսէ (Բաֆրայի կողմը)։ Թաւշան-Տաղի ամենաբարձր սրածայր կատարին վրայ³՝ որ այս կէտէն անդին դէպ ի գետ բարձրակարկառ երեւելի սահմանանիշն է, կեցած են բերդի մը (կ-լէ) աւերակները, զոր կրնանք վստահաբար նոյնացրնել Ստրաբոնի Ս-շէ-լիւն (Sagylion)³ բերդին հետ, որ Միհրգատեան ամուր մըն էր Ամասիոյ աշխարհին վրայ կարկառած՝ սեպ եւ բարձր եւ սրագագաթ լեռան վրայ (Ստրբ. էջ 560 կը գրէ՝ ἐπὶ ὄρους ὀρθίου καὶ ὑψηλοῦ πρὸς ὀξεία ἀνατείνοντος ἄκραν)։

¹ Susa-uteh, բայց կ'երեւոյ թէ ուղղագոյն ձեւն է Susawudji (Սէ-ւեչ-ւեչ)։ Կիրերտի քարտէսին վրայ (Համիլ-դէնի հետեւելով) Susandji կոչուած է։

² Կ'իջնայ 40⁰ Երեւմուտք Հարաւոյ՝ Աէզեր-բէտօփրիէ (215⁰ քաղաքին արեւմտեան եզրէն)։

³ Այս կարծիքն արդէն ունեցած են՝ իրարմէ անկախ՝ Թէ Համիլդէն (էջ 332-3 եւ թէ Munro ի Classical Review, 1900, էջ 442)։

Ջրարաշխին ծայրէն 20 վայրկեան հեռու Օրտակլար (Ortaklar) գիւղը գտանք Գեկոսի մէկ մղոնաքարը (Թ. 425) եւ երկու յունական արձանագրութիւններ (Թ. 34—35.) որոնց մին յատկապէս կը յիշէ զինուոր մը՝ որ Սատաղա ծառայած էր եւ հոս իւր բնիկ աշխարհը վերագործած կը մեռնէր. իսկ միւսը՝ հռոմէական Տ տառին նշանակելի գործածութիւն մը կը ցուցնէ, որ այս ճամբուն ուրիշ կէտերու վրայ ալ կ'երեւայ: Քառասուն վայրկեան իջնալով հասանք Իստաւրոս-2այ կոչուած գետը, որ Թաւշան-Տաղէն կ'իջնայ եւ հիւսիս կը հոսի դէպ ի Աղիւս, իւր անունն առնելով Իստաւրոս (Istavros) գեղէն՝ որ վարի փին վրայ կ'իջնայ՝ այն փայտեայ կամրջին քովը՝ որ հոս գետին վրայ ձգուած է: Առնակն եղած լեռնագծին կատարը, տասնուկէս մղոն խաւսայէ հեռու եւ վեց մղոն՝ Աէդիր-Քէօփրիւէ, կը գտնուին երկու մղոնաքարեր (Թ. 426—427) թաղուած թփուտի մը մէջ՝ որ ամայացած գերեզմանոց մը կը ծածկէ. մին՝ Անտոնինոսի Պիոսի, միւսը՝ Սելորոսի Աղէքսանդրի: Աերջինս VII^ր է Աէդիր-Քէօփրիւէ, ուստի իւր նախնական գիրքէն բերուած է հոս մէկ մղոն (կիլոմետրէ մը պակաս) հեռաւորութենէ մը: Ասկէ ետքը երկարատեւ եւ աստիճանաբար իջնալով եւ անցնելով կէշիլ- (Գշիլ^ճ) -էլիէն գիւղը (37 վայրկեան), ուր երեք արձանագրութիւն օրինակեցինք (Թ. 61—63), կը հասնինք՝ դարձեալ յիսուն վայրկեանի մէջ՝ Աէդիր-Քէօփրիւի հովիտն ու քաղաքը:

§ 39. Յառաջ քան բուն քաղաքին մասին խօսիլը, ուր մեր արձանագրական հունձքը ճոխացաւ չորս մղոնաքարերով (Թ. 431—434), պէտք եմ նախ ճամբուն նկարագրութիւնն աւարտել: Մենք նոյնը շարունակեցինք անցանք մինչեւ Աղիւս գետ, ուսկից քաղաքս վերագործանք ուրիշ ճամբով՝ Չէլթիբի եւ Ավտանի (Avdan) վրայէն

(Օգոստ. 12—14): Դէպի Բոյավադ (Boiavad) եւ թաշ-Քէօփրիւ (Պոմպէոպոլիս) տանող արդի ճամբան կ'անցնի մեղմ ալեձեւ դաշտին վրայէն եւ կողմնական հովտէ մը Չէլթիքի մօտ մինչեւ այն հունը՝ ուր գետը կ'անցնուի գետակրով¹: Քաղաքէն իբր մէկ մղոն դուրս՝ խճուղւոյն քովը արտի մը մէջ գտանք մեծ կոթող մը՝ մեծայաղթ շորեքկուսի խարսխով, որ արդէն իւր թ. 422ի հետ ունեցած նմանութեամբը կը խոստանար թէ բլայ Ներուայ մէկ մղոնաքարը: Եւ քննութեամբ նոյն բանը հաստատուեցաւ. դրուածքը ներքեւի կողմն էր, բայց յաջողեցանք քարը մասամբ շրջել դէպ ի վեր, եւ գտանք որ թէեւ տառերը մեծ մասամբ ջնջուած են՝ բայց սկզբնաւորութիւնն ու վերջաւորութիւնը բոլորովին որոշ են՝ *Imp. Nerva C(aes)... mil. I, A'* (թ. 435): Եթէ քարն այժմ ալ իւր բնական տեղը (in situ) չէ, գոնէ իւր նախնական տեղէն հեռու չէ: Ասկէ ետքը ճամբան ձախ կը դառնայ բաց եւ ալեձեւ ցորենաշատ հողի մը վրայէն մինչեւ Ինջէ-... գեղը, քաղաքէն 6 մղոն հեռու², ուր օրինակեցինք՝ յունական արձանագրութիւն մը՝ աղբիւրին մէջ ագուցուած (թ. 89) եւ երեք ուրիշ մղոնաքարեր ալ (թ. 437—9) գերեզմանոցին մէջ, որ ճամբուն վրան կ'իյնայ գիւղէն վարը: Ատոնց մէկը VIII թուականն ունի, որ կը ցուցընէ թէ հոս փոխադրուած է մէկուկէս մղոն հեռու տեղէ մը: Ասկէ ետքը կտրեցինք անցանք Դէլի-Չայի հովիտը, որ Աղեւսի փոքրիկ մէկ օժանդակ գետն է, քառասուն վայրկեան յառաջանալով, եւ քառորդ ժամ մը Աշաղա Նարլի (Ashagha Narli) գիւղէն անդին (3.2) մղոն Ինջէ-սուէ.) ուսկից կը սկսի ճամբան անցնիլ մաքառապատ բլրաշատ գետնէ մը³ մէկ ժամու եւ քառ-

¹ Հմմտ. Հ-Պլոշն, անդ. էջ 326:

² Ժամանակի տեւողութիւնն է՝ 1 ժամ 50 վայրկեան, մէկ ժամ հաղիւ թէ 3 մղոնէ աւելի հաշուելով:

³ Սալայատակի միացորդներ կան հոս հոն, որոնք

նաեւ հինգ վայրկենի տեւողութեամբ (իր 4¹/₂ մղոն) մինչեւ կամուրջը, որ Աղեւսի վրայ ձգուած է այնպիսի կէտի մը վրայ՝ որ մերձաւորապէս իբր մէկ ժամ դէպ ի վեր է արդի գետանցքի հունէն¹։ Կամուրջն այժմ բոլորովին աւերակ է. այժմ այն կամուրջն՝ որ ընտիր շինուած մ'ունենալու էր, միակ մնացորդներն են՝ արեւմտեան եզերքը կամարակալի կտոր մը, եւ արեւելեան ափին վրայ՝ մեծաշողթ կամրջախելքը, որ միայնակ եւ անկապ կերպով ցցուած կարկառած է գետին վրայ։ Կամրջախելաց շինուածքն է՝ ներքին կորիզը փոքր քարերով, որոնք միապաղաղ կրաշագախուած են, եւ յետոյ պատուած արտաքին գրուագով մը՝ մեծ եւ խնամով կտփուած վիմարարերով, որոնք առանց շաղխի իրարու կցուած են։ Կամրջախելաց բարձր սկզբնակէտէն այնպէս մը կ'երեւայ թէ կամուրջը գետին վրայ ձգուած էր միակ կամարով մը, որ 100 ոտքէ աւելի տրամագիծ ունենալու էր։ Հոս հոսանքը սաստիկ է, եւ խորունկ կ'երեւայ, թէեւ վարը գետանցքի հունին քովերը²։ Համիտուն կրցած էր մանուածապատ գծով ծանծաղէն անցնիլ գետը, եւ ջուրը երեք ոտքէն աւելի խորունկ շէր գտած³։

Նարլիէն՝ Աէզիր-Քէօփրի վերագարձանը Չեւիէի (Ճիշդ իբր ժամէ մը) եւ Ավտանի ճամբով, որ վերջինս քաղաքէն դէպ ի հիւսիս-արեւմուտք մէկ ժամ հեռու գիւղ մըն է⁴։ Ավտանի մէջ գտնուած մնացորդայ մասին մեծամեծ լրեր առած էինք, բայց այս մեծաբանուած հնութիւնները

կրնան հին ճամբուն վերաբերած ըլլալ։

¹ Հմմտ. Հ-Պրէն, էջ 326։ Էզրի (Էշրէ)-Աալէ՛ կամրջէն 297° ուղղութիւն կը ցուցընէ։

² Անդ, էջ 327։

³ Աէզիր-Քէօփրի կու տայ 155⁹։

⁴ Իմ չափմունքս 102 մղոն կը ցուցընեն Նիկասրէն

մինչեւ Նարլի։

Հազիւ թէ քիչ մ'աւելի էին քան երկու տապանագիրներ (Թ. 90—91.) որոնց մին արդէն հրատարակուած է երկու յստի ընդօրինակութեանց համեմատ, եւ որ առիթ տուած էր Perrot եւ Kaibel գիտնոց ազատ թուիչք տալու իրենց հանձարեղ երեւակայութեանը, երեւակայութիւն Պափղագոնիացի տաղաշարփին կարողութենէն շատ վեր ու հոյակապ է:

Այսպէս լինցաւ Օգոստ. 14ին մեր միացեալ հետազոտութիւնը 106 կամ 107 մղոն¹ տարածութեամբ՝ Անդրասիական (trans-Asiatique) մեծ ուղւոյն՝ որ Բոսպորէն Եփրատ կը տանէր: Եթէ պարագաները ներէին՝ աւելի ժամանակ պիտի նուիրէինը: Աէզիր-Քէօփրիի արդիւնաշատ դաշտին. եւ ես վերագարծիս միայնս գրած էի մեր ձեռնարկութեան լրացումը նպատակ գնել Փոլքր-Ասիոյ իմ յաջորդ ուղեւորութեանս: Բայց այս միջոցիս Պր. Արման մեր ձեռնարկած գործը շարունակեց եւ լրացուց թէ հաս եւ թէ Պոնտոսի միս մասերուն մէջ մեծ յաջողութեամբ. եւ չեմ տարակուսիր թէ իրեն յաջորդն ալ տակաւին միշտ նոր եւ անձանօթ բաներ պիտի գտնէ:

§ 40. Պր. Munro Պոնտոսի սրտէն անցնող այս աւագ պողոտային կարեւորութիւնը՝ վարչութեան եւ պաշտպանութեան անսակիտով՝ թէ Միհրդատեան եւ թէ Հոռմէական շրջանին մէջ, գեղեցիկ կերպով երեւան հանած է իւր այս յօդուածին մէջ՝ Արքունի եւ Հոռմէական ճանապարհներ ի Պոնտոս¹: թէ Պոմպէոս ինչպէս լաւ բերնած էր աշխարհագրական իրողութիւնները՝ կը ցուցնէ քաղաքներու գրից համար իւր բրած բնութեանը, որոնք հիմնուեցան իբր յունական-

¹ Munro, Roads in Pontus, Royal and Roman: Journ. Hellen. Stud. XXI (1901), p. 52 ff.

Հսոմէական քաղաքակրթութեան կեդրոններ արեւելեան այս քաղաքադուրկ աշխարհին մէջ¹, Իւր Պոնտական եօթը հիմնարկութիւններէն հինգ հատը հաստատուած են այս ճանապարհին վրայ — 'Նէ-դ-լէ' ի Բուրգն, Գայլ գետի վերին մասին վրայ. — 'Պէ-դ-լէ' Կապիրայի տեղն՝ ի Նիկսար, որ Պիւթոգորիսէ վերայորջորջուեցաւ Սերաստէ եւ ի վերջոյ՝ Նէսկեսարիա. — Մ-դ-լէ՝ Միհրգատեան Էւպատորիան, Գայլ եւ Հիրիկ գետերուն գետախառնունքին վրայ. — 'Նէ-դ-լէ' ի Աէգիր-Քէօփրիւ (Անարապայի տեղը՝ որ Փաղիմնի մօտ գիւղ մըն էր), որուն վերջին Նէսկզադիծպօլիս յորջորջանքը՝ որ առնուած էր ի պատիւ Ալաիգեայ, աստիճանաբար տեղի տուաւ անոր հնագոյն բնիկ անուան. — եւ Պ-դ-լէ՝ ի Թաշ-Քէօփրիւ՝ Ամերիա հովտին մէջ: Նոր աշխարհակալուած այս աշխարհն երկար ժամանակի պէտք ունեցաւ քաղաքակրթութեան այն աստիճանի հասնելու, որ հարկաւոր էր Ապսրութեան մէջ վերջնականապէս խառնուելու համար: Սակայն երբ անչափահասութեան շրջանէ մ'ետքը, զոր անցուցին իբրեւ ձեռական պաշտպանեալ աշխարհներ (client-state), հետ զհետէ դաւառ դաւառի ետեւէ՞ յարմար գատուեցան Պետութեան մէջ բնգունուելու, որով Ապսրութեան սահմանները աստիճանաբար յառաջացան մինչեւ Էփրատ, Պոնտական մեծ պողո-

¹ Պոմպէյի գործունէութիւնը՝ Արեւելից մէջ քաղաքային կեանքը զարգացընելու մասին՝ լիովին գնահատուած է Մոմսեն (Momsen, Röm. Gesch. V, c. 4, անգղ. թրգմ. IV, p. 148 ff.)

² Այս կարգաւ անուեցան՝ Պափղագոնիա (6-5 Ն. Ք.) Գաղատական Պոնտոս (3-2 Ն. Ք.) Կոմմա եւ Գատաը (34-35 Յ. Ք.) Պողեմոնական Պոնտոս եւ Կապպադովկեան Պոնտոս (63 Յ. Ք.) — այս ամէնը՝ Լուլուելոյ՝ Գաղատիոյ մէջ, ի բաց առեալ Թերեւս վերջինը, եթէ այն յորջորջանքը 63 Յ. Ք. տարիէն է:

տայն այն ատեն յանկարծ առաջնակարգ նշանակութիւն մը ստացաւ: Այս երկար զարգացման գազաթնակէտն այն եղաւ որ Աեսպասիանու օրով Փոքր-Հայք միացուեցաւ Պետութեան, եւ Հին Գաղատիա նահանգը՝ դրեթէ ամբողջութեամբ ձուլուելով՝ համախառնուեցան Վապագոյովկիա բնդարձակ կուսակալութեան մէջ, որ ասով իւր առաջին աննշանութենէն այն ատեն բարձրացաւ հիւպատոսական նահանգի աստիճանին, մշտակայ բանակով մը որուն կայաններն էին Սատաղան² եւ Մելիտինէ (72—74 Յ. Ք. տարին): Աստի կրնայինք Աեսպասիանու օրով Պոնտական ծանապարհի մը շինութեան հետքերը փնտռելու համամիտիլ: Բայց դժուարաւ այսպիսի հետքեր գտնելու կրնանք յոյս ունենալ, վասն զի այն ատեն անմիջական սահմանին համար սպառնալիք կար³: Ճամբուն առաջին շինութիւնը, որչափ զիտեն փաստերէն, գործադրուած է Ներոնայ օրով, որուն մղոնաքարերն ամէնէն աւելի մեծագործ եւ ամէնէն աւելի խնամով գործուած են մղոնաքարերու շարքերուն մէջ: Թէ ինչ խնամք տարուած էր նոյն ճամբուն նորոգութեան՝ բաւական են ցուցնելու ինն անգամ կատարուած վերանորոգութիւնները, որոնք կը յիշատակուին Ներուայ թագաւորութե-

¹ Ի բաց առեալ Պիտիդիա՝ որ Լիւկիոյ եւ Պամփիլիոյ հետ խառնուեցաւ՝ մէկ նահանգ կազմելով (Հմտ. Ramsay, Cities and Bishopries of Phrygia, I, p. 308, n. 120—121).

² Ամէն հաւանականութիւն կայ այն մասին թէ Սատաղա արդէն ի սկզբանէ զօրաց կայան մըն էր. (Momsen, Röm. Prov. I, p. 324 n. անգղ. թարգմանութեան. Հմտ. Munroի դիտողութիւնքը՝ ի J. H. S XI (1901), p. 61, n. 3).

³ Հմտ. Թ. 477 = CIL, III, 306 (մղոնաքար ի Մէլիթ-Շէրիթ), որ յետոյ պիտի յիշուի:

նէն մինչեւ Կոստանդիանու օրը: Սատաղա տանող ճամբուն հնագոյն շինութեան, համեմատութեամբ Կապպադոզիիոյ միջէն դէպ ի Մելիտինէ տանող զուգընթաց ճամբուն՝ որ կ'երեւայ թէ աւարտած ըլլայ միայն մերձաւորապէս դար Մ' ետքը¹, անտարակոյս այն եղած է պատճառը (ինչպէս Munro մատնանիշ կ'ընէ), որ նոյնը ամէնէն շիտակ ճամբան էր Լիբրատի եւ Գանուբի ավուներն եղած լեզիոնական բանակատեղիներուն մէջ, ուսկից անդադար զօքքերը կը խաւրուէին Արեւելք: Իսկ Մելիտինեայ հետ հաղորդութիւնը՝ գոնէ առժամապէս՝ բաւականօրէն ապահովուած էր Սատաղայէն եկող սահմանազիտի ճամբով՝ որ գոնէ 75 Յ. Ք. տարին արդէն շինուած էր², եւ դարձեալ ճամբու այն կարճ բազկով՝ որ գլխաւոր ճամբէն կը բաժնուէր Ողոտեդարիզայի քով (Olotoedariza, այժմու Այվանուսի մօտ) եւ կ'երթար կը միանար սահմանազիտի ճամբուն հետ Կարսագայի քով (Carsaga, արդի Գերջանիսի մօտ)³:

¹ Տես D. G. Hogarthի նկարագրութիւնը ի R. G. S. Suppl. Papers, vol. III. Ամենահին մղոտեդարերը Սեպտիմու Սեւերոսի են՝ որոնք արդէն վերանորոգութիւն մը կը յիշատակեն (restituit «նորոգեաց») :

² Թ. 477 — CIL, III, 306.

³ Թ. 476է կ'իմանանք թէ այս ճամբան շինուած էր Ադրիանոսէ յառաջ: Պեւտինգերեան Տախտակն ուրիշ շրջուն ճամբայ մըն ալ կը նշանակէ, որ Նիկոպոլսէն կու գար կը միանար սահմանազիտոյ ուղոյն Անալիբլայի քով՝ Սարրինա գետին (այժմ Կարա-բուդակ-սու) քով՝ Զիմարայէ վեր: Այս ճամբան նշանակած է Taylor, ի Journ. Geogr. Soc. XXXVIII, p. 301 ff. բայց տակաւին հետազօտուած չէ: Ἀνάλιβλα է հայերէն «անլիբլ», (anilibh), այսինքն՝ «անլի արի» (տես Tomaschek, ի Festschrift f. H. Kiepert, p. 139).

Որչափ ալ վարչական տեսակիտով միշտ կարելոր ճամբայ մըն էր՝ պատերազմական պատմութեան մէջ անշափ յաճախագոյն երեւան շի գար Պոնտական բնուղնն: Յաջորդ դարերու մէջ՝ երբ արտաքին յարձակման սպառնալիքը կը ծանրանար հարաւային - արեւելեան սահմանագլուխներուն վրայ, զինուորական գործողութիւնները անհրաժեշտաբար կը շարժէին աւելի հարաւային ուղեգծերուն երկայնքը, եւ հիւսիսային ճամբուն կարելորութիւնը սկսաւ նուազիլ: Նորագոյն ժամանակներս բոլորովին ինկած է նոյնը. հոս հոն տեղական ճամբայ մը նոյն ուղեգծին կը հետեւի, բայց՝ իբր հաղորդակցութեան երակ մը Արեւմտքի եւ Արեւելքի մէջ՝ այս ցամաքային ճամբուն տեղը բռնած է ծովեղերեայ շոգենաւային երթեւեկութիւնը՝ որ Կ. Պոլսոյ եւ Բաթումի միջեւ տեղի կ'ունենայ:

§ 41. Վեգիր-Վեգիրիս: — Հիմայ դառնանք նորէն Աեգիր-Քէօփրիւ: Այս քաղաքը՝ որ վարչական կենդրոն մըն է երրորդ կարգի (ք-յ-ք-ք-լ-լ) սիրուն դիրք մ'ունի երկու գետերուն միացման տեղը, որոնք Թուաշան-Գաղէ հոսելով կ'իջնան, որ բաւականաչափ ջուր կը մատակարարէ՝ բաղնաթիւ պարտէզներն ոռոգելու համար: Հեռուէն դիտելով (մանաւանդ արեւմտեան կողմէն՝ ուսկից առնուած է մեր լուսանկարը, Պտկ.) քաղաքին շողշողուն աշտարակները (մինարէներ) եւ բռնածեփ ու կղմինդրով ծածկուած աները՝ ծառերու տերեւալից կանաչութեամբ մէկտեղ՝ բարեկեցութեան եւ բարգաւաճման զուարթ երեւոյթ մը կ'ընծայեն անոր. բայց երբ մերձուստ ճանշնանք՝ կը գտնենք որ աղտոտ ու աւերած տեղ մըն է: Գէպ ի արեւմուտք եւ արեւելք գացող ճամբաներուն վերջին անկածութեան հետեւանօք՝ քաղաքը ինկած էր անել բաւղի մը մէջ եւ դատապարտուած էր աննշան ըլլալու: Հին ժամանակները շատ տարբեր էին իրերը՝ ինչպէս կարելի է

Հետեւեցրնել արդէն մինչեւ ցայժմ ըսուածներէն. Համիլարնի 1836ի այցելութիւնը ցուցուցած էր թէ քաղաքը հին նստի մը տեղը կամ մօտն էր. տեսած էր, ինչպէս այս կողմը ճանապարհորդող ամէն ուղեւոր չէր կրնար շտեմնել՝ Սարաբոնի անսովոր կերպով պայծառ եւ ճշգրիտ նկարագրութիւնը իւր մտաց առջեւ ունենալէն ետքը, թէ քաղաքը «Փաղիմոնիտիս գաւառին սահմանաց մէջ կ'իյնայ» եւ ինքը յայտնեց այն թելադրութիւնը թէ նոյնը Փաղիմոն-Նէպոլիտի քաղաքին արդի ներկայացուցիչն ըլլայ¹: Մենք ալ այնպէս վստահ էինք այս նոյնութեան ուղիղ ըլլալու մասին՝ որ մեր ձեռքն ինկած ամէն նոր արձանագրութիւն կաթողին կը հետախուղէինք՝ ի նպաստ այս կարծեաց յիշատակարաններէ վաւերական փաստ մը գտնելու. եւ երբ վերջապէս գտանք արձանագրութիւն մը (թ. 67) որ խոստմնայից բանաձեւովս կը սկսէր՝ ἡ βουλὴ καὶ ὁ δῆμος (Խորհուրդ եւ Ժողով) եւ կը յաջորդէր անունը Νε... սկզբնաւորութեամբ՝ աճապարեցիւք լրացրնել Νεαπολειτών (Նեպոլեացի) բայց բռնագատուեցանք կարգալ Νεοχλαυδιοπολειτών (Նեպոլեացի-Նեպոլեացի) եւ թողուլ որ մեր յոյսերը խորտակուին:

Մեծ անակնկալ մըն էր Վէզիր-Քէօփրիւի մէջ գտնել այն անունը՝ զոր ի զուր որոնած էի Իսկելիբի մէջ՝ առժամապէս հետեւած ըլլալով Արպերտի թելադրութեան², որ շատ հաւանական կ'երեւար³: Այս արձանագրութեան գիւտը առա-

1 Անդ՝ էջ 329 եւն:

2 Վերը՝ § 1:

3 Այս նոյնացման դէմ որեւէ հաստատուն փաստ մը չէր այն պարագան որ Արպերտի առաջարկած գիւտը, երբ ուրիշ ծանօթ իրողութեանց հետ լաւ կը համաձայնի, Պաղոմեայ բնագրին կը հակասի: Անոնք՝ որ աւելի գործածած են Պաղոմեայը՝ ամէնէն աւելի լաւ գիտեն թէ իւր

Ղին տեսութեամբ կարծես զժուարութիւն մը կը ստեղծէր Փաղիմոն-Նէպոլսոյ տեղւոյն նոյնացման նկատմամբ: Քանի որ այս անունները Ստրաբոնի ժամանակէն ետքը անհետ կ'ըլլան, բնական եղբակացութիւնն այն պիտի ըլլար թէ Նէսկղաւդիոպոլիս-Անդրապա անագանագոյն անուններ ըլլան միեւնոյն քաղաքին: Բայց այն ատեն կը ծագէր սա խնդիրը թէ՛ Ի՞նչպէս կրնայ երկու բնիկ անուն՝ Փաղիմոն եւ Անդրապա՝ եղած ըլլալ միեւնոյն տեղւոյ համար: Այն ատեն ուրեմն Նէսկղաւդիոպոլիս իւր բնիկ Անդրապա յորջորջանօքն արգեօք տարբէր տեղ մ'եղած պիտի ըլլայ Նէպոլսէն՝ որուն բնիկ անունն էր Փաղիմոն, եւ վերջինս ուրիշ տեղ մը գնեցու ենք՝: Բայց մերձուստ քննելով կը տեսնուի թէ առերեւոյթ զժուարութիւնն իրական չէ, եւ պատճառն է Ստրաբոնի (էջ 560) մէկ սխալ ընթերցումը: Ամբողջ զժուարութիւնը անհետ ջնջուեցաւ, երբ Ռամսէյ մատնանիշ բրաւինձի թէ հաւանօրէն հոս ալ առիթ կայ գործադրելու այն սկզբունքը՝ զոր այնչափ յաճախ գործադրած է Փրիւզիոյ տեղագրութեան մէջ՝ օրինակի համար Ինիա (Oinia) եւ Լիւսիաս տեղերը զետեղելու ատեն², ճիշդ ինչպէս որ Անտիոքոս

բնագրին մէջ եղած տեղեկութիւնք ընդունուելու չեն առանց ուրիշ հաստատական փաստերու (հմտ. օրինակի համար՝ § 4ի վերջերը յիշուած օրինակն): Անդրապա-Նէսկղաւդիոպոլիս խնդրոյն մէջ՝ գիւտերու հետզհետէ զարգացումը ցուցուց թէ աւելի կամ նուազ ուղիղ է իւր սածը, բայց նաեւ բաւական յաճախ ցուցուց թէ ինքը (կամ իւր բնագիրը) բոլորովին սխալ ալ է:

1 Հմտ. Munroի JHS, XXI (1901), p. 60 ff., ուր կը թելագրուի թէ խաւսս կրնայ եղած ըլլալ նոյն նիսաը: Բայց Ստրաբոնի նկարագրութենէն չ'երեւար թէ ակնարկէ իւր թէ Նէսպոլիս քերմուկներուն մօտ ըլլար իրօք, եւ համեմատութիւնն ալ ամբողջովին ասոր հակառակ էր:

2 Ramsay, Cities and Bishopries of Phrygia, p. 754 f.

Մեծի Լիսիաս զորավարը Ինի-ո-ոյ մէջ (Oiniata¹, արդի՝ Oinan-Owa, հիւսիս-արեւելք «մայրաքաղաքի դաշտ» էն՝ „campus Metropolitanus“) հիմնարկեց յոյն քաղաք մը Լի-սի-ս (Lysias) անուն այնպիսի նստիւք մը՝ որ իբր մէկուկէս մղոն հեռու էր Oinia գիւղէն (այժմ՝ Oinan), ինչպէս բնագիրը կ'ըսէ *κατά Οινίαν χώμην*, նոյնպէս Պոմպէոս Փ-լի-մ-նի-ո-ոյ մէջ հիմնեց յունական Նե-պ-ո-լի-ս քաղաքը՝ Ան-բ-ո-ո գիւղին տեղը, քիչ մը հեռու Փ-լի-մ-ն գիւղէն եւ անոր գիմացը կեցած (*κατά Φαζημῶν χωρῆν*¹). Այս խորհրդածութեան ուղիղ բլաւն անմիջապէս հաստատուեցաւ եւ Նեպոլիս-Նեոկլաւգիոպոլիս տեղւոյ նոյնութիւնը ապացուցուեցաւ այն նշանաւոր արձանագրութեամբ՝ զոր Պր. Աիւմոն գտաւ ի Վէզիր-Քէօփրիւ եւ հրատարակեց²: Արձանագրութեանս մասին կից մեկնաբանութեան մէջ Աիւմոն՝ Թ. Ռայնսի մէկ թելադրութեան համեմատ՝ կրկին բնիկ անուանց գոյութեան նկատմամբ այնպիսի մեկնութիւն մը կու տայ՝ որ լիովին համաձայն է մեր վերն ուրուագծածին հետ, որովհետեւ կ'ենթադրէ թէ «այն գիւղն՝ որ ընտրուեցաւ նոր քաղաքին տեղն ըլլալու, քիչ մը հեռու էր Փպլիմոն գիւղէն»³, որմէ գաւառն իւր անունն առաւ: Այս երկու գիւտերուն փոքրագոյն արգիւնքներէն համարելու չենք լիովին հաստատուիլ մեկնութեան սկզբունքի մը՝ որ գտնուած էր տեղագրական այլեւայլ մթին խնդիրներուն վրայ լոյս սփռելու համար⁴:

1 Ս-բ-ն, էջ 560:

2 Cumont, ի Revue des Études grecques, 1901, p. 26 ff. — Թ. 66 յետոյ:

3 Ուղիղ ընթերցուածը կը հաստատուի արձանագրութեամբը:

4 Ստրաբոնի (էջ 560) Ձեռագրաց տուած ընթերցման մէջ կ'երեւայ թէ հարկաւ որ չէ սրբագրութիւն մ'ընել. ի բայ առեալ այն հին եւ ակնյայտի սրբագրութիւնը

Նախընթաց արձանագրութենէն (թ. 67) կը հետեւին երկու ուրիշ իրողութիւններ ալ՝ որոնք ուրիշ փաստերով ալ կը հաստատուին: Նախ՝ ասով ի վիճակի կ'ըլլանք Պափղագոնիոյ արեւելեան սահմանն որոշելու: Երբ անգամ մը հաստատուեցաւ Նեոկալուդիոպոլիս-Անդրապա քաղաքին գիւրքը, այն ատեն Պաղումեոյ այն տեղեկութիւնը (որուն նեցուկ էին արդէն գրամները), թէ այս քաղաքը Պափղագոնիոյ կը վերաբերէր, զմեզ գոնէ այն եզրակացութեան կը հասցընէ թէ Պափղագոնիա գէպ ի արեւելք կը տարածուէր մինչեւ «Ջերժ Ը-ր+Փ-շէճ-ն-ց-ոց» (Θερμά βόδατα τῶν Παζζιμονιτών, Փազիմանեան Ջերմուկներ) ի խաւսաւ եւ այն ատեն տարակոյս չի մնար այն դաւառին մասին՝ զոր Սարարսն կ'ակնարկէ նշանակելով՝ թէ Պափղագոնիոյ ներքնաշխարհին մէջ Միհրդատոյ տիրած աշխարհամասը կը տարածուէր մինչեւ Ադիւսի արեւելակողմը: Աշխարհագրական տեսակիտով սահմանագիծն ալ բաւականօրէն բնականն է, բնթանալով՝ ինչպէս իրապէս է՝ արեւելեան դարերուն երկայնութեամբն այն լեռնաշղթային՝ որ ջրարաշխ է Ադիւս եւ Հերիկ գետերուն միջեւ: Փազիմանիախի մնացեալ մասը Գաղատական Պոնոսի մէջ կ'ըլլար:

Երկրորդ՝ արձանագրութիւնն լաւ պահուած հաստատի մը մէջ կը վճռէ այն թուականութեան խնդիրը՝ զոր զօրծածուած կը գտնենք Պափղագոնեան քաղաքներու խմբի մը մէջ՝ որ են՝ Նեոկալուդիոպոլիս, Պոմպուպոլիս եւ Գանդրա: Պր. Իմֆֆ-Բլումեր իւր «Յունական Գրամներ» եր-

Նεαπολίτιν քηφώνωκ քηφώκωκ Μεγαλόπολι, քթէ բնա-
 քիւս կ'ուարեմք պոպու՝ իν Πομπήιος Νεαπολίτιν, օնօ-
 քασε, քατά Փαζημῶνα քώμην քποδείξασ քτην քατοικίαν
 քαί քροσαγορεύξασ Νεάπολι.

1 Սարար. էջ 544, զօր վերը յիշատակեցինք:

կին մէջ (Imhof-Blumer, Griechische Münzen, p. 584) սահմանած էր 4 Ն. Ք. տարին իբր վերջին կարելի թուական՝ նոյն դրութեան սկզբնաւորութեան: Յետոյ Ռամսէյ ցուցուց՝ Պոմպէոսի մէկ արձանագրութեան թէ նոյնը հաւանորէն կը սկսէր 6 Ն. Ք. տարւոյ աշունէն, եւ իւր եզրակացութիւնը կը հաստատուի մեր արձանագրութեամբ: Նման ապացոյց մ'ալ գործածուած է թ. 313 արձանագրութեան լուսարանութեան մէջ՝ Պոնտական Ամանայի թուականութիւնը ճշգրտորէն որոշելու համար:

Պափղագոսեան քաղաքներու այս խմբին մէջ գործածուած թուականութիւնը կը հաշուի այն ժամանակէն՝ երբ ասոնք վերջնականապէս Ապսորութեան մէջ ձուլուեցան: Խմբին կրկին անդամները՝ Նեպոլիս-Նեպոլիսիոսիոս եւ Պոմպէոսիոս՝ մտնուած էին Պոմպէոսի ձեռքը (64 Ն. Ք.) իւր հիմնած «Պոնտական կուսակալութեան» մէջ (Ποντική ἐπαρχία)² բայց Պոմպէոսի բրած կարգադրութիւնը քիչ մ'ետրք փոփոխուեցան³: Այս երկու դաւանները՝ նման այն աշխարհաց որոնք յետոյ Վաղատական Պոնտոս եւ Պոպլեմոնական Պոնտոս կոչուեցան⁴, կանխահաս կերպով

¹ Ramsay, *ի* Revue des Études grecques, 1893, p. 251 ff. Հմտ. G. Maedonald, *ի* Journ. Intern. d'archéologie numismatique 1899, p. 17 ff.

² Սոր-բու, էջ 544, 560-1 (Փաղիմոնիոս) 562 (Պոմպէոսիոս): Հմտ. JHS, XX (1900), p. 153. եւ Cumont, *ի* Revue des Études grecques, 1901, p. 37. (— p. 12 առանձին ապագրութիւն):

³ Սոր-բու, էջ 541 կը գրէ՝ ὅτι τῶν Ῥωμαίων ἡγεμόνες ἄλλους καὶ ἄλλους ἐποίησαντο μερισμούς, βασιλείας τε καὶ δυνάστεας καθιστάντες, և յայնքն թէ Յետոյ Հռոմէացոյ վարիչներն սյրե սլլ մասեր բրին, թագաորներ եւ իշխաններ գրին, եւն:

⁴ Սոր-բու, էջ 561 (Ամառիս) 560 (Սերաստոսիոս-Վարանա) 558 ff. եւ 560 (Պոնտական Ամանա) 560 (Ջելա

առնուած էին կայսրութեան մէջ, եւ անմիջապէս սովորական ոճով յանձնուեցան բնիկ իշխաններու, որպէս զի կրթութիւն ու բարեկարգութիւն մինչեւ որ Հռոմի պահանջուած աստիճանին հասնին: Նէպոլիս եւ Պոմպէպոլիս անտարակոյս յանձնուեցան արեւելեան Պափղագոնիոյ իշխաններուն¹: Ն. Ք. 64 տարւոյ կարգադրութեան մէջ Պափղագոնիոյ ներքնաշխարհը բաժնուեցաւ Պիւղեմէնէս² եւ Ատտաղոս³ իշխաններուն, առաջինն ընդունելով արեւմտեան կէտը, եւ վերջինն՝ արեւելեան կէտը: Գիոտարոս (Deiotaros) թագաւորին մահուան տարին՝ 40ին Ն. Ք. Պափղագոնիոյ աշխարհին Ատտաղոսի ունեցած մասը (Գաղատիոյ հետ միասին) Անտոնիոսի կողմանէ տրուեցաւ երիտասարդ Կաստորի⁴, որ Գիոտարոսի թոռն էր մօր կողմանէ, եւ ասոր ալ մահուանէ ետքը՝ 36ին Ն. Ք.՝ անցաւ իւր որդւոյն Գիոտարոսի Փիղադելփոսի⁵, որ կ'իշխէր այն աշխարհամասին՝ իբր

եւ Մեգալոպոլիս-Սերասիա): Համամիտ շեմ պաշտպանելու այն տեսութիւնը (յիշատակուած ի JHS, XX, p. 155, n. 6), որ կը փորձէ յարաբերութեան աղերս մը հաստատել բաժանմանց մէջ, այսինքն՝ Պոնտոսի նահանգի X քաղաքներուն, որ ըսել է Պոնտոս եւ Բէ-Նէ-Երկուորեակ-Նահանգին կէսէն մէկ կողմանէ՝ քրիստոնէական թուականութենէ յառաջ Գ. դարուն (BCH, 1898, p. 492) եւ միւս կողմանէ այն XI քաղաքամասերուն մէջ (πολιτεῖαι), որոնց բաժնեց Պոմպէպոս իւր Պոնտական Կուսակալութիւնը (Ποντική ἐπαρχία) Ն. Ք. 64 տարին: Հմտ. Revue des Études grecques, 1901, p. 139.

¹ Թերեւս Անտոնեայ ձեռք:

² Հմտ. Սարաբոն, էջ 541:

³ Ա. Պ. Պոնտոս, Միհրդ. 114. Գիւն, ԽԸ, 33:

⁴ Գիոն՝ անդ:

⁵ Սարաբոն, էջ 562 վերջը. Գաղատիան տրուած էր Ամիւնդոսի: Հմտ. Nieseի սքանչելի յօդուածն ի Rhein. Museum. XXXVIII (1883), p. 584 ff.

իւր մայրաքաղաք ունենալով ամրագիր Գանգրայ բերդը՝ մինչեւ իւր մահը 6—5 Ն. Ք. տարին, երբ աշխարհս վերջնականապէս պետութեան հետ ձուլուեցաւ Ալեքսանդրի ձեռքը:

Այս ձուլման ատեն Պափղագոնիոյ այս մասը կցուեցաւ Գաղատիա նահանգին: Այս վիճակամասիս մէջ մուծուած քաղաքներու հասարակաց գործածած թուականութիւնն ինքնին կը բաւէ նոյնն ապացուցանելու, եթէ նկատի առնունք այն դիրքը՝ զոր կը գրաւէր այն ատեն Գաղատիա նահանգը՝ Հռոմէական իշխանութեան աստիճանաբար դէպ ի Արեւելք տարածուելուն մէջ եւ այն յարաբերութիւնն՝ զոր ունէր իւր դրացի ձեռական պաշտպանաւոր երկիրներուն հետ¹: Սակայն Munro ուրիշ տեսութիւն մ'ալ պաշտպանեց²: Ար համարի թէ՛ մինչդեռ Գանգրա Գաղատիոյ կցուեցաւ, Նէպոլիս եւ Պոմպէպոլիս մուծուած էին Պոնտոսի մէջ մինչեւ Պտղոմէսի ժամանակն ալ³: Այս տեսութիւնը՝ պաշտպանելու համար երկու փաստեր յառաջ կը բերէ. նախ՝ Ստրաբոնի (էջ 544) խօսքին մեկնութիւն մը. եւ երկրորդ՝ պարագայ մ'որ առաջին հայեցուածքին զրաւիչ կ'երեւայ, այսինքն այն՝ որ նուիրակներուն (legati) անունները չեն երեւար այն մղոնաքարերուն վրայ՝ որոնք Պափղագոնիոյ արեւելեան անկիւնը գտնուած են (Խաւսայի եւ Աղիւսի մէջ տեղն). թէպէտ եւ այս մղոնաքարերէն ոմանք կանգնուած են ճիշդ նոյն տարիները՝

¹ Marquardt, Staatsverwaltung³, I, p. 359. Ramsay ի Revue des Et. gr. 1893, p. 251 ff. եւ Ներածութիւնն իւր երկին՝ Historical Commentary on Galatians, § 12, որ կը պարունակէ պայծառ տեղեկատուութիւն մ'այն սկզբանց՝ որոնց առաջնորդութեան համեմատ Հռոմէական քաղաքագիտութիւնը կը շարժէր:

² JHS, XX (1900), p. 100 ff. եւ XXI (1901), p. 61, n. 1.

³ Որ նոյնները Գաղատիոյ կը վերագրէ. Ե. 4, 4:

երբ գրուած են Գաղատիա նահանգին միւս մղոնաքարերը, որոնք նուիրակաց անուները կը կրեն արձանագրուած¹ :

Արդ նշանակենք նախ որ Պր. Կիւմնի արձանագրութեան (թ. 66) նորագոյն փաստն այս տեսութեան դէմ ամբողջովին հակառակ կ'ելլէ: Արձանագրութիւնը, որ կը յիշատակէ Պատիղազոնիացւոց առ հասարակ, եւ անոնց մէկ հատածին՝ Փազիմոնիտացւոց (որոնք քարն ալ կանգնած են) ի մասնաւորի, ուխտած հաւատարմութեան երգումն առ Աւգոստոս՝ 4—3 Ն. Ք. տարին, կ'ապացուցանէ առանց տարակոյս մը թողու թէ Նէպոլիս ալ միեւնոյն նահանգին մէջն էր՝ ուր էր Գանգրա²: Եւ ո՛չ ալ նոյն տեսութեան ի պաշտպանութիւն յառաջ բերուած ապացոյցները

1 Օրինակի համար Տ. Պ-Վ-Նէ--Բ----ի անունը չի գտնուիր թ. 424, 435 մղոնաքարերու վրայ, բայց կը յիշուի թ. 420, 444, 445, 449, 460 եւն քարերու վրայ. եւ թէպէտ եւ Ա. Լ-ը--Մ-ի-Դ-նէ անունը չեն յիշեր թ. 428 եւ 431. բայց նոյնն ընդհանրապէս կ'երեւայ Գաղատական մղոնաքարերու վրայ (CIL, III, 310, 313. Suppl. 14184 a7, 14184 58—61): Պր. Munro այս իրողութիւնները փաստ մը կը նկատէ ի նպատակ այն տեսութեան թէ մղոնաքարերը բաժնուած էին «գաւառներու» համեմատ, որոնք կը համապատասխանէին վարչական կամ քաղաքական բաժանմանց:

2 Պր. Կիւմնի այս մասին՝ յատկապէս κατά τὰ αὐτὰ (տող. 36) եւ ὁμοίως τε (տող. 39) ասացուածոց իմաստին համար՝ տուած մեկնութիւնն այնպէս ակնյայտնի ուղիղ է որ գժուարաւ կրնայ երեւակայութիւ թէ ուրիշ մեկնութիւն մ'ալ կարելի ըլլայ ընդունուիլ. (հմմտ. թ. 41—p. 16 ff. առանձին տպագրութեան): Եթէ Փազիմոնիտացիք տարրեր նահանգի մը մէջ կը բնակէին առանց երկբայութեան զատ կայսերական հրաման մ'առած եւ այս հրամանն ալ արձանագրութեան սկիզբը գրողմած կ'ըլլային, եւ մէ ալ կը զիմուի ուրիշներուն, որոնց հետ որեւէ գործ մը չունէին:

Հաստատահիմ կ'երեւան՝ երբ մերձուստ քննուին: Նախ(—) Ստրաբոնի խօսքը հետեւեալն է. «Որովհետեւ այս աշխարհը (Պափղագոնիա) կը բաժնուի երկու մասի, միջերկրեայ եւ ծովեզերեայ, տարածուած Աղիւս գետէն մինչեւ Բիւթանիա. կրկին ծովեզերեային մինչեւ Հերակլէա կը տիրէր Եւպատոր. նաեւ միջերկրեային ալ մերձաւոր մասերուն կ'իշխէր, որոնց ոմանք նաեւ Աղիւսէն անդին ալ կը տարածուէին. եւ մինչեւ հոս սահմանուեցաւ Հռոմէացւոցմէ Պոնտական կուսակալութիւնը. իսկ մնացածները իշխաններու տակ էին նաեւ Միհրդատայ կործանմանէն ետքը՝»: Ստրաբոնի այս հաստածը պէսպէս կերպով մեկնուած է: Այն պարագան թէ Ποντική ἐπαρχία (Պոնտական կուսակալութիւն) յորջորջումը կը նշանակէ Պոնտոսի նահանգն այնպէս՝ ինչպէս հաստատեց Պոմպէոս 64ին Ն. Ք., բաւականաչափ պայծառ կ'երեւայ²: Ստրաբոն կ'ըսէ թէ այս նահանգը Պափղագոնիոյ ներքնաշխարհէն ալ այնչափ մաս կը պարունակէր՝ որչափ որ Միհրդատայ ձեռքն եղած էր: Պր. Munro իբրեւ կարեւոր կը շեշտէ ἀφώρισται (սահմանուեցաւ) բային կատարեալ ձեւը, զոր կը մեկնէ այն մտօք թէ անով ակնարկուած ըլլայ

¹ Ստրաբոն, էջ 544: Բնագիրն է՝ τῆς δὲ χώρας ταύτης διηρημένης εἰς τε τὴν μεσόγαιαν καὶ τὴν ἐπὶ θαλάττῃ διατείνουσαν ἀπὸ τοῦ Ἄλνυος μέχρι Βιθυνίας, ἐκατέρωθεν τὴν μὲν παραλίαν ἕως τῆς Ἡρακλείας εἶχεν ὁ Εὐπάτωρ, τῆς δὲ μεσογαίας τὴν μὲν ἐγγυτάτω ἔσχευ, ἧς τινὰ καὶ πέραν τοῦ Ἄλνυος διέτεινε: καὶ μέχρι δεῦρο τοῖς Ῥωμαίοις ἢ Ποντικῇ ἐπαρχίᾳ ἀφώρισται: τὰ λοιπὰ δ' ἦν ὑπὸ δυνάσταις καὶ μετὰ τὴν Μιθριδάτου κατάλυσιν.

² Այսպէս էջ 562 «կիրքը՝ ἢ ἐκτὸς (այսինքն նոյն տեղը նոր նկարագրուած Ամասիայէն նայելով) Ἄλνυος χώρα τῆς Ποντικῆς ἐπαρχίας ἢ περὶ τὸν Ὀλύσσον (այսինքն) Պոմպէոսուրոյ դաւառը»:

լուելեայն թէ նոյն կարգադրութիւնը տակաւին
կը շարունակուէր Ստրարոնի գրած ժամանակ:
Բայց արդ, եթէ միայն այս հասածն բլար այս
խնդրոյն նկատմամբ մեր ունեցած միակ փաստը,
անշուշտ կրնար այս մեկնութիւնը պաշտպանուիլ.
Բայց խնդրին ներկայ վիճակին մէջ՝ խնդրելու ենք
թէ անհրաժեշտ է այսպիսի լուելեայն իմաստ
մ'ենթադրելը: Յիրականին սրեւէ անհրաժեշտու-
թիւն չկայ: Բային կատարեալ ձեւը անհրաժեշ-
տարար չի պարունակեր այն իմաստը թէ գործողու-
թեան արդիւնքը կը շարունակուի նաեւ մինչեւ
ներկայ ժամանակը: Այս կանոնը կ'արժէ դատա-
կան հեղինակներուն քով եւ նոյնպէս է ապա-
հովապէս Ստրարոնի քով ալ: Օրինակները բազ-
մաթիւ են, եւ ես կը շատանամ առձեռն պատրաստ
վկայութեամբ մը՝ էջ 584 (Գիրք ԺԳ, 7) ուր
Ստրարոն խօսելով Հոմերական ժամանակաց մա-
տին՝ կ'ըսէ $\pi\epsilon\pi\acute{o}\rho\theta\eta\tau\alpha\iota\ \delta\grave{\epsilon}\ \sigma\acute{\upsilon}\nu\ \tau\omicron\iota\tau\varsigma\ \acute{\alpha}\lambda\lambda\omicron\iota\varsigma$
 $\tau\acute{o}\pi\omicron\iota\varsigma\ \kappa\alpha\iota\ \tau\acute{\alpha}\ \acute{\alpha}\nu\tau\iota\kappa\epsilon\iota\mu\epsilon\nu\alpha\ \tau\grave{\eta}\ \Lambda\acute{\epsilon}\sigma\beta\omega\ \kappa\epsilon\iota\upsilon\iota$:

(Բ.) Երկրորդ՝ Այն ապացոյցն որ հիմնուած
է նուիրականերուն անուններն արձանագրելու կամ
շարձանագրելու վրայ, որչափ ալ առաջին հայե-
ցուածքին նշանակութիւն ունեցող երեւայ, երբ
նաեւ հարեւանցի ալ զննուի փաստը՝ կը տեսնուի
թէ բոլորովին անարժէք է, յորմէ հետէ կը գտնենք
թէ կայսերական նուիրականերուն անուններն երբեմն
կ'երեւան մղոնաքարերուն վրայ եւ երբեմն չեն
երեւար: Ասոնց շերեւալը պարզապէս տեղական
պէսպիսութիւն մըն է, վայրավատին տարբերու-
թիւն մը, որ ուրիշ բան չի ցուցընէր՝ բայց այն
միայն թէ մարդկային բնութիւնը միաձեւութեան

ւ Հմեմ. Goodwin, Syntax of Greek Moods and Tenses (1889), § 46. Յայտնի է որ «եղած եմ» յաճախ չի պարունակեր «եմ» իմաստը. այլ անոր ճիշդ հակա-
դիրը:

օրէնքով մը չի շարժիր: Այսպիսի պէսպիսութեան քանի մ'օրինակներ ալ բաւական են ցուցընելու թէ ինչ եզրակացութիւններ կրնան յառաջ գալ այսպիսի ասպացոյց մը գործածելով: Լարկիոս Մակեդոնի (Larcus Macedo) անունը չի տեսնուիր Նէապոլսոյ գաւառին մէջ եղած 122 Յ. Ք. տարւոյ երկու մղոնաքարերուն վրայ (Թ. 423, 431). բայց իւր անունը (կամ հաւանօրէն իւր յաջորդինը) չերեւար նաեւ յաջորդ տարին կազնուած մղոնաքարի մը վրայ՝ որ անկասկած Գաղատիոյ մէջն է: Նուիրակի անուն չունի Ադրիանոսի մղոնաքարէն ուրիշ մէկ մղոնաքարը նոյն գաւառին մէջ¹, որ 128 Յ. Ք. տարիէն է, եւ նոյնպէս Գաղատիոյ մէջն է: Նէապոլսոյ գաւառին մէջ Սեւերոսի Աղեքսանդրի երկու մղոնաքարերը (222 Յ. Ք. տարիէն) կը կրեն նուիրակին անունը (Թ. 427, 433). բայց չեն կրեր անոր անունն երկու քարեր ալ որ յաջորդ տարին (223 Յ. Ք.) Անկիւրիոյ գաւառին մէջ կանգնուած են²: Արդ կրնա՞նք ուրեմն ասկէ հետեւցընել թէ Նէապոլիս-Աղաւղիուպոլիս այն ատեն կցուած էր Գաղատիա նահանգին, իսկ Անկիւրիա չէր կցուած: Կամ երբ որեւէ նուիրակի անուն չենք գտներ միեւնոյն Կայսեր Կապպադովկեան մղոնաքարերուն վրայ 222 Յ. Ք. տարիէն³, կրնա՞նք ասկէ եզրակացընել թէ Կապպադովկիա Կայսերական նահանգ մը չըլլար նուիրակի մը վարչութեան ներքեւ: Գարձեալ Սեւերոս Կարա-

¹ CIL, III, Suppl. 6968.

² Արեւմտեան եզերքը Լճին (Limnai, այժմ Hoiran-Geul).

³ Անդ՝ 6967.

⁴ CIL, III. 316 եւ Suppl. 6901.

⁵ H o g a t h, ի R. G. S., Suppl. Papers, III (1893), p. 51, n. (II), եւ p. 66, XCIV (I) — CIL, III, Suppl. 12211, 12169.

կալայի մղոնաքարերն ի նեոկղազդիպոլիս (Թ. 438) եւ Տաւիւսմի մօտ՝ նուիրակին անունը կը կրեն (198 Յ. Ք. տարիէն). բայց ուրիշ² մը՝ Անկիւրիոյ հարաւակողմը՝ (208 Յ. Ք. տարիէն) չունի անունը: Օրինակները կրնայինք յաճախել³. բայց ասոնք ալ կը բաւեն ցուցընելու թէ Վէզիր-Քէօփրիւի գաւառին մէջ գտնուած՝ Ներուայ եւ Ագրիանու մղոնաքարերուն վրայ նուիրակին անուան շգտնուիլը որեւէ ապացոյց մը չէ գաւառին այս կամ այն նահանգին վերաբերելուն:

§ 42. Դիակոպենէ եւ Պիմնոլիս: — Քանի մը տեղեկութիւններ միայն պէտք է աւելցընել իմ վերադարձի ուղեւորութեանս մասին՝ Դիակոպենէ եւ Պիմնոլիսենէ գաւառներու մէջէն դէպ ի Անկիւրիա: Օգոստ. 14ին թողուցինք Վէզիր-Քէօփրիւն եւ վերադարձանք Խաւօս, ուսկից դէպ ի հարաւ դարձանք եւ հասանք Մարշառն՝ հետեւելով նախ Ամասիա տանող ճամբուն մէկ ժամ եւ երեք քառորդ տեւողութեամբ, եւ յետոյ խոտորելով Սուլու-Օվայի հիւսիսային եզերաց երկայնութեամբ, որ հին Քիլիկիանէ է, անհետաքրքրական անձառ դաշտ մը՝ մեծաւ մասամբ ցորենաբեր: Տեղացւոց ճամբու օրը հաշուելու ոճին համեմատ՝

¹ Տես վերը՝ § 8:

² JHS. XIX (1899), p. 104, ուղղուած՝ p. 318 — CIL, Suppl. 14184 50.

³ Թ. 425 ունի նիւնիւն (praeses) անունը, բայց Դեկոսի կապագոփկեան մղոնաքարը (CIL, III, 12201) նուիրակի մ'անուն չունի: Որեւէ Կուսակալի մ'անուն արձանագրուած չունի՝ Կարակալայի մղոնաքարը. (212—213 Յ. Ք. տարիէն) յԱնկիւրիա (CIL, III, 314), կամ Աւերեղիանու մղոնաքարերը (miliaria)՝ CIL, Suppl. III, 6902 (Անկիւրիոյ հարաւ - արեւմուտքը), 14184 49 (Անկիւրիոյ հարաւակողմը). — անուն չկրելու ուրիշ օրինակներ են նաեւ Թ. 14184 51 (Դիոկղետիանոս եւ Մաքսիմիանոս.) 14184 53 (Կոստանդիանոս եւ Լիկիանոս) եւն:

Խաւսայէն հինգ ժամու ճամբայ է. մենք չորս ժամէն քիչ մ'աւելի ճամբորդեցինք, եւ անուա- շափին շափումը կը ցուցնէ 15 անգղ. մղոն հե- ուաւորութիւն մը: Մարդուան բարգաւաճ քա- ղաք մըն է եւ հաճոյատեսիլ դիրք մ'ունի պար- տէզներու եւ այգիներու գօտւոյն մ'ետեւը՝ Թաւ- շան-Տաղի վերջին գոգուածին մէջ: Այս օրս Է-յ-մ-մի մը նիստ է, եւ երբեմն կը նոյնացուէր Փաղիմոն-Նէապոլիս քաղաքին հետ¹, Ստրաբոնի պայծառ եւ ճշգրիտ նկարագրութեան (էջ 560) ալ հակառակ: Կ'երեւայ թէ քաղաքը զուտ տաճ- կական հիմնարկութիւն մ'ըլլայ. գոնէ հետք մը չկայ հոս որեւէ հին բնակութեան մը, եւ իրօք ալ շատ քիչ հին քարեր կրնան տեսնուիլ ամբողջ Մարդուանի մէջ: Ամերիկեան վարժարանի (Ameri- can College) մէջ մէկուկէս օր հաճոյական դադար մ'ընելէն ետքը, ուր ամենասիրալիւր ասպնջակա- նութիւն գտանք, բաժնուեցայ ուղեկիցներէս՝ որոնք որոշեցին Անկիւրիա վերադառնալ Էյիւկի եւ Պտերիայի ճամբով. իսկ ես ընտրեցի Հաջի- քէօյ, Օսմանջիկ եւ Տոսիա տեղերէ անցնող ճամ- բան, ո՛չ թէ որեւէ ծանրակշիռ հետազօտութեան մը ձեռնարկելու դիտաւորութեամբ (որովհետեւ ժամանակս քիչ էր եւ կորովս սպառած), այլ միայն մղուած բաղձանքէս՝ նոր աշխարհամասէ մ'անցնե- լու եւ ի մասնաւորի Օսմանջիկ այցելելու: Գէպ ի Աղիւս տանող արդի ճամբան կը կտրէ ցած հանդի- պագօտիները՝ որոնք Թաւշան-Տաղէ վար կ'իջնան դէպ ի Սուլու-Օվա, եւ 2¹/₄ ժամէն կը հասնի Հ-Վ-ի-էօյի փոքրիկ դաշտին եղերքը, ուր կը մտնէ այն գաւառն՝ որ հին ժամանակները Գի-կ-դէնէ

¹ Այսպէս՝ Հ. Կիպերտ եւ Վ. Մ. Ռամսէյ (Պամ. Աշխ. էջ 440, 446, 447. հմմտ. Handbook of Asia Minor, p. 13): Այսպէս նշանակուած է տակաւին նաեւ Ռ. Կիպեր- տի նոր քարտէսին վրայ:

(Diacopene) կը կոչուէր¹: Հոս շեղելով խճուղիէն՝ ձիավարեցի դէպ ի Գլ-Ռ-շ գիւղը, որ ժամ մը եւ քսան վայրկեան հեռու է՝ դաշտին հարաւակողման բլուրներուն ոտքը, ոչ շատ հեռու Արծաթահանքերէն (Գլ-Ռ-շ-Մ-Պէն), որոնք այժմ չեն բանեցուիր, բայց կ'ըսուի թէ հարուստ հանք մ'ըլլան²: Հոս օրինակեցի հինգ արձանագրութիւններ (Թ. 272 եւն), եւ բլրակողմն եղող վանք մ'այցելելէն ետքը՝ հիւսիս-արեւելեան ուղղութեամբ ուղեւորեցայ դէպ ի Հաջի-քէօյ, որ յիսուն վայրկեան հեռու է Գիւմիւշէ եւ 11¹/₂ մղոն Մարզուանէն (անուաշափիս ցուցման համեմատ): Քաղաքս ք-յ-ք-մի մը նիստն է եւ համանուն տեղերէն կը զանազանուի յորջորջանօքս՝ Գլ-Ռ-շ-Հ-Վէ-էօյ³: Քաղաքին մէջ հակիրճ խուզարկութիւն մ'ընելով հետաքրքրող բան մը չգտայ, եւ շարունակեցի ճամբաս դէպ ի արեւմուտք: Ժամէ մը հասանք դաշտին եզերքը, եւ կտրելով ցած լեանագիծ մը՝ իջանք Գեւորէնտ-Չայի հովիտը, որուն զառիվայր գարերը մէջընդմէջ պիսակուած ծածկուած են գիւղերով: Երբ մօտեցանք Գեւորէնտ-էօյ (Devrent)՝ Հաջի-քէօյէ 6¹/₄ մղոն հեռու, հովիտն սկսաւ նեղնալ եւ կիրճ մ'ըլլալ, որ դարձեալ կը բացուի Հ-Վէ-Հ-մ-ն գիւղին քով՝ մէկու կէս ժամ աւելի անդին: Ասկէ ետքը ճամբան իբր երեք մղոն տեղ կը հետեւի գետին ձախ ափին, յետոյ գետը կտրելով աջ կ'անցնի, եւ անմիջապէս գետէն կը հեռանայ աւազուտ բլուրներու վրայէն երթալով

¹ Ստրաբոն, էջ 561:

² Գիւմիւշի արեւմուտքն անմիջապէս կից է Կարաքէօյ գիւղը. երկուքը մէկտեղ կ'ըսուի թէ իբր 1000 տուն են: Հաջի-քէօյէն՝ Գիւմիւշ ունի ուղղութիւնս 2150. Գարաքէօյ 2220:

³ Ճիշդ ինչպէս որ Չորուսի եւ Ամասիոյ մէջտեղ եղած Հաջի-քէօյը կ'որոշուի Ա-դ-դ-Հաջի-քէօյ տիտղոսով (տես վերը § 4):

Օսմանլիկի բարեբեր գաշտը: Այս քաղաքը կը հասնինք երկուքուկէս ժամէն Հաջի-Հասանէն սկսեալ, ամբողջ հեռաւորութիւնն Հաջի-քէոյէն մինչեւ հոս ըլլալով $21\frac{3}{4}$ անգղ. մղոն:

Օսմանլիկ¹ գայմազամի մը նիստն է, բայց փոքրիկ տեղ մըն է որ 4000ի մօտ բնակիչ ունի: Թաղ մը («Նաւավարաց, կոչուած՝ Gemidji Mahallési) Աղիւս գետին ձախ ափը շինուած է, բայց քաղաքին հնագոյն եւ գլխաւոր մասը կ'իյնայ աջ եզերքը՝ սեպաբերձ ժայռալեւան մ'ոտքը՝ որ գաշտէն յանկարծ 400 ոտք վեր կը բարձրանայ: Այս քարաժայռը հին ատենները ամուր բերդի մը փոխուած էր, որմէ հիմայ քիչ մնացորդներ կան՝ ի բաց առեալ պարսպի կտոր մը հաստատուն դռնանցքով՝ երկու կողմը աշտարակներով, ժայռաբլրոյն ստորտը գետոյն դարձած կողմը, եւ ուրիշ պարիսպ մ'ալ եռանկիւնի յենարան-որմերովն՝ բլրոյն ամէնէն աւելի մատչելի կողմերէն մին ամբացընելու համար: Հաւանօրէն այս աւերակները հին տաճկական վերանորոգութիւններ էին Բիւզանդական ամբուլթեանց: Կ'երեւայ թէ կէս դար յառաջ այս աւերակներն շատ աւելի լաւ վիճակի մէջ էին. որովհետեւ հին ուղեւորներ՝ ի մասնաւորի Ainsworth՝ կը նկարագրեն երկու տարբեր գղեակներ՝ ոլորապտոյտ փոսեր եւ նկուղներ (ներքնատներ) ունեցող պատնէշներով, որոնք մանուածապատ ուղղութեամբ կ'երկարէին քարաժայռին կոներուն զահաւէժ կողերուն երկայնութեամբը. եւ թէ այս գղեակներէն մին շինած էր սուլթան

¹ Դորագոյն անգլեկագրութիւնքն են՝ Flottwell, Aus dem Stromgebiet des Qyzyl Irmak (ի Petermann's Mitth., Ergänzungsheft Nr. 114. տարին 1895) եւ G. Maercker, Das Stromgebiet des unteren Kyzyl Irmak, ի Z. d. Ges. f. Erdkunde zu Berlin, XXXIV (1899), p. 374 ff.

Բայազիտ՝ կաստամունիի իշխանը շափի մէջ պահելու համար¹: Ժայռաբլրին արեւելեան կողմը կան վիմափոր քանի մը գերեզմաններ՝ զորոնք ես չտեսայ²: Քաղաքին մէջ միայն երեք արձանագրութիւններ գտայ (թ. 180—182). բայց բազմաթիւ են հին մնացորդները, մեծաւ մասամբ շինուածաքարեր, սիւնաձոյթներ, եւ քարատապաններ (որոնց մէկ մասը պեղուած երեւան հանուած է գետին արեւմտեան ափէն):

Հինուց ի վեր այս քաղաքը նոյնացուած է Պիմոլիս (Pimolisa) քաղաքին հետ, կարծեմ նախ Հ. Կիպերտի կողմանէ առաջարկուած, եւ կրնայ որոշակի իբր ստոյգ համարուիլ: Ստրաբոնի պայծառ տեղեկութիւնը (էջ 561, 562)³ միացած նաեւ Կեդրենոսի անսովոր յարմար նկարագրութեան հետ՝ — «Պեմոլիսա բերդ», (եւ այս Պեմոլիսան քարաբերդ մըն է որ Աղիւս գետին ափին վրայ կ'իյնայ³), — հազիւ թէ տարակոյսի տեղի թողուն քաղաքին գրեց նկատմամբ: Պիմոլիսա (Πιμόλισα) Միհրդատի Պոնտական թագաւորութեան յառաջապահակ տեղերէն մին էր

¹ Ainsworth, Travels and Researches (1842), p. 97 ff.; Ritter, Erdkunde von Asien, IX, p. 399 ff. Ainsworthի քաղաքին եւ գղեկին մասին տուած ստուերագիծը որեւէ կասկ մը չի ցուցըներ իրականութեան հետ. եւ թերեւս իբր նկարագրութիւնն ալ լիովին ճշգրիտ չըլլայ: Tavernier (I, p. 9, հրտ. 1679) կ'ըսէ միայն թէ Ozeman փորթիկ քաղաք մըն է բլրոյ մը ստորոտը՝ որուն վրայ ամուր բերդ մը կայ:

² Ainsworth, անգ. von Flottwell, անգ. էջ 12:

³ Էջ 626 հրտ. Բոն քաղաքի. զոր յառաջ բերած է Ռոմէ-էջ Պամ. Ալիս. էջ 328. յղն՝ τὸ φρούριον τὴν Πημόλισσαν (πέτρα δὲ ἡ Πημόλισσα παρὰ τὸ χεῖλος κειμένη τοῦ Ἄλυος ποταμοῦ).

եւ մին էր քաղաքաց խմբի մը (որուն մէջն են Ղաւողիկէա, Գաղիուրա, Կաբիրա, եւն), որոնք «իրաւունք ստացած էին պղնձագրամներ կտրել միաձեւ տիպերով, յայտնապէս նոյն ինքն Միհրազատայ հրամանաւ, բայց ամէն դիպաց մէջ քաղաքին անունն ալ կրելով»¹։ Գրամահատութիւնը կը գաղբի Միհրազատեան շրջանէն ետքը։ Ստրաբոնի օրով Պիմոլիսա աւերակ էր՝ ինչպէս նաեւ Գաղիուրա. (էջ 562)։ Սակայն նոյնը վերստին կ'երեւայ իբր ԺԱ դարուն՝ եկեղեցական ցանկերուն մէջ, ուր զինքը միացած կը գտնենք Իրորայի հետ՝ մէկ եպիսկոպոսի մ'իրաւասութեան ներքեւ։² Տաճկական շրջանին կրկին կը սկսի բարձրանալ։ Երբ Օսմանեան զօրութիւնը աստիճանաբար՝ բայց կամաց կամաց սկսաւ տարածուիլ հիւսիս-արեւելեան Փոքրուն Ասիոյ վրայ, Օսմանջիկ անհրաժեշտաբար պէտք էր որ մեծ կարեւորութիւն ունեցող դիրք մ'ըլլար. եւ այս իրողութեան իրական ապացոյցը տակաւին կեցած է՝ գեղեցիկ կամուրջ մը 15 կամարով, 228 մետր երկայն, որուն վրայէն գետէն կ'անցնի ճամբան. (Պտկ.) Այս կամուրջը շինած է հաւանօրէն Բայազիտ Բ սուլթանը³ եւ աստիճանանիշ մըն է Փոքրուն Ասիոյ

1 W. Wroth, Brit. Mus. Catalogue of Pontus etc. p. XIII.

2 Տես Notitia III, ed. Parthey-Pinder.

3 Հմմտ. Ռիտթեր, անգ. էջ 399։ Օսմանջիկի քաղաքի մը որ շատ հաճելի եւ մտացի անձ մըն է, յայտնեց ինձի թէ այն արձանագրութիւնն՝ որ կանգնուած է քաղաքայտին դիմացը՝ կամրջագլխին մօտ՝ կը յիշատակէ կամրջին շինութիւնը եւ անոր շինող կ'անուանէ Բայազիտ սուլթանը. եւ իւր տուած թուականը կը ցուցնէ թէ յիշեալ սուլթանն է Բայազիտ Բ, ո՛չ թէ Բայազիտ Ա՝ ինչպէս երբեմն կը նշանակուի։ Գ ժրախտաբար մտքէս շանցաւ այս արձանագրութեան մէկ նմանապատճենը հանել. բայց

վրայ Օսմանեան տշխարհակալութեան հաստատման: Ժէ դարուն քաղաքը տակաւին իջեւանատեղի մըն էր առեւտրական այն մեծ պողոտային, որ Ա. Պոլսէն Վարին ու Պարսկաստան կ'երթար, որ ճամբան սակայն այսօր ինկած է¹:

[Ուղեգրութեանս Ա Մասին վերջը դրուած են հետապօտուած երկրամասերուն քարտէսները, ուր ամփոփուած են հետախուզութեանց արդիւնքները, կարմրանիչ նշանակելով ուղեւորաց բռնած ճամբան, հնութեան տեղերը եւ յատկապէս նոյնացուած հին բնակավայրները: Տախտակներն կը պարունակեն այս բաժինները՝ Ա. Չորումի հարաւային եւ արեւելեան կողմերը (Չորում-Եւքայիտա-Ետոնիա եւ Չորում-Վարիսա) — Բ. Հաջի-քէօյէ Ամասիա. — Գ. Միհրդատակերտէ (Միթրիդատիոն) մինչեւ Ջելա եւ Սեբաստոպոլիս (Միհրդատակերտ, Եւագինա, Վերինոպոլիս մինչեւ Սերմուսա եւ Սեբաստոպոլիս, եւ Աէօհնէ-Պլեւրամիս-Ջելա.) — Դ. Սեբաստոպոլսէն Վերիսա եւ Սիւրա. — Ե. Նէքսարէ (Նէոկեսարիա) մինչեւ Աոմանա եւ Գազիմոն (Թոխաթ.) — Ջ. Գազիմոնիտիս գաւառ մինչեւ Գազիւրա կամ Իբորա (Վաղ-Օվա՝ Թոխաթէ մինչեւ Թուրխալ.) — Ի. Նէոկեսարիայէ

ամեն հաւանականութիւնք վերջին թուականին նպաստուէր են:

1 Տավերնիէ՝ անդ: Ուղեւորը կը սբանչանար կամըրջին վրայ, եւ կը գրէ. Guzelarmak (—յողէ— գր—) լայն ու խորունկ գետ: ամբողջ քաղաքէն կ'անցնի. եւ գետի վրայէն կ'անցնինք ամենագեղեցիկ կամրջէ մը զոր կարելի է տեսնել: Տասնեւհինգ մեծ կամարներ ունի՝ ամէնքն ալ կոփածոյ քարերով, եւ շինուածք մըն է՝ որ իւր ձեռնարկոյին խիզախութիւնը կը ցուցնէ:

մինչեւ Եւպատորիա եւ Պիդա. — Ը. Սունիսայէ
 Խաւսա (Լաւոգիկէ, եւն.) — Ը. Խաւսայէ մինչեւ
 Աղիւս գետ (Թերմա, Սագիւղիոն, Փազիմոն կամ
 Նէսկիլաւգիոպոլիս-Անդրապա:) — Քարտէսները
 բնականապէս կը պարունակեն արգի բնակավայր-
 ներն ալ, գետոց եւ լեռանց ուղղութիւնքն, եւ
 աւելի ճշգրտուած են քան ծանօթ միւս քար-
 տէսները: — Ծ. Թ.:]



Մ Ա Ս Ն Բ .

ՈՒՂԵԻՈՐՈՒԹԻԻՆՆ
ՀՆԱԽՈՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԵԱՆ

Ի ՊՈՆՏՈՍ ԵՒ Ի ՓՈՔՐ-ՀԱՅՍ

Փ Ր . Ե Ի Ե Ի Գ . Կ Ի Ի Մ Ո Ն Ե Ղ Ե Ա Ր Ց

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ
ՀՆԱԽՕՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԵԱՆ
Ի ՊՈՆՏՈՍ ԵՒ Ի ՓՈՔՐ-ՀԱՅՍ

Ա. Ամիսու:

§ 1. *Մատենի:* — Սամսոն ցամաք ելանք 1900 ապրիլ 4 շորեքշարթի օրը՝ այգուն: Երեք-մասնեայ՝ յոյն, տաճիկ եւ հայ՝ քաղաքը մահկա-ձեւ տարածուած է բլուրներու վրայ՝ սրոնք լայ-նօրէն բաց նաւակայքը կը պատեն: Իւր շինուածք-ները՝ սրոնք կրով բռնուած են եւ լարաշափ գծուած փողոցներուն երկայնքը կը շարուին, որեւէ բան մը չունին հնախօսի մը հետաքրքրութիւնը գրաւող: Ամէնքն ալ նոր են. թի գարուն՝ վաճառականու-թեան արագ աճմամբը նաւահանգիստս իւր հին բարդաւածու մը վերստացած է¹. եւ այս պատճա-ռաւ ալ մեզի ամենապատեհ տեղն երեւցած էր՝ մեր ուղեւորութեան պատրաստութիւնները տես-նելու համար: Առեւտրական այս մեծ հրապարակին մէջ Բեզգիոյ դերհիւպատտի մը ներկայութիւնը մեզի համար մեծ օժանդակութիւն մ'եղաւ: Պր. Ա. քիլիէս Վիպրիտաիս, թէպէտեւ արդէն հիւան-դապին՝ սրով քիչ մ'եւարն ալ պիտի վախճանէր:

¹ Հմեռ. Cuinet, La Turquie d'Asie, I, p. 87 ff.

ամենայն կամակար եռանդեամբ փութաց ձեռնառու բլլալու մեղի, եւ իւր միջամտութեամբ հարթեց ամէն դժուարութիւնները՝ որոնք կրնային ծագիլ մարդկան հետ պայմանաւորուելու եւ ձիեր գնելու ատեն, որոնցմով պիտի կազմուէր մեր կարուանը: Պր. Whittall՝ ծխախոտի Աւարչութեան տեսուչը (շաշէր) պատուասիրաբար յանձնարարականներ տուաւ մեղի՝ ներքնաշխարհին մէջ գտնուող իւր գործակալաց ուղղուած, որով անպատեւի գիւրտութիւններ ունեցանք, գլխաւոր քաղաքներուն մէջ ազդեցիկ պաշտպանութիւն մը եւ միշտ հիւրամեծար սթեւան մ՝ ապահովելով:

Ամասնի արդի քաղաքը ճիշդ այն տեղը չի գրաւեր՝ ուր Միլեասացիք հիմնած էին իրենց քաղաքն այս խոր ծովախորշին մէջ: Ամիսսս կանգնած էր բարձունքի մը վրայ աւելի դէպի հիւսիսակողմը, նաւակայքը պաշտպանող հրուանդանին ծայրը: Հիւսիսէն ու արեւելքէն՝ ծովապատ, եւ արեւմուտքէն Տուրակուրդ-Իրմակի գարափնեայ հովան պատուած՝ այս լեռնադաշտակը, որ ծայրը դէպի ներս գարձած տանձի մը ձեւին նմանութիւն ունի, ապագագիտական առաջնակարգ գիւրք մը կը կազմէր (Քարա. Ժ): Աերնարերդն անտարակոյս դրուած էր ամէնէն աւելի անձուկ սեղմուած՝ բայց նաեւ ամէնէն բարձր (159 մետր) մասը: Չարմանալի չէ որ այսպիսի ահեղ գիւրք մ՝ ունեցող այս մեծ բերդաքաղաքն եւ առեւտրական հրապարակը կարծած էր թէ կրնար Աուկուզդոսի մը բանակաց գիմադրուել:

Հեռուէն կ'իշխէ եւ կը հսկէ ծովեզերքին վրայ՝ որ մէկ կողմանէ դէպի Մինոս կ'երթայ ու կ'աներեւութանայ աչքէ, եւ միւս կողմանէ դէպի Աերասոն: Ծովափէն վեր շարք մ'արուեստական բլուրներ այնպէս պիտի երեւային թէ գիտարաններ կամ նաւային դամբանիչք բլլան, եթէ չգիտնայինք թէ հիները յաճախ բարձունքներ կ'ընարէին իրենց մեռելները թաղելու համար կարկա-

աակերաներու (tumulus) ներքեւ¹։ Արեւմտակողմը տակաւին կը նշմարուին հետքեր շրջապարսպին՝ որ լեռնադաշտին եզերքը կը շրջապատէր. բայց այս պատերուն անյարգ շինութիւնը, որոնց համար գործածուած են նաեւ կարկաստանաց ատպղձներ, ամենեւին շինքերը որ միջինդարէն աւելի հին համարինք։ Բլրոյն ստորաք, արդի փարոսին եւ Քաֆրա ասնող ճամբուն մէջտեղը՝ ճախճախուտ գող մը հին նաւահանգստին տեղը կը ցուցընէ։ Ծովափին հանդէպ ուղղաձիգ ուղղութեամբ դէպ ի ծով կ'երկարի նաեւ այսօր ամբարտակ մը, որ այժմ ջրասոյղ է։

Հին Ամիսոսի կարեւորութիւնը կ'ապացուցանեն բազմաթիւ վիմափոր դամբանները՝ որ փորուած են լեռան կողերուն մէջ եւ որոնք ծովեզրքի այլեւայլ մասերուն հեռուէն հսկայ մեղրախորիստներու երեւոյթ մը կու տան։ Ասոնք մերթ փորուած են բլուրներուն զառիթափ կողերուն վրայ, ուր կը բացուի իրենց այժմ լայնարաց դուռը. մերթ սարահարթէն վար կ'իջեցընէ սանդուղ մը դէպ ի գեանափորը։ Գետինը կազմուած ըլլալով կայծքարային (գալլախաղային) կոպճուտէ՝ դիւրագործ էր փորողին (fossor) աշխատութեան համար։ Այս դամբարաններէն ոմանք, որոնք բազմաթիւ իրարու յարակից որահներէ կամ բազմաթիւ վրայէ վրայ յարկերէ կը բաղկանան, նշանաւոր տարածութիւն-

¹ Հաւանական է — միայն պեղումները կրնան ստույգ ապացոյց մը տալ. — թէ Ամիսոսի հողակողաները գերեզմաններ ըլլան։ Թաղման այս սճը՝ որ Թրակացոյց քով սովորականն էր, գործածութեան մէջ էր նաեւ Փոսիգացոյց քով՝ որոնք նոյն ցեղէն էին. եւ գերեզմանական այս կարկասներէն ճանչցուած է թէ գաստը շինութեւն չէ կապողովկեան հալ-բլուրներու (tell, արաբ. ԹԵԼԼ) հետ որոնք կը գտնուին մինչեւ Ամիսոսի հովիտը Պափղագոնիոյ մէջ։ Հմեմ. Leonhard, Paphlagonische Denkmäler Breslau 1902, p. 2. — Սակայն տես վարը § 3, էջ 144։

ներ ունին: Ասոնց միոյն յատակադիժը կը գնենք (Պտկ.), որ աւելի պարզ եւ աւելի սովորական տեսակի մը կը պատկանի: Գամբանանձաւը (2.90×3.50 m) երկու կողմն՝ աջ ու ձախ՝ երկու խորշակերաններ ունի (1.95×1.20 m)՝ որոնք անտարակոյս սահմանուած էին շիրմատապաններ (sarcophage քարատապան) ընդունելու. կանակի պատին մէջ խորունկ փորուած նեղ գարանախորշերուն (loculus, մեծութիւն 2.10×1 m, բարձր՝ 0.90 m) մէջն ալ կրնային երկու դադաղներ սահեցուիլ մուծուիլ:

Այս վիմափոր գերեզմաններն՝ որոնք Պոնտական աշխարհին ամէն կողմ՝ առատութեամբ կը հանդիպին, եւ կարկառակերտները (tumulus)՝ որոնք բացառիկ են, նոյն իսկ իրենց պահանջած աշխատութեան պատճառաւ ի հարկէ վերապահուած էին միայն բարեկեցիկ անձանց թաղման: Ամիսոսի գերեզմանատանց մէջ շատ յաճախ գտնուած թաղման երրորդ մէկ կերպը կ'երեւայ թէ ժողովրդական խաւերունն էր: Գերեզմանը կը շինուի պարզապէս հարթ մեծ կղմինտրներով՝ 30×40 cm մեծութեամբ: Ամախքին ստրին կողմը կանոնաւորապէս կը գտնուին սովորական խեցեղէն տմաններ, յաճախ նաեւ ապակեղէններ, եւ գրեթէ միշտ՝ քաղաքին դրամներ: Այն սակաւաթիւ գոհարեղէններն՝ որ այս փոսերուն մէջ գրուած դիակներն երբեմն կը զարդարեն, ամէնէն աւելի հնակրկիտներուն ընչաքաղց տենջանքը կը գրգռեն¹:

Այլեւայլ ընդարձակ գեանափորները նախնարար Ամիսոսի քաղաքացւոց դիակները պարու-

¹ Այս անդեկութիւնները պարտական ենք Պր. Papageorgiadis-ի, որ մեր առաջնորդն եղաւ ի Աարա-Սամսոն: Այս աւերակներուն եւ յատկապէս Ամիսոսի դամբաններուն մասին երկու յօդուած հրատարակած է ի թերթին Κωνσταντινούπολις 1899, մայիս 13 եւ 15:

նակեկէն ետքը՝ յետոյ միջինդարու մէջ փոխուած եղած են մատուռներ. այսպէս՝ սարահարթին հարաւակողմն այն կամարայարկ սրահը՝ որ նուիրուած է Ա. Պետրոսի, եւ ուր՝ ինչպէս մեզի բոյն՝ նաեւ այսօր հանդիսական թափօր մը կ'երթայ Յունիս 30ին. որ սակայն մեր այցելութեան ատեն դժբախտաբար ողորուած էր. գարնանային անձրեւներէն: Արեւմտեան զառիվայրին վրայ ուրիշ վիմափօր մը նաեւ այսօր «Մենաստան», անունը կը կրէ (Monastiri) եւ երբեմն կրօնաւորաց առանձնարան եղած էր: Վիտենք նաեւ որ Ս. Յովհաննու Մկրտչի նուիրուած էր, եւ թէ երբեմն՝ Յունիս 24ին՝ մեծ նաւակառիք մը կը տօնախմբուէր հոն: Տօնախմբութիւնը հիմայ խափանուած է, եւ վանքին կալուածքներն անցած են Առաքելոյի յոյն հասարակութեան: Մնացածն ալ շատ խաթարած է. գետնափոր քառանկ սրահի մը մէջ քանի մը հետքեր միայն կան որմնանկարներու. անդին՝ երեք խցիկներ, որոնք նախնաբար դասրաններ էին: Ամբողջական խորութիւնն ութ մետրը չ'անցնիր: Բայց այս գետնափորին դիրքը, որուն մուտքը սեպաբերձ ժայռի մը մէջ կը բացուէր՝ հոյտէն վեր շատ մեծ բարձրութեամբ, այնչափ անմատչելի եւ այնչափ գեղանկարչական էր՝ որչափ կրնային միջինդարու Յոյները բազձալ մենարան մը հիմնելու համար:

Ընդարձակ սարահարթին վրայ, որուն մէկ անկիւնը միայն բռնած է այսօր Աւլ-ՆՋէ խեղճ գիւղը, որեւէ աւերակ մը հողէն դուրս կանգնած չէ: Միայն սրմեր՝ որոնք տեղ տեղ մխահարթ կ'երեւան, եւ կզմնարներու եւ քարերու բեկորք՝ որ ամէն քայլափոխին ստահար կ'ըլլան, հնադոյն շե-

1 Պատգազէորդիատիս՝ անդ: — Բմիսոսի ուրիշ մէկ վանքը՝ ղή μονή τῆς Γέννας (Մենաստան Ծննդեան)՝ կը յիշատակուի ՃՅ դարուն Յովհ. Ե. քայտապոյ կողմանէ Գորոթեոսի կրտսերի վարուց մէջ (հրատ. de Lagarde, p. 210):

նութեանց գոյութեան կը վկայեն: Երբեմն՝ կիսով չափ փրատակներով լեցուած ջրամբարներ՝ կը ցուցրնեն բնակարաններու տեղերը: Այս բնդունարաններէն ամէնէն նշանաւորն է կամարայարկ բնդարձակ սրահ մը՝ իբր 12 մետր երկայն կողով. շորս մարմարեայ սիւներն՝ որ կամար մը կը բռնեն, բնկղմած են տակաւին մօրացած ջրոյ մէջ: Արմերը հիւսուած են փոփոխակի կարգ մը հարթ լայն թրձիւն աղիւսներով եւ կարգ մը կրաղիւսի (Կե-Քե) խաւով: Հաւանականօրէն քրիստոնէական ժամանակի շինուածք մըն է, ինչպէս են Ա. Պոլսոյ հռչակաւոր ջրամբարները:

Ամսոսի աւերակաց գաղտագոյի խուզարկութիւնը միշտ շահաւէտ եղած է եւ է ցայսօր: Քսանէ աւելի արձանագրութիւններ՝ Սամսոն բերուած՝ օրինակուած են մեր նախորդներէն, մեր աշխատակիցներէն եւ մեր ձեռօք (Թ. 1 եւն.) բայց եթէ բնակչաց խօսքին հաւատանք՝ շատ աւելի բազմաթիւ ուրիշներ ալ փճացուած են: Այս բնադիրներն՝ քաղաքին կենաց պէս՝ դարերու երկար շրջան մը կ'ընդգրկեն: Վ. դարէն Ն. Ք. եղած տապանագիր մը կ'երեւայ թէ արձանագրական ամենահին յիշատակարանն ըլլայ որ Պանտոսի մէջ գտնուած է (Թ. 1.) իսկ ամենակրտսերին թուականն է 1086 Յ. Ք. տարին (Թ. 12): Այս գերեզմանաքարերուն մէկ մասը դարգարուած է մեռելոց պատկերներով, ինչպէս այն քարը՝ ուր կը տեսնենք սոցայ մը նստած որ գնդակ կը խաղայ (Թ. 4.) կամ այն բարձր կոթողաքարը՝ որ կը կրէ ճաղատ հռետարի կամ փիլիսոփայի մը պատկերն, որ ինք զինքը ներկայացրնել տուած է հոն՝ ձեռք գալար մը բռնած (տես Պակ.):

Սակայն գեղարուեստական շատ աւելի թանկագին գործեր ալ բնծայած է այս հողը՝ որ արգաւանդ է հնութիւններով: Ար յիշեմ պղնձեայ այն բմբջամարտիկն՝ որ նորերս Ա. Պոլսոյ թանգա-

բանք մտած¹ է. պերսեւսի կիսանդրին Warocquéի
հաւաքման մէջ². բարձրաբանդակ պատկերներով
գեղեցիկ շքադրամները (médaillon)՝ որոնք 1896ին
Բրիտ. Թանգարանի կաւկուեցան³, Սամսոն արտա-
ծութեան մեծ նաւահանգիստ մըն է մարմններու,
պղնձէից եւ մանուսնդ հին դոհարեղինաց, որոնց
ճագումն ամենայն խնամքով կը քօղարկուի:

Այս ամէն գիւտերը կը վկայեն միանգամայն
թէ հին Ամիսսացւոց գեղարուեստական ճաշակին
եւ թէ իրենց հարստութեան մասին, որ կը պահ-
պանուէր ու կը վերանորոգուէր բանուկ ու ժիր
վաճառականութեամբ մը՝ հակառակ պատահած
ամէն շարաշուք աղէտներուն⁴: Քաղաքին վաճա-
ռականութեան կարեւորութիւնը կ'ապացուցանեն
իւր դրամներուն անսահման քանակութիւնը՝ որոնք
երկրին ամէն կողմ կը գտնուին. եւ նոյն իսկ իւր
դրամահատութեանց տեսակներուն թիւն ու պէս-
պիսութիւնը⁵: Ինչպէս ներկայիս Սամսոն՝ նոյնպէս
հին քաղաքն ալ շատ աւելի իւր աշխարհագրական
դրից պարտական էր իւր բարգաւաճանքը, քան թէ
իւր նաւակայրին ապահովութեան՝ որ բաց է հիւ-
սիսային ու արեւելեան հովերուն առջեւ: Իր սահ-

¹ Rev. archéol. 1899, II, p. 209.

² Rev. archéol. 1905, I, p. 180 ff.

³ Collection of Jewels etc. bequeathed by
Baron Ferd. Rothschild, 1899, Nr. 1, 2. — Բրիտ-
տէի թանգարանն ալ մտերս գնեց շարք մը խեցեղէն
(թերձահողէ) զարդագործեր՝ որոնք Ամիսսի մէկ դամբա-
նէն են:

⁴ Կիկերոն «Ասան զորավարութեան մոսուկէի» ճա-
սին մէջ (Cicero, De imper. Pompei, § 21) կ'ըսէ «Սի-
նոպ եւ Ամիսսս ամէն իրօք լցուած եւ զարդարուած»
(Sinopem adque Amisum omnibus rebus refertas atque
ornatas):

⁵ Հմեմ. Babelon et Reinaeh, Recueil génér.
des mon. d'Asie Mineure I, p. 44 ff.

մանին մէջ էր Թեմիսկիրայ (Themiscyra, այժմ՝ Չարշամբա) գաշար, որուն արգաւանդութիւնը միշտ արաակարգի էր¹. բայց մանաւանդ նստած էր ծովեզերքին խորունկ աղեղնաձեւ մէկ գոգամին մէջ², երկու մեծ գետերուն՝ Աղիւսի եւ Հիրիկի՝ հովիտներուն մէջտեղ, եւ Հոռոմեական խճուղիները³ զինքը հազորդակցութեան մէջ կը դնէին Ամասիոյ եւ Պոնտոսի հետ մէկ կողմանէ, եւ Տաւրոսի ու Գաղատիոյ հետ միւս կողմանէ, եւ անկէ անդին ալ՝ Կապպադովկիոյ հետ: Այսօր ալ այս նաւահանգստին ենթակայ աշխարհամասը կը տարածուի մինչեւ Եոզղատ, Կեսարիա եւ Սերաստիա:

§ 2. Բաֆրա: — Այրիւ 8էն մինչեւ 10 արշաւանք մ'ըրինք դէպի Բաֆրա (Bâfra)՝ խոշոր աւան մը Կրզըլ-Իրմակի (Աղիւսի) վրայ՝ անոր գետաբերանէն ոչ շատ հեռու: Ճամբան⁴ նախ Կարա-Սամսոնի լեռնազանգուածին բոլորը կը գառնայ, եւ յետոյ ծովափին երկայնութեամբ կ'երթայ նեղ երկրաշերտի մը վրայէն՝ բլուրներուն եւ ծոփուն մէջտեղէն, ուր կը թափին բարձունքներիէն իջնող քանի մը վտակներ: Հարաւախողման բարձանց վրայ հեռուէն կը նշմարուին գիւղեր՝ ծածկուած բուսականութեամբ եւ ծառատաններով:

¹ Ստրոբոն, ԺԲ, 3, 14: Հմմտ. Cuinet, Turquie d'Asie I, p. 107.

² Ստրոբոն, Բ, 5, 24, էջ 126 c. Պղինիոս, Բն. Պոմ. 2 (§ 7)՝ «Ամիսոս եւ ծովագոյն այնչափ խոր եւ քաշուած՝ որ Ասիան դրեթէ կղզի կ'ընէ» (Amisum et sinus tanti recessus ut Asiam paene insula faciat).

³ Ամիսոսէ Զելա տանող ճամբուն Միհրդատի Ժամանակէն կարեւորութեան եւ Ամիսոսի՝ «Պոնտոսի առեւտրական մայրաքաղաքին»՝ գրից մասին տես Munroff գիտողութիւնները՝ «Roads in Pontus» (ի Journ. Hell. Stud. XXI) 1901, p. 53.

⁴ Հ-Պլէրշն (Researches I, p. 294 ff.) այս ճամբան բրած է եւ իւր սովորական ճշգրտութեամբ կը նկարագրէ:

բայց հոս ճամբուն վրայ որեւէ բնակութիւն չկայ՝ բայց եթէ խեղճ հանգոյց-կայան մը (օթեւան) Սամսոնէն շորս ժամ հեռու: Միայն Թիւրքմէններ՝ որ լեռներէն իջած էին իրենց հօտերով մէկտեղ, ձմեռած էին ծովափին վրայ իրենց սեւ վրաններուն տակ: Բայց այս ծովեզրն երբեմն բնակելի էր: Առիանոս կը յիշէ հան զի-չեր (Vici) որ Ամիսոս քաղաքէն կախուած էին¹, յատկապէս Է-ռէնէ. — բայց միջին դարու մէջ ծովահասաններուն եւ ժէ դարուն՝ Չարսորգեան Խաղախներու արշաւանքներն² անտարակոյս ետ մղած են ժողովուրդն դէպի աւելի ապահով տեղեր: Սակայն նաեւ թերեւս, ինչպէս կ'ենթադրէ Համիլտըն, Եւսեմէն ալ նոյն իսկ հնու-թեան մէջ աւելի ներքսակողմը շինուած էր³:

Խճուղին քիչ մ'ետքը կ'ընդհատի. եւ ձիաւորներ, ուղտեր ու սայլեր ստիպուած են անցնիլ միահարթ աւաղուտ ծովեզրէն, որ հազորդակցութեան գեղեցիկ ճամբայ մըն է օգը լաւ եղած ժամանակ, բայց ուր մենք բռնուեցանք սաստիկ մրրկի մը, որ խռովեալ մրրկածուփ ծովը մինչեւ արահետին վրայ կը մղէր: Բաւական դժուարին եղաւ այս փոթորիկէն ետքն՝ որով խանգարած խառնակած էր մեր կարուանը, դարձեալ հաւաքել անասուններն ու մարդիկը, ամէնքն ալ ցրուած եւ մինչեւ ոսկր-ներուն ծուծը թրջած:

Բարեբախտաբար Սամսոնէն 35 քիլոմետր անդին նորէն կը սկսի քարայտակ ճամբան եւ

¹ Arrienus, Peripl. (Շրջանաւորութիւն) 22. եւ Müllerի ծանօթութիւնները՝ էջ 389:

² Հմմտ. Ritter, Erdkunde XVIII (Kleinasien I) p. 440.

³ Հ-Վլաշն, անդ, էջ 293: — Սակայն Պր. von Flotwell, որ շրջագոյցած է ամբողջ լեռնակողմն՝ որ Սամսոնի եւ Բաֆրայի մէջտեղ կը տարածուի, որեւէ հնութիւն մը չի նշանակեր: Հմմտ. Aus dem Stromgebiet des Qyzyl-Irmak (ի Peterm. Mitt. Ergänzungsheft 114) 1895, p. 18-19.

Թողով ծովեզրը՝ օձապտոյա կը գալարի ծառախիտ բլուրներու եւ պարարտարօտ մարգագետիններու մէջէն, որոնք կը սնուցանեն բազմաբանակ ոչխարներ, ձիեր եւ նաեւ ուղտեր: Այս գաւառակը հին Գ-ՆԷԼՆԻՊԻ- կամ Գ-ՄԻԼՆԻՊԻ- կոչուածն է¹, որուն հօտերը հռչակաւոր էին արդէն Ստրաբոնի ժամանակ բրդին բարելաւութեան պատճառաւ²: Նոյն աշխարհագրին օրով մաս մը հպատակ էր Ամիսոս քաղաքին, եւ մաս մ'ալ Գէոտարոսի պայազատներուն: Բ գարուն՝ ծովանիտ քաղաքն ստացած էր ամբողջ գաւառակը մինչեւ Աղիւս գետը, որ անոր արեւմտեան սահմանը կը գծէր³: Քաղաքը կամաց կամաց պիտի հեւնացընէր գիւղաբնակները, որոնք բրիտանոնէական թուականութեան սկիզբը տակաւին կը խօսէին իրենց պափղագոնեան բարբառը⁴:

Պողոտան կը բալորի Ա՛-ԳԷ՛՛Ի (Սպիտակ լճակի) շուրջը հարաւակողմէն, ընդարձակ լճակ մը՝ որուն արծաթափայլ ջրակոյտը հեռուէն կը նշմարուի. եւ ճամբան յետոյ կը կտրէ կ'անցնի սարակ-

¹ Պր. Անդերսըն մտադիր կ'ընէ թէ ուղապարութեան պս տարրերութիւնը հաւանօրէն ձայնական սլազանութիւն մը կ'արտայայտէ, ինչպէս են՝ Ն-ՆԷԼՆԻՊԻ (Նաζιανζօզ) եւ Ն-ՄԻԼՆԻՊԻ (Նադիանօզ), ՉԷՆԻՆԻՆԻ (Յիզիւղնի) եւ ԳԷՆԻՆԻՆԻ (Արմսիւղնի): Հմմտ. Ռամսէյ՝ ի Athen. Mitt. XIII, p. 237, n. 9, եւ Kretschmer, Einleitung Gr. Sprache, p. 196.

² Ստրաբոն, ԺԲ, 3, 13. էջ 546 e.

³ Ասիանոս, Շրջանաւ, 22: ('Ο ποταμός Ἄλυς) καθότι εἰσβάλλει εἰς τὸν πόντον ὀρίζει τὰ Σινωπέων καὶ Ἀμισσηνῶν ἔργα. (Աղիւս գետը ուր ծով կը թափուի՝ կ'որոշէ Սինոպացոց եւ Ամիսացոց սահմանները): Հմմտ. Ստրաբոն՝ անդ. Μετὰ δὲ τὴν ἐκβολὴν τοῦ Ἄλυος ἡ Γαδιλωπῆτις ἐστὶ . . . (Աղիւսի ծովախառնուրէն անդին Գ-ՆԷԼՆԻՊԻ- է . . .):

⁴ Ստրաբոն, էջ 553 e.

ներու շարք մը: Աերջապէս՝ վերջին լեռնակին կատարէն մեր առջեւ կը բացուի Բաֆրայի ընդարձակ դաշար եւ Արզըլ-Իրմակը. հեռաւոր բլուրներու ստքը՝ որոնց ետեւը արեւը մայր կը մտնէր, գետը կ'երեւար արեան շաւղի մը նման. իսկ քաղաքը՝ մթին գոլորշոյ մէջ ընկզմած, ուսկից դուրս կը ցցուէին աշտարակները (մինարէ), անծայր էր կարծես: Հոն հասանք մութր կոխելէն ետքը, կակղացած ճամբաներուն վրայէն տաժանագին ուղեւորութենէ մ'ետքը:

Այս ամբողջ հեռաւորութեան վրայ հին որեւէ յիշատակարան չգտանք, եւ Բաֆրա ալ աւելի բան մը չ'ընծայեց: Իւր ընդարձակածաւալ հովիտը՝ որ երբեմն արգասաւոր էր ամէն տեսակ բերքերով¹, ինչպես է այսօր ալ, ապահովապէս հին ատեն շատ բաղմամբնակ էր: Սակայն այս տեղ ծով թափուող հզոր գետոյն պատճառած սկաբեր ջրատութիւններն անտարակոյս խորապէս փոփոխած են այս խոնաւ եւ ջերմոտ դաշտին երեսը: Առիանոս կը յիշատակէ Աղիւսի արեւելակողմը երկու լճակ կամ ճահիճ (λίμνη), մին՝ Ն...-... եւ միւսը՝ Կ...-...: Այժմ մէկ լճակ միայն կը գտնուի՝ Ակ-Գէօլ կամ Համամլի-Գէօլ անուն՝ բայց շատ մեծ: Եթէ շրջակայքը հռոմէական աւերակներ կան՝ հաւանորէն սկի թանձր խաւի մը տակ թաղուած են:

Սակայն մեր դէպի Բաֆրա ըրած ուղեւորութիւնը բոլորովին ապարդիւն ալ չեղաւ: Յոյն բժիշկ մը՝ Պր. Միսրայէլ Սիմէոնիզիս, որ իւր ճամբորդութեանց ատեն բաղմութիւ տեղեկութիւններ հաւաքած է Փոքր-Ասիոյ մասին, աննախանձ թոյլ տուաւ

¹ Սորարոն, անդ՝ էջ 546 e. կ'անուանէ παμφόρος (ամենարեր): Բաֆրայի մշակութեան բերքերուն եւ յատկապէս ծխախոտին մասին՝ հմմտ. Ռէպորտ, Աշտարհագր. էջ 438, եւ Կէլե, Փոքր-Ասիա, Ա. էջ 116:

զանոնք աչքէ անցընելու: Գտանք ի միջի այլոց չափական արձանագրութիւն մը՝ որ անտիպ է (Թ. 93) Ասոր կոչուած գիւղէն, որ Բաֆրայէն իբր 25 քիլոմետր գէպ ի վեր կ'իյնայ: Մօտերս վիմափոր դամբաններ գտնուած են այս գիւղը եւ ի կողմէն (Գափու-Գայա)՝ որ գետոյն միւս ափն է¹, եւ ուր գետը կ'անցնուի գետակուրով մը: Տեղւոյս հին անունն անձանօթ է:

Բաֆրայի քով փայտեայ երկոյնատարած կամուրջ մը՝ իբր 800 մետր երկայնութեամբ՝ ձգուած է վեհաշուք գետին վրան, որ դաշտին մէջ կը տարածուի (Պակ.): Մեր դիտաւորութիւնն էր յառաջանալ մինչեւ Ալաշու՝ հաւանօրէն հին Չալիս կամ Ղէնի քովն², որու մասին կը նշանակուէր թէ հին յիշատակարաններ կը պարունակէ³:

1 Հմմտ. հն. ֆլորէն. անդ. էջ 20՝ որ այս գերեզմաններուն մէկ ստուերագիծը կու տայ:

2 Նոյնացումը պարտական ենք Համբլաքնի (անդ. Ա. էջ 299): — Քանի որ Հերոկղէսի քով (701, 6) այս աւանը՝ որ յետոյ Leontopolis եղաւ, կը կրէ Σάλτος Ζαίλιζην անունը, կրնայ կարծել տալ թէ նախնարար կայտերական անտառարօտ կալուածքի (saltus) մը կենդրոնն էր:

3 Հմմտ. Համբլաքն. անդ. ֆլորէն. էջ 24: — Պերջնոյս նկարագրած քրիստոնէական խորաքանդակը՝ բերլինի թանգարանը փոխադրուած է, ինչպէս ինծի զեկոսցանել հաճեցաւ Պր. Kekulé von Stradonitz, եւ հրատարակուած է գիտնականէս՝ Strzygowski, ի Jahrb. der Königl. Preuss. Kunstsamml. XXII, 1901, p. 29 ff. Ֆլորէնի յառաջ բերած արձանագրութիւնը հրատարակուած է ի Athen. Mitt. XIV, 209. — Ամասոյ Անթիմոս եպիսկոպոսը հաղորդեց ինծի ուրիշ աւելի հետաքրքրական բնագիր մ'ալ՝ գտնուած կուսենոս գիւղին մէջ՝ Ալաշամի նաւահանգստէն ոչ շատ հեռու, այսպէս՝

Ἐνορίας μίας (?) τῶν ἁγίων
μαρτύρων Σεργίου καὶ Βάκ-
χου φιλοτιμηθέντες ὑπὸ τοῦ
βασίλειως ἡμῶν Ἰουστίνου).

Սակայն ապրիլի ջրհեղեղային անձրեւները ճամբաները մօրերու փոխած էին՝ ուր ուղտերը մինչեւ լանջք կը խրէին. եւ այսպէս բռնադատուեցանք ընկրկիլ ու Սամսոն վերադառնալ մեր հանդերձանքը լրացրանելու: Բաղձախ է որ հնախօս մը շուտով հետադատէ Ալաշամի եւ Աէդիր-Քէօփրիւի միջեւ ինկած այս աշխարհամասը, ուր մենք շիրցանք շրջիլ: Չալիքոս՝ Ամիսոսէ աւելի՝ մերձաւոր բլալով Նէոկղաւգիոպոլսոյ (Աէդիր-Քէօփրիւ), հաւանօրէն այն ծագկեալ քաղաքին արտածման նաւահանգիստն էր, եւ հետեւաբար անոր բարգաւաճման մասնակից բլալու էր:

§ 3. Մամուլնէն խոսուաւ: — Աերջապէս ապրիլ 12ին ճամբայ ինկանք դէպ ի ներքնաշխարհը: Սամսոնէն ելլելէն ետքը խճուղին կը սկսի բարձրանալ ծովեզերեայ լեռնագօտուոյն զառիվեր գարերը, զոր կը կտրէ կ'անցնի 800 մետր բարձրութեան մէջ, եւ կ'իջնայ 2-1-1:1է գիւղը (450 մետր.) կը կտրէ ուրիշ լեռանցամէջք մը (840 մետր) եւ կը հասնի 4-1-1, ուր սովորաբար կը գիշերուի: Յետոյ ելլելով Կարա-Տաղը՝ երեք ժամէն կը հասնինք Թօփ-Բէփէ իջեւանը (Խաւ), եւ անցնելով մացառապատ ու սակաւամշակ լեռնադաշտէ մը՝ կը հասնինք Տէրսական- (կամ Սուսաշամ-)Սուի հովիտը, եւ Խաւա՝ որ կողմնական կրճի մը մէջ կձկած է:

Հոս շենք յամեր մանրամասն նկարագրելով այս ճամբան՝ զոր շատերն բրած են¹, եւ որ գլխաւոր ուղին է՝ Անատոլիոյ ներսերը խորամուխ բլալու համար: Կարաւաններու եւ սայլակառքերու թիւը՝

¹ Յատկապէս Սամսոն-Կաւակ հատածին համար՝ հմտ. von Lennep, Travels in little known parts of Asia Minor 1870, I, p. 61 ff. եւ բոլորովին նորերս՝ von Flotwell, անդ՝ էջ 15 եւն: Կիրերդի նոր քարտէսը (Թերթ A, IV Աինսոյ) մեզի պէտք մը չի թողուր ճամբան ծրագրելու:

որոնք անդադար կ'անցնէին ետեւէ ետեւ, կրնայ
ցուցրնել թէ ինչ աստիճանի մեծ պիտի ըլլայ
առեւտրական երթեւեկը գեղի ծովեզր, եթէ
փոխադրութեան այս հնացեալ եւ բազմաձախ
կերպերուն տեղը բռնէր երկաթագին՝ որ շատանց
ծրագրուած է: Հաս կը շատանամ քանի մը գիտ-
զութիւններ բնելով:

Սամանէն երկու մամ հեռու կը բարձրանան
երկու կոնաձեւ լեռնակներ՝ յիսուն մետրէ աւելի
բարձր, որոնք կ'իջեան նաւակայքին ու ծովուն
փրայ: Չասոնք կարելի էր թերեւս մեծամեծ գե-
րեզմանակարկաններ (tumulus) կարծել, նման
անոնց՝ որոնք Կարա-Սամանի սարահարթը կը
պատեն¹: սակայն աւելի հաւանական է կարծել
թէ ասոնք ցամաքանիշեր կամ փարսաններ եղած
բլլան՝ հին նաւազնայներուն Ամրասի նաւա-
հանգստին մուտքը ցուցրնելու համար: Արդեամբ
այ ասոնք նուիրուած են այսօր Արբոց Կոզմայի եւ
Գամմանոսի, որոնք յաճախ Կասբէր եւ Պաշտաւ-
(Պաշտաւ-էն) երկու օրեկաց տեղը բռնած են², հին
փտանգեալ նաւափարաց այն փրկիչ գից, Հաւա-
նական է որ այս կրկնարլուրին փրայ երբեմն կը
պատուէին յիշեալ Գիոսկուրեանք (Dioscuri,
"Արամազդայ մանկունքը) որոնց պատկերը գրոշ-
մուած է այս ծովագնաց քաղաքին գրամներուն
փրայ³:

Կասկի մէջ՝ որ 150 տնէ բազկացած գիւղ
մին է 500 մետր բարձրութեան փրայ, նմանազրոյշ
(estampage) մ'աւինը այն փոքրիկ մղանաբարին,
գոր երբեմն Հոգարթ օրինակած էր, եւ որ տեղ-

¹ Ինքն փերը՝ էջ 132:

² Հմմտ. Deubner, De incubatione etc. 1900,
p. 77 ff.

³ a Babelon et Reinach, Recueil général des
monnaies d'Asie Mineure, p. 64 (Ա.Փոստ՝ թ. 94):

ւոյն վարչատան («գօնագո») գաւիթը կը պահուի (Թ. 441): Ուրիշ մոնոպոլիոյ արձանագրութիւն մ'ալ ցուցուցին մեզի կաւակէն գէղի աւրեւելք մէջ մոն (lieux) հեռու Թաթար-Մուսուլի գերեզմանոցին մէջ. բոլոր այնպէս եղծուած էր որ հայի կրնայինք քանի մը տասերու հետքերը գանապանել: Թաթար-Մուսուլի հարաւակողմը լեռնակառարի մը վրայ՝ որ «Չէրէլէ-Բէլէի» կը կոչուի, նուիրական որմնափակ մը կոյ, ուր յառաջագոյն գտնուած էր Ապոլոնի նուիրուած յունական-լատինական ձան մը (Թ. 18): Նաեւ այսօր բրտարուեստ խեցեղորձութեան մը բեկորները կը քաղուին հոն. արձանիկներու կտորներ, լայնահանգերձ կանայք եւ ջլեր¹: Այս լեռն, ինչպէս երկրին շատ ուրիշ բարձունքները², յայտնապէս նիստ մըն էր պաշտաման ի պատիւ որեւէ բնիկ՝ անտարակոյս արեգակնային՝ աստուածութեան մը, զոր Յոյնք իրենց Ապոլոնի հետ նոյնացուցին:

Ի վերջոյ՝ Թեթ-Բէլէի իջեւանին արեւմտակողմը քանի մը վայրկեան հեռու տաճկական գերեզմանոցին մէջ կան ճարտարապետական հասակատարներ, գորիական սեանց խարխոխներ, ծնօտի կտորներ, եւն: Ասոնք ծագած են որեւէ մեհենէ մը կամ մանաւանդ շիրմական տաճարիկէ մը՝ որ շինուած էր Ամիսուէն Ամասիա տանող հռոմէական ճամբուն վրայ սեղ մը, որուն հետքերը կը տեսնուին այս իջեւանէն քիչ մը հեռուն³:

¹ Այսպիսիներ ցուցուցին ինձի կաւակի մէջ. որ Անգերսըն տեսած է նոյնպիսիները՝ Սամսոն տես վերը՝ Ա. § 22:

² Հմմտ. վարը՝ § 10:

³ Յետ Անգերսըն վերը՝ Ա. § 22 վերջը:

Բ. Փազիմոնիտիս:

§ 4. *Խառնա* (Պտկ.): — Ինչպէս արգէն Համիրզըն ճանչցած էր¹, Խառնա (Համրա) կարեւոր աւանը կը բռնէ «Փազիմոնիտացոց Ջերմից» տեղը, որոնց բուժիչ զօրութիւնը Ստրաբոն կը դրուատէ²: Այս ջերմկայքերը՝ որոնք առատօրէն կը բղխեն, հասարակաց աւազանի մը մէջ կը հաւաքուին եւ անկէ կ'երթան բաւական լաւ կարգաւորուած բաղնիք մը. եւ նոյն իսկ մեր օրերը տակաւին հիւանդներու բազմութիւն մը կը դիմէ այս ջրերը³: Նոյնպէս էր Հռոմէացւոց ժամանակ. Յաւերժահարսանց (Նիմֆէից) եւ Ասկղեպեայ կը նուիրուէին ձօներ բարձրաստիճան անձերէ՝ ի շնորհակալութիւն ստացած առողջութեան. եւ Դ դարուն՝ կուսակալ մը Յովիանոս անուն՝ նորոգել տուաւ Ջերմուկները՝ հոգ տանելով որ երկու սեռի համար զատ զատ ըլլան (արձնագր. Թ. 25 եւն): Այս բուժիչ ջրոց իւր սահմանաբաժնին մէջ գտնուելուն համար է որ Նէոկղաւդիոպոլիս քաղաքն իւր դրամոց վրայ աւելի Ասկղեպեայ պատկերը դրոշմել տուած է քան ուրիշ դից⁴:

Ուրիշ յիշատակարաններ ալ կը վկայեն թէ ջրերու այս քաղաքը բարգաւաճ էր մինչեւ նաեւ քրիստոնէական շրջանին: Այլեւայլ արձանագրութիւններէ զատ (Թ. 28 եւն), որոնց մէջ կան չորս մղոնաքարեր⁵, տաճիկ տանտիրոջ մը քով՝ Տէվրիշ էֆէնտի՝ տեսայ ճերմակ մարմորէ գեղեցիկ խորա-

1 Հմիրզըն, Փոքր-Ասիա, Ա, էջ 333:

2 Ստր-բոն, ԺԲ, 3, 38, էջ 560՝ Τα θερμά υδατα των Φαζιμωνιτων υγεινα σφοδρα (Փազիմոնացոց սաք ջրերը՝ շատ առողջարար):

3 Հմիրզըն, անդ. եւ Կիւի. Ասիական Տաճկաստան, Ա, էջ 771:

4 Բ-բըլըն Ի-Ույն-Ի, Հւք. եւն, էջ 169:

5 Թիւք 423, եւն: Հմմտ. Անդերսըն, վերը՝ Ա, § 37:

նարդ աւազան մը (լոյնք՝ 1.20 m, երկայնք՝ 1.68 m, բարձրութիւն՝ 0.63 m), որուն առջեւի կողմը զարդարուած էր քանդակուած խաչով մը՝ որ երկու կողմէ պատուած է ուրբուն զարդաձեւերով (méandre): Ասի կրնայ հին մկրտարանի մ'աւազանն ըլլալ. որովհետեւ իւր ծաւալը ամենեւին շիներէր շիրմատապան (sarcophage քարատապան) մը համարելու:

§ 5. Խառնայի վեհար-Վեհարիտ: — Ապրիլ 14 եւ 15 օրերը շրջեցանք Խառնայի եւ Վեհար-Քէօփրիւի մէջ պարփակուած երկիրը եւ ամսոյն 16ին օրը վիճակին («գաղա») այս գլխաւոր տեղն անցուցինք, իսկ 17ին վերադարձանք Խառնա, մեր առաջին հետազոտութիւնը լրացնելով: Աւելի պայծառ ըլլալու համար՝ նախ կը խօսինք գիւղերու մէջ կատարած մեր կրկին շրջագայութեանց մասին, եւ կ'աւարտենք քանի մը մանրամասնութիւններ տալով քաղաքին մասին՝ որ Փոլսոյ Նեքիւն-Գիւն-Գիւն տեղը բռնած է¹:

Այս ամբողջ աշխարհը մաս էր քաղաքին շատ ընդարձակ հողաբաժնին՝ այնպէս ինչպէս սահմանագծած էր Պոմպէոս²: Փաղիմոնիտիս հիւսիսէն կը սահմանուէր Նեքիան-Տաղի զանգուածէն եւ ծովեզերեայ լեռնաշղթային մնացեալ մասէն, որ զինքը կը բաժնէր Ամիսոս քաղաքէն. արեւելակողմը՝ կը սահմանակցէր Փանարէայի (Քաշ-Օվա)՝ մէջն ունենալով Լաւոգիկէ հին քաղաքն ու Ստիփանէ լիճը. արեւմտեան կողմն՝ իւր սահմանը պայծառ որոշուած էր Աղիւս գետով. վերջապէս հարաւէն՝ կը կցուէր Ամասիոյ երկրաբաժնին, սահմանագիծն անցնելով Ակ-Տաղի գագաթէն եւ այն բլուրներուն կատարէն՝ որոնք Խառնայի հովիտը կը

¹ Հմմտ. քարտէսը՝ Թիւ ԺԱ:

² Ստրոնոն, ԺԲ, 3, 38, էջ 560 c.

բաժնեն Մարգուանի դաշտէն (Սուլու-Օվա)¹։ Այս սահմանը միանգամայն սահմանադրուին էր Պոնտոսի եւ Պափղագոնիոյ, որուն կը վերաբերէր այսպէս սահմանագծուած ամբողջ գաւառը²։ Ստրարոն ցորենաբեր երկիր (σισυφόρος χώρα) կ'անուանէ զանի. եւ մեր օրերս ալ արժանի է այս տիտղոսին։ Այս բերրի երկրին վրայ սփռուած են բազմաթիւ գիւղեր, որոնց բնակիչները տաճկերէն կը խօսին, բայց մեծաւ մասամբ յունական եկեղեցւոյ գաւանութիւնն ունենալով՝ Յոյն կը համարուին։

Ամսոյն 14ին մեր սայլերը խաւրեցինք կառագնաց ճամբով, որ Խաւսան ուղղակի կը կապէ Վէղիր-Քէօփրիւի հետ³, եւ մենք դէպի հիւսիս գիմեցինք՝ կտրելով բլրաշատ դաշտը, որ այգուն եղեամով ծածկուած էր։ Հին հատակոտորներու առատութիւնն՝ որոնք ագուցուած են որեւէ եկեղեցւոյ կամ մզկիթի մը պատերուն մէջ, կամ հասարակաց աղբիւրներու քով դրուած են, կամ գործածուած են գրեթէ ամէն գիւղի ագարակաց շինութեան, կը ցուցնէ թէ որչափ խիտ եղած է երբեմն այս գիւղական գաւառին ազգաբնակչութիւնը։ Գերեզմանաքար-կոթողները զարգարող քանդակները, — արանց համար՝ յատոց եւ կացին, կանանց համար՝ հայելի, գլոցիկ կամ գգչի (գղելու մեծ սանտր), իլոյ լիսեռն, աղեկատ, կողով, — երկրագործ ժողովրդեան⁴ մ'աշխատասէր ընտանեաց յիշատակը կը զարթուցանեն։ Ասոնք ընդ-

¹ Այս բանս աւելի մանրամասն հաստատած ենք ի Revue des études grecques XIV, 1901, p. 33 ff.

² Հմմտ. վարը՝ § 6։

³ Այս այն ճամբան է՝ որուն հետեւած են Հ-Գլլըն (Փոքր-Ասիա, Ա, էջ 332) եւ Ա-Գլլըն (տես վերը՝ § 38)։

⁴ Հմմտ. արձ. 19՝ γεωργίη πορεύοντα (երկրագործութեամբ վաստակեալ)։

Հանրապէս մեծապէս բարեկեցիկ եղած են, ինչպէս կը ցուցնէ այս փոքրիկ յիշատակարանաց համեմատական պերճութիւնը, որոնք քանդակուած են գեղեցիկ սպիտակ մարմարինի վրայ. եւ ոմանք արդէն ընդարձակ կալուածներու տէր էին՝ որով ծերակուտական կարգի մասնակից¹: Այս կալուածատէրներու սիրական զբօսանք եղած կ'երեւայ լեռնանտառներու մէջ որսորդութիւն ընել²: Գիւղացիներու այս պնդակազմ ցեղը լեզէոններուն կը մատակարարէր նաեւ բազմաթիւ նորակոչ զինուորներ, որոնք պատերազմելու կ'երթային Հայաստանի սահմանագլխին վրայ՝ ի Ստապլա³. կամ որոնք՝ երբ հարիւրապետի աստիճանին կը հասնէին՝ կ'անցնէին Գանուբի կամ Հռենոսի բանակներուն⁴: Երբեմն այս զինուորներն՝ իբրեւ հնօրեայ վաստակաւորներ (veteranus) իրենց հայրենիքը վերագառնալով՝ մեծարելի անդամներ կ'ըլլային նէոկղազիոպոլսոյ քաղաքաբաշխական ժողովոյն⁵:

Հետաքրքրական ընագիրներ գտանք սպրիւ 15ին գիւղերս՝ Է-ի-Վէր-ն (Թ. 38—41) եւ Ս-լէյ-ան-է-ոյ (Թ. 42—46)՝ որ հարաւակողմն է այն լեռնապատ հովտին՝ ուսկից կը հօսի Ստաւրոս- (կամ Իստաւրոս-) Իրմակ⁶, եւ յետոյ այս հեղեղա-

¹ Արձ. 56:

² Արձ. 56՝ *θήραις ἀγαλλόμενον* (այս վայելեալ).

³ 52՝ *ὄρειοδρομόμον θηρῶν ὀλετήρα* (լեռնագնաց աւերիչ երէոց):

⁴ Արձ. 34: Հմմտ. Անտիոքը, վերը՝ Ա. § 38:

⁵ Արձ. 49:

⁶ Արձ. 41՝ *οὐστρανός βουλευτής* (սորհրդական վաստակաւոր = veteranus). Հմմտ. 99 *οὐστρανός*.

⁷ Այս պնդեան է՝ զոր Համբարն (Ա. էջ 332) կ'անուանէ Stavlar- (կամ Istavlar-) Chai. Թերեւս սխալ լրած է անունը. Stavros-Irmak է իսախ-դետ. եւ անշուշտ յունագական գիւղացիներն այսպէս անուանած են:

տին արեւմտակողմը՝ Աեժէէի եւ Աւրաբոյէ (Թ. 47—48) 1.

Աերացարձին նախ այցելեցիք Դոյրան (Doïran)՝ Աւգիր-Քեօփրիւի հարաւ-արեւելքը՝ կես մղան հեռու։ Երայրակասար տապանադրէ մը զատ (Պակ.) գտանք հսն հղակերտ խաչի մը պատուանդանը, Պարազիտս եպիսկոպոսի ձեռով՝ որ Եփեսոսի ժողովին ներկայ էր 431ին (Թ. 68)։ Աեաղյ կրկին ելանք գեղ ի Խաւսոյի խճուղին, որուն հասանք ոչ շատ հեռու այն ամայի գերեզմանոցէն՝ ուր մեր անդղեացի նախորդներն երկու մղանաքար գտած էին 2. Այս խճուղին կ'իջնայ գեղ ի Սաւարոս-Իրմակ, որուն վրայէն կ'անցնի փայտե կամրջով մը Սաւարոս-Քեօփրէ շէնին մօտ 3. Ասկէ սաստիկ վերելքով մը կու գանք Ապլան (Պափլան) գիւղը, իբր քսան տուն բնակչով, թառած բարձրաւանդակի մը վրայ՝ որ միանգամայն կ'իշխէ թէ գետոյն բնթացքին որ գեղ ի Արզու-Իրմակ կը սրանայ ու կ'անհետանայ, եւ թէ ճերմակ ճամբուն՝ որ գեղ ի Խաւսա կ'երկարադնուի։ Եկեղեցւոյն պատին մէջ ազուցուած է կոթող մ'որ տապանադրի ձեւով շարեքտողեան մը կը կրէ (Թ. 58)։ Գիւղացիք պարձենալով ցուցուցին այս եկեղեցւոյն մէջ նոր նկար մը՝ որ կը ներկայացընէ վերջին գառաստանն ու գառապարտելոց տանջանքը։ Այս անպաճոյճ եւ անյաջող սրմանկարներուն մեկնութիւնները գրուած են յունարէն տառերով՝ բոլոր տաճկերէն լեզուաւ, որ լեզուն միայն հասկանալի է ամբողջ գառաստանին մէջ։

Մեզի խոստացուած բլլալով՝ ոչ շատ հեռուն շատ հին եւ շատ աւելի նշանաւոր արուեստ-

1 Այս գիւղերուն գիւրքը նշմանկուած է Տ.Ա. քարտիտին վրայ։

2 Քեօ փերը՝ Ա. § 39։

3 Քեօ փերը՝ Ա. § 38։

տակերս մը ցուցրնել, յորդորուեցանք խոտու-
 բուն շրջան մ'ընել գեւոյ ի հիւսիս: Մշակեալ
 սարահարթին մէջէն մէկ ժամ ճամբորդելէն ետքը՝
 հասանք նախ Աեծնէի, յետոյ Աւարագոյի՝ ուսկից
 անցած էինք նախընթեր որր. եւ յետոյ իջանք
 Ստաւրոս-Կրմակի խորունկ հովտը: Ապաստակա-
 կեաին հասնելով տեսանք որ այս անգամ խո-
 տուած չէինք. խիղախորէն ձգուած հին կամուրջ
 մը կը կապէ երկու կողման սեւ քարամայրերն՝ որ
 գետոյն անկողինը կը սեղմեն (Պակ.): Ամբիջայա-
 տակն՝ որ իբր տանուհի մտք բարձր կ'անցնի
 գետոյն վրայէն, յեցած նստած է երկու մեծ սրա-
 ձեւ կամարներու վրայ, եւ ուրիշ երկու փոքրիկ
 կամարներուն ալ վրայ՝ որոնք երկու գետափանց
 կամբջարարձքերը ապեղնաձեւ կը կարեն: Արկա-
 սայր կամարը շինուած է փոխն ի փոխ մեծ հարթ
 աղիւսներով եւ սեպտքարերով (պորտպարերով):
 Իսկ կամարակաշիները կազմուած են ամեն տեսակ
 բեկորներէ՝ քանդակուած հաստակոտորներ, բիւ-
 զանդեան խղակներ եւ նոյն իսկ երկու գամբանա-
 կան մարմարներ՝ որոնք արձանազուծիւն ու-
 նին, մին՝ հեթանոսական, միւսը՝ քրիստոնէական
 (Թ. 49, 55). Ինծի այնպէս երեւցաւ թէ Աել-
 ջուկեան շրջանի շինուածք մըն է (Պակ.), բայց
 չկրցանք հասկընալ՝ ո՞չ թէ ո՞վ շինած է կամուրջս
 եւ ո՞չ թէ ո՞ր կը տանէր վրայէն անցնող ճամբան.
 — Թերեւս խոտորնակ ճամբոյ մ'ըլլայ Աէզեր-
 վեոփրիւն մինչեւ Աման:

Ասկէ ետքն ելելով լեռն՝ որ հովտը կը
 պատէ արեւմուտքէն, հասանք Տաչնա (Tachna),
 ուր բազմաթիւ հետաքրքրաշարժ բնագիտեր
 գտանք. ամենէն ընդարձակը (Թ. 50) փորագրուած
 է մարմարեայ մեծ կոթողի մը վրայ՝ որ անկուած
 է դիւղին մօտ բարձունքի մը վրայ (Պակ.): Ասիկայ
 եւ ուրիշ կոթածոյ քարեր միասին կէս-բուրածեւ
 սրմափակ մը կը գծեն, սրուն մէջ տեղ կեցած

է սեղան մը կամ մանաւանդ բազին մը՝ կազմուած մեծ սալաքարէ մը՝ որ դրուած է անկոփ վիմաքարերու վրայ: Մեզի ըսին թէ ասիկայ սուրբ տեղ մըն է՝ նուիրուած Եզրիա մարգարէին, որ՝ թէ Արեւելք եւ թէ Յունաստան¹ յաճախ յաջորդած է հեթանոսական դից, իբր պաշտպան բարձանց²: Ամէն կողմ թափթփած մոմի բծեր թոյլ կուտային այս գիւղացւոց տածած ջերմեռանդութիւնը շափել մոմեղինաց թուէն, զորոնք վառած էին ի պատիւ գիւղական այս սրբարանիս պաշտպանին:

Թաթար-Վալէսի գիւղը նոր երեւան ելած մէկ գիւտը համոզեց որ շեղում մ'ընենք մինչեւ այն գիւղը: Արահետը նախ խորամուխ կ'ըլլայ վայրենի կիրճ մը, որուն խորքը յորձանալից կ'եռայ ուղիս մը՝ հազիւ մէկ մետր լայնութեամբ, երկու կողմէն սեղմուած կրաքարային ափափայից մէջ: Այն տեղն՝ ուր այս օժանդակը կը թափուի Ստաւրոս-Իրմակի մէջ, փոքրիկ դաշտ մը կը բացուի՝ որուն ծայրը խմբուած են Թաթար-Վալէսի գիւղին տները: Գաշտիս մուտքն եղած հին գերեզմանաց մը գրգիռ եղած էր գանձախոյզներուն կամ նաեւ պարզապէս շինուածանիւթ փնտռողներուն պեղումներ ընելու: Նոր կրկտուած եւ տակաւին բաց դամբանի մը երկայնութեան կողերը կազմուած էին երկու մեծ կոթողաքարերէ՝ որոնք կողին (նեղ երեսին) վրայ պառկեցուած էին: Մէկուն արձա-

1 Delehaye, Les légendes hagiographiques, 1905, p. 196.

2 Համեմատելու է Տակիտոսի ըսածը (Պոմ. Բ., 77) կարմեղոս լերան մասին. Nec simulacrum deo aut templum (sic tradidere maiores); ara tantum et reverentia (Ո՛չ պատկեր աստուծոյ կամ մեհեան. այսպէս աւանդած են նախնիք. այլ սեղան միայն եւ յարգութիւն): Այսօր հոն ալ (կարմեղի վրայ) Ս. Եզրիան է որ կը յարգուի. (տես Robertson Smith, Religion of the Semites², p. 156, n. 1).

նագրութիւնը — վեցաչափ ութ տողեր (Թ. 56) — կը կարդացուէր փոսին մէջէն, բայց մէկալին միայն կռնակի կողմը տեսանելի էր. եւ ցաւեցանք որ ստիպուած էինք այս դամբանս ու զանի շրջապատող միւս գերեզմանները պեղելէն հրաժարիլ:

Տաքնայէն՝ կտրելով անցնելով հովիտը պատող լեռանց կատարը՝ հասանք Քօջողու, իբր հարիւր երգով յոյն գիւղ մը լեռնադաշտի մը վըայ, որ ամբողջովին ցորեն ցանուած էր: Քօջողուէ երկու տապանագրեր պիտի հրատարակենք, որոնց մին կ'աւարտի նղովքի կամ անէձքի հետաքրքրական բանաձեւով մը (Թ. 59—60): Սէլբէ-տէլէնէ գիւղն ալ՝ որ Տաքնայէն մէկ մղոնէ աւելի հեռու է դէպ ի հարաւ, տակաւին քանի մը գիւտեր պահած էր մեզի: Բաց ի երկու տապանակոթողներէ (արձ. Թ. 36—7)՝ մեր մտադրութիւնը գրաւեցին բազմաթիւ գործուած մարմարաքարերու կտորներ. յատկապէս՝ ծնօտի հատակոտոր մը ճամբուն եզերքը կողմանած էր, եւ խղիկի մը գրան առջեւ՝ մեծ պատուանդան մը կանգնած (բարձր՝ 0.78 m): Բայց իրիկունը յառաջացած ըլլալով՝ ստիպուեցանք աճապարել խաւսա դառնալու, ուր մտանք մութ գիշերին:

Այս համառօտ տեղեկութիւններս ալ կը բաւեն ցուցնելու թէ որչափ առատաբեր է այս աշխարհը հնութիւններով, եւ թէ որչափ երեւան կու գայ ասով Փաղիմոնիտիսի հին բարգաւաճանքը: Ապահովապէս հոս տակաւին գիւտերու ճոխ աւար մը կը սպասէ անոր՝ որ պարապով հանգիստ պիտի կարենայ հետախուզել: Յատկապէս արշաւանք մը Ստաւրոս-Իրմակի հովտին մէջ՝ որուն ընթացքը մասամբ միայն քննուած է, հաւասարապէս օգտակար պիտի ըլլայ թէ արձանագրագիտութեան եւ թէ՛ աշխարհագրութեան համար: Եթէ կրնանք վստահիլ Պտղոմեայ համակարգաց՝ այս շրջավայրքը փնտռելու է Սփանէ-

(Sabanes) եւ Տիտուս (Titua) գիւղերը, որոնց ճիշդ գիւղերն անծանօթ է¹։

§ 6. *Վիզիյս-Վիտիւրիս*։ — Պր. Անդերսըն արդէն խօսած է Վէզիր-Քէօփրիւի վրայ իւր տեղեկագրութեան մէջ (§ 41, եւն.) եւ մենք պիտի շատանանք հոս աւելցնելով միայն քանի մը յաւելուածական գիտողութիւններ, ինչպէս որ այս հողին վրայ մենք միայն շարունակեցինք այն գործը՝ զոր մեր անգղիացի նախորդներն այնպէս լաւ սկսած էին։ Եթէ կրնանք անոնց հաւաքածներուն վրայ աւելցնել քանի մը նոր փաստեր, ասիկայ պարտական ենք ամէնէն աւելի Պր. Սիմարեանի, Մարդուանի Վարժարանի վաղեմի մէկ աշակերտին, որ թէ մեր ուղեւորութեան ժամանակ եւ թէ անկէ ետքը թանկագին տեղեկութիւններ հաղորդեց մեզի իւր հայրենիքին մէջ գտնուած հնութեանց մասին։

Պատահական պարագայ մ'ալ նպաստեց մեր հետախուզութեանց։ Մեր այցելած ժամանակ քաղաքին հարաւակողմը բարձունքի մը վրայ նոր զօրանոցներ կը շինուէին. եւ շինութեան համար բերուած քարերուն մէջ կային երկու հռոմէական մղոնաքարեր (թ. 429—430) եւ երկու յունարէն արձանագրութիւններ (թ. 64, 71). որոնց մին ձօն մըն է Դիոսի Փրկչի (Zeus Soter.) Շինութեան համար հիմեր փորելու ատեն բացած էին դամբան մ'ալ, որ բլրին կողին վրայ շինուած էր շաղախի մէջ թաղուած խճաքարերով։ Ամարայարկ դամբանարան մըն էր իբր երեք մետր բարձրութեամբ ու չորս մետր լայնութեամբ. կողմնական պատերուն մէջ պատրաստուած էին խորշեր՝ քարատապաններ ընդունելու համար։

Մեր առած տեղեկութեանց համեմատ քաղաքին մէջ երեւան հանուած էին կոփուած մար-

¹ Պտղոմ. Ե, 4 § 4։

մարաքարեր, սիւներ, խճանկարներ (միւսիոններ), եւ նաեւ քանդակներու բեկորներ, ինչպիսի է այն՝ որուն պատկերը դրած ենք (Պտկ.) հողէ հանուած 1901ին գետոյն մօտերը: Ար նախընտրենք որեւէ մեկնութիւն մը տալու չփորձել: Միայն որոշ կը տեսնուի թէ անձի մը խոնարհագոյն մասն է, եւ քովը կայ թռչուն մը՝ որ կրնայ աքաղաղ ըլլալ: Հին հատակոտորներու մեծ քանակութիւն մը գործածուած է նոր շինութեանց մէջ, որով աչքին աւելի զգալի կ'ըլլայ կործանած քաղաքին կարեւորութիւնը: Յատկապէս Ուլու-չայ գետը, անոր վրայ ձգուած փայտէ կամրջէն դէպ ի վերը, թմբապատուած է հռոմէական շինուածոց մնացորդներով. բայց ջրերուն անսովոր բարձրութիւնն արգելք եղաւ զննելու այս տարրական քարափները: Ասոր փոխարէն կրցանք հաւաքել բաղմաթիւ արձանագրութիւններ՝ գերեզմանոցներու եւ տներու մէջ, եւ շնորհիւ Գեր. Անթիմոսի՝ Ամասիոյ եպիսկոպոսին՝ տուած տեղեկութեանց բախտ ունեցանք յունական եկեղեցւոյ դաւթին մէջ օրինակել եւ նմանապատճենել (estamper) առաջնակարգ կարեւորութիւն ունեցող բնագիր մը՝ Պոնտական արձանագրութեանց գոհարը (Թ. 66): Ասիկայ հաւատարմութեան հաւաստեաց երդում մըն է ուղղուած Աւգոստոսի՝ Պափղագոնիոյ քաղաքներու բնակչաց եւ յատկապէս Փաղիմոնիտացւոց կողմանէ, իրենց երկրին Այսրութեան հետ միացուելէն ետքը: Ար խոստանան, հաւանօրէն նոյն խօսքերով՝ որով իրենց նախնիքը կը խոստանային իրենց բնիկ թագաւորներուն, պաշտպանել աստուածացուած ինքնակալը, եւ անոր անձնանուէր կ'ըլլան մարմնով ու հոգւով¹:

Մեր տրամագրութեան ներքեւ եղած յիշատակարաններով՝ քաղաքիս պատմութիւնը ծանօթ

¹ Հմմտ. Rev. des études grecques, 1901, p. 26 ff.; Dittenberger, Orientis Inscr. Nr. 532.

է մեզի այնպիսի ճշգրտութեամբ՝ որ ցանցաւ է Փոքուն Ասիոյ մէջ: Վէղիւր-Քէօփրիւ հին Նէ-
 ր-է-քաղաքին տեղը բռնած է, որ հիմնուած էր
 Պոմպէոսէ՝ Միհրդատայ պարտութենէն ետքը
 (64 Ն. Ք.) ոչ շատ հեռու Փաղիմնն աւանէն¹, որ
 իւր անունը տուաւ ամբողջ գաւառին: Հիմնարկու-
 թեան ժամանակն Պոմպէոս «Նոր-Քաղաքին»
 տուաւ այն ընդարձակ հողաբաժինն՝ որ անկէ ետքը
 կախուած էր քաղաքէն²: Յետոյ այս գաւառը՝
 հաւանօրէն Անտոնինոսէ՝ տրուեցաւ թագաւոր-
 ներու³, թերեւս Պափղագոնիոյ արքայից, որոնց
 վերջին շառաւիղը Գիոտարոս՝ կաստորի որդին՝ իւր
 մայրաքաղաքն ըրած էր զԳանգրա⁴: Գիոտարոսի
 մահուանէ ետքը՝ Աւգոստոս անոր վիճակները
 միացուց Գաղատիոյ նահանգին հետ, թէպէտ եւ
 թողուց անոնց յատուկ ժողովը (κοινόν): Այս
 միացումէն՝ որ կատարուեցաւ Ն. Ք. 6 տարին, կը սկսի
 քաղաքին թուականութիւնը⁵: Երեք տարի ետքը
 բոլոր բնակիչներն իրենց բազիլիկներուն առջեւ հաւա-
 տարմութիւն կ'երդնուին աստուածացուած կայսեր:
 Նէպոլիս անունը քիչ մ'ետքը փոխուեցաւ
 եւ եղաւ Նէ-ն-է-քէ-օ-փրիւ-ն⁶, յայտնապէս՝ կղաւ-
 զիոսէ, բայց չենք գիտեր ինչ գիպաց հետեւու-

¹ Տես Անթիոքը, վերը՝ Ա, § 41:

² Յանուանէ՝ հին Լաւոզիկէն (Լազիկ.) — Հմմտ. Փաղիմնիսի սահմանաց մասին վերը՝ § 5:

³ Սորբէն, ժ.Բ. 3, § 38, էջ 561 C: *Oi δ' ὄσπερον καὶ βασιλεύσιν ταύτην ἐνεύμαν.*

⁴ Սորբէն, ժ.Բ. 3, § 41:

⁵ Հմմտ. Անթիոքը, վերը՝ Ա, § 41:

⁶ Այս անունը կ'երեւայ քաղաքին դրամներուն վրայ, որ այնպէս դրամ հատանել կը սկսի Տրայանոսի օրէն եւ կը շարունակէ մինչեւ Սեպտիմոս Սեւերոս (Recueil génér. I, p. 169 ff.): Գարձեալ նոյն անունը կ'երեւայ Պտղոմէայ քով՝ Բ գարուն (Պաղ. Ե, 4, 4.) եւ Գ գարուն կարոսի եւ կարինոսի ընծայուած մէկ ձօնին մէջ (282 Յ. Ք. արձ. 67):

Թեամբ: Թերեւս ստիպուած էր նոյն իշխանը քաղաքը վերաշինել որեւէ կործանմանէ մ'ետքը. կամ Թերեւս գաղթականութիւն մը խաւրած է հոն՝ ինչպէս յԱրքեղայիս Կապպադովկիոյ: Իւր հողաբաժնէն առնուած լեզէոնականաց թուոյն նայելով՝ կրնայ կարծուիլ թէ քաղաքը հռոմէական քաղաքի իրաւունքը կը վայելէր¹: Նոյն իսկ յորմէ հետէ Պոնտոս Տրայիանու ատեն կցուեցաւ Կապպադովկիոյ կուսակալութեան, Փազիմոնիտիս շարունակեց՝ մինչեւ Դիոկղետիանոսի շրջանը՝ մնալ իրրեւ մաս Պափղազոնիոյ, որ կախուած էր Գաղատիայէ²:

Նեոկղաւդիոպոլսոյ ունեցած դիրքը՝ Փոքրուն Ասիոյ հիւսիսակողման առեւտրական մեծ պաշտային վըայ՝ անոր տեւական բարգաւաճանք մ'երաշխաւորեց: Միայն Բ դարուն կը տեսնենք որ երեւան կ'ելլէ՝ կամ մանաւանդ կը վերերեւայ՝ բնիկ անուն մը³ Անտրապա⁴, որ այնուհետեւ

1 Տես վերը՝ § 5, էջ 150: — Նեոկղաւդիոպոլսոյ դրամներուն տիպերը յաճախ պատերազմական իրերէ առնուած են, այսպէս՝ Պալլաս (Թ. 2, 3, 9), Նիկէ կամ Յաղթութիւն (Թ. 8), արծիւ՝ երկու ոսղմական նշանակներու մէջ:

2 Հմմտ. Անտրապա, վերը՝ Ա, § 41: — Այս իրողութիւնը կ'ապացուցուի ո՛չ միայն Պտղոմէայ (Ե, 4, 4) բնագրէն, այլ նաեւ Փազիմոնիտիսի մղոնաքարերէն, որոնք ո՛չ թէ Կապպադովկիոյ՝ այլ Գաղատիոյ նուիրակներուն անունները կը կրեն. այսպէս՝ Աղեքսանդրի Սեւերոսի օրով՝ Ապրոնիոս Պիոս (CIL, III, 14184, 27, 30 — Արձ. Թ. 432-3) եւ Դեկոսի օրով՝ Վաղերիոս Նեպոտիանոս «նախագահ նահանգին Գաղատիոյ» (praeses provinciae Galatiae, CIL, III, 14184, 25 — Արձ. 425):

3 Հմմտ. Անտրապա ի Գամբրոս՝ Անկիւրիայէ Արքեղայիս տանող ճամբուն վըայ (Ռոմեայ, Պատմ. Աշխ., էջ 254): Երուսաղէմեան Ուղեգիրը (Itiner. Hierosol. 576, 2) կը գրէ Andrappa՝ անտարակոյս ո՛չ ուղղութեամբ:

4 Այս անունն հնագոյն յիշատակութիւնը կը գտնուի

ամբողջ քրիստոնէական շրջանին միակ գործածականը կը մնայ: Պետութեան վերակազմութեան ատեն՝ Անտրապա Ամասուի հետ մէկտեղ առնուեցաւ նորակազմ Հելլենոպոնտոս նահանգին մէջ¹: Թ զարուն Հայկական բանակաթեմին ամբավայրներէն մին էր². Եւ մնաց իբրեւ եպիսկոպոսանիստ աթոռ մը՝ որ օգնական էր Ամասիոյ մետրապոլտին³. մինչեւ որ ԺԱ զարուն վերջն ինկաւ Սելջուկեան Թուրքաց ձեռքը⁴: Այսօր ալ յունական փոքր հասարակութիւն մը տակաւին գոյութիւն ունի՝ Վէրիբ-Քէօփրիւի մէջ:

Պաղատայ քով (Ե. 4, 4)՝ Ἀνδραπα ἡ καὶ Νεοκλαυδιόπολις (Անտրապա՝ որ եւ Նեոկլաւդիօպոլիս):

¹ Հերակլէս, 701, 7. հմմտ. Յուստինիանոս՝ Օրէնք ԻԸ, ՅճՁԲ:

² Կոստ. Ծիրանածին, «Վան Բանակաթեմաց» (Ա. էջ 21, 5, հրտ. Բոն քաղաքի): Տես յաջորդը:

³ Հմմտ. Notitiae. Անտրապոյի եպիսկոպոսը Նիկիոյ Ժողովին մէջ չ'երեւար: Ծանօթ ամենահին եպիսկոպոսն է Պարալիոս՝ որ Եփեսոսի Ժողովին կը ստորագրէ (տես վերը Բ, § 5): Lequien (Oriens christianus, I, p. 540) Անտրապոյի ուրիշ հինգ եպիսկոպոսներու ալ ցանկը կը դնէ, որոնց վերջինը ԺԱ զարուն վերջէն է: — Ռուհեյ՝ Պատ. Աշխ. էջ 321 կը նշանակէ թէ հոս ծնած է Ս. Հեսիսիոս. տես Acta SS. 6 մարտ, էջ 456՝ ἐξ αὐτῆς τῆς Ἀνδραπηνῶν γῆς ἕκφύς (բուսեալ յերկրէն Անտրապացոց). հմմտ. Synax. Sirmond. ed. Delehaye, p. 673, 2՝ ἐκ τῆς Ἀδραπηνῶν (—) πόλεως χώρας τῶν Ἀρμενιακῶν (Անտրապենաց քաղաքէ ալիսարհին «Հայոցոց կամ «Հայկականաց»՝ ըստ Ժամանակին բանակի բաժանման):

⁴ Տաճկական շրջանին մէջ ունեցած իւր կարեւորութեան մասին՝ տես Ռէրտէր, Աշխ. ԺԸ (Փոքր-Ասիա, Ա), էջ 434:

Գ. Ամասիա քաղաքը:

§ 7. *Խառնայի Մարզոսան*: — Ապրիլ 18ին շորեքշաբթի օրը Խառնայի թողուցիւք եւ բռնեցիւք դարձեալ խճուղին՝ որ Սամսոնէն դէպ ի Անատոլիոյ միջնաշխարհը կը տանի: Նախ խորամուխ կ'ըլլայ Տէրասիան-Սուի անձուկ հովտին մէջ. եւ տեղ տեղ քարաժայռը կտրելով բացուած է ճամբան գետէն վեր մեծ բարձրութեան մէջ: Այն լեռներն՝ զորոնք կը կտրենք կ'անցնինք այս նեղ խոխովէն, կը բաժնէին երբեմն Փաղիմնիտիսը՝ Ամասիոյ քաղաքին հողաբաժնէն: Խառնայէն ութ քիլոմետր անդին՝ Ամասիոյ գլխաւոր պողոտան քարէ կամբը-ջով մը գետն անցնելէն ետքը՝ դէպ ի արեւելք կը թեքի. իսկ Մարզուանի ճամբան՝ բլուրներու շղթայ մ'անցնելէն ետքը՝ շուտով կը մտնէ «Ջրերու-գաշար»՝ այժմու Սուլու-Օլու:

Խճուղւոյն ձախակողմը հորիզոնին վրայ կը նշմարուի հերձած շէնք մը, անտարակոյս մզկիթի մ'աւերակները (Պտկ.) գլուխը՝ կիսակործան գմբեթով, զոր կը պսակէր՝ մեր անցած պահուն՝ արագլի բոյն մը: Ասիկէ քսան վայրկեան անդին եւ Խառնայէն երեք ժամ հեռու Ջոնգոյ (Zougo) գիւղը քանդակի հետաքրքրական կտոր մը կայ: Այս խորաքանդակը (բարձրութիւնն իբր 0.45 m, լայնքը՝ 0.50 m) գծախտաբար ղետեղուած է փորորուած ծառաբնոյ մ'ետեւը՝ որ իբր հասարակաց ջրոյ կուր կը գործածուի, եւ չկրցանք տեղէն հանել տալ: Ուստի մեր հրատարակութեան մէջ (Պտկ.) քանդակին միայն վերին մասը կ'երեւայ. մարմնոյ վերնամասը մեծագլուխ մօրուսաւոր անձի մը՝ որ վերամբարձ աջ ձեռքին մէջ շանթ կը շողացընէ, իսկ ձախով՝ բոլորչի վահան մը կը կրէ: Այս շատ թանձրարուեստ գործը յայտնապէս բնիկ քանդակագործի մ'աշխատութիւնն է, եւ մէտ եմ այս պատերազմիկը Անատոլեան որեւէ դիք մը համարիլ:

Թերեւս Գիոսի Մարտկի (Zeus Stratios) մէկ նախնին ըլլայ, որ այս աշխարհիս մէջ կը պատուուէր Միհրդատի շրջանին (§ 10):

Զուգոյ միայն մէկուկէս ժամ հեռու է Մարշանէ, որուն՝ մեծ ընկուղենիներով հովանաւորուած՝ պարտէզներուն դօտին, անմշակ դաշտիս մէջ, կանաչագեղ դալարավայր (ովասիս) մը կը կաղմէ (Պտկ. մեծ): Տարածուած ընդարձակ բլրոյ մը վրայ, որ Թաւշան-Տաղի վերջին լեռնաճիւղն է, լաւ ոռոգուած դաշտի մը մէջ, ծաղկած մնացած է այս քաղաքը, թէպէտ եւ վերջին տարիներուս քաղաքական խռովութեանց պատճառաւ վնասուած: Իւր այգեստաններու եւ մրգաստաններու բերքը միշտ իրեն կ'ապահովէ աստիճան մը բարեկեցութիւն, որչափ ալ իւր վաճառականութիւնը ներկայիս վայրկեանական անկածութիւն մ'ունենայ: Քսան հաղարի մօտ բնակիչ ունի՝ թուրք եւ հայ, եւ նիստն է Ամերիկեան Քարոզաց գլխաւոր հաստատութեան, որոնք կը սկսին հետաքրքրուիլ երկրիս հնութիւններով, ուսկից հնախօսութիւնն ալ պիտի օգտուի: Յիսուսեան Առաքեալներն ալ քանի մը տարիներէ վեր հոս հիմնած են դաղղիական դպրոցներ, որոնց բարգաւաճումն այսուհետեւ ապահովուած է:

Մտաւոր կրթութեան այս կենդրոնը բնականապէս պիտի աշխատէր իւր անցեալը փառաւորելու: Ուստի շուտ մը մտադիր եղան թէ Մարշան անունը (Mersivan, նաեւ Marsovan կամ Merzifoun յորջորջուած,) գրեթէ վանկադարձութիւն մ'ըլլայ Փշման անուան. եւ այս դիտողութենէն հետեւցուցին երկու քաղաքներուս նոյն տեղն ըլլալը, Ստրարոնի այնպէս ճշգրիտ ու մեկին բնագրին ալ ի հեճուկս: Բայց Փաղիմոնի տեղն ի հարկէ ըլլալով Աէդիր-Քէօփրիւ՝ հաղիւ թէ կա-

բելի բլայ արգարացրնել Մարդուանի հոռմէական ծագում մ'ունեցած բլայուն յաւակնութիւնը: Այս բաղմամարդ քաղաքիս մէջ գրեթէ որեւէ հին բեկոր չի գտնուիր. այն քանի մ'արձանագրութիւններն՝ որ այս տեղ եղած կը նշանակուին (Թ. 147 եւն)՝ գրտէն հոս բերուած են, կամ գտնէ անձանօթ ծագում մ'ունին: Տան մը շինութեան մէջ գործածուած կորնթական խոյակ մը՝ ճարտարապետական այն ցանցառ հատակօտորներէն է՝ զորոնք յաջողեցանք հոս գտնել (Պտկ.):

Ուստի որեւէ փաստ չունինք Մարդուանի գոյութիւնը մինչեւ հնութեան օրերը հանելու: Միւս կողմանէ իւր հիմնարկութիւնը Տաճկաց աշխարհակալութենէն հին է: Ժէ դարու կիսուն է՝ վիլյայ էֆէնաի կ'անուանէ զասի «հին քաղաք մը՝ զոր վերաշինեց սուլթան Բայազիտ¹», եւ իւր զարգացումն ապահովապէս Բիւղանդական շրջանէն է: Աւանդութիւն մը, զոր հաճութեամբ կը կրկնեն բնակիչները, Մարդուանի հետ կը կապէ Ս. Վառփառեայ պատմութիւնը: Շուկային մօտ կը ցուցրնեն ստուար որմաքարերով շինուածի մը մնացորդները, որուն թանձր պատերն ու կամարակապ սրահները կարծես միջինդարեան դղեակի մ'ըլան: Արդ այս աշտարակին մէջ, կ'ըսեն, սրբուհին արգելափակ եղած բլայ իւր հօրմէն: Չուանագործ մը այսօր իւր առասանները կը մանէ այս մեծարոյ շինուածին մէջ: Նաեւ բաղնիքին (համամ) մէջ կը ցուցուի այն քարը՝ որ ճեղքուած էր ընդունելու համար սրբուհին՝ մահուանէ ազատելով:

Վկայաբանութեանց հին խմբագրութեան մը համեմատ Ս. Վառփառէ՝ զոր նաեւ Նիկոմեդիա եւ ուրիշ քաղաքներ իբրեւ իրենցը կը պահանջեն, ստուգիւ Պոնտոսի մէջ ապրած բլայ: Այն պատմուածքին համեմատ՝ ծնած էր սրբուհին «Գել-

1 Համա. Ռէպրէ, Աշխ. ԺԸ, էջ 185:

— Կամ ԳԷԼ՝ — զի զքէ Լեզուարարայ երկրին Աջ՝
 Արարչարարէ տասնուերկու միսն հեռու¹։ Ար-
 պէտք ենք կարծել թէ ուրեմն Մարզուան կը հա-

՝ Այս խմբագրութիւնը կը գտնուի բազմաթիւ
 Եւրոպայի երկրներու մէջ, յատկապէս Չարք. յիշ թ. 770
 Պարիզի՝ 1315 տարիէն, թղ. 33. եւ թ. 1463՝ ԺԱ զարեւն,
 թղ. 183: Հրատարակուած է՝ Viteau, Passions des
 Saints Ecaterine etc. Paris 1897, p. 90 ff. Ահա սկզբն ու
 վերջը՝ որոնք Չեռագրաց մէջ տարբեր ընթերցողներու
 էին: Սկիզբը՝ «Ընդ մամանակսն ընդ սցնութի թագաւորաց
 ամբարիշտ եւ անորենն Մարտիրոսն, եւ զորանոց հա-
 լածուսն քրիստոնէից . . . յայնժամ աւարեաց զմե զա-
 տուար յարեւելս, որում անուն էր Մարկիանոս, որ էր
 ազգու եւ կրօնիք Հելլենացի: սր անասուած մանկա-
 ման եւ վարեմամբ եւ եկեալ նորա յաշխարհն արեւելից
 Էլէպոսիէն կոչեցեալ քաղաք՝ որ առ Սեբասիան քաղաք,
 որ մերձ յԷփեսոսն է քաղաք քուն ասպարիզու (Հայ
 միւս ար. . . մերձ Արարչարար եւ ի ԳԷԼ՝ — զեղն: որ
 հետէ է Արարչարար քուն ասպարիզու)»: եւ էր անդ սր
 մը ընտելեալ որում անունն էր Գեղարարս եւն (= Յղձը՝
 «*Ην δὲ ἐν τῇ χῳρῳ τῇ ἀνατολικῇ τῇ λεγομένη Ἡλιουπόλει*
ἀνθρ καταικῶν ἐν χωρίῳ ἐπιλεγομένῳ Γελασίοις (սղ. օր.
Γελασίοις, Γελασίοις, Γελασίῳ, Ἰελασσοῦ) ὡς ἀπὸ μιλιῶν
δεκάδου Ἐϋχαϊτῶν. Διόσκορος ὄναμα αὐτῶ. . ., սցորդն
 Եւ էր յաշխարհին արեւելից ի Հելլուպոլիս կոչեցեալ քա-
 ղաքի սր մը ընտելեալ ի զեղլ կոչեցեալ Գեղարարաց,
 հետէ Արարչարարաց իրեւ ժ.Բ ասպարիզու: Գեղարարս
 անուն նորա եւն): Ա՛րջը՝ Հայ ընտելի «Իսկ սրս սնն Աս-
 ղեմարարս անուն՝ ասուածապաշտ եւ երկիցած յԱս-
 տուսոյ, թնգրեաց ի փոխանակէ զաստուրին զնշխարս
 սրբոն, եւ պատուական զգեալիք պատեաց զնասս. եւ
 զաստուղ պահեաց, եւ Բաղթ Բրձ յԷլէպոսիէն քաղաքի.
 եւ միջեւ քաղաք նշանադրենն նշխարս սրաց փայտեմն
 եւն Յղձը վերջը . . . *ἐν τόπῳ καλουμένῳ Ἡλιουπόλει τῆς*
Νύσου (սղ. օր. τῆς νήσου) ἐν Γελασίοις χωρίῳ ἐν
οἰκίῳ σεννῶ ὡς ἀπὸ μιλιῶν δεκάδου Ἐϋχαϊτῶν, σγ-
թըն՝ . . . (Թագեաց) ի տեղով կոչեցեալ Հելլուպոլիս
Նեպոս (սղ. օր. կրկ. ց) ի Գեղարարաց զեղլ ի Գեղե-

մայրամասի անկե Գեղասեպի եւ իւր բախար պարտական ըլլայ Ս. Ալարվանեայ նշխարաց՝ զոր ունէր: Ասի շատ հաւանական շ'երեւար. որովհետեւ պատմութեանս հեղինակը՝ հաւանօրէն Եւրայիտացի կրօնաւոր մը՝ որ կը պնդէ թէ մարտիրոսուհւոյն շիրիմը տեսած ըլլայ եւ այն մարմարեայ աւազանն՝ ուր կու գոյին հրաշալի բժշկութիւններ գտնելու համար, անոր տեղը կը դնէ հոշակաւոր մենաստանէն ճշդիւ «երկուստասան ասպարէզ» (մղն) հետու: Արդ Մարցուան իրր յիսուն քիլոմետր հետու է Էլվան-Չէլէրիէ, ուր Անդերսըն իրաւամբ կը դնէ Եւրայիտացի տեղը՝: Ըստ այսմ՝ կ'երեւայ թէ՛ մեր կամոյց ալ դէմ՝ տեղագրութիւնը կը հակառակի այն կէտին թէ վիայագրին նկարագրած յիշատակարանները նոյն ըլլան անոնց

ցիկ շիրիմ՝ հետի Եւրայիտացոց իրեւ. երկուստասան ասպարէզաւ» — [Հոյր զրեմբ ըստ «Ալար եւ Ալի» յ Անեւ. 1874, Բ, 355 եւ 365, նշանակելով յունի մասն զլիսուոր ասրեբուութիւնները: Հոյ բնագիրը յամենայն զէպօ անագրաւ չէ. ուրիշ բնագիրները հոս աւելորդ է կշեւէ:]

2 Ցեւ վերը՝ Ա. § 3: Պաշտմաս Է. 4. 4 կը ճանչնայ զիւղ մը Գելլա (Γήλακα, պլ. օր. Γέλακα) անուամբ. բայց ասի Պափղագոսից մէջն էր՝ Գանդրայի հիսիւարեւ. երեւան կողմը: Ասիկա զժուարաւ կրնայ մեր Գելլա (Γελάσια) զիւղն ըլլալ: Թ դարուն Եւրայիտացի արքեպիսկոպոսութեան օրնական եպիսկոպոսանիսա Կթաններէն մին էր Գալլա (Γάλα, հմտ. Gelzer, Notit. Episc. Abh. Akad. München, XXI, 1900, p. 559, հմտ. 566): Այս անունը համեմատած են նաեւ Գալլաի հետ՝ բայց աւանց իրաւունքի (տես վերը՝ Բ, § 2): Թերեւս ասի ըլլայ Գելլա-Էլլա՝ Γελάσια. — Ա կոչարանութեան յիշած Հելլա-Կալլա (Ηλιοπόλις, «Արեգական քաղաք») անձանութ էր Գանասի մէջ: Արդեօր խանդարմ մ մըն է փիւ. Χιλιόπολις (Քիլլա-Կալլա) — Χιλιόκωμον (Քիլլա-Կալլա): Աս ալ անհաւանակ է:

չինուած էր մեծամեծ քարերով՝ զորոնք մերե-
նայից օգնութեամբ կը բարձրացրնէին¹։ Եւ թէ
չըջակայքը որթատուենկը կը մշակէին²։ Այս ամէնը
կատարելապէս կը յարմարի մեր յիշած աւերակ-
ներուն եւ Մարզուանի դրից։ Միայն թէ աեղական
աւանդութիւնք Ս. Գորոթեայ որեւէ յիշատակ մը
պահած չեն³։

1 Էջ 612 E — Lagarde, p. 216, § 33.

2 Էջ 612 F — Lagarde, p. 216, § 35.

3 Է. Ժիրարի ինձի հազորդած աեղեկութեանց
համեմատ՝ Սուլու-Օփայի մէջ Ուլ-++էջ գիւղին մօտ
(որ Ալալայի արեւելակողմէ է), Տէրսական-Սուի սեպագին
գրայ՝ մահմեդական կրօնաորի գերեզման մը կայ՝ որ Կաշի
(Gaghni) կ'ըսուի, եւ անկէ քանի մը քայլ դէպի հարաւ-
արեւելք՝ ներքնականոց շինուածամասեր՝ որ տակաւին
լաւ տեսնելի են։ Հողին երեսն ալ կան գեղեցիկ շորք-
կուսի քարեր, որոց մին՝ սեղան մըն է հինգ խաչով, մէկը՝
կենդրոնի գրայ, միւսներն՝ անկիւնները։ Ասոնք մնացորդներ
են հին եկեղեցոց մը եւ յարակից մեծ շինութեան մը՝
հաւանօրէն մենաստանի մը։ Հոս ուխտի կու գան առ
Ս. Թէոդորոս՝ Ե. քայիտայի մեծ սուրբը։ Կարելի է, ինչ-
պէս մտադրի կ'ընէ թղթակիցս, որ այս հռչակաւոր սրբոյն
անունը բռնած ըլլայ աւելի քիչ ծանօթ Գորոթէոսի
անունն աեղը։ Սակայն աւերակներուն դիրքը չ'երեւար թէ
համաձայնի այն նկարագրութեան հետ՝ զոր Կենսագիրը կու
տայ յիշեալ մենաստանի մասին։ — Այս կենսագրէն կ'ի-
մանանք դարձեալ թէ Գորոթէոս իրեւ վանական կանոն
ընդունեցաւ իւր վանաց համար զայն՝ զոր Արսենիոս դրած
էր դրացի Ուլի++ք վանքին (էջ 210 — p. 214. § 22 Լագարդի՝
τῆς χροστῆς καλουμένης Πέτρας, οὐδ' ἐκαίη δὲ πόρρω).
Այս վերջին վանքը յիշուած է նաեւ Ս. Նիկոնի Ապաշ-
խարոզի (Ժ. դար) վարուց մէջ, որուն յոյն բնագիրը՝ Բար-
բերինեան օրինակի մը մէջ պահուած (հմմտ. Anal. Bollandiana, XIX, p. 212)՝ տակաւին անտիպ է, բայց որուն
լատին թարգմանութիւնը հրատարակած են Martène եւ
Durand (Veterum script. ampl. coll. VI, 1729) եւ որուն
մէջ կ'ըսուի. «Եկն ի Պանտոս եւ մերձեցաւ ի լեառն որ է
ի սահմանս Պանտոսի եւ Պափղագոնիայ, յորում մենաստան».

§ 8. *Սուրու-Օվա*: — Մարզուանի հարաւա-
կողմը կը տարածուի Սուլու-Օվա մեծ գաշար,
յայտնապէս ցամաքած լիճ մը, որուն ջրերն իրենց
ճամբայ մը բացած էին դէպ ի Հիրիկ գետ: Այս
ընդարձակ աւազանը քառասուն քիլոմետրէ պա-
կաս երկայնութիւն չունի արեւելքէն արեւմուտք,
իսկ լայնութիւն՝ տասնուհինգ քիլոմետր: Յորչափ
Մարզուան փազիման՝ Նեապոլսոյ հետ կը նոյնա-
ցուէր՝ Սուլու-Օվան ալ անհրաժեշտաբար նկա-
տուելու էր իբրեւ Փազիմանիտիսի կենդրոնը: Բայց
իրականին ուրիշ բան չէ՝ բայց եթէ «*Հազար Գիւ-
ղերու*» Գաշար (*Χιλιάδων πύλον*), որ՝
Ստրաբոնի ճշգրիտ նկարագրութեան համեմատ¹,
Ամասիոյ կրճին բերանը կ'իյնար, եւ որուն շարու-
նակութիւնն էին գաւառներս՝ Գիւղերնէ (այժմ
Հաջի-քէոյ վիճակը՝ «*գաղա*») եւ Պիւնիէնէ
(այժմ՝ Օսմանջիկ վիճակը²) մինչեւ Աղիւս գետ,
որ Պոնտոսի այս հին մայրաքաղաքին երկրամասը
կը սահմանէր: Այս ընդարձակ եւ բերրի գաշտին
մէջ էր որ Միհրդատ 150,000 հոգւոյ բանակ մը
հաւաքած էր՝ երբ Հռոմի հետ զժտեցաւ 88ին
Ն. Ք³. իսկ ինն հարիւր տարի յետոյ (838ին)

է՛ որ կոչի Ուլիտեր (Chryse Petra) ըստ հնագոյն սովորու-
թեանն: Գործեալ Սիրմոնգի Յայսմաուրբը (էջ 254, հրա-
Delehaye) Նշիմբեր 26ին կը նշանակէ՝ «*Յայսմ աւուր յի-
շատակ սրբոյ հօր մերոյ Գրեթերէ - ր յՈւլիտեր*» (*μνήμη τοῦ
δοσίου πατρὸς ἡμῶν Γρηγορίου τοῦ ἐν Χρυσῇ Πέτρῳ*),
որ ծնած էր «*Արեւելոյ*» Այս Ուլիտերը փնտաւելու ենք ան-
տարակիցս Թաւան-Տաղի մէջ, բայց չեմ գիտեր թէ կը
կենսան արդեօք ասկաւսին վանքին աւերակները:

¹ Ստր-բն. Ժ. Բ. 3, 39:

² Հմմտ. Անթեր-բն. վերը՝ Ա. § 42:

³ Միհր-բն. ԳԼ. Լա կը գրէ (տես FHG. II, p. 541):

Δρας ἀπὸ τοῦ πρὸς τῇ Ἀμασίᾳ πεδίου διὰ τῆς Παφ-
λαγονίας ἦεν πεντεκαίδεκα μυριάδας στρατὸν ἐπαγόμενος
(ի գաշտէն որ առ Ամասիա ընդ Պափղագոնիա երթայր)

պարունակէ շափական տապանագիր մը՝ որ յաճախ հրատարակուած է (թ. 164). ուրիշ մ'ալ նոյն տեղոյ հասարակաց աղբիւրին վրայ ըլլալու է (թ. 165): Ասկէ ետքը քերելով անցնելով բլուրներու քովէն՝ որոնք դաշտը կը պատեն հարաւարեւմտքէն, հասանք Տ--ըն--ի, թուրք գիւղ մը, որմէ կ'անցնի մեծ վտակ մը, որ լեռներէ կու գայ եւ նախ աղայի մը ջրաղացը կը դարձընէ (արձ. թ. 159), եւ յետոյ կ'երթայ Սուլու-Օվայի արտերն ոռոգելու: Տուռնուկ շորս արձանագրութիւն մատակարարեց, որոնց երկուքին թուականն է 135 եւ 202 Յ. Բ. տարիները: Հինգերորդ մ'ալ՝ 149 Յ. Բ. տարիէն՝ շատ հեռու շէր՝ Գէլիէօյ գիւղին մէջ: Բայց հնութեանց կողմանէ ամէնէն բեղունն էր Գէլ-Գիւր-շ (Ghel-Ghiraz), որ ժամ մ'աւելի դէպ արեւելք է: Բաց ի բազմութիւ գերեզմանաբար-կութողներէ (թ. 153—157)՝ գտանք մզկիթին մօտ մարմարեայ գեղեցիկ բազին մը՝ Գիոսի Մարտիի նուիրուած ձօնով մը (թ. 152): Կ'երեւայ թէ բանակաց պաշտպան այս դից մեհենէ մ'ըլլալու են ճարտարապետական բազմութիւ բեկորներն, որոնք ցանուցիր ցրուած են գիւղիս մէջ: Մզկիթին տանիքը վեր բռնուած է փայտեայ մոյթերով՝ որոնք կը հանգչին երկու զլխիվայր դարձած խոյակներու վրայ, մին՝ յոնիական, միւսը՝ կորնթական¹, եւ երրորդ մը ծածկուած է թուրքի մը տան գաւթին մէջ: Մզկիթին քով կանգուն կը կենայ կարմիր մարմարէ սեան մը գեղեցիկ բուն մը, ծնօտի հատակոտոր մը իբրեւ տախտ կը դործածուի բազնիքին մէջ, եւ ուրիշ մը գետին ինկած է գերեզմանոցին մէջ. վերջապէս մարմարեայ մեծ

¹ Ծառան էր, միոյն՝ բարձրութիւն 0·40 m, լայնքը՝ 0·50 m, արամագիծը սեան բնոյն 0·30 m. միւսինը՝ բարձրութիւն 0·41 m. լայնքը վերնախարսիին՝ 0·63 m, եւ սիւնարնոյն արամագիծը՝ 0·48 m.

քարեր գործածուած են նոր շինութեանց մէջ կամ գործածուելու կը սպասեն: Գէլ-Գէր-շի վրայ տիրող բարձունքէն զմայլելի տեսարան մ'ըլլալու էր՝ երբ այժմու տխուր տափաստանին տեղ՝ կը նշմարուէին «Հաղար Գիւղերը» գեղածիծաղ դաշտի մը, պարփակուած թաւշան-Տաղի եւ Ակ-Տաղը անտառապատ լեռներով: Լեռնէն անջատուած է լեռնացուկ մը՝ արգի գերեզմանոցէն վարը, որուն միահարթուած կատարը այնպէս կ'երեւայ թէ կտրուած ըլլայ կանոնաւոր բաղմանկեան ձեւով: Անտարակոյս այս փոքր սարահարթին մէջտեղը կանգնած էր Գիոսի Մարտիի մեհեանը: Ուրիշ աւելի նշանաւոր տաճար մը՝ նոյն գից նուիրուած՝ կը պսակէր, ինչպէս պիտի տեսնենք (§ 10), Ամասիոյ հողին ուրիշ մէկ լեռնագագաթը, եւ պիտի վերագառնանք այն պաշտաման՝ զոր այն գիք կը վայելէին Միհրդատայ մայրաքաղաքին մէջ:

Գէլ-Գիրաղէն շուտով վերագարձանք Մարգուան՝ առատաջուր դաշտին վրայէն, անցնելով գիւղերէս՝ Աբ-ձալ (Abadzale), նոր հիմնարկութիւն մը Չէրքէզ գաղթականներու, եւ Աբ-Էօյ՝ որ ընդարձակ հայ վանք մ'ունի 1786ին հիմնուած:

§ 9. Ամասիա: — Ապրիլ 22ին առանց դժուարութեան կտրեցինք անցանք այն քանի մը մղոնը՝ որով Մարգուանէ կը բաժնուի Ամասիա քաղաքը: Խճուղին կ'անցնի՝ գրեթէ ուղիղ գծով՝ Սուլու-Օվայի անմշակ եւ ճախճախուտ դաշտէն (Պակ.): Գէպ արեւելք հորիզոնին վրայ կը կանգնի Ակ-Տաղի բարձրաբերձ ալէխառն պարիսպը, որուն սարածագերր մինչեւ ամառ ձիւնապատ կը մնան, հզօր լեռնազանգուած մը՝ որ իւր ծալքերուն մէկուն մէջ կը պատսպարէ Լատիկը՝ Պոնտոսի հին Լաւոդիկէն¹: Ուղին՝ բլուրներու ստորոտին հետեւէն ետքը, որոնք դաշտը հարաւէն կը սահ-

1 Հմտ. Արտի-ըն, վերը՝ Ա. § 34:

ճանեն, կը մտնէ Տէրսական-Սուի կիրճը, երկու անգամ գետն անցնելով մէկ ամէն միւսը: Այս նեղ հովտին քաջաբերութիւնը, որ ծայրէ ծայր պտղաբեր ծառերով տնկուած է, հակապատկեր մըն է զինքը պարփակող բարձանց երաշտին լերկութեան դէմ: Այս մանուածապատ բաղանջքին մէջ երկու ժամ շրջաններ բնելէն ետքը՝ յանկարծ վերջին դարձուածքէ մ'ետքը կը նշմարուի կոն մը՝ գազաթն անեղր աւերակներով. ասիկա Ամասիոյ բերդն է:

Շուտով հին կամրջէ մը, որուն հիմերն անտարակոյս երկու հազար տարիէ աւելի հին են, կ'անցնինք Եէշիլ-Իրմակը, հին Հիրիկը, անոր՝ Տէրսական-Սուի խառնուելու տեղւոյն մօտ: Արդէն Ստրարոն¹ կը յիշէ այս կամուրջը՝ կրճին ծայրը, այն տեղն՝ ուր կ'ընդհատի բերդի լերան շարունակութիւնը, եւ որով երբեմն աջ ամփի արուարձանը կը հաղորդակցէր դաշտին հետ: Տէրսական-Սուի վրայ ալ կամուրջ մը ձգուած է, որուն կանոնաւոր կարգածով շինուած ստորին քարաշարքերն յայտնապէս շատ հին են, բայց որուն երկու կամարները, մին՝ լիակամար (կիսաբոլոր), միւսը՝ սրկամար, նորոգուած են ամէն տեսակ ատաղձներով (տես Պտկ.): Տեղերուս հանգամանքն աներկբայ կ'ընէ թէ հնութեան մէջ ալ՝ ինչպէս նաեւ այսօր՝ այս տեղերէն կ'անցնուէր թէ օժանդակ գետէն եւ թէ բուն գետոյն վրայէն. սակայն ուղխագծին մակերեսով զգալապէս բարձրացած ըլլալու է. Ամասիոյ գաւառապետը (մալապետը), որ օսմանեան հին դիւանագէտ մըն է եւ շատ կրթեալ անձ մը, պատմեց թէ Եէշիլ-Իրմակի վրայ վարչատան զիմաց՝ նոր կամրջի մը հիմերը փորելու ժամանակ՝ արդի հողին տակ երկու կամ երեք մետր խորութեամբ գտնուեցան հին կամարակալներու ստորա-

¹ Ստրարոն, յ. Բ, 3, § 39, էջ 561 Ե.

կառոյց շինուածամասերը, եւ միեւնոյն ժամանակ դրամներ: Ա՛յսչափ խորունկ թաղուած այս որմերը վերաբերելու են Հիւրիկի վրայ ձգուած ուրիշ կարմրջի մը՝ զոր Ստրաբոն կը նշանակէ¹, եւ որ բերդաքաղաքը կը կապէր գետոյն միւս ափն եղած իւր արուարձանին հետ: Այլուստ մենք ալ անձամբ կրցանք ստուգել թէ Եէշիլ-Իրմակի վրայ երկու յաջորդական շինութիւնք նմանապէս վրայէ վրայ մակադրուած են²: Հիւրիկ անցնելէն անմիջապէս ետքը Ամասիա քաղաքը կը մանենք: Եթէ նաեւ քաղաքին հետ կապուած շրջային այնչափ յիշատակներ, միշտ հռչակաւոր պիտի ըլլար իւր դրից գեղեցկութեամբը: Իւր նկարչագեղ շքեղութեամբն արժանի եղած է Թուրքաց կողմանէ «Ռումի Պաղտատ» յորջորջանաց, եւ զմայլանք ազգած է ամէն Եւրոպացւոց, որոնք այցելած են այս քաղաքը, սկսեալ մեր Busbecqէն՝ որ 1555ին եկած է հոս գեսպանութեամբ՝ խաւրուած Սուլէյման Մեծ սուլթանին մօտ³: Եւ յաջողարար կը նմանցընէ թատրոնի մը, ուր՝ ո՛ր աստիճանաշարքի վրայ ալ մէկը գտնուի, հրաշալի տեսարան մը կը վայելէ: Մանաւանդ արեւելեան բարձունքներէն գրաւիչ է տեսարանը⁴: Գիմացը դէմ առ դէմ կը կանգնի՝ գետէն վեր գրեթէ երեքհարիւր մետր բարձրութեամբ, մերկ, հերձոտեալ եւ անձրեւներէ լուացուած քարաժառին վեհատեսիլ զանգուածը, որուն կրկնակատար արտեւանը պսակուած է հսկայածաւալ գղեկի մը խարխլած պարսպորմերով: Իւր խողանածեւ փեռեկտած կողերուն վրայ դարատափ մը՝ զոր հին պատ մը վեր կը բռնէ,

¹ Ստր-բոն, անդ:

² Տես վարը՝ § 15:

³ Busbecquius, Itinerarium Constantinopolitanum et Amasianum. Anvers 1582, p. 59 ff.

⁴ [Տես բնագրին էջ 150 մեծագիր գեղեցիկ պատկերը՝ «Ամասիա, Արեւելեան բարձունքներէն» առնուած:]

կը ցուցընէ այն տեղն՝ ուր Պոնտոսի արքայից հին պալատը կանգնած էր, եւ որոնց ընդարձակ գամբրանները՝ ապառած ժայռին մէջ փորուած, աւելի վերն իրենց լայնարաց բերանը կը ցուցընեն։ Այս գահազէտ կոնաժայռին ոտքը կ'երկարաձգուի քաղաքը մահակի ձեւով. փողոցիկներու ցանցակերպ մը եւ տանիքներու խառնակոյտ մը՝ ամփոփուած դառիժափին ու գետոյն մէջտեղ, եւ վերջնոյս վրայ դուրս կը կարկառի տներուն վերջին շարքը։ Գետոյն միւս ամրակողմը, ուր անջրպետն այնպէս խնայողօրէն շափուած չէ, մզկիթները, շուկաները եւ բնակարանները նեղ հովիտը գրաւելէն ետքը՝ աստիճանաբար կարգ կարգ կը զետեղուին դառիժեր բլուրներուն վրայ՝ ուռճալիք պարտէզներու մէջ, որոնց ամէնուն վրայ կ'իշխէ Չակալար Երաշտին լեռը։ Եւէշիլ-Իրմակ՝ «Կանաչ Գետը», զոր կը կտրեն չորս կամուրջներ եւ ջրարգելներ ջրաղացներուն՝ զորոնք կը գործընէ, որոնքաց կը սահի երկու թաղերուն մէջէն, եւ կը բոլորի բարձր բերդին շուրջը, որ անոր վճիտ ջրերուն մէջ կը ցուանայ։ Քաղաքէն դուրս՝ գետն ի վեր գալարապտոյտ կը սողայ գետը կրկիսանման լեռնահովտին մէջ, զոր հեռաւոր լեռները պատելով կը փակեն, այն մրգաստաններուն մէջէն, ուսկից մինչեւ Կ.Պոլիս կ'արտածուին Ամասիոյ հռչակաւոր խնձորները։

Արդէն Տավերնիէ կը նշանակէր¹ թէ «Ամասիոյ հողը լաւ է, եւ հոն կը հասնին Նագոլիոյ ընտրելագոյն գինին եւ ընտրելագոյն պտուղները. բայց, կը յաւելու, միայն երկու յոռի քարուանսարայ կայ հոն», Բարեբախտաբար մենք պէտք չունեցանք փորձով ստուգելու թէ իջեւանները (խաներ) քիչ մ'աւելի բարւոյրուած են արգեօք ժւ. գարէն ասդին։ Մենք Ամասիոյ մէջ սրանչելի

¹ Les six voyages de Tavernier, ed. 1679
I, p. 10.

շարաթ մ'անցուցինք՝ վայելելով Պր. Արուգի (Krug) տան ասպնջականութիւնը, որ բոլոր հնասխօսներու համար թանկագին առաջնորդ մըն է այս քաղաքին մէջ՝ ուր ծնած է:

Պոնտոսի որեւէ քաղաք չի կրնար Ամասիոյ հետ համեմատուիլ յիշատակարանաց կարեւորութեան կողմանէ: Ամասիա՝ որ Միհրդատեանց գահանիսան էր, հռոմէական շրջանին՝ մայրաքաղաք, միջին դարուն՝ արքեպիսկոպոսանիսա, առաջին սուլթաններու յաճախ բնակավայր, պահած է իւր պատմութեան այլեւայլ շրջաններուն յիշատակները: Հոս չենք ուզեր ձեռնարկել այս ամէնը մանրամասնօրէն նկարագրելու, — որուն համար առանձին հատորի մը պէտք պիտի ըլլար. — այլ կը շատանանք այլեւայլ կէտերու մասին մեր անձնական գիտողութիւններով լրացրնել այն տեղեկութիւնները՝ զոր հաղորդած են մեր նախորդները, ինչպէս որ վերաբննած ու ճոխացուցած ենք արձանագրութեանց շարքը՝ զոր անոնք հաւաքած էին (Թ. 94—138):

Ամէնէն յառաջ բերդին աւերակներն են որ ուշադրութիւնը կը գրուեն, եւ որոնց մասին Ստրաբոն¹ ճշգրիտ ծանօթութիւններ կու տայ: Իւր յիշած երկու կատարներն այսօր ալ պահուած են աւերակ աշտարակներով. այս երկուքին միջեւ խորաքամակ լեռը ստուգիւ կը կազմէ տեսակ մը պարանոց (αὐχίγ), որ երբեմն շրջապատ պարսպին մէջ տանուած էր²: Բերդը՝ որ ցցուած է քաղաքին միջավայրը եւ որուն պարտական է անտարակոյս քաղաքն իւր ծագումը, մատչելի է միայն լեռան շուրջը գարձող մանուածապատ երկայն շրջանով մը, եւ ուր այսօր կը մտցուի անպիտան ցած դռնէ մը՝ ժայռեւոր աշտարակի մը քովը (տես Պտկ.)³: Պա-

1 Ստր-բ-ն, Ժ.Բ, 3, § 39:

2 Հմմտ. յատակագիծը:

3 [Տես բնագրին 154—155 շորս պատկերներ՝ բերդին

րիսպները կը տարածուին ամբողջ գաղաթան վրայ եւ կրաքարային այս սարածագին ամէն անհարթութիւնէք գործածուած են զանի շատ աւելի քաջամուր ընելու համար: Իւր գրեթէ անվկանդ զիրքը պատճառ եղած է որ այս երկրին ամէն աշխարհակալները մինչեւ ԺԹ գար՝ նոյնք գրաւած են¹, եւ ասով կրած է յաջորդաբար նորոգութեանց շարք մը, որոնք իւր նախնական նկարագիրը լեովին այլափոխած են: Նոյն իսկ մուտքին վրայ կ'անցնինք դռնէ մ'որուն բարաւորը Բ գարու քովթարի մը բեկորն է (արձ. Թ. 97). եւ զոր մինչեւ հոս լերան գլուխը հանած բերած են (տխտկ. շորս պտկ.): Առանց երկար ուսումնասիրութեան անկարելի է որոշել թէ իրարու խառնուած սրահներուն իւրաքանչիւրին նախնական նպատակը, եւ թէ շատ անգամ վերաշինուած պարիսպներուն ժամանակը: Ասոնց ոմանց վարի մասերը ստուգիւ հնութեան ժամանակէն են, եւ այլեւայլ որմասարիսխներն անտարակոյս մինչեւ իսկ Միհրդատայ շրջանէն են: Այսպէս ամենաբարձր կէտին վրայ կանգնած մահարձանին մնացորդները կը պարունակեն կարեւոր մաս մը՝ վերին կէսը նորոգուած՝ այն աշտարակին, զոր Ստրաբոն կը յիշատակէ: Ասի շինուած է մեծասարուած կերպով. իւրաքանչիւր քարաշարք կազմուած է ուղղանկիւն վիմաքարերէ (երկայնութիւն 0.94 m, բարձրութիւն՝ 0.48 m եւ լայնութիւն՝ 0.40 m). քարերը փոփոխակի գրուած երկայնքին ու լայնքին. եւ

արդի մուտքը, քովթարի բեկոր մը՝ որ իբր բարաւոր գործածուած է, Գրեկին մահարձանը, եւ Մահարձանին հին պատը:]

¹ Բուսրէք 1555ին կը նշանակէ թէ այս միջնաբերդին մէջ բազմաթիւ պահակազօր կար (անդ). եւ Աւան-Լէննէպ 1844ին կը գտնէր տակաւին նեակեր եւ զինուոց ուրիշ կտորներ՝ զորոնք հոն թողուցած էին թուրք զինուորները (Van Lennep, Travels in Asia Minor, I, p. 88):

քարին արտաքին երեսը թեթեւ կերպով կորրն-
թարդ եղած, այնպէս որ խոր մնացած քարա-
կցուածքները կը պաշտպանուէին խոյի հարուած-
ներուն դէմ:

Ապահովապէս դղելին ամենահին մասն
է այս մահարձանը: Եւ ասի բացայայտ կը հետեւի
Ստրաբոնի նկարագրութենէն, որ յաճախ սխալ
հասկցուած է: Իւր ժամանակ Ամասիոյ ամբու-
թիւնները կաղմուած էին՝ շրջապատ պարսպէ մը,
որ Հիբիկի ձախ ափին երկայնութեամբ կը տարա-
ծուէր եւ երկու կողմերէն վեր կ'ելլէր կը բարձրա-
նար մինչեւ լեւան երկուորեակ կատարները, որոնց
վրայ զօրաւոր աշտարակներ շինուած էին: Չ'ե-
րեւար թէ երկուքին մէջ եղած միջանկեալ պարա-
նոցն ուրիշ շինուած մ'ունենար՝ պարզ պարսպէ
մը դատ:

Արեւմտեան կատարին մօտերը կը բացուի
ներքնուղղոյ մը բերանը, որ փորուած է ապառաժ
ժայռին մէջ եւ ուղիղ գծով կ'իջնայ մինչեւ ըն-
դարձակ ընդունարան մը՝ ուր կը հաւաքուէր կրաքա-
րին մէջէն քամուած անցած ջուրը: Ասիկայ մին է
այն անառիկ ջրամբարներէն՝ որոնց մասին կը խօսի
նոյն աշխարհագիրը, եւ որոնց կը հասնուէր նեղ
փողանցքերով, որոնց մին փորուած էր լեւան
կողէն սկսելով, — եւ ասիկայ է այժմ մնացածը
— միւսը՝ գետոյն քովէն սկսելով¹, — եւ ասի ան-
տարակոյս շատոնց արդէն լեցուած խցուած էր²:
Այս քարափոր ներքնուղին՝ քառասունեւհինգ

¹ Ստր-բ-նի՝ անդ՝ խօսքն է՝ ἔχει (Ամասիա) δὲ καὶ
ὕδρευς ἐντός (այսինքն շրջապարսպին մէջ) ἀναφαίρετα, συ-
ρίγγων τετμημένων δυνεῖν, τῆς μὲν ἐπὶ τὸν ποταμόν, τῆς
δ' ἐπὶ τὸν αὐχένα.

² Թերեւս հետքերը մնացած ըլլան պալատի դարա-
տափին տակը: Հմեա. Perrot et Guillaume, Explor-
de la Galatie, p. 373.

աստիճան հակած՝ երեք մետր լայն է եւ երեքէն շորս մետր բարձր մինչեւ կամարին ծագք. իսկ մինչեւ վարի աւազանը՝ որ տակաւին լեցուած է թարմ եւ վճիտ ջրով, հաշուեցինք սանդխոյ երկու հարիւր եօթանասուն աստիճաններ¹: Գետնափորին լայնութիւնը թղլ կու տայ որ օդն ու լոյսը թափանցեն հոն իւր բերնէն, եւ ասի հրաշակերտ գործ մըն է այն ժամանակին համար՝ երբ ի գլուխ հանուած է: Իւր ծաւալի տարածութեանց կողմանէ՝ ամենանշանաւորն է այս կարգի փապուղիներուն մէջ՝ որոնց հանդիպեցանք մեր ճամբորդութեան ժամանակ, բայց բազմաթիւ նմաններ կան Փոքուն-Ստիոյ այս կողմանց բազմաթիւ հին բերդերուն մէջ: Ասոնք ապահովապէս բնիկ ժողովրդեան գործն էին՝ ճիշդ ինչպէս նաեւ վիմափոր դամբանները: Հետաքրքրական բան մըն էր՝ այս կարգի շեղահակ հորերու ծաւալման սահմանը ճշգրտել, որպէս զի կարելի ըլլայ որոշել թէ ո՞ր ազգեր զասոնք շինած են²: Թերեւս անոնցմէ ոմանք, որոնք

¹ Արդի վիճակին շատ ճշգրիտ նկարագրութիւն մ'ըրած է Հ-Պլաշն, անդ, Ա, էջ 369: Սանդխին մէկ լուսանկարը նմանատպած է Belck, ի Zeitschrift f. Ethnologie, XXXIII. 1901, p. 472.

² Ահա ցանկ մ'անոնց՝ զորոնք նկարագրուած գտած ենք, կամ զորոնք մենք տեսած ենք, եւ որոնց մասին մեզի տեղեկութիւն տրուած է. Ամասիոյ եւ Ալաշայի մէջտեղ, Կ-բ-Տ-ըի գոգեկին մէջ, Չիթլարէ ոչ շատ հեռու: Սանդուխը կը խորասուզի անծայր խորութեան մը մէջ. — Կելե-է-է-ի բերդին մէջ՝ Ամասիայէ 2/3 ժամ հեռու. — Նիկո-բի մէջ՝ տես վարը՝ § 23. — Ի Թ-բ-բ-լ (Անդեր-ըն, վերը՝ Ա, § 31. Հ-Պլաշն, Ա, էջ 359. Բելլ, անդ, էջ 471) — Ի Չիթլ (տես վարը՝ § 19). — Թ-ի-բի մէջ (տես վարը՝ § 19. Համիլտըն, Ա, էջ 352). — Ի Խօրօ-բի-ի-ի (Horosh-) Թոխաթի մօտ (տես վարը՝ § 19). — Չ-բ-բ-ի (Չիւրիկի) մօտ (Պլ-բ-բ-ի, տես Անդերսըն՝ վերը, Ա, § 20). — Ի Կ-բ-բ-ի-ի (վարը՝ § 35). — Ո-նի-ի (Համիլտըն, Ա, էջ 274). — Ինի-Սո-ի հովտին մէջ՝ որ խոնարհագոյն Աղիւսի մէկ

ընդհանրապէս անկատար կերպով քննուած են, սահմանուած էին ոչ թէ պահակազօրքին առատ ու մաքուր ջուր հայթայթելու, այլ դրսի հետ հաղորդակցութիւնն ապահովելու՝ գաղտնի ելքով մը¹: Այս վիճակի սանդխոց մասին կատարուած միահաղոյն ուսումնասիրութիւն մ'անշուշտ Անատոլեան թերակղզոյն նախնական հնախօսութեան համար հետաքրքրական հետեւութեանց պիտի յանդի²:

օժանդակն է (տես Flottwell, Stromgebiet des Qyzyli Irmak, 1895, p. 22. հմմտ. է «Globus», LXV, 1894, p. 128). — Պոմպէոս՝ Միհրդատոյ պարտութենէն ետքը՝ այս բերդերն անգործածելի ընելու համար ջրամբարները լեցընել կամ մանուածք բերանը խնուլ տուաւ հսկայ քարերով (ύδροεῖα ἐμπεπραγμένα πέτραις ἡλιβάτοις կ'ըսէ Սարաբոն՝ Ժ. Բ. 3, 38, էջ 560 Ե.)

Իսկ Պոնտոսէ դուրս՝ նոյնպիսիներ կը գտնուին տեղերս՝ Բյուզոնդ, Պափղագոնիոյ մէջ, ինչպէս կ'ըսուի. — Կորուր (= Մանեգորդոն) Գաղատիոյ մէջ (Անդերսըն, է Journ. hell. stud. XIX, 1899, p. 55; Leonhard, Paphlagonische Denkmäler, 1903, p. 37). — Փոխգիոյ մէջ՝ է Ե-Վ-Ն-Ն-Ն-Ն-Ն (Ռամսէյ) է Journ. hell. stud. 1889, p. 181) — եւ Լիւկանոնիոյ մէջ՝ յԱ-Ն-Ն-Ն-Ն-Ն (Jüthner եւ Knoll, Bericht über eine arch. Exp. nach Kleinasien. Պրակ 1903, p. 12). — [Բնագրին 158-159 էջերուն մէջտեղ դրուած է Ամասիոյ Գղեկին յատակագիծ մը, ուր ժայռերու եւ պարսպաց դրից հետ նշանակուած են նաեւ բարձրութիւնքն, ջրամբարներու մուտքերը եւն: Այս մուտքերէն մին 234 մետր բարձրութենէ կը սկսի: Գղեկին բարձրութիւնն է՝ 282 մետր:]

1 Այսպէս է՝ Փէլլ-Վ-Վ-Վ-Վ մէջ եղածն՝ Փոխգիոյ մէջ. հմմտ. Perrot եւ Chipiez, Hist. de l'art, V, p. 162.

2 Միայն համառօտ տեղեկագրէ մը (է Berl. Philol. Wochenschr. 1905, p. 879 ff, 908 ff.) ծանօթ է մեզի այն ղեկուցումը, զոր Լէման՝ գրքիս տպագրութեան ժամանակ՝ հաղորդած է Բերլինի Հնախօսական Ընկերութեան: Ինքն այս կարգի գործերը կ'ընծայէ խալդեանց, որոնք Փոքուն-

Փորբր-Ասիոյ մէջ նոյնպէս շատ տարածուած է դամբաններ փորել ժայռերուն մէջ, որպէս զի մեռեալն ազատ մնայ ամէն բռնաբարութենէ, եւ առիթ պիտի ունենանք բաղմամբիւ այսպիսի դամբաններ նշանակել Պոնտոսի մէջ¹: Բայց Ամասիոյ դամբաններն ասոնց ամէնուն մէջ երեւելի են իրենց գեղեցկութեամբն ու մեծութեամբ (Պտկ.)²: Ասոնց հինգը շարուած են նեղ քուլապսակի մ'երկայնքը՝ որ երբեմն վանդակապատով փակած էր, միջնաբերդին ու քաղաքին միջեւ, այն դարատափէն վեր՝ որ Պոնտոսի աքքայից պալատը կը կրէր: Այս տեղ թաղուած էին Միհրդատայ Եւպատորի նախնիքը³:

Ասիոյ արեւելակողմը բռնած էին Հայոց գալէն յառաջ, եւ ընդհանրապէս այն նախ-արիական ցեղին՝ որ թերակղզիս բռնած բնակած էր:

¹ Դրացի նահանգին՝ Պափղագոնիոյ՝ դամբանները մտերս ուսումնասիրած է Լեոնհարդ (Leonhard, Paphlagonische Denkmäler, 1. Jahrb. der Schlesischen Gesellsch. LXXX. Breslau 1903):

² [Տես բնագրին էջ 162-163՝ շորս գեղեցիկ պատկերներ, Ամասիոյ բերդն ու դամբանները, կենդրոնական դամբան, Արեւմտեան կողման դամբաններ, եւ Այնալը-Մաղարա:]

³ Ամասիոյ արբունի գերեզմանոցը մանրամասն ուսումնասիրած են Պերոյ եւ Կիլոմ. (Perrot et Guillaume, Explor. de la Galatie, p. 367 ff, Տախտակ 75-80): Դժբախտաբար այս գործին հրատարակման փամանակ (1872) տակաւին ծանօթ չէին մեքենական նմանատպութեան եղանակները, եւ այս մեծ գործին վիճակութիւններն այնպէս կատարեալ չեն՝ ինչպէս են իւր փորագրեալ յատակագծերը: Պր. Շարուք իւր մէկ հմտակց յօդուածին կցած է այս դամբաններուս գեղեցիկ լուսափորագրութիւններ (Struck, Die Königsgräber von Amasia, 1. „Globus“, 24 մարտ 1900, էջ 170 եւն: Պր. Շարուկ բարեհաճած է մեզի տալ այն լուսանկարներն, որոնք հոս նմանատպուած են: — Նորերս Պր. Բէլք ալ խօսած է (ի թերթին (Zeitschrift f. Ethnologie, XXXIII,

Ժայռին զանգուածին մէջ կամարածեւ փորուածք մ'այնչափ բնդարձակութեամբ որ մարդ մը կրնայ պտտիլ, բոլորածեւ կը շրջածրէ հսկայ վիճաքար մը, այնպէս որ լեբրան հետ ալ կապուած չէ՝ բայց միայն իւր խարսխովը: Այսպէս կղզեացեալ այս վիճաքարին մէջ պատուհան մը ծակուած է առջեւի կողմը, եւ մէջը փորուած՝ այնպէս որ բնդարձակ դամբանարան մը կը կազմէ, ամէն խորտակման դէմ պաշտպանուած այս հսկայակերպ բնական պատերովս: Եւ միայն վեհապետները չէին որ այսպիսի բազմածախ յիշատակարանները շինել կու տային՝ իրենց դին հոն թաղելու համար: Գամբարաններուն ամէնէն գեղեցիկը, Ամասիայէն գետնի վար կէս ժամ հեռու, եւ որուն յղկուած երեսը պատճառ եղած է Այն-լը-Մաղ-ը- (Հայելի քարայր, տես Պակ.) յորջորջանաց, քրմապետի մը (ἀρχιερέως Արձ. 95) տապանագիրը կը կրէ¹: Գժբախտաբար տապանագրոյն մէկ մասը մրճահար եղած է, թերեւս միջին դարուն՝ երբ այս խցիկը մենարան եղած էր կրօնաւորաց, որոնք ներսի կողմը զարդարած են որմանկարներով: Արձանագրութիւնը մեր թուականութեան սկիզբէն աւելի ուշ չի կրնար ըլլալ:

Բազմաթիւ ուրիշ՝ նուազ պերճակերտ՝ դամբաններ ցանուցիր սփռուած կը գտնուին լեռնակողերուն վրայ գրեթէ ամէն կողմ, եւ Ամասիոյ

1901, p. 462 ff.) այս հռչակաւ որ յիշատակարաններուն մասին: զորոնք՝ Սորաբանի բնագրին հակառակ՝ կ'ուզէ բնծայել պարսիկ եւ նոյն իսկ հնագոյն շրջանին. եւ դարձեալ այս մասին հետաքրքրական գիտողութիւններ կը գտնուին Պր. Լէմանի մէկ ղեկուցագրին մէջ, Berl. Philol. Wochenschrift, 1905, p. 909.

1 Այն-լը-Մաղարայի մասին հմմտ. Պերոյ եւ Կիյոմ, անդ, էջ 370 եւ Տխա. 72. Շարուկ՝ անդ, Պակ. 6. — Այս յիշատակարանիս գեղեցիկ մէկ արեւագրութիւնը կու տայ Lord Warkworth, Diary in Asiatic Turkey. Լոնտոն 1898, էջ 54:

Մէջ հաւարուած արձանագրութեանց մէկ մեծ մասը վիմակոփ տապանագրեր են: Այսպէս քաղաքին մէկ նշանաւոր բնատանիքը, որուն մէկ անդամը Թիւթանիոյ կուսակալին երկրորդն (աթուակիցն) եղած էր (արձ. 103), բերդին քարածայրին տակը մեծատարած գամբարան մ'ունէր, — շափն է ճշգիւ 3.55×3.65 m, ունենալով խորակերաններ ալ՝ շիրմատապանները դնելու համար: Բախտի նորանշան դիպուած մ'ուզած է որ ժիժ գարուն Ճիշդ այս խաւարարանտիս մէջ արդեւլովակուին նարոյէսնի զինուորներէն ոմանը, որոնք Եզիպտոսի մէջ գերի բռնուած էին: Այս դժբախտները գեանափորիս պատին վրայ գրած են իրենց անունը՝ հոն մեռնելէն յառաջ¹: Այն գահազավէտ հեղեղաւան, ուսկից կ'ելլեցուի բանտի փոխուած այս գամբանը, պահած է նաեւ բաղմաթիւ հեղքեր ուրիշ գամբանական յիշատակարանաց. եւ հնութեան մէջ այս զառիվերը՝ ծածկուած վրայէ վրայ շինուած տաճարիկներով (շիրմաց)՝ շատ նկարագեղ երեւութով գերեզմանաց մ'ըլլալու էր:

Գժբախտարար ժայռափոր այս գամբաններուն պէս՝ ժամանակին ու մարդկան հասուցած եղծմանց շէն կրցած դիմանալ հին շէնքերը: Քաղաքին միշտ ծաղկեալ մնացած կեանքը իւր ամէն վերանորոգման առեն փճացուցած է անցելոյն յիշատակարանները: Այն գեղեցիկ սիւները, որոնց վրայ կը հանդչին յզկիթին գմբէթներն ու կամարակապ անդաստակները, անտարակոյս յաջորդարար կրած են մեհենի մը (երեքանկիւնի) ճակատը եւ եկեղեցւոյ մը կոնքը: Գրիգոր նիւսացի կը յիշատակէ Մեծ Մօր մէկ մեհենանը՝ Հիբիկի

¹ Մենք կարգացինք հետեւեալները՝ Brou, français prisonnier, 1800. — Peyre, français, 1801 an 9 Rep. — Millia, prisonnier de guerre, l'an 1801. — Copin, français volontaire, 1801.

եղեբքը շինուած¹. — Թերեւս այն տեղն՝ ուր այսօր կը բարձրանայ Բայազիտ սուլթանին շքեղակերտ մզկիթը². — Եւ քաղաքին գրամագիտութիւնը կը ցուցնէ թէ շատ մ'ուրիշ գիր եւ զիցուհիք³ ալ կը պաշտուէին Ամասիոյ մէջ, Իրեւ մայրաքաղաք իւր գրամոց վրայ կը գրուէին⁴ այն շրեքսիւնեան տաճարը («Սերաստեան»), ուր Վաղատական Պոնտոսի պատգամաւորները կու գային գրհել աստուածացուած ինքնակալներուն: Ունէր նաեւ կրկէս մը⁵, եւ անտարակոյս թատր

¹ Գրեգոր Նիսացի. «Ի Ս. Թեոդորոս» (De S. Theodoro mart. p. 582 D, ed. Morelli — p. 736, ed. Migne) կը գրէ՝ Τῆ μνηστευμένη Μητροί τῶν θεῶν ναὸς ἦν ἐπὶ τῆς μητροπόλεως Αμασειας... αὐτοῦ που περὶ τὰς ὄχθας τοῦ ποταμοῦ. [— Այս ներբողներս հայ թարգմանութիւնը գծաբառաբար առկան չունինք՝ հաս ղնելու համար:] Պր. Bruno Keilի սրբագրութիւնը (տես Strzygowski, Kleinasien, p. 78) ἀκροπόλεως (— — — — — Ամասիոյ) գրելու փո. μητροπόλεως (— — — — —). Ինծի ընդունելի չ'երեւար: Ամասիոյ ակառն («ակրոպոլիս») այսինքն գրեկին լեռը՝ դեռն իրր երեք հարիւր մեար բարձր է:

² Այս մզկիթին կից է գրասուն մը՝ հարուստ թուրք. արարական եւ պարսիկ ձեռագիրներով: Ինծի ըսին թէ յոյն գրքեր ալ կան հոն. բայց գծաբառաբար անկարելի էլաւ: այս տեղեկութեան ճշգրտութիւնը ստուգել:

³ Սեր-շէն, որուն աղերսանդրեան արձանը բնիկ Սինոպէն կը համարուէր (Babelon եւ Reinach, Recueil général I, p. 33 ff. թ. 14 եւն, թ. 41՝ շրեքսիւնեան տաճար, թ. 109) — Գարձեալ՝ Աբէն եւ Աբէ-Գրեբէ. Բախտ (Տէ-տէ) եւն. — Գրե-տէ Մ-ր-տէ պաշտաման մասին հմմտ. § 10. — Կ-ը-ը-ը-ը-ը-ը (εὐροτή Καλανδῶν), որ արեւելեան հին սօն մըն է՝ հոսմական եղած, Ամասիոյ մէջ կը սօնուէր տակաւին Ասաերիտս եպիսկոպոսին օրով (հմմտ. Revue de philologie, 1897, p. 148 ff.):

⁴ Recueil général, I, p. 29. թ. 8 (պղինձ Տրոյիտնու):

⁵ Արձ. 109. տես քիչ մ'ուրքը:

Տ՛ ալ¹: Բայց այս ամէն շինուածքներէն բան մը տեսանելի չէ այժմ հողին երեսը:

Աւելի ալ պահուած չեն նոյնպէս եկեղեցիներն՝ որոնք նուիրուած էին Պոնտոսի մեծ սրբերուն, ոչ հին մայր եկեղեցին՝ ուր կը հանգչէին Բարսղի արքեպիսկոպոսի նշխարքը², եւ ոչ ալ Ս. Թէոդորոսի՝ քաղաքին պաշտպան սրբոյն³, կաթողիկէն. եւ որչափ կ'երեւայ նոյնպէս բան մը մնացած չէ այն վանքերէն ու հիւրանոցներէն՝ որոնք շինուած էին բիւզանդական շրջանին⁴:

Որչափ ալ բազմաթիւ են նոր շինութեանց մէջ գործածուած հին հատակտորները, համեմատաբար քիչ կը գտնուին քաղաքիս մէջ քանդակուած կտորներ: Սակայն նշանակեցինք պարտիզի

¹ Արձ. 143:

² Առաջին եկեղեցին՝ զոր քաղաքին ներսը շինեց նոյն եպիսկոպոսը եւ ուր յետոյ թաղուեցաւ (հմմտ. Բողան գեանց «Վարք Սրբոց», Ապրիլ, հոր. Գ, էջ 109 եւ 106. Սիրմանդի Յայսմաուրբը՝ էջ 632, 10, հրատ. Delehaye) — Ս. Հեսիփիոսի խոստովանողի նշխարներն ալ՝ շիրմատպանի մը մէջ հանգչած՝ կը գտնուէին Ղմաստիս խորանի մը մէջ (θυσιαστήριον), ուր փոխադրած էր զանոնք Թէոփիլական եպիսկոպոս 792ին (Վարք Սրբոց, Մարտ Ա, էջ 879. Սիրմանդի Յայսմ. էջ 516, 21): Պրոկոպեայ համեմատ (Շին. Գ, 7) Յուստինիանոս Ամասիոյ մէջ նորոգեց եկեղեցեաց մեծ մասը՝ որ ժամանակի հնութենէն վնասուած էին (ἐν τῇ Ἀμασειᾷ τὰ πλείστα τῶν ἱερῶν ἀνετέωσατο χρόνῳ πεπονηκότα πολλῶ).

³ Արձ. 101, հմմտ. 102:

⁴ Եւախբիոս՝ Կ. Պոլսոյ պատրիարքը († 582)՝ իւր ընտրութենէն յառաջ վանահայր էր Ամասիոյ մէջ վանքին, որ կը կոչուէր Վանք Ս. Յովհաննու յախաան (τὸ μοναστήριον τοῦ ἁγίου Ἰωάννου ἐν ἄκροπόλει. տես Acta SS., April I, p. LXIX եւ LXXII). Աղքատանոց մը (πιτωχοτροφεῖον) կը յիշէ Ս. Բարսեղ (Նամականի, էջ 235 — Migne, PG. XXXII, p. 593):

մը մէջ՝ Տէրսական-Սուի գետախառնունքէն ոչ շատ հեռու՝ յոնիական խոյակ մը մեծայաղթ ծաւալով. վերնախարիսխը մէկ մետր էր՝ կողէն շափուած, եւ ոլորած ոյ խոյոյները 40 cm տրամագիծ ունէին:

Պատկերաքանդակ յիշատակարանաց ցանցառութեամբն առանձին արժէք մը կը ստանայ հետաքրքրական խորաքանդակ մը, որ իբր 1886ին գտնուած է Պր. Կրուզի պարտիզին մէջ՝ Հիբիկ գետոյ մօտ¹: Քանդակը կը զարդարէ սպիտակ մարմարեայ կոթող մը (բարձրութիւն 1.10 m, լայնք՝ 0.60 m), որուն ծայրը կը բարձրանայ (երեքանկիւնի) ճակատոց մը՝ երկու կողմը պատուանդանիկներով (acrotère) եւ վրան՝ բոլորակով մ'որ վարդազարդ մ'ունի մէջը (Պակ.): Մէջտեղը կը նշմարենք անձ մը գաղանամարտիկի հանդերձանօք, մերկ՝ բայց իրանն ու թեւերը պատած կաշեայ մանեւոր փոկերով (fasciae): Արջ մը՝ որ շնէ մը աւելի մեծ չէ, առջեւը արձանացած է. եւ մարտիկը երկու ձեռօք գաղանին դէմ կ'ուղղէ զէնք մ'որ այժմ կոտրած է, բայց անտարակոյս «սուին» մըն էր (venabulum): Այս տեսարանին վրան փորագրուած արձանագրութիւնը (թ. 109) մեզի կ'իմացընէ թէ՛ «Տրոյիդոս՝ ասպարէզին մէջ (ստադիոն, կրկէս) բոլոր արջերուն յաղթելէն ետքը՝ ինքն ալ յաղթուեցաւ ջերմէն եւ մեռելոց քով իջաւ:» Արջաճարձիկը (ursarius) տեսարան կ'ելլէր հռոմէական ամէն նահանգներուն մէջ, եւ կը պատկերացուի ուրիշ տեղ ալ՝ ինչպէս հոս՝ այն անասնոյն գիմացը կանգնած, որուն պաշտօնական հակառակամարտ ոստին էր²: Մեծամեծ գաղանաց դէմ մղուած

¹ Չասի հրատարակած ենք արդէն (ի գիրս Festschrift für Otto Hirschfeld, 1903, p. 275) մեկնաբանութեամբ միասին, որմէ հոս քանի մը գծեր քաղելով կը դնենք:

² Գերմանիոյ մէջ՝ Birtenի մօտ (CIRhen. p. 211)

գազանամարտութիւնքն՝ որ Հռոմի ամփիթէա-
տրոններուն մէջ աւելի կը յուզէին հասարակու-
թիւնը, միշտ շատ ցանցառ եղած բլլալու են
Ամասիոյ մէջ: Թերեւս հոս ալ երբեմն երբեմն
կրկէսին մէջ կ'երեւար Տաւրոսի մէկ յովաղը կամ
Ասորիքի մէկ առիւծը. բայց ապահովապէս վա-
րազներ, գայլեր ու արջեր՝ ինչպէս նաեւ կռուող
ցուլեր էին՝ որոնք շատ աւելի յաճախ գա-
զանամարտիկներու դէմը կ'ելէին ասպարէզին
մէջ: Արջերը գեռ անհետ չեն եղած Պոնտոսի
անտառներէն¹. Բայց աւելի եւս չէ վերցած իւր
հովիտներէն՝ տենդը. եւ այս վերջինս այսօր ալ
մնացած է՝ ինչպէս Տրոյիղոսի օրով՝ շատ աւելի
վտանգաւոր քան այն հեղահամբոյր պողակեր-
ները:

Քաղաքին ծայրը՝ Թոխաթի ճամբուն վրայ՝
հռոմէական շինուածքէ մը խլուած հանուած ճեր-
մակ մարմարի հսկայ քարեր հին դպրոցի մը
(Վերէ-է) փլփլած պատերը կը բռնեն (Պտկ.):
Դրան կողմնակի դրանդիքն ու վերին բարաւորը
կազմուած են քովթարի մ'երեք հատակոտորներէ,
որ Մարկոսի Արեղիոսի նուիրուած ձօն մը կը
կրէ (արձ. 97). չորրորդ հատակոտոր մը փոխա-
դրուած է միջնաբերդը (տես վերը): Տաճ-
կական պատերուն մէջ ագուցուած են թակա-

— Եպիւրոսի մէջ՝ յԱպոլոնիա (Patsch, Das Sand-
schak Berat in Albanien. Վիեննա 1904, էջ 158, պտկ-
126): Հմտ., Baumeister, Denkmäler, p. 2105,
պտկ. 2354; Daremberg եւ Saglio s. v., „Bestiae“,
fig. 835 եւն: — Հմտ. նաեւ Audollent, Defixion.
tabulae, Nr. 247.

1 Van Lennep (Travels in Asia Minor, I,
p. 318 ff.; II, p. 30) ճշգրտիւ կը պատմէ արջի որսորդու-
թիւններն՝ որոնց ինքն ալ մասնակցած է Թոխաթի մօտ:
— Մարգուանի վարժարանին մէջ կը պահուի մեծ արջ մը
յարգով լեցուած:

զաղի եւ պսակի ուրիշ բեկորներ: Նոյն դպրոցին յարակից ութանկիւնի սրահի մը մէջ շիրմատապան մ'աղատած է փճացումէ անով որ անոր մէջ դրած հանգչեցուցած են Հուլիէտ-Ղազի երկրակալին յարմինը (Պտկ.): Ասի՝ թէպէտ եւ կիսով չափ հողի մէջ թաղուած, եւ շիրմին (Կիւրէ) թերաստուերին մէջ միայն աղօտ լուսաւորուած, կը հիացընէ իւր զարդաքանդակաց շքեղութեամբը: Կափարիչն իւր անկիւններուն վրայ պատուանդանիկներ ունի, եւ չորս երեսներուն վրայ՝ տափարակ երէզ մը՝ սաղարթաքանդակներով զարդարուած, Տապանատաշտը (երկայնքը՝ 2.06 m, լայնքը՝ 0.82 m) չորս անկիւնները խոյազլուխներ ունի, իսկ կողերուն վրայ՝ թեւաւոր Սէրք, որոնք ծաղկեպսակներ կը բռնեն, եւ փոխ ի փոխն Մեդուսայի գլուխներ իրարու կը յաջորդեն: Այս գործին արուեստգիտական յատկութիւնները կը ստիպեն, կ'երեւայ, մեր թուականութեան սկիզբէն համարելու նոյնը, եւ նոյն ժամանակը կը հանէ զմեզ նաեւ զարդարանաց ոճը¹:

Աւելի անագանագոյն ժամանակի կը վերաբերի ուրիշ շիրմատապան մը, որ այժմ իբրեւ հասարակաց ջրոյ կուր կը գործածուի Զիւրէի մահմետական գիւղին մէջ Ամասիոյ խոնարհակողմը: Իւր նոր նպատակին համար շատ երկայն բլլալուն՝ կտրած են տաշտը՝ իւր երկայնութեան երեքին երկու մասով: Ծոխօրէն զարդարուած է ողկուզալից բարունակներով՝ սիւններուն միջեւ որոնց վրայ կը պատատին բաղեղի ծիւղեր:

Ամասիայէն իբր մէկ ժամ գետնի վեր՝ Եէշիլ-Իրմակի ձախ ափին վրայ Ալտիգին (Altyghin) կոչուած տեղը՝ կատարեալ վտակ մը հոսելով կ'ելլէ բնական փոքրիկ քարայրէ մը, որ կրաքարին մէջ փորուած է: Բերանը կը փակուէր դռնով մը, զոր

¹ Հմմտ. Altmann, Architectur und Ornamentik der antiken Sarkophage, Berlin 1902, p. 60 ff.

տեղւոյն տէրը լաւ ու գէշ վերաշինել տուած է: Գրան վրայ կը կարդացուէր ձօնս (թ. 96). «Մեծ գիցուհեաց՝ Յաւերժահարսանց» (Նիմփէից). եւ բարեպաշտ յանձնարարութիւնս թէ՛ «Գուք որ հոս կը մօտենաք՝ մերձեցէք երկիւղածութեամբ» (Պտկ.) եւ ստուգիւ մեծարանաց զգացմամբ մը ներս մտանք մենք ալ: Աճիտ առուակը մերձաւոր գետոյն մէջ թափուելէն յառաջ՝ բերկրալիբ զովութիւն մը կը սփռէր մրգաստանի մը մէջ, ուր առատօրէն կը հասուննային կարմրագեղ կեռասներ, — այն պտուղը՝ զոր Աուկուղոս բերած է Աերասունէն: Բուսականութեան վրայ այս վտակին գործած բարերար ազդեցութիւնը, ինչպէս նաեւ այն երեւոյթը, որ այսպիսի յորդաջուր ակնաղբիւր մը կարծես հրաշքով մը քարէն կը բղխի ցայտելով, ի հարկէ պատճառ եղած էին ամէն ժամանակ պաշտելու այս բնական քարանձաւին պաշտպան գիցուհիները: Յունաստանի մէջ քարայրները յաճախ նուիրուած են Յաւերժահարսանց. բայց Պոնտոսի գիւղացիները, որչափ ալ Յունաստանէն առած էին այս գիցուհիներուն անունները, անկէ փոխ առած չէին արդասաւորիչ ջրերու պաշտօն մատուցանելու սովորութիւնը: Պատմական ժամանակաշրջանէն շատ աւելի յառաջ ալ անտարակոյս անոնք նուիրական կը համարուէին բնիկներէն, եւ զրազաշտիկ կրօնքը՝ զոր կը դաւանէին Պոնտոսի վեհապետները, կ'աստուածացրնէր լճերն ու ծովը՝ ինչպէս նաեւ ակնաղբիւրները կամ գետերը¹: Հիբիկ գետը դահամունք կ'ընդունէր Ամասիոյ մէջ², ինչպէս Եփրատ՝ Հայաստանի սահմանագլխին վրայ³:

¹ Հմմտ. մեր գործը՝ Mon. myst. de Mithra, I, p. 104 ff.

² Հմմտ. Roscher. Lexikon, ի բանին՝ Iris, սիւն 357. Բարբլուն եւ Ռայնախ՝ էջ 31, թ. 23:

³ Rev. archéol. 1905, I, p. 30. Հմմտ. Byzant. Zeitschrift, 1905, p. 58.

§ 10. *Դիոսի (Արամագրայ) Մարտիի մեհեանը*¹: — Ապրիլ 27ին ուրբաթ օրը արշաւանք մ'ընել ձեռնարկեցինք դէպ ի Էքէէ՛, ուր լսած էինք թէ հնութիւններ կան: Նեղ արահետ մը գետոյ մը հեղեղատին մէջ վեր կ'ելէ զառիվեր կողէն՝ որ դէպ ի արեւելք Ամասիոյ կիրճը կը պատէ, եւ կը հանէ երկու ժամէն Լոկման լեռան գագաթը՝ որ Եէշէլ-Իրմակէն ինն հարիւր մետր բարձր է: Ասկից մեր հայեցուածքը մէկ կողմանէ կրնայ հետեւիլ գետոյն ընթացքին՝ որ խորունկ կապանի մը մէջէն դէպ ի հիւսիս կը հոսի, իսկ դէպ ի արեւելք Ամասիոյ բարձանց վրայէն ալ կը նշմարենք Սուլու-Օվայի ամբողջ կոնքը՝ մինչեւ Մարզուան: Ասկէ ետքը ճամբան ոլոր մոլոր կը գալարի բարձունքներուն վրայէն, եւ կատարէն քիչ մը վար՝ կ'անցնի Եէշէ-Իէշի ամարանոցէն (Է-յլ-): Չմերոց-գիւղը լեռան հիւսիս-արեւելեան մէկ ձորակին մէջ պատուարուած է: Այս ամարանոցին մօտ հին գերեզմանոցը կը պարունակէր տղու մը տապանագիրը 237 տարւոյն թուականաւ (թ. 139): Ասկէ անդին ճամբան՝ Հիրիկի հովտէն վեր՝ կը բուլորի երաշտին լեռներու շրջանակի մը բուլբուլքը, որոնք ջրերէն հեղեղատուած են, եւ ուր մերկ ժայռաքարը՝ որ կարմիր գեղեցիկ մարմար մըն է, տեղ տեղ միահարթ կը շարունակուի: Այս ամուլ բարձանց միակ բուսականութիւնն են ախեղձ գիհիներ եւ փշենիներու մացառուտներ: Աերջապէս ժամ մը ճամբորդելէն ետքը կ'իջնանք՝ հակադիր դառիվայրէն. եւ Եբիմի կ'երեւայ բլրոյ մը վրայ՝ ջրաշատ եւ արեգին դէպ ի հարաւ: Գիւղը հարիւր քսան տուն ունի, որոնք երկրին սովորու-

¹ Այս հաստատիւ մէկ մասը լոյս տեսած է ի Revue de l'histoire des religions, LXIII, 1901, p. 47 ff. («Zeus Stratiotes de Mithridate», Միհրդատոց Մարտիկ Արամագրը):

կան լեռներուն շարքերը՝ որոնք Անատոլեան լեռնաշխարհին լեռնախաւերը կը կազմեն:

Գագաթը՝ որ 1350 մետր բարձրութեան կը հասնի, հարթ կոնի մը ձեւն ունի, եւ որուն շուրջը երբեմն կը բոլորէր պարիսպ մը, որուն հետքը կրնանք գտնել ամբողջ շրջապատին վրայ, եւ որ 250 մետր տրամագծով բոլորակ մը կը գծէ: Շրջապատի այս պատը լաւ պահուած է մանաւանդ հարաւ-արեւմտեան կողմը, ուր աւելի սեւ պղտուկայրը ստիպած էր թանձր որմախարիսխներ կառուցանել: Այսպէս սահմանագծուած բոլորակին կենդրոնը կը բարձրանայ չորեքկուսի հողակոյտ մը իբր 40 մետր երկայն կողերով, որ յայտնապէս շինուածք մը կը ծածկէ. այսօր ալ հողին վրայ ցանուցիբ սփռուած են ծնօտի հատակոտորներ եւ կոփածոյ մարմարեայ քարերու բեկորներ (Պտկ.):

Բարձունքիս վրայ կանգնած յիշատակարանին կրօնական շինուածք մ'ըլլալը պայծառ կ'երեւայ թէ յօրինուածութենէն եւ թէ դիրքէն: Արձանչնանք որ բոլորակ շրջապատն՝ որմափակն էր (περιβόλος), որ նուիրական տեղւոյն սահմանը կը գծէր: Միջավայրի հողակոյտը թերեւս իւր ներքեւ կը ծածկէ մեհենի մ'աւերակները. բայց անոր թէ համեմատաբար սահմանափակ տարածութիւնքն եւ թէ չորեքկուսի ձեւն աւելի հաւանական կ'ընեն թէ հոյակապ բազնի մը տեղն էր՝ նման անոր, զոր Գիոս Փրկիչ (Zeus Soter) ունէր Պերգամոնի ակառան մէջ:

Այն մասին թէ հոս կազմակերպեալ պաշտամունք մը կը կատարուէր, գրաւոր օպացոյցն ալ ստացանք մեծ պատուանդանէ մը, որ մեր աչքին առջեւ հողէն հանուեցաւ նուիրական որմածին մէջ (արձ. 142): Ասիկայ յառաջագոյն կանգուն (in situ) կեցած էր լերան վրայ եւ ուղեւորի մը ուշադրութիւնը գրաւած. իսկ գիւղացիներն անմիջապէս հողի մէջ թաղած էին՝ վախնալով որ

չըլայ թէ իրենց սրբոյն գերեզմանը պրպտելով սրբապղծեն: Աշխատալից եղաւ զայն գտնելն եւ մարմարեայ ծանր վիմարարը հողէ դուրս հանելը բազմաթիւ ձողերու եւ շուաններու օգնութեամբ: Քարը կը կրէր ձօն մը կնէոս կղաւդիոս Փիլոնի՝ որ ցկեանս քուրմ (ἱερῆς διὰ βίου) էր: Եւ այն աստուածութեան անունը՝ որուն պաշտօնեայն էր, կը յայտնեն մեղի Եբբիմի երկու արձանագրութիւնները (Թ. 140—141)՝ որ նուիրուած են Διὶ Στρατιῶ (Գիոսի Զօր-ի-նի՝ Արամազդայ Մարտիի): Գիոսի Զօրականի այս մեհեանը կ'երեւայ թէ իբր 100ին Յ. Ք. կը տնտեսէին «իշխանակիցք» (συνάρχοντες) եւ մեհեանին վիճակաւորաց դասուն մէջ էին «տաճարայարդարք» (νεωχόρος, մեհենակալ, մեհենապան):

Քրմերը, իրենց սպասաւորներն եւ հաւատացեալները՝ սրբարանին շուրջը համախմբուած՝ կ'երեւայ թէ երբեմն կարեւոր հասարակութիւն մը կազմած էին: Նուիրական շրջապատին արեւմտակողմը բարձրացած բլրակ մը ծածկուած էր երբեմն շինութիւններով, որոնց մնացորդ բեկորները հողին երեսը սփռուած են, եւ գիւղացիները կու գան այս աւերակներուն մէջ չքոտի հնութիւններ՝ բայց նաեւ դրամներ փնտռելու: Այս հիմայ ամայի տեղերը յառաջագոյն շքեղ տօնախմբութիւններ կը կատարուէին, որոնց կը կցորդէին թատրերգական ներկայացումներ: Գեմեղղոս անուն անձ մը, որուն տապանագիրը գտանք յԵբբիմի¹, կը ծանուցանէ մեղի թէ թատեր մէջ բազմաթիւ դերեր արտասանելն եւ շատ մը ճամբաներու վրայ տառապելն ետքը՝ թողած է աշխարհքիս բեմը: «Իմ բերանս ալ խօսքեր շ'արտաբերեր, ծափահարութեանց

¹ Արձ. Թ. 143: Արձանագրութիւնս հրատարակուած եւ լուսարանուած է՝ ի գիրս Festschrift für Otto Hirschfeld, p. 278.

ձայնն ալ շի հասնիր ականջս, վճարեցի բնութեան պարտիքս եւ մեկնեցայ. այս ամէնը փոշի է:» Այն անձն՝ որ անցորդին կը յայտնէ այս զգաստական փիլիսոփայութիւնն, անշուշտ անգամ մըն էր «ընդհանուր ընկերութեան»,՝ Գիոնիսեան արուեստագէտներուն, որ Ադրիանու օրով կազմուեցաւ¹, եւ որուն խմբերը խաղերէ խաղեր կ'երթային իրենց գուսանական կտորները ներկայացընելու ամէն կողմանէ խուռնրնթաց դիմող բազմութեանց առջեւ: Անտարակոյս Գեմեղոս ալ հոս եկած էր գործակցելու որեւէ տօնախմբութեան մը, երբ մահն ընդհատեց իւր թատերապոյտը, եւ ընկերակից մը թաղեց ծեր գերասանը սրբարանիս հովանւոյն ներքեւ:

Այն պաշտամունքը՝ զոր կատարուած կը տեսնենք հոս այսպիսի շքով մը՝ Ապսրութեան օրով, հռոմէական տիրապետութենէն հնազոյն էր: Միհրդատ, ինչպէս կը պատմէ Ապպիանոս², 81ին Ն. Բ. հռոմէական պահակազօրքերն ամբողջ Ասպպադովկիայէ գուրս վտարելէն ետքը՝ Արամազդայ Չօրականի զոհեց աւանդական զոհ մը բարձր լերան մը վրայ: «Լերան մը բարձրագոյն գագաթի մը վրայ, կ'ըսէ, շեղջակոյտ մը կ'ընեն փայտերու՝ զորոնք արքայք առաջինը կ'ըլլան վեր բերելու: Այս խարոյկին շուրջը կը պատեն աւելի ցած փայտակոյտով մը՝ բոլորակաձեւ: Աերը կը գնեն կաթ, մեղր, գինի, ձէթ եւ անոյշ խնկեր՝ ամէն տեսակ, գետնի վրայ կը գնեն հաց եւ կերակուրներ՝ առընթերակայից նուիրական ընթրիքի մը համար: Այս տեսակ զոհ կը կատարուի Պարսկաս-

¹ Foucart, ի դիրս Daremberg եւ Saglio, ի բանին՝ Dionysiaci artifices, p. 248.

² Ադրիանոս. Միհրդ. զԼ. 65. հմմտ. Reinaeh, Mithridate Eupator, p. 28. Ապպիանոս արքերն է՝ կերեւայ՝ Նիկոզայոս Գամասկացի (անդ՝ էջ 445):

տանի արքայներէն նաեւ ի Պատարդադաւ Փայտակոյտը կը լուցանեն, եւ կը բորբոքի, եւ այս մեծ խարոյկը ծովէն կը տեսնուի հազար ստադէ աւելի հեռաւորութեամբ: Արսուի նաեւ թէ օդն այնպէս տապազին կ'ըլլայ որ երկար օրերը կարելի չէ նոյն տեղը մօտենալ: Ահա այն պատարագը՝ զոր մատոյց Միհրդատ իւր նախնեաց ծիսին համեմատ:»

Նոյն պատմագիրը կ'աւանդէ դարձեալ¹ թէ 73ին՝ Պապիլագոնիա մտնելու առան՝ նոյն արքայն նորոգեց «սովորական զոհ՝ Արամազդայ Զօրականի»՝ եւ թէ նոյն ատեն զոհեր զենուլ տուաւ՝ Պոսիգոնի, Ճերմակ ձիերով լծուած կառք մը գահավեժ ընելով ծովու մէջ²:

Բանակաց Արամազդը՝ պաշտպան աստուածութիւնն էր թէ՛ Պոնտոսի մայրաքաղաքին եւ թէ՛ իւր արքայից: Բաց ի այստեղ նկարագրուած մեհենէն՝ երկրորդ մ'ալ կար, ինչպէս պէտք է որ յիշենք, քաղաքին հողաբաժնին մէջ՝ Բիլիսկոման գաշտին եղբրբը (տես վերը՝ Բ, § 8): Այս զուգադիպութիւնն այնչափ աւելի նշանաւոր է՝ որչափ որ նոյն պաշտաման ուրիշ որեւէ հետք մը չէ գտնուած երկրին ամբողջ մնացեալ մասին մէջ: Գարձեալ արձանագրութեան մը մէջ՝ որ Աթէնք երեւան ելած է, կը տեսնուին Ամասիոյ շորս քաղաքացիներ՝ որ միասին Արամազդայ Զօրականի³ նուիրում մը կ'ընեն: Վերջապէս Ամասիոյ այլեւայլ պղնձագրամները կը կրեն պատկերս՝ հրատ մը (կամ բոցավառ բազին մը) որուն քովը կը տես-

¹ Անդ. ԴԼ. 70:

² Սեւ. Ծովու (Պոնտոսի Է. քսինոսի) նուիրեալ այս զոհին մասին՝ հմմտ. իմ Mon. Myst. de Mithra, I, p. 105:

³ CIA, III, 201 'Αγαθῆ Τυχῆ Διὶ Στρατί[ω] Δίοτιμος, Ύψικράτης, Δρόστρος, Σευήσος, οἱ Ἀμασειεῖς (Բարւոյ Բախի. Արամազդայ Զօրականի՝ Գրասխան: Հիւփսիկրատես, Գրոսերոս, Սեւերոս՝ Ամասիացիք):

նուի մէկ կամ երկու ծառ: Երբեմն բազմին վրան կը թռչի թեւատարած արծիւ մը կամ շորքձիք մը¹: Արդէն Ասեղոնի² դրամներու այս տեսակը կապած էր այն զօհին հետ՝ զոր Միհրդատէ կատարուած կը պատմէ Ապպիանոս: Ինծի կ'երեւայ թէ Բիւյիք-Նվլիայի աւերակաց զիւան այս կարծեաց նոր հաւանականութիւն մը կ'ընծայէ: Գրամներուն վրայ գրոջմուած բազմին այն է՝ որ նուիրական շրջափակին մէջակող կանգնուած էր. ծառը՝ համարուեալ պատկերացում մըն է նուիրական անտառին՝ որ բազմը կը շրջապատէր³: Այն սօսքներն՝ որ տակաւին այսօր կ'աճին լեռան գագաթան վրայ, վերջին շառաւիղներն են անոնց՝ զորոնք հինք կը պատուէին: Թեւատարած արծիւը սովորական խորհրդանիշն է Դիոսի (Արամազդայ), եւ ներկայացուած շորքձիքն ինծի կ'երեւայ թէ կը մեկնուին Փոքուն-Ասիոյ քրմերուն (մոզերուն) այն հաշակաւոր զօրջով, որուն համեմատ բարձրագոյն Աստուած կը վարէ շորս ձիէ լծուած կառք մը՝ որոնք խորհրդանշաններ են շորս տարերաց⁴:

Ո՛վ էր իրականին այս Դիոս Բանակաց (Չարական՝ ΣΤΡΑΤΩΣ), որուն պատուոյն համար Պոնտոսի ալքաչք՝ իրենց իրանեան նախնեաց նմանե-

¹ Warwick Wroth, B. M. Catalogue of Greek coins, Pontus, Paphlagonia, p. 8 ff. pl. II. հմտ. p. XVII ff. Բայցեմ եւ Պոնտոսի՝ սուր. էջ 32 եւ 3, Թ. 32, 33 եւ 3:

² Cavodon, Ի Bull. Corr. arch. 1840, p. 70:

³ Այնպէս նուիրական ծառեր կային Արամազդայ Տորատոսի բայնին շուրջ Ի Հերակլէա (սեւ վարը՝ թիւ 1՝ սուր) եւ Ի Լարբանդա (Հերոս. Ե. 119):

⁴ Գիտէ Պոլ. Կառ ԼԶ, 4 9. հմտ. իմ Mystères de Ninive, II, p. 40. — Մեծի շառ թիւ հաւանական կ'երեւայ W. Wrothի տեսած մեքսութիւնը, որ արծիւն ու շորքձիքն ակնայնութիւն մը կը համարէ Կայսեր մը զիջարկարկութեան:

լով՝ սովորութիւն ունէին այսպիսի մեծաշուք արարողութիւն մը կատարելու՝ ինչպէս կը նկարագրէ Ապպիանոս, եւ զոր կը պաշտէր յատկապէս Ամասիա: Պարզ տեղակալ մըն էր Արամազդայ (Ահուրա-Մազդայ)՝ Աքամենեանց պաշտպանին, ինչպէս կարծուած ալ է: Իւր հարադատ բնութիւնն սրոշել կարենալու համար՝ պէտք է նախ հաւաստել թէ հին կրօնից մէջ որուն կը տրուէր այն անուանակոչութիւնը՝ զոր հոս գործածական կը գտնենք:

Նախ ստոյգ է այս առաջին կէտը. Զէ-Ստր-տէ- (Գիոս Զօրական) հելլենական ծագում ունեցող աստուածութիւն մը չէ: Աղիւմպոսի վեհապետը Յունաստանի մէջ զինուորաց յատուկ պաշտպան մը չէր երբեք: Զինուց արուեստն ուրիշ պաշտպաններ ունէր՝ Աթենաս կամ Արէս¹, որոնց երբեմն կը տրուէր նոյն արտղոսը՝ στράτιος, στρατία, Հերոդոտոս՝ Լաբրանդայի մեհեանը, զոր քիչ մ'եաքը պիտի տեսնենք, յիշատակելու ատեն՝ կը նշանակէ թէ, որչափ իրեն ծանօթ է՝ Պարթացիք են այն միակ ազգը, որ Գիոսի Ստրատիոսի զոհեր կը մատուցանէ². Եւ արդեամբք ալ որեւէ յունա-

1 Ստուգիւ ալ վկայութիւնները բուական անագան ժամանակէ են. Արէ- Զօրական (Ստր-տէ-)-Պղուտարքոս, Amator. 14, 757 D: θεός Εὐάλιος καὶ Στρατίας. Բագ. մեծ. Etym. magn.) ի բանին 'Στράτιος' ~ Ἄρης καὶ Ζεὺς. Սինես. Ղան թագ. (de regno, p. 23 e.), θ. ὄν τὸν στρατίον. հմե. Wentzel, Epiklesis, II, 9. — Աթէ-Ստր-տէ- (στρατία)՝ Ղուկիան, Dial. meretr. 9, § 1. Պղուտ. Praecep. ger. reip. 801 E. Եւստատիոս, ad Iliad, B, 118. Նիկեասոս՝ առ Studemund, Aneed. graeca, I, 276. — Աթր-տէ-տէ Ստր-տէ- (στρατία) բարբարոս աստուածութիւն մըն էր (Preller-Robert, Gr. Myth. I 347, n. 3; 357).

2 Հերոդ. ե. 119 կը գրէ՝ Μιῦνοι δὲ τῶν ἡμεῖς ἴδμεν, Κᾶρες εἰσὶ οἱ Διὶ Στρατίῳ θυσίας ἀνάγουσι.

կան քաղաքի մէջ շէնք տեսներ թէ Գից-տէրը կոչուի այս անուամբ¹:

Ուրեմն Հերոգոտոսի օրով՝ միակ տեղն, ուր Ջեւս Սորատիոս կը պաշտուէր, էր Լարրանդա Կարիոյ մէջ². եւ շնայելով իւր հելլենական տիտղոսին՝ այս Արամազդը բոլորովին բարբարոս (անյոյն) մնացած էր. այս մասին որեւէ տարակոյս չեն թողուր այն յիշատակարանները՝ որ իւր պատկերը մեզի պահած են³: Սրբարանի մը մէջ, շրջապատուած սօսիներէ, կը բարձրանար կուռք մը՝ որ ձեւէզ, մօրուեղ, բայց կուրծքը ստինքներով, մէկ ձեռքը նիզակ բռնած, միւսը՝ կրկնատապար, շանթի խորհրդանիշը: Այս օտարոտի կերպարանօք կը ներկայացուէր տակաւին նաեւ հռոմէական կայսրութեան ժամանակ այն պատերազմաօէր ցեղերուն ազգային վաղեմի աստուածութիւնն, որոնք Կարիոյ լեռները կը բնակէին:

Չօրական Գիոսի պաշտօնը նոր տարածում մը ստացաւ այն պատերազմաց ժամանակ, որոնք Աղէքսանդրի պետութեան բաժանման յաջորդեցին: Եւ մենէս՝ իւր զինուորներէն Անտիգոնոսի

¹ Աթէնք եղած ձօնը՝ CIA, III, 143՝ օտարականներէ է, ինչպէս թուեցաւ թ. 141, 201 (տես քիչ մ'ետրը):

² Հերոգ., անգ. Սորատոն, Ժ. Գ., 2, § 23, էջ 659 e. Եղիենոս՝ Nat. anim. XII, 30. բնութեացուած ձկեր կային Լամբրանդական Գիոսի մէջնին մէջ. բնագիրն է՝ τιμάται καλούμενος Κάριός τε και Στρατίος՝ πρώτοι γὰρ οἱ Κάρος ἀγοράν πολέμου ἐπενόησαν (կը պատուի կոչեցեալն Կարոս եւ Սորատիոս, որովհետեւ նախ Կարիացիք պատերազմի հրապարակը հնարեցին): — Միւլասայի ձօները՝ Διὶ Στρατίῳ ասու Lebas-Waddington, 342, 343. հմտ. Mittheil. Inst. Athen. XV, p. 268, Nr. 20: ἱερεὺς Διὸς Στρατίου καὶ Ἡρας (բուրմ Գիոսի Սորատիոսի եւ Հերայ):

³ հմտ. Foucart, Associations religieuses chez les Grecs, p. 105 ff. եւ Höfer ի դիրս՝ Roscher, Lexicon, ի բանին Labrandeus.

ճատնուած (316 Ն. Ք.) իւր զօրաց խօսք կ'ուղղէր, եթէ պէտք ենք հաւատալ Պղբատարքոսի, վկայ կոչելով զԴիոս Ստրատիոս եւ Երդմանց խնամակալ աստուածները¹: Ինչպէս ծանօթ է՝ Եւմենէս կառավարեց Կապպադովկիան ու Պափղագոնիան, եւ Փոքուն-Ասիոյ ճիշդ հիւսիսակողման մէջ շարունակուեցաւ պաշտուիլ այս աստուածութիւնն՝ զոր ինքը յատկապէս կը պատուէր: Առիանու համեմատ²՝ Նիկոմեդիոյ մէջ կար սքանչելի արձան մը Դիոսի Ստրատիոսի բնիկ քանդակագործէ մը՝ Գետաղոս կամ մանուանդ Գէգալսէս (Doddalses) անուն, եւ ասիկայ կ'երեւայ թէ կը պատկերացուի Բիւթանիոյ արքայից դրամներուն վրայ, աշտէի մը վրայ յեցած եւ պսակ մը բռնած³: Պոնտոսի ծովեզերքը՝ շերակղէայի մօտ՝ կանգնուած էին, ինչպէս կ'ըսէ Պլինիոս⁴, բազիլները Արամազդայ Ստրատիոսի, զարաւոր կաղնիներու քով, որոնց համար կ'ըսուէր թէ շերակղէս անկած ըլլայ: Աթէնք գտնուած արձանագրութիւն մը նոյն դից նուիրուած է Գերմանիկուպոլսոյ երկու քա-

¹ Պղբատ., Աարք Եւմեն. 17՝ *Πρὸς Διὸς Στρατίου καὶ θεῶν ὀρχίων.*

² Առիանոս՝ առ Եւստատիոս, *Մեկն. ի Դիոնես. Ուղէկ.* (Comm. in Dionys. Perieg. v. 793 — FHG, III. 594, fr. 41): *Καὶ δημιουργόν τινα ἰστορεῖ παρὰ Βιδυνοῖς Δαίδαλον καλούμενον, οὗ ἔργον ἐν Νικομηδείᾳ γενέσθαι θανμαστὸν ἄγαλμα Στρατίου Διὸς* (Արուեստաւորի մը մասին կը պատմուի Բիւթանացիներէն Գետաղոս կոչուած, որուն գործն ըլլայ Նիկոմեդիոյ մէջ Դիոսի Ստրատիոսի դրամանակի արձանը):

³ Այսպէս կ'ենթադրէ Overbeck. *Kunstmythol.* I, p. 60 ff. եւ կը հաստատէ Ռայնախ՝ *Th. Reinach, l'Histoire par les Monnaies*, 1902, p. 191.

⁴ Պլինիոս. բն. Պամ. *Nat. Hist.* XVI (89), 239: *in Ponto citra Heraelearum arae sunt Iovis Στρατίου cognomine; ibi quercus duae ab Hercule satae.*

ըբարցիներէ՜. ուսկից կրնանք հետեցրնել թէ նոյն դից մեհեան մ'ալ կար յիշեալ քաղաքին՝ հին Գանգրայի՜ մէջ: Աերջապէս Ամասորիս քաղաքն ալ, զոր հիմնած էր Պարսից վերջին թագաւորին մէկ եղբոր գուսարը, կը գտնենք իբրև քաղաքին պաշտպան աստուածութիւն՝ Չօր-էւր (Στρατηγός) Չեւս մը, որ շատ մերձաւոր ազգական կ'երեւայ մեր Չօր-էւրին (Στρατίας)¹:

Ասոնք են կարծեմ՝ այն ամէնը, զոր հին բնագիրները մեզի կը հաղորդեն² այն դից մասին, որուն Միհրդատ կը զոհէր մազդեզական ծիսից համեմատ: Հերոդոտի ժամանակ Չեւս Սարատիոս միայն բարբարոս (անյոյն) Արամազդ մըն է՝ զոր կարիացիք կը պաշտէին, Աղեքսանդրի աշխարհակա-

1 CIA III, 141: 'Αγαθῆι Τύχη | [Δι] | Στρατιῶ | [Πολ]έμων καὶ [Δομ]ετιανός | [Τερμ]ανικοπο[λίται] καὶ Α... | εὐχῆς χ[ί]ρα]. (Բարւոյ Բախտի. Արամազդայ Չօրականի՝ Պոպեմոն եւ Գոմեարանոս Գերմանիկոպոլիտացիք եւ Ա... վասն ուխտից):

2 Չօնս՝ Διὶ Στρατηγῶ καὶ Ἡρᾷ τοῖς πατρίοις θεοῖς καὶ προσεσιῶσιν τῆς πόλεως (Արամազդայ Չօրափարի եւ Հերայ հայրենի դից եւ առաջնորդայ քաղաքին). տես Inscr. gr. Rom. III, Nr. 89. — Ζεὺς Στρατηγός Ամասորիսի գրամներուն վրայ՝ Բարբլոն եւ Ռայնախ, անդ. Ա. էջ 139, Թ. 31 եւն: — Հասանական է որ այս «Չեւս Չօրափար» տեղակալ մըն է Ահարամազդայ:

3 Միւս տեղերն՝ ուր յիշուած է «Չեւս Սարատիոս» մեր ծանօթութեանց վրայ նոր բան չեն աւելցրներ: Արիստոտելի բնօրոյցած «Ասան աշխարհի» երկին մէջ, որ իրականին Ա գարէն է Ե. Բ., Չեւսի արազաներուն մէջ կը յիշատակուի (գլ. է) նաեւ στρατίος καὶ τροπαιοῦχος, զոր Բողոսէոս (de mundo, 37) թարգմանած է՝ Jupiter est militaris... tropaeophorus. Սուս-Արիստոտէլ աղբիւր է նաեւ Պոպեմեկեսի Onom., I, 24: (θεοὶ) στρατίοι τροπαιοῦχοι. Հմեմ. նաեւ Հեսիոքիոս՝ Στράτιον... ἐπίθετον Διὸς (բոս Հերոդոտոսի), եւ Մեծ Բող. Στράτιος՝ Ἀρης καὶ

լուծենէն ետքը՝ անոր պաշտօնը կը տարածուի հիւսիսային Փոքրուն-Ասիոյ մէջ, Թերեւս երբեմն՝ ինչպէս Ղարբանդայի մէջ՝ բնիկ աստուածութիւն մըն է կէս-հելլենացած, բայց նաեւ նոր նկարագիր Մառած է՝ որ շատ նշանակալից է: Արդէն Եւմենէսի իշխանութենէն ի վեր բանակաց այս երկնային պաշտպանը միեւնոյն ժամանակ պաշտպան է նաեւ արքայից՝ որ հրամատար էին անոնց, եւ ասով՝ նաեւ Պետութեան: Ասի նախորդն է այն զինուորական զից (*dui militares*) որ կը պատուէին հռոմէական բանակներուն մէջ. բայց նաեւ բնական յաջորդն է Ահուրամազդայ, որուն անդադար շնորհակալութիւն կը մատուցանեն Աբամենեանը՝ իրենց արձանագրութեանց մէջ՝ իրենց յաղթութեանց համար՝ զոր իւր ամենակարող կամքը կը շնորհէ կամ կը մերժէ: Ստուգիւ պատահական զուգադիպութիւն մը չէ որ Զեւս Սորատիոսի պաշտաման գոյութիւնը կրնանք ցուցնել միանգամայն այս տեղերս՝ թէ Հերակլէա, որ երկար ժամանակ անկախ իշխանութեան մը գլխաւոր քաղաքն էր, թէ Նիկոմեդիա՝ Բիւթանիոյ մայրաքաղաքը, թէ Վանգրա՝ Պափղագոնիոյ եւ թէ Ամասիա՝ Պոնտոսի մայրաքաղաքները:

Ինչ արդեօք կ'երեւայ թէ եղած ըլլայ իրականին այն Գիոսի Սորատիոսի պատմութիւնը՝ զոր Միհրդատի հարստութիւնը կը պատուէր: Թերեւս նախնաբար Հիրիկի հովտին որեւէ բնիկ ցեղի մը տեղական աստուածութիւնն էր, որ ցեղը մերձակայ լերան մը գագաթը կը հաւաքուէր զանի պաշտելու: Յետոյ երբ յոյն գաղթականներ այս աշ-

Zeus. [— Արիստոտելի Հայերէնը բառացի փոխադրած է նոյնը՝ հնագոյն օրինակի մը համեմատ՝ Գաւ. Անց., Աւենետ. 1833, էջ 627, Ծան. «Սորատի» եւ Տրուդէտ., վերջինս անշուշտ սխալագրութիւն փխ. «Տրուդէտոս»՝ իրր Յաղթանակակիր]:

1 Փոքրուն-Ասիոյ հիւսիսակողման մէջ բարձանց

խարհը մտան՝ իրենց անփոփոխ սովորութեան համաձայն՝ այս բարբարոս (անյոյն) աստուածութիւնը կերպարանափոխեցին Չելսի Մարտիկի մը: Աւելի ետքն՝ երբ Իրանեան ծագմամբ տուն մը այս աշխարհին մէջ թագաւորութիւն մը հիմնեց, իրաւունք ունենալ կարծած է այս Չելսի ներքեւ իւր Ահուրա-Մազդան ճանչնալու, եւ ընծայած է անոր նորանոր զոհեր նմանողութեամբ անոնց՝ զորոնք Պարսիկ միապետները կը կատարէին: Ըստ այսմ՝ այս աստուածութիւնը խառն բնութիւն մ'ունէր, եւ բաղկացած ըլլալու էր միախառնութեամբ պոնտական, յոյն եւ երանեան երեք տարերաց, որոնց բաղադրութիւնն արդէն նկարագրական է այս աշխարհներուս թէ՛ կրօնից եւ թէ՛ քաղաքակրթութեան համար: Թերեւս նաեւ Չելս Ստրասիոսի զինուորական պաշտօնը հիմնեցին Պոնտոսի արքայքն իրենց նոր մայրաքաղաքին՝ Ամասիոյ մէջ, ի պատիւ երկնաւոր պաշտպանին՝ որ իրենց զինուց յաջողութիւն տուած էր: Անշուշտ հռոմէական շրջանին այս պաշտաման մէջ գերիշխող եղած էր յունական ազդեցութիւնը. եւ այն նուիրական յորջորջանքները՝ զորոնք արձանագրու-

պաշտօնը շատ խորին հնութեան կը հասնի, ինչպէս Սեմական երկիրներուն մէջ: Զմմա. Առիանոս FHG, III, 592, Nr. 30: 'Αριόγτες εἰς τὰ ἄκρα τῶν ὄρων Βιθυνοὶ ἐκάλοιν Πάριαν τὸν Δία καὶ Ἄτιν τὸν αὐτόν (Բիւթանացիք լերանց գագաթներն ելելով կը պաշտէին զՊապ՝ որ Գիոս եւ Ատտիս է միանգամայն): Պափղաղոնիոյ մէջ Ողկասիսի վրայ եղած մեհեաններուն մասին՝ տես Ստրաբոն, ԺԳ, 3, 40, էջ 562 Ե. — Նոյնը շարունակուած է մինչեւ մեր օրերը փոզովրդական կրօնական հրահանգաց մէջ, մանաւանդ Կըզըլ-Բաշներու աղանդին սովորութեանց մէջ, բոլորովին այնպէս՝ ինչպէս Ասորիքի մէջ. հմմտ. Curtiss (Թրդմ. Baudissin), Ursemitische Religion im Volksleben, p. 149 ff., 303 ff. եւ ընդհանրապէս՝ Andrian, Der Höheneultus asiat. und europ. Völker, Վիեննա 1891.

Թիւնները կը յիշատակեն (*ἄρχοντες* «իշխանք», տաճարի, *νεώχοροι* «տաճարայարդարք»՝ մանկուիք տաճարի, *ἱερεὺς διὰ βίου* «քուրմ ցիւեանս»), ինչպէս նաեւ արձանագրութեանց ալ բանաձեւերն այնպիսի են որ Երբմիթի մեհեանը չի տարբերիր Յոնիայի կամ Հելլադայի մեհեաններէն: Հոս ալ դասական բանագործական ներկայացումներ կը արուէին՝ ինչպէս Եփեսոսի կամ Պերգամոնի մէջ: Բայց ճիշդ խօսելով մեղի անձանօթ է թէ ինչ ճիսարան կը դործածուէր հոս. եւ եթէ որ մը գտնուի կրօնական կանոնագիր մը զոհերու կամ տօներու մասին՝ անտարակոյս պիտի ցուցնէ նոյնչափ նորանշան զուգութիւն մ'երանեան եւ յունական տարրներու, որչափ կը ցուցնէ այն սրբաբանին հիմնարկութիւնը՝ զոր կոմագենեայ Անտիօքոս արքայն կառուցած է Նիմրուդ-Տաղի վրայ¹:

Միհրդատայ՝ Չելսի Արապիոսի բնծայած մեծաշուք բնծայարերութիւնն անշուշտ անժխտելի խնամութիւններ կը ներկայացընէ Մազդեզական սովորութեանց հետ: Հսկայ խարոյկը՝ զոր ինքն արքայն կը լուցանէր, տեսակ մը ստուարացում է այն ատրուշանական հրատին՝ զոր անդադար կը վառէին Չրադաշտի հետեւողներն իրենց կրակատանց մէջ²: Արդէն Հերոդոտոս կը նշանակէ³ թէ

¹ Michel, Rec. inser. gr., Nr. 735.

² Տես բնդհանրապէս՝ Rapp, ի ZDMG, XX, 86 ff. Հմմտ. նաեւ Գիոն Սեկ. Տառ 12, § 40 (հրա. v. Arnim, II, p. 11): (*Ζωροάστρην*) *Πέρσαι* λέγουσιν *ἐν ὄρει* *τινὶ* *ζῆν*, *ἔπειτα* *ἀφθῆναι* *τὸ ὄρος* *πυρὸς* *ἄνωθεν* *πολλοῦ* *κατασκήφαντος* *συνεχῶς* *τε* *κάεσθαι* *τὸν* *οὖν* *βασιλέα* *σὺν* *τοῖς* *ἐλλογιμωτάτοις* *τῶν* *Περσῶν* *ἀφικνεῖσθαι* *πλησίον* *εἶναι* (*Չրադաշտի մասին կ'ըսեն Պարսիկները լեռ մը բնակած ըլլալ, յետոյ թէ բոբոբրած ըլլայ լեռը վերու սա անդադար սաստիկ տեղացած հրով եւ այրած. եւ թագաւորը Պարսիկ երեւելիներովք մերձեցած եւն*):

³ Հերոդ. Ա. 131, Հմմտ. իմ *Mystères de Mythra*, I, p. 6.

տեսնուէր նաւարկողներէն հազար ստաղէ աւելի հեռաւորութեամբ: Արդ Երբմի ծովէն բաժնուած է ծովափնեայ լեռնաշղթային ամբողջ թանձրութեամբը: Աւստի կ'երեւայ թէ այն մեծագործ հրաար շէր վառուած Չեւսի Սարաօհոսի բու՝ մեհենին մէջ, այլ աւելի մօտ Պոնտոսի Աշքսինոսի՝ անտարակոյս այն բանակատեղւոյն մօտերն, ուր բանակը հաւաքուած էր¹:

Ասի այն փոքրիկ անստուգութիւններէն մին է՝ որոնցմով պատուած է պաշտաման մը պատմութիւնը, զոր մեր թուականութենէ յառաջ Բ զարուն կը դործագրէին գոնէ երեք ասիական թագաւորութեանց վեհապետները՝ Բիւթանիոյ, Պափղաղսնիոյ եւ Պոնտոսի: Երայն նոր գիւտերը կրնան յերեւան հանել թէ ինչ էր անոր ծագումն եւ ինչ ճակատագիր ունեցաւ, եւ բազմալի է որ Երբմի լերան վրայ կատարուած պեղումներով կարելի ըլլայ մանրամասն ուսումնասիրել այն սրբարանը՝ որ լերան գլուխը կը կանգնէր, եւ այսպիսով կարենանք բուսողոյն կերպով ճանչնալ Երհրատայ հարստութեան պաշտօնական կրօնը:

Երբմի գիշեր մ'անցընելէն ետքը հիւրերու սենեկին մէջ (Տէ--Տէր--օր), ուր գիւղապետը մեզի ընթերիք մը պատրաստեց՝ որ աւելի առատ էր

¹ Ապոլլոնոս որեւէ ճշգրիտ տեղեկութիւն մ'ոյս մատն չի տար. բոցց սա խօսքը՝ ՂԼ. 65: Γίνεται τοῖς πλέουσι καταφανής (Նաւարկողներուն տեսանելի կ'ըլլար), եւ միւս զլիտը սկիզբը՝ ՂԼ. 70: Ἀπόπειραν τοῦ ναυτικοῦ ποιησόμενος ἔδνε τῷ στρατῷ Αἰ. . . καὶ Ποσειδῶνι ἄρμα καθείς εἰς τὸ πέλαγος, ἐπὶ Παφλαγονίας ἠπειγέτο (Նաւատորմին փորձն ընելէն ետքը զո՛հեց Չորական Դիոսի . . . եւ Պոսիդոնի՝ կառք մը ծով ձգելով, անտարեց զելի Ի Պափղաղսնիս), կը շուրջընէ թէ պո տեղ յիշուած լեռը Պոնտոսի մէջ պէտք ենք փնտռել, եւ այն՝ ծովեզերքին մօտ: Յօժարակամ կ'ընդունէի թէ ըլլար Ակ-Տաղ՝ երկրիս ամենարարձր գագաթը. (տես վերը՝ Բ, § 9):

քան համադամ, Ամասիա վերագարձանք ապրիլ 28ին՝ պատելով Լոկման լեռան բուրբ հարաւէն: Երեք քառորդ ճամբորդելէն ետքը՝ հասանք Աէր-Քէլ գիւղը: Չափական այն տապանագիրն՝ որ այստեղ յառաջագոյն օրինակուած էր (Թ. 144), այսօր շորս կտորի կտրուած է, եւ կտորները գործածուած են իբրեւ խարիսխ այն գերաններուն՝ որոնք մզկիթին տանիքը վեր կը բռնեն: Աէրմիշէն գիւրին էջքով մը հասանք Ամասիա, ուր անցուցինք յաջորդ օրերը՝ արձանագրութիւններ հաւաքելու եւ վերստուգելու համար:

Դ. Զելիտիս եւ Սերաստուպոլիս:

§ 11. Ամասիայի Զիլիկ (տխա. ԺԳ): — Ապրիլ 4ին կիրակի օրը Ամասիայէն ելանք ուղղակի Զիլիկ երթալու համար: Նախ կը հետեւինք Թոխաթի ճամբուն՝ որ շուտով կը մանէ նեղ կիրճ մը՝ Հիրիկի աջ ափին երկայնութեամբ անցնելով: Միւս ափը կանգնած ուղղահայեաց ժայռը՝ հորիզոնաբար կտրուած է գրեթէ հսկայն մակերեսին հաւասար բարձրութեամբ: Մէկ մետրէ աւելի խորունկ փողածեւ փորուածք մը՝ որ կարծր կրաքարին մէջ բրուած է, գրեթէ մէկ մղոն երկայնութեամբ կ'երկարաձգի եւ տեղ տեղ շարունակուած է ներքնակառոյց որմերու վրայէն: Յայանապէս մնացորդներ են ասոնք ջրմուղի մը, որ սահմանուած էր Ամասիոյ հարաւային թաղին ջուր հայթայթելու: Երկար ժամանակէ վեր անգործածելի է, եւ իւր նախնական շինութիւնը հաւանօրէն հնութեան ժամանակէն է¹:

¹ Այս ջրմուղն ամէն ուղեւորաց ուշագրութիւնը գրուած է՝ որոնք այս կրճէն անցած են. (Համլլարն՝ Ա. էջ 365. Պերոս՝ էջ 366. Աւան-Լէնէպ՝ Ա. էջ 90, որ ստուերագրիճ մ'ալ կը գնէ): Համլլարնի ժամանակ (1835)

Ամասիայէն 1 ժամ 40 վայրկեան հետո, Կ-ի-ի-ի մղկիթին մօտիկ մէկ գերեզմանոցին մէջ գտանք սպիտակ մարմնի սիւն մը՝ արձանագրութեամբ (Թ. 458) Կարոս ինքնակալին եւ իւր Կարինոս որդւոյն: Ինչպէս կը ցուցընէ նման հատակոտոր մը՝ զոր Անգերսըն եւ Մունրոյ օրինակած են Թուրխալի մէջ¹, մղունաքար մըն է ասիկայ Ամասիա-Քաղիւսա-Վոմանա ուղւոյն. եւ այս պարզ յիշատակարաններն առանց արժէքի չեն լուսաւորելու համար անոնց վրայ յիշատակուած սակաւօրեայ վեհագեաներու խառնակ պատմութիւնը: Կարոս՝ որ Հռետիոյ լեզուներէն ինքնակալ հռչակուած էր եւ իրեն իշխանակից բրած էր՝ իբր Կեսար՝ իւր Կարինոս որդին, Պանոնիոյ մէջ 283ին յազմեց Սարմատներուն եւ Կուսաներուն, որոնք Գանուբն անցած էին. եւ անկէ ուղղակի Արեւելք անցաւ²: Պարսից զէմ այն արշաւանքին ձեռնարկելու, ուր սակայն իւր մահը գտաւ: Անշուշտ այս առթիւ էր որ նորագել տուաւ Ամասիայէն Կոմանա տանող ճամբան: Իւր զօրաց մէկ մասն անտարակոյս Սեւ ծովու նաւատորմով Գանուբի բերաններէն փոխադրուած էր Ամիսոս. եւ ծովեզերէն իջած են Միջագետք՝ անցնելով Ամասիա, Կոմանա, Սերաստիա եւ Մելիտենէ: Այն ժամանակ կարգի բերուեցաւ այս մեծ ապամուղւոյն գոնէ մէկ հատուածը՝ որ այս քաղաքները կը կապէր³:

արդէն մասամբ աւերած էր: ԺԷ դարուն Տափերնիէ (Ը. էջ 10. ապ. 1679) կ'ըսէ. «Ազբիրէն քաղաք ջուր բերելու համար՝ երբեմն կտրած փորած են մղոնի չափ տեղ կարծր ժայռը՝ իբր թէ մարմոր ըլլար, եւ ասի սքանչելի աշխատութիւն մըն էն: Թրքական զրոյց մը նոյնը կը վերագրէ «Ամասիոյ թագաւորին մ'աղջկան թիկնածուին (Վան-Լէնէպ):

¹ Ըրձ. 459 — CIL, III, Suppl. 14184, 18.

² Հմմտ. Schiller, Gesch. der röm. Kaiserzeit, I, p. 883, n. 3.

³ Աւելի գոտարին է որոշել թէ ինչու Նեոկալագիտագլխ ձօն մ'ընծայած է «Կարինեայ՝ որդւոյ տեսան

Կափու-Կոյսյե քիչ մ'եւորք Զեւոյի ճամբան կը բաժնուի Թոսխաթի խճուղիէն, կ'անցնի Կաւազ-չոյե եւ կը կտրէ Գեւորքի բերրի գաւառը, ուր իրարու կը համեմտանին Գեւորք-չոյի, Զեւորք-Կրմակի (Սկիւլարս) եւ Տօղունլու-Սուի (Սեբին Լիբիկ) ջրերը, Սեբին գետիս վրայ փայտե կամուրջ մը ձգուած է Կեւորք (Գրգըլճե) իջեւանին (Էն) մօտ: Ասոր մտիկ սաճկական գերեզմանոց մը կը պարունակէ սիւներ եւ հնութեան ուրիշ բեկորներ, գծրախտարար առանց արձանագրութեանց հետքի:

Յետոյ անտառախիտ լեռներու միջէն խորմախ կ'ըլլանք Լիբիկի հովիտը, որուն ձախ եզերքին կը հեակինք, եւ գալարապայտներով վեր կ'ելլենք Չոյին-Կոյս քարաժայռին հանդէպ, գագաթնահայեաց բարձրաբերձ լեռնորմ մը՝ որ իւր սպիտակութեամբն արեւու մէջ կը շողշուղար (Պակ): Եւտով կը թողունք գետը, որուն՝ կրաքարային երկու լեռնորմերուն մէջ՝ արեւելքէն իջնալը կը տեսնենք, որոնք նեղ անցք մը միայն կը թողուն Զեւիտիսի եւ Գաղիմենիտիսի միացեալ ջրերուն, Գժուարին վերելքէ մ'եւորք կը հասնինք Ալթը-Աշ-Ջ սարահարթը, որուն բարձրագոյն կէտը Ամուսիոյէն հազար մետրէ աւելի բարձր է: Կաղնեաց եւ սոճեաց անտառները տեղի կուտան Խեղճ թփիկներու եւ խեղճ զիհիներու: Ճամբան ճամաճուս կ'ընթանայ այս շոր երկրին ելեւեջքներուն վրայէն մինչեւ Բ-Ջէլք գիւղը: Ասոր ողորմելի հիւղերը խմբուած են բլրակի մը ստորուն, որուն գլուխը պատած է հին ծառերու պուրակ

մերոյ Կարտին (Արձ. 67. Հմմտ. Անդերսըն՝ վերը, Ա. § 41). որովհետեւ Կարինուս իւր հօր շէր բնկերացած Փոքր-Ասիոյ մէջ, բայց թերեւս առժամանակեայ խաւրարած էր հոն՝ 282ին վերջը՝ յաջորդ սարսփն արշաւանքը պատրաստելու համար:

մը, որոնք հեռուէն ալ մեր ուշադրութիւնը կը գրաւեն. եւ գաղաթէն կը նշմարենք հեռուն՝ զուգահեռական հովիաներու վրայէն՝ այս փեռեկ-տած երկրին յաջորդական խորշախորշ ծալքերը, մինչեւ երկարզ-Տաղի շոյշոյուն կատարը՝ գրեթէ քսան մղոն հեռու: Այս բարձունքը՝ Էրիմիի բարձունքին նման (§ 10)՝ նուիրական տեղ մըն է, ուր Արզու-բաշները կը շարունակեն իրենց աւան-գական տօները կատարել:

Ճամբան կը խոնարհի հարաւային դասի-վայրին վրայէն՝ անցնելով դետակէ մը, որ գեղ ի արեւելք կը հոսի, եւ յետոյ վերջին լեռնաղն ալ ելլեն ետքը՝ արագօրէն խորամուխ կ'ըլլայ կիրճը, որուն մէջէն կ'անցնի Զելէի գետը. եւ ճամբան դետայն մերթ ձախ եւ մերթ աջ ափը քերելով կ'ընթանայ: Հաւանօրէն այս տեղ փնտռելու ենք այն յաղթութեան ասպարէզը, զոր կատարեց Ասար՝ Փառնակայ դէմ, եւ որմէ ետքը Հոսով խու-րեց իւր այն հռչակաւոր լուրը թէ Veni, vidi, vici (եկի, տեսի, յաղթեցի)¹: Բայց մթութիւնն հետզհետէ տիրելով՝ թղլլ շտուա սրեւ տեղա-գրական զննութիւններ բնելու, եւ հազիւ կը զա-նազանէինք ջրաղացքները՝ որ ճամբուն երկայնքը աստիճանարար շարուած են եւ կը գառնան Զելէ-սուի որրնթաց հոսանքով: Ստիպուած էինք մեր սայլերը թողուլ անձրեւէ կակղացած այս հողին մէջ աղմոթաթաւ թաղուած. եւ քաղաք հասանք խոր գիշերին: Այն գարշելի իջեւանին պա-տին վրայ՝ ուր օթեւանած էինք՝ կատակարան լա-տինադէտ մը Աեսարու խօսքին նմանութեամբ ծաղրարանօրէն արձանագրած էր՝ Veni, vidi, fugi (եկի, տեսի, փախեայ):

¹ Հմմտ. Գեորգ Պերոտի ուսումնասիրութիւնը՝ Georges Perrot, *Comptes rendus Acad. des Inscr.* 1871, p. 312 ff.

§ 12. Զիլի: — Որ կողմէն ալ Ձեկէ մտցուի (տես էջ 189, Պակ. Ձեկէ՝ հիւսիսէն տեսնուած) հայեցուածքը կը դրաւուի բլրակէ մը՝ որ քաղաքին արեւելակողմը կը բարձրանայ եւ իր կատարը կը կրէ հին միջնաբերդի մը պարիսպները: Գաշտին մէջ կղզիացեալ այս բարձրաւանդակին վրայ երբեմն կանգնած էր այն հռչակաւոր տաճարը՝ զոր Պարսից թագաւորները նուիրած էին իրենց ազգային աստուածութեանց՝ Անահատայ (Անահիտա.) Ոմանոսի (Առհու-Մանոյ.) եւ Անագատէսի¹: Փարթամ որբարանիս մէջ, ուր կը սպասարկէին խուռներամ բազմութիւն մը մեհենասպասիկներու, ամէն տարի Շակաց մեծ տօնը կը կատարուէր՝ որ անտարակոյս բարեկական ծագում մ'ունէր: Շատ կարեւոր տօնավաճառ մը՝ որ այսօր ալ տակաւին տեղի կ'ունենայ հոս դեկտեմբերի առաջին կիսուն, թերեւս հին տօնախմբութեան մէկ ձեւափոխութիւնն է²:

Նուիրական բլրոյս վրայ կատարուած պեղումներն անտարակոյս Փոքուն Աօիոյ մազգեղականութեան պատմութեան համար այն նշանակութիւնը պիտի ունենան, զոր ունեցած են Ակրոպոլի պեղումները յունական արուեստին ծանօթութեան համար: Այսօր մենք միայն նիստը կրնանք ուսումնասիրել: Ապահովապէս բնական է այն բարձունքը, զոր հիները կը պնդէին թէ առասպելական Շամիրամայ դործն բլրայ. որովհետեւ ժայռը շատ տեղ միահարթ կ'ընթանայ. բայց թերեւս՝ ինչպէս Սորբուն կը հաստատէ, նոյնը հողով ալ լեցուցած են՝ անոր այժմ ալ ունե-

¹ Սորբուն, Ժ.Ա. 8, § 4. Այս աստուածոց մասին՝ հմտ. իմ Textes et monum. rel. aux Myst. de Mithra, I, p. 130. ԱՆ-Դ-ԴԷ-ԹԵՐԵՍ Ameretât է:

² Հմտ. Perrot, Exploration Galatie, p. 378, եւ Souvenirs d'un voyage en Asie Mineure, p. 459 ff. — Հմտ. վարը՝ § 23:

ցած ձուածեւ կերպարանքը տալու համար¹: Իբր 150 մեար երկայնութիւն ունի գաղաթան վրայ, եւ քաղաքէն միայն իբր 15 մեար աւելի բարձր է, որ այսօր ալ տարածուած է անոր ստորաբը՝ ինչպէս հնութեան ժամանակ: Երբեմն մեհեան մը կանգնած էր հսն², որ պարսպապատ էր՝ ինչպէս են տակաւին յունական այլեւայլ վանքեր. եւ Թուրքերը հոն զօրանոց մը եւ մզկիթ մը հաստատելով՝ անոր հնազոյն սահմանեալ նպատակը փոփոխած չեն բլար: Արդի գաւթին մէջ ալ կը տեսնուի տակաւին գրեթէ բոլորովին լեցուած ներքնուզոյն բերանը, որ քարածայտին մէջ կը խորասուզուի 45⁰ հակամմը, ճիշդ ինչպէս է Ամասիոյ միջնաբերդին փապուզին, եւ անոր պէս աս ալ անշուշտ ջրամբարի մը կը հասցընէր³: Այլուստ բակին ամբողջ

1 Սորարոն. ԺԱ. 8, § 4, էջ 512 C. * *Εν δὲ τῷ πεδίῳ πέτραν τινα προσχώματι συμπληρώσαντες εἰς βουνοειδὲς σχῆμα ἐπέθηκαν τεῖχος καὶ τὸ ἱερόν.* (Գաղան մէջ ժայռ մը գետաւազով լեցընելով բլրակեւ կերպարանք՝ փրօն շինեցին պարիսպ ու մեհեան.) *Հմմտ. Bell. Alex. 72: Zela est oppidum in Ponto positum, ipsum ut in plano loco satis munitum; tumulus enim naturalis, velut manu factum, excelsiore undique fastigio sustinet murum.* (Ջելա Պոնտոսի մէջ գանուող բերդ մըն է, որ հարթավայրի մէջ գանուելով ալ բաւական ամուր է, փանդի բնական հողարլուր մը, կարծես ներքով շինուած, ամեն կողմանէ սեպարերձ բարձրութեամբ վեր կը բռնէ պարիսպը:)

2 Հմմտ. նախորդը: — Ջելայի մէկ պղնձադրամը կ'երեւայ թէ կը ներկայացընէ մտից երկու ժայռեւոր աշտարակները, տեսակ մը նախադրունք (գաւթ), որոնց ետեւը կ'երեւայ մեհեանին ճակատը: *Հմմտ. Babelon u. Reinach, Monnaies d'Asie Mineure, 1, p. 117, 11 եւ. Տխա. XVI, պակ. 19:*

3 Ինճիճեան կրնար զեռ փապուզոյն մէջ իջնալ Հմմտ. Ռէֆֆէր, Ալեւ. ԺԸ, էջ 138, եւ Կինէ, Ատիական Տաճկաստան, Ա, 731:

Հոգք կազմուած է փլածներէ՝ խառնուած բուսա-
 Հոգին հետ: Այն շքեղակերտ շինուածքէն՝ որ
 երբեմն այս տեղք կը բռնէր, բան մը կանգուն
 մնացած չէ. եւ միայն Ձեկայի կայսերական գրամ-
 ներէն կրնանք անոր մասին գաղտփար մը կազմել:
 Ար տեսնենք հսն "շարեքսիւնեան տաճար մը, կեն-
 գրոնական կամարակապով եւ երեքանկիւնի ճակա-
 տով": որուն մէջ կ'երեւար բազիլոն՝ ուր կը վառէր
 մագերան "անշէջ հուրը"¹:

Սակայն բարեբախտութիւն անեցանք գանե-
 լու նկարագրական հասակաւոր մը՝ որ առանց
 սրեւե տարակուսի այն անհետ եղած յիշատակա-
 բանին կը փերաբերի: Ասիկայ բեկոր մըն է սպիտակ
 մարմարի՝ 1 մետր բարձրութեամբ եւ իբր 150 մ
 լայնութեամբ, որ հոգէն նորերս գաւրս հանուած՝
 գրուած էր գորանոցին մօտից գրան տաջէր (Պակ.):
 Մաս մըն էր կորնթական խոյակի մը՝ շատ գեղա-
 ձեւ արուեստով: Ականթի տերեւազարդերու եւ
 սաղարթազարդերու վրան՝ երկու կորճասիւճներ
 գէժ՝ առ գէժ՝ փեր կը մազլեն՝ կըքաղիտական ա-
 նանոց նման՝ գէղ ի կեղբոնական ծաղկազարդ մը.
 տջ կազմանք մնացած է այժմ՝ բաց ի դիտեն, երկու
 ճախ թաթերէն եւ թեւերուն ծայրէն. իսկ իւր
 գիմայի բնկերէն միայն ճիւղան մը մնացած է:
 Միեւնոցն անասունները՝ իրարմ բամնուած միեւ-
 նոցն ծաղկազարդով՝ կը գանուին գարձեայ Գի-
 գիւման Ապոլոնի մեհէնին մէջ՝ ներքին տաճարին
 խոյակներուն վրան, որոնք Գ. գարու Ն. Ք. վեր-
 ջէն են. եւ որոնց սճոյ գորուոր ճապուկութիւնը
 Պր. Ռայէի² գրանշարը ազգած էր: Մեր հաստա-

¹ Բարբլոն եւ Ռայնախ, անգ՝ էջ 110: Թ. 1. եւ
 Ցիս. Ժ. 2, պակ. 13: Հմմտ. Թ. 12, 13, 17, 18: — Գրան-
 ներուն վրայ ներկայացուած ուրիշ մեհէան մ'ալ՝ որ վեց-
 սիւնի է, անտարակոյս Ինքնակաջաց տաճարն էր:

² Rayet, Milet et le golfe Latmique, pl. 175,
 49, 51: Հմմտ. Furtwängler u. Roscher, Ի բու-

կրտսրին այլ քանդակագործական յատկութիւնները վար չեն մնար բանով մը, որչափ կրնանք սակե գտակել, Միլեաի մարմնորին յատկութիւններէն, եւ եթէ քանդակական շրջար ժամանակ մ'որոշել պայտիսի տկար նշանէ մը, պիտի միակերպ նայնպէս ապերսանդրեան շրջանէն գնելու այն շեւսութիւնն՝ որուն կը վերաբերէր այս խոյակը: Թեւաւոր առիւծները, որոնց հայրենիքը նոյն իսկ Ազնիք Պարսկաստանը կը գնեն, քաջագարար բնարուած էին իբր զարգ մեհենի մը՝ որ մազկեզական աստուածութեանց նուիրուած էր:

Բուն քաղաքը մասնաւորապէս ազքաս եւ հին մնացորդներով, Կարեւոր բնակավայրը մ'եզած էր այն վայրկենէն սկսեալ, երբ Պամպէս քաղաք մ'ըրաւ զանի, հասակական կայսրութեան եւ միջին դարուն ամբողջ տեսչութեան ժամանակ, մինչեւ մեր ժամանակակից շրջանը, — այժմ իբր քրան հազար հոգի բնակիչ ունի. — եւ ինչպէս քաճախ կը պատահի՝ սպրած է իւր անցելոյն մնասով, Ալիզադի թնային մէջ ազբիւրին վերեւը նշմարեցինք սեւ կրայրակ տախտակ մը (եւկոյնը 1'50 մ, լայնը՝ 0'80 մ) վրան քանդակուած զարգով մը, ուր հաստ ու կարծ սիւններ կը կապուին ծաղիկներու հետ՝ որոնք արեւելեան ճաշակի սնով մը յարգարուած են (Պակ.): Աւելի հետաքրքրական էր սպիտակ մարմնի ուրիշ բեկոր մը (բարձր՝ 0'30 մ, եւկոյնը՝ 0'37 մ, թանձր՝ 0'18 մ), որ Հայոց եկեղեցւոյն մէջ կը պահուի, եւ որ զապարար բերուեցաւ մեզի: Քարը զարգարուած է խորտանդակով մ'որ ապահովապէս

նին՝ Gryps, սիւն 1774: — Կարճառի ձեւը կը զարգարէին նաեւ այն Կախազրանց խոյակներու անկիւնները, զորոնք կանգնած է Ալիզիս յիւն սիւն 40ին Ն. Ք.:

Ի Furtwängler, անգլ. սիւն 1775. Dürbach, առ Saglio, ի բանին Gryps, էջ 1673:

Հին է. կնոջ մը կամ երիտասարդի մը գիմակն է՝ բոլորուած անբեւազարդ պատկով մը՝ որ ժապաւեններով հանդուցուած է: Գլխուն հերը յարգարուած էր ճակատին վրայ համաշափ փնջերով՝ որոնք վարսակալով մը բռնուած են, եւ այտերուն երկու կողերէն կը կախուին երկու խոպոպիք՝ որ ժապաւեններով հիւսուած են: Աերպարանաց նկարագիրը ներքինւոյ մը գէմքը կը յիշեցընէ. եւ թերեւս ասիկայ իրօք պատկեր մըն է Անահատի մէկ տաճարասպասկին:

Զելայի մասակարարած արձանագրութեանց շարքը պիտի կարենանք քիչ մ'աւելի ճոխացընել (թ. 260 եւն): Սակայն՝ ինչպէս մեր աշխատակիցը կը հաստատէ (տես վեր՝ Ա, § 19), այս քաղաքիս ցայժմ ծանօթ արձանագրութիւնք այնպէս աննշան են, որ հակասական կը մնան իւր այն հոգեկաւորութեան՝ զոր կը վայելէր երբեմն թէ իւր մեհենին եւ թէ Փառնակոյ գէմ Աեսարու տարած յաղթութեան պատճառաւ:

§ 13. Զիլիկ Սոսրոս-Սիրայ (Քարտէս ԺԳ):
— Մայիս 1ին թողուցինք Զելէն՝ քննելու համար այն տակաւին շհետադառուած հոռմէական ճամբան, որ Զելայն Սերաստուպոլսոյ հետ կը կապէր՝ կարելով հարաւ-արեւմուտքէն դեպ ի հիւսիս-արեւելք բնթացող լեռնաշղթան՝ որ այսօր կը կոչուի Գէվէջի-Տաղ (Ուղտապանի լեռ): Ճամբան նախ կը կտրէ քաղաքը շրջապատող փարթամ գաշար, անցնելով բարձունքի մը ստորուան՝ որ Ուսուս-Քաղէ՝ կը կոչուի, եւ որուն գլուխը կանգնած է մահամտական սուրբի մը գերեզմանը: Զիլէն 2 քիլոմետր անդին ճամբան կ'անցնի տաճիկ գերեզմանոցի մը քովէն, որ հին բեկորներ կը պարունակէ. սիւներու եւ կոթածոց քարերու մէջ կանգնած էր մզմաքար մը՝ որ Աղեքսանդրի Սեւե-

բոսի անունը կը կրէ (արձ. 468) եւ որուն պիտի վերագառնանք դարձեալ:

Քիչ ժ'ետքը ճամբան կամաց կամաց կը բարձրանայ՝ հեռեւելով բլրաշատ գետնին ելեւէջքներուն. մէջընդմէջ գէպ ի արեւելք կարճաւեւ տեղքեր կը բացուին դաշտին վրայ, ուր հեռուն կը նշմարենք գիւղերու շարք մը, որոնց անունները մեզի կու տան՝ Ուրճուհի, Այր-Բեւե, Բիւլբիւ. յետոյ կ'իջնանք բերրի հովտի մը մէջ Չելիբե+ Թուրք գիւղը (Չելիէ 2 Ժամ), Ինչպէս քիչ մը յառաջ մեր հետագոտած գերեզմանոցը՝ նոյնպէս Չելիթէքինն ալ ճարտարապետական հասակոտներ կը պարունակէր: Նշմարեցինք սիւներու կտորներ եւ կորնթական ու բիզանդական խոյակներ: Գերեզման մը, որ խնամքով ցանկապատուած է, կ'երեւար թէ բնակչաց կողմանէ յատկապէս կը յարգուի: Ասոր քով թմբուտ մը բառացի կերպով ծածկուած էր գոյնզգոյն ցնցոտիներով, խոյտարդէտ ծուկններ՝ որոնց օգնութեամբ ջերմը կը «կապեն» թմբին: Աւելի ուշադրութիւն դարձուցինք քրիստոնէական կոթողի մը, որ սարկաւազի մը տապանադիրը կը կրէ (Թ. 277). բայց այսօր մահմետական սուրբի մը գերեզմանը զարգարելու գործածուած է:

Չելիթէքի քով թողուցինք սովորաբար գործածուած ճամբան, որպէս զի այցելելը Անշուհի (Գրչլաճրգ) շէնը, որուն համար զմեզ կ'ապահովացրնէին թէ պրանշելի գիւտեր պիտի պահէր մեզի:

Ուստի խորամուխ եղանք դահապէտ կիրճ մը, ուր մեր սայլերը հազիւ կրնային ելլել:

1 Արի քաջածանօթ ժողովրդական սնտախապաշատ-թիւն մըն է (Frazer, Golden Bough, Բ Երկ. Հար. Գ. էջ 26 եւն): Տաճկաստանի մասին կը շատանամ ընթերցողը խորեւելով այս գրութեան՝ Curtiss, Ursemitische Religion im Volksteben, 1903, p. 96 ff.

Մեծ վտակ մը, որ ջրաղաց մը կը գարձրնէ, կը հոսի սեպաբերձ ժայռերուն մէջէն, որոնց մէջ փորուած է ճամբան՝ տեղ տեղ հալիւ մէկ մետր լայնութեամբ: Առանց խափանարար արգելքի գազաթր ելլելով՝ վերջապէս հասանք Արշալուկ, որ բլուրներու մէջ նստած է՝ Չէլթէքի հարաւակողմը՝ իբր մէկ մլոն հեռու. բայց այս խեղճ գիւղը բան մը չընծայեց որ արժէր: Յուսախար վերագարձանք աւելի քիչ դժուարին ճամբան՝ որ ընդարձակ գոգածի մը մէջ իւր շրջանը կ'ընէ մարգագետիններու մէջէն, ուր բազմաթիւ նախիր մը կ'արածէր. եւ վերջապէս հասանք Սիլիս:

Սիլիս Չէքքէյներու գաղթականութիւն մըն է: Իր տները՝ որ շինուած են կաւի հետ շողախուած խճերով, բլրոյ մը զաւիվերին վրայ աստիճանաբար վրայէ վրայ կեցած են, եւ այս ցած ու միահարթ տանիքով, իրարու կից ու վրայէ վրայ նստած շինութիւնները՝ հեռուէն բերդի մը տեսքը կ'աւնուն, որ իւր բնակչաց նկարագրին հետ ալ անհամաձայն չէ: Բլրակի մը գազաթր գրաւող գերեզմանոցին մէջ կանգնած է՝ հեռուէն ալ տեսանելի՝ մլոնաքար մը որ հողին մէջ մխուած է (Պտկ.): Արան կը կարգացուի տակաւին Գաղերեայ «ագնուագոյն Աեսարու» անունը (արձ. Թ. 469): Ուրիշ մը՝ որ շատ ծայրատուած է, կը գործածուի իբր անկիւնաքար բնակարանի մը դրան տալեւ (արձ. Թ. 470): Ըին ուրիշ հատակոտորներ ագուցուած են տներու պատերուն մէջ, կամ իբր գերեզմանաքարեր գործածուած են. եւ հաւանական է թէ Սիլիս հռոմէական ճամբուն անձանօթ կայանի մը տեղը կը բռնէ:

Երկրորդ օրը (2 Մայիս) շարունակեցինք հովիտն ի վեր ելլել, ուր ցորենն արդէն կանաչացած էր, վտակի մը երկայնութեամբ՝ որուն միայն անորոշ Գէրէ-Չայ (Չորագետ) անունը կու տան, եւ յետոյ դէպ ի հարաւ դառնալով՝ խորամուխ եղանք

նեղ կիրճ մը, ուր կձկած են Կ--բ--չյի քանի մը աներր: Գիւղին անտաշ որմաքարերով շինուած ցած ու հարթայարկ տնիկները կիսով չափ թաղուած են հողին մէջ, անշուշտ որպէս զի բնակիչներն աւելի պատասպարուին ցրտին դէմ՝ որ ձմեռը խստաշունչ ըլլալու է: Առտուն ցօղեղեամ մը սպիտակացուցած էր խոտերն ու անտառները. որովհետեւ հօս մշակութեան հողերու զօտին անցնելով՝ կը մտնենք անտառներու սահմանը: Քիչ մ'ետքը սաստիկ կ'ըլլայ ճամբուն զառիվերը, եւ գետինն այնպէս խոր հեղեղատուած էր որ մեր սայլերը մազ մնաց պիտի ջախջախէին, եւ հարկ եղաւ որ լեռնականները կանչենք եւ մարդիկ մեր բեռները շալկած հանեն մինչեւ լեռն գազաթը: Յայտնի էր թէ հին ճամբուն ուղղութենէն շեղած էինք, եւ այն ուղին աւելի արեւելակողմն շատ աւելի գիւրազնաց անցք մը գտած ըլլալու էր Գէվէջի-Տաղը կտրելու անցնելու համար:

Գաղաթէն (1564 մետր), ուսկից դէպ ի հարաւ հեռուն կը նշմարենք Չամլու-բէլի ձիւնապատ կատարները, արագօրէն իջանք՝ նախ անտառի միջէն, յետոյ բերրի հովտի մը մարգերուն ու արտերուն վրայէն՝ մինչեւ Մ--ւ--ւ--Սէյի-թէ+է: Ասիկայ մահմետական վանք մ'ըլլալէ յառաջ՝ քրիստոնեայ կրօնաւորաց ապաստանարան մ'երշած կ'երեւայ: Մզկիթի պատին մէջ գտանք բիւզանդական տապանադրեր եւ նոյն իսկ հեթանոսութեան շրջանին վերաբերող հատակոտորներ (արձ. թ. 278 եւն): Գերեզմանոցին մէջ տնկուած բազմաթիւ հին սիւներ թերեւս մղոնաքարեր ըլլան, բայց որեւէ արձանագրութիւն մը չեն կրեր, եթէ միայն գլխիվայր հողին մէջ մխուած չեն: Ուրիշ սահմանաքար մը՝ որ երբեմն Սեբաստոպոլէն սկսեալ Ե հազար քայլը կը ցուցընէր (A Sebastopoli millia passuum V), երկրիս հին սովորութեան մը համեմատ՝ զոր արդէն Բուսթէք նշանա-

կամ է¹, փոխուած է լողքարի՝ տան մը հողածածկ տանիքը գլանելով պնդելու համար:

Այս սիւնը՝ նման անոր, որուն հանդիպած էինք Ջիլէէն ելլելու ատեն (տես վերը) զորչ գեղեցիկ մարմոր մըն է, եւ կը կրէր Սեւերսներէն միոյն անունը, որուն մականունը մրժահարուած էր. բայց որ տասնիցս արիքուն էր եւ երիցս հիւպատոս: Ասի միայն մէկ իշխանի մը կրնայ յարմարիլ, այսինքն՝ Աղեքսանգր Սեւերոս, եւ 231 Յ. Ք. տարւոյն²: Երկու մշտնաբարբը կը վերաբերին Ջելայէ Սերաստոպոլիս տանող ուղւոյն, եւ մեզի կ'իմացընեն թէ նոյն ժամանակը խճուղին նորագուեցաւ փոխ-պրետոր նուիրակէ մ'որ մինչեւ այսօր անձանօթ էր՝ Կ. Յուլիոս Պրոկուլիանոս (Q. Julius Proculianus): Ճամբուն աշխատութիւնները սկսուած էին երկու ծայրերէն ալ միանգամայն, եւ արագութեամբ գլուխ հանուեցան զործաւորաց զանազան խմբերով: Այս աճապարանքին պատճառն էր հանգամանաց անհրաժեշտ ստիպողականութիւնը:

Արտաշէր՝ Սասանեանց հարստութեան հիւնդարիք՝ 231ին յանկարծօրէն յարձակեցաւ Հռոմէական կայսրութեան վրայ, գրաւեց Միջագետքն ու Ասորիք, եւ այս յանկարծական յարձակման անթափ շփոթութենէն օգտուելով՝ իւր այրուծիոյն գլուխն անցած արագ ասպատակութիւն

¹ Busbeeq, Itinerarium Amasianum (Anvers 1582), p. 59 կը նկարագրէ այսպէս. Տունը հարթ կաւահողէ տանիք մըն է առանց որեւէ բարձրութեան. հին սեան կտոր մը իբր գլան կը դորձածեն, զոր առջին անդին դրոբելով, էթէ տանիքի մաս մը անձրեւէ կամ հովէ խախտած ըլլայ՝ դարձեալ կը պնդանայ ու կը հարթանայ:

² Հմմտ. Comptes rendus Acad. des Inscr. 1905, p. 348 ff. ուր այս երկու բնագիրները հրատարակած ենք եւ լուսարանած: Հոս կ'ամփոփենք նոյն տեղեկագրութեան արդիւնքները:

մ'ըրաւ մինչեւ Կապպագովկիա¹: Մտադրած էր նորէն աշխարհակալել բոլոր այն երկիրներն՝ որոնք երբեմն Աբբայից - արքայներուն հպատակ էին, մինչեւ Եգէական ծովուն ափը: Փոքրուն - Ասիոյ մէջ տազնապար սաստիկ յուզումնալից եղած ըլլալու էր: Ուստի այս տազնապալից պարագայից մէջ Կապպագովկիոյ կուսակալը հապճեպով նորոգել տուաւ այն ուղիներն՝ որոնք դէպ ի վտանգուած աշխարհամասը կը տանէին: Ճամբու այն հատուածը՝ որ հիւսիսէն հարաւ Զելան Սերաստուպոլսոյ հետ կը կապէր, կը թոյլատրէր որ Ամիսոս ցամաք հանուած զօրագնդերը բոլորովին ուղղակի դէպ ի Սերաստիա եւ թշնամութեանց ասպարէզը խաւրուէին²: Թերեւս նոյն իսկ ինքնակալն այս ճամբան բռնեց, երբ նոյն 231 տարին Թրակիայէն եկաւ Եփրատի սահմանադուխը³: Այսպէս՝ այս երկու նոր մղոնաքարերը կը ճշգրտեն Աղեքսանդր Սեւերոսի արեւելից պատերազմին այլեւայլ մանրամասնութիւնները. որ արշաւանքը մեղի ծանօթ է միայն երրորդ ձեռքի պատմութիւններէ եւ կասկածելի մատենաքաղ խմբագրութիւններէ:

Մա'ալուժ - Սէյիտ - Թէքէն անցնելէն քիչ մ'ետքը հին ուղին՝ ինչպէս նաեւ արդի ճամբան՝ կը մանէ Ջրաշատ հովիտը, ուսկից իւր անունն առած է դաշտին մէջ կանգնած աւանը՝ Սալու - Սէրայ (Ջրաշատ - ասպարանք): Արագ ընթացքով մը փութացինք հասնելու նոյն օրւան մեր օթեւանը, որովհետեւ դիշերը կը մօտէր: Մայր մանող արեւը կը լուսաւորէր խորանարդաձեւ տները՝ որոնք կանգնած են բլրակի մը վրայ, որուն ներքեւ ծած-

¹ Զոնարաս. ԺԲ. 5. էջ 619 A: Սինկեզոս՝ էջ 674. 5. հար. Բոն քաղաքի:

² Սերաստուպոլիս - Սերաստիա ճամբուն մասին հմտ. Անդերսոն՝ վերը. Ա. § 17 եւն:

³ Հմտ. Շէլլեր. Պամ. Հոմ. Կայսր. Ա. էջ 779 եւն:

կուած են Հին Սերաստոպոլսոյ աւերակները : Ըստ կր հասնինք անցնելով Հին կամրջէ մը . որ թէեւ փեռեկտած ու քայքայած՝ տակաւին թողլ կու տայ անցնելու Չէքէրէք-Իրմակի՝ Յունաց Սկիւլաքս՝ գետոյն վրայէն (Պտկ.) :

§ 14. Ուսոյն-Ուսոյն¹ : — Սուլու-Սերայ այժմ հարիւր քսան երդով թուրք խեղճ գիւղ մըն է : Իւր արգի բնակութեանց բնօրհասնուր խեղճութիւնը , որոնք երկրին սովորութեան համեմատ շինուած են փայտէ ու անկօփ սրմաքարէ՝ հողածածկ տանեօք , հակապատկեր մըն է Հին վիմաքարերուն շքեղութեան հանդէպ , որոնք պերճակերտ յիշատակարանաց մնացորդներն են , եւ այս հատակօտորները գործածուած են ոլորմելի նոր շինութեանց մէջ : Գիւղացիները սրբատաշ կուփուած քարեր գտնելու համար միայն հողը փորել պէտք ունին , եւ հանած են բազմաթիւ քանդակագործ մարմարներ : Քոլթարի կտորները ազուցուած են խիպարով լեցուած պատերուն մէջ . զլխիվայր գարձած խոյակներ կը ծառայեն խոհանոցներուն մէջ թանձր գերանները կրելու՝ որոնք ձեղուան տակտակակերտը վեր կը բռնեն . քանդակագործութեանց կամ արձանագրութեանց ուրիշ հատակօտորներ թափուած են ճամբաններուն եզերքը , կամ շարուած են պարտեղներուն բոլորտիքն իբր ցանկապատ . ամէն կողմ երեւան կու գայ այս անհետացած քաղաքին սակաւատեւ փառաւորութիւնը :

Հին մատենագիրները հազիւ թէ կը յիշեն քաղաքիս անունը : Սակայն այս անունէն եւ Պղիննեայ մէկ վկայութենէն կ'երեւայ թէ կը հետեւի այն կէտը թէ Աւգոստոսէ շինուած էր Սերաստիոյ

¹ [Տես բնագրին էջ 199 մեծադիր պատկերը՝ «Սուլու-Սերայ, Հին Սերաստոպոլսոյն»]

Հետ միեւնոյն ժամանակ¹: Նոյն բաղձագիր մատենագրին ժամանակ տակաւին շատ պղտիկ քաղաք մըն էր: Իւր կարեւորութիւնն ստացած է ուղիներու այն ցանցով՝ զոր Փղաւեանք եւ անոնց յաջորդները Փոքուն-Ասիոյ արեւելակողման մէջ գծել տուին: Սեբաստոպոլիս կ'իյնար այն մեծ պողոտային վրայ, որ Գաղատիոյ Տաւիումէ գալով գէպ ի Սեբաստիա եւ Հայաստան կ'երթար², եւ կ'ապահովեցրնէր սահմանադիտին Հետ պետութեան հաղորդակցութիւնները: Այս կարեւոր կայանին բարգաւաճումն արագ եղած ըլլալու է. եւ Հռոմէացուց այս նոր քաղաքը կը ձգտէր նսեմացընել իւր դրացւոյն՝ Հին քրմական Չելայի պայծաութիւնը: Չօն մը (արձ. Թ. 285) յՏրայիանոս կայսրը կը կոչէ «փրկիչ եւ բարերար ժողովրդեան». եւ ուրիշ յիշատակարան մը կ'իմացընէ մեղի թէ «Սեբաստոպոլեայ Պոնտոսի ծերակոյան ու ժողովուրդը, դեսպանութիւն մը խաւրած են Աթէնք, որպէս զի Հոն՝ Ողիւմպէոնի մօտ՝ յիշատակարան մը նուիրեն նոյն ինքնակալին³. վերջապէս այս ինքնակալին օրով կը սկսի քաղաքիս դրամահատութիւնը⁴: Ուստի կ'երեւայ թէ Տրայիանոս՝ որ Գաղատական Պոնտոսը միացուց վերակազմեալ Ապպադովկիոյ Հետ, ուղած էր Սեբաստոպոլիսը հռոմէացման կենդրոն մ'ընել տակաւին կէս բարբարոս

¹ Պլինիոս, Բն. Պամ. Զ. 3, § 8. In Colopene vero Sebastia et Sebastopolis [haec parva sed paria supra dictis]. (Իսկ Վոչրպէնէի մէջ Սեբաստիա եւ Սեբաստոպոլիս, փոքրիկ՝ բայց հաւասար վերոյիշելոց): Հիմնարկութեան պարագայից մասին տես Անդերսըն՝ վերը՝ Ա. § 16:

² Ուղեգր. Անտոնինեայ, 205, 214. Հմմտ. Անդերսըն՝ վերը, Ա. § 17:

³ CIA, III, 483.

⁴ Բարբլոն եւ Ռայնախ, Դրամք Փոքուն-Ասիոյ, Ա. 102 եւն:

(ոչ-հռոմէական) երկրի մը մէջ¹: Կ'երեւայ թէ Ադրիանոս այս քաղաքն այցելեց 124ին Յ. ք. ². եւ քաղաքը շարունակեց այս իշխանին եւ յաջորդաց ժամանակ զարգարուիլ նոր շինուածքներով: Կրնանք յառաջ բերել ասպարէզ մը (ստագիոն)՝ ուր ժողովրդեան կը ներկայացուէին որսախաղեր եւ սուսերամարտութիւններ. անդաստակ մը՝ ուր կրպակներ վարձու կը տրուէին վաճառականաց, կրթարան մը (gymnasium)³, մեհաններ⁴, եւ բաղնիքներ արձաններ: Յունարէն լեզուն հոս յաջորդաբար կը մշակուէր. գիւղացի կին մը՝ որ ծնած էր քաղաքը շրջապատող լեռներուն մէջ, բաւական ուղիղ չափականի մը մէջ կը յիշէ թէ ինչպէս քերականէ մը կրթուելով՝ կրնայ այժմ խօսակցիլ ամէնուն հետ, մինչդեռ յառաջ լռութեան դատապարտուած էր (արձ. թ. 300): Բայց Գ. դարու մեծ ճգնաժամը կ'երեւայ թէ քաղաքակրթութեան այս վառարանին պայծառութիւնը նսեմացուց: Սեբաստուպոլիս կը յիշուի գեռ Յուստինիանու օրով իբրեւ Երկրորդ Հայոց քաղաքներէն մին⁵. եւ բիւզանդեան շրջանին աթոռանիստ էր եպիսկոպոսի մը՝ որ Սեբաստիոյ մետրապոլիտն օգնականն էր⁶. բայց իւր կարեւորութիւնը չափաւոր էր: Թ. դարէն ետքն ալ չի խօսուի իւր վրայ:

¹ Հռոմէացի կին մը փորագրել տուած է նաեւ յունալատին տասպանագիր մը (արձ. թ. 301): Հմմտ. Լատիններէն ձօնը (հռոմէական) գործակալի մը (արձ. թ. 291):

² Արձ. թ. 286, 287: Հմմտ. Dürr, Die Reisen des Kaisers Hadrian, p. 53.

³ Արձ. թ. 287, 290:

⁴ Պատկերները գրոշմուած՝ գրաձեւերուց վրայ. Բարբլոն եւ Ռայնախ, անդ, Տխտ. Ժ.Դ, պակ. 23 եւն:

⁵ Օրէնք, ԼԱ, 1:

⁶ Lequien, Oriens Christianus, I, p. 425.

Իւր զարգացումն եղած է հեթանոսութեան շրջանին, ինչպէս արձանագրութիւնք կը վկայեն: Մեր հաւաքած նոր բնագիրներուն մէջ կը գտնուի ձօն մ'առ Բարձրեալն (Θεὸς Ὑψίστος), յորջորջանք մը՝ զոր հրէացած հեթանոսները կու տային Իսրայէլի Աստուծոյն (արձ. թ. 284): Երեւան հանուած են դարձեալ բազիլներ՝ նուիրուած Ասկղեպեայ եւ Ապողոնի Օգնականի (արձ. թ. 282—3), երկու բժշկիչ աստուածներ, որոնց՝ պաշտօնասիրաց բաղմութիւն մը կ'ապահովէին այն բուժիչ ջրերը, որոնց վրայ քիչ մ'եաքը պիտի խօսինք: Սակայն քաղաքին դիւաւոր աստուածութիւնն էր Հերակղէս, որ քաղաքին իբր հիմնադիրն (χτιστής) ալ կը համարուէր, եւ որուն համար քաղաքն երկրորդական անուն մ'ալ ունէր՝ Հերակղէոպոլիս¹: Քաղաքին այս պաշտպանին հսկայագործ արձանը կանգնած էր կամարակերտի մը ներքեւ՝ որ երկու շորեքսիւնեան մեհեաններ իրարու կը կապէր²: Այս Հերակղէսը թերեւս յունական տեղակալ մ'ըլլալու է մագդեղական ոգւոյն Վերթրագնա (Վ-հ-դն), որուն հետ կանոնաւորապէս կը նոյնացուի Հայաստանի մէջ³. Քայց միւս կողմանէ Աեփաղիոնի պատմած մէկ զրոյցին համեմատ՝ այն դիւցալն, մոյրած Հիւղասայ ունեցած իւր սէրէն, թողուցած ըլլայ Արգոնաւորները եւ թափառած Վապպագովկիոյ մէջ⁴. Ըսել է թէ ուրեմն այս տեղ մասնաւորապէս կը պաշտուէր: Վերջապէս Ինքակալաց մատուցուած քաղաքաբաշխական պաշտաման մը գոյութիւնը

¹ Արձ. թ. 286. Հմմտ. Բարբլոն եւ Ռայնսխ' անդ:

² Հմմտ. գրամները, զոր նմանատպած են Բարբլոն եւ Ռայնսխ, Տխտ. ԺԴ, պակ. 23—27:

³ Monum. rel. aux Myst. de Mithra, I, p. 133, Nr. 29. Հմմտ. էջ 143:

⁴ Fragm. hist. graec. III, 626:

մատնանիշ բրած է արդէն Անդերսըն (վերը՝ Ա, § 16):

Սուլու-Սէրայ Պոնտոսի ամէն ուրիշ քաղաքներէ աւելի բազմաթիւ արձանագրութիւններ բնծայած է՝ ի բաց առեալ միայն Ամասիան: Իւր հնախօսական հարստութիւնները թէեւ նոյնչափ առատ չեն՝ սակայն արհամարհելի ըլլալէն ալ շատ հեռու են: Այլեւայլ յիշատակարանաց տեղն այսօր ալ կը նշանակուի կանգուն մնացած աւերակներով: Գիւղին վարը, ոչ հեռու հասարակաց աղբիւրէն՝ որ գետ տանող ճամբուն վրան է, գորշ մարմարէ մեծ սեան մը (չըջապատը 2՛65 ռ) բունը տակաւին գուրս ցցուած է հողէն, որուն մէջ խրած է խարխիւր. իսկ անոր ետեւը՝ քար մը՝ եղբրքը դիտարկելով, եւ ծակուած չորեքանկիւն ծակով մը, կ'երեւայ թէ դրան մը մէկ կողմնական բարաւորն ըլլայ (Պտկ. մեծ՝ բնագրին էջ 205):

Աւելի նշանաւոր է Սկիւլքս գետոյն վրայ ձգուած կամուրջը (Պտկ.՝ բնագրին էջ 201): Թէպէտ եւ անարուեստ նորոգութիւններ կրած է՝ սակայն ստուգիւ հին են իւր հինգ կամ վեց կամարները, որոնց մէկը կամ հաւանօրէն երկուքը թաղուած են այսօր աջ ափին փուլին տակ: Կամարները շինուած են կրաքարային գեղեցիկ չորեքկուսի եւ այնպիսի ճշգրտութեամբ կարգած քարերով, որ յայտնապէս կը զանազանուին կամրջամտից ճամբուն եւ կամրջայտակի իրարու աննման այլակերպ ատաղձներուն միայն մերձաւոր զօգուած էն: Խարխիւած կամարակալները հաստատելու համար բերուած ամէն տեսակ այս քարերուն մէջ կը գտնուի այն հռչակաւոր ձօնը՝ ուր կը յիշատակուի Առիանու մատենագրի՝ Ապպաղովկիոյ կուսակալին՝ անունը 137ին (արձ. թ. 286). եւ ուրիշ մը՝ որ դժբախտաբար շատ մաշած ու ծայրատած է (արձ. թ. 293): Անյաջողակ նորոգութեանս համար՝ ասոնց հետ գործածուած են

նաեւ ճօփորի կտոր մը (երկայնք՝ 2.40 մ, բարձր՝ 0.60 մ), որուն ուրիշ մէկ բեկորը կ'երեւայ թէ կանգնած է՝ իբր կոպար՝ շրջափակի մ'անկիւնը՝ գիւղին արեւելակողմը (բարձրութիւն՝ 1.20 մէ աւելի): Նիւթն է դորշ մարմոր մը կարմիր երակներով, ուր քանդակուած են շարք մ'անասուններ, որոնք աւելի կամ նուազ ճանաչելի մնացած են (Պատկ.): Տակաւին կը զանազանուին յարձակող ցուլ մը եւ առիւծ մը՝ զոր Սէր մը կը տանի: Հաւանական է թէ այս խորաքանդակները կը զարդարէին ասպարէզն, ուր՝ ինչպէս ըսինք՝ կը ներկայացուէին վայրի գազանաց գազանամարտութիւններ (χουνηγέσια):

Ճարտարապետական բազմաթիւ ուրիշ հատակաորներ ցանուցիր սփռուած են գիւղին եւ շրջակայից դրեթէ ամէն կողմ: Յառաջ կը բերենք (Պատկ.) քառանկիւն կիսասեան գեղեցիկ խոյակ մը ճերմակ մարմարէ՝ քանդազարդարուած ականթի երեք տէրեւներով եւ ասոնց վրան՝ ոլորածոյ պարոյրներով. եւ պսակի հատակաոր մը՝ որ աւելի սովորական զարդածեւ ունի, այսինքն՝ արջաագլուխ մը որ կը կրէ ծաղկանց դրասանգ մը՝ վարդազարդով իւր երկու եղջիւրներուն մէջ (Պատկ.): Գորշ մարմարէ խիստ ուռուցիկ դորիական սիւն մը գործածուած էր իբրեւ նեցուկ անկան մը, որուն հաւասարակշիռ հաստաութեան լաւ հոգ չէր տարած որմնադիրը:

Բիւզանդեան շրջանին ալ տակաւին շինութիւնք կ'ըլլային Սեբաստոպոլսոյ մէջ, որ եպիսկոպոսանիստ մ'եղած էր: Հասարակաց աղբիւրի մը քով դրուած տեսա՛ք բիւզանդեան խոյակ մը. որուն վերնախարիսխը զարդարուած է սաղարթազարդերով, իսկ վարը կոփուած էր թաթածայր խաշ մը տերեւազարդի երկու փնջերու միջեւ:

Սակայն եւ այնպէս Սեբաստոպոլսոյ քրիստոնէական արձանագրութիւններ չեն գտնուած

բուն քաղաքին մէջ, այլ քիչ մը հեռուն: Սուլու-
Սէրայի հարաւ-արեւմուտքն իբր կէս ժամ հեռու՝
գեաւափին մօտ՝ կը բղխի Ներմկային ջուր մը: Սիրուն
շէնք մը՝ շինուած հին աւերակներէն առնուած
քարերով, այս բաղնիքին աւազանն անզգոյշ հայե-
ցուածքներէն կը պատասպարէ (Պտկ.)¹: Տաք ջուրը՝
որ գետնէն առատօրէն կը ցայտէ, ծծմբային զօ-
րաւոր հոտ մը կը բուրէ: Բայց մենք փորձութիւն
չունեցանք այս ճաշակն առնլու, որովհետեւ երի-
տասարգ Չէրքէզներու խումբ մը ջրոյ մէջ բերկրա-
նօք կը խայտար: Քովժարի մը կտորին վրան՝ որ
իբր գրան վերին բարաւոր գործածուած է, կանգ-
նած է փոքրիկ ութանկիւնի բազին մը, ուր
կրնանք տակաւին ընթեռնուլ ձօն մը առ Ապաղոն,
որ երբեմն լրած էր նշանաւոր հիւանդի մը աղա-
չանքն՝ «հիւպատաւորի մը ժառանգորդին» (արձ.
թ. 282): Անտարակոյս այս բուժիչ ջրերը պատ-
ճառ եղած էին նախնաբար երկրիս բնակիչներուն
այս տեղերը հաւաքուելուն. — շեմ գիտեր թէ
Սերաստոպոլսոյ նախնական Աբ-ն-անունը² յա-
րաբերութիւն մ'ունի՞ արդեօք յունարէն չորջոյղ
(աղբերակն) բառին հետ. — եւ մեր օրերս Վաւ-
կասէն եկած գաղթականները բաղնիքիս քով
հիմնած են գիւղ մը՝ զոր մկրտած են Ջերմուկ
(Tchermouk) անուամբ: Մեր անցնելու ժամա-
նակ գիւղին մզկիթը կը շինէին: Աօկէ հինգ վայր-
կեան անդին՝ Չէրքէրէք-Իրմակի ձախ ափը՝ քրիս-
տոնէական հին գերեզմանոց մը կայ, զոր Չէրքէզ-
ներն՝ իբրեւ ճարտար մարդիկ՝ իբր քարահանք
կը շահագործեն: Հեռուն ծախելու կը տանին գե-
րեզմանաքարերը. եւ մեզի ըսին թէ սակից են այն
բիւղանդական տապանադրերը, զորոնք մեր նա-
խորդները՝ ինչպէս նաեւ մենք ալ օրինակած ենք
Ջիլէի եւ Չիֆթլիքի մէջ (թ. 302 եւն):

¹ Տես բնագրին էջ 209 մէջ Պատկերը՝ «Ջերմուկն»:

² Տես Անդերսըն վերը՝ Ա, § 16:

Ե. Սերաստիա եւ Կողոպենէ:

§ 15. *Մսկոն-Միլայի Մերաստիա* (Քարտէս ԺԵ—ԺԶ): — Սուլու-Սէրայէ Սերաստիա երթալու համար երկու ճամբայ կայ. մին՝ աւելի գիւրինը՝ կ'երթայ Բուլուսի քով կը միանայ Եւզո-կիայէն եկող խճուղւոյն, կը կտրէ Չամլու-Բէլի մէկ պարանոցը եւ կ'իջնայ դէպ ի Եէնի խան. միւսը՝ աւելի կարճ՝ կը դիմէ դէպ ի հարաւ, կը պատի Չամլու-Բէլի արեւմտեան դարերուն բոլորտէքը եւ Եկիջիկի քով կը միանայ Եողլատէ Սերաստիա տանող մեծ պողոտային: Պր. Անգերսըն առաջին ճամբան բռնած ըլլալով՝ մեկը ընտրեցինք երկրորդը (5 մայիս շաբաթ): Ճամբան՝ որ սայլերու համար ալ անցանելի է, Չէքէրէք-Իրմակի ընթացքին կը հետեւի մինչեւ Զերմուկի բաղնիքը (տես վերը), անցնելով դաշտին վրայ տիրող բարձր բլրոյ մը ստորոտէն: Գազաթին վրայ կղզիացեալ կանգնած երկու ծառերը կը ցուցնեն իբր թէ մահմետական սրբի մը դերեզմանը, որ անտարակոյս բիւզանդական «Եղիայի» մը տեղը բռնած է, ինչպէս վերջինս ալ որեւէ անդական աստուածութեան մը տեղը փոխանակած առած էր¹: Պատմական ամէն յեղաշրջութեանց մէջ ալ բնավայրին տեւականութեան օրէնքը կը պատշաճի դիւցական էակաց ալ՝ ինչպէս մարդկան: Աէս ժամու ճամբորդութենէն մ'ետքը թողուցինք գետը եւ սկսանք ելլել մացառապատ բարձունքներն, ուր առաջին բողբոջները կը պոկէին, եւ յետոյ իջնալ անձուկ կրճի մը մէջէն, որ ապառաժուտ զառիվայրի մը շարունակութիւնն է, դէպ ի Գեւմուադէ-սու՝ Չէքէրէքի մէկ օժանդակը: Հասանք գետն՝ որ դէպ ի հիւսիս-արեւմուտք կը սահի, Բայ-չէթ-Թէտէ գիւղին քով (2¹/₂ ժամ Սուլու-Սէրայէ):

¹ Տես վերը՝ Բ., § 10¹:

Ասկէ անդին ճամբան աւելի դիւրին է. դետափն ի վեր կ'երթայ աջ եղբրքին երկայնութեամբ՝ մերթ հովտին խորքէն, մերթ լեռան կողէն. եւ տեղ տեղ անձկացած հեղեղատին մէջ իրեն անցք մը բացած է ապառաժին մեջէն որ խորունկ կտրուած է: Սայլերու անիւնները տակաւ տակաւ անուահեղքեր ակօսած են դիմացկուն կրաքարին մէջ: Տարակոյս չկայ որ ասոնք դարերէ ի վեր այս արահետին վրայ կը թաւալին: Սակայն ս'վ արդեօք նախ բացած է անոնց այս դիւրին ճամբան: Չենք դիտեր. բայց տարակուսական ալ չէ թէ արդէն հնութեան ժամանակ ասկէ կ'անցնէր Սեբաստիոյ եւ Կապպադոզիկիոյ միջեւ հաղորդակցութեան ճամբայ մը: Ասիկայ՝ Պոնտոսի հիւսիսէն դէպ ի հարաւ ընթացող Ամասիա-Չելա-Սեբաստոպոլիս ճամբուն բնական շարունակութիւնն է:

Սակայն հռոմէական կամ բիւզանդական մնացորդներ չգտանք մինչեւ Շէյխ-Ալէլ-Թէէէ (3³/₄ ժամ Սուլու-Սէրայէ): Մղկիթին մուտքին ճօտ զետեղուած է սեան մը մէկ կտորը, եւ ուրիշ սիւներ գործածուած են բուն իսկ մենարանին (Դէէէ) շինութեան մէջ. ճօտակայ վտակի մ'եղեբրը գերեզմանական կոթողի մը մէկ բեկորը մեծ խաչ մը կը կրէ. գերեզմանոցին մէջ ինկած է բարաւորի մը մէկ հատակոտորը: Յայտնապէս Գէրվիշներն՝ ինչպէս Էւքայիտայի մէջ¹, հօս ալ յունական կրօնաւորները վտարած են եւ անոնց տեղը նստած:

Շէյխ-Ալէլ-Թէէէ նստած է փոքրիկ դաշտի մը բերանը, որ հողմահարածեւ կը բացուի եւ զօր արեւելքէն արեւմուտք կը կտրէ կ'անցնի Եողղատէ Սեբաստիա տանող նոր խճուղին՝ գիւղէն իբր կէս մղոն անդիէն: Գաղատիոյ Տաւրուսէ դէպ ի Պոնտոսի Սեբաստիա տանող հին հռոմէական ու-

¹ Հմտ. Անդերսըն, վերը՝ Ա, § 3:

ղին ալ գրեթէ նոյն ուղղութիւնն ունեցած ըլլալու է, որ երկրին աշխարհագրական կերպակազմութեանէն անհրաժեշտօրէն կ'որոշուէր: Անտանինեայ Ուղեգրութիւնը (204, 5) Սէբէ (Սէբէ)՝ այսինքն՝ արդի Եէնի-Խանէ¹ երեսուն մղոն հեռուն կը գնէ Աէբէ՛է կայանը: Մենք այն կէտէն՝ ուր կրկին խճուղին հասանք, մինչեւ Եէնի-Խան՝ հաշուեցինք 44 քիլոմետրէն քիչ մ'աւելի, որ գրեթէ ճշգրտօրէն կը համապատասխանէ հոռոմէական չափին: Անտարակոյս հին ուղեգիծը թեթեւօրէն կը թեքէր դէպ ի հիւսիս, եւ Ագրիանէ կը գտնուէր այն տեղը՝ ուր Սեբաստոպոլսոյ ճամբան կու գար կը միանար: Շէյխ-Ալիլ-Թէքեէ տեղը Ագրիանէի հետ նոյնացրնելը մեղի այնչափ աւելի հաւանական կ'երեւայ, որչափ՝ ինչպէս կը յիշեցրնէ Ռամսէյ, «Աէբէ՛է» բիւզանդեան շրջանին աւելի կարեւորութիւն ալ ստացաւ. ասի Քարսիանոն բանակաթեմին մէկ ամրատեղին էր, եւ կը յիշուի Պաւղիկեանց դէմ մղուած պատերազմներուն առթիւ²:

Ասկէ ետքը մեղի կը մնար միայն հետեւիլ տաճկական խճուղոյն մինչեւ նահանգին (Վիլայէթ) գլխաւոր քաղաքը: Այս խճուղին՝ որ նոր շինուած է, համեմատաբար լաւ վիճակի մէջ է, եւ ճամբուն եզերքէն ընթացող հեռագրական զծին ձողերը բոլորովին քաղաքակրթեալ երեւոյթ մը կու տան անոր: Այն տեղը՝ ուր Ագրիանէի դաշար շրջապատող լեռանց շրջանակը կը սեղմուի՝ հաստատուած է շէն մը, — տակաւին միայն 11 տուն ունի եւ

¹ Հմմտ. Անդերսըն, վերը՝ Ա, § 18:

² Ռամսէյ, Պամ. Ալի. էջ 265: — Կիպրոս՝ Փոքուն Ասիոյ իւր վերջին քարտիսին վրայ Ագրիանէն կը տեղափոխէ Մուշալէմ-Կալէ տեղը, որ շատ աւելի դէպ ի արեւելք է, եւ հաւանօրէն իրականին կը համապատասխանէ Սէբէ-բէյի հմմտ. Ռամսէյ՝ անդ:

մղկիթ մը, — եւ կը կոչուի Քէ-չէ-+-է-է-է-է-է (փոքր է կիջիկ)՝ զանազանելու համա, համանուն հին է կիջիկէ, որ հիւսիսակողմը լեբան մէջ նստած է Գրացի բարձունք մը զբաւոյ գերեզմանոցը կրաքարային երեք սիւներ կը պարունակէ, որոնք անձրեւէ կերուած մաշած են, եւ որոնք հաւանորէն հին մղոնաքարեր են, յարակից ապացոյց մ'ալ՝ եթէ պէտք մը կար ապացոյցի՝ թէ Տաւիումէ Սերաստիա տանող ճամբան այս կողմէն կ'անցնէր: Ան ալ՝ իրեն յաջորդող ուղոյն պէս՝ կ'օգտուէր այն դօգաւորութենէն, որ Չամլու-Բէլի եւ Ակ-Տաղի զուգահեռական լեռնաշղթանները կը բաժնէ, եւ որ թոյլ կու տայ՝ առանց սեպաբերձ կողի եւ գառիթափ դարի՝ անցնելու այն շատ բարձր գագաթնազիծը, որ Հիրիկի աւազանը կը բաժնէ Աղիսի աւազանէն:

Անցքը գիւրին է, բայց տեղը՝ անշէն: Նախ խորամուխ կ'ըլանք երկայն կապան մը շոր լեռներու մէջ, առանց ծառերու եւ արօտներու, ուր ապառաժն ամէն կողմանէ կարճ մարմանդ մը կը փեռեկտէ: Անձրեւները հեղեղատած են զաւիպայրները եւ գեղնորակ կամ մրադոյն հողին մէջ զուգահեռական ակօսներ փորփորած: Ամենադոյն մրկին ալ պէտք է որ ջրերն այս մերկ բարձունքներէն սաստկահաս գահավէժ թափուին: Ատակներուն բարձրասեպ ափերը կրճուած են հոսանքէն, որ նաեւ խճուղոյն փայտէ կամուրջները առած տարած է: Հեղեղատերէն ծանծաղով անցնելու համար՝ կողմնակի ճամբայ մ'ինք իրմէ բացուած կը գործածուի՝ պաշտօնական ճամբուն քովէն՝ ուր խոտ կը բուսնի: Մեր կարաւանը գանդաղօրէն կը շարժի այս ամալի արահետին վրայէն, առանց տան մը եւ առանց ճամբորդի մը հանդիպելու: Մէկուկէս ժամ ետքը ցորենի քանի մ'արտեր կը նշմարուին՝ կանաչ սվասիս մ'այս անապատին մէջ. ասի Արզըլ-բաշներու Ա-բ-Ա-յ-

դիւզն է՝ յիսունի չափ քարակերտ աներով, որոնք հողին մէջ թաղուած ու կիսով կը ծածկուին՝ ջրուն պատասպարուելու համար: Յետոյ կրկին կը սկսի վերելքը: Ճամբան շիտակ գծով կ'երկարի տխուր սարահարթի մը մէջէն, որուն կենդանութիւն տուողն է միայն յեղեղուկ դնացքով առուակ մը՝ որ Հիրիկի վերջին օժանդակիկն է: Գետինը միայն տկար գալարութեամբ ծածկուած է. քանի մը տխեղձ փիճիներ կը գողգոջին հիւսիսային կծու հովէն որ կը փչէ. եւ խոռոչներու մէջ տակաւին հալած չէ ձմեռուան ձիւնը: Ղերջապէս կը հասնինք գագաթը՝ 1585 մետր բարձրութեամբ: Կեր առջեւը պայծառ երկնքի վրայ՝ ամենավճիտ թափանցիկութեամբ մթնոլորտի մը մէջ՝ կ'երեւան Չարտակլու-Տաղե շողշողուն կատարները, հիւսնային վիժակ մը՝ որ այս մենութեան մէջ կը բայուի:

Ասկէ ետքը կամոց կամոց կ'իջնանք՝ գրեթէ ուղիղ գծով՝ դէպ ի Կալան-չայ մինչեւ Կ--- (2³/₄ ժամ Կարա-Վայայէ). որ մահամտական գիւղ մըն է ութսուն երգով: Փողցկի մը եղերքը՝ սպիտակ մարմարէ կոթող մը (Պակ.) հռոմէական ժամանակի տապանագիր մը կը կրէ (արձ. թ. 345): Ասի հին քաղաքակրթութեան միակ հետքն էր՝ որուն հանդիպեցանք մեր վերջին օթեւաններուն միջոցին: Անտառներուն անհետանալէն ալ յառաջ այս դժնդակ բարձունքները սակաւաբնակ եղած բլուրու են միշտ: Մարդիկ աւելի լաւ պատասպարուած գաշտերուն մէջ փնտռած են ջերմութիւնը՝ որ կը պահպանէ արգասաւորութիւնն ու կեանքը:

Երեք ժառորդ ժամ ճամբորդելով հովաթի մը մէջէն, որ երթալով կը լայնանայ, Կաւակէն կը հասնինք Եէնի-Խան, հին Սիւր-¹, ուր կը միանան

¹ Հմմտ. Ընդերուն, վերը՝ Ա. § 17:

Եռզդասէ եւ Եւզոկիայէ գէպ ի Աերաստիա դա-
ցող ճամբաները: Իբրեւ սազմագիտական գիւրը՝
այս կէտք մեծ կարեւորութիւն ունեցած բլլալու է
միջինդարու պատերազմաց ժամանակ. եւ յայնա-
պէս առի գրգամ բլլալու է Թուրքերը հսն բերդի
պէս ամուր կարաւանատուն (քարաւանսարայ) մը
չինելու: Հեթ անստական կամ քրիստոնէական
յիշատակարաններէն ամենափոքր պատի կտոր
մ'ալ մնացած չէ: Սակայն մեզի ցուցուցին յու-
նական հին եկեղեցւոյ մ'աւերակները, այսինքն՝
քարերու շեղջակոյս մը, որոնց մին դարդարուած
է խաչով մը, եւ սիւն մը՝ որուն խարխախր հողին
մէջ թաղուած է: Մօտակայ գերեզմանոցին մէջ
կոթող մը քահանայի մը տապանագիրը կը կրէր
(արձ. թ. 349):

Եւնի-Խանէ Աերաստիա տանող յաճախ
այցելուած ճամբուն օթեւանները ճշգրտութեամբ
նշանակած է Անդերսըն (տես վերը՝ Ա, § 18):
Ուստի կրնանք հրատարիչ նշյնը նկարագրել:
Միայն քանի մը խօսք կ'ըսենք տասնկամարեան
այն մեծ կամրջին մասին, որուն վրայէն կ'անցնինք
Երբորդ-Իրմակ գետը: Այսն զի սազացոյց մը կ'ըն-
ծայէ մեզի թէ արդի խճուղին հին ճամբուն գծին
կը հեռելի: Իւր ներկայ վիճակին մէջ նշանաւոր
արուեստակերտս ապահովապէս Աելջուկեան շրջա-
նէն աւելի հին չէ, եւ բազմութիւ մասնական
նորոգութիւններ կրած է. երկու ափանց կամար-
ները բոլորակամար են, մնացեալ միջինները՝ սրա-
կամար: Որեւէ Սուլթանի մը հրամանաւ կա-
տարուած մէկ վերանորոգութեան պատկանելու է
տաճկերէն այն բնձայագիրը, որ կամրջին ճեփոր-
մին ներսի կողմը գեակելուած է: Անսուած կա-
մարակայները նորոգելու համար նորէն գործա-
ծուած են ատաղձներ՝ որոնք փոխ առնուած են
քիչ շատ ամէն կողմէ. երբորդ կամարին մէջ ա-
զուցուած է հայերէն հին արձանագրութիւն մը:

Հինգերորդ կամարին տակ կը նշմարուի միջին դարու հետաքրքրական քանդակի մը կտորը. երեք մօրուեղ անձինք, դլուխներն խոյր եւ կարճ պատմաւսման հազամ՝ այնպէս մը վրայէ վրայ կեցած են որ մէկուն սոքերը կեցած են միւսին ձեռքերուն վրայ: Բայց աւելի նշանակալիցն այն է որ այսօր ալ կը տեսնուի հին կամարի մը ծայրը՝ դուրս ցցուած դեռոյն բերած աւազուտ հողակոյսէն, եւ այս կամարին մակարդակը գրեթէ երեք մետր աւելի խորունկ էր իւր դրացի կամարներու մակերեսէն (Պակ.): Ասիկայ անշուշտ աւելի հին կամարի մը մնացորդն է, որ շինուած էր այն ժամանակ՝ երբ դեռոյն անկողինն այսշափ բարձրացած էր¹: Կամարը կազմուած է կրաքարային հսկայ կտորներով՝ որոնք խնամքով շորեքհուսի կախուած են (1.40 m × 0.75 m × 0.40 m). եւ կամարաքարերուն (պորտաքարերուն) միոյն վրայ դէպ ի դեան ի վեր ու դեանի վար քանդակուած է խաչ մը: Հռոմէական շինուածին հաստատուն դանդուածը, որ բիւզանդեան շրջանին ալ գործածութեան մէջ մնացած էր, այսօր իբր ներքնակառոյց շինածամաս կը ծառայէ մահճեական ժամանակի շինուածքին համար:

Աստի հին ուղին՝ որ այսօր ալ կը գործածուի, կը կտրէր բլուրներն ու հովիտներ՝ ուղղակի հասնելու համար այն բնդարձակ գոգածը, ուր կը տարածուի Արզւ-Իրմակ (Աղիւս) գետը (Պակ.). որուն աջ ափին երկայնութեամբ կ'երթայ անկէ ետքը մինչեւ Սերաստիա մեծ քաղաքին արուարձանները:

§ 16. //նքստախա: — Գաղղիոյ հիւպատոսը՝ Պր. Գրենար (Grenard) ասպնջականութեամբ իւր բնակարանին մէջ ամենաքաղցր հիւր-

¹ Նման դէպք մը նշանակեցինք Ամստիոյ մէջ ալ. տես վերը՝ § 9, էջ 170:

ընկալութիւն մ'ընկելով մեզի, հին Սերաստիոյ մջ երեք օր մնալու պատճառ եղաւ, թէ եւ այս տեղ մեր հետախուզութիւնները շատ քիչ շահաւետ եղան: Թերեւս ուրիշ որեւէ տեղ մը՝ ասկէ աւելի բացարձակօրէն չի ստուգուիր այն սկզբունքը թէ քաղաք մը չ'ապրիր առանց իւր անցելոյն վնասովը վերանորոգուելու: Իրրեւ ճանապարհակիցք զինուորական զինուոր ուղեգծերուն՝ որոնք Փոքրուն Ասիոյ հիւսիս-արեւելքը կ'ակօսէին, հարկ էր որ Սերաստիա հասմական շրջանին սաղմաղիտական եւ վաճառականական մեծ կարեւորութիւն ստանար: Այսպէս Գիսկիեաիանու օրով մայրաքաղաք եղաւ¹ Առաջին Հայոց, եւ Յուստինիանոսե ետըն՝ որ իւր աւերած պարիսպները նորոգեց², Երկրորդ Հայոց³: Ամբողջ միջին դարու ժամանակ թերակիցչոյն մեծագոյն քաղաքներէն մին մնաց եւ Կեսարիոյ հաւասարը⁴: Իշխանանիստ քաղաք եղած հայ իշխաններու՝ ԺԱ դարուն⁵, թուրքման Էմիր-

¹ Հերոզէս, 713, 4: Արդէն Ղուկիոսի Աերոսի օրով Սերաստիա իւր գրամներուն վրայ ինք զինք կ'անուանէ *Μητροπόλις* (մայրաքաղաք): Բայց այս տիպարան այն ժամանակ պարզապէս պատուոյ յարջօրջանք մը միայն ըլլալու էր. օրովհետեւ քաղաքը տակաւին Պանասի կը վերաբերէր՝ որուն մայրաքաղաքն էր Եւսկիստարիա (տես վարք՝ § 22): — Հմմտ. Բարբրլան եւ Ռայնախ, Փոքրուն Ասիոյ գրամները, Ա. էջ 101:

² Պրակրպիոս, Վասն շին. Գ. 4 (էջ 253, 18 հրտ. բանի):

³ Յուստինիանոս, Օրինագիր ԱԱ, 1:

⁴ Երկեղաս, *Ժմեկ*. Գ. 5, էջ 152, 15 (հրտ. բանի): *Πόλις ἐνδαίμονες τε καὶ μέγισται Καισάρεια καὶ Σεβαστία* (Բարեբաստիկ եւ մեծամեծ քաղաքներ՝ Կեսարիա եւ Սերաստիա): Հմմտ. անգ, էջ 159, 8:

⁵ Քաղաքիս միջինդարու պատմութեան մասին՝ Հմմտ. Ռիտտեր, Աշխ. ԺԲ, 253 եւն. եւ յառկապէս ԺԱ դարուն համար՝ Girard, ի *Revue de l'Orient chrétien*, 1905, p. 82 ff., 169 ff., 281 ff., 339 ff.

ներուն՝ ԺԲ դարուն, և Աելջուկեան Սուլթաններուն՝ ԺԳ դարուն, վերաշինուեցաւ իբր 1224ին Ալա-էզ-Գինի ձեռօք, որ «կոփածոյ քարեր զործածեց բոլոր նոր պատերուն շինութեան համար»¹։ Այսօր ալ գլխաւոր քաղաք է բնդարձակ նահանգի մը (Էրզրոմ), և 40,000 է աւելի բնակիչ ունի։ Այսպիսի երկարատեւ բարդաւաճանօք մ'աւելիլաւ կը մեկնուի քան նոյն իսկ Լանկիթամուրի հրոսակներուն ձեռօք աւերուելովը 1400ին² իւր նախնական պատմութեան յիշատակարանաց գրեթէ լիակատար անհետացումը³։ Սերաստիա ցայսօր իբր հռոմէական ժամանակի արձանագրութիւն միայն խեղճ հաստակատար մը տուած է (արձ. Թ. 350), և հոն շղատնէր հին քանդակագործութեան և ոչ միակ բեկոր մը։

Աելջուկեանը՝ ինչպէս ուրիշ ամէն տեղ՝ հոս ալ կանոնաւոր կերպով քանդած են իրենց հեթանոս կամ քրիստոնեայ նախորդներուն շինութիւնները. բայց իրենց կառուցած շինուածոց չքեղութիւնը չքմեղել կու տայ այս քանդիչ բարբարոսութիւնը։ Մեհեաններու և կաթողիկէներու սպիտակ մարմնքը դործածած են միջինդարեան քանդակագործներն պնիւ խորշաղարդեր փորագրելու և մահճատական ճարտարապետու-

¹ Le Strange, The lands of the eastern chalybate, 1905, p. 147; հմմտ. 142, 145, 231.

² Կիւէ, անգ. Ա, 605:

³ Սերաստիա ունէր՝ ինչպէս կրնայինք սպասել՝ ամփիթէաքան մը, որուն համար սրսորդները հեռուները կերթային վաղեմի գազաններ բռնելու համար։ Գանէ սյուպէս կը պատմէ Ս. Բզափոսի (Վլլաս) Սերաստացոյ վարը, ի PG, CXVI, col. 818 ff. հմմտ. նաև Ս. Անտիոքոսի և Կիւրակոսի վեցարանութիւնը՝ Սիրմենդի Յայտմաւորքին մէջ, հրատ. Delehaye, էջ 821, 31, և 825, 4: Հմմտ. Սերաստացոյ զազանամարտութիւնները (venationes), վերը՝ § 14:

Թեան վայելչագեղ արարածները քանդակելու ։ Սըւազի վարժոցները (Ֆեդրէ-է), Թէեւ այսօր միասուած են եւ մասամբ կողոպտուած իրենց կիտուածագործ յախճապակեայ զարդարանքներէն¹, ԺԳ դարու արուեստին ամէնէն սքանչելի արտադրուած Թեանց կարգէն են ։ Հաւանօրէն շինուած էին հին աւերակներէն առնուած ատաղձներով ։ Արտով շափ հոգի մէջ Թաղուած այն սիւները, որոնք ասուած արանական այս դպրոցներուն գաւթին մէջ վեր կը բռնեն ծանրաբեռն սրածայր կամարները՝ որոնք այն դիւրաբեկ յենարաններուն համար տեղ տեղ շատ հաստարեւտ են, պատկուած են կորնթական եւ բիզանդական խոյակներով, որոնք հաստարեւտ են առանց միօրինակութեան մասին հոգ մ'ունենալու՝ ճիշդ ինչպէս է Իտալիոյ որեւէ հին եկեղեցւոյ մը մէջ (Պատկ.)² ։

Սերաստիոյ մէջ հնախօսի մը համար հրահանգիչ մնացածն իւր դիրքն է (Պատկ.)³ ։ Արդի քաղաքին արեւմտեան ծայրը՝ ձուածեւ ապառաժային բլուր մը կը բարձրանայ՝ գրեթէ քառասուն մետր բարձրութեամբ ։ Գաշտին մէջ՝ որուն վրայ

1 Grenard, Ի Journ. Asiatique, 1900, p. 450, ճշգրիտ նկարագրութիւն մը տուած է Սըւազի շորս հին վարժոցներուն (Ֆեդրէ-է)՝ իրենց արձանագրութեանց հաստի բնագրով ։ Ուրիշ հետաքրքրական մանրամասնութեանց մէջ կ'իմանանք թէ ասոնց ամէնէն ղեղեցկին՝ որ Գէօլ-Ֆեդրէ-է կը կոչուի (1271ին Յ. Բ.), ճարտարապետը յոյն մըն էր Վալչյան անուն [Καλοϊόάννης] ։ — Այս հիւանալի շինութեանց պատկերազարդ հրատարակութիւն մը տակաւին չէ եղած, ինչպէս նաեւ այլուստ Տիփրիկի Սելջուկեան յիշատակարանացն ալ ։ Հին գծագրութիւններն արդի պատկերմանց չեն համապատասխաներ ։

2 [Տես բնագրին էջ 220 կրկին պատկերներ՝ «Սերաստիոյ վարժոցներուն գաւթները» ։]

3 [Տես բնագրին էջ 223 մեծագիւր պատկերը՝ Սերաստիոյ ընդհանուր տեսքը ։]

կ'իշխէ, կզգիւացած այս բարձունքը հարիւր մետր միայն երկայնութիւն ունի: Տակաւին կը կրէ քանի մ'աւերակները Մոհամէտ Բ. սուլթանի օրով շինուած միջնաբերդին, որ արդէն աւերակ էր վերջին դարուն սկիզբը¹. Եւ հոս էր ապահովապէս հնութեան ժամանակ Սեբաստիոյ ակրոպօլիսը: Այս բնական բերդին դոյութիւնը՝ միացած զանի շրջապատող երկրին — հին Աողոպենէ — հարստութեան հետ պատճառ եղած էր Հռոմէացւոց զանի բնարելու՝ նոր քաղաք մը հոն հիմնելու համար²: Գազաթէն կը պարզուի տեսարան մ'ընդարձակ հովտին վրայ՝ ուր Սեբաստիա ապատօրէն կը ծաւալի, եւ դէպ ի հարաւ կը տարածուի մինչեւ բլուրներուն կապուտկեկ դրասանդը՝ որ Արզըլ-Իրմակի արծաթի ժապաւէնը կ'եզրապատէ: Արնանք երեւակայել այն տեսարանը՝ զոր երբեմն կը պարդէին այս դաշտերը, օգնութեամբ այն նկարագրութեանց՝ զոր կու տայ Ս. Գրիգոր Նիւսացի³. որոնք որչափ ալ այլայլած բլլան թանկագին ճարտարախօսութեամբ մը՝ լի են փորձառական մանրամասնութիւններով: Հիւսիսակողման լեռներէն իջնող գետակ մը, արդի Մուրտար-Սու կամ Տաւրա Սու, դաշտին բոլորը կը պատէր, կ'ըսէ ընդարձակ շրջանով մը, եւ ջանասէր երկրագործները նոյնը բաժնած էին հազարաւոր առուններու՝ իրենց մրգաստաններն ու մարգագետիններն ոռոգելու համար: Քաղաքին քով նշանաւոր լճակ մը կը կազմէր: Աւելի հեռուն Աղիւսի հոյակապ հոսանքը կը նպաստէր բեղմնաւոր ընելու հողը զանի-

¹ Ինճիճեան՝ Ռիստերի քով, անդ, էջ 257: Հմմտ անդ, էջ 265:

² Հիմնարկութիւն մը Պոմպէոսի կամ մանաւանդ Աւգոստոսի. հմմտ. Բարբլլոն եւ Ռայնախ, անդ, էջ 101:

³ Հմմտ. Գր. Նիւսացի, Ճառ ի Խ. վկայք, Migne-PG, XLVI, սիւն 753 եւն. եւ Ճառ Բ, սիւն 765, 777:

ուող ելով: Երկիրը առատորէն կը բերէր պտուղներ եւ ցորեն, — ասոր համար քաղաքն իւր դրամներուն վրայ գրուածքը կու տար Գեմետրի պատկերը՝ հասկեր բռնած¹. — Բայց որթատունկ չէր աճեր հոն, եւ այն բնակիչներն՝ որ ճամբորդած չէին, խաղողի մասին կը խօսէին այնպէս՝ ինչպէս պիտի խօսէին Հնդկաստանի որեւէ ապրանքի մը մասին: Որովհետեւ ձմեռներն երկայն էին եւ սառնասառայց: Յուրան այնպէս սաստիկ էր որ² մինչեւ մաշկերը կը թափանցէր²: Արեւի էր սառնապատ գետերուն վրայէն ձիւղարեւ. եւ սպիտակ թանձր օթոցը՝ որ կը ծածկէր լիճք, կը ստիպէր անոր սահմաններն որոշել ցցերով: Երբ գարնան՝ ձիւնը հալու թէ հալած՝ գիւղացիք դաշտ կ'երթային հերկելու, իրենց կրկնոցը պնդագոյն կը կապէին որ չբլայ թէ հիւսիսային բռնաշունչ քամին խլէ տանի:

Ալիմային խտուրթիւնն եւ դաշտին արգասաբերութիւնն այսօր ալ կը համապատասխանեն այս նկարագեղ նկարագրութեան. միայն լիճն անհետ եղած է՝ լեցուելով ջրոյն բերած սկահողերով (ջրատու թիւնը). բայց այսօր ալ միջնաբերդին ստորոտը կը ցուցնեն խոնաւ մարգագետին մը՝ որ լճին տեղն բլայ: Քրիստոնէական անդուրթիւնը բարեպաշտութեամբ պահած է այն հռչակաւոր մարտիրոսաց յիշատակը՝ որոնց վկայութեան տեղն եղաւ այս լիճք: Լիկինիոսի հալածանաց ատեն 320 տարւոյ մարտ 9ին քառասուն զինուորներ սառնաշունչ գիշեր մը Աբբաստիոյ լիճք նետուեցան, վասն զի մերժած էին զոհել Ինքնակալաց. իսկ մերձակայ բաղնիքը ջեռուցած էին, որպէս զի անոնց տանջանքն աւելի գծնդակա-

¹ Բարբլուն-Ռայնախ, անդ, Թ. 1:

² Գր. Նիւս. անդ, սիւն 765՝ Κρυμὸς δὲ αὐτῶν αὐτῶν τοιχῶν διαδύμενος.

գոյն ըլլայ, եւ աւելի հրապուրուին սերացու-
թեան¹, — բայց ի դուր. ամէնքն ալ յանձն-
առին ցրտէն մեռնիլ: Այս բաղնիքին մնացորդ-
ները կ'ուզեն համարիլ խոշոր սրմաքարերով շի-
նուած շորեքկուսի շինուածք մը, որուն դուռն
այժմ թաղուած է հողին մէջ՝ մինչեւ բարաւորը:
Մօտակայ պատի մը մէջ մուծուած սեանց գլանա-
քարերը (բներն) ալ նոյն շինուածքէն ըլլալու են:

1 Martyrium SS. XL. c. 7 (ed. Gebhardt, Aus-
gew. Märtyrerakten, p. 177) — Հայ թարգմ. ուր կը
գրուի. «Քանզի էր ի Սերաստիս լիճ մի որ ունէր ջուր բա-
զում յոյժ (= լիմոյն էջուսս սծածք πολλύ), եւ ի ժամանա-
կին յսյնմիկ (յորժամ վկայեցին սուրբքն) էր պարզ եւ
ցուրտ սաստիկ (= χρύος μέγα), եւ անեալ կացուցին զն-
սա ի մէջ լճին մերկս (= բառական άγαρόντες δε αυτούς
έσποιησαν έν μέσφ τής λίμνης γυμνούς), եւ էր ժամն ձմեռ-
նային եւ օդն դառնաշունչ (խառնակ = ό άηρ χειμέριος
καί ή ώρα δριμυτάτη, «օդն ձմերային եւ ժամն դառնա-
շունչն»): քանզի քաջ ընդ երեկս էր օրն . . . եւ էր մօտ ի
լիճն բաղանիք մի (= βαλανείον), զոր ջեռուցին. որպէս զի-
թէ որ կամեացի զանց առնել (= παραβήναι), անկցի ի
բաղանիսն»: (Տես «Վկայար. Սրբոց Քառասուն վկայիցն»
Վարբ եւ վկայ. Ա, 506 եւն, յատկապէս էջ 511. Հայե-
րէնը կրօն է աղաւաղութիւններ: — Այս լիճը՝ նուիրա-
կան բան մը դառնալով՝ այնուհետեւ սրբադիրներէն մու-
ծուած է Սերաստիոյ սրբոց բազմութիւ ուրիշ վկայարանու-
թեանց մէջ ալ. այսպէս՝ Ս. Վլասայ (Migne, PG CXVI,
սիւն 824 եւն) եւ Ս. Իրենարրոսի (Յայսմ. Սիւմեդի,
էջ 264, 19, հրատ. Delehaye). Վերջնայն անտալ Վարբն,
թէ եւ բուրբոսի կրօնաբանն, քանի մը հետաքրքրական
սեղագրական ծանօթութիւններ կուտայ: Չագր. Պա-
րիսի 1589, ժԱ գարէ, թղ. 220 կ'ըսուի. «Hy δε ό
τόπος έγγισια τής λίμνης μνήμα έλληνικόν και παρξέμεινεν
έκεϊσε πνεύμα άκάθαρτον. եւ թղ. 221 կ'ըսուի թէ Ս.
Իրենարրոսի եւ Ս. Ակակի շիրիմները շինուեցան κατά
δυσμάς πλησίον τής λίμνης. [Հայ Առաքմաուրբի համապատ-
րնագրաց մէջ այս մանրամասնութիւնք չկան:]

Աբրահամից վկայից վկայաբանութիւնը՝ Փոքուն-
Ասիոյ բոլոր միւս վկայագրական պատմութեանց
ձեջ՝ ստուգիւ ամենէն աւելի հարազատներէն մին
է¹. Եւ այն յարգութիւնը՝ զոր հաւատոց այս քա-
ռասուն դիւցազները միշտ ներշնչած են, անտարա-
կոյս յաւերժացուցած է իրենց մահուան ճիշդ
տեղւոյն յիշատակը:

Աբրահամի՝ որուն եկեղեցին Բ. դարէն սկսած
է², եւ որ մետրապոլիտական աթոռ մ'եղաւ՝
երեւելի իւր հռչակաւոր հայրապետներով, նախ-
նական քրիստոնէութեան յիշատակարաններէն
բան մը պահած շ'երեւար: Ա. Գրիգորի Լուսա-
ւորչի հին եկեղեցին փոխուած է մղկիթի եւ այլա-
փոխուած: Պղտիկ խաչ մը՝ որ ձօն մ'ունի Ա. Թէո-
դորոսի ընծայուած (արձ. Թ. 351)՝ քրիստոնէա-
կան միակ արձանագրութիւնն է որ քաղաքիս ձեջ
գտնուած է: Մեղի կրցան հոս ցուցընել միայն՝
իբրեւ միջին դարու քանդակագործութիւն՝ քարե-
տախտակ մը՝ որ նորերս բերուած էր Տիվրիկէ
(Տեփրիկէ) եւ որ մեղի երեւցաւ հայ կամ պարսիկ
գործ մը: Թէպէտ եւ մենք այս մասին զմեզ ձեռն-
հաս չենք համարիր, սակայն յառաջ կը բերենք
անոր պատկերը (Պակ.)³: Արշափ կ'երեւայ՝ կը ներ-

¹ «Կտակ Ի. վկայից» գրութեան արժէքը ցուցուց
Բոնվեշ (Bonwetsch)՝ հմտ. „Anal. Bolland.“ XVII
(1898), p. 467 եւ XXIII (1904), p. 448.

² Հմտ. Harnack, Mission und Ausbreitung, II, p. 168, N. 1.

³ [Տես Պակ. էջ 226 բնագրին: Նմանատպու-
թենէն դատելով չենք երկրոյի թէ հայ քարակոփի
կամ քանդակագործի մ'աշխատութիւնն է: Անձին կեր-
պարանքն, ձին ու բազէն, բայց մանաւանդ շրջանակի զար-
դերը բոլորովին համաձայն են հայ մանրանկարչաց եւ քան-
դակներու այլուստ ծանօթ ձեւերուն ու ոճին: Հետա-
քրքրական էր աւելի տեղեկութիւն ունենալ այս քանդա-
կին մասին, որ թերեւս պատմական հայ աւագ մը կը ներ-
կայայնէ:]

կայացընէ աւագ մ'որ ձի հեծած որսի կ'երթայ բաղէսլ:

Սեբաստիոյ միակ յիշատակարանները՝ զորոնք ոչնչացնել չեն կրցած քաղաքին բարբարոս տէրերը, ժայռի մէջ փորուածներն են: Քաղաքին հիւսիսակողմը մէկ ժամ հեռուն Տ—բ— կապանը, որ բարձր սարահարթ մը կտրող խորունկ խոխոմ մըն է, կը պարունակէ վիմափոր դամբաններու շարք մը¹, որոնք սրշափ ալ այսօր իրենց զարգարանքներէն մերկացուած են՝ կը վկայեն տակաւին Սեբաստիոյ հին քաղաքացիներուն երբեմն ունեցած փարթեմութեան մասին: Արաբարի երկայնաձիգ մէկ դառիվերին վրայ, որուն հօրիզոնական խաւակարգերը կարծես հսկայազոր շինութեան մը քարաշարքերն ըլլան, փորուած են խցիկներու տողաններ՝ յաճախ շատ մեծ բարձրութեամբ (Պակ.): Տեղ տեղ ասոնց լայնաբաց բերանները խիտ առ խիտ խոնուած են փեթակի մը բջիջներուն նման: Գամբաններուն շատերը գրեթէ անմատչելի են, որ սակայն արգելք մը չէ եղած՝ գանձախոյզ գերեզմանակրկիտներուն բունաբար մտնելու: Մուտքը յաճախ պարզ շորեքիլուսի բացուածք մըն է, որուն կողք մէկ մետրէ աւելի չէ. բայց երբեմն ալ զարդարուած է քուզարդերով. կամ երբեմն կը կարծենք տեսնել այն տեղը՝ ուր հարթուած սպառաժին վրայ հաստատուած էր տապանադիրը կրող մարմարեայ տախտակը: Ներսի կողմը՝ ուղղանկիւն դամբարանը երկու կողմն մէյմէկ խորշ ունի՝ գագաղը դնելու որոշուած: Բայց երբեմն յօրինուած ութիւնը բաղմամասն ըլլալով կը կնճռոտի, եւ բաղմաթիւ խցեր կը միանան իրարու փողանցքերով: Այս հին դամբաններուն ամէնէն ընդարձակը հովտին մէջէն հեռուէն ալ

¹ Պոնտոսի մէջ նման դամբաններու յաճախութեան մասին տես վերը՝ Բ, § 9, էջ 176 եւ սլլուր յաճախ:

աւանակի է. երկու յարակից մէկուկէս մետրի չափ բարձրութեամբ որմնածակ մուտքերը լերան շատ բարձրաբերձ կէտի մը վրայ կը բացուին (Պատկ.): Այս մուտքերուն կը հասնուի լերան կատարէն սլորապտոյտ սանդխով մը, որ մասամբ գետնափոր է եւ կը տանի կը հասցընէ անդունդի մ'եղբրքն եղած նեղ ծնօտի մը: Նախ կը մանենք անգաստակ մը (իբր $\bar{5}$ մետր \times $1.7\bar{5}$ m), որուն ետեւը նոր դուռ մը կը տանի բուն դամբանասրահը, որ իբր երկու մետր խորութիւն ունի: Ասի այժմ շատ խաթարած է, եւ հազիւ կրնանք դանազանել կողմնակի խորշերն՝ ուր դիերը կը դրուէին: Ամէն նախադասութիւններ ալ գործածուած էին այս օգի մջ կախուած դամբանն անմատոյց բնելու, եւ սակայն ասի արգելք չէ եղած՝ զայն ալ դրացի դամբաններուն պէս կողպտելու:

§ 17. Երլորդ-Տող (քարտէս ժէ): — Տաւրայի կրճէն կ'անցնի հին լեռնուղին՝ որ Սերաստիան եւ Եւզոսկիան ուղղակի իրարու կը հաղորդակցէր՝ Երլորդ-Տողի վրայէն¹: Հաւանական է թէ հնութեան մէջ կար նաեւ ճամբայ մը հարաւէն հիւսիս, որ այս կողմէն Սերաստիան կը կապէր Ասմանայի եւ Նէոկեսարիոյ հետ, թէպէտ եւ ասոր որեւէ հետք մը տակաւին չէ գտնուած:

Տաւրա-Սու գետը հին եւ միակամար կամրջով մ'անցնելէն ետքը՝ ճամբան վեր կ'ելլէ կալուղ կրաքարէ լերան մը կողէն՝ սպիտակ քարաբեկորներու փլակոյտերուն միջէն, եւ շուտով կը հասնինք Մարագում (կամ Մելեկում) սարահարթին շուրթը, որուն բարձրութիւնը 1400 մետրը

¹ Այս ճամբան բրած են Ainsworth (հմտ. Ռիստեր. Աշխ. ժ.Ը, 111), եւ Պան-Լէննէպ, Ռ. զե. սրութիւններ Փոքր Ասիոյ մէջ, Բ (1870), էջ 38 եւն, որ լեռներու սերկրախօսական կողմութեանց մասին ճշգրիտ տեղեկութիւններ կու տայ:

կ'անցնի: Անճշակ եւ ամուլ տարածութիւն մըն է, առանց ջրոյ եւ ծառերու, ցանուցիր սփռուած ապառաժ քարակոտորներով: Բայց ձեան բքերուն դէմ ապաստանարան մ'ըլլալու համար շինուած իջեւաններու (խաւ) աւերակները կը ցուցնեն թէ կարաւանները յառաջ այս ամալութենէն կ'անցնէին, որ ձմեռը սառնապատ է, ամառը՝ տապաղին: Արդի խճուղւոյն շինութիւնն ամբողջ առեւտրական երթեւեկը դարձուցած է դէպ ի Եէնի-խան¹. սակայն ասկէ է միշտ որ աւելի շուտով ծովեզերք կը հասնուի Նիկասարի վրայէն դէպ ի Անիէ: Սարահարթին թեթեւօրէն վէտվիտած մակերեւոյթը մէջ ընդ մէջ պատռտած է խորունկ խորխորատներով, զորոնք ամէն անգամ առանց դժուարութեան կարելի չէ անցնիլ: Ասոր փորձն առինք մեր վնասով, երբ մեր սայլերէն մին հեղեղատի մը մէջ յանկարծ շրջեցաւ ինկաւ (Պակ.): Այսպէս Սերաստիայէն երկուքուկէս ժամէն ետքը կը կարենք կ'անցնինք Արզւլ-Իրմակի առաջին մէկ օժանդակին հովիտը, եւ դեան ի վար Բորչա-ի սիրուն գիւղին վրայ կարճ տեսարան մը կը բացուի. յետոյ վերելքէ մը եւ նոր էջքէ մ'ետքը՝ կ'անցնինք Ինջե-Սուն: Վերջին վերելք մ'ալ՝ որուն կը յաջորդէ մացառներուն միջէն երկայն ճամբայ մը, վերջապէս կը հասցընէ զմեզ բարձրակէտին (1532 մետր). եւ երկրին համատեսարանը մեր առջեւ կը պարզուի: Մեր դէմը կը տեսնենք երկաթակուճէ (բասալտ) սեւ լեռներու շրջանակ մը, որոնց ետեւէն դուրս կը ցցուի Երլարզ-Տաղի սպիտակափառ գլուխը, որ մեր ճամբորդութեան այս մասին նպատակակէտն է: Միջամուխ կ'ըլլանք զառիթափ դար մը, եւ քիչ մ'ետքը կ'երեւան Երլարզ-Իրմակի արծաթափայլ ոլորապտոյտները՝ լերկ լեռնակներուն մէջ, որոնց շուրջը կը բոլորի: Արդին

1 Տես վերը՝ Ա. § 18 եւ Բ. § 15:

Ներքեր գետակ մը՝ Չելվեկ-Սու, եւ արհիւն վրայ՝ մահմետական նկարագրեղ շիրիմ մը, շորեք-կուտի մատրանածեւ մը՝ կարմիր կղմինդրներով ծածկուած գմբեթով մը, որ Աւուս-չ (Kosmouch)-իմէնէ կը կոչուի: Աւերջին սար մ'ալ կ'անցնինք եւ կը հասնինք վերջապէս սեպակող հովիտը Երլորդ-Երմակի՝ որ կ'երթայ Աղիւտի մէջ կը թափուի Սեբաստիոյ վտարի կողմը, եւ ուր գետն ի վեր պիտի ելլենք երկու ժամ տեւողութեամբ:

Հունէ մ'անցնելէն ետքը՝ մեր գիմարը կը տեսնենք կրաքարային ապառաժի մէջ փորուած դամբաններու շարքեր՝ Տաւրայի մէջ եղածներուն նման: Գետոյն միւս արհէն պայծառ կը զանազանութիւն սեպաքերձ լեռնորմին վրայ դամբաններու ուղղանկիւնի կամ կամարածեւ բերանները (Պտկ.): Այստեղ անբնակ այս երկիրը մինչեւ համեմատաբար նորագոյն ժամանակներն ալ բազմամարդ եղած ընտու է. կը հանդիպինք բազմաթիւ տաճկական գերեզմանոցներու, որոնց հաստաբետ քարերը այս ամայութեան մէջ կանգնած են պարկաքարերու (menhir) նման:

Ապա ան մ'անցնելէն ետքը վերջապէս կը տեսնուի նոր գիւղ մը՝ Գէշլի-յու, ուր կը բնակին մահմետական գաղթականներ որ հաստատուած են արեւելեան Երլորդի արիւ: Ա'անցնինք այս գետը ծանծաղէ մը եւ դէպ ի արեւմուտք դարձած կը հետեւինք գետոյն՝ որ կրկին աղբերակն ունի, միւս բազկին. յետոյ կ'ելլենք լեռնակող մը եւ յանկարծ մեր ոտքին առջեւ կը տեսնենք Խարչըն մեծ աւանը եւ աւելի անդին՝ մերկ եւ խորխորատուած բլուրներուն ետեւը՝ Երլորդ-Տաղի կամ Աստղիկ լեռան հսկայածաւալ բուրգը, որուն տակաւին ձիւնապատ գագաթը 2500 մետր բարձրութեան կը հասնի (Պտկ.):

Համիլդըն, որ սակայն այս տեղերն այցելած չէր, երկրաբաժնիս ամենաբարձր այս լեռան վրայ

կը գնէ հռչակաւոր Կէն-Չորի-Նը (Kaino-Chorion) այսինքն «Նորարեբղը» Միհրդատայ Եւպատորի, այն արքային անվանդ ապաստանարանը՝ ուր իւր գանձերը ապահով պահած էր: Այս ենթագրութիւնը բախտ մ'ունեցած է՝ որուն արժանի չէր¹. որովհետեւ քննութեան առջեւ շի դիմանար: Ստրարոնի համեմատ² յիշեալ բերղը՝ «գոնէ 200 ստաղ»՝ այսինքն իբր 35 քիլոմետր՝ հեռու էր Կարիբայէ (Նիկուար), եւ երկրի մը մէջ՝ որ բոլորովին անջուր (անսորոս) էր շորս կողմն իբր հինգ մղոն շրջապատութեամբ: Արդ Երլարզ-Տաղ Նիկուարէն 55 քիլոմետրէ ալ աւելի հեռու է ուղիղ օդագծով, եւ իւր կողերէն բզկած անսպասակնաղբիւրներն առատապէս կ'ոռոգեն շրջակայ ամբողջ երկրաբաժինը: Աշխարհագրին նկարագրութեան միւս գծերն ալ կարեւորն շափ շեն պատշաճիր այս կատարին՝ որ դիւրեւանելի է գեղեցիկ եղանակին: Գծբախտաբար մենք ստիպուած էինք հրատարիլ լեռն ելլելէ, վասն զի ձիւնը ճամբանները տակաւին անանցանելի կ'ընէր: Բայց նոյն իսկ Ղան-Լէննէպի նկարագրութենէն³ կը

1 Յատկապէս Ղան-Լէննէպի՝ էջ 74 եւն՝ կրկնած է նոյնը եւ պաշտպանած, եւ լեռան գեղեցիկ նկարագրութիւն մ'ալ տուած է (էջ 65 եւն) որ աւելի կ'արժէ քան իւր պատմական կշռագատութիւնները:

2 Ստրարոն, Ժ.Բ, 3, § 31, էջ 556 C.

3 Հմմտ. Ղան-Լէննէպի՝ էջ 70, որ օգտակար յատկագրի մ'ալ ունի: Նաեւ Հ. Ժիրար (P. Girard) որ 1901 տարուց Օդոստոսին այցելած է այս աւերակները՝ նոյները նկարագրած է ի «Missions catholiques» Լիւնի, 7 եւ 14 Փետր. 1902 տարուց: Այս հատուածէն կը քաղեմ հնախօսաց համար ամենէն աւելի հետաքրքրական տեղեկութիւնները: «Անտաշ սալարարերով քարայտակուած շաւիղ մը օձապոյտ կ'ելլէ լեռան գագաթը: Կը կտրուի երկու կամ երեք յենորմերով: Կատարը կը բռնէ շորեքկուսի դարատափ մը գոնէ 6×8 մետր, որ իւր խարսխին վրայ՝

Հեռուի թէ կատարին վրայ գտնուող աւերակները շատ ընդարձակ չեն. եւ որեւէ իրաւունք մը չունինք այս աւերակները կարծել թէ Միհրդատայ հռչակաւորագոյն միջնաբերդին մնացորդներն բլան:

Մենք աւելի կը փորձուինք նոյները բիւզանդական մատրան կամ վանքի մը մնացորդները համարելու¹, որ հաւանօրէն յաջորդած էր Հեթանոսական մեհենի մը: Այս սէգ կատարն՝ որ ամբողջ երկրիս բարձրագոյն կէտն է, չէր կրնար Պոնտոսի հին բնակիչներէն իբրեւ նուիրական տեղ մը չնկատուիլ: Ինչպէս որ Գիոսի Ստրատոնի բազնինքով² նոյնպէս հոս ալ Օգոստոսին տակաւին կը հաւաքուին շրջակայ գիւղացիները՝ ոչխար մը մորթելու եւ խնջոյք մը կատարելու համար: Իւր գիւցարնակ լեռը տակաւին ունի իւր զրոյցները: Խարդընի վարիչը (Վեր) պատմեց մեզի թէ կարող է մօտ — ամէն աւերակ-շինուածքի յունական անունն այս է, — կը գտնուի անձաւ մը՝ ուր մարդկային էակ մը սաք կոխել չէ կրցած:

Այս կարծիքը թէ Աստղիկ լեռան վրայ սրբարան մը կանգնած էր՝ հաստատութիւն մը կ'առնու:

արեւմտեան կողմը՝ կազմուած է հսկայական վիմարներով, որոնցմէ սմանք մինչեւ երկու մետր բարձրութիւն ունին, եւ բաւական ուղիղ տողադրուած են: Միջոցները լեցուած են աւելի փոքր քարերով՝ առանց շաղախի հետք մ'ըլլալու . . . : Ընդհանրապէս խօսելով՝ յուսախար եղայ, թէ եւ կոյսլոս լեցուած հօր մը՝ որ խոշոր կամարով պատուած ըլլալու էր, եւ թէ եւ կան պլեւայլ հետքեր՝ զորոնք մեզիցուցոցին այն տեղոյն մօտերն ու մեջտեղը, ուր կը յանդիսարկուած շախիդը՝ որուն մենք հեռուեցանք³:

1 Այսպէս ճանչցած է արդէն Վ. Ալիլըն (Sir Charles Wilson, Handbook of Asia Minor, p. 42):

«Հարթաքարերու լայն ճամբայ կայ դէպ ի գագաթը . . . : Ճամբան կը տանի նախ մատուռ մը արեւելեան եզերքը և Մատուռն ու ճամբան նման են անոնց՝ զոր հնագոյն անպատահանք շինած են Սինայի թերակղզոյն վրայ»:

² Տես վերը՝ Բ, § 10:

քրիստոնէական հնութեանց գոյութեամբ բոլոր շրջակայ գիւղերուն մէջ, որոնք այժմ մահմետականներէ կամ կըզըլ-բաշներէ կը բնակուին։ Ընդհանուր արեւմտակողմը հետազօտեցինք Բեդոչտօն (Bedochtôn) գիւղը, որ ցորենի գեղեցիկ արտերու մէջ կարեւոր աւանաշէն մըն է, եւ գտանք երեք տապանագրեր՝ մին սարկաւազի մը (արձ. Թ. 342 եւն)։ Աւելի հեռուն՝ Ե-----Տ----- գիւղը խոյակ մը վեր կը բռնէ նոր մզկիթին գերանները, իսկ «գրուած քար» մ'ալ պատերուն մէջ թաղուած պիտի բլայ։ Ս-----նէ՛ գիւղը՝ որ պատսպարուած է փիճիներու անտառի մը մէջ ապառաժային սարի մը ստորաբը՝ որ դէպ ի երբարզի գազաթը վեր կ'ելէ, պահուած էր ճգնաւորուհւոյ մը (ἁσχήτρια) գերեզմանի սալաքարը։ Նոյն իսկ Նարզընի՛ գաւառակին (Ն-----) գլխաւոր տեղւոյն՝ բաղնիքին մէջ ցուցուցին մեզի մեծամեծ վիմաքարեր՝ կանոնաւորապէս շորեքկուսի կոփուած, եւ կարմիր մարմորէ ստուար սիւն մը։ Աւերջապէս Երբըլ-Իտի մէջ՝ որ հոգի լերանս հարաւային զառիվայրին վրայ ձորակի մը մէջ նստած է, գտանք երկու արձ. նագրութիւններ՝ որոնց մին քահանայ մը կը յիշատակէ։ Գարձեալ ախտի մը մէջ գրուած կոթողի մը մէկ հատակատորը կը կրէր մեծ խաչ մը՝ երկու կողմն պարուրած եւ զարդերով։ Այս մնացորդներն՝ ըսին մեզի թէ բերուած են Ա-----նէ՛նէ՛ որ գետն ի վար արեւելեան երբարզ-Սուի վրայ կը գտնուի։

Այս «Սպիտակ Քաղաքին» գիրքը հիանալի է (Պտկ.)։ Այն գետակն որ ջրվէժներով նեղ կիրճ մը գահաձէժ կը թափուի, դարձուած է կորիով մը՝ որպէս զի երթայ գարձընէ ջրաղացներն, որոնք մէկը միւսին վրայ կառչած են կրաքարային լեռնորմին։ Ասոնցմէ զատ որեւէ բնակութիւն չկայ. բայց բլրան վրայ դէպ ի հարաւ կը

1 Աւան-Լէննէպի Saru-Yéri կոչածը։

տարածուի մահճակատական գերեզմանոց մը, եւ ան-
գանդին եղերքին մտա կը նշմարուին քանի մը միա-
ցորդներ մեծ սրմաքարերով շինութեան մը: Կա-
հալիժին եղերքն անեղած իւր գիրքը շէնքը
պաշտպանելու էր՝ իւր հաստատուն պատերէն ալ
աւելի՛ որեւէ բանական յարձակման զէմ: Քովը
կը բացուի նորանշան քարանձաւի մը բերանը, որ
լուսաստրում է գազախմուսձիգ կանգնած ապա-
ռածին երեսին մէջ փորում պատահաններով:
Ներս կ'իջնանք նեղ փողանցքէ մը նախարահ մը,
որ անցքերով կը հաղորդակցի բազմաթիւ ուրիշ
սրահներու հետ: Ասոնց միոյն մէջ շարս ծակեր
իրը սզամուս կը ծառայեն ապաստած ժայռին խոր-
քերուն մէջ փորում ներքնատան մը: Աւելի ալ
խորունկ մակարդակով ուրիշ ընդարձակ քարայր
մը՝ որ ձորակէն ուղղակի առանց ելլելու մտա-
շելի է, այսօր ամառները կը գործածուի իրր փա-
րակու: Աւեր ամբողջ ապաստան անմտաշելի խոր-
շերով ծակձկուած է, գործը պիտ' սրիներու
երաժեհերն իրենց ընակարան ընտրած են: Այս վի-
ճափարներն հաւանորէն նախնարար ծառայած են
իրրեւ գամբաններ, բայց յետոյ ընակելի եղած են՝
գանձ մասամբ, Թերեւս քրիստոնեայ կրօնաստրայ
նգնարաններ եղած էին: Մեր հաւարած ար-

1. Ը. ձերար այս գեանափարն սլցելած է 1901ին:
Իւր նկարագրութիւնը (անոյ՝ էջ 83 եւն) կը համեմայնի
Թոմբո հետ, բայց կը յուսելու քանի մ'ուրիշ մանրամաս-
նութիւններ: «Հասանք, կ'ըսէ, առաջին սրահը, յետոյ
իջնայով երկրորդ մը եւ յետոյ երրորդ մը՝ եղջերու ան-
կանուն ինչպէս միւսները, բայց աւելի ընդարձակ, սակայն
ասան քառակուսի մտրե աւելի շքեղով: Գեաներ երկը
զուգահեռական խոռոչներ փորում են խորշադարանի (10-
սլլ) մեւով, բայց շատ կարճ ըլլալով՝ գիակ մը չէին կրնար
պարունակել: Ասոնք այսօր աւազով լեցուած են: Աւեր
ելլելու ասան նշմարելի որ փողանցքին պատերը բազմա-
թիւ սլցելուներու երթ եւեկութեամբն սզորկուած էին»:

ձանագրութեանց շարքէն կը հետեւի թէ Երեսնամեայ օրով — օրով հետեւ այս կ'երեւայ յիշատակարաններուս ժամանակը, — Երլարդ-Տաղի ստորաբար ծաղկեալ զիւղախմբեր կ'ուղղէին: Իւր վեհաշուք զագաթն անտարակոյս պատկուած էր մեծարոյ սրբարանով մը, եւ իւր բնդարձակ կողերուն ծաղիբերը կը պատուարէին անապատականաց միայնարաններ¹: Պէտք չենք մտնայ թէ հոս Երեսնամեայ Սերաստացոյ հայրապետին հայրենիքն եղք, որուն ազգեցութիւնն ամէնէն աւելի նպաստեց Գ. դարուն Պանտոսի մէջ վանականութիւնն բնդեղական բնելու²:

Երլարդ-Տաղի բոլոր քրիստոնէական հաստատութիւններն աւերուած կ'երեւան արդէն մահամեակն առաջին սուրբատակաց ժամանակ, եւ այս եկեղեցիներուն ու վանքերուն անունն ալ մոռցուած է՝ ինչպէս նաեւ բուն լեբան կրած անունը: Սակայն այս հետաւոր ամոյի հովիտներէն դեռ բոլորովն անհետացած չեն յոյն գաղթականութիւնները³:

¹ Հմմտ. արձ. Թ. 345 *Ἀσκήτρια* (ճգնաւորութի):

² Ըստ անագութեան (PG, CXVI, սիւն 818) Ս. Վլաս՝ Սերաստաց առաջին ճանօթ եպիսկոպոսը, որ Գրիգորեոսեանոսի օրով վկայեց, առանձնացած ըլլաց Երզնս լեբան մէկ քարայրը, սակայն կ'երեւայ թէ վկայագրերը կը խոսի Երզնս լեբան մասին՝ որ Սերաստացէն շատ հեռու է, ուրիշ թեմի մը մէջն էր, անոր համար պարզապէս՝ որ իրեն ճանօթ էր միայն այն հաշակաւոր լեբան անունը: Սերմնեղի Յայմատուսըն (էջ 457, s. Delehaye) կ'ըսէ պարզապէս «Եպիսկոպոս Սերաստաց բնակեալ ի մում՝ ի քարանձաւաց ի լեբին» (*ἐπίσκοπος Σεβαστίας, οἰκῶν ἐν τριτῶν κατ' ὄρος σπηλαίων*). — [Վլասոյ վկայարանութեան անագանագոյն հոյ խմբագրութիւնը կը գրէ՝ «Եթեալ բնակեր ի լեբին Երզնայ՝ յայրի մում՝ ո՞վ զարբ էւ վարբ. Բ. 383 ՝]

³ Տես վ.րը՝ § 18:

9. Վերիսա, Դազիմնն եւ Կոմանա:

§ 18. Երլարդ-Տայե Բոյոսս եւ թոխաթ. (քարէս ժլ)։ — Այս բարձունքներուն կլիման նոյն իսկ մայիսին խիստ է։ Կարկտախառն մրրիկներու բանուեցանք, եւ արեւածագին ցուրտը սաստիկ խայթող էր։ Մեզմէ մէկն ալ սաստիկ ջերմէ մը բանուելով՝ ստիպուեցանք առանց յապաղելու գէպ ի աւելի բարեխառն կլիմայ մը դիմելու։ Մեր մտադրութիւնն էր Երլարդէ շիտակ իջնալ գէպ ի Թոխաթ՝ Բատմանթաշի վրայէն, — ասիկայ է սովորական բանուկ ճամբան. — բայց կակղացած ճամբաները չէին թոյլ տար որ մեր բեռներն ալ մեզի հետ գան, եւ ասով որոշեցինք երթալ՝ Բուլուսի քով Սերասաիոյ խճուղին բանել։

Սակաւագնաց ճամբաս Երլարդ-Իրմակը կը կտրէ ծանծաղէ մը, 2½ էր չէրքէզարնակ գիւղին հիւսիսակողմէն կ'անցնի, եւ կ'ելէ գետն ի վեր մեծ գետակի մը քովէն՝ կերգելէ-սու կոշուած, որ արեւմտեան բարձունքներէն կ'իջնայ եւ լաւ մշակուած արտերը կ'ուռոգէ։ Արուս-Տօլու-լ թուրք գիւղը (1 ժամ 50 վայրկեան խարղընէ) անցնելէն ետքը՝ հովիտը կը թողունք, եւ կը բարձրանանք երկայն մանուածապատ շրջաններով՝ խեղճ փիճիներու ցանցառ անտառներու միջէն, որոնցմէ առած է Չամլու-բէլ իւր անունը։ Լեռնադարը շատ դառիվեր է եւ մեր ձիերը դժուարութեամբ կը քարշեն սայլերն այս տղմուտ ճամբաներէն։ Անձրեւին կը յաջորդեն կարկտախառն տեղացքներ եւ քիչ մ'ետքը սառնասառոցոյց մառախուղի մէջ պատուած ենք։ խարղընէն երեք ժամէն աւելի պէտք ունեցանք հասնելու լեռնացքին կատարը 1768 մետր բարձրութեամբ։ Ասկէ քիչ մ'անդին տներ կը նշմարենք կողմնակի ձորակի մը մէջ զօղած,

1 884. շմ՝ սոճի եւ եղեւին, փիճի (pin, sapin)։

ուր վերջապէս ապաստանարան դասնք: Այս ողորմելի խրճիթ-տները՝ փայտով ու անտաշ որմաքարերով շինուած, ըյս կ'առնուն միայն երգիկէն՝ այսինքն հողածածկ տանիքի մէջ բացուած ծակէ մը: Ահա հարասիքը կը բաղկանար քանի մը աթոռակներէ եւ աղտոտ անկողնեակներէ. բայց կրակեալին (սուխերիկ) մէջ բոցարձակ ու ճարճատելով կը վառէին փայտի մեծ կոճղեր: Ատի խեղճ յունական զիւղ մըն է՝ Գէօլէշէ+ կոչուած, որ լերան այս խուլ խորշանկիւնը մնացած է: Նոյնպէս քանի մը յունագաւան զիւղեր ալ կը գտնուին ցանուցիր սփռուած Չամլու-բէլի լեռնային հովիտներուն մէջ¹. եւ ասոնք կը խօսին բարբառ մը՝ որ տարբեր է ծովեզերեայ լեզուէն եւ որուն այլեւայլ հնաւանդ ձեւերը լեզուագէտի մը բերկրանք պիտի պատճառէին:

Վերջին սարաւանդ Մ՝ ալ ելլելով՝ մեր աչքին առջեւ տարածուած կը տեսնենք Արտ-Օվայի կամ Արտիկ-Օվայի ընդարձակ դաշտը, եւ անտառներու մէջէն իջնալով եւ յետոյ արտերու միջէն անցնելով մէկ ժամէն կը հասնինք Բոլուս:

Պր. Անդերսընի հետազօտութիւնն արդէն հաստատած է Ռամսէյի կարծիքը թէ Բոլուս հին Վէրի-յի տեղը կը գրաւէ²: Բոլուս քիչ հնութիւններ պահած է³, բայց արդի աւանին զիրքն

1 P. Girard, ի Missions catholiques, անդ. էջ 84 կը պատմէ Բատմանթաշի Յունաց արկածալից զէպոսն. որոնք կառկաս դաղթեւէն ետքն՝ ուզած էին իրենց ծննդավայր հայրենիքը վերադառնալ, բայց իրենց տեղը Չէրքէզներէն բռնուած գտած էին:

2 Տես վերը՝ Ա, § 17:

3 Անդերսըն՝ անդ: Իւր տուած ստուգարանութիւնը (Bolus = Πόλις) հաստատութիւն կ'առնու յ՝ Paolos՝ ձեւովը՝ զոր կու տայ ԺԷ դարու հայերէն բնագիր մը. տես Ռիսակեր, Աշխ. ԺԸ, էջ 125: — Ը. Ժիրար, որ չբնակայրը գտնուած արձանագրութիւն մը (Թ. 274) ծանօթացուցած

իսկ առանձինն բաւական նկարագրական է: Շինուած է բլրակի մը քով՝ որուն դադաթը միահարթուած է եւ ուսկից ամբողջ շրջակայ դաշտը մեր աչքին առջեւ կը պարզուի: Գիւղացիները հողը փորելով՝ կը գտնեն փայտի մոխիր առատօրէն եւ ամէն տեսակ մնացորդներ: Այս քաղաքիս զարգացումն՝ որ հիմայ լիովին հիմնայատակ է, յառաջ եկած էր անտարակոյս գլխաւորաբար զինքը շրջապատող դաշտին հարստութենէն: Արտիկ-Օվայի ցորենի արտօրայքն մեր օրոյն ալ տակաւին արտաքոյ կարգի արգիւնաբեր են, թէպէտ եւ շատ նախնական եղանակներով կը կատարուի մշակութիւնը. եւ այն ցանցառ առիթներէն մին՝ որոնց պատճառաւ յիշուած է Աերիսա, եղած է ճիշդ ցորենի մասին դատաւէճ մը, այն առթիւ որ քահանայի մը վերաբերող ցորենը զանձապետութեան գործակատարները գրաւած էին¹:

Գաւառիս տաճկական կենդրոնատեղին է այժմ Չիֆլի², Բոլուսէ մէկ մղոն հեռու դէպ ի արեւմուտք՝ Սերաստիոյ խճուղւոյն վրայ: Հետաքրքրական բան մը չ'ընծայեր. քրիստոնէական այն արձանագրութիւնն՝ որ հոն կը գտնուի, բերուած է Սուլու-Սերայէ²:

Մեծ պողոտան երեք ժամու մէջ Չիֆթլիքէն կը հասցընէ Եւզոկիա: Նախ կը կտրէ Արտ-Օվայի կանաչագեղ դաշտն անոր ամբողջ երկայնութեամբը, յետոյ խորամուխ կ'ըլլայ Ակ-Սուի

է մեզի, կը ծանուցանէ միանգամայն նոյն իսկ Բոլուսի մէջ այժմ գտնուած «ցած եւ նեղ դետնափօր մը իրր տասնեւհինգ մետր՝ առ ի շեղ յատակով. որ կ'երթայ կը հասնի ցած եւ կամարակապ սրահ մը՝ փուռի մը նման» — անտարակոյս դետնադամբան մը:

¹ Ս. Բարսեղ, Թուղթ 22—23. Հմմտ. Ռամսէյ, Պամ. Ալի., էջ 327:

² Արէ. Թ. 305. տես վերը՝ Բ., § 14:

կիրճը: Անցանք կապան մը՝ որուն վրայ կը տիրէ այժմ աւերակ բերդ մը, ուր վերադառնալ մտադիր եղանք. եւ քիչ մ'ետքը քաղաքին մտաւորութիւնը ծանուցին մեզի հզօր ընկուզիներով հովանաւորեալ պարտէզները, ու մրգաստաններն՝ ուր ամէն կողմ կը ծաղկէին կեռասենիները: Հիւսային հովերէն պաշտպանուած հովիտը համբաւաւոր է իւր կլիմային անուշութեամբը, եւ շրջակայ երկրին արգաւանդութիւնը թոխաթի բարգաւաճումն աւելի կը պահպանէ քան թէ պղնձագործութեան իւր վաղեմի ճարտարուեստը, որ արդէն նուազած է:

§ 19. Երոյնկիս (թոխաթ): — Հ. Ժիրար՝ որ իւր աշխատակցութեամբ արձանագրութեանց մեր հաւաքումը ճոխացուցած է հետաքրքրական բնագիրներու բաղմութեամբ մը, բարեյօժար գտնուեցաւ մեզի առաջնորդ ըլլալու այս պատմական քաղաքին մէջ, որուն ամէն հնութիւններն իրեն ծանօթ էին: Ապահով է որ թոխաթ հին Գալիսիոյ տեղը կը գրաւէ³. բայց թէպէտ եւ արդէն Ստրաբոն Կաղ-Օվային Գալիսիոյ աւունը կու տայ¹, Գալիմոն գիւղաքաղաքը յիշուած է առաջին անգամ Գ. դարուն՝ Ս. Բարսղին անվաններուն մէջ²: Հնութեան մէջ կրօնքը պատճառ եղած էր կոմանայի սրբարանին շուրջը քաղաքի մը կազմուելուն, որ գաւառին քաղաքական կենդրոնն ալ եղաւ: Սակայն հեթանոսութեան անկմանէն ետքը՝ տնտեսական եւ ուղղմական պատճառները պէտք էր որ նախընտրել տային Գալիմոնի տեղը, եւ անհրաժեշտօրէն այս տեղը այն

¹ Ռամսէյ, Պամ. Աշխ. էջ 329. Անդերսըն՝ վերը. Ա., § 29:

² Անդերսըն, անդ., § 29:

³ Թուղթ ՄԺԲ [ՅՀ] 375 տարիէն եւ ՄԺԶ: Հմմտ. Ռամսէյ՝ էջ 330:

գերակշռութիւնը յառաջ բերին: Նախ՝ եղերքն է ընդարձակածաւալ դաշտի մը որ սքանչելապէս բերրի է, եւ կեցած է հաղորդակցութեան երկու կամ երեք բնական մեծ ճամբաներու զիրար խաչածեւ կտրելու տեղը: Արդէն Տափերնիէի օրով (1631) Թոխաթ «Արեւելքի ամենամեծ անցուդարձի տեղերէն մին էր, եւ անդադար կարուաններ կը հասնէին Պարսկաստանէ, Տիգրանակերտէ, Բաղդաատէ, Կ.Պոլսէ, Չմիւռնիայէ եւ ուրիշ տեղերէ»¹: Երկրորդ՝ այս նստին վրայ կ'իշխէ սեպաբերձ լեռ մը, զոր գիւրին էր փոխել գրեթէ անառիկ բերրի մը (Պտկ.)²: Ասոր համար ալ Թ գարուն ազմական այս գերազանց դիրքին մէջ հաստատած էին Բիւզանդիոնի ինքնակալներն իրենց զլխաւոր բանակեաղներէն մին³: Թոխաթ, որուն այս տաճկածեւ անունն առաջին անգամ Էդրիսի քով կ'երեւայ ԺԲ դարուն՝ նմանապէս զլխաւոր քաղաքն եղաւ Ռումի սուլթաններուն մեծ կուսակալութեանց միոյն⁴:

Ուստի Դղեակը՝ որուն յանդգնածիր ստուերագիծը խորաբերձ երկնքին վրայ կը պատկերա-

¹ Տափերնիէ, Ուղեւոր. (ապ. 1679), Ա. էջ 11: Տօւրնըֆօր (Tournefort)՝ 1700ին՝ նման խօսքեր կ'ընէ:

² Տես քաղաքին ընդհանուր տեսարանի պատկերը՝ զոր զրած է Ընդերսըն (անդղ. բնագիր՝ էջ 66):

³ Կոստ. Եփրանածին, Վասն Արարող., էջ 444 (հրատ. Բոնի): *Eloi ta' āplēxia... ēkton eis 'Armeniaxōn ēis tōn Saqimōra.* (Անխոցելի կայաններն են... վեցերորդ՝ Հայկականին մէջ՝ Գաղիմոն) — Գաղիմոն՝ Կ.Պոլսու-Նիկոմեդիա-Վմատիա-Սերաստիա մեծ պողոտային վրան էր. (Gelzer, Genesis der Themenverfassung, p. 106. Հայթրդմ., էջ 67): Այս ճամբով Ամասիա փախաւ Թէոփիլոս՝ Գաղիմոնի քով Սարակինոսներէն յաղթուելէն ետքը. Հմմտ. Ռամսէյ, անդ. եւ վերջ՝ Բ, § 8:

⁴ Խիտաւեր, Աշխ. ժը, էջ 120 եւն: Le Strange, Lands of the eastern chaliphate, 1905, p. 142, 147.

նայ (Պտկ. բնագիր էջ 240), գոնէ բիւզանդական շրջանէն է. բայց զբաւուեցաւ Սելջուկեաններէն ու Օսմանցիներէն. եւ տակաւին ժԸ դարուն զօրագնդեր հոն պահակ կը նստէին¹, եւ այն տեղ մնացած պարսպորմերը ստուգիւ շատ տարբեր ժամանակներէ են:

Բերդը թառած է կրաքարային սարաւանդի մը վրայ, որ հրուանդանի մը պէս յառաջակարկաւ կ'երկարի Աղ-Սուի եւ Եէշիլ-Իրմակի հովիտներուն միջեւ, եւ հարաւակողմը՝ կ'աւարտի բիւրեղական մարմորէ կազմուած գահալէժ սարածագով մը², որուն վրայ կը կենան տակաւին ժայռելորպատի մը մէկ կտորը եւ չորեքկուսի բարձր աշտարակ մը (Պտկ.): Այս շինուածքներն ապահովապէս մահամետական շրջանէն են. եւ կը կազմուին անկանոն որմաքարերով շինուած արտաքին երեսէ մը, որ կը ծածկէ ետեւը լեցուած խիպարը՝ որ բաղկացած է յոռի շաղախի մէջ թալուած կոպիճներէ: Երկայն գերաններ պառկեցուած են այս խիպարորմերուն մէջ՝ որպէս զի քայքայելու արգելք ըլլան: Եւ այս բարբարոսիկ շինուածը միակերպ ալ չէ: Հարաւակողմը նոյն իսկ կը նշմարենք յենորմեր (գիմադիր-որմեր) չորեքկուսի վիմաքարերով՝ որոնք հին կ'երեւան: Բայց՝ ի բաց առեալ իւր դիրքն՝ այս դղեակն ո՛չ գեղեցկութեան եւ ո՛չ հետաքրքրականութեան կողմանէ կրնայ մրցիլ Ամասիոյ բերդին հետ: Սակայն ինչպէս վերջնոյ՝ մէջ՝ նոյնպէս հոս ալ ընդարձակ փողանցք մը բեր-

¹ Տուրնըֆոր՝ Ռիտաերի քով, անդ, էջ 123: Հմմտ. Տավերնիէ, էջ 10. «Չօրաւոր դղեակի մը՝ ուր պահակագորկայ. շատ հին է եւ մինակ մնացած է ուրիշ երէք բերդերէն որոնք աւելի փոքր էին»:

² Համիլարն, էջ 353 կ'ըսէ՝ «Բիւրեղական մարմոր (crystalline marble) որ նստած է թերթակաւի (խեցեքարի, կաւային հերձաքարի, argillaceous schists) իսկերուն վրայ»:

դին վարի մասէն սկսելով առ ի շեղ կը խորասուզի ապառաժին մէջ. այս փապուղին 3 մետրէ աւելի լայն է եւ 2:50 m բարձր, եւ տակաւին պահուած մնացած են սանդուղին իբր եօթանասուն աստիճանները. աւելի վարը՝ անցքը փլածներով խցուած է: Աս ալ այն գետնափորներէն է՝ որոնց նպատակն էր հասցընել կրօքարային քարաժայռէն սուզած ու հաւարուած ջրին, ինչպիսի հորեր կը դանուին Պոնտական ամրոցը աշխարհին մէջ եւ անկէ դուրս ալ¹: Ասի կ'երեւայ թէ ապացոյց մը կ'ընծայէ այն մասին թէ հնութեան մէջ արդէն այս գազաթն ամրացուած էր:

Երբ անցնինք մահարձանին ետեւը՝ քաղաքին հանդիպակաց կողմը, այսինքն դէպ ի արեւմուտք, կը նշմարենք մեծ բարձրութեան մէջ առ նուազն քառասուն սիւներու բներ՝ մէկը միւսին վրայ պառկեցուած այնպէս որ պատի մը քարաշարքերը կաղմնէ: Թուրքերը շինութեան իբր ատաղձ գործածած են որեւէ բիւզանդական եկեղեցւոյ մը բեկորները: Սիւնակի մը վրայ՝ որ շէնքէն քահուած՝ գլտորած ինկած էր լերան զառիվայրին վրայ, կարգացինք ձօնս՝ Ἰπὲρ εὐχῆς Παρίου (արձ. 320. «Վասն ուխտի Հիլարիոսի»):

Լերան հարաւային զառիվայրին վրայ տակաւին կը նշմարուի հին դամբան մը՝ ժայռին մէջ փորուած եւ նման Տաւրայի մօտ եղածներուն (տես վերը՝ Բ, § 16): Արկին բերանէ մը՝ որ երկուքի բաժնուած է մոյթով մը, կը մտցուի անդաստակ մը իբր 3 մետր երկայնութեամբ եւ 1:50 m բարձրութեամբ. ասկէ դէպ ի աջ կողմը կը դանուի գերեզմանասենեկին դուռը:

Երկրիս բոլոր հին բերդերուն յօրինուածութիւնը մի եւ նոյն է: Մեր հասնելուն երկրորդ օրը (15 մայիս) Հ. Ժիրար առաջնորդեց մեզ այցե-

¹ Տես վերը՝ Բ, § 9, էջ 176, ծն. 2:

լելու այն բերդն՝ որ երբեմն Սերաստիոյ ուղեգծին կ'իշխէր Եւզոսկիայէ Տ կիլոմետր հեռուն, եւ զոր արդէն նկատած էինք՝ Ակսուի հովիտն ի վար իջած տանն (տես վերը՝ Բ, § 19)։ Բերդը կը տարածուի ապառաժուտ յառաջակարկառ դարեւանդի (լեռնայակի) մը վրայ՝ որ սա բնորոշ աշունք կը կրէ՝ Խորշ-Թէթէթ (Horosh-tepessi), այսինքն՝ Աքաղաղի-սար։ Բերդը կ'ելլեցուի հարաւային կողմէն ժայռին մէջ կարուած ճամբով մը, որ կը հանէ կը տանի շրջապատ պարսպին մէջ բացուած դուռ մը։ Տեղ տեղ պարսպին խոնարհագոյն քարաշարքերը մնացած են, եւ կարելի է պարսպին հետոյ հետեւիլ ամբողջ շրջապատու թեամբն։ Գոլեկին մնացեալ մասն աւերուած է. բայց կայ տակաւին ջրամբար մը կամ խորունկ գետնափորը, եւ անոր տանող սովորական փապուղին ալ 45⁰/₀ աստիճան հակամար կը խորասուղի լերան մէջ, եւ շատ մեծ ծաւալներով է. վասն զի երեք մետրէ աւելի լայն է, եւ սանդուղն այսօր ալ տակաւին առնուազն հարիւր երեսուն աստիճան ունի. սակէ անդին յառաջանալու արդեւէք կ'ըլլան աւերած քներն ու փլած քները։ Հոս եղական առանձնայատկութիւնն մ'ալ կայ. այսինքն՝ տեսակ մը մայթ կամ դառիհակ յատակ մը կ'իջնայ սանդուղին երկու կողմէն ալ կողմնակի պատերուն երկայնութեամբը՝ սանդուղէն իբր երկու մետր բարձրութեամբ (Պակ.)։ Թերեւս ասիկայ կը ծառայէր ջրակիր անօթներն որեւէ կազմածի մը միջոցաւ վեր հանելու եւ վար իջեցընելու։

Բերդին արեւելակողմը կը դանուի ուրիշ կամարայարկ փողանցք մ'ալ աւելի պղտիկ եւ բերանը՝ սովորական ձեւովը։

Այս կողմը սեպարերձ դառիթափին մէջ փորուած են երկու մեծ վիճափոր դամբաններ (Պակ.)¹։

1 [Տես բնագրին էջ 245 կրկին Պատկերներէն եր-

Ասոնցմէ մին մտնել կարելի չէ առանց սանդուղի՝ զոր առ ձեռն չունեինք. բայց միւսը կրցանք հասնել նեղ շաւղէ մը՝ որ կը տանի դարաատափ մը կը հասնէ, որ յառաջ վանդակապատով մը եղջրապատուած էր: Ազգայնիկն փորուածքի մը մէջ կը բացուի պատուհան մը (1.10 m × 0.90 m)՝ ուսկից կրնանք սողոսկիլ ներս մտնել կամարածեւ գրեթէ շքեքիւտ տապանատուն մը (2.50 m × 2.40 m), ուր կը գրուէին մեռեալները: Չգտանք քանդակի կամ արեանագրութեան հետք մը. սակայն այս զամբաներն՝ ինչպէս նաեւ երկու փայտեղիները՝ ապահովապէս շատ հեռուսը հնութեան մը կը վերաբերին: Հաւանական է որ արդէն Պոնտոսի արքայից ժամանակ այս կապանն՝ որ կապապողովիից նամբան կը փակէր, պաշտպանուած էր արդեւաբանական-բերդերէն միովն: «որոնք անընդհատ զուտ մը կը կազմէին Միհրդատայ թագաւորութեան աշխարհին բոլորաբը՝: Հոս թերեւս պէտք ենք զեռեղիլ Պոնտոսի բերդը՝ որ զինքը յիշատակող միակ բնագրին համեմատ՝ շիրիկի հոգեան հետ ու բլաւու շէր: Սակայն ասի շատ յանդուգն ենթադրութիւն մըն է:

§ 20. Թոթաթ բաւական թուով յունարէն արձանագրութիւններ տուաւ (թ. 315 եւն). բայց ասոնց մին ապահովապէս՝ միսններն ալ հաւանօրէն բերուած են կոմանայէ: Կոչնպէս աւերուած քաղաքին մէկ մեհենէն առնուած բլաւու են գորշ մարմորէ այն ութ մեծամեծ սիւներն՝ որ Ալի-փաշայի ձկնիթիւն վերնախարիսիւր վեր կը բռնեն: Ասոնց խոշակներն ու խարիսիւնները մահամատական գործ են:

Կորդը «Գիմարի Պերեղմաններ»: Իսկ առաջինն է՝ «Գիմիկի թուր եւ Շրջապատ պարիսպը»:

1 Theod. Reinach, Mithridate Eupator, p. 266.

2 Գիմի. կատ., 12, 12:

բայց անոնց միակտուր մեծ սիւնաքները հին կ'երեւան: Հաւանօրէն նոյն ծագումն ունին ուրիշ՝ այս անգամ ճերմակ մարմորէ՝ սիւները, որոնք Մէլյատան-Ջամի մզկիթին մուտքը կանգնած են, ինչպէս նաեւ այն մարմորաքարերն՝ որոնք գործածուած են Սելջուկեան մենարանի (թէքեէ) մը շինութեան՝ քաղաքին ելքին վրայ: Կոմանայի աւերակներն ապահովապէս տեսակ մը քարահատք եղած են՝ զոր թօխաթի յաջորդական տէրերն առատօրէն շահագործած են: Հոն կը հասնինք մէկուկէս ժամէն քիչ մը պակաս ժամանակի մէջ՝ բոլորովին հարթ ճամբով մը:

Նախ կը կտրենք Կազ-Օվայի արեւելեան ծայրը, հին Գազնի-Կազնի-Կազնի, ուր շրջած էր մեր աշխատակիցը (տես վերը՝ Ա, § 30): Այս հարուստ գետինը մասն էր Կոմանայի քրմայեանաց փարթամ կալուածքին. եւ երկրին հռոմէական պետութեան կցուելու միջոցին կայսերական վիճակ մը (saltus մը, domaine) եղած է, ինչպէս եղած են Պիտիգիոյ մէջ Ասկանեան Մէնի (Մէն Ասկենոսի) մեհեաններուն ստացուածքները¹: Ասկէ կ'անցնուի Ամասիայէն դալու ատեն: Սրբոյն Բասիլիսկոսի Կոմանացոյ Վկայարանութիւնը կը յիշատակէ բազմաթիւ հին գիւղերու (vici) անունները, որոնք այս երկու քաղաքներուս մէջտեղ կ'իյնային: Այս Վկայարանութիւնը՝ դժբախտաբար միայն լատինական թարգմանութեանէ մը ծածօթ², ամենամեծ արժէք ունեցող տեղագրական հաւաստեաց վրայ յեցած է: Սուրբը կը բռնուի իւր ծնողաց տունը՝ Կազնի-Կազնի գիւղը³, որ Ամասիայէն իբր մէկ աւուր

¹ Անդերսոն՝ անդ: — Մէն Ասկենոսի մասին՝ հմտ. Ռամսէյ՝ ի „Classical Review“ 1905, p. 418.

² Վարք Սրբոց (Բողատեանք): Մարտ, Հար. Ա, էջ 237 եւն. հմտ. Կ. Պոլսոյ Յայտնաւորքը (Synax. Constantinop., ed. Delehaye), էջ 699, 39 եւն:

³ Cumiala, հմտ. Յայտն., էջ 699, 41՝ Պոլս.

ճանապարհ էր. ասկէ զինքը կը տանին Գուրգէն¹, յետոյ կ'անցնի շիրիկի վրայ ձգուած կամուրջէ մը². — Թերեւս Թուրքացի քով, — եւ կու գայ Սուրբ-Կոչուած տեղը, ասկէ՝ Սուրբ, եւ ուրիշ զիւղ մը՝ ուր կը գիշերէ, եւ վերջապէս երկրորդ օրը՝ իբր շորրորդ ժամուն նոյն օրը սն՝ կը հասնի Ասմանա. Գժրախտարար այս տեղեկութեանց եւ ոչ մին կրնանք նոր քարտեզներուն վրայ փոխադրել, թէպէտ եւ հնութեան մնացորդներ գտնուած են կող-Օվայի շատ տեղերը³:

Ասկէ անգին կը մտնենք շիրիկի հովիտը, եւ քիչ մ'ետրը գետոյն միւս կողմը, աջ ափին վրայ, կը նշմարուի մեծ հողաբլրակ մը՝ որ գաշտին մէջ կ'երկարաձգուի եւ անհետ եղած քաղաքին տեղը կը ցուցնէ (Պակ.). Գետոյն մակերեսէն իբր քառասուն մետր վեր կը բարձրանայ. զիտենք որ Մգիցու հոյն մեհեանը՝ որուն պարտական էր Ասմանա իւր հաշակը, շինուած էր բարձունքի մը վրայ,

μίαλα τῆς ἐπορίας Ἰμασειας (Քուրապա ի սահմանս Ասմանայ): Այս կուրապակէն էր ճնդեանք նաեւ Ս. Թեոփորոս՝ բոս Յայսմ. Կ. Պոլսոյ՝ էջ 470. 15 (ἐκ τῆς μητροπόλεως Ἰμασειας ἐκ χωρίου καλουμένου Χουμιάλων. «Ի մարաքաղաքէն Ասմանայ՝ ի գեղէն որ կոչէր Քուրապա օցոն): Այս զիւղին մէջ քրիստոնէական հին հասարակութիւն մ'եղած բնութիւն է:

1 Dacozae, հմմտ. Յայսմ. էջ 701. 14 τὸ χωρίον Δακῶν (զիւղն Գակաց):

2 In pontem fluminis Ireos — in loca Varisiorum — in vicum qui dicitur Saon (ի կամուրջ գետոյն շիրիկի . . . ի տեղին Աերիմացոց . . . ի գիւղն որ կոչի Սուսն). — Թերեւս վերջինս բնայ Սուրբ՝ որ կը յիշուի Սերաստիոյ Խ. վրայից կտակին մէջ, հմմտ. η Anal. Bolland. XXV (1906), p. 241:

3 Ասիեայ տեղեր նշանակած են Անգերսըն եւ Մուկրայ (տես վերը՝ Բ. § 30): Տես նաեւ Տուրնըֆոր (Voyage du Levant, II, p. 175, ապ. 1718թ). «Չորս ժամ

որուն ստորադր կը թանար Հիրիկ գետը¹: Արգեամբք ալ պաշտաման կանոն մը կը պահանջէր որ դիցուհւոյն մեհեանները շինուած ըլլային բարձունքի մը վրայ՝ որ լեռան անունը կը կրէր²: Ասի թերեւս բնական բլուր մըն է. բայց թերեւս նաեւ այն արուեստական հողաբլուրներէն (Բէլլ, tell) է՝ զորոնք այս երկիրներու հին բնակիչները բարձրացուցած են ի Տիանա, զորոնք զրուցախառն Շամիրամայ գործը կ'ուզէին համարիլ³:

Այս բլրակէն քիչ մ'անդին ճամբան գետոյն վրայէն կ'անցնի: Հաղարաւոր տարիներէ վեր գետը կ'անցնին այս տեղէն: Գիտն կասիոս կը պատմէ⁴ թէ ճակատի մը մէջ՝ զոր կը մղէր Միհրդատ Տրիարիոսի դէմ (68 Ն. Ք.)՝ կոմանայի կամուրջը կործանեցաւ վրայէն անցնող զօրաց ծանրութենէն, որով արքային բանակին մէջ մեծ խառնաշփոթութիւն մը ծագեցաւ: Ուստի անտարակոյս այն կամուրջը դուզնաքեայ փայտակերտ անցարան մըն էր: Հռոմէացիք անոր տեղը գրին քարաշէն կամուրջ մը, որով Հիրիկ գետոյն երկու ափերու վրայ տա-

ճամբորդելէն ետքը [Թոխաթէ Թուրխալ տանող ճամբով], օթագնեցանք Վ. Գ. Է. զիւզին մօտ, որուն գերեզմանոցին մէջ կը տեսնուէին քանի մը հին սիւներու եւ ծնօաներու բեկորներ՝ ճերմակ մարմարէ եւ զեղեցիկ երեսով՝ բայց առանց արձանագրութեանց⁵:

¹ Գրոկոսիոս, Պարզ. Պրոս. Ե. 17, § 13 (Haury, p. 84):

² Նաեւ արեւմտից մէջ այս կանոնը կը պահուէր Բէլլան-Մոյի քրմերէն. Հմմտ. Տերտուգիանոս՝ De Pallio, 4՝ In Bellonae montes fugantur. — Գործք առ Չենոփիլեայ (Gesta apud Zenophilum, հրատ. Gebhardt, Ausgew. Märtyrerakten, p. 188, 7, c. 1) Fugivimus in montem Bellonae. Հմմտ. ՝ Rev. hist. et litt. religieuses, VI, 1901, p. 101.

³ Սարարոն. ԺԲ, 2, 7, էջ 587 C. Հմմտ. Պլինիոս, 4Ն. Պատմ. Չ. 1, 3, եւ վերը՝ Բ, § 12:

⁴ Գիտն. կասիոս, ԼՉ, 10:

բաժնուած Կոմանայի երկու թաղերը՝ իրարու հետ կապուեցան հաղորդակցութեամբ: Թերեւս արդի կամրջին (Պակ.) քանի մը մասերն ալ հնութենէն մնացած են: Երկու ծայրերը տակաւին մնացած կամարները շինուած են մեծ սեպտարներով, որոնք կմրեւան եւ կոսուած են (Պակ.) եւ առաջին հայեցուածքով ալ կը զանազանուին այս կամարները՝ թանձրակերտ խորանարդաձեւ այն կամարակալէն՝ զոր թուրքերը կանգնած են գետոյն մեջտեղը եւ որ փայտե խեղճ կամրջայտասկ մը կը բառնայ: Նստե գետոյն երկու ամնափուլերուն դէմ շինուած պատերուն մնացորդներն՝ որոնք կանոնաւոր կարգաձով են, կամրջարարներու թեւերը կամ քարափի մը կիսամասերը, հաւանօրէն հասակական շրջանէն են. բայց նոյն իսկ հնագոյն մասերը շատ անգամ վերանորոգուած են պատահած ամէն տեսակ ատաղձներով. կը նկատենք ի միջի այլոց խոյակի մը մէկ բեկորը եւ արձանագրութեանց հատակաւորներ՝ որոնք Հերսի-տ-ը-Կ-մ-ն-ը քաղաքին անունը կը պարունակեն: (Արձ. թ. 313 — 314. հմմտ. վերը՝ Ա, § 28.)

Կեանին երեսի վրայ տեսանելի մնացած ակերակները տակաւին բաւական կարեւոր էին Համիրարնի օրով², որուն պարտական ենք այս տեղւոյն հին Կոմանայի հետ նոյնացումը: «Քովթարներու եւ ծոփորի հատակաւորները»՝ զոր կը յիշէ անշուշտ անուամբ տարուած են թոխաթի որմնաշէններէն: Մենք այս նուիրական բլրակին վրայ կրցանք հաւաքել միայն մանր բեկորներ սպիտակ,

¹ Սորարուն. ԺԲ. 3. § 15 (էջ 547 C.) ² *Ἰσὶς . . . ὄνεις διὰ πώλειος μέσης Κομάντων*, «Հիրիկ . . . հասեալ ընդ մէջ կիսոյ քաղաքին Կոմանայոց»:

³ Համիրարն՝ Ա. 349 եւն: — Բորե (Boré) ալ Կոմանայի մէջ տեսած է «կրնթեան սճով շատ վայելչագեղ սրկերու քանի մը հատակաւորներ» (տես *Corresp. et Mém.*, I, 1840, p. 357).

գորշ, կարմիր կամ կարմրերակ մարմորներու՝ որոնք քարայրատակներէն կամ երփներանգ գրուազներէն մնացած են: Սակայն զեանին խորքերն՝ ուր պեղումները շատ զիւրին պիտի բլլան, թաղուած կը ծածկեն այսահարկապէս այն շորեքսիւնեան տաճարին ներքնակառոյց մասերը, որուն մասին գաղափար մը կազմել կու տան այժմ միայն քաղաքաբաշխական գրամները¹: Տաճարին յարակից մասերն անշուշտ ամբողջ բլուրը կը ծածկէին. մեծ քրմապեան եւ մեծ քրմուհին նուիրական շրջապատէն ներսն ունէին իրենց բնակարանները²: Քաղաքը կը տարածուէր բոլորտիքը՝ զեամբ երկուքի բաժնուած: Ունէր ուրիշ մեհեաններ ալ, որոնց մին նուիրուած էր Ապոլլոնի³: Իբր 400ին Յ. Ք. տակաւին ամբովայր մըն էր՝ այնչափ որ կրնար բարբարոսաց ասպատակներուն զիմազբել⁴. եւ բիւզանդական շրջանին մնաց իբրեւ եպիսկոպոսանիստ աթոռ⁵:

Յետոյ՝ ինչպէս Սերաստուպոլսոյ մէջ (տես վերը՝ Բ, § 14)՝ նոյնպէս հոս ալ մահմեդական զիւղ մը հաստատուած էր զիցուհւոյն նուիրեալ հին հոգաբարձոյն (tell) վրայ: Հոգին երեսը տեսա-

¹ Բարբլան-Ուոյնսի. Դրամք Փարսն Ասիոյ, Ա. Տխտ. ԺԲ, 4:

² Սարարան, ԺԲ, 8, § 9, էջ 575 C.

³ Ս. Բասիլիսկոսի (տես վերը) Ա. կոչարանութիւնը կը նկարագրէ թէ Պանտոսի կուսակալը կը զահէր Ապոլլոնի Բէնէին մէջ (in templo Apollonis, տես Act. SS, p. 140): — Կը պատմէ զարձեալ թէ Սուրբը զլիսատուեցաւ զեանին մաս «արտաքոյ քաղաքին ի տեղով որ կոչի Դիոսկորոսոն» (foras civitatem in loco qui dicitur Dioscorum).

⁴ Դրիգոր Նիսացի. Ճառ ԲԿրտ. (Migne, PG, XLVI, տ. 424 C.) հմտա. Պաղատիս՝ Վարդ Ս. Յովհ. Ոսկ. զԼ. 11 (Migne, PG, XLVII, 38)՝ ἔξω τοῦ τείχους (արտաքոյ պարսպին):

⁵ Lequien, Oriens christianus, p. 517.

նելի մնացած պատերը շինուած են փխրուն շաղախի մը մէջ թաղուած խճաքարի խաւակարգերով, եւ անշուշտ օսմանեան սուլթաններու ժամանակէն են: Նոյնպիսի են ընդարձակ շինութեան մը՝ կարաւանատան կամ բաղնիքի մը՝ աւերակները, որոնք կանգուն կը մնան կամրջին դիմացը (քարտ. ԺԹ). այս աւերակներէն մնացած են տակաւին բազմաթիւ կամարաւոր սրահներ, որոնք շինուած են թանձրագոյն ոճով ամէն տեսակ բեկորներէ: Մասմետական այն հաստատութեան կարեւորութիւնը կ'ապացուցուի իւր գերեզմանոցին ընդարձակութեամբն, որ դաշտին մէկ անկիւնը կը զբաւէ դէպ ի հարաւ¹: Այսօր թուրք բնակիչներն ալ իրենց կարգին անհետացած են, անտարակոյս տենդէն հալածուելով, եւ հովիտը մնացած է ամոյխ: Միայն քանի մը թուրքմէններն իրենց սեւ վրանները կանգնած էին գետոյն եզերքը:

Բայց այս լքուած նստին տեսքը կը զարթուցանէ այն ժամանակին յիշատակը, երբ իւր տօներուն մեծաշուք փառաւորութեամբն եւ իւր բարուց մեղկութեամբ քրմական այս քաղաքը կրնար համեմատուիլ փարթամ Աորնթոսի հետ²: Հովտին մէջ՝ որ դէպ ի վերնակողմը կ'ընդարձակուի, պարարտ մարգագետիններ կը բուծանեն բարգաւաճող հօտեր. բլուրներն՝ ուր երբեմն այգեստաններ տնկուած էին, ծածկուած են հարուստ արտորայիւք եւ առուգաբերձ ծառերով: Նոյն իսկ լեռնագագաթներն՝ որ այսօր մերկ են, ծածկուած էին երբեմն թանձրախիտ անտառներով³: Երկրիս դաշտանկարը խիստ ու ան-

¹ Կ'երեւայ թէ այս գիւղը տակաւին գոյութիւն ունէր ժԸ դարուն վերջերը, թէպէտ եւ շատ փոքրացած-համա. Ինճիճեան՝ Ռիտաէրի քով, Ալի. ժԸ (Փոքր-Ասիա, Ե), էջ 113:

² Սորաբոն, ԺԲ. 3, § 36, էջ 559 C.

³ Bellum Alexandrinum, c. 35.

Հարթ բան մը շունի. այս պատասպարեալ Հովտին՝ լեռներուն մեղկին ելեւէջները, գետոյն յամրագարձ մանուածապատները, մթնուլորտին ջերմին քնքշութիւնը՝ գրգանաց ու պղերգութեան գաղափարներ կը զարթուցանեն¹:

Աւերակներէն ելանք մերձաւորագոյն գիւղը՝ Հիւսիս-արեւելակողմը ձորակի մը մէջ բոյն դրած: Հին բան մը շունի՝ բաց ի իւր անունէն Գիւ-Վեյէ (Gumenek)՝ որ Կոման անուան տաճկական այլաձեւութիւնն է: Ասկէ իջանք շիրիմ մը (Բի-բդէ)՝ գեղանկարչօրէն շինուած բարձունքի մը վրայ, եւ որուն կարմրաղեւս գմբեթը աչքը կը գրաւէ (Պտկ.): Գաւթին պատը կործանած է, դռներու կամարները պարապ օդին մէջ կը բոլորին այսօր. կրաքարային մեծ վիմաքարեր գետին թափթփած են, բայց ասոնց մէկն ալ որեւէ արձանագրութիւն մը չի կրեր:

Ասկէ երկու Հարիւր քայլ անդին՝ դաշտին մէջ կղզիացած մենաւոր կը կանգնի մեծ ապառաժ մը, մէջը հին դամբաններ փորուած: Ասոր հետ կապուած են քրիստոնէական աւանդութիւններ. քարաժայռն՝ որ կարծես հրաշագործ զօրութեամբ մը գետնի մէջ վարսուած է, հոս փոխադրուած ըլլայ Ս. Գրիգորի Սքանչելագործի ձեռքը, եւ յետոյ առանձնարան եղած ըլլայ Ս. Յովհաննու Ոսկեբերանի: Իւր նորանշան տեսքը, իւր վիմափոր դամբանները եւ իր կրած տապանագիրը ազգած են ամէն այս պատմական նստէն անցնող եւրոպացի ուղեւորներուն վրայ. եւ ես՝ Անդերսընի շատ ճշգրիտ նկարագրութեան վրայ (տես վերը՝ Ա, § 28) կրնամ աւելցնել միայն լուսափորագրութիւն մը (տես Պտկ. բնագրին՝ էջ 254):

¹ Կոմանայի Հովտին տեսարանը տես Անդերսընի քով (անգլ. բնագիր՝ էջ 62):

§ 21. *Կոմսնայի Նիկսար (քարտէս ԺԹ):*
 — Անտոնինեայ Ուղեգրութեան մէջ չէ յիշուած Կոմսնայի Նիկսար տանող ճամբան. սակայն ճամբուս ընթացքին վրայ գտնուած շորս մղոնաքարերը (Թ. 463—66) կը ցուցնեն թէ այս ուղին՝ որ Գ. եւ Գ. դարերուն մէջ շատ անգամ նորոգուած է, հնութեան մէջ ալ գոնէ նոյնչափ բաղմակոխ էր՝ որչափ է այսօր¹: Իւր ուղեգրին անհրաժեշտօրէն որոշուած էր երկրիս լեռնագրական կերպածեւութենէն: Նախ կը կտրէ Կոմսնայի դաշտը, ուր Հիրիկ կը տարածուի լայնօրէն իւր քիչ խորունկ անկողնոյն մէջ, սահելով կղզիներուն միջէն՝ զորոնք կամաց կամաց կը տեղափոխէ: Քիչ մ'ետքը խճուղին թողլով՝ յոռի շաւիղ մը բռնեցինք եւ գետն ի վեր ելանք կապանի մը միջէն, ուր գետն քարաժայռերուն մէջ իրեն ջրոյ ճեպանցոյց մը բացած է. եւ յետոյ մտանք սակաւածաւալ երկրորդ դաշտ մը: Չախ թողլով Պէշէ-վանքը (տես վերը՝ Ա, § 27)՝ անցանք գիշերելու Օմալա գիւղը (1³/₄ ժամ Կոմսնայէ): Այս գիւղին գիւղը զմայլելի է՝ բարձունքի մը վրայ, որ կը յառաջանայ Եէշիլ-Իրմակի եւ ուրիշ մեծ գետակի մը միջեւ՝ որ կու գայ եւ վարի կողմը կը խառնուի առաջնոյն հետ: Գէպ ի հարաւ ալ կ'իշխէ կանաչագեղ խորագաշտի մը վրայ, զոր լեռներու շրջանակ մը կը շրջապատէ, եւ ուր ծառերու պուրակներ ցրիւ ցանուած են (Պակ.): Գիրքը նպաստաւոր է կամ մանուանդ էր՝ նաեւ առեւտրական տեսակիտով, ցորչափ այս կողմերէն կ'անցնէին կարաւանները: Օմալա նստած է ուղիներու երկճեղքման կէտին վրայ, որոնք Կոմսնայէ կը տանէին

¹ Շատ անգամ նկարագրուած է նոր ուղեւորներէն. Հափլարն, Ա, 348 եւն: Վան-Լէննէպ, Ա, 324 եւն: Munro, Roads, 732 ff. եւ վերը՝ Անդերսըն, Ա, § 28: — Ինքնք միշտ մտադիր եղած ենք այցելելու ուրիշ գիւղեր՝ տարբեր անոնցմէ, որոնցմէ անցած էր Պր. Անդերսըն:

մէկ կողմանէ՝ դէպ ի Նիկիսար ու ծովեզերք, միւս կողմանէ՝ դէպ ի Հայաստան՝ Հիբրիկի լեռնահատին վրայէն: Տախտակին (Tabula)՝ Կոմանա-Նիկոպոլիս հին ճամբան պէտք է որ այս հովտէն անցած ըլլայ¹, եւ տարակոյս չկայ թէ Օմալայի տեղը կը բռնէր հռոմէական գիւղ մը: Գիւղացիք հոս ցուցուցին գեղեցկագործ յոնիական խոյակ մը եւ շորեքկուսի կոփածոյ քարեր, որոնք մեծայարգար շինուածքէ մըն են: Ապահովցուցին թէ այս տեղն իսկ գտնուած են ասոնք: Այստեղ մեր օրինակած արձանագրութիւնները (թ. 327—28) կը ցուցնեն թէ բնակավայրը կը տեւէր տակաւին քրիստոնէական շէնքին ալ:

Գիւղիս հին անունն անծանօթ է: Պելտինգերեան Տախտակը Ձեւայէ Նեոկեսարիա տանող ճամբուն վրայ՝ վերջինէս 16 մղոն հեռու կը դնէ Սերմիսս կայանը: Արդ այս ուղեգիծը պէտք է որ անհրաժեշտ ասկից անցնէր, եւ իմ շափմանցս համեմատ Օմալայէ Նիկիսար 24 քիլոմետրէն աւելի չկայ. այս թիւը կը համաձայնի Տախտակին տուած թուոյն հետ: Ռաւեննականն ալ իւր աղաւաղութեամբ կը հաստատէ այս նոյնացումը². Նեմիսսիս, Բերմիսս (Bermissa). Կոնսանա Կոմանա (Consana Con dica = Պոնտիկան Կոմանա՝ Comana Pontica). եւ քիչ մ'աւելի վերը՝ Նեմիսսիս, Սերմիսս (Seramissa). Ստաբուլ (Stabulum = Սերաստոպոլիս)³: Միեւնոյն անուան երկու

¹ Տափերնիէի օրով այս էր դէպ ի Պարսկաստան գացող կարաւաններուն սովորական ճամբան (Ուղեւորութիւնը, Ա. էջ 14, սպ. 1679): Վերին Հիբրիկի երկայնութեամբը կատարուած հետազոտութիւններն անշուշտ արդիւնաշատ պիտի ըլլան: — Հռոմէական ճամբուն ուղղութեան մասին տես վարը՝ § 24:

² Էջ 97, 14, հրատ. Pinder-Parthey.

³ Անդերսըն՝ վերը, Ա, § 15: — Մեր աշխատակցին առաջարկութիւնը՝ Ստաբուլումը նոյն դնել Սերաստոպոլ-

ձեւեր են Bermissa եւ Seramissa: Այն աշխարհագիրն՝ որ քարտէս մը կ'որինակէր, նշանակած է կայաններն. երկու ճամբաններուն, որոնց մին նեոկեսարիայէ դէպ ի Տաւրում, միւսը՝ նեոկեսարիայէ դէպ ի Կապպադովկիա կ'երթար, եւ որոնք պէտք է որ իրարու նոյնացած ըլլային գոնէ մինչեւ Seramis (Օմալա), որ այսպիսով երկու անգամ կրկնուած է:

Օմալայէն անդին ճամբան կր թողու Ղիրիկի հովիտը՝ որ դէպ ի արեւելք կը թեքի, եւ կ'ելլէ մեծ գետակի մ'ափն ի վեր, որ Գլիգա (Gylga-) կը կոչուի եւ Եայլաջիկ-Տաղի անտառապատ բարձունքներէն կ'իջնայ: Աս ալ կը թողու ճամբան այն կէտէն, ուր դէպ ի Ղերեկ տանող ճամբայ մը դէպ ի արեւմուտք կը դառնայ, եւ առանց շատ դառիվեր վերելքի մը կը հասնի գապաթնագիծը՝ որ Ղիրիկի աւազանը կը բաժնէ Կայլ-գետոյ աւազանէն: Բարձրաշափը կը ցուցնէր 922 մետր: Այս բարձունքները կը ծածկեն կաղնիներու եւ ընկուզիներու գեղեցիկ անտառներ եւ կը շրջապատեն Օկտապ (Oktap) հարուստ գիւղը: Քիչ մ'ետքը կը մտնենք մանուածապատ կապան մը: Դարը դահաւէժ դառիթափ կը դառնայ. մէկ ժամու մէջ գրեթէ 600 մետր կ'իջնանք: Ղերեղներն՝ որեւէ

սոյ հետ՝ սողոյգ կ'երեւայ. բայց եթէ՝ ինչպէս ես կը կարծեմ, Սերմուսն կը գտնուէր արդի Օմալայի տեղը, այն ատեն ասի տարրեր էր այն Սերմուս (Sermusa) տեղէն՝ զոր Պեւսինգերեան Տախտակը Տաւրում-Կեսարիա գծին վրայ կը դնէ: Պր. Անդերսըն ալ անդրադարձ քննութենէ մ'ետքն այս կարծեաց համաձայն եղած է: — Պաղոմէոս Ե, Թ. § 8 Օմալայի լայնութեան աստիճանին վրայ՝ Կոմանայի հիւսիսակողմը կը զետեղէ Σερμουσα տեղը. բայց իւր նշանակած երկայնութեան աստիճանը (66° 20) շատ աւելի դէպ ի արեւմուտք պիտի փոխադրէր նոյն տեղը: Պերջինս սպառնալու էր ուղիղ չէ. (հմտ. Müllerի ծանօթութիւնն ատն անուան մասին),

մրրկէ մ'աճած՝ խճուղին ծածկած էին տղմով ու մանրախճով: Բայց սիրով կ'ընդհատէ մարդ իւր շուն այս գեղանկարչական կրճին մէջ, զոր գալարագեղ ու թարմ անբաւ կամար մը կը պատէ բարձրաբերձ քարաժայռերուն մէջ, ուսկից վճիտ ջրերն ամէն կողմ ջրվէժներով կը թափին:

Դէնէսէ գիւղին քով, ուր մօտերս մղոնաբար մը գտնուեցաւ (Թ. 466), կրճանցքը կը լայնանայ, եւ երթալով կը պարզուի Աէլկիդ-Իրմակի ընդարձակ դաշտը՝ հին Փնւրէս, զոր Ստրաբոն իբր Պոնտոսի ամենահարուստ գաւառը կը հռչակէ¹: Աւելի անդին կանգնած են ծովեզերեայ շղթային բարձր լեռները, որոնք հիւսիսային հովերու դէմ հողմարգել պատպարան կ'ըլլան գաւառիս, եւ մայիսի կէսին — մենք հոս էինք 18ին, — օգն արգէն տաք էր: Թանձրախիտ որդաստաններ (բրինձի դաշտեր), եւ լազուտի (եգիպտացորենի) տնկարկութիւնները կ'աճին ցած հողերուն վրայ՝ զորոնք գետը կ'ոռոգէ: Չիթենիներ, թթենիներ եւ թղենիներ կը յաջողին բլուրներուն վրայ: Աէլկիդ-Իրմակ իր սկախառն ջրերը կը տարածէ ընդարձակ գետանկողնոյ մը մէջ, ուր մնայուն ջրակոյտերը տղմուտ կղզիներուն միջեւ կը մօրանան: Փայտէ երկայնաձիգ կամրջայատակ մը, որ յեցած է որմաշէն խորանարդ կամարակալներու վրայ, մէկ ափէն միւսը կ'անցընէ՝ ոչ առանց ծածուռ գարձուածքներու (Պակ): Մեզի բոնի թէ այս խարխուլ շինուածք քանի մը տարիէ վեր փոխանակած է հին կամրջին, որուն կամարներն առած տարած էր սաստիկ գետայարոյցք մը: Աէլկիդ շատ անհաստատ հոսանք մ'ունի, եւ այսօր ալ յանկարծակի մոլեգին կատաղութիւններ կ'ունենայ, որոնք՝ ինչպէս հնութեան մէջ կ'ըսէին, ար-

¹ Ստրաբոն, ԺԲ, 3, § 30: — Անգերերէն, վերը Ա.

ժանի բրած են զինքն իւր Գոյլ (Λύχος) անուան¹։ Օր մը՝ երբ պատուելով իւր թմբերը՝ կ'աւերէր դաշտերը, տանելով հունձքն, անասուններ ու մարդիկ, Ս. Գրիգոր Սքանչելագործ իւր գաւաղանը վարսելով տղմին մէջ՝ սահման մը դրաւ անոր սպախանութեանց²։ Գետը նաեւ մեր օրերն անձնատուր է այսպիսի յորդախց սողոմանց, եւ բնակիչները

¹ Գետոյն անունն է դասական Հայերէնին մէջ Գոյլ, որ նշնանիչ է Λύχοςի հետ եւ միւլոնյն արմատէն ալ է (տես H ü b s e h m a n n, Armenische Etymologie, p. 431)։ Տաճկական Վելիք կամ Բելիք (Kelkid) անունը հաւանօրէն աղաւորութիւն մըն է հայերէն Գոյլ-իք յորջորջանքին. հմտ. Ռիտտեր, Աշխ. ԺԸ. էջ 431։

² Հմտ. Գրիգոր Նիւսարցի, Վարք Ս. Գրիգորի Սքանչելագործի (Migne, PG, XLVI, p. 930 B—931 C). Գամբարցի Ս. Հօր նկարագրութիւնն սյուս ալ հիանալիօրէն կը յարմարի գետոյս. կը գրէ՝ Κοίλος δὲ πανταχοῦ τὰς ὑπωρείας τῶν κρημνῶν ὑπορρέων πολὺ μᾶλλον ταῖς χειμερῖαις χαράδραις ὑποτραχύνεται πάσας εἰς ἑαυτὸν τὰς ἐκ τῶν ὄρων συρροίας ἐκλαμβάνων, եւն. լայ բնագրին մէջ ամբողջն այսպէս նկարագրուած է՝ Վարք եւ Վիյր., Վէնետ. 1874, Ա. էջ 323—24՝ «Գետ ոմն հօսի ի գաւառի Հայոց լեռանց, ընդ ձորս հոսելով յարձանք ահաւոր հոսմամբ, Գայլ անուանի ի բնակչաց աշխարհին. ընդ որ անցանէր՝ մերձակայիցն բազում աւելք վտանգս, աւելոյր եւ ագարակս եւ անդ առ արտափարսն եւ մարդսն (ուղղ. ագարակս եւ անգարս եւ արտափարս եւն, տես էջ 323). վտանգն ոչ սակաւ էր. . . եւ զգաւազանն ի խնարհ ցցեաց յեզր դետոյն, ուր յարձակումն հոսանացն առնէին զՔիսան։ Եւ անգէն վազվազակի արմատացեալ լինէր գաւազանն, եւ անցեալ ծառ եղև, եւ ի հոսանացն սահմանն հաստատեցաւ. զի յորժամ յանձրեաց եւ յուղտոց բազմանան ջրբք, եւ յորդեալ ահաւոր հնչմամբ հոսի, ընդ արմատ ծառոյն ոչ իշխէ անցանել. եւ անուն ծառոյն է մինչև ցայժմ Գաւազան Գրիգորի» եւն. Հայն անաղարս չէ։ Բնագրէն ալ տարբերութիւններ ունի եւ համառօտ է։ Յայսմաւորքի մէջ եղած վարքը բոլորովին համառօտուած է։]

թէ իւր այս հարուածներէն, եւ թէ նաեւ տենդին հարուածներէն ազատելու համար՝ հաստատուած են բարձանց վրայ: Նիկսար ալ կէս ժամ հեռու է գետափէն՝ Պարխարի բարձր լեռնաշղթային վերջին դարերուն վրայ:

Է. Նէոկեսարիա եւ Պարխադրէս:

§ 22. Նիկսար: — Նիկսար արտակարգի դիրք մ'ունի (Պտկ.): Ար տարածուի լեռան ծալքի մը մէջ, յաղթ լեռնագլխոյ մը՝ որ հսկայ բերդի մ'աւերակները կը կրէ, ստորոտը: Հովանուտ հովտին խորքը կը հօսի գետ մը, որուն սրընթաց հօսանքն այսօր ալ՝ ինչպէս Ստրաբոնի օրով¹, կը դարձնէ ջրաղացները եւ կը շարժէ ջրաբաշխական անիւները՝ պարտէզներն ու մրգաստաններն ոռոգելու համար: Արձին վրայ ձգուած հին կամուրջ մը, որուն յանդգն կերտ կամարը կը բռնէ վերնաշինուածք մը՝ որ շատ աւելի քիչ հնութիւն ունի քան իւր կամարը, քաղաքին հետ հաղորդակցութեան մէջ կը դնէ գետոյն միւս ափը տարածուող արուարձանը (Պտկ.): Միջնաբերդէն՝ քաղաքին հին ակրօպօլսէն՝ տեսարանը կը պարզուի ընդարձակ տափարակին վրայ, զոր Գայլ գետը կ'արգասաւորէ, դաշտ մը երբեմն « քաջաբեր ձիթոյ եւ գինւոյ եւ օժտուած ամէն յատկութեամբք սքանչելի հողի մը² »: Ծովուն մերձաւորութիւնն ալ՝ միացած փոխադրութեանց դիւրութեան հետ՝ կ'ապահովէր վաճառականութեան բարգաւաճանքը³: Երկու

¹ Ստրաբոն, ԺԲ, 3, 30՝ *ἕδραλέτης* (աղօրիք ջրոյ): — ԺԷ դարուն ալ Էվէկոս էֆէնտի կը յիշէ « ջրաղացներն ու ջրահան անիւները », հմտ. Ռիտտեր, անդ, էջ 222 (Mühlen- und Schöpfträder):

² Ստրաբոն, անդ. հմտ. յաջորդը:

³ Գրիգոր Նիսացի, Արք Ս. Գր. Սքանչելագործի (Migne, PG, XLVI, p. 897 D) *Καροπίς βροίθει ἢ χώρα,*

օթեւանով կարելի էր՝ լեռները կտրելով՝ հասնիլ Պողեմոնիուսի նաւահանգիստը¹։ Բնութիւնը ստուգիւ նախասահմանած էր Նեոկեսարիան բերդաքաղաք եւ մայրաքաղաք մ'ըլլալու, ինչպէս որ եղաւ ալ։ Կարիրա (Cabira) անուամբ Միհրդատեանց սիրելագոյն բնակավայրներէն մին էր. յետոյ Պողեմոն եւ իւր յաջորդք հոս հաստատուեցան։ Հռոմայեցւոյ ժամանակ մայրաքաղաք եղաւ Պոնտոսի²։ Գրիգորի Սքանչելագործի ժամանակ՝ կենդրոն դարձաւ քրիստոնէական քարոզութեան երկրիս մէջ³, եւ աւելի ուշ՝ արքեպիսկոպոսանիստ արժու մը։ Բայց Գդարուն կը սկսին իւր աղէտները. հիմնադրատակ կործանեցաւ երկրաշարժէ մը 344ին⁴, եւ երկրորդ անգամ մ'ալ 499ին⁵. եւ միջինդարու

ἡ πόλις κατασκευαῖς κεκαλλώπισται, τῇ γείτονι θαλάττῃ τὰ πανταχόθεν πρὸς τὸ δοκοῦν κατ' ἔξουσίαν εἰσάγεται (Հայ բնագրին մէջ կը պակսին այս մանրամասնութիւնքն՝ երկրին քաջաբերութեան, քաղաքին բարեկարգարութեան եւ ծովու մօտ ըլլալով զիւրաւակն պիտոյք հայկապետելու մասին) — Ս. Բարսեղ Նամակներուն մէջ ալ բազմաթիւ թղթեր կան Նեոկեսարիոյ գործերուն վերաբերեալ (Migne, PG, XXXII, p. 744 ff.) բայց միայն կրօնական խնդիրներու վրայ կը խօսին։ Սակայն մասնանիշ կ'ընեմ հեռեւեալ խօսքը (տիւն 769B)։ Τί οὖν χορὴ πρὸς ὄνειρους καταφύγειν καὶ ὄνειροσκόπους μισθοῦσθαι καὶ ἐν πανδήμοις ἐστιάσκειν ποιῆσθαι παροίνιον διήγημα. (Ինչ պէտք կայ երազներու գիմել, երազահասններու փարձք սալ եւ հասարակաց խնձորից մէջ արբեցութեան խօսքեր ընել)։

¹ Ըլլաւ ալ ճամբայ մը Նեոկեսարէն Ռ.նիէ կը տանել երկու օրէն պակաս։

² Ընդերքըն, վերջ. Ը., § 16։

³ Harnack, *Ausbreitung des Christentums*, II², p. 175 ff.

⁴ Թեոփանէս՝ յամին 5835. Ս. Յերանիմոս. Քրոնիկոն. յամին 2362. — Հմմտ. փարձ՝ էջ 274, ծն. 3։

⁵ Թեոգ. Բնթերց. Բ. 54. Հմմտ. Bull. Acad. Bel-gique, 1905, p. 563.

պատերազմաց ատեն իրեն տիրանալու համար՝ երկարատեւ կռիւներ մղուեցան Բիւզանդացոց եւ Մահմետականաց մէջ: Մանուորապէս 1068ին Սելջուկեան զորավար մը յարձակմամբ առաւ եւ աւարեց¹: Անշուշտ այն Մելիք-Ղազին է՝ որուն շերմեր (Բ՛-Դ՛է) տակաւին կանգուն կեցած է միջնաբերդէն ոչ շատ հեռու, գերեզմանոցին մէջ՝ ուր սիւներու բեկորներ ծածկուած են փշասարգերու միջեւ (houx, շիշխան): Հոն՝ տաճիկերէն հին ձեւագիր մը կը պահուի, որ այս հերոսին քաջագործութիւնքը կը հռչակէ: Ասոր պարունակութիւնը հաճեցաւ մեզի հաղորդել Խօժմը՝ շերմին պահապանը: Մելիք խաբուած էր Մալաթիոյ սուլթանէն. եւ, որչափ ալ Միքայէլ կուսակալը յուսահատական գիմարութիւն բրու, գրաւեց Նիկիտարն ու աւարի մասանց Աքանշելագործի եկեղեցին՝ ուր կը սպարսակէին վեցհարիւրէ աւելի կրօնաւորներ:

Նեոկեսարիոյ վրայ թափուող ալէաներ սկիզբն բրած էին հին յիշատակարանաց կործանման. իսկ ասոնց աւերումը կատարելապէս գլուխ ելաւ Սելջուկեանց գրաւմամբ. բայց այս անհետացման փոխարէն շկառուցուեցան հոս՝ ինչպէս եղաւ Աբրաստիոյ մէջ՝ մահմետական գեղեցիկ շինուածներ: Միայն քաղաքին մօտց վրայ կանգնած շերմին (Բ՛-Դ՛է) դուռը՝ իւր զարդարանաց վայելչութեամբն եւ իւր նուրբ խորշազարդերովը՝ հեռուէն կը յիշեցընէ Ռուսի սուլթաններուն մեծ վարժոցները (Բ-Դ՛է): Աերջին աստիճան է հնութեանց մասին Նիկիտարի աղքատութիւնը. եւ նոյն իսկ իւր անցեալ շքեղութեան յիշատակը ջնջուած է: Հոս քաղուած են միայն արձանագրութեանց քանի մը խեղճ բեկորներ (Թ. 388, եւն): Նոյն իսկ այն եկեղեցիները՝ զորոնք քաղաքիս փոքրիկ յոյն

1 Lebeau, Hist du Bas-Empire, XIV, p. 470.

Հասարակութիւնը կը պահէ¹, որեւէ կարեւոր յիշատակարան մը չունին այլ եւս: Ս. Նիկողայոս եկեղեցին բլրոյն զառիվայրին վրայ՝ կը պարունակէ երկու աննշան տապանազրէ զատ (Թ. 338—339) բաւական թուով վիմաքարեր՝ որ խաչանիշ են եւ մին ունի ԱՉ մենագիրը: Բերդին արեւմտեան կողմը՝ Այլակերպութեան (τῆς Μεταμορφώσεως) կիսակործան մատրան մէջ խորանին սեղանաքարը կը հանդիս հին խորսխի մը վրայ. բոլոյց տառ մը փորագրուած չէ վրան:

Հոս հնախօսական հետաքրքրութիւնը կը կենդրոնանայ ամբողջովին միջնաբերդին վրայ, որուն աւերակները մեծատարած են: Ասոնք Պարխարի մէկ հանդիպակեր կը գրաւեն, որ յառաջակարկառ երկարած է դաշտին մէջ եւ գլխաւոր լեռնաշղթային հետ կը կապուի միայն նեղ սարակատարով մը: Իբր մէկ քիլոմետր երկայն է եւ գէպ արեւմուտք կը խոնարհի գահավեժ զառիթափութեամբ մը մինչեւ հեղեղատը (Պտկ.)²: Գէպ ի հարաւ՝ իւր գազաթը կ'իշխէ Վէլկիտ-Իրմակի ամբողջ հովտին վրայ, որուն ջրերուն ցոլացումը հեռուն կը տեսնուի: Գէպ ի արեւելքը՝ լեռը կը տիրէ քաղաքին, որուն տները սանդղաձեւ վեր կ'ելլեն անոր կողերուն վրայ եւ կը խոնին ու կը սեղմուին բերդին երկայն շրջապատ պարսպին գէմ: Այս արտաքին պարսպէն՝ որ ամբողջ արեւելեան զառիվայրը կը շրջապատէ եւ դարին անհաւասարութեանց համեմատ ելեւէջներ կ'ընէ,

¹ Այս հասարակութեան պատմութեան նկատմամբ — էս Wächter, Der Verfall des Griechentums in Kleinasien, p. 9:

² [8եւ բնագրին 264 առաջին պատկերը՝ «Գղեակը հիւսիս-արեւմուտքէն տեսնուած», երկրորդը՝ «Բազնիքի» մը շրջաբերդները, 1-սկ էջ 265 առաջինը՝ «Մահարձանին աւերակները» եւ երկրորդը՝ «Կամարակայ ներքնաշինութիւններ»:]

մինչև և լեռնազագագածին վրայ կանգնած մահարձանք՝ պաշտպանողական շինութեանց շարք մը կար, որոնք միջանկեալ զառիվայրը բռնելով՝ պէտք էր որ անառիկ բնէին այս ի բնէ ալ շատ ամուր գիւրբը: Այս թանձր շինութիւնք մասամբ մնացած են, թէպէտ եւ երկայն ժամանակէ ի վեր շինութեանց ատաղձ կը մատակարարեն Նիկաարի բնակչաց. մահարձանք տակաւին իբր 15 մետր բարձրութեան կը հասնի: Գժուարին է աւերակացս այս փլակոյտին մէջ ուղղութիւն մը գտնել. անշուշտ կը ցուցնեն մեղի հին մզկիթ մը, հին բաղնիք (համա) մը. բայց միայն երկարատեւ ուսումնասիրութեամբ կրնայ որոշուիլ այլեւայլ շինուածոց նպատակն ու շինութեան ժամանակը: Պաշարումներն ու երկրաշարժները պատճառ եղած ըլլալու են բաղմաթիւ կործանմանց եւ նորոգութեանց: Այնպէս կ'երեւայ թէ կանգուն մնացած պատերը թրքական շրջանէն են: Անագանագոյն ժամանակի մը նշան է պատերուն թանձրութեան մէջ գերաններ դնելը՝ ինչպէս ի Թոխաթ ալ տեսանք (տես վերը՝ Բ, § 20), անով պատերու հաստատութիւնն ապահովելու համար. ինչպէս նաեւ անձեւ որմնամասի մը մէջ ծոփորներու եւ քուազարդերու բեկորներ գտնուիլը: Սակայն եւ այնպէս աներկրայ հին կամ բիւզանդական են այլեւայլ ներքնակառոյց շինուածամասեր, որոնք մասամբ կամարակապ են, եւ որոնք շինուած են հարթ մեծ աղիւսներու շարքերով: Աեցանկիւնի աշտարակ մը՝ մահարձանին արեւմտակողմը՝ կրնայ մասամբ հռոմէական ժամանակէն ըլլալ (Պտկ.) ասի ներքին պատի կորիզին վրայ, որ փոխնիփոխն քարով է ու աղիւսով, պահած է այլեւայլ մնացորդներ գեղեցիկ արտաքին երեսի մը՝ որ խնամով յարգարուած ու ազուցուած քարերով էր (Պտկ.): Սակայն խոստովանելու ենք թէ շատ քիչ բան մնացած է այն հռչակաւոր յիշատակարաններէն,

որսնք յաջորդաբար շինուած էին այս բնոյն վրայ, Քլուրը կը գրուէր նախ, երբ նեոկեսարիա տակաւին կարիքս կը կոչուէր, Միհրդատայ Եւպատորի մէկ զգեակը¹, որ վերջէն՝ Պոզեմոնի արքունի պալատն եղաւ: Հասմէացոց ժամանակ, երբ Պոնտոսի նահանգական ժողովը հօս կը նախագահէր դաշնաորական խաղուց, կանգնուած էին երկու մահաններ՝ որսնք աստուածացուցեալ ինքնակալաց նախուած էին²: Քրիստոսեայ վեհապետաց օրով՝ ասոնց փոխանակեց Ս. Գրիգորի Աքանջելագործի մետապոլիտական եկեղեցին, որուն յարակից էին ընդարձակ վանք մը եւ արքեպիսկոպոսարանը³:

¹ Սարարան, ԺԲ, 3, § 30:

² Եւսթինը կ'երեւայ թէ նախուած էր Ալգոսաստի, որուն պատուոց համար կը կատարուէին Ալտի- (Ακτια) կոչուած խաղերը՝ հաստորէն արդէն Պոզեմոնի եւ Պր. Թոգորի կողմանէ: Եղեքսանդր Սեւրուէ սկսեալ գրամեքսան վրայ կը տեսներ երկու շրեքսի նեան տաճարներ քովէ քով, եւ քաղաքը նոյն ասեւն կ'առնու յորջորջանքս զիս քեօկոթոս (երկիցս մահանակալ), սեւ Բարբըն եւ Ուայնախ, տեղ. Ա, էջ 91, թիւ 37 եւն:

³ Թեոփանէս՝ յամբ աշխարհի 5835 (էջ 37, 11, հրատ. De Boor) կը գրէ՝ Νεοκαισάρεια Πόντου κατεπίσθη (յամբ 344 Ե. Ք.) πλὴν τῆς ἐκκλησίας καὶ τοῦ ἐπισκοπείου καὶ τῶν ἐκεῖ εὐρεθέντων ἐυλαβῶν ἀνδρῶν (նեոկեսարիա Պոնտոսի կործանեցաւ՝ բաց ի եկեղեցիէն եւ եպիսկոպոսարանէն եւ հան պատուոց բարեպաշտ ճարտիկներէն): Հմմտ. Յերոնիմոս, Քրոնիկոն, յամբն 2362): Պր. Նիսացի, Վարք Ս. Պր. Աքանջելագործի (Migne, PG, XLVI, p. 897 D) կը գրէ՝ Ὁ ταὸς οὗ τὰς ἀρχὰς ἐκεῖνος (այսինքն Ս. Պր. Աքանջելագործ) κατεβάλετο, ἐκαλλώπισε δὲ τις τῶν μετ' ἐκεῖνον ἐκείνου ἀξίως, ὃ μέχρι τοῦ παρόντος δεικνύμενος . . . τῷ περιφανεστάτῳ τῆς πόλεως ἐκατέθετο. | Այս հաստաճը բարբառին խառնակ ու աղաւաղ է հայերէնի մէջ, ուր ամբողջ պատմուածքն այժմ պայտու է՝ «Վարք եւ Վհյր» Ա, 322—3՝ «Շինէր յեւս պնտրիկ

Վերջապէս միջին դարուն Սելջուկեան իշխաններն եկան հոս բնակելու մզկիթի մը մօտ, ընդարձակուած բճրդին մէջ, որուն լքեալ մնացորդները տակաւին զարմա՛ք կը պատճառեն իրենց ընդարձակութեամբը¹ :

Գղեկէն են երկու հետաքրքրական խորաքանդակներ (Պակ.) որոնք քանդակուած են գորշ եւ շատ հասկաւոր կրաքարի մը վրայ, եւ որոնք նորերս վարչատան (թն֊ֆ) պատին մէջ ազուցուած էին² : Մէկուն վրայ կը տեսնենք մօրուսաւոր անձ մը, հագած երկայն պատմութեան մը՝ մէջքը գօտիով զսպուած, եւ ձախ ձեռքով կը

տունս աղօթից, եւ սեղան ուղղեալ՝ կատարէր զկենսարէր խորհուրդն, եւ ամենեքեան ընչիւք եւ մարմնով առ փոյթն սպասաւորէին: Այս տաճար մինչև ցայժմ ցուցեալ լինի. սաստուածային իմն շնորհիւ կատարէր գործն որ յԱստուծոյ. իսկ վկային մեծի գոլ գործ: Քանզի ի շարժման ու մեմն սաստկագունի քաղաքին, առ մերովք ժամանակօք եղեալ, եւ արքունական ապարանիցն եւ այլ քաղաքին շինուածոցն տապալեալ, միայն թաց տաճարն այն անասանելի եւ անխախտելի, որպէս զի յայանի երեւի զորութեանն Աստուծոյ եւ նորին աղօթիցն գործն: [Ուստի եկեղեցին ակրոպոլի մէջն էր: — Թեօդ. Ընթերց. Բ. 54 (էջ 583, հրատ. Reading) կը գրէ՝ * Ο οίκος ἐν ᾧ ἦ θήκη Γρηγορίου (τοῦ Θαυματουργοῦ) ἐστίν. (Տուն եկեղեցւոյ՝ յորում տապան Գրիգորի Սքանչելագործի է) — Այս եկեղեցին՝ որ եկեղեցական պատմաց համեմատ հաշուեց ազատամ էր 344 ի եւ 499 ի երկրաշարժներէն, կործանուեցաւ Թրքաց սպասակին տակն (տես վերջ՝ էջ 271) :

¹ Հմմտ. Le Strange, The lands of the Eastern Chaliphate 1905, p. 142. Հմմտ. p. 147 :

² Հմմտ. Համիլդըն, Ա. էջ 346: (Գղեկէն) պարսպին մէջ. . . կան չորս քարեր, որոնց երկուքը կը ներկայացընեն անասուններ, եւ երկուքը՝ մարդիկ, որոնց մին ըստ երեւութին երկաթագործ «գարբին» է: Այս «գարբինն» է մեր ձախակողմեան պատկերը. (տես գլ. բնագիր՝ էջ 269) :

բռնէ բուն մը՝ ծայրը գնդով մը. անտարակոյս թագաւոր մ'իւր դաւադանաւ: Միւս պատկերը աւելի նորանշան է. նման զգեստով անձ մը ձախ ձեռքը վեր վերցուցեր է՝ մրձով մը կամ կացնով մը զարնելու ձուածեւ անորոշ առարկայի մը վրայ՝ զոր միւս ձեռքով դրած է տախտակի մը վրայ, եւ այս տախտակը վեր կը բռնէ թղուկ մը կամ տղայ մը: Աերջինս այս տարօրինակ սալն իր գլխուն վրայ կաթնցուցած է եւ երկու թեւերով վեր կը բռնէ: Չենք զիտեր որ արուեստաւորաց բնծայելու ենք այս արեւելեան շատ անարուեստ ոճով անպաճոյճ գործերը:

Եթէ նիկսար քաղաքը չէ պահած իւր անցելոյն յիշատակները, նոյնպէս չեն իւր շրջակայքը: Տեղական աւանդութիւնը՝ այնպէս ինչպէս պատմեց մեզի յոյն դպրոցին ուսուցիչը, Միհրդատայ ամառանոց-պալատը կը գնէ Արփաքի գիւղը, որ յունական գիւղ մըն է 200 տնով՝ նիկսարէն վեր երկու ժամ հեռու (քարտէս Ի): Մերձակայ տեղ մը կանգնած է օտարոտի ձեւով կղզիացեալ ժայռ մը, որ իբր թէ հռչակաւոր աշխարհակալին սաղաւարտաւոր արձանն ըլլայ (Պտկ.): Այս զբոյցները շատ հաւաստի չեն. բայց աւելի հետաքրքրական իրողութիւն մըն է թէ ասկէ քիչ մ'անդին կը հասնինք լեռնազագագթ մը, ուսկից դէպ ի հարաւ մեր աչքին առջեւ կը պարզուի երկրին բնդարձակած աւալ տարածութիւնը, նիկսար, Գայլ գետոյ հովիտը, որ հեռուն մշուշի մէջ կը կորսուի, Ախթրիւսի եւ Օպլիմոսի անտառապատ լեռնակոյտները՝ որոնք Փանարէն կը շրջապատեն, եւ աւելի անդին՝ Փոքուն-Ասիոյ բարձրաբերձ լեռանց լեռնաշղթան՝ կիտանշուած սպիտակ սարերով: Այս բարձունքին վրայ կ'աճին սոճիներ՝ զորոնք ոչ ոք կտրել կը համարձակի, եւ ամբողջ բոլորտիքը կը տեսնենք բոլորածեւ քարակերտ շրջապատի մը հետքերը: Ուրիշ բազմաթիւ բարձանց պէս՝

աս ալ Եղիայի հովանաւորութեան ներքեւ է, եւ ամէն տարի Յունիս 20ին՝ այն օրը, որ յունական եկեղեցւոյ մէջ նոյն մարգարէն կը տօնուի, հոս կը հաւաքուին գիւղացիները՝ պաշտօն մը («liturgie») կատարելու: Ար մորթեն ոչխարներ եւ հաւեղէն, զորոնք կը խորովեն, եւ յետոյ կ'ուտեն ու կը խմեն եւ կը պարեն ցնձագին: Տեղւոյս բնութիւնն՝ ինչպէս նաեւ հանդիսին մանրամասնութիւնքն այնպէս նման են այն ամէնուն՝ զոր նկատեցինք Էբիմիի մօտ Ջեւսի Ստրատիոսի մեհենին մէջ եւ ուրիշ տեղեր ալ¹, որ կը բաւէին այս գազաթիս վրայ ալ հեթանոսական պաշտաման մը գոյութիւնը հաստատելու: Ուստի Եղիայի «պաշտօնը» յաջորդած է ամառնամուտի հին տօնի մը: Աւելին ալ կայ: Այս լեռան վրայ, գոնէ ինչպէս հաւատեցին մեզի, հողէն կը հանեն հին կուռքեր. եւ իրօք ալ մեզի բերին պղնձէ փոքրիկ ցուլ մը շատ կոշտ արուեստով, եւ ցլու գլուխ մ'ալ՝ զոր կրցանք ձեռք բերել² (Պտկ.): Մնամէջ վիզը տին մը (ադոյցի տեղ, կոթառ) կը կազմէ եւ մետաղին մէջ փորուած երկու ծակերը կը ցուցնեն թէ այս գլուխը փայտեայ բնի մը վրայ կը հաստատուէր: Աչուրներն՝ որոնց կապիճները փորագուած են, անշուշտ դրուագուած էին կիտուածով (արծնիով). լեզուն՝ որ կիսաբաց բերնէն դուրս կախուած էր, այժմ կոտրած է: Ալափին տակ զետեղուած կախման օղակ մը կ'երեւայ թէ կը գործածուէր անկէ զանգակ մը կախելու: Եթէ յուշաբերենք թէ ցուլը նուիրական անասունն էր Մէն դից, եւ թէ վերջինս շատ անգամ կը պատկերացուի՝ ոտքը ցլու պարզ գլխոյ մը վրայ

1 Տես վերը՝ Բ. § 10, § 17 եւ § 4:

2 Այսօր կը գտնուի Musée du Cinquantaire թանգարանին մէջ (երկայնքը՝ 0.06 m.): Կահադիւր՝ Թիւ. A, 963:

դրած¹, եւ ձեռքը բռնած սոճւոյ կոնգոմ մը, ապա-
հով պիտի երեւայ թէ Անատոլեան այս մեծ գիւր-
կը պաշտուէր այս լեռնակատարին վրայ՝ ուր այս-
պղնձեղէնները գտնուած են: Արդ Ստրաբոն² խո-
սելով ճիշդ Կաբիրայի մասին՝ կը յիշէ Ափելե-
ուանը, ուր կը գտնուէր Փառն-կէ-ն Մէնի մեհեանը
(τὸ ἱερόν Μηνὸς Φαρνάχου καλούμενου) որ ունէր
ընդարձակածաւալ կալուած մը եւ բաղնիքիւ
տաճարասպասիկներ³: Կ'աւելցրնէ թէ «Պոնտոսի
արքայքն այնպիսի խորին մեծարանք մ'ունէին
ասոր որ կ'երգնուին Արքայական Բախտին ու
Փառնական Մէնի վրայ⁴: Ուստի կ'երեւայ թէ
ասիական գիցս Հին սրբարանը կանգնած էր այս-
նուիրական լեռան վրայ, ուր նաեւ այսօր գիւղա-
ցիներն աճանամտին կու գան մօրթելու անասուն-
ներ եւ պաշտաման խնջոյք մը կատարելու: Հեթա-
նոսական այս Հին սովորութեան տեւականութիւնը

¹ Drexler, առ Roscher, Lexikon der Mythol.,
ի բանին Mên, սիւն 2759. Perdrizet, ի „Bull. corr-
hell.“ XX, p. 102.

² Ստրաբոն. Ժ.Բ. 3. § 31, էջ 557 C:

³ Wolff, De novissima orac. aetate (1854), p. 27.
որուն կը հետեւի Bouché-Leclercq, Hist. de la Divi-
nation, III, 409, Մէնի այս մեհեանի հետ կը կապէ այն
սրանչելքը՝ զոր կը պատմէ Գրիգոր Նիւսացի. Աւարք Ս. Գր.
Սքանչելագործի (Vita S. Gregorii Thaum., p. 537 D —
p. 915, Migne). բայց թէեւ Ռուփինոս (Պամ. Եկեղ. Է.
25) սրանչելեաց տեղը լեռանց բարձրարեւձ լեռնագագաթը
կը դնէ (ad summum Alpium iugum), Ալշիի առաջարկած
նոյնացու մը տարակուսական կը մնայ: — Սկայն եւ այն-
պէս կ'երեւայ թէ՛ ինչպէս նոյն բնագիւրը կ'ըսէ, Գաբիրայի
մեհեանին մէջ ըղձական պատգամ մը կար. Հմմտ. Ս. Աթա-
նաս. 87. Մարմնաւ. 74 եւ Perdrizetի ճանօթութիւնը՝
անդ, էջ 90, ճն. 2, եւ Drexler, անդ, սիւն 2960:

⁴ Այս գից կրած յորջորջանաց մասին Հմմտ. իմ
Mon. rel. aux Myst. de Mithra, p. 233, n. 1. Գրէքսլէր՝
անդ, սիւն 2752:

կրնայ լուսաբանել Սքանչելագործի կենսագրին հետաքրքրական մէկ խօսքը: Հոն կ'ըսուի թէ Սուրբը թոյլ տուաւ ժողովրդական տօնախմբու-թիւնքը պահելու, որոնք յառաջ ամէն տարի կը կատարուէին ի պատիւ կռոց, միայն թէ այն պայ-մանաւ՝ որ այնուհետեւ կատարուին ի յիշատակ մարտիրոսաց. եւ անկէ վեր վերջնոցս տարեկան յիշատակը պատրուակ մ'եղաւ ցնծալից խրախճա-նութեանց¹:

§ 23. Նիկիասրի կեօյրոս-Հիսար (քարտէս Ի—ԻԱ), — Մեր դիտաւորութիւնն էր կէօյրու-Հիսար (Koïlu-) հասնիլ կէլիիդ-Իրմակի հովտէն, ուսկից կ'անցնէր հաւանօրէն Նէոկեսարիայէ Սա-տաղա տանող ճամբան²: Բայց գետը տարապայ-ման կերպով յորդած ողողած էր՝ անձրեւներէն ու ձիւնահալքէն, եւ՝ ինչպէս մեզի ըսին, ճամբան անանցանելի եղած էր. Ուստի ստիպուեցանք լեռ-ներու ճամբան բռնել. եւ հրաժարելով սայլերէն՝ որոնք լաւ ու զէշ մինչեւ այստեղ մեզի հետեւած էին, հարկադրուեցանք մեր բռնները բառնալ գրաստներու վրայ, որ՝ չնայելով այս կորովի գրաստներու տոկունութեան՝ զգալապէս յամե-ցուց մեր չուն: Ասոր փոխարէն՝ կրցանք Պարխարի շաւիղներէն կտրել անցնիլ աշխարհ մը՝ որ աշ-

¹ Գրիգոր Նիւսացի. Վարք Ս. Գր. Սքանչ. անդ՝ 954 B. Κατὰ τὴν ἐτήσιον τοῦ ἐνιαυσιαίου κύκλου περίοδον πανηγυρίζοντες (Հմմտ. Հայ բնագիր էջ 330 «տօն կատարել զամենայն սրբոց . . . եւ ցնծալ ի յիշատակ սրբոցն») — Հմմտ. Harnack, Ausbreitung des Christentums, II, p. 175 ff.

² Հովախ մէկ մասը հետազօտած է J. A. R. Munro, Ancient Roads (ի «Geograph. Society, Suppl. papers» III, 5), 1893, p. 729 ff. Բայց իւր ուղեգծին երկրորդ կէտին՝ ինքն ալ ստիպուած էր զէպ ի բարձունքներն ածապա-րել ելլել:

խարհագրական տեսակիսով ցայսօր գրեթէ անճանօթ երկիր մը մնացած է¹։

Ճամբայ ելանք մայիս 19ին։ Պատիր յուսադրութիւն եղած էր մեզի՝ հրաշալի հնութիւններ գտնելու մերձակայ լեռնագագաթի մը վրայ, որ պատճառ եղաւ դէպ ի հիւսիս մեծ խոտորում Մ'ընելու։ Նախ հետեւեցանք դէպ ի Ունիէ տանող պողոտային, որ Նիկասար-Սուի հովտին մէջ ոլորպատոյտ կը բարձրանայ, յետոյ՝ Զէրդէէր կըզլլ-բաշ շէնին քով՝ շեղեցանք դէպ ի հիւսիս, անտառներու միջէն ելելով մինչեւ Արգո-դէ գիւղը՝ սրուն մասին խօսեցանք (տես քիչ մը վերը)։ Յունաբնակ այս գիւղը տեսակ մը բնական դարատափ մը կը գրաւէ, ուր ցորեն կը ցանուի, հազար հարիւր մեար բարձրութեան մէջ։ Մեր ոտքին առջեւ Նիկասար կանաչութեան մէջ կը կորսուէր՝ լեռան մէկ խորշանկեան մէջ։ Յետոյ կրկին սկսանք վեր ելել դէպ ի արեւելք, կաղնիներու, կնձնիներու եւ սոճիներու բարձրամայրի անտառներու մէջէն։ Ճամբուն երկայնութեան յաճախ կը տեսնուէին մեծ տափարակ քարերով հին քարայտակի մը մնացորդները։ Նիկասարէն շորտուկէս ժամով հասանք Դիւզ-Տաղի գագաթը։ Անտառները տեղի տուած էին արօտներու, ուր ծովու երեսէն հազար հինգ-հարիւր մետրէ աւելի բարձրութեամբ՝ կը շրջէինք հովասուն ամարաստաններու (է-յլ-) մէջ, եւ ուր կը քշեն կը բերեն ամէն տարի Անատոլիոյ տուարածներն իրենց հօտերն ու նախիրները, ինչպէս կ'ընեն Ալպեանց պաճարաբոյժները, երբ տօթը

1 Այն քանի մը տեղեկութիւնները՝ զորոնք այս կողմերու մասին կրնան պատուիլ հին ուղեւորներուն քով, ի միասին հասարած է Ռիտտեր, անդ, էջ 216 եւն։ — Նոյն իսկ Արքերտի վերջին քարտէսին (թերթ՝ Սերաստիա) ջրագրութիւնը գրեթէ բոլորովին ենթագրական է, ինչպէս կը ցոյցնեն կիսանիշներն ալ։ Մեր ուղեւորները գոնէ քանի մը ճշգրտագոյն փաստեր կ'ընծայեն։

զիրենք դաշտէն կը հալածէ: Յաճախ այս հովա-
տուն տեղերն ուրիշ նշան մը չունին՝ բայց եթէ
քանի մ'ապաստարաններ, որոնք կազմուած են
հորիզոնաբար դրուած գերաններէ, որոնք կը
հանգչին խոշոր քարերով որմախարիտիններու վրայ:
Երբեմն ալ բնականման օթարանաց կերպարանք
կ'առնուն, կազմուած քանի մը տնիկներէ եւ
երկայն խղիկներէ (baraque, քորք) որոնք իբր
ախոռ կը գործածուին: Երբ ամէն կողմ աղա-
տաբար ճարակող հօտերն ու անդեայք կը լեցընեն
այս զովասուն ամառնային գիւղերը, ասոնք կը
կենդանանան շինական կենօք մը՝ որ կը յիշեցընէ
հին հովուերգութիւնները (Պտկ.)¹: Բայց երբ
մենք անցանք՝ ասոնց շատերը տակաւին ամայի էին
եւ սառնապատ, որովհետեւ լեռնագագաթներուն
հովանւոյն ներքեւ ձիւնակոյտերը տակաւին յամ-
րաբար կը հալէին:

Ալ-Ջ-ի ամարանոցէն անդին՝ Եօբէ-ի-Շէ-ի-
շէրքէս գիւղին մօտ՝ հասանք վերջապէս այն քա-
րուտ սարակը, որ՝ մեր առաջնորդին խօսքին համե-
մատ՝ երբեմն կրած էր Քառասուն Կուսանաց (Կըբ-
ի-է-է-է) հին դղեակը. սակայն ուրիշ բան չկրցանք
գտնել՝ բայց եթէ ժայռակոյտներ առանց պատի
մը հետքին: Յուսախաբ շարունակեցինք ճամբան
դէպի ուրիշ ամարաստան մը՝ Կ-բ-բ-է-շ անուամբ:
Լերան մէկ մահկաձեւ բացուածքէն հեռուէն խո-
րատոյզ կը հայինք Նիկսարի հովտին վրայ, որուն
ծայրն է քաղաքը գրեթէ աննշմարելի: Գղեակը
սեւ կիտանիշ մը կ'երեւայ՝ Գայլ գետոյն լու-
սածածանջ կորագծին մօտ, որ մեզմէ հազար
չորս հարիւր մետր վարը օձապտոյտ կը գալարէր
(Պտկ.): Շուտով հանգիպակաց զառիվայրին
վրայէն՝ անտառական գօտին անցնելով՝ իջանք

¹ | Յետ բնագրին էջ 275 մեծադիր Պատկերը՝ «Ամա-
րաստան մը Նիքսարի մօտերը»:

մինչեւ Բ-շ-Չէֆուէ, որ ուղիղ ճամբով Նիկասրէն միայն հինգ ժամ հեռու է:

Ամբողջ օր մը (շՕ մայիս) արգիլուեցանք այս աննշան տեղը հեղեղանման եւ մշտապէս տեղատարափէ մը, որ ճամբանները վտակներու փոխեց եւ մեր օթարանը՝ լճակի մը: Բայց որովհետեւ գաւառապետը (Չէ-Կէր) իւր ազգական հարսնիքը կ'ընէր՝ մեր տաղակութիւնը փարատեցաւ անվերջ ցայց երգով մը, զոր կը կողմէին թմբուկները եւ խտաձայն սրասրինգները («գուռնայ»), եւ զոր մէջընդմէջ կ'ընդմիջէին տարձանակի հարուածները: Մահմատական զիւզս երկու հարիւր տուն է. եւ աները միայն փայտակերտ մըն են՝ առանց քարի ու գամի: Չորս պատերը կը շինուին երկայն ու զօրաւոր գերաններով, որոնք հորիզոնական ուղղութեամբ կը տարածուին ու վրայէ վրայ կը շարուին: Գերաններուն ծայրերը կը փորուին եւ այն տեղէն խաշածեւ զերար կը կտրեն, այնպէս որ տան ամէն անկիւնը դուրս կը ցցուի կրկին շաք մը ստուար գերանագլուխներու՝ որոնց մէկ մասը երկայնութեան պատերուն, միւսները՝ լայնութեան պատերուն կը վերարեբին: Անջրպետները կը խցուին երբեմն խրճակներով եւ կաւահող ձեփելով: Տանիքին վրայ ալ միեւնոյն հողը ստուար տախտակներուն վրայ կը տարածուի ու կը պնդացուի, որով միահարթ տամայի մը կ'ըլլայ: Շինութեան այս շատ նախնական սճր կը գործածուի Պանտոսի երկրին ամէն այն կողմերը՝ ուր անտառները տակաւին չեն անհետացած: Եւ նոյն սճր հոս գրեթէ առանց փոփոխութեան շարունակուած ըլլալու է հնութեանէն ի վեր. որովհետեւ Ախարովիոս նոյնը կը նկարա-

1 Պղ. բնագիր էջ 280 պատկերը կը ցուցնէ այս տեսակ քանի մը աներ Մ-Կէն-Սէ-Կէն տեղւոյն: Հմմտնակ է 20ի մէջ գրուած Ալաջակի տեսարանին պատկերը (բնագրին՝ էջ 326):

գրէ մեծ ճշգրտութեամբ՝ իրր իւր ժամանակ Աողքիս-
սացւոց գործածական սճր¹:

Այս լեւնարնակներուս կեանքն ու երկրա-
գործական եղանակներն որեւէ փոփոխութիւն
կրած ըլլալու չեն Միհրդատայ ժամանակէն ի վեր:
Այսպէս Բաշ-Չիֆթլիքի մէջ տեսանք շատ հե-
տաքրքրական գործիք մը՝ զոր Թուրքերը sapân
կը կոչեն, եւ որ այսօր ալ Անատոլիոյ մեծագոյն
մասին մէջ կը գործածուի²: Ար կազմուի երկու
հաստ ասխտակներէ՝ որոնք դասեփոխերով իրա-
րու կը կապուին եւ որոնց ծայրը վեր կորացած է
առջևի կողմը՝ հարթայտասկ նաւակի մը ծայրին
պէս: Տախտակներուն տակը ճեղքուածքներ կը
բացուին, որոնց մէջ կը խտնուին կայծքարի բազ-
մաթիւ սուր կտորներ: Այս գործիքն՝ որ թերեւս
նորաբարոյշին ժամանակաշրջանէն աւելի հին է,
հնոց tribulum (լ-ճ) քուածն է, որուն գոր-
ծածութեան կերպը կը ծանօթացընէ արգէն

¹ Ախորուփոս, Բ. 1. 4 կը գրէ՝ Անտասի մէջ
Աողքիսոց ազգին քով անասաներու առատութեան պատ-
ճառաւ երկոյն հարթ ծառեր ալ ու ձախ գետին կը գրուին.
երկուքին մէջ անջրպէս թողլով ծառերու երկայնութեան
չափ. ծայրերը վրայէ վրայ խոտորնակի կը զետեղուին,
որոնք այսպէս բնակութեան միջոցը կը շրջափակեն. յե-
տայ շորս կողմերէն փոփոխակի գերաններով անկիւններ
կը կցուին (alternis trabibus ex quattuor partibus angulos
ingumentantes) եւ այսպէս տանց (վարիմներուն) հետ
ուղղահայեաց շրակութեամբ ծառերով պատեր կը կանգնեն՝
աշտարակի բարձրութեամբ. իսկ ասաղձին կոչուած
պատճառաւ Քնացած անջրպէտները կը լեցընեն տանգըն-
բով եւ կաւով (schidiis et luto). — Այսօրուս գործնա-
կանին չի համապատասխաներ միայն ամերիկն՝ որ Ախորու-
փոսի համեմատ գմբեթարգ (testudinatum) էր. — [Սակոյն
անծանօթ չէ այս «գմբեթարան» ալ. որովհետեւ սով-
բարբար տանեաց՝ երգիկի մասը շատ անդ երթալով կը
բարձրանայ եւ փոքրիկ կորնթարգանեւ մը կը կազմէ: Ծ. Թ.]

² Համիրզն, Ա. էջ 343 եւն:

Վարրոն¹: Ասոր վրայ որեւէ ծանրութիւն մը կը գրուի եւ եղերէ ձգուած՝ կը շրջեցուի որայի վրայէն, որ կային վրայ փռուած է, եւ մանր կը կարատէ զանի, եւ ասով կը կասու՝ ցորենահատը բաժնելով: Մեզի ըսին թէ այս կայծքարերը կը բերուին Գիւմիւշ-Հաջի-Քէոյէ², որ ուղիղ օդային գծով հարիւր յիսուն քիլոմետրէ աւելի հեռու է Բաշ-Չիֆթիլիքէ: Մարդախօսութիւնն արդէն նախապատմական շրջանին համար մատնանիշ կ'ընէ սրուած հատու քարերու հեռաւոր տեղափոխութիւններ, որոնք մետաղի տեղը կը բռնէին:

Մայիս 21 երկուշաբթին վերջապէս շարունակեցինք մեր ճամբան դէպի արեւելք: Անցնելով քանի մը բլուրներ՝ շուտ մը իջանք Աեստինէ-Սուի (Kestiné, «Քեսթանէ») խորունկ հովիտը. անձրեւներէ յորդած գետը քշած տարած էր փայտէ կամուրջը, որուն բեկորք սղողած ջրերէն դուրս կը ցցուէին: Բաւական դժուարութիւն ունեցանք անցանելի հուն մը գտնելու (Պակ.), եւ քիչ մնաց մեր բեռնաբարձ գրասաններէն մին հոն պիտի կորնչընէինք: Ասկէ ետքն հետեւեցանք այս յեղոյեղուկ գետոյն ձախ ասիին՝ բլրոյ մը կողէն, ուր տխեղձ թփեր ցանուցիր սփռուած են: Ասկզացած ու լպրծուն եղած շաւիղն ամէն վայրկեան կը կարուէր բարձունքներէն գահալէժ թափուող վտակներով: Ժամ մ'ետքը թողլով Աեստինէ-Սուն, որուն սրբնթաց հոսանքը փրփրալից կը խորասուզուի գորշ կրաքարէ եւ կարմիր աւազաքարէ կազմուած բարձրաբերձ լեռնորմերու մէջ, սկսանք ելլել լեռը՝ մրդաստաններու եւ անտառներու միջէն: Գազաթը (1340 մետր) ազատօրէն կը

¹ Varro, de Re Rust. I, 51. — Փոքր-Ասիայէն Բրիթանի թանգարանին համար sapan (խ) մը բերինք, զոր ուսումնասիրեց Flébus, ի «Mém. Soc. anthrop. de Bruxelles», XIX (1901), VI, p. 14 ff., եւ պակ. 7:

² Հմմտ. Անդերսըն, վերը, Ա, էջ 42:

պարզութի տեսարանը դեպ ի հարաւ. եւ մեր օտքին տակ փոքրիկ հրաշագեղ լիճ մը՝ Սիման-Գէօլ անուն՝ ծաղկած սրափշերու միջէն կը ցոլանար իբր կանաչագեղ կապճի մը (սգոհարատիկի մը) խորքը: Ժայռերու շրջանակ մը կարծես աշխարհէս կը կղզեացընէ այս խաղաղիկ ձորակը¹:

Լեռնաղլխէս ժամ մը ճամբորդելով մշակուած սարահարթի մը վրայէն՝ կը հասնինք Մա'ադուն-Ալէ-է (Ma'adun-)²: Այս մահմետական դիւղը կոթրնած է յապաւած (ծայրակտուր) կոնի ձեւով բլրակի մը, որուն հարթուած զազաթը յառաջագոյն դղեակ մը կրէր (Պակ.): Ասոր ընդհանուր ձեւն է՝ ուղղանկիւն, մէկ ծայրը՝ կիսաբոլոր յառաջակարկառ ցուկուածով մը³: Ներքին պատերէն միայն փլածոյից շեղջակոյտներ մնացած են, բայց շրջապատ պարիսպն՝ որ ամէն տեղ ճանաչելի կը մնայ, մինչեւ քանի մը մետր բարձրութեամբ պահուած է հարաւակողմը: Արտաքին պատը շինուած է անկանոն վիմաքարերով՝ որոնք երբեմն շատ մեծածաւալ են, իրարու կապուած հաստատուն կրողիւսով մը: Այս արտաքին երեսին ետեւը՝ պատին թանձրամասը շինուած է կոպիճ եւ շաղախ իրարու խառնուած որմալիցքով մը: Այն շինութիւնը, որմէ մնացած են այս քանի մ'աւերակները, ապահովապէս միջին դարէն աւելի հին չէ. եւ թերեւս՝ ինչպէս կ'ուղէ

1 Պր. Munro որ՝ աւելի հարաւէն՝ մեր ճամբուն գրեթէ զուգահեռական ճամբայ մը բռնած է, շրջած է այս լճակին եզերքէն, զոր կը նկարագրէ՝ Ancient Roads, p. 731:

2 Munro այս անունը կ'ուղղագրէ Maghodun՝ ինչպէս կը գրէ նաեւ Wilson (Handbook of Asia Minor, p. 46): Չեմ գիտեր՝ որ ձեւն աւելի ուղիղ է: Թերեւս գրելու է Ma'aden-Kalessi (Հանքարեղ): Ստուգիւ ալ շրջակայքն երբեմն պղնձի եւ կապարի հանքեր կային. հմտ. Ռիտտեր, անգ. էջ 220:

3 Տես ընդհանուր քարտեքը (Թիւ. Ի, առանձինն):

տեղական աւանդութիւնը, շինուած ըլլայ Գե-
նուացիներէ, որոնք՝ երկար ժամանակ այս աշ-
խարհները շահագործած են. սակայն ասի հաւա-
նօրէն փոխարինած էր աւելի հնագոյն բերդի մը
տեղը: Գիրքը սքանչելապէս ընարուած էր՝ հոս
զինուորական պահականոց մը հաստատելու հա-
մար: Այս կղզիացեալ բարձունքէն կարելի է՝ լե-
րան մէկ ճեղքուածքին միջէն եւ Ա-ր-մ-շ գիւղին
վրայէն՝ հսկել Աելիիդ-Իրմակի հոսանաց վրայ՝
երկայնաձիգ տարածութեամբ միջոց մը: Թերեւս
արդէն Միհրդատ այս տեղն ունէր իւր «գանձա-
պահ» բերդերէն մին, որոնք Պարխար լեռնա-
շղթային մէջ սփռուած էին, եւ որոնց մէջ յապա-
պովի պահած էր իւր գանձերը: Այս օրերն է շատ
աւելի՝ այն ժամանակ այս երկրաբաժինը «ջրառատ
էր եւ անտառախիտ, եւ ամէն կողմէ կտրուած սե-
պակող խորխորատներով եւ գահաւէժ անդունդ-
ներով՝ մեծ դիւրութիւններ կ'ընծայէր պաշտպա-
նութեան համար»¹: Մ'ադունի Թուրքերն ապա-
հովցուցին թէ հոն յաճախ կը գտնուին գերեզ-
մաններ հին խեցեղէն՝ ամաններով. բայց դժբախ-
տաբար այս վերջիններէս բեկոր մ'ալ չկրցան ցու-
ցընել մեզի: Յուցուցին միայն բլրակին արեւմտեան
կողին վրայ մահմետական սուրբի մը գերեզմանը՝
զոր կը յարգեն, եւ որ վեհաշուք ծառէ մը հո-
վանաւորեալ է:

Մ'ադէնէն դառիթափ էջք մը Ա-ր-մ-էի
վրայէն՝ մէկ ժամէն քիչ մ'աւելի կը հասցընէ Գե-

¹ Սորբօն, ժ.Բ. 3, 28. էջ 555C կը գրէ՝ ή γὰρ
τοῦ Παρνάδρου πᾶσα ὄρεινή τοιαύτας ἐπιτηδεϊότητας ἔχει
πολλὰς, εὐστροφὸς τε οὖσα καὶ ὑλώδης καὶ ἀποτόμοις φά-
ραγγί καὶ κρημνοῖς διειλημμένη πολλαχόθεν. (Պարխարոց
ամբողջ լեռնամասը շատ յարմարութիւններ ունի, փասն զի
ջրալից է եւ անտառու եւ անմաշելի վճերով ու գահե-
րով կտրուած շատ կողմէ:)

Մեծ-Սոս, որ Կելկիդ-Իրմակի մեծ մէկ օժանդակն է: Հեղեղատիս, որուն միջէն կը թաւալին գետոյս սկախառն ջրերը, անձկագոյն մէկ տեղը կ'անցնինք փայտէ անցարանէ մը՝ որ յանդգնօրէն կ'ստուած է երկու ափերուն քարաժայռերէն՝ կատաղի հոսանքէն վեր գոնէ երեսուն մետր բարձրութեամբ (Պակ.): Ասկէ ետքը շաւիղը ծամածուռ շրջաններով կ'ելլէ երկայն սարագագաթ մը՝ որ գէպի հարաւ յառաջակարկառ երկարած է եւ բարձր հրուանդանի մը նման՝ գետէն կը բաժնէ գետակը, որ անոր մէջ կը զահալիժի՝ մեծաշառաշ: Կաղնեաց թաւուտներուն եւ եղեւնեաց անտառին միջէն, որ այս երկրալեզուն կը ծածկեն, մեջընդմէջ հոյակապ տեսարաններ կը պարզուին մերթ գէպի Իսկէֆսիր-Տաղի սեւաթոյր կատարները, որուն առջեւ Մա'ադունի գղեակը կանգնած է պահակի մը պէս, մերթ գէպի Կելկիդ-Իրմակի խորին հովիտը, ուր գիւղերը գունաւոր բծերու պէս կ'երեւան:

Այս հովիտը հասանք Չէրֆի կոչուած տեղը, ուր անակնկալ տեսարան մը բացուեցաւ մեր առջեւ: Այս տեղը թէպէտ եւ որեւէ մշտակայ բնակութիւն չկայ, բայց ոգեւորեալ խուռն բաղմութիւն մը հաւաքուած էր հոն՝ տարեկան տօնաւաճառի մը պատճառաւ: Աճառականներ եկած էին Մարզուանէ, Սեբաստիայէ եւ աւելի հեռուէն ալ. ոմանք ուտելի ապրանքներ բերած էին, ուրիշները՝ պղնձի անօթներ կամ փայտակերտ առարկաներ, միւսները՝ արջառ ու հաւեղէն: Ասոնց մէկ մասը կ'օթագնէր սպիտակ վրաններու տակ, որոնք իրենց թէ կրպակն էին եւ թէ բնակարանը. ուրիշներ ապաստանարան գտած էին խղիկներու մէջ՝ որոնք կը կազմուէին վրայէ վրայ գիզուած քարերով եւ իբր ծածկ ունենալով գալար ոստեր: Գիւղացիք խուռնընթաց հոս կը գիմէին շրջակայքի ամէն կողմերէն՝ իրենց գնումներն ընելու համար, եւ թուրք տեսուչ մը (Ն-Գիլ) խաւրուած էր իշ-

խանութեանց կողմանէ՝ այս շինական վաճառա-
նոցին անդորրութեան հսկելու: Տեղւոյն բնու-
թիւնն ալ նուազ նորանշան չէ քան այս ե-
ռացող բնակչութիւնը: Երկայն գծի մը վրայ՝ որ
յայտնապէս գետնին խորունկ մէկ պատառուածքին
կը համապատասխանէ, բաղնաթիւ աղբիւրներ կը
բղխեն: Ոմանք հզօր ժայթքումներով կը ցայտեն,
ուրիշները՝ խաղաղիկ կը բղխեն կամ կը դեռան
պղպջալով: Իրենց բարեխառնութիւնը կը տարբերի
11էն մինչեւ 46 հարիւրամասնեայ աստիճան. եւ
ամէնէն ջերմ ջրերն առատօրէն կ'արտաշնչեն
ծծմբային գոլորշիներ: Զրբրէս մէկն ալ բմպելի
չէ. հոսելու ատեն կրային մրուր մը կը թողուն
չողչողուն սպիտակութեամբ, որ ի վերջոյ ապառա-
ժին վրայ ձիւնակոյտի նման շեղջեր կազմած է: Ասի
նմանօրինակ գործողութիւն մըն է անոր՝ որ Փոխ-
գիւղ Հերապոլոսոյ «սուրբ քաղաքին» հռչակաւոր
ջրվէժներուն մէջ երեւան կու գայ: Այս խորհրդա-
կան երեւոյթը հաւանօրէն պատճառ ալ եղած էր
հեթանոսութեան ժամանակ Չէրմիկի մէջ պաշ-
տաման մը հիմնարկութեան, եւ անոր տարեկան
տօնին նոյնպէս տօնավաճառ մը կցուած ըլլալու
էր՝ ինչպէս բաղնաթիւ ուրիշ ամենաժողով տօնե-
րուն: Արդէն հնութեան մէջ կը հաւարուէին
վաճառականներն ամէն կողմանէ, կը բնակէին
վրաններու կամ յանպատրաստից հայթայթուած
ապաստարաններու տակ, եւ յատուկ վաճառա-
պետի (agoranomos) հսկողութեան ներքեւ էին¹:

¹ Հմմտ. Պր. Foucartի լուսարանութիւնը Անտա-
նիոյ արձանագրութեան, § 20 (Lebas-Foucart, p. 174):
— Հմմտ. Guiraud, Assemblées provinciales, 123; Me-
nadier, Qua condicione Ephesii usi sint (Berlin 1880),
p. 95. — Ստրաբոն՝ Դեղրսի համար կ'ըսէ՝ ձ, 5, 4
(էջ 486 C): Πανήγυρις ἐμπορικόν τι πρῶγμά ἐστι. (ամե-
նաժողով տօնը տուրիւտաբանի է): — Բաղնաթիւ օրինակ-
ներուն միջէն, զորոնք կրնայինք հաւարել ցուցնելու հա-

Պաշտօնն անհետացած է, բայց տօնավաճառը մնացած, ինչպէս Զիլէի մէջ ալ (տես վերը՝ Բ, § 12). եւ թուրք Գեղերը՝ որ հոս կը նախագահէ, հետաւոր յաջորդ մըն է հելլենական քաղաքաբաշխութեան: Եթէ կրօնական պատճառ մը միջնորդած չըլլար՝ անհասկանալի կը մնար թէ ինչու այս ամայի տեղն ընտրուած է՝ հոն հաւաքուելու համար, որուն ջրերը նոյն իսկ խմելու յարմար չեն: Սակայն այս ջրերու զարմանալի յատկութիւնները պատճառ եղած էին զանոնք իբրեւ աստուածեղէն պաշտելու, եւ անոնց բուժիչ զօրութիւնը նաեւ հիւանդներն այցելութեան գալու կը գրաւէր, ճիշդ ինչպէս կ'ընեն տակաւին մեր օրերն ալ, ինչպէս ըսին մեզի, ամառուան ամիսներուն:

Նոյն իսկ Չերմիկ (Tchermik) անունը հին կ'երեւայ եւ տաճկական այլաձեւութիւն մը հայերէն Զերմա-ի բառին՝ որ համարմատ է յն. Θερμαί, լատ. Thermae բառերուն¹: Ասկէ ոչ շատ հետուն

մար թէ նման ամենափոքր տօներ կը շարունակուէին քրիստոնէութեան ժամանակն ալ, կը շատանամ յիշելով միայն մէկ հատ՝ որ Փոքր-Ասիոյ արեւելամասին կը վերարերի: Եեսուայ Սիւնակեցի ասորի ժամանակագրութեան համեմատ (գլ. 35, թրգմ. Wright, էջ 25) է գարուն վերջերն Արշամաշատի մէջ «մարտիրոսաց յիշատակի օրը շատերը սոփորութիւն ունէին հոս հաւաքուելու ի միասին ամէն կողմերէն, ոմանք աղօթելու, եւ ոմանք ալ տարեւառ ընելու համար. որովհետեւ մեծ մթերներ կը պատրաստուէին ժողովրդեան համար՝ որ այս առթիւ հաւաքուած էր»:

1 Ամէն անգամ որ հանգիստացած ենք ձեւերու Չերմիկ, Չերմիկ կամ Չերմա-ի՝ Սուրու-Սերայի մօտ (տես վերը՝ § 14), Կարա-Հիսարի ճամբուն վրայ (տես քիչ մը վարը) կամ նոյն իսկ Գիարրեկիի նահանգին մէջ, ուր Չերմիկ (Չերմուկ) կենդրոնատեղին է վիճակի մը (Գեղ), կը նշանակէ միշտ տեղ մը՝ ուր ջրմին (հանքային) ջրեր կը բղխեն: — [Աւելցընելու է որ Չերմիկ կամ Չերմուկ է արդի անունը տաք աղբիւրներուն ի Կիակա Մեղիտէնէի մէջ եւ յԱրարնէ՝ վերին Միջագետաց մէջ (վերջնոյս հա-

Munro գտած է հռոմէական ճամբու մը եւ կամքի մը հետքեր, որոնք Նեոկեսարիայէ Նիկոպոլիս¹ տանող ճամբուն մնացորդներն են. եւ թերեւս Tauria գիւղը, որ երկու կամ երեք մղոն վերնակողմն է՝ բարձունքի մը վրայ, կը համապատասխանէ հին աղբունի բնակավայրին Տ-ւ-ւ-ւ-ւ (Taulara), որ Միհրդատ դրամ կը հասաներ²: Գծախտարար գետն այնպէս յարգած էր որ հովտէն անցնիլն անկարելի բրած էր, եւ մեք ստիպուեցանք լեռներու շատ աւելի տաժանագին ճամբան բռնել:

Մայիս 22ին հետեւեցանք Աէլիդի աջ ափին՝ մացառներու միջէն՝ մինչեւ Աճէ-օղլու (Atjéoglu) գիւղը՝ որ երկոտասանեակ տներու խումբ մըն է. յետոյ սկսաւ երկայն ու դժուարին վերելք մը: Պարխարի մէկ գօտին որ հոս Գայլ գետը կը պատէ, երկու հազար մետրէ աւելի կը բարձրանայ: Նախ անցանք մշակութեանց եւ անտառներու միջէն մինչեւ Էրէ-կէ տաճկական գիւղը: Աւելի վերը տեսարանը կը բացուի, եւ յստակօրէն կը նշմարենք ուրիշ գիւղերու շարք մը՝ որոնք լեռան հարաւային զառիվայրին վրայ սփռուած են՝ Զ-ր-ր-ու, Ե-ւ-ւ-ւ-ւ, Պէ-կ-է-ւ-ւ: Անտառներու գօ-

մար հիմն. G. Hoffmann, առ Wright, Joshua Stylites, p. 24, n.; Gelzer, Georg. Cyprius, p. 160 f.). Անունն սչ թէ ուղղակի Thermaյի աղաւաղութիւնն է. այլ մանաւանդ հայերէն Զէր-է-կէ մեծ է (հիմն. Tomaschek, Kiepert-Festschrift, p. 140). Բառին արմատը կ'երեւայ բառերու մէջ՝ սնակր. gharmá-, յն. θερμός, լատ. formus, անգղ. warm, եւ (ինչպէս կ'իրերդ մատնանիշ կ'ընէ) Փախ-գական աշխարհներու՝ Germe տեղւոյ-անուան մէջ (Hiera Germe, Germe Colonia) — Ա-ր-ր-ու-ւ:

¹ Munro, անգ. էջ 730:

² Th. Reinach, l'Histoire par les Monnaies, 1902, p. 140 (= „Rev. numism.“ 1900, p. 230). — Բարձրակէր որ ուղեւոր մը քննէր թէ արդեօր Tauriaյի մէջ բերդերեւէ հետքը չի գտնուիր:

տին կը սկսի 1300 մետրէն, ուր շոճինները նախ կը խառնուին ափիներու եւ կնձնիներու հետ, յետոյ անոնց տեղը կը բռնեն: Ասոնք մնացորդն են այն մեծ անտառին, որ մէկ կողմանէ Նեոկեսարիոյ եւ Աոմանայի միջեւ, եւ միւս կողմանէ Աոզոնիայի եւ Նիկոպոլոսոյ մէջտեղ՝ բնական սահմանը կը կազմէր Պոնտոսի եւ Փոքր Հայոց¹: Ծառերն երթալով կը ցանցառնան 1700 մետր բարձրութենէն սկսեալ: Հսկայ եղևնիներ՝ որոնք կղզիացեալ կը կանգնէին, կիսով ածխացած պառկած են գետնի վրայ, որուն իրենց աճիւնը պարարտութիւն կ'ըլլայ: Հովիւները զասոնք վար տապալած են՝ անոնց տակ կրակ վառելով, ծառաղերձութեան շարաշուք գործն այսպէս շարունակելով: Ար մանենք բարձրագիւր արօտներու շրջանը, որոնց ամարստանները տակաւին դատարկ են բնակիչներէ: Տիրազոյն լճակի մ'եղերբը, նսեմատուներ անտառակի մը մօտ, խուճք մը հիւղեր՝ որոնք շորեքկուսի կոշտ տաշուած գերաններով շինուած են, կը սպասեն ձիերու եւ արջառններու գալուն: Ասի Բէ-Ե-Ե-Ե կոչուածն է (Պակ.): Որչափ կը բարձրանանք՝ բուսականութիւնն երթալով կը խեղճնայ, եւ նոյն իսկ սիղազիները գժուարութեամբ կ'աճին կեանքէ զուրկ հողի մը վրայ: Արան շոր կմախքն ամէն կողմ իրեն գոյն գալարուտ ծածկոյթը պատուելով գուրս կը ցցուի. եւ երաշխին լեռնադարերու վրայ ձեան բնդարձակ կոյտեր իրենց ձիւնահալքը տակաւին նոր կ'աւարտեն (Պակ.): Այս քարուտ արօտատեղիներէն անդին՝ հետզհետէ երեւան կ'ելեն՝ հիւսիսէն ու հարաւէն՝ Պոնտական լեռնաշղթային ու Ապպազոփիկիոյ բարձանց սպիտակափայլ կատարները:

Լեռնանցքին գագաթը հասանք Գեւե-Ղե-Ե-Ե-Ե-Ե-Ե-Ե անդին՝ 1970 մետր բարձրութեամբ, եւ

¹ Bellum Alexandrin. c. 35; Հմմտ. Ստրաբոն, ԺԲ, 3, § 19, § 28:

անկէ ետքը խորամուխ եղանք Մէլէա-Իրմակի՝ Հին Մէլէա-Նիւսի գետոյն աւազանն, որ կը հաւարէ այս լեռներուս՝ որոնք այնչափ մօտ են Գայլ գետոյն, բայրը Զեբըր եւ զանոնք ուղղակի կը տանի դէպ ի Սեւ Ծով՝ խորունկ խոխովի մը միջէն, որ ծովեղերեայ լեռնաշղթան գրեթէ անոր ամբողջ թանձրութեամբը կը ճեղքէ: Անցանք Աֆանի ամառանոցը՝ գեղանկար հաւաքոյթ մը ալպեան փայտակերտ անիկներու, շինուած եղեւնաստանի մը եզրը՝ փոքրիկ լճի մ'ափին վրայ, եւ իրիկունը հասանք Աֆ-ն բուն գիւղը (1582 մետր): Ասի սիրուն վարչատեղի (Ն-Պէրլէ) մըն է, փոքրիկ դաշտի մը ծայրը՝ որ ծածկուած է դալարեօք. իւր աները կը պատեն հեղեղատ մը, ուր կը հօսի վճիտ վտակ մը, եւ շրջապատուած են մրգաստաններէ՝ ուր հիանալիօրէն կ'աճին տանձիները: Մեղուններու պարսեր կը սնանկին մարգագետիններու ծաղիկներով, եւ կրցանք վարչին (Ն-Պէրլ) փեթակներուն բերքէն վայելել՝ առանց մեր խելաց վրայ զգալու այն փնասաբեր ազգեցութիւնները՝ զորոնք հիները կը վերագրէին սոնտական մեղրին¹: Երբ կրակին բուրբը կը խօտակցէինք՝ մայր մտնող արեւը ծիրանեգոյն կը ներկէր հեռուն Վարագէօլի ձիւնապատ առամնաձեւ գազաթունքը՝ որ Մէլէաէ անդին կը բարձրանան, եւ երփնագոյն փաղիկէ կու տար այս լեռան անձանօթ սառնակոյտները, զորոնք Եւրոպացի մը երբեք չէ հետազօտած²:

¹ Մարտուն, Ժ. Բ. 3, § 18. Քսենոփոն, Արշ. Դ. 8. 20. հմմտ. Th. Reinaeh, Mithridate Eupator, p. 228, n. 5. — Անդերսըն կը գրէ թէ Պոնտոսի այլեւայլ կողմերը զինքն զգոյշացոյցին մեղր ճաշակելու վտանդէն:

² Կինե. Աս. Տճկ. Ա. 786 Վարագէօլի գազաթներուն 2600 մետր բարձրութիւն կու տայ՝ կ'երեւայ օամանեան սպոյցից կամ ճարտարագիտաց տուած սեղեկութեանց համեմատ: Մենք անոնց աւելի բարձրութիւն մ'ընծայելու միտեալ էինք:

նկատմամբ չենք համարձակիր վճիռ մը տալու: Տեղական քանդակագործութեան պարզամիտ կերպերն անշուշտ որեւէ փոփոխութիւն կրած չեն երկար դարերու ընթացքին մէջ: Բայց կը կարծենք թէ կարելի չէ մտաբերել այս անձեւ անասունը՝ «հատեան առիւծ» մը (հիտիտեան) համարելու: Այն ատեն մկանունքն շատ աւելի ճշգրտագոյն կ'ըլլային եւ կերտուածն ալ այսպէս համաստատոյիծ շէր ըլլար:

Մէլէտի հին ասանը, որ Հաբիտէ պաշտօնական անունն առած է, մեծաւ մասամբ նոր հիմնարկութիւն մըն է արդի (այժմ՝ նախնիթաց) սուլթանին: Տեղապահի (պօլ-պօլ) մը նիստն է, եւ այժմ իբր երկու հարիւր տուն ունի, որոնց կոկոթութիւնն աչքի կը զարնէ, եւ բազմամթեր շուկայ մ'ունի. այսօր ալ տակաւին կը շինուի: Արով բռուած շինութիւնները խմբուած են գետակի մը եւ Մէլէտ-Իրմակի գետախառնունքին վրայ, եւ վերջինս հոս արդէն նշանաւոր գետ մ'եղած է, վրան գեղեցիկ կամուրջ մը ձգուած: Գծախտաբար Համիտի կպած է բարձրաբերձ քարածայռերու, եւ ասիան անտանելի է ամառը:

Պեւտինգերեան Տախտակը կը նշանակէ Պոզեմնիումէ գէպի Նիկոպոլիս ճամբայ մը, որ՝ եթէ ստուգիւ տարբեր էր Նիոկեսարիայէն Նիկոպոլիս գացող ճամբէն, ի հարկէ պիտի հետեւէր Մէլէտի (Մէլէտի) բարձր հովտին՝ ասկէ անցնելու համար Բուլեման-Չայի հովիտը (Սիդեն-գետ՝ Sidenus fluvius). բայց քանի որ այս ճամբուն ուղեգիծը տակաւին բոլորովին անորոշ է այս շատ քիչ հետազոտուած երկրիս մէջ, աւելի լաւ է՝ նոր գիւտերու սպասելով՝ շփորձել գետեղելու Սաւրոմիսենա (Sauromisena) եւ Մատուսկոյ (Matuasco) կայանները, որոնք այս հին ուղեցոյց-քարտէսին վրայ նշանակուած են¹:

1 Կիբերգիւր վերջին քարտէսին վրայ Sauromisenaն անթարթութեամբ կը նոյնացընէ Համիտիէի հետ: Միւլէր

Համիտիե կէօյլու-Հիսարի հետ կապուած է Վառազնաց ճամբով մը, որ մէկ հասածն է նոր խճուղոյն, որ Օրդուի նաւահանգստէն կը տանի Սեբաստիա՝ օգտուելով Մէլէտի երկայն ճեղքուածքէն: Համիտիե աւանէն ելլելէն ետքը ճամբան կը թողու գետը եւ անցնելով Սոր-Վշէ (3/4 ժամ հարաւային հարաւ-արեւելք) կը հասնի սոճիապատ լեռնազառ մը: Ծառերը հոյակապ են, եւ փոխադրութեան միջնոցներուն պակսելովը՝ հին անտառն աղատ կը մնայ փայտահարներու աւերութենէն: Հովէն տապալած հսկայ կոճիկեր տեղն ի տեղը կը փոխն: Կէէ--շ (Kégoush) գիւղէն (2 ժամ Համիտիէէ) անդին կ'անցնինք Մէլէտի վերջէն մէկ օժանդակը՝ Բալդերան-Սու, եւ յետոյ միշտ անտառներու մէջէն կը հասնինք Իդդիղ-Տաղի գաղաթնագիծը, եւ քիչ մ'ետքը (Համիտիէէ 5 ժամ) յանկարծ դուրս կ'ելլենք Կէօյլու-Հիսարի վրան, որուն՝ պարտէզներու մէջ ցրուած երեք կամ չորս հարիւր տները յանկարծ կը տեսնուին բլուրներու մէջ՝ Գայլ գետէն քիչ մը հեռու (Պտկ.): Լեռան գահավէժ ու լեռկ դարերը հեղեղատուած են ջրերէ, որոնք պէտք է որ ամէն մրրկին իւր կողերէն՝ որոնք սպիածեւ ծակծկուած են, առնուն ու վար բերեն գեղնորակ կաւահողի մը կոյտերը. իսկ ճամբան երկայն ու բազմազաւար դարձուածներով կ'իջնայ դէպ ի փոքրիկ քաղաքը, որ կարծես հսկայ կոնքի մը խորքը ազուցուած է:

§ 24. Կեօյլու-Հիսարի կայս-Հիսար (քարտէս ԻԲ): — Արդի Կէօյլու-Հիսար ալ Համիտիէի պէս տեղապահութիւն մըն է (քոյմ-է-մը)՝ Օր-

(առ. Պաղատ. Ե, 6, էջ 874) ճամբատութեան երեւոյթով մը Matuaseump կը զետեղէ Մո-դասու (Modasu) կամ Մո-դասուն (Modasun) տեղը Գայլ գետոյ հովտին մէջ: Այն տանն հին ճամբուն ուղեգիծը զգալապէս շեղած ըլլալու է արդի խճուղիէն, եւ դէպ ի Աֆան ելլելու էր:

դու է Սերաստիա տանող ճամբուն վրայ հաստա-
տուած, եւ հնախօսը հետաքրքրող որեւէ հնու-
թիւն մը չունի¹: Այն բերդը (Հիւր) որ դաւա-
ռակագլուխ տեղւոյս իւր անունը տուած է, իբր
մէկ մղոն գէպ ի արեւելք հեռու է:

Դղեկին տեսքը գրաւիչ է (Պակ.) եւ զմայ-
լեցուցած է այն սակաւաթիւ ուղեւորներն՝ որ մօ-
տեցած են անոր²: Թառած է սարածայրի մը վրայ
որ հսկայակերպ շարարագլխոյ մը կը նմանի, եւ որ
գլխուօր լեռնաշղթային հետ կապուած է միայն
նեղ սարով մը, եւ այս կողմէն միայն մատչելի է
իւր գագաթը: Այս կղզիացեալ դանդուածը դա-
հալէժ կը բարձրանայ հովտէն վեր՝ երկու կամ
երեք հարիւր մետր բարձրութեամբ: Աւերուած
հին պարիսպներն իւր սրածայր գագաթին վրայ
աշտարակաւոր պսակ մը կը կազմեն, եւ յառաջա-
պահակ ամրութիւնները կը կտրեն մտից ճամբան՝
որ երկու անգունդներու միջէն սարագլխուն
վրայէն կ'ընթանայ: Իւր ամուլ կողերը, որ դեղնա-
գոյն աւաղաքաբէ են, զոր մէջընդմէջ մութ կարմիր
խուեր կ'ընդհատեն, խեցակաւի գոյն ունին: Այս
վիթխարի ու ապալերկ կոնին ստորտը քանի մը
աներ շինուած են ձորակի մը մէջ, ուր ուղիս մը
դալարութիւնն ու կեանքը կը պահպանէ:

Աէզլու-Հիսար, «Ակնաղբեր բերդը»³, որմէ
սյոսօր միայն պատերու քանի մը կտորներ մնացած

¹ Munro (անդ, էջ 729) կը յիշէ սակայն «բար մը
բանդակուած երեք խաչով, անտարակոյս եկեղեցւոյ դրան
մը բարաւորը», սակայն այս բարն անշուշտ ուրիշ տեղէ մը
բերուած էր:

² Ասոնք փորձած են յաճախ աւելի կամ նուազ
յաջողութեամբ պատկերացընել անոր տեսքը: Շատ գոյզն
նմանութեամբ ստուերայծեր կը գտնուին Տուրնըֆորի
(Voyage du Levant, օպ. 1718, էջ 170) եւ Բարթի քով
(Barth, Reise von Trapezunt nach Skutari, 1860, p. 18):

³ Սասգարանութեանս մասին հմմտ. Մորդաման
Բարթի քով, անդ:

են, կործանած է Ժ.Ը գարու վերջին տարիները¹,
 Կարեւոր բերդ մըն էր. Մահմետ Բ զրաւեց զասի
 1461ին՝ Սինոպն առնելէն ետքը, բայց Տրապիզոնն
 առնելէն յառաջ: Ապահովապէս Բիւզանդեանց
 ժամանակ Հայկական բանակաթեմին վեշտասան
 ամրավայրերէն մին էր, զլեւաւորն ըլլալով Կղզո-
 նիա². Եւ հաւանօրէն մէկն էր այն բազմաթիւ բեր-
 դերուն՝ զորոնք Յուստինիանոս վերանորոգել
 տուաւ. Հայաստանի այս մասին մէջ³, Լեւան ստո-
 բորը զիւղացիէ մը գնեցի Հերակլի կայսեր մէկ
 սկեզբամբ⁴: Գժբախտաբար չենք գիտեր թէ
 Յոյնք միջինդարու մէջ ինչ անուն կու տային այս
 միջնաբերդին: Շատ աւելի յառաջ ալ ուղղա-
 գիտական այս հիանալի դիրքն ամրացուած ըլլալու
 էր. եւ ուրիշ յարմարագոյն տեղ մը չկայ՝ աւելի
 հաւանականութեամբ զեռեղելու Միհրդատայ
 «գանձապահ» բերդերէն մին: Կէօլիւ-Հիտարը
 համարած են Աննի-կա (Anniaca) կայանը՝ զոր
 Պեւտինդերեան Տախտակը կը յիշէ Պոլեմենիուսե-
 դէպ ի Նիկոպոլիս տանող ճամբուն վայ՝ վերջինէս
 18 մղոն հեռու: Հեռաւորութիւնն արդեամբք իբր
 27 քիլոմետր ըլլալու է, եւ առաջարկուած նոյնա-
 ցումը հաւանական կ'երեւայ⁵:

¹ Մորիէի 1808ին սակե անցնելէն քիչ մը յառաջ-
 չմեռ. Morier, Voyage de Perse (Թրգմ. ԿՂ.) 1813,
 t. II, p. 249

² Gelzer, Genesis der Thermenverfassung, 1899,
 p. 102 (եւ հայ թարգմանութիւնը, էջ 54-55):

³ Պրոկոպ., Ասան Շին., Գ. 4, էջ 253:

⁴ Դրամ մը՝ Հերակլի եւ Հերակղ Կոստանդինուսի
 պատկերով իբր 641 Յ. Ք. տարին կարուած, եւ շատ քիչ
 տարբերութեամբ նոյն կտորն է որ փորագրուած է սա-
 տեղը՝ Sauley, Suites monétaires byzantines, pl. VII, 4.

⁵ Այս կարծիքն՝ որչափ կ'երեւայ՝ նախ յայտնած է
 Միւլլեր (Ճան. առ Պաղ. Ե, 6, էջ 874) եւ զոր ընդունած է
 Կիրերգ (Քարաէս), որ փակագծի մէջ մշ իրաւամբ կը

Կէօյլու - Հիսարէն նորէն ելանք Կէլիկո - Իր - մակի անձուկ հոփիար, որ գետոյն ընթացքը ջրա - գրական տեսակիտով ճշմարտապէս զարմանալի երեւոյթ մըն է: Նիկսարի գաշտէն մինչեւ Աշկար - Օվա, ուր կը բարձրանար Նիկուպոլիս (§ 26), գետը կը հոսի նեղ անցքէ մը՝ գրեթէ 100 քիլոմետր ընթացք մ'ընելով: Հարաւէն կը բաժնուի Հիրի - կէ՝ որուն ուղղութիւնը գրեթէ զուգահեռական է իրեն զնացքին, բաւական բարձր լեռնաշղթայով մը՝ որուն լայնութիւնը սակայն տեղ տեղ երկու մղոնէ ալ պակաս է: Հիւսիսակողմը, երբ հասնու թէ Պարիսարի առաջին հանդիպագօտիներն ելլենք, կը հասնինք անմիջապէս Մէլէտի եւ Կէլիկոյի ջրովի - ճակաց սահմանագիծը: Այս բարձունքները տեղ տեղ կը նմանին պատնէշի մը՝ որուն ոփը (փոսա - կողման զսոխիվեր լեփր) դարձած բլայ դէպ ի

յաւելու «Կ-ընէ-» (= Կարա-Հիսար) - Այս կարծիքը մեզի աւելի հաւանական կ'երեւայ քան Անդերսընի միւս կար - ծիքը (Քարաւա Փոքուն Ասիոյ), որ Ռամսէյի մէկ քարտե - սէն (Պամ. Աշխ. էջ 266) ազդուելով՝ Կէօյլու - Հիսարի տեղը կը դնէ Գ-նէ (Danae) կայանը՝ Նիկուպոլէ Կոմանա գացող ուղեգծին: Որովհետեւ նախ շատ մեծ է հեռաւո - րութիւնը (25++ մղոն). եւ յետոյ Նիկուպոլէ Կոմանա տանող ճամբան կ'ընթանար՝ կը կարծենք՝ Հիրիկի բարձր հոփաւէն, ո՛չ թէ Գայլ գետի հոփաւէն: Տակաւին Տափերնիէի օրով (էջ 17, ասպ. 1879) դէպ ի Արեւելք շուտ կարա - աններու ճամբան կ'երթար Թոխաթէ դէպ ի Էնդէրէս (= Ագրաս) եւ Ըծպտեր՝ Կոմանայի եւ Տոզանլու - Սուի (Հիրիկ) վրայէն: Սակայն՝ ինչպէս մեզի գիտել կու տայ Պր. Անդերսըն, ուրիշ ճամբայ մ'ալ՝ որ նաեւ այսօր գոր - ծածական է (Ch. Wilson, Handbook, p. 46) նախ կ'եր - թայ Հիրիկի հոփան ի վեր եւ յետոյ Մօղասուն կը մտնէ Գայլ գետոյն հոփիար: Այս վերջին ճամբան բռնած են 1700ին Տօրնըֆօր (անգ. Բ, էջ 429, ասպ. 1717) եւ Բարթ 1858ին (Reise von Trapezunt etc., p. 19): Թերեւս նաեւ հոս - մական ուղին յաջորդարար գործածած էր երկու հոփա - ներն ալ: — Տես վերը՝ Բ, § 21:

հարաւ, իսկ որոկը (հարթ զառիվայրը) դէպ ի ծովեզր: Այսպիսով Գայլ գետն իւր երկայն գնացքին մէջ չընդունիր՝ ինչպէս նշանակած է արդէն Ս. Գրիգոր Նիւսացի¹, ուցիշ ջրեր՝ բայց եթէ սրընթաց բուռն ուղիներ, որոնք զինքը փակող գահալէժ դարերէն վար կը թաւալին: Երբ ձիւնահալքը կամ նոյն իսկ պարզ մրրիկ մը այս օժանդակները կը ստուարացընէ, գետն այս հեղեղներով յորդած՝ կը գեղու ու կ'ողտէ, եւ իւր բռնութեամբը մեծամեծ կտորներ կը փրցընէ կը տանի իւր միշտ փոփոխական ամնափուլերէն: Իւր անկողնոյն մակերեսը փոփոխուած ըլլալու է անընդհատ եւ զգալապէս բարձրացած՝ հնութեան ժամանակներէն ի վեր. եւ այսպէս կը մեկնուի հասմէական ուղւոյն լիակատար անհետացումը, որ այս երկայն կապանէն կ'անցնէր: Ալեզլու - Հիսարէ մէկուկէս մղոնի շափ անդին ապառաժներուն մէջ կտրուած այլեւայլ հորիզոնական փորուածքներն այն ճամբէն մնացած միակ, եւ այն՝ շատ տարակուսական՝ հետքերը կ'երեւան ըլլալ:

Կարաւաններու շաւիղը՝ որ աջ ափին երկայնութեանը կը խաղայ, աւազաքարի լեռնորմներուն ստորոտէն կ'ընթանայ, որոնք լերկ են ու մրրկալից հողմայոյզքերէ կրճուած, եւ տապակած՝ արեւէն, եւ առած են թխազոյն ու կարմրիկեկ երփնագոյներ: Տեղ տեղ յառաջ ցահած քառաժայռի մը վրայէն պէտք է անցնիլ աստիճանաձեւ նրբուղիով մը: Հողը երաշտին է. հոս ու հոն կ'աճին քանի մը ողնաթեք եղեւիններ, կիւի թաւուտներ եւ մորմենիներ: Գետը՝ որուն լայնութիւնը քառասուն մետրի շափ է, թանձր սկահող մը տանի հետը: Իւր դեղնորակ ջրերը մերթ կուտակադէղ կը ծփին ու յորձանալից կը փոթորկին խարակներու մէջ եւ մերթ խաղաղիկ լռին կը սահին աւազուտ խութերու միջէն, որոնք փոշիա-

¹ Տես վերը՝ Բ, § 21:

ցած են ժայռերուն քայքայուելովը: Հովհաննանյակ է եւ անբնակ (Պտկ.): Առաջին գիւղը Աէօյու-Հիսարէն հինգ ժամ հեռու է՝ Արդ-Վէկ անուն (Արդ-Վէկ գարիկ). որ իբր հարիւր երգ ունեցող հասարակութիւն մըն է: Գիմացը՝ գետոյն միւս ափը՝ նոր շինուածքը, ինչպէս ըսին, Ջէրմ-է բաղնիքն է, որուն համար ծծմբային ջերմկաջրին աղբիւրն ակնակալ բրած են, եւ ուր հիւանդները կը յաճախեն:

Ասկէ քիչ մ'անդին՝ Աէլիդը կ'անցնինք նորօրինակ կամրջէ մը: Քարաշէն թանձր կամրջակալներու վրայ զետեղուած է փայտեայ կամրջայատակ մը՝ զոր վեր կը բռնեն ծառակոճղեր, որոնք վրայէ վրայ դրուած արտակարկառուն շարքերով սուտ կամար մը կը ձեւացընեն: Քիչ մ'անդին՝ խորշելու համար նեղ ու խոր խոխով մը՝ ուր գետը մոնչելով կը բախի զինքը սեղմող ապառաժ ափափայից դէմ, հարկ եղաւ որ ելենք կարմիր աւաղաքարէ բլուրներն՝ որոնք հարաւային ափը կը պատեն, մինչեւ Ջէրմ-է գիւղը, որ անդնդային վհի մը եզերքը հակած է: Գիւղն ունէր իբր հնգետասան քարաշէն տներ՝ հողածածկ տանիքներով: Գիմացը կը կանգներ՝ մտախլապատ գլխով՝ Ջիպրահան լեռը, որուն կատարն՝ ինչպէս գիւղացիք կը պատմէին, կը կրէ քրիստոնէական մատուռ մը, որ շատ յաճախուած ուխտատեղի մըն է: Անտարակոյս աս ալ ուրիշ մնացորդ մըն է բարձանցայն պաշտաման, որուն այս աշխարհին մէջ յարատեւ մնալը շատ անգամ հաստատեցինք:

Ասկէ ետքը ծամբան դարձեալ կ'իջնայ դէպ ի Աէլիդ եւ գետը կը հասնի՝ ճիշդ կըճին մուտքը, ուր երկկամար կամուրջ մը՝ Աուրբա-Քէօփրիւ աւուամբ՝ կը միացընէ քարածայռին երկու կեռիքը (Պտկ.): Յետոյ վերջնականապէս կը թողու գետը եւ բլուրները կտրելով կ'ելլէ դէպ ի Արա-Հիսար: Չնայելով իւր դրից բարձրութեան՝ եր-

Թալուվ գեղաղուարճ կ'ըլլայ երկիրը: Գետնին ամէն ծալքերուն մէջ վտակներ կը հօսին, եւ ցորենի արտորայք կը դալարանան բլրակողերուն վրայ, ուր գիւղերն ալ կը բազմանան: Երկուքուկէս ժամ մեղմով վեր ելլէն ետքը՝ կը հասնինք լեռնադաշտ մը հաղար հինգ հարիւր մետրէ աւելի բարձրութեամբ, եւ յանկարծ կ'երեւայ Կարա-Հիսար՝ կռթնած հսկայատարած քարաժայռի մը, որ կը կրէ անոր «Սեւ բերդը»:

Ը. Կողոնիա եւ Նիկուպոլիս Հայոց:

§ 25. Կարա-Հիսար (Պակ.) — Կարա-Հիսար հին Կոլոնիան է (Colonia): Այս նշանացումը, զոր Ռամսէյ առաջարկած էր¹, կը հաստատուի բիւզանդական արձանագրութեամբ մը՝ զոր հոս ձօնած է «Կողոնիոյ գրունդար» մը (δρουγγάριος Κολονίας, արձ. թ. 355): Բաց աստի որոշ յիշատակներ յաւերժացած են տեղւոյս յոյն հասարակութեան մէջ՝ որ իբր 150 տուն է²: Հոս Գեկ. Յին կը տօնեն Ս. Յովհաննու Լուսկեցի (ὁ Ἡσυχαστής) տօնը, որ Կողոնիոյ եպիսկոպոս էր 481 եւ 490 տարիներուն մէջ³: Աստուածածնի յոյն վանքը, որուն հիմնարկութիւնն անոր կ'ըն-

¹ Ռամսէյ, Պակ. Աշխ., էջ 57, 267:

² Կինէի (Աս. Յճկ. Ա. 779) Յունաց համար տուած թիւը՝ իբր 1650 հօգի՝ չափազանցուած կ'երեւայ: Նոյն մատենագրին համեմատ՝ ամբողջ քաղաքը՝ 11.700 բնակիչ ունենարու է:

³ Յայտնաւորները այս տօնը կը դնեն Գեկտ. Յին, 7ին եւ 8ին (Հմմտ. Յայտն. Կ. Պոլսոյ, Հրատ. Delehaye, էջ 277, 41, 286, 1, 288, 54). Գեկտ. Յին օրը նշանակեցին ճի կարահիսարի Ս. Զօրափարի (τοῦ Ἀρχιστρατήγου) եկեղեցւոյն քահանան: — Սրբոյս վաքքը՝ զոր յօրինած է Կիւրեղ Սկիւթապոլսեցի (Act. SS, Մայիս, Գ. էջ 16) կ'ըսէ թէ «Եպիսկոպոս եղաւ Կողոնիա կոչուած քաղաքին» (τῆς Κολωνίας λεγομένης πόλεως)

ծայեն, տակաւին կանգուն կը մնայ քաղաքէս երկու մղան հեռու՝ հայերէն յորջորջանօքս Mighramana¹: Ռիտաւորները խուռնընթաց կը դիմեն հոն Օգոստոսի վերջերը, պատուելու համար Ս. Կոյսին հրաշագործ մէկ պատկերը քարայրի մը մէջ՝ որ եկեղեցւոյ փոխուած է, եւ որ Կուատ-Սուի (Koat) վերեւ քարաժայռի մէջ փորուած է:

Թէպէտ եւ լատիններէն անուն կը կրէ՝ սակայն պատմութեան մէջ քաղաքս կ'երեւայ միայն բիւզանդական կայսրութեան հաստատութենէն ետքը: Առաջին անգամ յիշատակուած կը գտնենք Ս. Բարսղէ, որ կը յիշէ գանի իբրեւ ամէն յաճախագնաց ճամբաներէն հեռու հաստատութիւն մը²:

Բայց որչափ ալ մեծ ծանրակշռութիւն չենք կրնար տալ Պրոկոպիոսի պատմած աւանդութեան³, որ Պոմպէոսի կ'ընծայէ ասոր հիմնարկութիւնը, հաւանական է սակայն թէ արդէն Հռոմայեցւոց ժամանակ որոշ չափով կարեւորութիւն մ'ունէր. վասն զի Colonia կը գտնուի Ռաւենականին ցանկին մէջ⁴ որ հին քարտէս մը կ'օրինակէ, եւ Հայաստանի մէջ կայանաւորուած «Թեւ Կողոնիացւոց» (ala Colonorum) թերեւս կը կազմուէր՝ գոնէ մասամբ՝ իւր հողաբաժնէն առնուած նորակոշ զինուորներով⁵: Այս տեղ աւան մը հիմնելու

¹ [Եւսիբոն՝ կ'երեւայ հայ-տաճկախոսն Մարտի-Մարտի խոսնակ ձեւ մը:]

² Թուղթ ճգն μακρὰν ἀπόχισταί τῶν ὀδεομένων τόπων ἢ Κολωνεῖα. — Հմմտ. Թուղթ ՄԻԸ (Migne, սիւն 836) ἐν ἑσχάτῃ τῆς Ἀρμενίας τέτακται (Հայաստանի ծայրը հաստատուած):

³ Պրոկոպ., Ասան Շին. Գ, 4, էջ 253 (հրատ. Բոն քաղաքի):

⁴ Աշխ. Ռաւեն., էջ 97, 2 (հրատ. Pinder եւ Parthey):

⁵ Notit. Dignit., Or. XXVIII: Ala prima Augusta Colonorum, Chiaica (Թեւ — — — — — Ա — — — — — Կ — — — — —)

պատճառն եղած է անտարակոյս պաղլեղի ճօտակոյ հանքերուն շահագործումը, որոնք ամէն ժամանակ ալ քաղաքիս բարդաւաճանքն ապահոված են, եւ որ այսօր ալ սովորաբար կը յորջորջուի «Շալի-կ-ը-ը-ը» այսինքն՝ «Պաղլեղի Սեւաբերդ»։ Արդ պաղլեղ արդէն Պղինիոսի ատեն Պոնտոսէ կ'արտածուէր¹։ Կրնայ ուրեմն ենթադրուիլ թէ կեսարները հոս ալ կաղմակերպած են՝ ինչպէս յաճախ ըրած են ուրիշ տեղեր, հանքային շրջան մը (metallum, «մետաղք») որ անկախ էր դրացի յոյն քաղաքներէն, եւ թէ իւր Կոլոնիա (Colonia, «գաղութ») լատին անունը կը ծագի իւր լատինական վարչութենէն։

Ինչ ալ ըլլայ այս կարծիքը, Կողոնիոյ բուն նշանակութիւնը կը սկսի Յուստինիանոսէ, որ նոյն տեղն առաջնակարգ բերդաքաղաք մ'ըրաւ². Եւ

— 5. է գէ-լ-ը)։ Գունդը մասնակցեցաւ Ադրիանու ատեն շրէիդ գէմ մղուած պատերազմին, եւ Առիանոս կը յիշէ «հեծելապունդ՝ որոյ անուն էր Կողոնացիք» (ἐληγν ἢ ὄνομα Καλῶνες) Կապպադովկացոց գնդերուն մէջ. հմտ. Cichorius, ի բառագիրս Pauly-Wissowa, ի բանին Ala, 1238; Ramsay, Studies in the Eastern Rom. provinces, p. 171. — Արդէն Բեօքինգ (Böcking, ի ծանօթութեան Notitia գրքին, Ա, 427) այս անունը կապած էր Կողոնիոյ անուան հետ։ Ասոր հակառակ Ռիտտերլինգ (Ritterling, ի Wiener Studien, 1902, Festschrift f. Bormann, p. 120) կը պաշտպանէ թէ Colones ազգագրական կամ աշխարհագրական անուն մը չէ, այլ սովորական բառ մը։ Միայն թէ նորերս Ասորիք գտնուած արձանագրութիւն մը՝ 75 կամ 80 Յ. Գ. տարիէն՝ նուիրուած է անձի մը՝ «բ-ն-լ-դ-ի-ր-ն հի-է-լ-ը Կ-ղ-ն-ի-ը» (στρατοπεδαρχήσαντι ἰππέων Κολωνειτών. տես Dittenberger, Orient. inser., 425 — Inser. r. Rom. pert. III, 1144)։ Հոս խօսք չի կրնար ըլլալ պարզ զորարարկի (colones, առաջը զօրաց) զօրավարի մը ճասին։ Տիտղոսին ծագումն անորոշ կը մնայ։

¹ Պղինիոս, Բն. Պամ. ԼԵ, 52, § 184:

² Պրոկոպիոս, անդ։

Մոռցրնել տուած ըլլայ Կողոնիա պաշտօնական ա-
նունը, եթէ միայն թուրք եւ յոյն անուանց նոյ-
նութիւնը զուգադիպութիւն մը չըլլայ՝ տեղեաց
արտաքին երեւութէն առնուած: «Բերդը» կը
բռնէ ամբողջ դադաթը մթագոյն կրաքարէ կղզի-
ացեալ լեռնազանգուածի մը, որ մամուապատ
է, եւ որուն խարխսր մէկ մղոնէ աւելի շրջա-
պատութիւն ունի: Քաղաքէն վեր յիսուն մետրի
շափ կը բարձրանայ, եւ հանդիպակաց կողմանէ՝
կ'իշխէ երկու հարիւր մետրէ աւելի՝ Շէհէր-Սուի
խորունկ հովտին վրայ: Բերդն ելլել կարելի է
միայն նեղ շաւղէ մը, որ քարաժայռին մէջ
կտրուած է եւ որ տեղ տեղ սանդղոյ կը փո-
խուի: Իւր գահավէժ զառիթափը, զոր պատմա-
գիրք մատնանիշ կ'ընեն¹, կրնար գիմազրաւել
սանդղայարձակմամբ բերդն առնելու ամէն փորձի:
Այս բարձրութեան մէջ (1600 մետր) խիստ
կլիման ալ, ուր ձիւնը գետինը կը ծածկէ հոկ-
տեմբերէն մինչեւ մարտ, կը պաշտպանէր այս
գիրքն երկարատեւ պաշարման մը դէմ. եւ այսպէս
գիւրաւ կ'ըմբռնուի թէ Բիւզանդացիք այս տեղն
իրենց պետութեան ամենազլիաւոր ամուրններէն
մին բրած էին: Կը կրկնենք՝ բերդն իւր կարեւորու-
թիւնն առաւ Յուստինիանու ձեռքը, որ՝ ինչպէս
կ'ըսէ Պրոկոպիոս, վերանորոգեց զայն «իւր ամբողջ
հոգրութեամբն»². եւ ապահովապէս միջին դարու
ընթացքին մէջ ալ շատ անգամ մեծցուեցաւ եւ

¹ Պրոկոպ., Վասն Շին. Գ. 4 ἐν ἀκρωρυχία λόχου
κατακρήμινον (գահավէժ լեռնածագին վրայ). Կոստ. Ծի-
րանածին, Վասն Բանակաթեմ., էջ 31 κάστρον ὄχρω-
τατον καὶ κορυμῶδες (ամրագոյն եւ գահալիժուտ բերդ):
Հմմտ. Մովս. Խորենացի Բ. գլ. Գ.՝ «ա բարձրաւանդակի
միջ ըլլով քարապատմիւ, որ պլմ ասի Կողոնիայ»
(Գղ. Թրդմ. տես Langlois, Hist. Armén. II, p. 82):

² Պրոկոպ. անդ՝ ἀνεσώσατο δυνάμει τῆ πάση.

նորագուեցաւ¹։ Արակամար գրան մուտքին վրայ
 գեակգուած գինանշանի վահանիկ մը կը կրէ տա-
 կաին երկզլուխ արծիւն՝ որ հաս իշխող որեւէ
 մահաճառական իշխանի մը գինանշանն էր²։ Մտ
 ժամանակներս ալ ապաստանարան եղած էր մահ-
 ճառական բնակչութեան մէկ մասին³, որոնց խոր-
 խուլ անակները տակաին յեցած են աւերուած
 թանձր պարիսպներուն։

Սակայն՝ Պրակայիտի բաժին համեմատ՝
 Յուստինիանոս միայն վերականգնեց արդէն գոյու-
 թիւն ունեցող՝ բայց անխնամ՝ լքուած բերդ մը։
 Հաւանորէն անիկայ արդէն երկրիս վաղեմի թա-
 գաւորներուն ապաստաններէն մին էր։ Արակամար
 գուռ մը՝ որ բաւական նոր ժամանակի շինուածք
 մըն է տափարակ աղիւսներով՝ մասամբ կը ծածկէ
 սանդղղայ մը մուտքը, որ քարածայտին մէջ կը
 խորասուզուի (Պակ.)։ Փողանցքն՝ որ չորս մետր

¹ Ցակաին ահա որ բերդ մըն էր Էփեսոս Էֆէնտիի
 արով՝ որ կը նկարագրէ զայն. հմմտ. Բեռտանը, անդ, էջ 208։
 — Երգի աւերակաց մասին լուսպոյն՝ թեեւ տակաին ան-
 բաւական՝ տեղեկութիւններ տուած են Բարթ (Barth, Reise
 von Trapezunt etc., 1860, p. 14 ff.) եւ Ցէյլոր՝ (Taylor,
 ի „Royal Geogr. Soc.“ XXVIII, 1868, p. 293 ff.). — Շրջա-
 փակ պարսպին տարրական յատակագիծ մը հրատարակած
 է Սիդերոպուլոս (Sideropoulos, ի թերթին Կ.Պոլսոյ
 Σύλλογος, հտ. ԺԶ. Παράρτημα ἀρχαιολ., p. 136)։

² Երկզլուխ արծիւը Փորթ Եսիոյ մէջ կը գտնուի
 արդէն Հասաց (Հետիս) խորարանգակներուն զոյց ի բա-
 զազ-քելոյ եւ յէջիկէ։ Կրճանք կերպիտական այս խոր-
 հրդանշանիս պատմութիւնը քննել հին քաղցեաստանե
 սկսեալ մինչև Գերմանիոյ կայսրները՝ անցնելով Ժ.Պ. դարու
 թուրքման էմիրներէն ալ, հմմտ. Perrot, Histoire de
 Part, IV, p. 637, 681 ff; Heuzey, Monuments Piot, I (1894),
 p. 7 ff.; II (1895), p. 19, 28. — Ցրագիգունի Կոմիտենեանց ար-
 ծիւն ասոր հակառակ միայլուխ էր, հմմտ. Millet, ի Bull.
 corr. hell. XIX, p. 428.

³ Ցեւ Բարդ, անդ։

բարձր է եւ երեք մեար լայն, այսօր իցուած է փրատակներու շեղակուտով. սակայն տակաւին կարելի է իջնալ իբր սանդղոյ երեսուն աստիճան: Այս ալ ջրամբար մ'իջեցընող այն փապուղիներէն մէկն է, զորոնք Պանաստի ամէն հին բերդերուն մէջ գտանք. եւ ասի՝ կարծենք՝ կ'ապացուցանէ Աարա-Հիսարի բերդին ալ հնութիւնը:

Այսօր կանգուն մնացած մասերէն ամենահինն է, որչափ կ'երեւայ, ութանկիւնի մեծ աշտարակ մը՝ որ զղեկին արեւմտեան ծայրը կը բարձրանայ (Պակ.): Իւր պատերը մեկուկէս մետրէ աւելի թանձրութիւն ունին. եւ ներս կը մացուի կամարայարկ գոնէ մը, որ՝ զինքը շրջապատող մասին նման՝ շինուած է խնամով համահարթութեամբ փմայրարերով: Ներսը կը նկատենք տակաւին սանդղոյ մը հետքերն՝ որ վերի յարկերը կը տանէր:

Իւրգանդական մասունն ալ մասամբ պահուած է, բայց սաստիկ աւերուած. սակայն տակաւին կը զանազանութիւն մատուան կողակն ու նաւին պատերը, որոնք՝ ինչպէս սովորութիւն էր՝ կազմուած են արտաքին երեսէ մը եւ ներքին կորիզէ մը¹: Պանսնաստի կարգածով արտաքին երեսը կազմուած է շատ զիմացկուն կարմրկեկ քարով մը². Իսկ ներքին կորիզը՝ թանձր կրաղիւսի մէջ խառնուած մանրաքարերով եւ աղիւսի կտորներով: Այս մասունքէն է Աղսնիոյ ամրոյցին մէկ հրամատարին այն ձօնը, որ Աարա-Հիսարի յունական եկեղեցին փոխադրուած է (արձ. թ. 355):

Այս ընդարձակածաւալ շինութեանց մասին՝ որոնց մնացորդներն ամբողջ լեռնադադաթը կը

¹ Տրայիզոնի մէջ գործածուած պէտքէն արտաքին երեսներու մասին տես Millet, անդ. էջ 456:

² Taylor կ'ըսէ «երկաթարար» (ironstone):

ծածկեն, մանրամասն ուսումնասիրութիւն մը պէտք է՝ որոշել կարենալու համար այլեւայլ մասանց ժամանակներն եւ դարերու ընթացքին մէջ կրած փոփոխութիւնները: Բերդս գրաւողներուն ամէնքն ալ անոնց գործակցած կ'երեւան, եւ ճարտարապետական պէտքս արուեստագիտութիւնք հոս կը հանդիպին եւ զիրար կը լրացնեն: Արուեստակերպք իրարու կը խառնուին եւ իրարու կը յաջորդեն կարգաւ՝ սկսելով ինն ընդարձակ եւ խորունկ ջրամբարներէն, որոնք քարաժայռին կողին վրայ անձրեւաջրերը կը հաւաքէին, մինչեւ հնգանկիւնի մահարձանը՝ սրահամարաձեւ պատուհաններով, որ՝ դղելին կենդրոնին վրայ՝ ամենաբարձր սարածագին զլուխը կանգնած է: Ասկէ կրնային յոյն կամ թուրք պահակները հսկել ամբողջ շրջակայքին վրայ: Տեսարանը կը տարածուի քաղաքէն անդին՝ ամէն տեսակ պտուղներով քաջաբեր Շէհէր-Սուի հովտին մեծ մրգաստաններուն եւ բանջարանոցներուն վրայ՝ մինչեւ զինքը շրջապատող բարձր լեռները:

§ 26. Կարս-Հիսարկն՝ Յուրդ: — Մայիս 29ին կիրակի օրը թողուցինք Կարս-Հիսարը, որ սառուցիկ մառախոյղ մէջ ծածկուած էր, Կնդէրէս երթալու համար: Աոր շինուած խճուղի մը կը կապէ երկու քաղաքներս, եւ կ'անցնի Ալիկիդ-Իրմակէ՝ ասոր եւ Շէհէր-Սուի գետախառնուէքին մօտ: Բայց գետայարոյցք մը կամուրջն առած տարած էր: Աստի բռնագատուեցանք բլուրներէ ու հեղեղներէ անցնելով գետն ի վար երթալ փնտռելու համար Կուրբա-Քէօփրիւ հին անցարանը (Պակ.), որմէ անցած էինք դալու ասեն, եւ որ քարաժայռերու վրայ հաստատուած բլալով՝ լուազոյն կերպով զիմացած էր ջրերուն բռնութեանց քան օսմանեան ճարտարապետաց շինածը: Լուանօրէն խորին հնութենէն ի վեր ասկէ կ'անցնին գետը. եւ կ'երեւայ թէ այս նեղակամուրջը կը յիշուի

որրադրական բնագրի մը մէջ¹, Անոր հասնելու համար բոլորեցանք Գուճան-Կայայի (Մշուշի քա-րաժայռ) սարածագին շուրջը, որ կանաձեւ բարձր լեռնազանգուած մըն է՝ կղզիացեալ կանգնած գետոյն եզերքը²։ Չառիժափները մշակուած են մինչեւ կէս բարձրութեամբ, եւ յոյն գիւղերուն՝ ինչպէս Լ—դդ— կոչուած ին, կամ թուրք գիւղերուն՝ ինչպէս Գ—մ—, աներն աստիճանաբար շարուած են անհարթ դարին վրայ։ Աւելի վերը քարալեռը կը լերկանայ եւ կ'աւարտի՝ սոցի առաջնորու նման խոռած լեռնասայրով։

Կէլկիզէն անդին շատ դժուարելանելի շաւ-րից մը մէկուկէս ժամէն կը հասցընէ զազաթը (1599 մետր) բլուրներու շղթայի մը, որոնց՝ արեւէն այրած ու խանձած կողերը լերկ են ու ամուլ, բայց որոնց զազաթը ծածկուած է մշակութեամբ։ Լեռնակառարէն մէկանց կը տեսնուի Աշկար-Օվայի ապարակը, իւր գիւղերով՝ իբր բժեր, որ գէւղ ի արեւմուտք կը տարածուի հեռուն՝ աշոց տեսու-

¹ Կիկոպուտայ ԽԵ վայոց վայարանութիւնը (տես վարը) կը յիշատակէ Գուլ գետոյ վրայ ձգուած կամուրջ մը քաղաքէն վեց մղոն հեռու։) ἐκέλευσεν ἰσφῆναι τὰ ὄσια ἐν τῷ ποταμῷ τῷ λεγομένῳ Λύκῳ τῷ ὄντι ἀπὸ σημεία ζε τῆς πόλεως· εἰλιξ δὲ ἔστιν πρὸς τῆ γερύρῃ βαθύς. (Համառոտ հոյ Գուլ, Կ.Պ. 1834, Բ, 34—35 ունի միայն՝ «Եւ ժողովեցին զնշարս մարմնոց նոցա եւ բնկեցին ի Գուլ գետն, որ էր վեց մղոնս հեռի ի քաղաքէն», առանց վերջին խօսքին թէ կամրջին մաս խորունկ պոռոյտ մը կայ)։ Գուլ գետոյ եւ Կիկոպուտայ մէջ եղած հեռաւորութիւնը վեց մղոն է աւելի է. բայց որրադրին առած վերջին տեղե-կութիւնն իրականութեան հեռ սրանչեւայէս կը հա-մաձայնի։

² Taylor (անդ, էջ 297) ելած է ասոր զազաթը, եւ զազաթան վրայ առանձնոց մը գտած՝ ուր երբեմն քրիստոնէոց ճգնաւոր մը բնակած էր, եւ ժայռին մէջ փո-րուած են տեսակ մ'ընդունարաններ։ Ասի ուխտաւեցի էր թէ Եւնայ եւ թէ Արզու-բաշներու համար։

Թենէն կորսուելու չափ: Հարաւակողման հորիզոնը պարփակող լեռնաշղթայիս ամէն ճեղքուածքներէն՝ որոնք տակաւին ձիւնով ծածկուած են, կը հասին կ'իջնան զովաջուր վտակներ, որոնց ամէնքն ալ գէպ ի կիրճ մը կը դիմեն՝ որ զանոնք գէպ ի Գայլ գետ կը տանի, որ այս անհուն գետաւազանիս միակ ջրանցքն է: Հոն վար իջանք շուտով՝ անցնելով Գէօշ-Քէշչի գիւղէն, որ իւր թրքական անուան հակառակ՝ յոյն ծուխ մըն է, եւ Գէ-Պէլէ ու Աշէր-ձ գիւղերէն: Մեր գիմացը՝ Էն-Պէլէ- կծկած էր հովտին մէկ անկիւնը՝ թանձրախիտ դալարութեան մէջ: Հոս կլիման շատ աւելի մեղմ է քան Արա-Հիսարի մէջ. վասն զի բարձրութիւնն ալ 600 մետրէն պակաս է: Լերան ջրերով ստորուած մրգաստաններու մէջ ամէն կողմ կը ծաղկէին նռնենիներ, կեռասենիներ ու ծիրանիներ, եւ յաղթ ընկուղիներ կը բանային իրենց թանձրախիտ տերեւը:

Էնդէրէս՝ սիրուն փոքրիկ քաղաք մըն է ու թհարիւր երգով, ուր կը բնակին Հայեր ու Թուրքեր: Գայ-Քէ-Մն՝ որ կառավարութեան ներկայացուցիչն է, պատիւ ըրաւ մեզի՝ հրաւիրելով տեղւոյն գլխաւոր երևելիներուն հետ ուտելու բրինձով լեցուած ոչխար մը, իւր պարտիզին ծառերուն տակ երկնցած: Բայց իւր բարեսիրութիւնը ցուցուց աւելի օգտակար կերպով մ'ալ՝ նշանակելով մեզի իւր կառավարած վիճակին (չ-չ) հնութիւնները: Էնդէրէսի մէջ կարելոր աւերակներու մօտաւորութիւնն երեւան կու գայ անմիջապէս՝ երբ գերեզ-

1 Շատ անգամ անունս աղաւաղուած է Adras (Տափերնիէի բով), Andras, Andrias, Adresse, հմմտ. Ռիտտեր, անդ, էջ 193, 211 եւն: — Տեղական արտաբերութիւնն է Endérés. — Կրնէ (Ա. ՏՃ. Ա. 794) կ'ըսէ թէ Թուրքերը քաղաքս Ս-- Շէ՛՛ի (Sou-Cheiri) կ'անուանեն: Մենք տեղւոյն օսմանեան պաշտօնէութեանց բերնէն շտեղծէր երբեք այսպիսի անուանակոչութիւն մը:

մանոց մոտենէք. ամէն կողմ կը տեսնուին ճարտարապետական մնացորդներ, ծնօտի հաստակոտորներ, քանդակուած մեծ վիմարարեր, ճերմակ, գորշ ու կարմիր մարմնրի կտորներ, որոնք այս հանգստարանիս շինարանի (շինուածանիւթ երու մթերանոցի) մ'երեւոյթ կու տան: Հոս գտանք «մուսայից ծառայի եւ հռետորի» մը շափական տապանագիրը, որուն շիրիմ մը կանգնած էին իւր հայրենի Նիկուպոլիս քաղաքին մէջ (արձ. թ. 363):

Հռոմէական քաղաքը շինուած էր Էնդէրէսէ իբր մէկ մղոն հեռու՝ դէպ ի հարաւ-արեւելք: Ճամբան կ'երթայ լեռանց ստորոտէն լաւ մշակուած արտերու միջէն, երբեմն երբեմն անցնելով դարափնեայ հեղեղատի մ'անկողնէն: Գայլ գետոյ այս օժանդակներուն ամէնէն կարեւորն է Սարուչա-Իրմակ, որուն ափն ի վեր կ'երթայ դէպ ի Չարա եւ Սերաստիա տանող արգի խճուղին. մինչդեռ հռոմէական ուղին կ'օգտուէր ուրիշ անցքէ մը՝ որ աւելի դէպ ի արեւելք է (տես վարը): Հովտին մուտքը կը պաշտպանէր երբեմն բերդ մը, որուն քանի մը որմամասերը կանգուն կը կենան բլրոյ մը վրայ: Ասկէ վերջը կ'անցնինք Բոյ-լը՝ շէնէն. եւ քիչ մ'ետքը կը հասնինք Բուրք (Purkh) երկու հարիւր տնով հայ գիւղը, որ հին Նիկուպոլոյ տեղը կը բռնէ¹:

¹ Տեղն արդէն 1840ին որոշած էր Բօրէ (Boré, Corresp. et Mém. d'un voyageur en Orient, I, 366 էւն). շնորհիւ թ. 361 արձանագրութեան: Բայց որովհետեւ հին քաղաքին յոյն ազգարնակութեան անհետանալէն ետքը՝ Վոզոնիոյ մետրոպոլիտան առած է նաեւ Նիկուպոլոյ արքայիսկրպոսի տիտղոսը, զոր ցայսօր ալ կը կրէ (Վիեն. անդ. Ա, 780), այլեւայլ հեղինակներ տակաւին կը շարունակեն Վարասհիսարի մէջ դնել հռոմէական քաղաքը: Սխալման պատճառը նկատած էր արդէն Ռամսէյ՝ Պամ. Աշխ., էջ 57: — [Բնագրի էջ 305 գրուած է պատկեր մը՝ «Նիկուպոլոյ արգի քաղաքացիքն», այր եւ կին՝ տեղական տարազով:]

Պոմպէոս Նիկոլոյի (Յաղթութեան-քաղաք) անուանած էր նոր քաղաքը՝ զոր հիմնեց Միհրդատայ դէմ տարած վճռական յաղթութենէն ետքը¹, հոն բնակեցրնելով անտարակոյս բնակչութիւն մը՝ որ խառնուրդ էր իւր բանակին վաստակաւոր հնօրեայ զինուորներէ եւ շրջակայ գիւղացիներէ։ Աւելի յաջողագոյն տեղ մը գտնելը դժուարին բան մ'եղած կ'ըլլար։ Անտառապատ յաղթ լեռնազանգուածի մը կռթրնած, որ վճիտ վտակներու անսպառ ակնաղբիւր մըն է, նստած էր նոր քաղաքը հանդիպագօտւոյ մը սկիզբը՝ անոր լայն լեռնոտից վրայ, որոնք մեղմով դէպ ի դաշտ կը հակին։ Ասոնց ստորոտը տարածուող հսկիւր մէկ միոնէ աւելի լայնութիւն ունի եւ առատօրէն կ'արտադրէ հողի ամէն բերքերը։ Արեւմտքէն ու հիւսիսէն կը սահմանուի լեռներով՝ որ արօտներով ծածկուած են, հիւսիսակողմէն պատուելով Քայլ գետոյ բարձունքներէն՝ որոնք աչաց բերկրանք կը պատճառեն բազմագոյն երփներագներու սքանչելի ներդաշնակութեամբ. բայց դէպ ի արեւելք կը տարածուի անզգալաբար բարձրանալով եւ կ'երթայ խառնուելու սպառելու Սու-Շէհրի բլրոց հետ։ Աւելի անդին հորիզոնին վրայ կը նշմարուին սպիտակափառ ժանեձեւերն այն լեռնաշղթային, որուն ստորոտը կը թանայ Եփրատ գետը, եւ որ երբեմն հռոմէական պետութեան սահմանագիծը կը ցուցնէր։

Այս զմայլելի դրիւք քաղաքն արագաբար բարգաւաճեցաւ։ Արդէն Սորաբոնի ժամանակ բաւական թուով բնակիչ ունէր²։ Թէպէտ եւ կրած ըլլալու էր Փառնակայ պատերազմին ժամանակ, որ իւր պարիսպներուն տակ կատարելագէտ ջախջախեց

¹ Սորաբոն, ԺԲ, 3, § 28, էջ 555 C։

² Սորաբոն, անդ, νῦν συµμένει καὶ οἰκεῖται καλῶς (ցայժմ կը կենայ եւ քաջաբնակ է)։

Գոմիտիոս Կալվինոսը¹: Քաղաքս 36ին Ն. Ք. Անտոնինեայ կողմանէ Պողեմոնի տրուեցաւ. եւ 54էն Յ. Ք. սկսեալ կը կառավարուէր Քաղկեաց Արիստարուզոսէ, որուն միագիւտ մէկ դրամը Բուրդի մէջ կրցանք գնել². եւ վերջնականապէս Հռոմէական պետութեան Հետ միացուեցաւ՝ կ'երեւայ Պողեմոնական Պոնտոսի Հետ՝ 64ին Յ. Ք. Ներոնի կողմանէ³: Մայրաքաղաք եղաւ Փոքուն Հայոց: Մեհենակալ քաղաք մըն էր, կենդրոն Ինքնակալաց պաշտաման, եւ նիստ գաւառական Աշխարհաժողովին՝ որ կ'ընտրէր «Հայապետ» մը (արձ. Թ. 358): Բաց ի դաշնաւորական բազնէն Ազոտեանց, կանգնած էր՝ ինչպէս արդէն իւր սկզբնաւորութիւնը կը պահանջէր, մեհենաներ՝ Չեւսի Յաղթակրի (Նիկեփորի) եւ Յաղթութեան⁴: Կ'երեւայ թէ զարդարուեցաւ քաղաքս Ազրիանոսէ, որ Հոս այցելեց 124ին Յ. Ք.⁵: Եւ իւր կարեւորութիւնն աճեցաւ Հեռոգհետէ՝ որչափ զարգացաւ

1 Bellum. Alexandr. 36-40: Ռազմադիտական մանրամասնութեանց Համար Հմմտ. Munroի տուած լուսարանութիւնը. Roads, p. 726: Սակայն շնք կարծեր թէ իրաւունք ունենայ առաջին Նիկոպոլիսը յԷսկի-Շէհիբ գնելու: Բնագրին այն խօսքը՝ թէ «Nicopolis, oppidum positum plano ipsum loco» կը յարմարի Բուրդի, բայց «չ Էսկիշէհիբի»:

2 Հմմտ. Revue numismatique de Paris, 1900, p. 484.

3 Imhof-Blumer, Kleinas. Münzen, I, p. 3, ապացուցած է թէ Նիկոպոլիսի թուականութիւնը կը սկսի 64 Յ. Ք. տարւոյ աշնան, ինչպէս նաեւ Տրապիզոնի, Կերասոնի եւ Նեոկեսարիոյ թուականութիւնը. — Սակայն Փոքր-Հայք թերեւս պետութեան Հետ միացուեցան միայն յետոյ՝ Վեսպասիանոս ձեռք: Միացման պարագայից կրկին պիտի վերագառնանք այս «Սուսիանսիութեանց» Ներասնութեան մէջ:

4 Բարըլոն եւ Ռայնախ, անդ. Ա, էջ 98:

5 Dürr, Reisen des Kaisers Hadrian, p. 53. Հմմտ. արձ. Թ. 361:

պետական ճամբաներու ցանցը: Ճանապարհակիցք եղած էր ամէն ազգական ուղիներուն, որոնք այս աշխարհաբաժինը կ'ակօսէին¹: Եթէ կամանայէ, Պողեմոնիումէ, Նեոկեսարիայէ եւ նոյն իսկ Սեբաստիայէ կ'ուզուէր դէպ ի Բարձր Հայք երթալ, պէտք էր Նիկոպոլսէ անցնիլ: Մեղիտենէի եւ Սատաղայի բնավայրերը կեսարաց ատեն սահմանապահներ եղան, հռոմէական բանակաց յենկէտները: Նիկոպոլիս մնաց յառաջապահ պահակ մը հելլենական քաղաքակրթութեան՝ պետութեան արեւելեան սահմաններուն վրայ. եւ նշանակալից կէտ մըն է որ հոս քանուած է յոյն բանաստեղծի մը եւ հռետորի մը շափական տապանադիրը (արձ. Թ. 363): Բայց ժողովրդեան դասակարգն սպահովապէս միշտ շարունակեց խօսիլ իւր բնիկ հայերէն լեզուն²:

Քրիստոնէութիւնը կանուխէն մտաւ Նիկոպոլիս՝ ինչպէս նաեւ Հայաստանի մնացեալ մասին մէջ³. եւ կոստանդիանոսէ ետքը հոս եկեղեցիները լքուած մեհնից տեղը բռնեցին: Հարուստ քաղաքացւոյ մը զուակը՝ որ յետոյ հռչակաւոր սուրբ մ'եղաւ՝ Յովհ. Լուկեաց (ὁ Ἡσυχαστής) յորջորջանօք, վաճառելով իւր ստացուածքը, իբր

¹ Հմմտ. Μυροφίτην ցիտողութիւնքը՝ Roads, p. 725:

² Խե վկայից վկայարանութեան մէջ (տես վարը) կը տեսնուի թէ վկայիցս մին շուղելով որ իւր ըսածը հռոմեացի պաշտօնականները հասկընան՝ խօսեցաւ հայերէն լեզուաւ (τῆ Ἀρμενίῳ φωνῆ). տես ՂԼ. III, § 17):

³ Ս. Բարսեղ, Թուղթ ՄԽ (Migne, PG, XXXII, սիւն 896) Նիկոպոլոյ քահանաները կը կոչէ «որդիս խոստովանողաց եւ մարտիրոսաց». եւ Թուղթ ՄԼԵ (սիւն 834) իրենց եկեղեցին մայր կ'ըսէ կողմնալի եկեղեցւոյն: Նիկոպոլոյ խե վկայից՝ որոնք Լիկիանուս ատեն վկայեցին, վկայարանութիւնը (Վարք Սրբոց՝ Բուլ., Յուլիս, Գ, էջ 37-են) չ'երեւար թէ բոլորովին զրուցախառն ըլլայ. տեղագրական թանկագին տեղեկութիւններ կու տայ:

472ին շինեց եկեղեցի մը՝ նուիրեալ Աստուածածնի¹:

Բայց քիչ մ'ետքը սարսափելի աղէտք մը հասաւ քաղաքին վրայ: Զարհուրելի երկրաշարժ մը 499 տարին աւերեց ամբողջ Հայաստանն ու Պոնտոս՝ Արշամաշատէ մինչեւ Նէոկեսարիա. եւ Նիկոպոլիս լիովին կործանեցաւ: Կէս գիշերին քաղաքը շրջապատող ամբողջ պարիսպը փլաւ յանկարծ, եւ ինչ որ կար այս շրջապատին մէջ հիմնի վեր տապալեցաւ, եւ բնակիչները թաղուեցան փլատակներու ներքեւ խառնիխուռն՝ իրենց անասնոց հետ միասին: Միայն աղատողներն եղած են՝ կ'ըսուի՝ եպիսկոպոսն ու երկու սինգեղոսներն՝ որոնք եկեղեցւոյ կողակին մէջ կը ննջէին խորանին ետեւը²:

Այս շարաշուք աղէտքն անդարմանելի եղաւ: Թէպէտ եւ Յուստինիանոս վերականգնեց քաղաքին պարիսպները, եւ շինեց հոն ԽԵ վկայից անուամբ վանք մ'ալ³, բայց երբեք չգտաւ այնուհետեւ քաղաքն իւր առաջին պայծառութիւնը: Հերակղի օրով նորէն փնաս կրեց Խոսրոփու արշաւանքէն՝ որ քաղաքն ալ առաւ⁴: Թէպէտ եւ Բիւզանդացւոց ժամանակ մնաց՝ դոնէ տիտղոսաւոր՝ արքեպիսկոպոսանիստ աթոռ մը⁵, բայց դուզնա-

¹ Վարք Յովհաննու Լուսկեցի՝ հեղինակութեամբ Կիւրղի Սկիւթոպոլսեցւոյ՝ Act. SS., Մայիս, Գ, էջ 16 եւն:

² Այս դէպքին մանրապատում պատմութիւնը պահուած կը գտնենք Յեսուայ Սիւնակեցի ասորի ժամանակագրութեան մէջ, գԼ. 17: Հմմտ. „Bull. Acad. de Belgique“, 1905, p. 557 ff.

³ Պրոկոպ., Վասն Շին., Գ, 4, էջ 253 եւն:

⁴ Սերէոս, Պոմ. ի Հերակղ., գԼ. թրգմ. Maclerk (Պարիս 1904), էջ 62 (= հայ բնագիր, տպ. Պետրք. 1879, էջ 77): Հմմտ. «Վարք Եւտիք», գԼ. է (Act. SS., Ապրիլ, Ա, էջ 2Գ):

⁵ Տես վերը:

քեայ քաղաք մ'եղած էր՝ երկար ժամանակէ վեր իւր մայրաքաղաքութեան աստիճանը կորսնցուցած, եւ որ ցանցառ կը յիշատակուի. սակայն միշտ մնացած էր բերդաքաղաք մը՝ որ կը յիշուի տակաւին պատահարար ԺԱ դարու պատերազմաց ժամանակ¹։

Կարեւոր էր Նիկուպոլոսյ պատմութեան այս պէսպէս շրջաններն որոշել, որպէս զի աւելի ապահովութեամբ կարելի ըլլայ գտնել իւր տակաւին տեսանելի մնացորդաց ժամանակներու մասին։ Ըստմական շրջանի ամէն յիշատակարանները հաւանօրէն կործանած են 499ի երկրաշարժէն. եւ բիւզանդական քաղաքը վերաշինուած ըլլալու է՝ ըստ սովորութեան՝ նախնիքացին փլատակներուն վրայ։ Ասի ալ իւր կարգին կործանած փլած է. եւ այս խառնակոյտ աւերակաց ներքեւ հին խաւը հաւանօրէն շատ խորունկ թաղուած է։ Գիւղացի մը, որ մեզի յունական արուեստի պզնձէ լապտեր մը ծախեց², ըսաւ թէ նոյնը գտնելու համար փորած էր «մինչեւ երեք մարդահասակ» խորութեամբ։ Այսպէս նաեւ Բուրգի տուած արձանագրութեանց կէսն ալ Ե դարէն անագանագոյն է։

Յուստինիանու քաղաքը վերին դարաւաճիք գրաւած կ'երեւայ, ուր է նաեւ արդի դիւղը։ Իւր շրջապարիսպը շորեքկուսի ձեւ մ'ունէր։ Այսօր ալ կատարելապէս կրնանք հետեւիլ արեւելեան պատին՝ քանի մը հարիւր մետր երկայնութեամբ, ուղղման ջրուղոյ մ'երկայնքը, որուն կողմերուն հաստատութեան համար մասամբ գործածուած են անոր նիւթերը։ Ածապարանօք կատարուած շինուածք մըն էր, որուն համար գործածուած էին ամէն տեսակ մնացորդներ, իրարու զօգուած թանձր-

¹ Կեդրեան, էջ 823, 16 (հրաւ. Բան)։ Էմմա. Կոստ. Նիրանձին, Ասան Արշ. Պետ., էջ 226, 17։

² Այսօր Cinquantenaire թանգարանին մէջ (կահպիր՝ Թ. A 259)։

կրազուսով մը. պատի այս ներքին կորիզը տեղ տեղ գրուագուսած է միշտ շրեքկուսի քարերէ շինուած արտաքին երեսով մը: Հիւսիս-արեւելեան անկիւնը կը նկատենք շրեքկուսի հզօր աշտարակի մը կործանած փլած զանգուածը. սեպարերն ուրիշ գիւքը պատող փոսի պարկենէն տակաւին իբր ասոր մտար բարձրութեամբ կը կանգնի: Պարիսպը կ'երկարի գեւղ ի հիւսիսակողմը, այսինքն՝ այն կողմն, ուր գետինը կը խոնարհի գեւղ ի գաշար. եւ նոյնն այսօր կը ծառայէ պարակեցներու հոգը վեր բռնելու: Նոյնպէս գեւղ ի արեւմուտք կրնանք հեռելի պարսպին ամբողջ գծին, ուր՝ հողի երեսին հարկի հաւասար եղած է: Այս պարիսպն շատ աւելի լաւ պահուած էր, երբ Տէլլեր 1866ին Բուրգէ անցաւ:

1 Taylor, Tour in Armenia, Kurdistan etc. (Journ. roy. geogr. soc. XXXVIII, 1868, p. 298 ff.). Ա. Եւլերդ պիտի չուսոյ յառաջ բերել հաս իւր նկարագրութիւնը, որ շատ ճիշդ է՝ բայց քիչ ծանօթ: Պարիսպները կը շրջապատեն, կ'ըսէ, քառանկիւնի միջոց մը. որոնց իւրաքանչիւր կողմը 1100 սոք երկայն է. եւ զիստ որ կէտերուն առջի կանգնած են շրեքկուսի մարակեցներ՝ իւրաքանչիւր անկիւնը. եւ երեք կողմերուն մէջ բացուած են երկու երկու դռներ՝ 70 սոք հեռու որով կամը: Ազգրականին համեմատ՝ հիմերը շրեքկուսի մեծայազմ միմարերով են՝ անասլ քարէ. իսկ վրայի շինուածը աւելի փոքր անկանն քարերով է՝ որոնք կրի ու խճի խառնուրդի մը մէջ շագախուսած թաղուած են. ներսի երեսը՝ համեմատաբար աւելի կոշտ, իսկ դրսի երեսը՝ գրուագուսած է հարկի ուղղկուսած քարերով: Գանձեցքները՝ որ այսօր զմքախտաբար աւերած են, շինուած են նախնարար շրեքկուսի սիւներով, բազկանալով միակտուր ոլորկուսած պարփութեայ քարերու երեք կտորներէ, իւրաքանչիւրը 6 սոք երկայն, եւ 2¹/₂ սոք լայն եւ նոյնչափ թանձր, եւ կը հանգչէին հիման մը վրայ՝ որ — պարսպին հիման պէս — կազմուած էր կարծր աւազաքարէ՝ 2 սոք 8 մտանաշափ մեծութեամբ շրեքկուսի կտորներէ: Հիւսիսակողմը Պապորգներ կան պարկենփոսի մը, բայց միւս կողմը չկրցոյ գտնել հեար մ'այսպիսի պաշտպանողական միջոցի մը:

Իւր նկարագրութենէն՝ ինչպէս նաեւ բուն տեղե-
րու քննութենէն՝ կը հեռուի թէ պարիսպը կազ-
մուած էր չորս պատերէ, որոնք զիրար ուղիղ ան-
կեամբ կը կտրէին. եւ այս իւրաքանչիւր անկիւնն
ամրացուած էր քառակուսի մարտկոցով մը: Ասի
ուղեգրական շինողութեան ոճ մըն է՝ զոր Յուս-
տինիանու ճարտարապետները շատ յաճախ գոր-
ծադրած են իւր պետութեան ամբողջ տարածու-
թեան մէջ¹:

Ակայբանական աւանդութեան մը համե-
մատ՝ հիւսիսակողման աշտարակներէն մին բանտ-
եղած է նիկոպոլսոյ խե վկայից²: Եթէ ճիշդ է այս
մանրամասնութիւնը, պէտք է որ նախնական քա-
ղաքին աշտարակներէն մին բլար, որ հարածանայ
ժամանակ տակաւին կանգուն էր: Յետոյ միջին
դարու բարեպաշտութիւնը շարունակած բլարու է
պատուել այն տեղն՝ ուր կանգնած էր աշտարակը.
Եւ նոյն իսկ տեղւոյն Բ—ր³ անունը ծագած կ'ե-
րեւայ Πύργος է (բուրգն, աշտարակ)³:

¹ Diehl, l'Afrique byzantine, 1896, p. 185 ff.
Համեմատելու է մասնաւորապէս Լէնիսայի բերդը, անդ՝
էջ 206 եւն:

² Վարդ Երրոց (Բող.) Յուլիս. Կ, էջ 36 եւն.
ԳԼ Բ, § 7 εις τὸν πύργον τῆς πόλεως τῆς βλεπούσης
κατὰ βορρῆαν ἔνθα καὶ πηγὴ ὑπεκτρέχει ὀρέουσα ἔξωθεν
τῆς πύλης τῆς πόλεως (համառօտ հայ Յայտ. Բ, 11 կ'ըսե-
մայն «զոր բուն արգելին յաշտարակ պարսպին», առանց
ուրիշ մանրամասնութեան՝ յատկապէս աղբերն, որ քա-
ղաքի դռնէն դուրս կը հոսեր): Այս հին ամրութիւնները
կը յիշատակէ նաեւ Ս. Բարսեղ (Թուղթ ՄԼԶ, սիւն 890՝
Migne), գրելով թէ Ուղղափառներն արտաքրուեցան քա-
ղաքէն՝ պարսպէն դուրս (ἔξω τοῦ τείχους):

³ Ինչպէս ենթադրած է Munro, Roads, p. 726: —
Ընդհակառակն Բորէ (Boré, Corresp. etc., Paris 1840; I,
p. 368) բնակիչներէն լուծ է թէ իրենց գիւղին անունն բլայ
բուն Pürk (Բէ—ր + = 10.000) եւ թէ սաի հոս նահատա-
կուած մարտիրոսաց թուէն յառաջ եկած բլայ: Ասի կ'ե-

Հոռուական քաղաքին մակերեւոյթն ապահովապէս շատ աւելի ընդարձակ էր քան Յուստինիանու բերդին երեսը: Հաւանօրէն կը տարածուէր դէպ ի արեւելք մինչեւ այն խորունկ հեղեղատը, ուր կը հօսի ուղի մը՝ որ դրացի լեռան մէկ կրճէն կ'ելլէ: Որեւէ տարակոյս չկայ թէ դէպ ի հիւսիս հին քաղաքը բիզանդեան պարսպէն՝ որ արդի գիւղէն միայն իբր 400 մետր հեռու է, աւելի անդին կ'անցնէր, եւ անշուշտ շատ աւելի անդին ալ կ'իջնար դէպ ի դաշտ: Գարաստանաձեւ դէպ ի վար խոնարհող արտերը՝ լի են ցանուցիւր սփռուած խեցեղինաց բեկորներով, աղիւսներու եւ մարմորներու կտորներով. եւ շատ անգամ ցուցուցին մեզի կրաքարային վիմաքարեր՝ որոնք մեծայարդար շինուածքներէ են, եւ որոնք նորերս հողէն հանուած էին: Սակայն իրական արժէք ունեցող քիչ հատակոտորներ գտանք Բուրգի մէջ. կորնթական շքեղ խոյակ մը՝ որ գիւղացւոյ մը տան մօտ գրուած էր. գորշ մարմորէ ակօսաձեւ մատնէքուած սիւն մը, եւ ճնօտի քանի մը հատակոտորներ՝ գերեզմանոցին մէջ. ասոր վրայ իշխող բլրոյն վրայ՝ գերեզմանակոթող մը՝ խորշի մը մէջ երիտասարդ կնոջ մը կիսարձանով, որ շատ ծայրատուած է, եւ վարը՝ զարդարուն շրջանակ մը, որ նկարէն արձանագրութիւն մը պարունակելու էր¹: Գիւղին հիւ-

րեւայ թէ շատ տարաձայն յիշատակ մըն է ճշմարիտ ստուգարանութեան: — Կ'աւելցընէին թէ իրենց քաղաքը Բուրգ անուանէն զատ ուրիշ անուն մ'ալ ունի, անուն մը՝ զոր տարին անգամ մը կը յիշատակեն մարտիրոսաց օձին օրը. եւ որ կը համապատասխանէր Նիկոսիփա (°) անուան: — Այս պէտքէն ուղղագրութիւնք ու կարծիք յառաջ եկած են Բուրգ անուան գիւղական հնչումն կամ գիւղացւոյն պէտք լսելէն, որով Բուրկ, Բուրկն եւն: Իսկ Բուրէի տուած կամ լսած մեկնութիւնը պարզապէս արգիւնք է չիթութեան Բուրգ եւ Բիւրգ բառերուն: — Ծ. Թ.]

1 Այս կոթողը մատնանիչ ըրած է նաև Munro

սիս-արեւմտեան կողմը՝ Ս. Յովհաննու Լուսկեցի նուիրուած խեղճ մատուան մը մէջ՝ խորանի վրայ գրուած են քրիստոնէական քանի մը հին հատակոտորներ՝ խաչանիշ քարեր, աղաւնոյ բեկոր մը եւն: Մինչեւ այս օրս Նիկոպոլոյ մէջ հաւաքուած արձանագրութեանց թիւը հազիւ երկուսասանեակ մըն է (թ. 358 եւն). բայց այս նիստը քիչ անգամ այցելած են հնախօսները, եւ պեղումները կարելոր արգիւնքներ տալ կը խոստանան: Պեղմունք երեւան պիտի հանեն այն գերը՝ զոր խաղացած է այս հելլենական քաղաքը գիւղացի արգաբնակութեան եւ նախարարական ազատորբերոյն մէջ, որոնք միայն առանձինն կը բնակէին Հայաստանն՝ այն վայրկեանին, երբ Հռոմայեցիք գրաւեցին այս մասը:

§ 27. Բոկրգի շրջակայքը: — Նիկոպոլոյ աւերակները, ինչպէս սովորաբար կ'ըլլայ, շրջակայ գիւղացւոց համար օրհնեալ քարահատք մ'եղած են, ուսկից կը հանեն լիովին կոփուած քարեր: Շրջակայ գիւղերու մէջ ցրուած կը գտնենք ճարտարագետական հատակոտորներ եւ քանդակուած կամ քառակուսի կոփուած վիմարարեր, որոնք յայտնապէս անհետացած քաղաքէն են: Աշկար-Օվայի մէջ ձեռնարկուած յօրինուածական հետազոտութիւն մ'անտարակոյս պիտի վարձատրէ ձեռնարկողին աշխատութիւնը¹: Մենք դաշտին միայն

(p. 726) եւ նոյն իսկ արդէն Taylor (p. 290), որ տեսած էր ուրիշ արձաններ ալ՝ զորոնք բնիկները խորտակած էին:

1 Սակաւաթիւ անուններ միայն գիտենք այն հին սեղերուն՝ որոնք Նիկոպոլոյ շրջակայքն էին: Ս. Բարսեղ՝ Թուղթ ՂԹ՝ կը յիշէ Γητάσα, ἄγρον τοῦ θεοφιλεστάτου Μελετίου (ԳԻԴԴԴ՝ գիւղ աստուածաւէր Մեղեմեայ): Ասիկայ թերեւս Պաղոմեայ՝ Ե, 6, § 20 յիշած Γόδασα (ԳԴԴԴԴ) տեղն ըլլայ (հմտ. նման անունները՝ վերը, Բ, § 7, էջ 163, ծն. 2): — Ուխտանէս (ի գիրս Brosset,

մաս մը կրցանք շրջիլ. եւ արդէն բազմաթիւ հետաքրքրական գիւտեր ըրինք: Բուրգի հիւսիսակողման դաշտին մէջ Մ--շէնէշ (Mousheniz) գիւղին հայ եկեղեցին քրիստոնէական արձանագրութիւն մ'ունի (թ. 370): Գէպ ի աւելի արեւելք՝ Կիրտանուշ (Kirtanoutz) գիւղին՝ զոր Տուրնոֆոր Curtanos կ'անուանէ¹, գերեզմանոցը բազմաթիւ հին կտորներ կը պարունակէ. դորշ մարմորէ խարխիւ մը, սեւ երակներով մարմորէ սիւն մը, կոփածոյ վիմաքարեր: Հոս խրճիթի մը դրան առջեւ օրինակեցինք կարեւոր բնագիր մը, փորագրուած ի պատիւ «Հայապետի» մը՝ սպիտակ մարմորէ պատուանդանի մը վրայ, որ հիմայ փոխուած եղած է հասակներ լեպու սանդ մը (արձ. թ. 358): Իբր կէս մղոն դէպ ի հարաւ-արեւելք Արգաւուշ (Argawouz)² գիւղին՝ որ բլուրներու ստորաք շինուած է, մէկ գիւղացին ցուցուց մեզի կորնթական խոյակի մը բեկորը, մեծ կոթող մը՝ որ 224 Յ. ք. տարիէն ձօնի մը վերջին մասը կը կրէ (թ. 362). եւ բիւզանդական խոյակ մը՝ զարդարուած գեղեցիկ սաղարթազարդերով եւ զարդարուն խաչով մը. ասոր թակաղակի (abaque) կողին երկայնու-թիւնն էր 70 cm: Մեզի բսին թէ այս գեղեցիկ հասակոտորը Բուրգէ շէր բերուած, այլ Աշկարէ. բայց հաւանօրէն հոն տարուած էր Նիկոպոլսէ այն ժամանակ, երբ այն թուրք աւանը գեռ կը ծաղ-

Deux historiens arméniens, St. Pétersb. 1870, p. 279) կը յիշէ Չուտարիմ կամ Ղուտարիմ գիւղը Նիկոպոլոս քով Գայլ գետոյն վրայ: (Հայ բնագիրը՝ Ուխա. Բ, ա, տպ. Էջմ. 1871, էջ 5 այսպէս է՝ «եկեալ առ նա յաշխարհէն Հոռոմոց՝ ի դաւառէն Վոզնեայ, բնակութեամբ ի գեղջէն՝ որ կոչի Չ--դ--բ--մ--այ, մերձ ի Նիկոպոլս, եւ են երկրորեան յեզր Գ--յլ գիւղոյն»)

¹ Tournafort, Voyages, ed. 1718, p. 170. [= Կ'ե-րեւայ արդի «Սիթանոց»։ Ինձիճեան կը գրէ «Քրդանոց...»]

² [Կ'երեւայ թէ նորոց «Աղրաւ իս» գրած գիւղն ըլլայ:]

կէր (տես վարը)։ Աւելի հեռուն՝ դաշտին մէջ՝ կղզիացեալ կեցած մահճմետական գերեզմանոցի մը մէջ՝ նկատեցինք ստուար քար մը իբր մէկ մետր կողով։ Երբ մօտեցանք՝ տեսանք որ ձեղնախորշիկ մըն էր երեքպատիկ գիսազարդով եւ մէջտեղը վարդազարդով մը, որ որեւէ շինուածքի մը ձեղունէն է։

Բայց տեղ մը՝ որ թէ իւր անուամբ եւ թէ իւր գրիւք աւելի ուշադրութիւն կը գրաւէ, Էսկի-Շէնէր գիւղն է, Բուրգէ իբր քսան վայրկեան գէպ ի արեւելք։ Ապառաժուտ լեռնասայրի մը ծայրը կանգնած է, որ գրեթէ ամբողջովին շրջապատուած է խորունկ՝ իբր երեսուն մետր լայն՝ խոր-խորատով մը, եւ դիւրամատչելի չէ՝ բայց միայն հարաւարեւելեան կողմէն։ Այս բարձունքէն կ'իշխենք ամբողջ շրջակայ դաշտին վրայ։ Անտարակոյս միջին դարուն, երբ երկրին անապահոժութիւնը վտանգի բաւական ենթակայ Նիկոպոլոսյ մէջ բնակիլը վտանգաւոր կ'ընէր, անոր բնակիչներն այս բնական ամրոցը կ'ապաստանէին։ Ասոր գագաթին վրայ տակաւին կը տեսնուի ժայռի մէջ փորուած կլոր ջրամբար մը, եւ բլրոյն կողին վրայ՝ եկեղեցւոյ մ'աւերակները, որոնց մէջ կային բիւզանդական լաւ պահուած խոյակ մը եւ քանի մը բարձրաքանդակ խաչանիշ քարեր։ Այս միջինդարեան հաստատութենէն առած բլլալու է հաւանօրէն իւր «Նին Քաղաք» անունը Էսկի-Շէնի խեղճ գիւղակը։ Չենք համարձակիր ենթադրել թէ այս անունը հին աւանդութիւն մը յիշեցընէ. սակայն գետնոյն հանգամանքները հաւանական կ'ընեն թէ հոս էր՝ ուր ապաստանեցաւ Միհրդատ իր վերջին մեծ պարտութենէն յառաջ, երբ՝ ինչպէս կ'ըսէ Ապպիանոս «գրաւեց գահաւիժուտ տեղ մը, ուր կարելի չէր ելլել՝ բայց միայն մէկ կողմէն»։ —

1 Ապպիանոս, Միհրդատ, 99 χωρίον κατέλαβε περιχώρημον ὅν μία εἰς αὐτὸ ἀνόδος ἦν (ապաստանեցաւ

Գիւղէն քանի մը վայրկեան հետու գերեզմանոցը քանի մը հասմէական քարեր ունի՝ իբր գերեզմանաբար գործածուած, որոնց մին տապանագիր մը կը կրէ (արձ. Թ. 365): Այս ամէնը տակաւին հին նիկոպոլսոյ աւերածներէն է:

Էսկի-շէհիրէ քսանեւհինգ վայրկեան դէպի հարաւ-արեւելք կը գտնուի Զէլէշէ¹: Ասոր մօտ ուղղահայեաց քարաժայռի մը վրայ քանդակուած երկու խաչեր կը ցուցնեն քրիստոնէական դամբաններու տեղը: Զէվիզիէ իջանք դարափնեայ հովիտ մը, ուսկից կը հասի Ակ-Իրմակ՝ որ նաև Ուլու-Իրմակ կը կոչուի: Ասի կարեւոր գետ մըն է՝ որուն վրայ ձգուած է փայտէ կամուրջ մը գիւղէն վար: Աջ ափին երկայնքէն սայլերու համար ալ անցանելի ճամբայ մը՝ որ կը շարունակուի տեղ տեղ ապառաժին արտակարկառ ծայրերը կարելով, մէկ ժամէն կը հասցընէ Ալէշէ (բուն Ալշէ՝ Ak-shar կամ Ալշէշ-շէ²), ուր լեռները իրարմէ հեռանալով՝ թոյլ կու տան քանի մ'արտեր մշակելու: Տէյլեր 1866ին հոս օրինակեց Ադրիանոս կայսեր մէկ մղոնաբարը, որ՝ ինչպէս աւանդութիւնը կ'ըսէ, գտնուած էր գետոյն անկողնոյն մէջ (արձ. Թ. 473): Ասի կարմիր աւազաքարէ սիւն մըն է՝ որ այսօր ալ իբր անկիւնաբար տակաւին կանգնած է տան մ'անկիւնը (Պակ.): Քարը կը նշանակէր եօթներորդ հազարաքայլէ նիկոպոլսէ սկսեալ (Civitas Nicopolitanorum M. P. VII), նոյն քաղաքը Չարայի եւ Սերաս-

ամէն կողմանէ գահափէժ տեղ մը, ուր մտնելու միայն մէկ վերելք մը կար):

¹ Munro կը գրէ անունս Jausli, իսկ Տէյլեր՝ Jozelee.

² [Ինձիճէան սամկական հնչումը Ալէշէ կ'ըսէ, եւ կը մեկնէ Ալէշէ, այսինքն՝ Ալ-Շէշ, ուսկից՝ Ալէշէ-շէ-շէ, կամ արդի Ալէշէ եւն:]

տիոյ հետ կապող ճամբուն վրայ¹։ Գէպի էնդէրէս իջնող տաճկական խճուղին ուրիշ հովտէ մը կ'անցնի (տես վերը՝ Բ. § 26)։ Իսկ հասմէական ուղին՝ որ Անտանինեայ² Ուղեգրութեան մէջ յիշուած է, եւ նշանակուած՝ Պեւտինգերեան Տասնակին վրայ, տակաւին հետազոտուած չէ։ Միջին դարու մէջ միշտ ասի էր սովորական բանուկ ճամբան՝ Սերաստիայէն Երզնկայ ու Պարսկաստան երթալու համար³։ Եւ նոյն իսկ մեր օրերը կարաւանները բոլորովին լքած չեն ճամբաս, որ բաւականաչափ լաւ վիճակի մէջ կը պահուի։ Այսպէս՝ երկար ժամանակ, երբ ասոր փոխարինած չէր դէպ ի էնդէրէս տանող զուգահեռական ուղին, Ակշար դաւառիս ամենէն կարեւոր աւանն էր, եւ ասկէ առած է Նիկոպոլսոյ դաշան իւր արդի անունը⁴։ Քանի մը բարձրաքանդակ խաչանիշ քարեր՝ զորոնք նորերս հոգէն հանած են՝ ինչպէս ըսին մեզի, եւ մանաւանդ բլրոյն զազաթին վրայ բերդի մ'աւերակները⁵, հաւանական կ'ընծայեցընեն թէ արդէն

¹ Munro, Roads, p. 727. — Այս ճամբուն ուղեգիծն անճիշդ է քարտէսի վրայ նոյն իսկ ի CIL, III, Suppl. (1902).

² Itin. Ant. §§ 182, 207, 213.

³ Le Strange, Lands of the eastern caliphate, p. 147 կը գրէ՝ «Մուսթաֆիի (Ժ. Գ. դար) կը նկարագրէ այն պողոտայն՝ որ Սերաստիայէ դէպ ի Պարսկաստան կը տանէր. երկու կայաններ կը տանէին Չարա (Zârah), որ բաւական կարեւորութիւն ունեցող քաղաք մըն է, եւ երկու ուրիշ կայաններ ալ՝ Ակ-Շահր (Ak-Shahr, Ակ-Շահր), որ Սելջուկեան ժամանակագրութեան մէջ յաճախ յիշուող անդ մըն է։ Ակ-Շահրի հիւսիս-արեւմուտքը կ'իյնայ Վարա-Հիսար»։

⁴ Հմմտ. Ռիսաէր, անդ, էջ 213։

⁵ Տէյլըր, անդ, էջ 302 կ'ըսէ. «Բլրոյն զազաթը քանի մը հին քարեղէններ կան ստորերկրեայ հորով մ'ալ որ աստիճաններով է՝ ինչպէս Վարա-Հիսարի միջինը»։ — Մենք այս անգը չսցցելեցինք։

բուժեան համաձայն (տես վերը՝ Բ, § 23): Ասկէ կէս ժամու մէջ առաջնորդեցին տարին զմեզ Սարուջար (Saroudjar, «Սարուջար») կոչուած տեղը, ուր խոստացուած արձանագրութիւնն բլալու էր: Հսկայաբերձ շոճիներու թանձր անտառ մը կը շրջապատէր դալարագեղ բացաստան մը, ուր առուակ մ'օժտալոցյտ կը գալարէր խոտերու միջէն, որոնք այնպէս կանաչ էին՝ ինչպիսի է Փլանտրական դալար մարգագետին մը: Մէջտեղը միապաղաղ կեցած էր ծիրանաքարի (պորփիւրի) ապառաժ մը, բայց աւաղ ուրիշ բան մը չէր կրեր՝ բայց եթէ գծեր մը, որոնք տարտամօրէն կը յիշեցընեն Հիւսիսային ուննածեւերը (Պտկ.): Այս գծերն, որ խորունկ փորուած են, թերեւս նշաններ են՝ զորոնք երբեմն հովիւները փորած էին իրենց արօտներուն սահմանը նշանակելու համար: Գոնէ միակ այս մեկնութիւնը կրցանք գտնել:

Այս ձախողանքէն սփոփուելու համար՝ ուզեցինք ելլել Սէլէի-Բէգէի մերձակայ գագաթը, որուն սրածագը 2000 մետր բարձրութիւնը կ'անցնի: Հոն կը հասնուի հարաւէն, անցնելով դէպ ի վեր պարեխալից լեռնասայրէ մը: Անով որ ձիւնը հոսած իջած էր շաւղին վրայ, թէպէտ եւ մեր անդրուարներն ապահով էին, ճամբան վրդովեցուցիչ էր. բայց համատեսարանը զմայլելի էր: Այս բաղմակարկամ երկրին ամբողջ լեռնագրութիւնը կամաց կամաց կը պարզուէր իւր ամեհի շքեղութեան մէջ: Հիւսիսակողմը կ'երկարէր՝ անտառներու սրահակէ մը վեր՝ լրթագոյն կամ սպիտակափառ կատարներու շարք մը, բարձր եւ լայն պատնէշ մը՝ որ ծովու մուտքը կը փակէ, անեզր հողմարգել մը՝ որ Ռուսաստանի սառնասառոցյց հովերը կ'արգելու: Ասոնց առջեւ կուտակուած են նորանշան ձեւերով մթագոյն զանգուածներ երկաթաքարէ (բասալտէ) լեռներու, որոնց մէջէն անջատ կ'որոշուէր կարա-Հիսարի դղեակը՝ իւր քարաժայռին գլուխը

Վրդիացեալ կանգնած: Աւելի մօտը՝ այն նեղ պատառուածքը, ուսկից կը հոսի Գայլ գետը, կը բուրբեր Գուճան-Այայի սէգ կատարին շուրջը: Գէպ ի արեւելք կը տարածուէին Արզւ-Տաղի կարմորակ կողերը, ձիւնակոյտերով ակօսուած, որուն անորոշ կատարները քողարկուած էին ամպերու մէջ. եւ աւելի վերը՝ հորիզոնի վրայ դուրս կը ցցուէր մրագոյն ծիր մը՝ սպիտակ դրասանգերով եզերաւորուած՝ Եփրատայ բարձրայօն լեռնաշղթան, որ հարիւր քիլոմետրէ աւելի հեռու է: Հարաւակողմը՝ անանուն բարձունքներու լեռնակոյտ մը կը շեղջակուտի, այն ամբողջ հզօր լեռնազանգուածը, ուր Հիրիկ ու Աղիւս կը բղխին իրենց ակունքներէն, եւ որուն բազմապար գիծը կ'ընդհատուէր Բէգ-Տաղի պաղպաջուն գմբէթով, որուն ետեւը ծածկուած է Ջարա: Արեւելակողմը՝ կը նշմարուէր այն խորունկ խրամատը, ուսկից կը սողօսկի Էնդերեսէ դէպ ի Սեբաստիա տանող ուղին. եւ աւելի անդին՝ Աէօզէ-Տաղի վեհաշուք բուրգը, որուն կապուտերփին սանակոյտները հրատապ արեւու մը տակ կը ճաճանջէին: Աերջապէս մեր ոտքին առջեւ Ակշար-Օվայի աւազանը կ'երեւար իբր քանդակագործ բաժակ մը, ուր մանրամանր տները բարձրաքանդակ դրօշուած ըլլան. եւ նոյն իսկ հողին վրայ՝ զարմանալի յստակութեամբ մը կ'որոշուէր այն գիծը, զոր նիկոպոլսոյ հին պատնէշները բռնած էին:

Երկու ժամու մէջ դժուարակոխ շաւղով մը՝ բայց առանց վտանգի՝ Սիվրի-թէփէի գազաթէն կ'իջեցուի դէպ ի Բուրգ:

Թ՝ Հայաստանի սահմանագլուխը եւ
Երիզա:

§ 28. Բոորգե Տիտոֆայե (քարակէս ԻԲ—ԻԳ):

— Մայիս 30ին շորեքշաբթի օրը Բուրգէ ուղ-

զուեցանք զէս ի Երզնկայ՝ այն հովիտներուն միջէն, ուսկից՝ մեր գուշակութեանց համեմատ՝ անցած ըլլալու էր հռոմէական ուղիներէն մին՝ Սատաղա տանելու համար: Նախ կտրեցինք ամբողջ Ակշար-Օվան՝ հարաւային բլուրներուն քովէն անցնելով: Գաշտը շատ բերրի է, ի բաց առեալ կենդրոնը, որ՝ գետոյն մերձավայրքը՝ ճախճախուտ է: Գիւղերուն շուրջը քաջաբեր մրգաստաններ եւ արտեր՝ ուր կ'աճին ցորեն, գարի, կանեփ ու ընդեղէնը, բարգաւաճանաց զեղազուարճ երեւոյթ մը կու տան երկրին: Այս արգաւանդ աւազանն՝ որ ապահովապէս ցամաքած լիճ մըն է, քսանուհինգ քիլոմետրէ պակաս երկայնութիւն չունի: Ամէնէն նշանաւոր աւանն է՝ արեւելեան ծայրը՝ Ածդուբ (Էշբիդէր Ezbidir), որ երբեմն Պարսկաստան գացող կարաւաններուն օթեւաններէն մին էր¹, եւ որ մեծ հայ վանքի մը նիստը մնացած է: Միայն թէ մեր անցած ժամանակ քաղաքական խառնակութիւնք ստիպած էին որ կրօնաւորք ամայի թողուն այս վանքը: Հոն հռոմէական տապանագիր մը գտանք՝ հին մատուան պատին մէջ ագուցուած (արձ. Թ. 371):

Այն վայրկենին որ Էշբիդէրէ ելանք՝ մորիկ մը նոր դադրած էր: Բարձունքներէն թափուող վտակները կարծես տուրմ (chocolat) ըլլային, այնչափ տղմուտ էին. եւ գիւղացիները փութով կը բանային ոռոգման կորիները, որպէս զի ջրերը գալով տարածուելով իրենց պարարտացուցիչ սիկը արտերուն վրայ նստեցընեն: Բաւական դժուարու-

¹ Տես երնիէ, Ա. էջ 17 (տպ. 1679). «Իջրէզէր ու բիշ մեծ գիւղ մըն է լեռներու մէջ [իրականին՝ բլրոյ մը կողին վրայ], ուր կարաւանը սովորաբար օր մը՝ կամ երկու օր դադար կ'ընէ, թէ՛ վճարելու համար սակը՝ որ Richdaleի մը քառորդն է ուղա գլուխ, եւ թէ՛ հոս գտնելով ընտիր ու արժան գինի մը, որմէ ամէն մարդ իւր ատկերը կը լեցընէ:»

Թեամբ անցանք ողորած Չերնիգէլ-սուն՝ որ կ'երթայ Էյբիդէր-սուի մէջ կը թափուի քիչ մը վարբ: Գեախնը շուտով կը բարձրանայ, եւ մեր մեկնելու կէտէն սկսեալ ժամ մ'ետքը կը հասնի: Օրէն-տէջ, որ շինուած է տեսակ մը հրուանդանի վրայ, որ Ակշար-Օվայի մէջ կը յառաջանայ եւ անոր արեւելեան վերջին ծայրն է: Գիւղէն մեր աչքին առջեւ կը պարզուի անծայր դաշտն՝ իրեն ամբողջ ընդարձակութեամբ:

Օրթա-քէոյի քով սկսող բլուրներու երկայնու նեղ շղթան թուամբի մը նման է, որ կը բաժնէ երկու զուգահեռական հովիտները, որոնց միջէն Ակշար-Օվա կը հաղորդակցի Սուշէհիբի տափարակին հետ: Օրթա-քէոյէ քառասուն վայրկեան հեռուն Սե-ինդու-կ (Sevindouk, այլք՝ «Սէվինդաիկ») գիւղի հայ գերեզմանոցին մէջ կար մղանաքար մը արձանագրութեամբ, որուն վրայ տապանագիր մը վերագրուած ըլլալով՝ շատ անորոշ եղած էր. սակայն եւ այնպէս պայծառ ընթեռնելի կը մնար ՚: (16) թուականը (արձ. Թ. 372): Ասիկայ առաջին յայտանշանն էր թէ լաւ ուղղութեան մէջ էինք: Բայց կարեւոր էր հոս գիտնալ թէ հին ծամբան կ'անցէր արդեօք ձախէն՝ արեւմտեան կողման հովիտին միջէն, թէ աջէն՝ արեւելեան հովտէն, որմէ կ'անցնի Էնդէրէսէ Երզնկայ գացող արդի խճուղին: Մղոն մ'աւելի հեռուն՝ Աբաւ (Ապանա) գիւղին մէջ, որ միջնաբերդի մը պէս կանգնած է բարձր սարակի մը գլուխը, լաւ քանդակուած տապանագիր մը զետեղուած էր աղբիւրին քով (արձ. Թ. 373). միայն թէ ասի խնդիրը չէր վճռեր: Մենք դարձեալ կորեցինք Չերնիգէլ-սուն՝ Են-ի-ի-ն-եւելու համար, որ հեռուէն կը տեսնուի ապաւերկ լեռան մը գահավէժ զառիթափին վրայ. բայց պարագ տեղ աշխատեցանք: Այն ատեն կրկին հովիտն ու բլուրները անցնելով՝ վերջապէս գէպի արեւելք Այվանուս (Aivanus, այլք՝ «Աղուանիս»)

գիւղին մէջ¹ գտանք մեր յուսացածը, մղոնաբար մը՝ անուամբ Վաղենտինոս, Վաղէս եւ Գրատիանոս կայսերաց, բայց դժբախտաբար առանց հեռաւորութիւնը նշանակուած ըլլալու (արձ. թ. 475):

Այս քարն, որ այժմ գերեզմանոցին մէջն է, հանուած էր հողէն ընդարձակ լճի մը մօտէն, ուր ջրասուն թռչուններ կ'ապրին, եւ որ գրեթէ կը հասնի բլրոյն ստորտան, որուն վրայ շինուած է Այվանոս հայ եւ թուրք բնակչութեամբ գիւղը: Հաւանական է որ հռոմէական ճամբան կ'անցնէր այս փոքրիկ լճին ու մերձակայ բարձունքներուն մէջտեղէն: Ուրիշ կողմանէ հոս բազմաթիւ են հնութեան մնացորդները: Գերեզմանոցին մէջ մարմորէ գլանածեւ քարերն ապահովապէս սեանց բեկորներ են. բլրան զազաթն ինկած է մարմորէ հսկայ քար մը կոփուած եւ ծակ մը փորուած, եւ քովը՝ սպիտակ մարմորէ ծնօտի հասակոտոր մը, որուն վրայ խաչ մը քանդակուած է: Զմեղ առաջնորդեցին տարին ձորակ մ'ալ, ուր հին մատուան մ'աւերակները կան՝ կիսով չափ հողի մէջ թաղուած. հոս մարմարեայ բարձր կոթող մ'ամենէն աւելի ուշագրութիւնը կը գրաւէ՝ իւր ճոխ զարդարանքովը². վերջապէս գիւղին դիմացը բարձունքի մը վրայ կը կանգնի սիւն մը, որ Գիքիլի-թաշ (Կանգուն-քար) կը կոչուի, եւ բարձրաքանդակ խաչանշեր կը կրէ (խաչքար): Համառօտ ըսելով՝ հոս ամէն կարելի նշանները կը միանան՝ ընդունելու թէ այս նիստը հռոմէական է՝ (statio) մըն էր, որ շարունակած էր մնալ բիւզանդեան շրջանին մէջ ալ:

¹ Ինճիճեան (Ռիսսէր, անդ, էջ 213) կը գրէ Աղլ-Վէ (Aghwanis). Չիհաշէֆ (Tehihatscheff, Reisen in Kleinasien, redigiert von Kiepert, 1867, p. 65) կը գրէ Awanis.

² Ասոր մեր առած լուսանկարները դժբախտաբար խաթարած էին:

Եփրատի սահմանագլխուն քովէն կ'անցնէր: Երկու ճամբանները իրարու խառնուած կամ նոյն էին մինչեւ Ողոտէգարիցա՝ Նիկոպոլսէ քսանուչորս մղոն հեռու:

Արդ մեր չափմանց համեմատ՝ Այվանոս իբր 36 քիլոմետր հեռու ըլլալու է Բուրդէ, որ գրեթէ ճշգիւ կը համահաստարի 24 հոռմէական մղոններուն: Ուստի հոս պէտք է զետեղել Ողոտէգարիցա տեղը:

Այս կէտն անգամ մը հաստատուելէն ետքը՝ կը նպաստէ նոր ապահովութեամբ մ'ալ Նիկոպոլսէ Սատաղա տանող կրկին ճամբաներուն ուղեգիծը գտնելու (քարտէս ԻԳ): Առաջին ուղին՝ նախ խորշելով Գայլ գետոյ հովտէն, որ Շէհէր-Սուի հետ իւր խառնուելէն յառաջ՝ կը հասի գրեթէ անանցանելի կապանի մը մէջէն, վեր կ'ելէր Ակշար-Օվայի հարուստ ու բազմամարդ գաշտին մէջէն, եւ առանց դժուարութեան կ'անցնէր Էդրիգէր-Սուի հովտէն՝ Սուշէհէրի տափարակը, որուն եզերքն է Այվանոս. յետոյ Չօբանլու-Սուի քովէն կ'երթար գոնէ մինչեւ այն կէտը, ուր գետա՝ Բուղդաձորի (Պուղտաձոր, տես վարը) դիմացը՝ անձուկ կրճի մը մէջ կը խորասուզի: Ասկէ ետքը կտրելով լեռը՝ տակաւին անորոշ լեռնանցքէ մը՝ կրկին կը հասնէր Գայլի հովիտը, որ հազիւ իբր 15 քիլոմետր հեռու է, եւ կը հետեւէր այնուհետեւ այս հովտին՝ մինչեւ գրեթէ Սատաղայի (Սատաղ) մօտ: Եթէ ուղիղ են Ուղեգրութեան տուած թուերը, Ա՛ւշ-Դ (Dracones) փնտռելու ենք Աէլկիդի եւ Շէյրան-Սուի գետախառնունքին մօտերը, եւ Հ-Ղ՝ Տէրսունի շրջակայքը:

Երկրորդ ուղեգիծն, որ առաջնոյն հետ նոյն գիծն էր մինչեւ Այվանոս, այս տեղէն կը թեքէր դէպ ի հարաւ՝ անտարակոյս ելլելով Չօբանլու-Սուի ընթացքն ի վեր մինչեւ Գերջանիս (Աերճա-

Սուշէհիբ, ինչպէս իւր անունը կը ցուցնէ «Ջրաբաղաբար», խոնաւ աւազան մըն է, ուր բազմաթիւ լճակներ կը տարածուին հարթ ափերով, որոնք կ'ողողուն ու կը ցամփին՝ արեւու եւ անձրեւաց հաճոյից համեմատ, ճիշդ ինչպէս մակընթացիկ ծովափ մը՝ ծովու խաղացքին համաձայն: Եղէզնեբու եւ Ջրասուն բոյսերու մէջ կը թեւծակեն ու կը խայտան բազալոյդիներ ու վոլքի սաղեր: Սուշէհիբի արեւելակողմը Ջրաղբը կ'ըլլայ Չորանլու-Սուի ձեռօր, որ կարեւոր գետ մըն է եւ Գերջանիսէ կ'իջնայ¹, եւ մեծարոյր կորագիծ մը կը գծէ մինչեւ որ կ'երթայ վերջապէս կը թափուի Կէլկիզ-Իրմակի մէջ, բայց նախ իրեն համար դէպ ի հիւսիս անցք մը բանալով նեղ ճեպանցոյցի մը միջէն (տես քիչ մ'ետքը): Մեր գետս անցանք ծանծաղէ մը Նոգուպերտ (NogouPERT) մահամասական շէնին քով, եւ ելանք աջ ափին բլուրները:

Ջարմացանք հոս հանդիպելով տօնական զգեստներ հագած յոյն գիւղացւոց ամբողջ թափօրի մը, որոնք՝ երէցն իրենց զլուխն անցած, հասարուած էին ամենաժողով տօնախմբու թիւն մը կատարելու: Մայիս 31 հինգշաբթի օրս տօն էր Համբարձման՝ յոյն եկեղեցւոյ համար, եւ գիւղացիները թափօրաբար եկած էին աղօթելու մեծ ծառի մը հովանւոյն ներքեւ՝ քարաժայռի մը ստորուն, ուսկից կ'իջնար թեյի մը նման բարակ առուակ մը, որ՝ ինչպէս կ'ըսէին, Աստուածածնի անապառկաթին նշանակն է: Կրօնական արարողութիւնը լիննալէն ետքը՝ գիւղացւոց սօվորութիւնն է օրւան մնացած մասն այս տեղ անցնել խմելով, ուտելով եւ զրօնելով: Շատ տարրեր եղած ըլլալու շէնի իրերը՝ երբ իրենց հեթանոս նախնիքն հոս կու-

¹ Այս գետն իւր վերին մասին մէջ կը կոչուի նաեւ Գերջանիս-Սու, եւ աւելի վարը՝ Սուշէհիբ-Սու:

գային պատուելու աստուածեղէն ակնաղբիւր մը՝ նուիրական ծառի մը ստորը¹ :

Չափաւոր բարձրութեամբ սարահարթին վրայ՝ որուն շուրջը կը բոլորի Չօբանլու-Սու, Կ-Է-Է-Ն գիւղին մօտ, արտակարկառ քարաժայռ մը՝ որ խորունկ փորուած է, կը կրէր խաչ մը: Ասի անտարակոյս հին վիմափոր դամբան մըն է: Ալթէնդի (Altkenđi) թրքական գիւղին մէջ, որ նստած է գետոյն վրայ կրճին բերանը, աննշան արձանադրութեան մը (Թ. 374) հասակոտորը պատի մը մէջ ազուցուած էր. եւ սարահարթին միւս կողմը՝ Բ--ՂԻ--Յ--Էի (Պուղտաձոր) գերեզմանոցին մէջ՝ գորշ մարմնի սիւնակ մը յունական տապանադիր մը կը կրէր (Թ. 370): Պուղտաձորի գիւմար՝ Չօբանլու-Սու իւր մէջ բնդունելէն ետքը մեծ օժանդակ մը՝ Չատ-Սուն, որ արեւելահողմն եղած հովտէ մը կ'ելլէ, դէպ ի հիւսիս կ'երթայ կը խորասուզի վայրենի կիրճ մը՝ կրաքարային բարձր լեռնորմերու մէջ, եւ յետոյ անմիջապէս կը թափուի Ալլիկո-Իրմակ գետը: Էնդերէսէ Երզնկայ տանող խճուղին Պուղտաձորի արեւմտքէն կ'անցնի՝ Էլէնի-Էօջէ, եւ կ'օգտուի կէտէ մը՝ ուր սարահարթը խորարանակ զոգուած է, մեղմ վերելքով մը գաղաթը հասնելու համար: Ետոյ դէպ ի հարաւ-արեւելք կ'իջնայ՝ Ռուֆայէ հասնելու համար: Բայց ասկէ յառաջ կը միանայ ուրիշ նոր շինուած ուղեգիծ մը, որ Սերաստիայէ կու գայ եւ Չօբանլու-Սուն կը կտրէ Ալակէնգիի քով² :

1 Հեթանոսաց նուիրական խնջոյից մասին՝ տես վերը՝ Բ, § 22: Աղբերականց պաշտաման մասին՝ անգ. Բ, § 9:

2 Այս մանրամասնութիւնը կը նշանակեմ, զան զերկրորդ ուղեգիծը տակաւին նշանակուած չէ Վերերտի նոր քարակտին փայ (թերթ՝ Սերաստիա) եւ նաեւ առաջին ճամբուն ուղեգիծը, որ 1900ին դեռ չէր աւարտած, բոլորովն ճշգրտա չէ:

Մենք մեր օթեւանակէտը հասանք՝ անցնելով Ալ-Ղ-Ի-ն, Զիֆէլի եւ Բ-ր-տ-է-օյ գիւղերը: Հոս յանկարծակի հանդիպեցանք շրջուն երաժիշտներու խմբի մը, որոնք սրասրինգ ու թմբուկ զարնելով հետեւեցան մեզի, թէեւ մեր ձիոց խաղացքը բաւական արագագնաց էր:

§ 29. Մոռոֆայիէ Մելիք-Շիրիֆ (քարտէս ԻԳ): — Ռուֆայէի մէջ, զոր Գերջանիս (Կերձանիս) ալ կ'անուանեն, նորաշէն վարչատան մը մէջ կը նստի Գ-յ-Գ-մ-մ մը՝ որ կախուած է Կարնոյ կուսակալէն (Չ-Լ): Այս պաշտօնեայն՝ որ Կրետացի փախստական մըն էր, իւր կրցածն ըրաւ մեզի օգտակար ըլլալու համար. սակայն Ռուֆայէ ապահովապէս ամէնէն ողորմելի գաւառագլուխ վայրերէն մին է՝ ուր օթեւանած ըլլանք: Հոս տեղ նոյն իսկ կարելի չեղաւ խմորուն հաց գտնել, եւ ստիպուած էինք շատանալ գիւղացւոց անխմոր դրտակով: Նորերս այս աւանը բարձրացուեցաւ վարչական իշխանութեանց նստավայրի մ'աստիճանին. եւ իւր այս զարգացման անտարակոյս նպաստած է իւր դիրքը՝ երկու գետերու գետախառնունքին եւ այն ճամբաներուն միացման կէտին վրայ, որոնք կը շառաւիղին դէպ ի Էնդէրէս, Սեբաստիա, Երզնկայ եւ Կամիս: Բայց կլիման խիստ է. տեղւոյն բարձրութիւնը հազար հինգհարիւր մետրէ աւելի է, եւ ձիւնը տարւոյն վեց ամիսը գետինը կը ծածկէ: Մենք Յունիս լին հոս էինք, եւ ցորենադաշտերուն մէջ ցորենը հաղիւ թէ բողբոջած էր, մինչդեռ Բուրգի մէջ հունձքերը հասուննալու մօտ էին:

Ռուֆայէէ քիչ մ'անդին մտանք Բուլգար-Սուի հովիտը, որուն աջ ափին կը հետեւի տաճկական խճուղին: Միւս ափին վրայ՝ մահմետական

: [Հեղինակը կը դրէ galette azyne, որով անշուշտ պարզ գրտակ կամ պարցամատ նշանակել չէ ուղածը, այլ կ'ենթադրենք՝ արեւելեանց սովորական լաւուր:]

Զիւրի գիւղին մէջ ցուցուցին մեղի խաշանիչ զար-
դարուած մեծ կոթողի մը բեկորը. եւ մեղի ըսին
թէ մօտերս ասկէ տարած էին «գրուած քար» մը
Կնդիլէ՝ գիւղին յունական եկեղեցին շինելու հա-
մար, որ գիւղը մղոն մը հեռու է լեբանց մէջ: Իրօք
ալ այս խեղճ ծխին մատրան մէջ խորանին սեղա-
նաքարը վեր կը բռնէր գեղեցիկ մղնաքար սիւն
մը (արձ. Թ. 476): Հաւատացելոց տուած մամբու
(keria) աղօտ լուսով՝ ընթերցանք հոս Ադրիանու
նուիրուած ձօն մը, որ վերափորագրուած է ուրիշ
արձանագրութեան մը վրայ՝ որ մրձահարուած էր
եւ որ Գոմփոհանու իշխանութեան ժամանակէն
ըլլալու էր: Շատ պայծառ կերպով XXXXV
թիւը կու տար: Մղոններու այս թիւը հաշուած
էր ապահովապէս Նիկոպոլէ սկսեալ: Բուրգէ
մինչեւ Զիւրի մենք արդի խճուղւոյն երկայնու-
թիւնը չափեցինք 68 քիլոմետր. իսկ 45 մղոններ
հաւասար են 66.6 քիլոմետրի: Նիկոպոլէ դէպ ի
սահմանագլուխ ճամբուն շինութիւնը Գոմփոհանու
ատեն՝ մէկ մասն էր ուղեշինական այն անբաւ աշ-
խատութեանց, որոնք ի գլուխ հանուեցան Փոքր
Ասիոյ մէջ Փղաւեանց ժամանակ¹. եւ որոնք Հռո-
մէական պետութեան համար այն նշանակութիւնն
ունեցան՝ զոր ունին Ռուսիոյ համար Թուրքեստանի
կամ Սիբերիոյ երկաթուղիները: Թափանցման այս
մեծ պողոտաները, որոնք թէ առեւտրական եւ թէ
ռազմագիտական էին միանգամայն, արագ եւ
գիւրդին հաղորդակցութիւններ կը ստեղծէին Անա-
տոլեան ամբողջ թերակղզւոյն միջէն մինչեւ Հայաս-
տանի սահմանագլուխը, որուն ճորտագիր իշխա-
նաց հաւատարմութիւնը յաճախ դեգեներուն էր:
Բուլղար-Սուրի հովիտն ամենագիւրդին ճամբան է
Պոնտոսէ՝ Եկեղեաց գաւառի վրայէն՝ հասնելու

¹ Հմմտ. Le gouvernement de Cappadoce sous les
Flaviens (ի Bull. Acad. de Belgique, 1905), p. 197 ff.

Բարձր Հայոց գաւառները: Այս ճամբան ապահովապէս բանուկ էր Կայսերաց աշխարհակալութենէն ալ շատ յառաջ, թէ՛ բանակներու, թէ՛ վաճառականաց եւ թէ՛ նոյն իսկ պարզ ուխտաւորաց համար՝ որոնք Երիզա կ'երթային Անահայտ հոշակաւոր մեհեանը (§ 31). Ինչպէս որ բանուկ մնաց միջին դարու մէջ ալ կարաւաններուն համար, որոնք Սեբաստիայէ կ'երթային Կարին ու Պարսկաստան¹:

Կանդիլիայի մղոնաբարին համեմատ՝ Ջիպտի գիւղին մօտ Նիկոպոլսէ 45 մղոն հեռու էինք, Արդ Անտոնինեայ Ուղեգրութիւնը յիշեալ քաղաքէն 48 մղոն հեռու կը դնէ Կարան կայանը, ուր կը միանային երկու հոռոմէական ուղեգծեր²: Ուստի այս կայանին հանդիպելու էինք՝ մէկ ժամ անդին:

Ջիպտիէ իբր երեք քիլոմետր հեռու լեռան մէկ խորշանկեան մէջ ղողած է Ալ-Վ-Հէնը (Պաղ.) գրեթէ բոլորովին խաշաձեւ զիրար կտրող գերաններով կառուցուած, երկրիս հին սովորութեան համեմատ³: Ասկէ դուրս՝ հետաքրքրական բան մը չունի: Սակայն գրեթէ գիմացը կը բացուի ձորակ մը, ուսկից՝ հիւսիսէն եկող վտակ մը կը հոսի. եւ ասոր մէջ ապաստանած է հայ եւ թուրք բնակչութեամբ մեծ աւանը Մէլի-Շէրէֆ: Մենք անցանք Բուլգար-Սուն, որ հազիւ միայն իբր 15 մետր լայնութիւն ունի, եւ որուն զառիթափութիւնը Ռուֆայէէն ետքը գրեթէ անզգալի է. եւ գետն ի վեր ելանք մինչեւ Մէլիք-Շէրիֆ, որ

¹ ԺԻ դարուն «Պարսկաստան գացող պողոտան Ալ-Շահրէն (տես վերը՝ § 28) կու գար երեք հանգոյցով կը հասներ Երզնկա («Արզանջան» Arzanjan), տես Le Strange, անդ, էջ 147, 23. հմտ. Էփէլյա-էֆէնտի Ռիստեքի քով, անդ, էջ 193:

² Տես վերը՝ Բ, § 28:

³ Տես վերը՝ Բ, § 23:

շատ աւելի նշանաւոր ու հին է քան թէ իւր Ռուֆայէ վարչական կենդրոնատեղին: Նախ աչքի կը դարձէ գերեզմանոցին մէջ տաճկական հին շինութիւն մը՝ սպիտակ մարմարէ ութանկիւն դեղեցիկ շէրիմ մը (Բէ-բդէ), որ այսօր կիսակործան է: Սակայն աւանին կարեւորութիւնը մահմետական տիրապետութենէ աւելի հին է: Հոս հասած էինք այն կէտին, ուր՝ Ուղեգրութեան թուերուն համեմատ՝ գտնուելու էր $4-բ-բ-1$. եւ իրօք ալ հոս

1 Carsat կամ Carsagis՝ Ընտ. Ուղեգ. 208, 215 (տես վերը՝ Բ, § 28): Ղերջին նեւ բարդաւական է, որուն ուղղականը կ'ըլլայ Carsaga կամ Carsagia (-orum)-կարսագա հաւանօրէն Պեւոսնդերեան Տախտակին Eregarsinան է եւ Պաղտմայ՝ Ե, 6, 20 դրած *Xοροαβία* (Ռամսէյ Պամ. Աշխ., էջ 71. Միւլլէր՝ Մեկն. Պաղտմ., էջ 885, 4): — Կարծենք թէ այս անունը սրբագրելով գնելու է նաեւ Պղին. Բն. Պամ. Զ, 5, § 36 խօսքիս մէջ՝ *Oppida celebrantur in Armenia (minore) Caesarea, Asa (= Haza Ուղեգրին)*, *Nicopolis* (Փոքր-Հայոց բերդերն են անուանի՝ Կե-բդէ. Բ. Ղա., Նիկոպոլիս): Այս երկրիս մէջ «Կե-բդէ» գոյութիւն չունի: Ուստի կ'երեւայ թէ «Կեսարիա» դրուած է ինչ. «Կ-բ-բ-1»: — Թերեւս Ս. Բարսղի մէկ նամակին մէջ ալ յիշուած ըլլայ Կարսագա (Թուղթ ՄՀԸ, Migne, PG., p. 1016) *Ἐγὼ τὴν εὐχρυσίαν σου κατὰ τὴν Ὀρφανήν* (այլ ընթ.՝ *Ἐγὼ τὴν, թերեւս Ὀρσηνή* ըստ Պաղտմ. Ե, 6, § 18) *γενόμενος ἐπεθνυμὸν ἰδεῖν προσεδόκων γάρ σε ἐν Κοροαγαίνοις* (ուղեղ *Κοροαγηνοῖς*) *διάγορτα, μὴ ὀκνήσειν πρὸς ἡμᾶς διαβῆναι ἐν Ἀταγαίνοις* (այլ ընթ.՝ *Ἀταίνοις*). այսինքն թէ՛ Չեր ազնուութիւնը ցանկացայ տեսնել Որփանենէ (Որսենէ) դաւառն եղած ատենս. վասն զի կը յուսայի թէ երբ Կարսագենացոց բաղաբը կը գտնուէիք՝ չէիք դանդաղիր մեզի գալու: Ատտապէնացոց բաղաբը: — Կարսագան չենք կրնար ապահովութեամբ նշնադրենել Թ դարուն այս երկրիս մէջ ստեղծուած եպիսկոպոսական աթոռներուն եւ ո՛չ մէկուն հետ: Չի կրնար ամենեւին նոյն ըլլալ *Κοριζηνή* կամ *Κορζανή* աթոռաւիստը (Gelzer, *Georgius Cyprius*, p. 181 եւ *Notitiae*

գտանք աներկրայ աստղային այն մասին թէ այս տեղը հռոմեական հաստատութիւն մը բռնած էր:

Տներու անարուեստ օրմերուն մէջ ազուցուած էին գորշ մարմօրէ բազմաթիւ մեծ քարեր. եւ Հայոց եկեղեցւոյն մէջ պահուած էին լատինական կարեւոր արձանագրութեան մը բեկօրներն՝ որ նորերս հոգէ հանուած էին, ձօն մ'առ Սեպտիմիս Սեւերոս՝ զոր Պարթեւաց դէմ մղուած պատերազմէն վերջը նուիրած էր հռոմեացի քաղաքացւոց հեծելազունդ մէկ վաշտը (արձ. թ. 376): Բայց **Մեկէք-Շէրիֆ** բնծայած է շատ աւելի նշանակալից յիշատակարան մըն ալ՝ ամենահին մղանաքարը, որ Աղիւս գետոյն արեւելահողմը ցայսօր գտնուած է: Բորէ՝ կանխաւ յօսի ընդօրինակութիւն մ'ըրած էր այս արձանագրութեան. իսկ մեծը նոյնը գտանք երկու մասի սղոցուած (արձ. թ. 477): Սեւ կրաքարէ այս գեղեցիկ սիւնը, որ՝ գոնէ ինչպէս մեզի ըսին, գտնուած է **Մեկէք-Շէրիֆի** վեր-

episc., Abh. Akad. München, XXI, 1900, p. 181) եւ մէջ *Βαρζανίση, Φαρζανίση* [*Καρζανίση?*] *աթուր*՝ որ Արաւրակայ *աթուր*ն կը յաջորդէ նոյն տեղը (Gelzer, Notit. episc., p. 569, 565): — [Աւերջիններէս առաջինը ծանօթ խոյնէ կամ խոյնէն է, որոյ մասին տես այժմ ի միջի այլոց՝ Հի-Բըն, Հին Հայոց տեղւոյ անունները, Ալեքնա 1907, էջ 137—138 եւն. երկրորդին հոյ ձեւը շէնք գտներ որոշ, եթէ ուղղութեամբ անանգուած է]:

Ի Բորէ (Boré, Corresp. etc., I, 1840, p. 369) կը գրէ. Աւանդութիւնը կը պատմէ թէ **Մեկէք-Շէրիֆ** յառաջ հռոմեական քաղաք մըն էր Erzez կամ Anourgia (?) անուամբ: Ստոյգ է որ հոս տեսայ բերդի մը տեղը եւ մարմարեայ շէնքի մը, որ մեհեան մ'ըլլալու էր. եւ վարչատան սանդղին տակ՝ հասարարէ սեան կտորի մը վրայ քանդակուած՝ կարգացի սա տառերը . . . — Մեզի մէջ բերդ ցուցուցին, մէջ մեհեան. բայց որովհետեւ բնակիչները մեզի նկատմամբ շատ անգատահարութիւն ու հակառակութիւն ցուցուցին, շատ կարելի է որ շէն ուղած զմեզ նոյն տեղերը տանիլ:

ծանօթ է մեզի որ անկարելի է որոշել ճամբուն
ուղեգրի՞ն՝ լեռններու միջէն մինչեւ Սասաղաւ
Ասի ձեռնարկ մըն է որ ասպարէզի հետադարձներու
կը մնայ գլուխ հանել:

Արաւրակոյի գիւղն անշուշտ կրնայ որոշուիլ
ասանց գծուարութեան: Ս. Եւստրատիոսի վկայա-
բանութիւնը, որ այս փոքրիկ քաղաքն ծնած էր¹,
նոյնը կը դնէ Սասաղաւէ երկու օրան ճամբոյ
հետու՝ Նիկոսիոսոյ ուղիոյն վրայ², որ բաւ կը հա-
մաձայնի Անտոնինեայ Ուղեգրութեան մէջ նշանա-
կուած 50 մղոն հետուարութեան հետ³: Այս
վկայարանութեան կ'իմանանք դարձեալ թէ
գիւղաքաղաքը շինուած էր զօրաց բանակած բա-
նակեացին ժամ⁴: Իւր կաակին մէջ պայմանագրած

¹ Migne, PG., CXVI, սիւն 474D: Έκ τῆς Ἀραυ-
ρακηνῶν ὄρωμηαι πολίχνης (հայ թրգմ. տեղ մը՝ «գի-
ւարդէ յեկեղեցին քաղաքին Արաւրակացոց, ուստի ինքն
կիւալ էրն, թերեւս՝ «Իււալ», տես Վարդեւ Վ. Կյո. Ա.
438): Հմմտ. սիւն 478B: Ἐὐγενιὸς τις ἐκ τῆς Ἀραυρα-
κηνῶν καὶ αὐτὸς ἐπάρχων πολίχνης (հայ թրգմ. «... Եւ-
գենիոս, որ էր ի նմին քաղաքէ Արաւրակացոց՝ ուստի երա-
նելին Եւստատիոսոյ, տեղ՝ Ա. 446): 8ես նաեւ սիւն 470B:

² Անգ՝ սիւն 479A: Ὁ δούξ ἐπὶ τὴν Νικοπολιτῶν
ἐπιείεσθαι ἐπηγγέλατο πόλιν... καὶ μετὰ δύο ἡμέρας εἰς
τὸ πλῆσιον Ἀραυράκων κατηχθῆσαν κάστρον (հայ թրգմ.
«Յարուցեալ դարձն ի Նիկոսիոսացոց քաղաքն փութայր
դնալ... դար հասաներ յետ երկուց օրաց եւ բանակեր
մերձ սա գեղին որ է հուսյ ի քաղաքն Արաւրակացոցն»
տեղ՝ Ա. 447—481):

³ Ուղեգր. Անտ., § 216. — կամ միայն 45 մղոն
ըստ § 208: 8ես վերը՝ Բ., § 28:

⁴ Հմմտ. վերի ծանօթութիւնը եւ PG., սիւն 482D
πλησίον τοῦ κάστρου... ἐν τῷ κάστρῳ (հայ թրգմ.
«Հասաներ արագ վկային Աստուծոյ սա գեղեան... ար-
կին ի հանդիսական բանա գեղին այնորին» տեղ՝ Ա.
450—51): Հստ բանակած էր Բոսպորեան վաշտ մը (Cohors
Bosporiana), ինչպէս քիչ մը վերը յիշուեցաւ:

էր նոյն սուրբը՝ իրեն եւ իւր մարտիրոսակից ընկերաց նշխարները տանիւ թաղել իւր ծննդեան քաղաքին մէջ, ինչպէս որ կատարուեցաւ ալ¹։ Աւքայիտայի պէս²՝ հոս ալ այս յարգելի նշխարներն ունենալով՝ միջին դարու մէջ ասպահովեցաւ Արարակայի զարգացումը։ Յաճախ կը յիշուի սոի իբր ծննդավայր Ս. Եւստրատիոսի³։ Եւ Թ. դարուն բարձրացուեցաւ եպիսկոպոսական աթոռի մը՝ որ

1 Անդ. սիւն 502 B: εις την * Αραυρακηνῶν πολίχνην [ν τόπω] τινί καλουμένῳ * Αναλιβόζορα (լատ. Analieozora). ի Հայ թրգմ. հետաքրքրական է սյուպէս՝ «տարբեր ի հայրենի բնակութիւնն ի բրեանց յԱրարակացոց քաղաքն եւ դնել յասելում» (այլ քր. յայցելում) տեղումը՝ որ կոչի Բ----- (անդ. Ա. 468)։ Գոնէ ուղղելի կերեւոյ «Բ-----» (— ... βόζορα). ուստի նախնականը հայերէնի մէջ ալ պիտի բնուի «Ան-դիբ-----»։ — Եւստրատիոս Արարակայի մէջ հոգային կալուած մը կատկած էր՝ վկայարանին պահպանութեան համար (տό ἐν * Αραυράκοις κτήμα, հայ թրգմ. «Եւ հայրենի ստացուածս յորս՝ որ յԱրարակայիսն էր...» անդ)։

2 Ցեւ վերը՝ Բ. § 3։

3 Կոստ. Երեւանցիին, Վասն Բանակաթեմ. էջ 31. 13 (հրատ. Բոն)՝ την * Αραβρακηνῶν πόλιν (չբաղաւրն Արարակացոց)։ — Լուսարանութիւն ի Թեոփանէս, հրատ. de Boor, էջ 19, 7. — Նիկեփոր, Պատմ. Եկեղ. Է, 14 (PG., CXLV, սիւն 1233 C). — Ռամսէյ (Պատմ. Աշխ., էջ 286) Արարակայի հետ կը նոյնացընէ Sarabraka, որ Պաղոսեայ պլեպլէ ձեռագրաց համեմատ՝ (Է. 6, § 13) ուրիշ անուն մ'ըլլայ Կապպոպոպիկոյ Salambria տեղւոյն։ — Միւլլէր կը կարծէ թէ Փարթ-Հայոց այն երկիրն որ իբր թէ Աίջուսիկ յարջընի իրականին բնուի * Αραυρακή (Արարակէ, Մեկն. տեղւոյն Պաղմ. Է. 6, 18)։ — Վերջապէս Արարակ կոչուած ուրիշ տեղ մ'ալ բնուի Նիկիոյ մօտ՝ բնու Յայտմ. Կ. Պաղոս, հրատ. Delehaye, էջ 216, 38. բայց կենսութագրեմ թէ նոյն սրբապիւրն այս տեղ անունը փոխ առած է Ս. Եւստրատիոս վկայարանութեանն։

կամախի օգնականն էր՝, Սելջուկեան աշխարհա-
կալուծիւնը պատճառած ըլլալու է իւր կործա-
նումը. բայց զարմանալի կ'ըլլայ որ այսօր բան մ'ալ
չցուցրնէ՝ ոչ հռոմէական բանակատեղւոյ եւ ոչ
բիւզանդական եկեղեցւոյն տեղը:

§ 30. Մ'իլիք-Շիրիֆի խրղնկայ: — Կար-
օագայէ անդին, որ հռոմէական վերջին կայանն
էր, Բուլգար-Սուրի հովիտը կ'անձկանայ եւ տեղ
տեղ ճշմարիտ կապան մը կը դառնայ՝ դալա-
րապտոյտ դառնալով բարձր լեռներուն մէջ, որոնք
կոնաբերներու անօտր անտառներով միայն ծած-
կուած են: Զառիթափն երթալով կը սաստկա-
նայ, եւ վտակը տեղ տեղ շառաշելով կ'անցնի
ժայռերուն սեմքերէն: Ճամբան ամայի է. մենք
հանդիպեցանք միայն գոմէշներու անթիւ նախրի
մը, զոր անդէորդները կամաց կամաց ու համբե-
րութեամբ կը քշեն կը տանին ամբողջ Անատոլիոյ
միջէն մինչեւ Վ. Պոլսոյ հրապարակը: Սակայն Մե-
լիք-Շիրիֆէ երկու ժամ ետքը կը նշմարենք ձախ-
կողմը խեղճ շէն մը, Գէրմէնդէրէ (Dermendérés
«Տէյիլմէն-տէրէ»)՝ կողմնական ձորակի մը մէջ
ծածկուած: Մէկ մղոն աւելի անդին՝ աջ կողմը կը
բաժնուի ճամբայ մը, որ կամախ կը տանի բարձանց
վրայէն. յետոյ բաւական մեղմ վերելք մը կը
հասցրնէ Չարգակու-Բէլի պարանոցը (2060 մետր)՝
որ Գայլ գետոյ վերջին ենթօժանդակը կը բաժնէ
Էփրատի օժանդակներէն, եւ Սել ծովու աւազանը՝
Պարսից ծոցի աւազանէն:

Ստիպուած էինք իրիկուան դէմ դադար
ընել գագաթան մօտ, մեր անդրուարներէն մին կոր-
սուած ըլլալով, եւ միւսը՝ բեռան տակ սայթաքած
ճանճաղի մը մէջտեղը: Առատօրէն կը տեղար ցուրտ

՝ *O' Aραβράων*, Ի Notit. episc. (հրատ. Parthey)
III, 641; X, 719. Հմեռ. Gelzer, Georg. Cyprius, p. 82,
Nr. 1750, և. *JAbh. Akad. München*, XXI (1900), p. 559, 565.

անձրեւ մը: Տաճկական նոր խճուղին, որ բացուած էր՝ բայց տակաւին ոչ քարայտակուած, փոխուած եղած էր անվերջ տղմուտ մը, ուր ձիերը մինչեւ ծնկուրները կը խրէին. եւ բռնադատուեցանք ապաստան մը փնտռելու Եկնի-էջի մէջ, որ փայտաշէն խրճիթներու երկու կամ երեք խմբերէ կը բաղկանայ, որոնք ցրուած են լեւրան զառիվայրին վըսյ՝ լեռնանցքէն վեր: Հոն հասանք մութ գիշերին՝ շնորհիւ մեր ձիերուն զարմանալի բնագրին, որոնք առանց սխալելու տարին զմեզ քարաժայռերու ու հեղեղներու միջէն մինչեւ բնական դարատափ մը, զոր քանի մը խղիկներ կը գրուեն՝ 2125 մետր բարձրութեան մէջ:

Այդուն (2 յունիս) ակնախափղ տեսարան մը մոռցրնել տուաւ մեր դառնութիւնները: Մեր դիմացը՝ այնպէս յտակ ու որոշ որ կարծես քանի մը քայլ միայն անդին ըլլայ, Գերսիմի լեռները՝ որ Հայաստանի ամենաբարձրներն են, երկնաբերձ կը կանգնէին ժայռուոր անսահման պատի մը պէս: Նորրոճագ արեւը վարդագոյն ու ծիրանեգոյն (lilas, շեփորկագոյն) կը ներկէր անոնց սառնապատ կատարները, մինչդեռ անոնց հզօր խարիսխները թաղուած էին նսեմագոյն գոլորշոյ մէջ, որ իւր անորոշ հետոց ներքեւ կը քողարկէր Եփրատայ խորունկ գետնութացքը:

Չմեռուան ամբողջ ամիսներու միջոցին ձիւնը կ'արգելափակէ Չարդակլուի նոյն իսկ լեռնանցքը, եւ գրեթէ անանցանելի կ'ընէ այս լեռնաղանդուածը՝ ուսկից կ'անցնէինք¹: Այն ատեն Երզն-

1 Կոստա Շոլէ (Cte de Cholet, Arménie, Kurdistan et Mésopotamie, 1892, p. 127) կենդանի կը նկարագրէ այն արկածները՝ որոնց կենթարկուի յունուարին Չարդակլու-Բէլն անցնել ուզողը: Իւր նկարագրութիւնը զազափար մը կու տայ այն բեւեռային երեւութի մասին՝ զոր կ'առնու ձմեռուան մէջ այս ամբողջ աշխարհակողմը:

կայ հասնելու համար՝ հարկ է երկայն շրջան մ'ընել զէպ ի հարաւ. Կամախի վրայէն: Կը հասկընանք թէ ինչո՞ւ Ա. Եսպասիանոս այս տեղը հաստատած էր պետութեան սահմանը, որ Տարոսի հարաւակողմն եղող Սամուսատէ սկսեալ կը հետեւէր Եփրատի ընթացքին մինչեւ այս լեռները: Այս բնական պատուարը շատ աւելի ազդեցիկ պաշտպանութիւն մըն էր քան թէ գետոյն փոսը՝ որ այս բարձրութեան մէջ երկրորդական կարեւորութեամբ հասանք մըն է:

Որոշակի դեռ չենք գիտեր թէ ինչ էր այս սահմանագլխոյն պաշտպանողական դրութիւնը¹. Բայց չ'երեւար թէ նշանաւոր շինութիւններ պարունակէր: Ճամբորդներէն ալ ոչ ոք գտած է շարունակեալ սահմանամրութեանց (limes) կամ սահմանապատնիշի (vallum) հետքեր՝ որ համեմատըլլան Եւրոպայի ու Ափրիկէի մէջ եղածներուն. եւ այսպիսի պատնէշ մը հաւանօրէն երբեք գոյութիւն ունեցած չէ. որովհետեւ հոս պետք պիտի ըլլար նոյնը գրեթէ անմատչելի լեռնագլուխներէս անցընել: Գարձեալ, ինչպէս մատնանիշ եղած է², Պետութեան այս ծագը՝ քաղաքական հանգամանքները բոլորովին տարբեր էին Գերմանիոյ կամ Նումիգիոյ նահանգաց հանգամանքներէն: Հայաստան միշտ տեսականօրէն, եւ ընդհանրապէս նաեւ իրականօրէն, Հռոմի ենթակարգեալ պետութիւն մըն էր, արգելակի (tampon, Puffer) դեր մը կատարելով Հռոմի եւ Պարսկաստանի միջեւ. հռոմէական զօրագնդեր նոյն իսկ այլեւայլ ապրամագիտական կէտեր բռնած կը պահէին հոն (արձ. թ. 407 եւն). եւ կեսարներու հպատակած

¹ Այս մասին ամենալաւ ուսումնասիրութիւնն է Yorque, Roman roads and defences on the upper Euphrates (ի „The geographical Journal“, VIII, 1896, p. 470 ff.

² Yorque, անդ, էջ 472:

Երկիրն իրականութեան մէջ չէր աւարտեր այն աշխարհաբաժնով՝ զոր կը կառավարէր Ապպադոսկիոյ նուիրակը: Հաւանական է որ շատացան այս երկրիս մէջ հաստատելով բերդակներու շարք մը, որոնք լեռանց անցքերուն կը հսկէին, ինչպէս որ Արաբիոյ մէջ անապատի եզերքին վրայ աստիճանաբար զետեղուեցան պահակերոցներ: Այս երկու իրարմէ այնպէս տարբեր աշխարհներուս մէջ ալ պաշտպանողական անհրաժեշտ պէտքերը միեւնոյն էին. ընդարձակած աւալ անապատներն՝ ինչպէս նաեւ բարձրաբերձ լեռնաշղթաները բանակ մը չի կրնար անցնիլ՝ առանց անհրաժեշտօրէն կապուած ըլլալու որոշ ուղեգծերու. եւ այն արահետներն՝ որ ջրավայր-կէտերն իրարու կը կապեն, կը նմանին կապաններուն: Թերեւս պիտի կարենանք յետոյ ամբուլթեանց այս գծին քանի մը մնացորդները մատնանշել:

Բարձր դարատափէս՝ որմէ առած է Չարդակու-Բէլ իւր անունը¹, բարձրակէտին չհասած՝ նոր շինուած վաճառականական խճուղին կը թողու հին ճամբան, որ կ'իջնայ հեղեղատ մը եւ այնուհետեւ կ'ելլէ առուակի մ'երկայնքէն: Այն կէտին մօտ, ուր ճամբան հեղեղատը կը մտնէ, մեծածաւալ շինութեան մ'աւերակները կան, որոնց համար ըսին թէ հին կարաւանատան (քարուանսարայ) մը մնացորդներն ըլլան՝ «Է-ի-ի-ի-ն»². Բայց այս երկրիս մէջ յաճախ այսպէս կ'որակեն այն աւերակներն՝ որոնց ինչ ըլլալն իրենց անծանօթ է. եւ ինձի կ'երեւայ թէ այն տեղն՝ ուր այս աւերած շինութիւնը կանգնած էր, աւելի կը ցուցնէ անոր զինուորական ծագում ունեցած ըլլալը: Այս ենթադրութիւնը հաստատութիւն մ'առաւ անդրազոյն գիւտով մը:

¹ Տճկ. Է-ր-ը-ի (Է-ր-ի-ի) — ասմալի, դարատափ, եւ հովանոց, պատշգամ. — Բէլ (ԴԵԼ)՝ քամակ, մէջք:

Քարքարուտ ու անբեր սարահարթ մը կտրելէ անցնելէ ետքը՝ ճամբան կը մտնէ Չարդակլուտի կիրճը (Չարդակլու-Քողազ), որուն դալարապտոյտ փողանցքին կը հետեւի անկէ ետքը մինչեւ գրեթէ Երզնկայի մօտ: Մուտքին մօտը կիրճը գրեթէ փակած է սարակ մը, որուն բոլորը կը պատի խճուղին: Այս բլրակին գլուխը պսակուած էր աւերակներով՝ նման անոնց, զոր վերը նշմարեցինք (Պտկ.): Պատերը շինուած են կանոնաւոր կոփուած վիմաքարերով եւ իրարու զօդուած շաղախով մը՝ որ կազմուած էր կրէ ու մանրախճէ. եւ մէկ մետրէ աւելի թանձրութիւն ունէին: Արմերուն մէկ մասը կանգուն կեցած էր դէպ ի հարաւակողմը. եւ հիմերու գծով՝ առանց գծուարութեան ընդհանուր յատակագիծը կը ճանշցուէր: Հիմերը ուղղանկիւն մը կը գծէին՝ իբր յիսուն մետր երկայնութեամբ եւ իբր քսան մետր լայնութեամբ. եւ հարաւ-արեւելեան անկիւնը կը զանազանուէին արտակարկառ բոլորաձեւ մարտկոցի մը հետքերը: Բլրոյն ամբողջ վերնամասը գրաւուած էր ուրիշ շինուածոց մնացորդներով, որոնք շրջափակ պարսպով մը շրջապատուած էին. եւ իւր կողերը ծածկուած էին պարսպորմերէն թափթփած քարերու փլատակներով եւ կղմինարներու բազմակոյտ բեկորներով:

Աւերակացս դիրքն ու յօրինուածութիւնը կ'երեւայ կը հաստատեն թէ Երիզայի (Երզնկայի) ուղեգծին վրայ հաստատուած պահապարդի մը փլատակներն ըլլան: Բայց որոնք շինած են այս պահակերոցը. Հռոմայեցիք թէ Քիւլանդացիք եւ կամ թէ Սելջուկեանք: Միայն պեղումները, զորոնք չէինք կրնար կատարել, կրնան այս կէտս որոշել: Բայց քիչ հաւանական է թէ ասոր ծագումը մինչեւ Աեսարներու շրջանը հանել պէտք ըլլայ: Սահմանազլուխը կ'անցնէր հաւանօրէն այս կէտիս աւելի ասդիէն, եւ պատասպարուած էր այն բարձր

կատարներով՝ զորոնք մենք նոր կտրեցինք անցանք։ Քայց երբ 441ին Թէոդոս եւ Արշակ¹ մէջերնին բաժնեցին Հայաստանը, Եփրատայ ամբողջ վերնահովիտը հռոմէական բաժնին ինկաւ. եւ Յուստինիանու օրով այս մասին պաշտպանութիւնն ապահովեցաւ կարեւոր ամբութեանց ամբողջ դրութեամբ մը²։ Թերեւս ուղմական այն մեծամեծ շինութեանց հետ կապելու ենք նաեւ Չարդակլուսի վրայ դղեկի մը հիմնարկութիւնը, որ առաջնակարգ կարեւորութիւն ունեցող հաղորդակցութեան ճամբայ մը կը փակէր։

Այս աւերակներէն անդին՝ Չարդակլուս-Սուն խորամուկ կ'ըլլայ անձուկ հեղեղատ մը՝ խտտաքարի բարձրաբերձ զառիթափներու մէջ։ Ուղեւը կը թաւալի եւ փրփրալից վազք կ'առնու խարակներու միջէն՝ որոնք իւր անկողինը կը խափանեն։ Խճուղին ձախ ափէն կ'երթայ, տեղ տեղ անցնելու համար՝ քարաժայռի մը ցուկած անկիւնները կտրելով։ Կենդանի էակ մը շկայ այս վայրենի ու շարահամբաւ կրճին մէջ։ Անտեսանելի գիւղերը ցրուած են անտառներէն անդին լեռնաբերձ սարահարթներու վրայ. բայց երբեմն հոն բնակող Քրդերը կ'իջնան պողոտան՝ անպաշտպան ուղեւորը կողոպտելու համար։

1 | Հեղինակը դրած է այսպէս, սակայն թէ՛ արքային անունը եւ թէ՛ 441 թուականը Հայաստանի բաժանման մասին անճիշտ են եւ շփոթութեան մ'արդիւնք, որոնց մասին հոս պէտք չկայ երկարել։ Ծ. Թ.]

2 | Պրոկոպ., Վասն Շին. Գ. 3-4։ Յիշենք յատկապէս էջ 251, 6 (հրատ. Բոն)՝ ἐν τοῖς στενωποῖς ὄχυράματα τε ἀξιοθέατα καὶ στρατιωτῶν φρουρὰν ἀνανταγώνιστα καταστησάμενος ἄββατον βάρβαροις τὴν χώραν διεπράξατο παρτάρασιον εἶναι (յանձուկս երեւելի ամբութիւններ եւ քորաց անվանդելի դղեակ կառուցանելով՝ երկիրը բարբարոսներուն համար բոլորովին անանցանելի ըրաւ)։

Արժին մուտքէն մէկուկէս ժամ ետքը՝ կիրճը կ'ընդարձակուի քիչ մը, եւ ցորենի նեղ դաշտերը յստակը կը գրաւեն: Ըստ յոռի իջեւան մը (կարաւանատուն) հաստատուած է, զոր կը տնտեսէ ժանտազէմ կերպարանօք պանդոկապետ մը (Խաւճը), որուն համար կ'ըսուի թէ համախոհ է շրջակայից ամէն աւազակներուն հետ: Իւր պարէնը կը հայթայթէ Բէշ-գէօղ (Հինգ-սին) գիւղէն՝ որ հիւսիսակողմը զօղած է անտառներու մէջ Չարգակ-լու-Սուի մէկ օժանդակին վրայ: Յետոյ կրկին կը սկսին կապանն ու վերելքը: Յիսուն վայրկեան աւելի հեռուն՝ հեղեղատին լայնացած մէկ տեղը՝ խճուղոյն եզերքը դարձեալ կանգնած է աւերակ շինութիւն մը (Պակ.): Շինուած է անկանոն որմաքարերով, որոնք զօգուած են շաղախով մը որ կազմուած է՝ ձեռնուած աղիւսը մանրախճի հետ խառնելով: Ար զանազաններ կրկու մեծ սրահներ իրարու հետ միացած անցքով մը, եւ յարակից մասունք՝ որոնք մասամբ ծածկուած են բարձունքներէն փլած թափած հողերով: Մեզի բսին դարձեալ թէ ասոնք Աբ-ժ-ժըլ-անուն հին կարաւանատան մը մնացորդներ բլլան. եւ այս անգամ աւանդութիւնը հաւանօրէն ճշմարտապատում է: Այս աւերակաց շինութեան կերպն ու բոլորովին անուազմագիտական գիւրքը շատ տարբեր են քիչ մը վերը նշանակուած ենթադրեալ դպեկէն, եւ շինութեան աւելի նորագոյն թուական մը ցուցնել կ'երեւան:

Տակաւին մէկուկէս ժամ ալ կը ճամբորդենք հեղեղատին ու քարաժայռին միջեւ, յետոյ սարակող մ'անցնելէն ետքը՝ յանկարծ մեր աչքին առջեւ կը պարզուի Երզնկայի ամբողջ դաշտը: Անսահման կը փռուի ու կը տարածուի դաշտավայրը մինչեւ քաղաքը, որուն անորոշ ստուերագիծը արեւելեան կողման մշուշներուն մէջ կարծես կը ծփար, եւ հեռուն՝ կը խառնուի լեռանց ստորոտ-

ներուն հետ: Ասոնց՝ զուգահեռական պատուածքներով ակօսուած կողերուն վրայ՝ կը սողային գանգրաձեւ ամպերը. իսկ անոնցմէ վեր՝ լեռանց ուղղաբերձ եւ ձիւնապատ սարածագերը շողշողուն շրջատեսարան մը կը կազմէին: Հագիւ կը դանազանուէր այն փետեկուածք, որուն միջէն Եփրատ իրեն ելք մը գտած է դէպ ի հարաւ. եւ այս բնդարձակ ձուածեւ տափարակը պարփակ աւազանի մը կը նմանէր: Ապահովապէս երբեմն խաղաղիկ մեծ լիճ մ'եղած է, եւ լիսփին հարթ հաւասար գետինը լի է տակաւին ողորկուն խճերով: Ուղեներն որ ամէն կողմերէ՝ խորխորատուած բարձունքներէ կ'իջնան, ըստ հաճոյս մանուածապատ կը գալարին՝ մեծատարած եւ անրնդհատ տեղափոխուող անկողնոյ մը մէջ. եւ իրենց բերած սկահողերը՝ որոնք հողմահարածեւ կը ծաւալին, բնդարձակ կարկառներու (moraine) կը նմանին: Սակայն այս ջրատու թիւնները բեղմնաւոր կ'ընեն հողը՝ զոր իրենք կազմած են կամաց կամաց: Այս հողը զարմանալի արգաւանդութիւն մ'ունի՝ յորգառատ բերելով արմտիք, բնդեղէններ ու պտուղներ: Արտերու շուրջը՝ որոնք փշալից մացառներով ցանկապատուած են, դաշտին մէջ ազատօրէն սփռուած անդեպք եւ ձիւր առատ ճարակ կը գտնեն: Մրգաստանները տեղ տեղ այնպէս խիտ առ խիտ են՝ որ հեռուէն կարծես անտառ մ'ըլլան. եւ հողակերտ գիւղերը կը շրջապատուին դալարագեղ դօտուով մը պարտէզներու՝ որոնք պարփակուած են արեւու մէջ չորցուած աղիւսի պատերով: Երկրին բարձրութեան (1400 մետր) ալ հակառակ՝ այս պատսպարեալ խորագաշտիս մէջ պտղատու ծառերն այնչափ քաջաբեր են՝ որչափ են Եւրոպիոյ ու Ամասիոյ մէջ. եւ ամէնէն աւելի կը սքանչանանք վեհօրէն փթթած բնկուզիներուն վրայ, որոնք հրուշակի (շէլէ) անհամար կարկանդակներ պատրաստելու կը նպաստեն տանտիկնանց:

Երեք ժամ ձիավարելով միաձարթ դաշտին մեջէն՝ Չ---ր---ը--- և Ջ---ը--- գիւղերուն վրայէն՝ հասանք Երզնկայ՝

§ 81. Երզնկայի Սասաղ (քարտէս ԻԵ—ԻԶ)։ — Երզնկայի (թրք. Erzincân) կուսակալին՝ Հաջի Ասաֆ փաշայի՝ մեզի ցուցուցած իշխանական ասպնջականութիւնը պատճառ եղաւ ժամանակ մը հոս հանդիստ առնլու։ Այս լաւ շինուած քաղաքը, որ քսանէ մինչեւ երեսուն հազար բնակիչ ունի, իւր ներկայ կարեւորութիւնը պարտական է գլխաւորաբար հզօր զօրանխատ մ'ըլլալուն։ Աերջին ուս-թրքական պատերազմէն ի վեր հոս կը նստի Գ Ջօրաբանակին հրամատարը (Տ---ը)։ և բազմաթիւ նորակառոյց ձերմակ շինութիւններ, ընդարձակ զօրանոցներ, հիւանդանոց, ակմրանոց (casino), ինչպէս նաեւ գեղեցիկ նորաշէն վարչատուն մը՝ կը ցուցնեն այն բարձրագիւր աստիճանը, զոր այս կենդրոնավայրը ստացած է զինուորական ու քաղաքական դասակարգութեան մէջ։ Սակայն իւր այս նոր բարգաւաճումը՝ ինչպէս սովորաբար կ'ըլլայ, անհետ ըրած է իւր անցելոյն վերջին հետքերն ալ։ Բան մը մնացած չէ նոյն իսկ այն հին բերդէն, ուր 1866ին Տէլլըր տեսած էր կուֆի արձանագրութիւններ և քրիստոնէական քանդակներ¹։ Միւս կողմանէ Երզնկայ այնչափ անգամ կործանած ու վերաշինուած է², որ

¹ Տէլլըր՝ անդ, էջ 354։

² Մոնկոլները կործանեցին քաղաքս 1242ին (Ռիտաէր, Աշխ. ժ. 770)։ իւր պարիսպները վերաշինեց Ճ.Պ. դարու վերջերը Աւա-էդ-Գին Ապ-Աուրադ (Աուսա), և շինուեցան քաջակոփ իրարու յարմարած քարերու պատերով (Le Strange, Lands etc., p. 118)։ Մըշաֆ հին քարեր այն ասէն որսերու մէջ թաղուած ըլլալու են։ — Աերջին ազէան՝ զոր ունեցաւ Երզնկայ, 1667 տարւոյ 28 Յուլիսի երկրաշարժն էր, որ քաղաքին կէսը կործանեց։

ամենեւին շենք կրնար յուսալ հողի երեսին վրայ հին յիշատակարաններ գտնել:

Սակայն կուսակալը մեղի յուցընել տուաւ քանի մը հետաքրքրական բեկորներ, որոնց գործածութեան նախնական նպատակը մեղի անձանօթ կը մնայ: Ասոնք խեցեղէն (թրճակաւ) դրաններ են՝ ծայրը բոլորած, վարի կողմը կտարուած, եւ այժմ իբր 50 սմ բարձրութեամբ (Պակ.): Երեսին վրայ սփռուած են ցանուցիւր սյտուցիկ փշակիներ եւ մասամբ պատուած կապոյտ կամ սեւ արծնով: Մօտերս քաղաքին մօտ ասոնցմէ այնչափ հանած են հողէ որ «հարիւր սայլ» կրնար բեռնաւարուիլ խեցեղործութեան այս հասակատորներով¹:

Այս առեղծուածային կտորներէն զատ՝ Երզնկայի մէջ իբրեւ հնութիւն գտանք միայն պղնձէ արձանիկ մը, որ անտարակոյս զՊերսեւս կը ներկայացընէ, եւ որ՝ ինչպէս ըսին՝ Սատաղայէ հոս բերուած էր². եւ յունարէն տապանադիր մը տիկնոջ մը (Χατοῦνα, Խ-Γ--Ն) ԺՊ գարուն, որ «երկցկին» էր (արձ. Թ. 407): Այսօր աննշան է քաղաքիս յունագրաւան հասարակութիւնը:

Տեղւոյս հնախօսական ազգատութիւնն անմիաբան է ասոր հետ կապուած յիշատակներուն փառաց հետ: Երզնկայ՝ հին Երէշ կամ Երէշ է, ուր կը բարձրանար Հայաստանի ամենէն հռչակաւոր սրբարաններէն մին, այսինքն՝ Անահիտ պարսիկ գիցուհւոյն մեհեանը, որուն նուիրուած էր ամբողջ շրջակայ երկիրը՝ Ելէշէ-ց գաւառը

¹ Թուրքերը կը կարծէին թէ ասոնք Անահիտ հեթանոսական հին պաշտամանէ մնացած փալտներ էին (ասոնի անդամ, հմմտ. Luc., De dea Syria, 16): բոլոր մեր բոլորովին համոզուած շենք այս մեկնութեան ճշգրտութեան մասին:

² Շուկան գնուած՝ վաճառականէ մը, այսօր Cinquantenaire թանգարանին մէջ (կահադիր Թ. A966): հրատարակուած է «Revue archéol.» 1905, I, p. 189:

չեղաւ. այլ կր կախուէր Ղեւոնդուպոյսէ (Յուստինիանուպոյիս) որ երկու օրւան ճամբայ աւելի գէպ ի արեւելք էր՝ Բզանայ (Բիզանա) մօտ¹: Ուստի բիւզանդական շրջանին սկիզբը՝ երկրորդականարդ գիւղաւան մը միայն էր. բայց արդէն ժ գարուն նշանաւոր բերդ մ'եղած էր Աեւշէնէ (Κελεσινη) անուամբ՝ որ համառօտութիւն մըն է Ելիշէ-ց ('Αχιλεια) անուան, շրջապատուած ընդարձակ արուարձաններով. եւ իւր եպիսկոպոսը բարձրացաւ մետրոպոլիտութեան աստիճանին²: Երդնկայի շարգացումը շարունակուեցաւ մահմետական տիրապետութեան ատեն ալ, երբ Աարնէ Սերաստիա դացող ուղեգիծը՝ որուն վրայ կ'իյնար, հազորդակցութեան առաջնակարգ ճամբայ մ'եղաւ³:

Եթէ լիովին անհետացած են հեթանոսական շրջանին յիշատակարանները, հին Երիզայի նիստը տակաւին հզօրապէս կը խօսի՝ երեւակայութեան ազդելով: Ստոյգ է որ Եփրատ հօս չունի այն հոյակապ տեսիլը՝ զոր ունի երբ կը կտրէ կ'անցնի Տաւրոսը: Հօս երկու բազկի բաժնուած է, որուն ամենալայնն ալ հարիւր մետրի չի հասնիր, եւ որուն վրայ ձգուած են Աարնոյ ուղեգծին երկաթի կամուրջները: Այս տեղ չի հասկրցուիր այն սնտիական պաշտօնասիրութիւնը՝ զոր կ'ազդէր գետայն ժամանակ, երբ իբր աստուածեղէն կը պաշ-

¹ Յուստինիանուպոլսոյ եպիսկոպոսները կ'անուն երբեմն յորջորջանքս «եպիսկոպոս Յուստինիանուպոլսոյ, տյսինքն գաւառին Եկեղեցոյն (ἐπισκόπος Ἰουστινιανοπόλεως ἤγουν τοῦ κλίματος Ἐκκλησιῶν)» [ուր 'Εκκλησιῶν = Ելիշէ-ց, փխ. յունական «Ալիլիսենէ»]: շմտ. Lequien, Or. Christ. I, p. 436.

² շմտ. Gelzer, Notitiae episcopatum (Abb. d. Bayer. Akad. d. Wiss. XXI), 1900, p. 580 ff. շմտ. էջ 641: — Աարճ ժամանակամիջոց մը մինչեւ քսաներեւեկ օգնական եպիսկոպոսներ ունեցած է:

³ La Strange, անդ. էջ 147, 231:

տուէր, որ իւր զայրոյթը կը յայտնէր յանկարծահոս եւ բանագոյն գետայարոյցքներով, եւ իւր մարդասիրութիւնը՝ իւր կոհակաց խաղաղագնացութեամբն. եւ ուր անձկութեամբ կը զննէին բարեբաստիկ կամ չարագուշակ նախագուշակութիւններ ընելու համար՝ իւր յորձանաց երեւոյթը¹։ Բայց եթէ հոս Եփրատ այն խորին տպաւորութիւնը չի ազդեր՝ զոր զգացած են ամէնքն որ այցելած են անոր ամուսնքը², հոս զինքը շնչապատող ամբողջ բնութիւնն է դիւթողը։ Բեղմնաւոր դաշտիս կլիման եղած ըլլալու է մարդիկն այն ան-

1 Պղտ. 10. Վարբ Ղուկուղլ. 24. Հմմտ. „Rev. archéol.“ անդ։ — Եփրատայ պաշտօնը հին Բարեկրօնի ժամանակներէն է (Scheil. Ի Rev. hist. religions, 1897, p. 204)։ Բաց ի Պղտ. տարբոսի բնագրէն՝ նաեւ ուրիշ բազմութիւն վկայութիւններ կ'ապացուցանեն թէ այս պաշտօնը տակաւին ընդհանուր էր Հռոմայեցւոց ժամանակ ալ։ Գետէն անցնելու ատեն կը կատարուէին սքանչելիքներ ու զօհեր, երբ կրասոս (Obsequens c. 124. Պղտ. տարբոս, Վարբ կրաս. 19) կամ Տրդատ (Տակիրտոս, Տարեգ. 2, 36) գետէն կ'անցնէին։ — Կոմագենեայ մէջ Եփրատ քանդակուած է քարաժայռի մը վրայ՝ որ կ'իշխէ անոր հովտի. (Chabot, Ի Mém. de la Soc. des antiquaires de France, LXII, 1903, p. 116)։ — Խճանկար մը արձանագրութեամբս՝ «Արքայ դեռ Եփրատ» (Βασιλεύς ποταμὸς Ἐυφράτης, Ի Byz. Zeitschr. 1905, p. 58). — Բաց աստի դեռերու յարգութիւնն ընդհանուր էր թէ՛ Պոնտոսի եւ թէ՛ նաեւ Հայաստանի մէջ. Հմմտ. վերը՝ Բ, § 9։

2 Հմմտ. Hogarth, A Wandering Scholar in the Levant. Lond. 1896, կը գրէ՝ Ամէնքնիս ալ չիւ մը տխուր էինք որ այսուհետեւ անլ պիտի չճամբորդէինք Եփրատայ ամբողջութեամբ։ Անդադար շարժուին ջուր մը նորանշան ազդեցիկ տպաւորութիւն մը կ'ընէ երեւակայութեան վրայ։ Գիտակից էինք թէ պատճառ մը կար՝ կիսով չափ ըմբռնուած, որով վերջին երկու ամսոց մէջ մշ մէկ ուղեգնացութիւն բոլորովին զժուարին եղած էր, ցորչափ մեր ճամբան կ'երթար Մեծ Գետոյս քովէն՝ զանի տեսնելով եւ անոր ձայնը լսելով։

պարկեշտ ծիօից հրապուրողը, որոնք Ստրաբոնի դարմանքը կը շարժէին: Իւր լերանց բարձր հողմարդեւելով պատասպարուած՝ ձմեռը չի կրեր սառնասառոյց ցուրտ մը, ինչպէս կը կրէ զինքը շրջապատող խստաշունչ երկիրը: Գարնան սկիզբն իսկ այս խորունկ կոնքադաշտը՝ որուն բոլորը շրջանակ կը կազմեն ձիւներն ու սառոյցները, բարեխառնութիւնը կը ջերմանայ, եւ կեանքը կը սկսի եռալ: Ամառն օդը հոս հեղձուցիչ կ'ըլլայ. եւ շնիկ աստեղ օրերուն՝ անձրեւայդդքները դրեթէ առօրեայ են. եւ այս անգրաւ՝ տաք ու խոնաւ միանգամայն՝ ջերմանոցին մէջ բուսականութիւնը կ'աճի այնպիսի լիառատ ծոխութեամբ որ դարմանալի է այսչափ բարձրութեան վրայ: Աւելի յարմարագոյն ասեղ մը չէր կրնար մտածուիլ բնութեան «Մեծ Մօր», զգայասէր պաշտաման համար:

Այս օրս՝ բան մը չի յիշեցրներ անցեալը՝ օսմանեան զօրաց բանակատեղւոյս մէջ, որուն փոխուած եղած է Երզնկայ: Բայց շրջակայքը, մարգագետիններուն վրայ՝ զորոնք կ'ուռոգէ դարալիբ հոսող գետը, այսօր ալ՝ ինչպէս Ղուկուղղոսի օրով՝ ազատօրէն կը ճարակին գոմէշներու նախիրները¹, որոնք Անահտի՝ Յլապահ² գիցուհւոյն նուիրուած էին:

Յունիս 5ին թողուցինք Երզնկան եւ ճամբայ ելանք դէպ ի հիւսիս՝ ծովեզր հասնելու համար դրեթէ ուղիղ գծով: Այլեւայլ անյաջող փորձե-

¹ Պղտատարբոս, անդ:

² [Սյուպէս պատշաճ տեսանք փոխադրել Tauropole յորջորջանքը, լատ. Tauropolos, բուն յն. Ταυροπόλη (ար. Ταυροπόλος), զոր Յոյնք կու տային Արտեմեայ, ըստ ոմանց որովհետեւ ջլագահով կը պատուէր, բայց ըստ այլոց հաւանականագոյնս՝ իրրեւ. Տ-բի-ց-ո-ց քով պաշտուած, որ այն երկիրները պատելով կը պաշտպանէր. ըստ այլ մեկնութեան՝ իրր ջլագնաց. նսեւ՝ ցուլ որսացող:]

րէն ետքը՝ ճարտարագէտ սպայք յաջողած են Սիպիկոր-Տաղը (Sipikor-) կարելով անցընել ուազմական ուղի մը, որ Երզնկան Տրապիզոնի հետ կը կապէ: Սակայն նոյն իսկ այս խճուղոյն կառուցուելէն ետքն ալ՝ լեռնանցքը կառքերու համար անանցանելի է ձմեռուան ամիսները. եւ թէպէտ եղանակն արդէն յառաջացած էր՝ մեր սպայերը մեծ դժուարութեամբ միայն կրցան անցնիլ: Առանց պատճառի չէր որ Հռոմայեցիք իբր սահմանազուխ ընտրեցին լեռնաշղթայ մը, որուն նոյն իսկ նուազ բարձր պարանոցները գրեթէ ամբողջ տարին անանցանելի են որեւէ բանակի համար:

Ճամբան թնդանօթածիգ զօրաց ընդարձակ գօրանոցներու քովէն անցնելէն ետքը՝ կը հասնի լեռանց ստորոտն Ա--ԷԵՐ (Wasgird «Ասասկակերա») գիւղը, ուր կան մեծ գործատներ. յետոյ կը բարձրանայ կրճի մը վերելը, ուսկից ուղիս մը՝ Ռումսէրայ-Սու՝ ջրվէժներով կը դահալիժի դաշտին մէջ. եւ այնուհետեւ կ'անցնի ճամբան խոպան սարահարթէ մը եւ կ'իջնայ Ռումսէրայի շէնը, որ կանաչագեղ ովասիս մըն է երաշտին բարձանց մէջ պարփակուած: Ասկէ շուտով կ'ելլէ դէպ ի Սիպիկորի պարանոցը՝ 225⁽¹⁾ մետր բարձրութեան մէջ: Չիով երկու ժամէն կ'ելլեցուի Ասսկերտէ մինչեւ Ռում-սէրայ, եւ ժամ մ'ալ ասկէ՝ մինչեւ գաթթը:

Երկրին տեսարանը խստագիծ վեհութիւն մ'ունի (Պտկ.): Չորս կողմ ուրիշ բան չենք տեսներ՝ բայց ապաւերկ ու ամայի լեռնագագաթներ, առանց հովանոյ, անձառ ու գրեթէ առանց մամուռոյ: Ամէն մրրկայոյզք հոս իրենց ախօսը դժած են. եւ հեղեղներէ անդադար փորուելով՝ լեռները մերկ կը ցուցընեն իրենց կարմրորակ կողերը, երկաթածիգ պատռուածքներով հերձատուած: Իրենց զառիվայրներու միջէն կը զննենք ուղիսին հոսանքը, որ կ'երթայ ու կ'իջնայ մինչեւ անսահման դաշտա-

վայրը, ուր կ'ընթանայ եւ կը միանայ արծաթի թելի նման երեւոյղ Եփրատի հետ: Հաղար մետրէ աւելի բարձրութենէ մը՝ կ'իշխենք Երզնկայի եւ Եկեղեցաց գաւառի կանաչագեղ դաշտերուն վրայ (Պտկ.): Իսկ անդին՝ որչափ կ'ելլենք, ձիւնակոյտերը կը կուտակին ետեւէ ետեւ յաջորդող լեռնաշղթաներու վրայ՝ որոնք դէպ ի հարաւ հորիզոնը կը փակեն. եւ երբ դազաթնածագը կը հասնինք՝ յանկարծական հեռատեսարան մը դէպ ի հիւսիս կը պարզէ մեր առջեւ համայնապատկեր մը ուրիշ ձիւնակոյտներու այն լեռնակատարներուն վրայ, որոնք աստիճանաձեւ կարգ կարգ կը բարձրանան՝ անկարգօրէն կուտակադէղ քարաժայռերու ետեւը, — ամբողջ ծովեզերեայ լեռնազանգուածը, ուսկից վեց օր պիտի ճամբօրդենք մինչեւ որ ծով հասնինք:

Հիւսիսակողման զառիվայրի վրայ էջքը շատ դժնդակ է. եւ հոս ստիպուած էին ճարտարապետները նշանաւոր արուեստակերտ շինութեանց դիմել: Խճուղին՝ յեցած երկարաձիգ նեցուկ-օրմերու վրայ, գահալէժ զառիթափէն վար կ'իջնայ անվերջ գալարապտոյտներով: Իբր երկու ժամէ կը հասնինք Սիպիկոր՝ լեռնանցքէն եօթհարիւր մետր վար: Գիւղն ունի իբր հարիւր տուն՝ շրջապատուած ցորենի քանի մ'արտերով: Յետոյ կը հետեւինք ժամու մը չափ՝ դիւրագնաց հովտի մը, ուսկից կ'անցնի մեծ վտակ մը, մինչեւ Բանդուլը գիւղը. եւ ուրիշ ժամէ մ'ալ՝ միշտ իջնալով միեւնոյն հովտին միջէն, կը նշմարենք լեռներու շրջանակի մը մէջ՝ արեւմտեան բլուրներուն վրայ Սատաղ գիւղը եւ հին Սատաղայի աւերած ջրմուղը:

Ժ. Սատաղս եւ Տրապիզոն:

§ 32. Սատաղ (քարտէս ԻԷ): — Սատաղայի աւերակները կը բռնեն տափարակ մը՝ որ

լեռներու ամբիթաթե մը շրջապատուած է¹: Իւր կարեւորութիւնն ստացած է այս տեղս անկէ որ Հռոմայեցիք հոս մշտակայ մեծ բանակատեղի մը հաստատեցին, որ Մելիտենեայ եւ Սամոսատի բանակատեղիներուն հետ միասին՝ կը պահպանէր Եփրատի սահմանազուխը: Գիւրքը բնականէն շատ զօրաւոր չէ, ինչպէս կը նշանակէ արդէն Պրոկոպիոս². եւ այս տեղն ընտրուեցաւ ռազմագիտական ուրիշ պատճառներու համար: Վասն զի կը գտնուի այն տեղը, ուր՝ Տրապիզոնէ մինչեւ Սամոսատ գացող ռազմական ուղին, որ հաղորդակցութիւնները կ'ապահովէր Հայաստանի երկայնութեամբը, կը հասնէր պետութեան սահմանազուխը: Ծովէն պաշարապինդ կ'ըլլար այս տեղը³, երբ տակաւին աւարտած չէին՝ Գոմփոխանու եւ Ներուայ օրով այն մեծ պողոտաները, որոնք Փոքր-Վօրան կը կարէին կ'անցնէին⁴, եւ կը ներէին այնուհետեւ որ դիւրութեամբ ստանայ իւր պաշարեղէնըն եւ զօրավիգներն այն բնդարձակ թերակղզիէն: Այն ատեն երկու ուղիներ զինքը կը կապէին Նիկոպոլոսի հետ (տես վերը՝ Բ, § 28). ուսկից բազմաթիւ ուրիշ ճամբաներ կը ճիւ-

¹ Հմմտ. Պրոկոպ. Պորզմ. Պրո. Բ. 15 (էջ 75, 11 հրատ. Haurgy), Δόφοι πολλοί Σατάλαν τήν πόλιν ἐν πεδίῳ κειμένην κυκλοῦσι (բազմաթիւ լեռնակներ դաշտին մէջ եղող Սասաղա քաղաքը կը շրջապատեն): Հմմտ. յաջորդը:

² Պրոկոպ., Վասն Շին. Գ. 4 (էջ 252, 15 հրատ. Բոն քղք.): Σατάλα πόλις ἐν δαπέδῳ χθαμαλῷ κεῖται, λοφοῖς δὲ πολλοῖς ἀμφ' αὐτὴν ἐπαρσισηκόοισιν ὑποκεῖται, περιβόλον τε αὐτῇ διὰ ταῦτα ἔδει τοῖς ἐπιβουλεύουσιν ἀμηγάρτων ἔλεειν (Սասաղա քաղաքը ցած գետնի վրայ կը գտնուի եւ զինքը շուրջ բոլորող բազմաթիւ լեռնակներուն ներքեւը, որով պէտք էր շրջապատել զինքը թշնամեաց զէմ անվիանդ պարիսպներով):

³ Տակիտոս, Տարեգր. ժԳ, 39: Տես վարը՝ § 34:

⁴ Հմմտ. վերը՝ Բ, § 29:

ղաւորութիւն ամէն ուղղութեամբ: Սատաղայի գիրքը կը յանձնարարէին ուրիշ առաւելութիւններ աւբանակեաղն առատ ջուր ունէր, եւ Եկեղեց գաւառէն կրնար ընդունիլ քաջարներ երկրի Տ'ամէն բերքերը. Սիպիկորի լեռնանցքին բերանին մօտ զետեղուած՝ կ'արգելուր Երիզայի կողմէն հոռմեական հողը մտնելը. եւ Եփրատի ու Ակամփիսիսի (Ճորոխի) բարձրագիր հովիտներուն մօտը գտնուելով՝ ազդեցիկ կերպով կը հսկէր անոնց վրայ. եւ Գայլ գետոյ մեծ գծին մուտքը կը փակէր:

Այս գիրքը գրաւուած եւ ամրացուած ըլլալու է արդէն իսկ Փոքր-Հայոց աշխարհին՝ Պետութեան հետ միացուելու ատեն Աեսպասիանու օրով, եւ թերեւս նոյն իսկ արդէն Ներոնի ժամանակ¹: Հոս ընդունեցաւ Տրայիանոս՝ կաւկասի ու Եւրփինոսի իշխանաց մեծարանքները². եւ անտարակոյս այս ինքնակալն էր որ Գանուբէն այստեղ կանչեց Աղլիւ-րիւ-րիւ ժ. Գ. լէֆլ-նը. եւ որ՝ իւր Հայաստանի արշաւանքէն ետքը՝ նոյնը հաստատեց Սատաղայի մէջ, ուր այն լեռէտնի ներկայութիւնը կը նշանակուի իւր յաջորդին՝ Ագրիանու՝ իշխանութենէն սկսեալ³: Այս ատեն կառուցուած ըլլալու են այն

1 Ներոն պահակապաններ գրած էր կարգաւ Սե. ծովու ափանց վրայ (Յովսեպոս, Պարզ. Հր. Բ. 16. 4. Հմմտ. von Domaszewski, ի „Rhein. Mus.“ XLVII, 1892, p. 208).

2 Գիտն կասիոս, ԿԸ. 19: — Մարինոս Տերացի՝ որ Տրայիանու եւ Ագրիանոսի օրով կ'ապրէր, որոշած էր Սատաղայի համակարգեալքը: Հմմտ. Պողոմ. Ա. 15. 10:

3 Ագրիանոս, Ընդգէմ Ալան. 3. Հմմտ. CIL, III, 605. Dessau, Inscr. sel. 2288. Ուղեգր. Անա. § 185. 3. — Հաւանորէն Ագրիանոս անձամբ այս զօրագնդերը քննելու եկաւ. Սատաղա 124ին (Dürer, Reisen des Kaiser Hadrian, p. 52). Հմմտ. մեր արձ. Թ. 34 (Բ գարէ), զինուորէ մը՝ որ ի Սատաղա կը զինուորէր (στρατευσάμενος ἐν Σατάλοις). — Կարծուած է թէ Աղլիւ-րիւ-րիւ ժ. Ե լէֆլ-նէն (leg. XV Apollinaris) յառաջ Սատաղա կը նստէր ժ. Զ. Փլւ-րիւ-րիւ լէ-

մեծամեծ մնայուն ամուրները (castra stativa), զորոնք նոյն գունդը պիտի գրաւած պահէր մինչեւ ե գարը¹։ Սատաղայի մէջ լեզէոնս իւր երկարժամանակեայ բնակութեան անթիւ հետքեր թողուցած է՝ աղիւսներու վրայ, որոնք կը կրեն նշանագրումն «Լեգ. Ժե» (Leg. XV) կամ «Լեգ. Ժե Ապ.» (Leg. XV Ap.)։ որոնց բեկորները սփռուած են հողին երեսը։

Ինչպէս սովորաբար կ'ըլլայ՝ բանակատեղւոյն շուրջը քաղաք մը ծնաւ։ բայց յիշատակարան մը չունինք՝ անոր զարգացումը կարգաւ հետաքրննելու համար եւ գնահատելու հռոմէական քաղաքիս աղ-դեցութիւնը, որ պետութեան արեւելեան սահմանաց վրայ աճեցաւ։ Միայն Թէոդոսի Բ. մէկ Օրինագրէն կ'իմանանք² թէ շրջակայից գիւղաբնակները կայսերական հողերու բնդարձակածաւալ տարածութեան մ'արտօնութիւնն ստացած էին ի փոխարէն այլեւայլ պահկութեանց (կոռ.) եւ տուչութեանց (փոխարինական տրոց), որոնցմէ կ'աշխատէին ապառիլ։ Արդէն Պտղոմէոսի օրով³ Սատաղա կարեւոր կենդրոն մըն էր. եւ կանուխէն հոս կազմակերպուեցաւ քրիստոնեայ հասարակութիւն մը, որովհետեւ իւր եկեղեցին եպիսկոպոսներկայացուցիչ մ'ունէր Նիկիոյ ժողովքին մէջ⁴։

Գիւնը (leg. XVI Flavia). բայց ասի անհիմն ենթադրութիւն մըն է։ Հմմտ. Bull. Acad. de Belg. 1895, p. 210 ; Notit. dignit., Or. XXXVIII, 5 եւ 13, p. 83 (Հրտ. Seeck).

¹ Օրէնք Ե, 3 (441ին Յ. Գ.)։

² Պտղոմ. Ե, 6, 20. Հմմտ. Ը, 17, 4. Ա, 15, 10։

⁴ Nomina patrum Nicaen., ed. Gelzer-Cuntz, p. 26. Հմմտ. Harnack, Ausbr. des Christentums, II², p. 167 ff. — Եւստոաասիոսի վկայաբանութեան համեմատ (PG., CXVI, սիւն 470 B, 483 C) քրիստոնեայք արդէն նշանաւոր թիւ մը կը կազմէին Գիոկղեափանոսի ժամանակ. եւ Արաւրակա գիւղաքաղաքն ալ եկեղեցի մ'ունենալու էր այս ժամանակ (սիւն 470 B)։ Տես վերը՝ Բ, § 29։

Սակայն բանակատեղիէն տակաւին մնացած աւերակները Ձ դարէն հնագոյն շէն երեւար: Պարսիկները՝ որ սահմանագլուխն յանկարծ անցած էին, 530ին Սատաղայի պարիսպներուն տակ պարտուեցան¹. բայց խուճապալից տագնապը սաստիկ եղած էր. եւ քաղաքը յեղակարծ յարձակմանէ մ'ապահովելու համար՝ Յուստինիանոս հարթայատակ քանդել տուաւ հին ամրութիւնները, եւ անոնց տեղը նորեր կառոյց «այնչափ բարձր՝ որ կարծես կ'իշխէին շրջակայ լեռանց վրայ»². եւ նոյն համեմատութեամբ ալ՝ թանձր³: Ասոնք բազկացած էին շրջապատ պարսպէ մը (περιβόλος), եւ յառաջապահ դժէ մը (προτειχισμα ἐν χύκλω. նախապարիսպ պատուար շուրջանակի): Երկպատակ ամրութեանցս մէջ եղած անջրպետը՝ Յուստինիանու ժամանակ ի զօրութեան եղած ազգմաշինական սկզբանց համեմատ³՝ յարձակման մ'ատեն իբր ապաստանարան պիտի ծառայէր շինականաց: Ապահովապէս այս բիւզանդեան շինութեանց կը վերաբերի ցայսօր կանգուն կեցած որմերուն մեծ մասը: Ակնարկ մ'արձակել կը բաւէ մեր գծած յատակագծին վրայ (քարտէս Ի)՝ համոզուելու համար որ ասի որեւէ նմանութիւն չունի շին կայսրութեան բանակատեղեաց յատակագծերու հետ, որոնց մէջ անփոփոխ հաստատուն կը տեսնուի քառանկիւնի յօրինուածութիւն մը՝ թէ յԱսիա եւ թէ յԱփրիկէ ու յԵւրոպա⁴: Բաց աստի Պրոկոպիոս բացայայտ կ'ըսէ թէ Յուստինիանոս

¹ Պրոկոպ., Պարզմ. Պրս. Ա. 15:

² Պրոկոպ., Ասան Շին. Գ. 4 (էջ 252 Բոն քղք.):

³ Diehl, l'Afrique byzantine, p. 145.

⁴ Տես յատկապէս Արարիչ սահմանամրութեանց (limes) բանակատեղիներու ծրագրութիւնները Գոմաշեւսիկէ՝ von Domaszewski, Provincia Arabia, II, pl. XLI եւն. շմմ. Strzygowski, Mesebatta 1904, p. 226.

« իտովին անհետ ընել տուաւ »¹ ինչ որ իրմէ յառաջ գոյութիւն ունէր. եւ ինքնակալիս մահուանէն քիչ մ'ետքն ալ քաղաքս աւերեցաւ: Առաջին անգամ Պարսիկներն առին քաղաքս Հերակղի ժամանակ². իսկ բոլորովին կործանուած կ'երեւայ մահմետական առաջին արշաւանաց ժամանակ. իւր անունն ալ չի յիշուիր միջին դարու պատմագիրներէն³: Ասով Ձ. դարու մեծամեծ շինութեանց մնացորդները կրնային պահուիլ այս հեռաւոր մեկուսացած հովտին մեծութեան մէջ:

Արշափ կրնանք դատել այժմ հողին երեսը մնացած տեսանելի աւերակներէն՝ միջնաբերդը կը դրաւէր լեռան տեսակ մը ցուկը, որ՝ արդի գիւղին արեւելակողմը՝ կը յառաջանայ դէպ ի դաշտ՝ երկու վտակներու միջեւ: Այս գահավէժ բարձունքին՝ որ այսօր անբնակ է, ամբողջ գազաթը ծածկուած է վլատակներով. եւ մեր այս տեղ եղած ժամանակ՝ գիւղացւոց կատարած պեղումները՝ հարաւ-արեւելեան անկիւնը նոր երեւան հանած էին կարեւոր շինութիւն մը (Պտկ.): Ասի հաստաբետ վեցանկիւնի աշտարակի մը խարխոխն էր, իբր

¹ Յամփ 607/8 Յ. Բ.: — Սէֆէ—, Պամ. ի Հերակղ. (Թրդմ. զՂ. Մակլէրի, էջ 62. հայ բնագիր տպ. Պեարր. 1879, էջ 77):

² Lequien, Oriens christianus, p. 443 ժողովներու ստորագրութիւններէն Սատաղացի եօթն եպիսկոպոսներ կը դանէ, որոնց վերջինն ըլլայ Փոսի ժամանակ (Թ դար): Բայց ասոնք՝ կը կարծենք թէ անթեմ (in partibus) ախաղոսու որ առաջնորդներ էին՝ որոնք աթոռանիստ չունէին հոն: Նաեւ այն որ «Սատաղացւոց» եպիսկոպոս (ὁ Σατάλων) միշտ կը յիշուի՝ իբր Սերասսիոյ աթոռոյն օգնականներէն մին՝ եպիսկոպոսաց ցանկերուն մէջ, դոնէ մինչեւ ԺԱ դար (Gelzer, Georg. Cypr., p. 13, Nr. 231; p. 66, Nr. 1367, եւ Abh. Bayer. Akad. XXI, 1900, p. 553, Nr. 256 եւն) ամենեւին չ'ապացուցաներ թէ քաղաքս այն ժամանակ ալ սակաւին գոյութիւն ունէր:

ութ մետր լայնութեամբ, Կանոնաւոր կարգածով որմերը շինուած էին չորեքկուսի վիմաքարերու քարաշարքերով՝ փոխն ի փոխն հարթ աղիւսներու շարքերուն հետ, իւրաքանչիւրը բաժնուած կրաղիւսի թանձր խաւով մը: Զառիհակ անցք մը այս մարտկոցէն կը տանէր դէպ ի բլրոյն բարձունքը, որուն եզերքին հետեւելով կ'ընթանար պարիսպը: Յուստինիանոսի բաղձաթիւ շինութեանց մէջ կը տեսնուին բաղձանկիւնի աշտարակներ՝ որոնք յառաջակարկառ ցռկած են, եւ ներքին բերդին հետ կապուած են՝ այս տեղւոյ մարտկոցիս նման՝ փոշանցքով մը¹:

Հիւսիսակողմը՝ պատ մը այս միջնաբերդը կը բաժնէր ուղղակիւնի շրջապարսպէ մը, որ շինուած էր այնպիսի զեանի մը վրայ՝ որ իբր 3 մետր կը խոնարհի կ'իջնայ դէպ ի արեւելք. սակայն այս հակումը յարդարուած էր գարատաններ շինելով: Կրնանք հետեւիլ արտաքին պատուարին՝ որ այսօր արտերու հողերը վեր բռնելու կը ծառայէ, գրեթէ իբր 200 մետր երկայնութեամբ՝ արեւմտեան կողմը եւ 400 մետր՝ հիւսիսային կողմը: Ասի կազմուած է՝ ինչպէս Յուստինիանու շինութեանց մեծագոյն մասին մէջ ալ, միջնագիծ պարսպորմէ մը, որ կ'ընդհատուի ցռկուն չորեքկուսի աշտարակներով, որոնք կողմնակի կը կանգնէին: Անկիւնները պաշտպանուած էին աւելի զօրաւոր մարտկոցներով. եւ հիւսիսակողման մարտկոցը մասամբ մնացած է ցայսօր: Մէջտեղը պարիսպէն անցնող գոգաձեւ ճամբայ մը կը ցուցնէ անտարակոյս այն տեղն՝ ուր հին դուռն էր:

Այս շրջապարսպէն դուրս՝ երկրորդ դարատափ մ'ալ, որ վերէն վար 5 մետր ցած է, շրջա-

¹ Այսպէս Այն-էլ-Բորջ գղեկին մէջ յԱփրիկէ (Diehl, l'Afrique byzantine, p. 219, fig. 50). տես վերը Բ, § 30:

պատուած է ուրիշ պարսպով մը՝ առանց տեսանելի աշտարակներու: Ասիկայ անտարակոյս այն յառաջագահ գիծն է (προτειχισμα, նախապարիսպ), որու մասին կը խօսի Պրոկոպիոս: Ասի հիւսիսային կողմը կ'ընթանայ վտակի մ'երկայնութեամբ, որ պարսպափոսին ջուր մատակարարելու¹ էր:

Որմերու ընդարձակ մասեր տակաւին պատկառելի բարձրութեամբ կանգնած են, մանաւանդ դէպ ի արեւմուտք (Պտկ.)։ բայց կողոպտուած հանուած են զանոնք դրուագող արտաքին երեսներու քարերը. եւ այժմ մնացած է շեղջակուտա՛յ մը մանրաքարերու եւ աղիւսի բեկորներու, որոնք հաստատուն կերպով իրարու զանգուած են զօրուոր շաղխով մը: Անկարելի է ըսել թէ ինչ նպատակի համար էին այն ստորաբաժանմունք, որոնք բանակատեղւոյն ներքսակողմը կալմուած են միջնորմներով: Միայն պեղումները կրնան լուսաւորել այս կէտը. եւ այսօր մշակեալ գետնին խառնուած ամէն տեսակ մնացորդներու բազմութենէն գատելով՝ կրնանք այսպիսի հնախօսական հետազօտութեանց շատ մեծ բարեյաջողութիւն մը նախագուշակել:

Ամենէն հին յիշատակարանը, որ մասամբ պահուած է, անտարակոյս ջրմուղն է, որուն շորս կանգուն կամարները՝ լեռներու վրայ կողմնածիր կանգնած՝ աչքի կը գործեն, երբ գիւղին կը մօտենանք (Պտկ.): Հիւսիսէն դէպ ի հարաւ կու գայ, եւ պաշտօն ունէր քաղաք բերելու այն ջրերը, որ Սատաղ-Չայի հովտին վերնակողմը ակնակալ եղած էին: Հին ճարտարապետութե նէ մնացածն է այժմ միայն խիւարի (քարալեցքի) խորդուբորդ զանգուած մը՝ որ շատ գիմացկուն կրաղիւսով մը

¹ Այս փոսը կամ խրամը (τάφρος) սովորական էր. հմտ. Diehl, անդ, էջ 146:

մասնուցուած է. եւ այս կրաղիւսի բաղադրութեան մէջ մեծ համեմատութեամբ մանրախիճ կայ՝ բայց առանց ձեւուած մանրած աղիւսներու խառնուրդի: Այս կորիզը գրուազող երեօին կօփածոյ քարերը գրեթէ ամբողջովին քակուած հանուած են ԺԹ գարու կիսուն՝ Երզնկայ շինելու համար: Աակայն եւ այնպէս ցոյսօր դիմացած կեցած են կամարները, որոնց արամազիծը հինգ մետրը կ'անցնի. բայց այսուհետեւ արագ կործանման մը գատապարտուած են: Տէյլըր 1866ին եօթը կամարներ տեսած էր փոխանակ շորսի՝ զորոնք մենք կանգուն գտանք¹:

Մենք Սատաղի խեղճ գիւղին մէջ, որ այժմ իբր 150 տուն է, շըրինք այնպիսի դիւս մը՝ որ կարենար համեմատուիլ այն հռչակաւոր պղնձէ զլիսուն հետ, որ այսօր Բրիտանական թանգարանին

¹ Taylor (ի Journal Geogr. Soc. 1868, p. 289) կը գրէ. «Գիւղէն իբր մղն մը դէպ ի հարաւարեւելք՝ կեցած են եօթը կամարներու մացորղներ, որոնք կիսաբոլորակ շինուածք մը կը կազմեն, հաւանօրէն բազնիք մը (²), իրաքանչիւրին հակադիր յենորմերով՝ 11 քայլ հեռու առաջնէն: Տաճկական կառավարութիւնը կը գործածէ հօգտուած հին կօփածոյ քարերը՝ Երզնկայի կառավարչական շինքերը կառուցանելու համար»: — Այս նկարագրութեան կրնանք հետեցընել թէ ջրմուղն աւելի մեծ կորագիծ մը կազմէր այն ժամանակ՝ քան թէ այսօր: Գաղղիոյ Courtois հիւպատոսը, որ Տէյլըրի ընկերացած էր, գժբախտաբար շատացած է հրատարակելով շատ համառօտ տեղեկագրութիւն մը՝ ի «Moniteur», 17 Գեկտ. 1866: — Նաեւ Տուրնըֆոր՝ որ Սատաղէ անդած է, կը նշանակէ (Հար. Բ. էջ 422, տպ. 1718) «Հօփսին ձախ կողմը հին ջրմուղի մը մացորղները բոլորաձեւ կամարներով»: — Տէյլըրէ եւ Կուրտուայէ ետքը՝ կարծենք թէ Yorke (ի The geographical Journal, VIII, 1896, p. 460) միակ աղէ որն է որ Սատաղայի աւերակաց մասին կը խօսի, որոնց այցելած է Հոգարթի (Hogarth) հետ՝ 1894ին:

ձէջ է¹, Հելլենական շրջանին այն գեղեցիկ արուեստակերտը Սատաղա բերուած ըլլալու էր Փոքր Ասիոյ որեւէ մեհենէ մը: Բազմաթիւ հնութիւններ կան տակաւին՝ որոնք կը վկայեն անհետ եղած քաղաքին պերճութեան: Գիւղացի մը յուցուց ինձի խցկան մը ձէջ, ուր կը գիգէ իւր խոզկազնոյ պաշարը, շատ նրբարուեստ միւսին մը՝ կազմուած ոլորագարդերով եւ սաղարթագարդերով, որոնք բոլորովին արեւելեան երեսակայութեամբ մը մանուածապատուած են². խճանկարի ուրիշ մնացորդներ ալ գործածուած են խրճիթի մը կրակետոյր յատակելու: Տան մը ձէջ ծամածոող դիմակ մը (բարձր 0.10 m) գործածուած է իբրեւ աղբիւրի մը բերան. եւ ուրիշ խցիկներու պատերուն ձէջ ազուցուած են հին խոյակներ. եւ գերեզմանոցը կը պարունակէր սեանց բազմաթիւ բներու հատակօտորներ: Արտի մը ձէջ լքուած գեղնկեկ աւազաքարէ մեծ տախտակ մը խորաքանդակ մ'ունէր՝ բայց դժբախտաբար շատ մաշած (Պտկ.): Կը ներկայացընէ թեւաւոր կնոջ մը վերնամասը, գէպ ի յառաջ հակած, որ կը յառաջանար՝ ձախ բազուկը բարձրացուցած. ուստի անտարակոյս Յաղթութիւն (Նիկէ) մը՝ որ արմաւենի մը (յաղթութեան բրաբիոն) բռնած էր: Բերդաքաղաքիս ձէջ բազմաթիւ եղած ըլլալու են Յաղթութեան դիցուհւոյ պաշտօնատէրները:

Գիւղացիները գնելու առաջարկեցին մեզի բազմաթիւ հռոմէական ու բիւզանդական դրամներ. բայց մինչեւ այսօր հաւաքուած արձանագրութեանց թիւը բաւական սահմանափակ է

¹ S. Reinach, Recueil de têtes antiques, pl. 139 եւ էջ 168: Հնութեան թուականին մասին՝ հմտ. Lechat ի «Revue critique», 1903, II, p. 88.

² Հաւանորէն նոյն խճանկարն է՝ զոր Տէլլըր լուսնոյն միջակի ձէջ տեսած էր եւ զոր կը հռչակէ (էջ 288) իբր «հոյակապ նմուշ մը այս գեղեցկագոյն արուեստին»:

(Թ. 384 եւն)։ Սակայն նշանաւոր կէտ մը կայ, որ այս սակաւաթիւ շարքիս քննութենէն երեւան կու գայ. այսինքն թէ՛ ամէն հնագոյն յիշատակարանք լատիներէն են։ Յունական բնագիրները քրիստոնէական են. եւ Յուստինիանոսի ժամանակէն կանուխ շեն երեւար։ Ա՛րեւայ թէ Սատաղա՝ որ կազմուած ու զարգացած էր հռոմէական բանակատեղոյ մը շուրջը, մնացած էր՝ շին կայսրութեան ամբողջ տեւողութեան ժամանակ՝ էապէս լատին քաղաքակրթութեամբ քաղաք մը։ Շատ նկարագրական է կնոջ մը չափական տապանագիրը (արձ. Թ. 389). որ կը յիշեցընէ թէ ինքը Հռոմ ծնած՝ ասպնջական բնակութիւն մը գտած էր Հայաստանի այս երկրին մէջ, ուր մեռած է։ Արձանագիրը կ'ըսէ՝

Roma mihi tellus, genus inde, sed hospita sedes (այսինքն՝ Հռոմ՝ բնաշխարհս. անկէ սերունդս, բայց հոս՝ հիւրընկալու բնականիստս)։

§ 33. Մատաղիկ Տրապիզոն (քարտէս ԻԶ)։
— Սատաղա Տրապիզոնի հետ կապուած էր զինուորական ճամբով մը, որ՝ գոնէ իւր վերջին մասին մէջ՝ ամբողջովին կ'ընթանար արդի խճուղոյն ուղեգծով¹. որովհետեւ Զիգանայ (Զղանայ) կայանին անունը՝ զոր կը յիշէ Անտոնինեայ Ուղեգրութիւնը², ցայսօր մնացած է առանց այլափոխութեան։

Սատաղէ դէպ ի հիւսիս կը հոսի վտակ մը՝ Սատաղ-Չայ, որուն ընթացքն ի վար կ'իջնանք մէկ ժամու չափ։ Ահի՛՛՛՛ շհասած՝ կը ծռի դէպ ի

1 Մեր անցած ժամանակ կ'աշխատէին ասարտելու նոյնը՝ Սատաղայի եւ քէօսէի միջեւ։ Մենք տեղերու դիրքերը ճշգրիտ ծրագրած ենք մինչեւ քէօսէ։ Անկէ անդին մեր քարտէսը միայն ընդհանուր ուղղութիւնը կը ցուցընէ։

2 Ուղեգր. Անտ. § 216. 6։

արեւմուտք եւ կ'երթայ կը թափուի Ալէլիկ-Իր-
մակի մէջ. եւ ճամբան կը թողու նոյնը եւ կը սկսի
ելլել անոր օժանդակներուն մէկուն ամին ի վեր:
Արի՛՛ն զիւզէն քառասուն վայրկեան անդին՝ բար-
ձունքի մը վրայ աւերակաց շեղջակոյս մը, ուր կո-
փածոյ քարերը խառնիխառն թափուած են խե-
ցազորմութեան մնացորդներու հետ, կը ցուցնեն
ասկաին անհետացած շինութեան մը տեղը,
որուն յատակագիծը չի կրնար որոշուիլ: Մեր
առաջնորդն ըսաւ մեզի թէ Սասաղէ մէկ ժամ
հետո՛՛ Զեգնիան (Zégnian) գիւղին մօտը՝ Խւն-
տէրէ՛՛ (խանաձոր) կոչուած տեղ մը իւր անունն
առած է ուրիշ իջեւանէ մը՝ ^{«Է-11-1-Խւն»} (հին
իջեւան), որուն պատերը ասկաին կանգուն կեցած
բլլան: Ըստնք սասոգիւ սելջուկեան կամ օս-
մանեան կարաւանատանց վրատակներն են: Ստոյգ
է անշուշտ թէ Աարնէ դէպ ի Եւզսկիա գացող
կարաւանի ճամբայ մը Սասաղէ կ'անցնէր¹: Սա-
կայն այս աւերած շինութիւններէս մէկ ժամ ան-
դին մեր բրած մէկ գիւան ասոնց ուրիշ նկարագիր
մ'ընծայելու կրնայ առաջնորդել:

Հեղեղատ մը վեր ելլելով՝ շուտով հա-
տանք գագաթնագիծը, ուր դէպ ի աջ կողմը նշմա-
րեցիւք սարակ մը՝ գլուխը բարձր աւերակներով,
որանք խոռուած են, եւ հետուէն աչքը կը
գրուեն (Պակ): Ըստնց՝ այժմ կիսակործան՝ զան-
գուածը սասարայագթ եղած բլլալու էր: Երբեմն
ուզգանկիւնի շինուածք մըն էր՝ իբր 11 մետր եր-
կայն եւ 6 մետր լայն: Արմերը՝ որոնք 11½ մետր
թանձրութիւն ունին, շինուած են անկափ կամ
դէշ քառակուսի տաշած որմաքարերով. աւելի խո-
շոր են՝ զբսի երեսն եւ աւելի մանր՝ ներքին կողմը:

¹ Ըստ հետեւած է Զուրնըֆոր՝ Voyages, t. II (1717), p. 426 ff. Հմմտ. Merlier, Voyage en Perse (դժ. թարգմանութիւնը), 1813, t. II, p. 117.

և զորոնք պինդ կը պահէ առատ շաղախ մը: Բու-
լբարիքն ալ շինութեանց հետքեր կը տեսնուին՝
այժմ մինչև հողին երեսը հարթայատակ եղած.
և կը տեսնուին նոյն իսկ բոլորածեւ պատի մը
հետքերը՝ որ բլրոյն գագաթը կը շրջապատէր:
Արդ այս աշտարակը՝ որ այժմ տակաւին իբր տասն
մտար բարձրութիւն ունի (Պակ.), ապահովապէս
գիտանոց մըն էր՝ որ հարսդ էր յարձակման մը գի-
մարդեւ: Այս գագաթէն տեսարանն անարգել կը
տարածուի մինչև Աւրիկո-Նրմալի հովիտը, սրուն
վրայ կրնայ հսկուիլ մինչև շատ հեռուն: Թէ ար-
գեօք սր ժամանակաշրջանէն է արդի շինուածքը՝
որ միայն չափաւոր ամրութիւն մ'ունի, բնեւ
չենք կրնար: Նոյն իսկ ժեզարուն՝ Տրապիզոնի
Ասմենեանց ժամանակ՝ Վոյլ գետոյ հովիտը ապ-
մագիտական կարեւորութիւն ունենալու էր: Այս
գղեակս անտարակոյս շատ անգամ կործանուած և
գարձեալ վերաշինուած է. որովհետեւ գիրքը
միշտ իւր աստեղութիւններն ունէր: Թերեւս
Յուստինիանու այս երկրի մէջ շինած բերդերէն
մինչ այս տեղը կանգնած էր. և թերեւս անկէ
յառաջ ալ հասակական զորագունդ մը հոս սահ-
մանադրուի կը պահպանէր:

Բրաշտ գոտիվայրի մը երկարածից ելեւէջ-
ներու վրայէն իջանք գարձեալ գէպի Վոյլ գետ,
զոր հոս իւր աղբերական մօտ վերագտանք՝ տաս-
նուերկու օր յառաջ գինքը Վարա-Հիսարէ վար
թողլէն ետքը: Ա--ջ--ի (Aoudjus) և Քէօ-էի
մէջտեղ հովիտն իբր մէկ մղոն լայնութիւն ունի,

1 Հմմտ. Պրոկոպ., Վասն Հին. Գ. 4՝ Καὶ φρού-
ριον Σατάλων οὐ πολλῶ ἄποθεν ἐχυρὸν ἄγαν ἐν χώρῃ
Ὀροσηνῶν (կարգաւ և Ὀροσηνῶν Պարոմ. Ե, 6, 1)
καλουμένην ὀκοδομήσατο. (Ե. Ստատագրացոյցի մէջ շատ հե-
ռու շատ ամուր բերդ մը շինեց Արսենացոյց կոչուած եր-
կրին մէջ):

եւ այս բերրի սկահող գետնին վրայ լիառատ հունձքեր կը հասնին ամէն տեղ՝ ուր միայն չեն գանդաղած սերմանել:

Քէօսէ շինուած է կրճի մը բերանը, ուսկից կ'անցնի Գայլ գետոյ մէկ օժանդակը՝ որ հիւսիս-արեւմտքէն կու գայ: Գերեզմանոցին մէջ՝ որ գիւղին վրայ տիրող բլրոյ մը վրան է, ցուցուցին ինծի «կանդուն քար» մը («Տէնէլէ Բաշ»)։ Կրաքարային սիւն մըն է, զոր ջուրը սպունգի նման ծակծկած է. եւ ապահովապէս հին մղոնաքար մըն էր, բայց արձանագրութիւնը կամ հողի ներքեւ թաղուած էր եւ կամ շէր փորագրուած՝ այլ միայն նկարուած:

Գժուարին է գիտնալ թէ արդեօք՝ ինչպէս սովորաբար կ'ընդունուի, հռոմէական ճամբան Քէօսէէ անդին Գայլ գետոյ հովիտն ի վեր կ'ելէր՝ յետոյ Ակամնիսի հովիտը անցնելու համար¹, եւ վերջապէս նորէն դառնալու՝ հիւսիս-արեւմտեան ուղղութեամբ՝ դէպ ի թէքեէ ու Արդասաւ Անկարելի չէ որ ճամբան՝ փոխանակ այսպէս խոտորուն շրջան մ'ընելու՝ կ'երթար Սատաղ-Չայի հետեւելով մինչեւ անոր գետախառնուէքը Կէլկիդ-Իրմակի հետ. յետոյ՝ արդի խճուղւոյն պէս՝ վեր կ'ելէր Քէօսէի կրճէն. եւ թէ այս գիւղը թերեւս զբաւէ հին Գոմանայի տեղը²: Բայց հին ճամբուն որեւէ

¹ Սովորաբար Domana կայանը կը նոյնացուի Տոմնա (Tomna) տեղւոյն հետ: Բայց այն ատեն ընդունելու է թէ թիւերը վերպական են թէ պեւտինդերեան Տախտակին եւ թէ՛ Ուղեգրութեան մէջ: Երկուքն ալ հեռաւորութիւնը կը դնեն XVIII մղոն, իսկ քէօսէ արդէն իբր 20 քիլոմետր հեռու է Սատաղէ:

² Պատմ. Ե, 6, 20. — Ուղեգր. Անտ. 217, 3. — Պեւտինդ. Տխտ. — Ռաւեննական Աշխարհագր., էջ 74, 15 (հրտ. Parthey). — Իսկ Notit. Dignit. Or. XXXVIII Գոմանայի գղեկին (castellum) մէջ կը դնէ աղեղնաւոր հեծելագօր մը (equites sagittarii). — Կիրեղ իւր վերջին քարտէսին մէջ (թերթ՝ Կարին) ընդունած է այս տեսութիւնը եւ Գոմանան կը նոյնացը՞նէ Քէօսէի հետ:

Հետք մը գտնուած չէ՝ որչափ գիտենք՝ այս լեռներուս մէջ. այնպէս որ յիշատակուած կայաններուն գիրքերն շատ անստոյգ կը մնան: Պեւեփնգերեան Տախտակը՝ Գոմանայէ ետքը կու տայ շարք մ'անուաններ՝ որոնք բոլորովին տարբեր են Ուղեգրութեան տուածներէն. եւ իւր նշանակած ճամբան ծով հասած պիտի ըլլայ՝ ռազմական ուղիէն տարբեր գծով մը: Այսօր ալ Պարսկաստանի կարաւանները յաճախ Տրապիզոն կը հասնին Տաճկական խճուղիէն տարբեր հովիտներէ անցնելով¹:

Այս խճուղին՝ որ նորերս աւարտած է մեծամեծ դժուարութեամբք, թերեւս լաւագոյն շինուածն է այն ամէնէն՝ որոնցմէ անցանք ամբողջ Փոքր Ասիոյ մէջ: Քէսօէէ ետքը կ'ելլէ կապանէ մը վեր, որ պատուած է ծիրանաքարի (պորփիրի) եւ սեւ հատաքարի (կրանիտ) բարձր քառաժայռերով, եւ որոնց ժայռորմերը յաճախ ստիպուած էր կտրել, եւ հաստատուն քարաշէն կամուրջներով կ'անցնի այն գետակներուն վրայէն՝ որոնք բարձունքներէն գահավէժ կը թափին: Երկու ժամ ետքը հասանք ոստիկանաց (շողիլէ) պահականոց մը, որոնք լեռնանցքին ապահովութեան կը հսկեն. եւ անկէ ետքը՝ կտրելով անտառներու միջէն՝ անցանք Քէսօէ-Տաղի լեռնագլուխը. եւ միւս զառիվայրին վրայ՝ կրկին հասանք պողոտային, որ ստիպուած է երկար մանուածապատներով իջնալ սաստիկ զառիթափ սարաւանդին վրայէն: Ասկէ ետքը լեռան կողին կառչած կը հետեւի դարափներու մէջ շատ խորունկէն հոսող ուղիւ մ'ընթացքին մինչեւ Գէրէլլէ (Gerekly)՝ որ տեղը այս ուղիւր կը խառնուի աւելի մեծ գետակի մը հետ: Արժը կը լայնանայ եւ քանի մը մշակեալ դաշտեր կը տեսնուին ասդին անդին:

¹ Սուսեւայի կամ Քուաթ-Տաղի վրայէն. հմտ. Wilson, Handbook, p. 206 ff.

Անցնելով Պիլաչմետ (Pilachmet) գիւղը՝ որ իջեւան (խան) մ'ունի, կը հասնինք Քարսիստէսի (Խարշուտ-Իրմակի) հովիտը եւ Կարնոյ խճուղին՝ թեքեէէ կէս մղոն յոռաջ: Եթէ քէօսէ՝ Գոմանէ, այն ատեն Սէփիս (Sedissa) կայանը՝ զոր Ուղեգրութիւնը¹ Գոմանայէ XXIV մղոն հեռու կը դնէ, անհրաժեշտաբար գտնուելու էր թեքեէի շրջակայքն. եւ որովհետեւ Սեգիսա Պոնտոսի սահմանազիտուն վրան էր՝ կրնայ ասկէ հետեւցուիլ թէ նոյն սահմանազիտիսը կը նշանակուէր Քարսիստէսի (Խարշուտի) վերին ընթացքովը: Գիւղը՝ որ գետոյն վրայ տիրող ապառաժեայ հրուանդանի մը վրայ խոնուած է, հեռուէն ժայռեւոր բարձր բերդի մը կը նմանի: Այս գրից հին ժամանակի կարեւորութիւնը կը ցուցնեն՝ հին դամբան մը ճամբուն եզերքը, եւ միւս ամիին վրայ՝ աշտարակի մ'աւերակները, որ կ'իշխէր կրճին բերանին վրայ, ուր կը մտնէ հոս Խարշուտ:

Մենք գետոյն նեղ հովիտը բանեցինք աջ ամէն նրթալով: Ժամէ մ'ետքը՝ կ'անցնինք Սօրթ-գիւղին աներուն դիմացէն, որոնք հակադիր սեպափին նրկայնքը սփռուած են պարտէզներու մէջ: Քիչ մ'ետքը ձախակողմի բարձունքին վրայ կը նշմարենք Քոստոսը՝ «խաշազրիւրեայ» (stavropégiaque) մենաստանին ճերմակ գմբեթը, որուն համար կ'ըսեն թէ Կոմնենեանց տուած ոսկեկնիք հրովարտակներ ունի²: Ծովեզերքին մօտենալով՝ կը մտնենք յունաբնակ հողը:

Կէս ժամ աւելի ետքը՝ գեղեցիկ մրգաստաններ, տանձիներով ու խնձորիներով լի, եւ հաճոյատեսիլ ամարանոցները կը ցուցնեն՝ թէ մօտե-

¹ Ուղեգր. § 217, ² կը գրէ՝ Sedissa fi(nes) Ponti (Սեգիսա՝ սահմանք Պոնտոսի):

² Սակայն հմտ. Պապադոպուլոս-Կերամեւսի դիտողութիւնը՝ ի «Byz. Zeitschr.» 1905, p. 388.

ցած ենր Գի-Ղ-Ղ-Է-Նէի կամ ¹Արծաթաքաղաքի² (²Αργυρούπολις): Իւր երբեմն հռչակաւոր բովերն՝ որոնցմէ առած է անունը, գաղբած են շահագործուելէ¹. Եւ գաղթականութեամբ նուազած է ազգաբնակչութիւնը, որ այլեւս յունական մեծամասնութիւն մը չի կազմեր². Բայց որչափ ալ անկամ բլլայ՝ տակաւին տաճկական գաւառապետի մը (Վո-Ղ-ու-բըլէ) նիստն է եւ Խաղտեաց արքեպիսկոպոսին աթոռը, որուն իրաւասութեան ներքեւն է ամբողջ մետաղաբեր երկիրը: Բայց այս (յունական) եպիսկոպոսական աթոռը նոր հաստատութիւն մըն է, եւ միջինդարու որեւէ ցանկի մը մէջ չի տեսնուիր. եւ թէպէտ եւ հինք Պոնտոսի լեռներուն արծաթախառն կապարը կը գտէին՝ կ'երեւայ թէ չէին ճանչնար տակաւին Գիւմրիչ-խանէի հանախաւերը³:

Քաղաքը Խարչուտէ իբր կէս ժամ հեռու արտաքոյ կարգի գեղանկարչական գիրք մը կը դրուէ (Պակ.): Տեսակ մը հսկայատարած կոնքաձեւի խորքն ապաստանած է, զոր կը կարէ ջրվէժներով թափուող գետակ մը: Քանի մը աներ խիտ առ խիտ կուտուած են ջրոյն ափը, ուրիշները՝

¹ Այս ճարտարագործութեան ԺԸ դարէն սկսեալ անկաճութեան մասին հմտ. Ռիտտէր, անդ, ԺԸ, էջ 832: Երբ Համիլտըն կ'անցնէր (1836)՝ մէկ բով միայն բաց էր. Իւր սփորական ճշգրտութեամբ կը նկարագրէ շահագործման համար գործածուած եղանակները (անդ, Ա, 234 եւն). հմտ. նաեւ Վինէ, Աս. ՏՃԿ., Ա, 127:

² Մեզի բսին թէ տեղւոյն հինգ հարիւր աներուն մէջ Յոյնք այժմ միայն հարիւր յիսուն տուն են. բայց վեց եկեղեցի մնացած է իրենց:

³ Սարաբոն, Ա, 2, § 39. ԺԲ, 3, § 19. հմտ. Blümmer, Technologie, IV, p. 31 ff.; Th. Reinach, Mithridate Eupator, p. 231, n. 3. — Արծաթախառն կապարը շատ առատութեամբ կը գտնուի Պոնտական լեռնաշղթային մէջ: Ա. ելի քան հարիւր հանախաւեր գտնուած են. հմտ. Վինէ, անդ, Ա, էջ 18:

ասնդգաձեւ կ'ելլեն զահաւէժ գառիկոյններու վրայ՝ ծիծառանց բոյներու նման լերան գերբուկներուն կռուած կառչած: Սանդղելքներն ու փողոցիկներն առ ի շեղ կամ ծամաձուռ կ'երթան դժուարելանելի դարու վերին վրայ: Ամէն տեղ՝ ուր բուռ մը հող պահել կարելի եղած է՝ դարատափի մը վրայ պարտիգիկ մը կը դայարանայ: Արեւը կը բարձրանայ հրաբխային մթադոյն ժայռերու ամփիթատը մը, որոնք հսկայական օդեղէն դղեակներու կը նմանին: Ասոնց միոյն գլուխը կանգնած աւերակ աշտարակ մը ողորմելի բան մը կ'երեւայ՝ անոնց ահագին մարտկոցներուն քովը:

Գիւմիւշիանէի շրջակայքը յունական-հռոմեական շրջանէն որեւէ յիշատակարան մը չկրցան մեղի մատնանիշ ընել: Պարխարի անտառները թաքսոց էին աւարասէր ցեղերուն Տիբարենացւոց, Խաղտեաց, Ծանաց (Ծանարք) եւ Աողքիսացւոց, որոնք բարբարոսութենէ շատ հեռու չէին¹: Նոյն իսկ մեր օրերը բնակիչներն իրենց հին աւազակաբարոյ սովորութիւնները բոլորովին չեն թողուցած: Բիւզանդացւոց ատեն՝ որոնք Խաղտեաց աշխարհի առանձին բանակաթեմ մը հաստատած էին՝ որ Տրապիզոնի ենթարկուած էր, այս պատերազմասէր լեռնացիները քաջակորով զինուորներ կու տային կայսերական բանակներուն: Իսկ Հռոմ, որ նոյնպէս ասոնցմէ տիգաւորաց անկանոն զօրագնդեր կը հանէր², կ'երեւայ թէ կը շատանար ապահովելով Սատաղայի եւ Ծովուն միջեւ եղած հաղորդակցութիւնները, առանց փոյթ ընելու այս ցեղերը համազօդելու: Այս ամբողջ երկրիս մէջ ուրիշ հին աւան-

¹ Ստրաբոն, ԺԻ, 3, § 18: Ցեսնելու է Ասիանոսի (Շրջանաւ. 11[15]) եւ Պրոկոպիոսի (Շին. Գ, 6) Սանաց կամ Ծանաց (Ծանարք) մասին ըսածները. հմտ. Ռայնախ. Միհրդ. Եւպատոր, էջ 235 եւն:

² Ասիանոս, «Ճակատամարտութիւն» (ἐκτάξις, ընդդէմ «Ալանացոյ»), ԴԼ, 7:

ներ չենք ծանչնար՝ բաց ի ռազմական ուղւոյն հան-
գոյցներէն ու կոյսաններէն: Եթէ ուղիղ են Անտոնի-
նեայ Ուղեգրութեան տուած թուերը, Թէ- (Thia)
Գիւմիւշխանէի եւ Արդասայի մէջտեղը գտնուած
ըլլալու է: Արեւրդ՝ կռահելով Բէշ-Ալէ-է տեղը կը
դնէ նոյնը. եւ ստուգիւ զինուորական պահակերոցի
մը հաստատուելուն շատ նպաստաւոր էր այս գիւ-
ղին զիրքը՝ լերան ծառապսակ մէկ ցռուկին վրայ¹:

Գիւմիւշխանէէ մինչեւ Տրապիզոն գացող
ճամբան հանրածանօթ է: Օսմանեան պետութեան
ամէնէն բանուկ ճամբաներէն մին է: Անդադար
կ'երթեւեկեն կարաւաններ՝ որոնք ծովեզերք կը
բերեն Պարսկաստանի գորգերն եւ ուրիշ ապրանք-
ները. եւ բազմաթիւ ուղեւորներ անցած են ասկէ
ու նկարագրած²: Ուստի պէտք մը շունինք մեր
վերջին օթեւաններուն մանրամասնութիւնները
նշանակելու: Եթէ գիտնական տեղեկագրութեան
մը տեղ՝ բաղձայինք Տաճկաստանի գեղանկարչա-
կան ուղեգրութիւն մը գրել, թերեւս որեւէ աշ-
խարհաբաժին մ'ասկէ աւելի արժանի չըլլար՝ եր-
կարօրէն յամելու (Պտկ. ճամբ., դէպ ի Արդասա):
Հոս բնութիւնը կարծես աւելի իւր հակասու-
թեամբ զարմացրնել կ'ուզէ: Նախ կան այն հոյա-
կերպ կապանները, ուսկից խարշուտ իրեն անցք
մը փորած է լեռներու խառնակոյտին մէջ, առա-
պարին կրճերու շարք մը՝ ուր մարգ միայն ժայռ կը
տեսնէ ու ջուր. բայց ջուրը՝ միշտ կենդանի ու շար-
ժուն, եւ ժայռերն՝ ուղղաբերձ ու ցնորակերպ որ-

¹ Մինչեւ այս օրս լեռներուս մէջ արձանագրութիւն
չէ գտնուած եւ ոչ հատ մը. բայց մեզի ըսին թէ «գրուած
քար» մը կայ կոննակա (կամ կորմակա) Մահալէ տեղն ի
Տորուլ (Toroul). բայց չկրցանք այս ըսուածին ճշդու-
թիւնը վերստուգել:

² Wilson, Handbook, p. 202 ff. Yorke, անդ: —
Վերջին նկարագրութիւնը հաւանօրէն լինչի գրածն է
Lynch, Armenia, Travels and Studies, t. II, p. 240 ff.

մասնակերու հերձատուած եւ բաղմագոյն երփնե-
րանգներով գունաւորուած (Պտկ.)։ Յետոյ կու
գայ Արտաշէս¹ անտարակոյս բիւզանդական Արտաշէս²,
եւ իւր միջինդարու դղեկին աւերակները, կանգնած
ծիրանի քարաժայռին մէկ ժանեւորին վըայ՝ որ
մահկաձեւ կը շրջապատէ փրփրահոս գետը. յետոյ
անվերջ վերելք մը երաշտին դարիվերի մը վըայէն՝
խարշուտի հեռատեսիլով, որ ցնորեցուցիչ խորու-
թեան մը մէջ՝ դէպ ի Տիրէբոլի կը սահի. բայց
բարձունքէն այնպէս մը կ'երեւայ իբր թէ վեր
կ'ելէ դէպ ի իւր ակնազօրիւրը՝ ապալերկ ու չոր՝
բայց երփնեւորն զառ գոյներով զարդարուած
լեռներու խառնամառնութեան մէջ (Պտկ.)։

Վերջապէս կը հասնինք Չիքուն (Չիքուն),
որուն անունը հնութենէն ի վեր անփոփոխ մնա-
ցած է³։ Ասի այժմ՝ ողորմելի իջեւաններու (խուն)
հաւաքատեղի մը միայն է (Պտկ.)։ Բայց իւր առեւ-
տարական ու ռազմական հին կարեւորութեան վկայ
են տակաւին կարաւանատուն մը եւ բերդի մ'ըն-

¹ Այս նշանացու մը պարտական ենք՝ որչափ կերեւայ՝
Yorkeի, անդ, էջ 462: — Արտաշէսի եպիսկոպոսական
աթոռը բիւզանդական սղեւսյալ Վարդաւորութեանց (Tak-
tika) մէջ կը յիշուի իբրեւ կախուած Նէոկեսարիոյ աթոռէն՝
որ կերասոն փոխադրուած էր (հմմտ. Parthey, Hierocl.
synecd., Not. III, 225; X, 346; XIII, 206). — Թրքական
գիւղաքաղաքը՝ Արգասա անուան հետ կը կրէ նաեւ Տորու
(Toroul) յորջորջանքը, որ բուն դաւառին անունն է: — Ար-
գասա իսաղոեաց բանակաթեմին վեց ամուրներէն մին ըլլալու
է. հմմտ. Gelzer, Genesis der Themenverfassung, p. 103.

² Ուղեգր. Անտ. § 216, 6; Notit. Dignit., Or.
XXXVIII, 37 կը նշանակէ՝ Cohors secunda Valentiana
Ziganne (Վալտերտար Վալտերտան, է Չիքուն): Չի-
գանայի (Ζιγάνας) եպիսկոպոս մը կը յիշուի ի Notitiae,
I, 468; VII, 238; VIII, 517; IX, 428, հրմտ. Parthey.
հմմտ. Gelzer, Georg. Cypr., 467: ὁ τῆς Ζιγανέων
(Չիգանացոցն)։

դարձակ աւերակները: Առաջնէն՝ տակաւին կը տեսնուին ութ կամարակալներ՝ իրարմէ 5 մետր հեռու, որոնք հարթ աղիւսներով շինուած ընդարձակ սրահի մը կամարները վեր կը բռնէին: Զիգանայի կամրջին քարերուն մեծագոյն մասն առնուած են այս մեծածաւալ շինուածքէն: Քիչ մ'աւելի խոնարհակողմը՝ կը գտնուի դղեկաբերդը քարաժայռի մը գլուխը: Ար մնան տակաւին բոլորշի աշտարակի մը հիմերը՝ լեռնագլխուն ծայրը, որուն հետեւելով կը բոլորէր շրջապատ պարիսպն ալ: Ստորտը՝ կը բղխի երկաթախառն ակնաղբիւր մը: Քսենոփոնի օրերէն վեր ասկէ կ'անցնուի՝ 2000 մետր բարձրութեան մէջ՝ այն հզօր լեռնազանգուածը, որ Տրապիզոնը կիսաբոլորակաձեւ կը շրջապատէ ու կը պատսպարէ: Զիւնապատ կատարներու մերձաւոր լեռնացքս անցնելէն անմիջապէս ետքը՝ Խարշուտի հովտին վայրենի ամլութեան կը յաջորդէ յանկարծ՝ լեռան միւս երեսին զառիվայրին վրայ՝ ուռձալից բուսականութիւն մը, որ կը փթթի ծովային մթնոլորդի մը խոնաւ եղկութեան մէջ: Ոփիններու ու եղեւիններու թանձրախիտ բարձրամայրի անտառներու մէջ, ազնիւ պտերու գորգի մը մէջտեղ, ամէն կողմ կը ծաղկին շքեղափայլ մրտավարդեր (վարդածառեր) եւ սաստիկ անուշաբոյր դեղին լեռնավարդեր (Պակ.): Անտառներու դալարագեղութիւնը, ջրերու վճիտ յտակութիւնը, ապառաժուտ լեռնագլուխներու յանդգնաձեւ գծերը, ինչպէս նաեւ գեղատեսիլ գիւղեր, եկեղեցիներ ու մատուռներ՝ ցանուցիր սփռուած բլուրներու վրայ, այս ամէնն Ալպեանց մէկ գաւառը կարծել կու տար, — եթէ օտարոտի ձեւով նախնական սայլակառքեր, ուղտերու երկարաձիգ տողաններ՝ որոնք իրենց առաջնորդող յաւանակին ետեւէն շարուած կ'երթան, այս ամէնն ալ շփշեցրնէր թէ հոս Արեւելքի դրանց միոյն վրայ կը գտնուինք:

Խճուղին Զէլէշէիի քով, որ սպահնակապէս կը համապատասխանէ Ուղեգրութեան Ad Vice-simum կայանին¹, կը հասնի Գէյիբման-Սուի (Տէյիբմէն, հին Պիւքսիտէս) գետախառնունքը Միբամանա-Սուի հետ: Ճամբան այսուհետեւ առանց արդեւքի է. եւ բնազդապէս կ'երազէինք մեր բնութացքը՝ որչափ Տրապիզոնի կը մտենայինք. եւ քառասմբակ արշաւելով էր որ ելանք այն աւազաբլուրն՝ որ ծովափը կը պատէ: Ուղեւոր մը չէ եղած որ այս ծովեզրն իջած ատեն՝ իւր մէջ ալ լսած չըլլայ Բիւրուն ի տես ծովուն արձակած ցնծալից աղաղակին արձագանգը:

§ 34. Տրապիզոն: — Տրապիզոնի հին յոյն գաղթականութենէն մնացած է միայն «Սեղանը» (յն. Տրապեզա), որմէ է քաղաքին անունը. այսինքն՝ քարաժայռերու զանգուած մը միահարթ եղած գագաթով՝ շրջապատուած խորխորատներով, որոնց վրայէն կամուրջներով կ'անցնուի: Ասի այժմ տաճկական հին քաղաքամասն է, պատուած փեռեկառն ու խորխուլ պարիսպներով (Պակ.), որոնց ժանեւորքն ու կեռիքները թանձրախիտ բուսականութեան մը միջէն դուրս կը ցցուին. եւ իւր գեղանկարչական տեսքն՝ ինչպէս նաեւ իւր յիշատակարանքն յաճախ նկարագրուած են²: Տրապիզոն

¹ Զէլիգիկ ճիշդ 20 հռոմեական մղոն հեռու է Տրապիզոնէ: որ թիւը կու տայ Ուղեգրութիւնը՝ § 166, 4: — Պեւախնգերեան Յախտակը միեւնոյն հռոմեորութեան Քէ կը գնէ Magnana տեղը. բայց՝ ինչպէս արդէն ըսինք (տես վերը՝ Բ, § 33), այս ուղին թերեւս ուրիշ հօվոտ մը կ'անցնէր:

² Ռիտտեր, անգ. էջ 852 եւն. Համբլուրն, Ա, էջ 159, 242. Fallmerayer, Fragmente aus dem Orient (1845), I, p. 39 ff. եւ ուրիշներ: — Որչափ մեղի ծանօթ է՝ ամենանոր նկարագրութիւնն է Լինչինը՝ Lynch, Armenia, I, 1901, p. 8 ff. որ քաղաքիս եւ ամրութեանց նոր յատակագիծ մը կը գնէ եւ կը յաւելու գեղեցիկ մատենագիտութիւն մը:

իւր հնախօսական հռչակը պարտական է գլխաւորաբար բիւզանդական գեղեցիկ եկեղեցիներուն, որոնց մանրամասն ուսումնասիրութիւն մը նուիրած էր Պր. Միլլէ՝ մեր ճամբորդութենէն քիչ մը յառաջ¹. որով անոնց մասին հոս նորէն խօսելու պէտք մը չի մնար: Մենք աւելի փոյթ տարինք հնագոյն շրջանի հնութիւնները հետախուզելու, որոնք շատ սակաւութիւ են, թէպէտ եւ քաղաքը հռոմէական պետութեան ժամանակ անժխտելի բարգաւաճում ունեցած էր:

Տրապիզոն՝ նախնաբար պարզ վաճառատեղի մը, ուր Սինոպի դաղթականները ներքնաշխարհին վայրենի ազգերուն հետ առեւտուր կ'ընէին. կամաց կամաց առեւտրական ծաղկեալ հրապարակ մ'եղաւ, որ Գ դարէն սկսեալ դրամ ալ կը հատանէր²: Որչափ ալ «փակուած էր ընդարձակ լեռնով³», նպաստաւոր էր իւր դիրքը՝ Սել Ծովու ափին արեւելեան ծայրին վրայ⁴: Սակայն Ստրաբոնի ժամանակ տակաւին չափաւոր կարեւորութեամբ նաւահանգիստ մըն էր, որ Ամիսոսի հետ համեմատուիլ կարենալէն շատ հեռու էր: Բարբարոսիկ բրտութեամբ մը կը գրուէր հոն յունարէնը եւ քարերը կը քանդակուէին⁵: Իւր մեծաքայլ զարգացումը կը սկսի այն օրէն, երբ Հռոմայեցիք իրենց աշխարհակալութիւնքը տարածե-

¹ Millet, Les monastères et les églises de Trébizonde (ի Bull. Corr. hell. XIX, 1893, p. 419—459). Հմմտ. Strzygowski, Les chapiteaux de St^e Sophie de Trébizonde (ib. p. 517 ff.) եւ ի գիրս՝ Kleinasiens, p. 153 ff., 175.

² Բարբլոն եւ Ռայնախ, անդ. Ա, էջ 108 եւն:

³ Պղինիոս, Զ, § 11 կը գրէ Oppidum monte vasto clausum (ընդարձակ լեռնով փակուած բերդ մը):

⁴ Տակիտոս, Պամ. Գ, 47 կը գրէ՝ In extremo Ponticae orae conditam (Պոնտական ծոլափին ծայրը շինուած):

⁵ Առիանոս, Շրջանաւ. 1, 1:

ցին մինչև Հայաստան. եւ Սատաղայի զինուորական ճամբան շինելով՝ այսպէս բսելու համար՝ ծակեցին այն պարիսպը, որ քաղաքս կ'արգելափակէր, եւ թափանցման զիւրին ճամբայ մը բացին գէպի Եփրատայ հովիան ու Փոքուն-Ասիոյ սարահարթը: Պոզեմենիումի եւ Փասիսի միջև ուրիշ որեւէ ճամբայ մը ծովեզերեայ երկայն լեռնաշղթան չէր կտրեր անցներ: Արդէն Տրապիզոնէ կը համբարակուէր Արքուզոնի բանակը Հայաստանի արշաւանաց ժամանակ 62ին Յ. Ք.¹, եւ այնուհետև ծովային այս խարխիւր գործածելով էր որ Ապպազոսովկիոյ լեզէոնները շարունակեցին պաշարապինդըսլ եւ սպառապինուիլ: Աշանակելի կէտ մըն է որ բիւզանդական շրջանէն կանուխ եղող սակաւաթիւ արձանագրութիւններն՝ որոնք բնդ հանրապէս գտնուած են Տրապիզոնի մէջ, բացառապէս լատիներէն լեզուաւ են ու զինուորական (արձ. թ. 415 եւն):

Տեղւոյս սպանագիտական արժէքը պատճառ եղաւ որ հռոմէական պետութեան հետ միացուելէն անմիջապէս ետքն՝ ընտրուեցաւ իբր հանգրուան նաւահանգիստ Պոնտական նաւատորմին (classis Pontica)². եւ Ազրիանոս՝ որ քննական այցելութեան եկաւ հոս 124ին, բարւոյրեց անոր յարգարանները. անտարակոյս ամբարտակով մը փակեց նաւակայքն՝ որ յառաջ անմատչելի էր փոթորկալից օդերուն³: Երախտազէտ քաղաքն կանգնեց անոր արձանը ծովուն զիմաց՝ զոր մատով կը ցուցնէր. բայց արձանս աւելի քաղաքին

¹ Տակիտ., Տարեգր. ժ. Գ. 39:

² Erm. Ferrero, Ordinamento delle armate romane (ի Mem. Acad. Տ. բնի) 1899, p. 71.

³ Առիանոս, Շրջանաւ. ժ. 2, 5. — Այս տեղեկութեան յղորտութեան մասին կրակած յայտնուած է առանց իրականց. հմմտ. Patsch, Beiträge zur alten Gesch. IV (1904), p. 71 ff.

Հաւատարմութեան՝ քան թէ զեղարուեստական ճաշակին վիպէր¹։ Սակայն Տրապեզոս՝ որ մինչեւ այն ատեն աննշան էր, պճճուեցաւ մարմարեայ շքեղակերտ յիշատակարաններով, եւ բազմամարդու փարթամ մայրաքաղաք մ'եղաւ²։

Այս բարգաւաճանքն ոչնչացաւ առաջին արշաւանքներով։ Գոթերը 257ին զիշեր մը տիրեցին քաղաքին սանդղայարձակմամբ, յաւարի առին, եւ բոլոր բնակիչներն իրենց նաւերով գերութեան տարին։ Այս աղէտքն իւր պատմութեան առաջին մասը կը փակէ³։

Քիչ մ'ետքը յաղթանակեց քրիստոնէութիւնը, — Տրապիզոն նպիսկոպոս մը ներկայացուցիչ խաւրեց Նիկիոյ ժողովին⁴։ — Եւ մեհեանները փոխուեցան նոր կրօնից եկեղեցիներու։ Պրոսկոպեայ մէկ տեղեկութեանէն կ'իմանանք թէ Յուսափնիանու գանոնք նորոգեց, եւ միեւնոյն ժամանակ շինեց նոր ջրմուղ մը՝ բառնալու Համար այն ջրոյ պակասութիւնը՝ զոր կը կրէին բնակիչները⁵։

Սակայն ո՛չ բարբարոսաց յարձակումն եւ ո՛չ քրիստոնէական կերպարանափոխութիւնը բուն

¹ Առիանոս, անդ. 1, 1։

² Զոսիմոս, Ա. 33։

³ Զոսիմոս, անդ.։

⁴ Nomin. patr. Nicaen., ed. Gelzer-Cuntz, p. 30 ff.; Հմմտ. Harnack, Ausbreitung, II³, p. 177. — նպիսկոպոսութեան՝ որ յետոյ արքեպիսկոպոսութիւն եղած է, պատմութեան մասին՝ Հմմտ. Lequien, Oriens christianus, p. 509, 1341; Gelzer, Notit. episc. (Abh. Akad. München) 1900, p. 576.

⁵ Պրոսկոպ., Աւան Շին. Գ. 6, էջ 260 (Հրատ. Բունքը)։ — Այս ջրմուղն որ կը կոչուէր «Ջրմուղ Ս. Եւգիենեայ», թերեւս այսօր ալ Տրապիզոնի ջուր մատակարարողն է։ Փորուած է քարաժայռին մէջ այն ճամբուն երկայքն՝ որ գէպի Գէլիբոմն-Սու կ'ելլէ։ — Հմմտ. Ռիտաէր, Աշխ., ՃԸ, 902, եւ ի պատիւ Յուսափնիանու գրուած արձանագրութիւնը (արձ. Թ. 418)։

պատճառ եղան հեթանոսական շինութեանց անհետացման. այլ մանաւանդ քաղաքին մեծնալը ժ.Գ եւ ժ.Գ դարերուն: Տրապիզոնի կամենեանք եղած են պերճասէր շինողներ. եւ անոնց եկեղեցիներուն ներքեւ՝ որոնք այժմ մզկիթներու փոխուած են, փնտռելու ենք հեթանոսական մեհաններուն ներքնակառոյց մասերը: Գից եւ հռոմէական կայսերաց նուիրուած ձօներն անշուշտ ծածկուած են այն թանձր պատուարներուն մէջ՝ որ բերդը կը շրջապատեն: Տակաւին կը նշմարուին հին բեկորներ՝ որոնք ազուցուած են միջին դարու շինութեանց մէջ: Յոնիական երկու մեծ սիւներ՝ կիսով չափ հողի մէջ խրած, վեր կը բռնեն տանիքը եւ երկու ուրիշներ ալ անդաստակը՝ «Ոսկեգլուխ Տիրամօր», (Panaghia Chrysoképhalos) հին կաթողիկէ (մայր) եկեղեցւոյն, որ միջուաբերդին ճիշդ կենդրոնը կը բարձրանայ, հաւանօրէն հեթանոսական հին սրբարանի մը տեղւոյն վրայ¹:

Գորշ մարմորէ խոյակ մը եւ երկու սիւները զարձեւալ գործածուած են այն հոյակերտ կամարակապ անդաստակին շինութեան մէջ՝ որ Ս. Սոփեայ եկեղեցւոյն գաւթին առջեւը կառուցուած է: Երեք ուրիշ սիւներ կը զարդարեն Ս. Բարսղի մատուռը, ուր փոխադրուած է Յուստինիանու մէկ արձանագրութիւնը (արձ. թ. 418). եւ այսպէս անտարակոյս կարելի էր հռոմէական հին քաղաքակրթութեան բազմաթիւ նշխարներ մատնանիշ բնել տաճկական արդի քաղաքին մէջ:

Տրապիզոնի մէջ առանձինն կերպով պաշտուած դիքն էին՝ քաղաքիս զրամագիտութեան համաձայն՝ Հերմէս², որուն մեհեան մը շինուեցաւ Ադրիանու թագաւորութեան օրով, եւ միեւնոյն

¹ Millet, անդ, էջ 422:

² Բարբլուն-Ուայնախ, էջ 111, թ. 27:

ժամանակ՝ Փիլեսոսի գիւցազին՝ անոր սերնդէն¹ : — Սերապիս² որ բնիկ Սինոպէ եղած կը համարուէր, եւ զոր մասնաւորապէս կը պատուէին նաեւ Ամասիոյ մէջ³ : — Գիոնեսոս՝ պաշտուած իբրեւ պաշտպան այդիներուն, որ երկրին հարստութեանց մէկ մասն էին⁴ : Բայց այն աստուածութիւնն՝ որուն պատկերն ամէնէն աւելի յաճախ դրոշմուած է դրամներուն վրայ, պարսիկ Միհրն է⁵, զոր պէտք ենք նկատել իբրեւ քաղաքին պահապան ոգին : Տրապիզոնի վիսյազրական աւանդութիւնք կը պատմէր թէ Գիոնղեաթանու օրով Ս. Եւզինիոս կործանեց մադդեղեան դիցս մէկ կուռքը լեռան մը վրայ⁶, որ նաեւ միջին դարուն կը կոչուէր «Մհեր բլուր» (Μηθρίος βουνός) : Արդ Մհեր լեռը՝ որ Տրապիզոնի միջնաբերդին վրայ կ'իշխէր արեւելքէն⁷, ինչպէս շատոնց ճանչցուած է՝ այն լեռն էր, որ այսօր տաճկական Boz-tépé անունը կը կրէ⁸ : Ամէն ուղեւորք կ'երթան հոն այցելելու «Աստուածայարկ կուսին» (Théosképastos) վիմափոր

¹ Առիանոս, անդ. 2 : — Առանց հիման շերտի այս տաճարակից (σύναγος) դէքը շփոթած են Գիոնեսոսի Փիլեսոսի Ապոլոնի հետ :

² Բարբելոն-Ռայնախ, անդ. էջ 110, Թ. 21, 36 :

³ Տես վերը՝ Բ. § 9 : Հմմտ. Ս. Բասիլիսկեայ վարքը (Act. SS., Մարա, Ա), էջ 238 :

⁴ Բարբելոն-Ռայնախ, 31, 35, 51, 53 :

⁵ Բարբելոն-Ռայնախ, անդ. Հմմտ. մեր Mon. Myst. de Mithra, t. II, Mon. 3 bis; t. I, p. 235, n. 4.

⁶ Բնագիրները հրատարակուած են Պապագոպուլոս-Կերամեսի հրատարակութեան համեմատ (P.-Kerameus, Fontes hist. Trapezunt. 1897) մեր երկասիրութեան մէջ Mon. Myst. de Mithra, I, p. 362 ff., Հմմտ. II, p. 55 C.

⁷ Monum. Myst. de Mithr., I, p. 363 : Βουνός μέγας δε πρός ἔω τοῦ ἄστρου Τραπεζοῦντιος ὑπερχαθέζεται. (մեծ բլուր մը՝ որ Տրապիզոնի միջնաբերդին արեւելքը կը բարձրանայ) :

⁸ Ռիտաէր, անդ. էջ 887 :

մատուռն, որ ԺԳ դարու որմնանկարներով պծնուած է, բայց զորոնք բարբարոսիկ նորոգութիւն մը խաթարած է¹ (Պակ.)։ Մատուռը կը վերաբերի կուսանաց վանքի մը, որ Պող-Թէփէ լեռան զահայլէժ կողերուն յեցած է։ Քարանձաւը, որուն պատերը մասամբ ծածկուած են նկարազարդ որմերով, անկանոն քարայր մըն էր՝ քսանուհինգ ոտք խորութեամբ եւ իբր շորս մետր բարձրութեամբ, որ կորանալով խորամուխ կ'ըլլայ քարաժայռին խորոց մէջ։ Իւր զէպ ի արեւմուտք ուղղուած բերանը կրնայ իբր տասը մետր լայնութիւն ունեցած ըլլալ։ Աջ կողմը՝ քարանձաւին մէջտեղին մօտ, կրաքարին մէջէն ծորելով կը բղխէ ակնաղբիւր մը, որ սքանչելի ջուր մը կը մատակարարէ²։ Տարակուսական չէ թէ այս քարանձաւը համարելու ենք հեթանոսական այն մեհեանը, որու մասին կը խօսի Ս. Եւգինեայ վկայարանութիւնը. արդեամբք ալ զխտենք թէ Միհրի աղանդաւորք սովորութիւն ունէին անոր նուիրելու քարանձաւներ, ըլլային բնական քարայրներ թէ արուեստական, որոնց մէջէն բղխող ակնաղբիւր մը հոսելու էր³։ Ինչպէս Հռոմայ Ս. Աղեմէս եկեղեցւոյն մէջ՝ հոս ալ եկեղեցի մը փոխարինած է պարսիկ աստուածութեան ստորերկրեայ աղօթատեղւոյն։ Այլուստ ակնաղբերաց պաշտօնը եւ քարայրներու յարգութիւնը՝ քրիստոնէական երեւոյթ մ'առնելով՝ այս երկրիս ժողովրդական պաշտօնասիրութեան մէջ տեւական մնացած է են։

¹ Millet, անդ, էջ 437։

² Ա. անդութեան մը համեմատ՝ զոր Ռիտտերը կը յիշատակէ (անդ, ԺԸ. էջ 888)՝ այս ջուրը՝ «երիտասարդացուցիչ» աղբիւր մ'ըլլայ, որ իբր թէ կը պարզեւէ կամ դոնէ կ'երկարաձգէ երիտասարդութիւնն ու գեղեցկութիւնը։

³ Mon. Myst. de Mithra, I, p. 55, 297.

⁴ Ակնաղբերաց հեթանոսական պաշտօնը՝ անս վերը, Բ, § 9 եւ § 28; — Հմմտ. Ռիտտեր, Աշխ. ԺԸ, էջ 902 (ըստ Ինճիճեանի.) Տրապիզոնէ մէկ ժամ հեռու, Հայոց

Վիճափոր ուրիշ անձաներ կ'երևայ թէ հնու-թեան մէջ տարբեր նպատակի ծառայած են: Ս. Սարայ մատուռը, որ մնացած է համանուն հին վանքէն, կտրուած փորուած է կղզիացեալ հսկայական քարաժայռի մը մէջ՝ որ յունական արդի գեղեզմանոցին վրայ կ'իշխէ: Վերը՝ գրեթէ դադաթնա հայեաց կանգնած գահաւանդին վրայ՝ փորուած են արուեստական բազմաթիւ այրեր: Ասոնց ամէնէն ընդարձակը, ուր կրնայ մտցուիլ լերան մէջ ծակուած բացուած շեղահասկ նրբանցքով մը¹, զարդարուած է Ժե դարու նկարներով:

Ամենափրկիչ վանքին մօտ՝ կը գտնուի ---բէ հաճախ ---բէ ---բէ մ'ամենընտիր ջրով (Ա---բէ---բէ կոչուած Հայոց կողմանէ), որուն երկարատեւ յարգութեան վկայ է ժայռին վրայ փորագրուած հայերէն արձանագրութիւն մը: ---բէ մը հեռուն Դելիկիւլ-թաշ կոչուած տեղը կը գտնուի ---բէ ---բէ մը կըլուէ---բէ կոչուած, որ գիւղացւոց սնտափապաշտական յարգութեան առարկայ է: ---բէ գարէն երկու ժամ հեռու՝ Պոզ-թէփէի վրայ կը գտնուի երրորդ աղբիւր մը՝ Վէշ-դի ---բէ---բէ (Δρακοντοπηγάδι)՝ այսպէս անուանակոչուած՝ որովհետեւ ըստ աւանդութեան իբր թէ խորհրդաւոր վիշապ մը պահապան կեցած ըլլաք անոր. (Ռիտտեր, անդ, էջ 903. հմմտ. Monum. Myst. de Mithra, I, 363): Եյն առասպելը թէ օձ մը պահապան կ'ըլլայ ակնաղբիւրի մը, զիջարանական զրոյց մըն է՝ որ շատ ազդերու քով ալ կը գտնուի. հմմտ. Frazer, ի ծանօթ. Պաւսանիայ խօսքին՝ Պաւս. Թ., 5, 10 (Հար. Ե, էջ 44 եւն): --- Զորբորդ հրաշքործ աղբիւր մ'ալ Եյսպիս կոչուած (ἀγίασμα, նուիրական, ուխտասեղի)՝ կը գտնուի Ս. Գեորգոս մատրան մօտ, հմմտ. Ռիտտեր, էջ 887: --- Քարայրներու յարգութեան մասին՝ նոյն իսկ բազմաթիւ մենաստաններու եկեղեցիները հաստատուած են ամայի հովիտներու քարանձաւներուն մէջ. այսպէս Տրապիզոնի մօտ ի Սուսելա. Գարա-Հիսարի մօտ՝ ի Միդրամանա (տես վերը՝ Բ, § 25):

¹ Եյս քարայրին յատակագիծը գրած է Millet, անդ, էջ 442. հմմտ. էջ 439:

Ուրիշները պարզ խցէ մը կը բաղկանան, որոնց բոլորակամար դուռը կը բացուի բնական նեղ պատշգամի մը վրայ: Մենք այս քարայրներէն հաշուեցինք թուով իբր ասանուերկու հատ, որոնց շատերն անմատչելի են: Ասոնց բարձրահայեաց դրից, եւ շինութեան կերպին նմանութիւնն այն ամէնուն հետ՝ զորոնք տեսանք արդէն՝ ի Ամանա (Բ, § 20), ի Տարա (Բ, § 23) եւ ուրիշ տեղեր, պայծառ կերպով կ'ապացուցանէ թէ ասոնք ալ հին քարափոր դամբարաններ են, նման անոնց, զորոնք Պոնտոսի ամէն կողմ կը գտնենք: Միայն թէ միջին դարու մէջ ասոնք, զրեթէ ինչպէս Ամասիոյ մէջ «Հայելի քարայրը¹», ծառայած են Ս. Սարայ կրօնաւորաց իբր խցիկներ կամ մատուռներ: Դժբախտաբար այն քարալեռն, ուր այս հին դամբարանները կ'ափուած են, այսօր կը շահագործուի իբր քարահատք. եւ երկիւղ կայ թէ մի գուցէ շուտով ականով պայթեցուին այս յիշատակարանները, որոնք ամէնէն հնագոյններն են՝ որոնցմով Տրապիզոն կրնայ պարծիլ:

Եթէ Ամմենեանց քաղաքիս մէջ անհետ եղած են բոլոր հին շինուածակերտները, զոնէ պահուած են հետաքրքրական ձեռագիրներ շրջակայ յունական վանքերուն մէջ²: Այս վանքերը թագնուած են Պոնտական լեռնաշղթային անտառապատ ծալքերուն մէջ, ուր քրիստոնէական հելլենականութիւնը կրցած է ամէն ճնշմանց դէմ դիմանալ: Քանի մ'որ նուիրեցինք այցելելու այս վանքերը, որոնց՝ բերդի պարիսպներու պէս թանձր

¹ Տես վերը՝ Բ, § 9, եւ Սամսոնի մէջ «Մոնաստիրի» անձաւը՝ վերը, Բ, § 1:

² Քանի մը դիտողութիւններ հրատարակած ենք ասոնց պարունակած գրոց եւ յիշատակարանաց մասին՝ ի «Revue de l'instruction publique en Belgique», 1903, p. 16 ff.; 1905, p. 1 ff.; հմտաւ. «Byz. Zeitschr.» XIV, 1905, p. 382, եւ Պապագոգոս լոս-Վերամուս՝ անդ, էջ 386 եւն:

պատերն ու գրեթէ անմատոյց դիրքը՝ կը յիշեցընեն երկրին երկարատեւ անապահոյութիւնը. — Վասելոն վանքը՝ հսկայագործ աղանցի մը նման կտած կրաքարային լեռնորմի մը՝ անտառի մը խորքը (Պտկ. Վասելոնի մօտ հովիտը). — Պերիստերա՝ անմատչելի ասեղնածեւ քարածագի մը վրայ թառած (Պտկ.). — եւ մանաւանդ՝ Սուսելա, ուղիւի մը վրան կախուած՝ չես գիտեր ինչպէս՝ գրեթէ գաղաթնահայեաց քարածայռի մը հսկայաբերձ ժայռորմէն¹։ Այս անբռնաբարելի թաքստոցներու մէջ միջինդարէն ի վեր պահուած են տակաւին թանկագին գրառուներ, թէպէտ եւ եւրոպացի ուղեւորներ բաղմաթիւ նախաքաղութիւններ բրած բլան։ Սիրով աւելի երկար ժամանակ կը մնայինք երկրի այս անկեան մէջ, որ այնպէս հարուստ է բնական գեղեցկութիւններով եւ պատմական յիշատակներով. բայց Տրապիզոնի մէջ ժանտախտի դէպք մը ծանուցուած բլաւով՝ ստիպուեցանք յունիս Չին նաւ մօտել՝ մաքրարաններու սպառնալեօք, ջաւով թողլով այս յանկուցիչ գաւառը, որ ամէնէն վիպագեղ երկիրներէն մին է անոնց մէջ՝ ուր տակաւին կը բնակին Յունաց սերունդները։

¹ Պերիստերայի (Աղանի) Ս. Գեորգայ վանքը, որուն մէկ լուսանկարը հոս կը դնենք (Պտկ.). հրգեհով սյրած աւերուած է վերջին (1905) Գեկտեմբեր ամսոյն. բայց ձեռագիրներն ազատած են՝ ինչպէս կ'ապահովուի — Սուսելայի մէկ տեսքը գրած ենք մեր վերոյիշեալ յօդուածին մէջ (Rev. de l'instr. publ. Belg. 1905). ուրիշ մը կրնայ գտնուիլ Լինչի քով (Lynch, անդ. II, p. 239). — Այն խանդավառ նկարագրութիւնը՝ զոր Fallmerayer (Fragmente aus dem Orient, I, p. 131) Սուսելայի հովտին մասին շարահիւսած է՝ ամենեւին չափազանցութիւն մը չէ։



ԱՆՋՐՊԵՏՔՏԵՂԵԱՅ՝

Երկու տեղեաց միջեւ արձանագրուած թուերը կը ցուցընեն այն ժամանակը՝ որուն պէտք ունեցանք մէկէն միւսն անցնելու, հաշուէն դուրս հանուած ըլլալով դադարներու ժամանակը: Ճամբաներս կտրած անցած ենք ձիավարելով, ընդհանրապէս՝ արագաքայլ. բայց բնականապէս խաղացքն աւելի դանդաղ էր դարերուն վրայ քան թէ դաշտին մէջ, շաւիղներու մէջ՝ քան թէ պողոտաներու վրայ: Քարտէսները զծելու ատեն կարելուոյն շափ այս տարբերութիւնները հաշուի առնուած են:

ՔԱՐՏԷՍ ԺԱ. — 15 Ապրիլ.

Խաւսա. — 40 վ. — Ակ-Ջամամ-Մահմուտ.
— 60 վ. — Էսկիվիրան. — 55 վ. — Վէօնէկ.
— 2 ժ. 20 վ. — Վէզիր-Քէօփրիւ:

ՔԱՐՏԷՍ ԺԱ. — 17 Ապրիլ.

Վէզիր-Քէօփրիւ. — 2 ժ. — Ստաւրոյ-Քէօ-

1 Գրքին վերջը՝ (բնագիր էջ 373—375) կը գնե շեղինակը ժամանակացոյց մը խորագրովս՝ «Քարտէսներու վրայ նշանակուած ուղեգծերն անցնելու համար գործածուած ժամանակները»: Որչափ ալ բուն քարտէսներուն մէջ տեղեաց հեռաւորութիւններն որոշելու համար ըլլայ ցանկս, աւելորդ չհամարեցանք նոյնը գնել այս տեղ, թէեւ քարտէսները չկարենանք ներկայացընել ընթերցողաց. վասն զի ժամանակացոյցս նաեւ առանց քարտէսի իւր օգտակարութիւնը կը պահէ, եւ քարտէսներուն ալ բովանդակութիւնը համառօտիւ կը բացատրէ: Ծ. թ.

փրիւ. — 1 ժ. 5 վ. — Կէօնէկ. — 1 ժ.
15 վ. — Տաքնա. — 3 ժ. — Խաւսա:

ՔԱՐՏԷՍ ԺԲ. — 21 Ապրիլ.

Մարդուան. — 1 ժ. 10 վ. — Եակուբ. —
50 վ. — Տուրնուկ. — 15 վ. (°). — Գէլ-
գիրաղ. — 1 ժ. 40 վ. — Մարդուան:

ՔԱՐՏԷՍ ԺԳ. — 29 Ապրիլ.

Աճասիա. — 1 ժ. 40 վ. — Կափու-Կայա.
— 1 ժ. 40 վ. — Ակսալար. — 3 ժ. —
Բաջիէ. — 1 ժ. 20 վ. — Տէրէբոյան. —
1 ժ. 15 վ. — Չիլէ:

ՔԱՐՏԷՍ ԺԴ. — 1 եւ 2 Մայիս.

Չիլէ. — 2 ժ. — Չէլթէք. — 2 ժ. 10 վ
Սիլիես. — 2 ժ. — Կուբուշայ. — 3 ժ. —
Սուլու-Սէրայ:

ՔԱՐՏԷՍ ԺԵ. — 5 եւ 6 Մայիս.

Սուլու-Սէրայ. — 2 ժ. 20 վ. — Բայաղիտ-
թէքեէ. — 3 ժ. 10 վ. — Էկիջնիկ. —
1 ժ. 30 վ. — Կարա-Կայա. — 2 ժ. 45 վ.
— Կաւակ:

ՔԱՐՏԷՍ ԺԶ. — 6 եւ 7 Մայիս.

Կաւակ. — 1 ժ. 45 վ.¹ — Եէնի-խան. —
4 ժ. — Եէնի-քէոյ. — 3 ժ. 15 վ. — Սե-
բաստիա:

ՔԱՐՏԷՍ ԺԷ. — 11 Մայիս.

Սեբաստիա. — 2 ժ. 50 վ. — Բորզուկ. —
1 ժ. 35 վ. — Կոսմուշ-թէքեէ. — 2 ժ.
— Խարղըն:

¹ Բնագրին մէջ (էջ 229, տող 32) փոխանակ «երեք
քառորդ ժամ» կարդալու է «ժամ մը եւ երեք քառորդ»:

ՔԱՐՏԷՍ ԺԸ. — 13 եւ 14 Մայիս.

Խարդըն. — 1 ժ. 50 վ. — Արսլան-Տօղուշ.
— 1 ժ. 45 վ. — Գէօվէշմէր. — 1 ժ.
35 վ. — Բուլուս. — 45 վ. — 2իֆթիէր.
— 3 ժ. 10 վ. — Թոխաթ:

ՔԱՐՏԷՍ ԺԹ. — 16 եւ 17 Մայիս.

Թոխաթ. — 1 ժ. 35 վ. — Կոմանա. —
1 ժ. 45 վ. — Օմալա. — 1 ժ. — Ալմուշա-
գիր. — 2 ժ. 50 վ. — Նիքսար:

ՔԱՐՏԷՍ Ի. — 19 եւ 21 Մայիս.

Նիքսար. — 2 ժ. 45 վ. — Արդոստի. —
2 ժ. — Ալաջակ-եայլա. — 1 ժ. 55 վ. —
Բաշ-2իֆթիէր. — 3 ժ. 20 վ. — Մա'ա-
ղուն-Կալէսի. — 1 ժ. 50 վ. — 2էրօլիկ. —
35 վ. — Աճէ-Օղու:

ՔԱՐՏԷՍ ԻԱ. — 22 եւ 23 Մայիս:

Աճէ-Օղու. — 1 ժ. 25 վ. — Էրէսկէ. —
1 ժ. 35 վ. — Ըշրկու լեռ. — 4 ժ. 30 վ.
— Աֆան. — 4 ժ. 30 վ. — Կէջլասա. —
1 ժ. 30 վ. — Կէջլու-Հիսար:

ՔԱՐՏԷՍ ԻԲ. — 24, 25 եւ 27 Մայիս.

Կէջլու-Հիսար. — 7 ժ. 30 վ. — Զիդանա.
— 5 ժ. — Կարա-Հիսար. — 3 ժ. 30 վ.
— Գոմանա. — 2 ժ. — Ռումլայիջակ-թաշ.
— 2 ժ. 10 վ. — Էնդէրէս:

ՔԱՐՏԷՍ ԻԲ. — 28 եւ 29 Մայիս (ուղիղ ճամբայ).

Էնդէրէս. — 1 ժ. 15 վ. — Բուրդ. —
3 ժ. 30 վ. — Էղբիդէր (Աճպտեր):

ՔԱՐՏԷՍ ԻԳ. — 30 Մայիս եւ 1 Յունիս.

Էղբիդէր. — 1 ժ. 45 վ. — Սեւինդուկ. —
1 ժ. 35 վ. — Եէնի-խան. — 1 ժ. 30 վ.

— Այլմանու. — 2 ժ. — Կամեթաշ. —
1 ժ. 15 վ. — Ալտկէնդի — 1 ժ. 20 վ. —
Պուզասաձոր. — 2 ժ. 35 վ. — Ռուֆայէ:

ՔԱՐՏԷՍ ԻԴ Եւ ԻԵ. — 2 եւ 3 Յունիս.


Ռուֆայէ. — 1 ժ. 20 վ. — Զիպտի. —
50 վ. — Կոնդիլիա. — 1 ժ. 35 վ. — Մե-
լիք-Շէրիֆ. — 3 ժ. — Բաշ-Եէնի-քէոյ.
— 2 ժ. 30 վ. — Բէշ-գէօղ (Խան). — 6 ժ.
30 վ. — Երզնկայ:

ՔԱՐՏԷՍ ԻԵ. — 5 Յունիս.

Երզնկայ. — 1 ժ. 10 վ. — Վասկերա. —
2 ժ. 10 վ. — Ռուժ-Սէրայ. — 2 ժ. 50 վ.
— Սիպիկոր:

ՔԱՐՏԷՍ ԻԶ. — 6 եւ 8 Յունիս.

Սիպիկոր. — 1 ժ. — Բանդուլար. — 1 ժ.
10 վ. — Սատաղ. — 1 ժ. 30 վ. — Կի-
լիջէ. — 3 ժ. — Քէօսէ. — 2 ժ. — Ոստի-
կանատուն. — 6 ժ. 20 վ. — Գիւմրիշ-
խանէ:



Յ Ա Ն Կ Տ Ե Ղ Ե Ա Յ

(Բ. = բերդ. — Է. = զիւշ. — Է. = գաւառ. — Ը. = Լեռ. — Ժ. = զանք. — Դ. = տեղի. — Կ. = քաղաք. — տե՛ս կամ = տեսնելու. և հին կամ նոր համադր սնոււածց տեղերը)

- Աբաժալ գ. 169.
 Աբանա գ. 329.
 Աբարնէ 289.
 Ագարա գ. 259.
 Ագերոն գ. 310.
 Ագշար, Ագ Շհար եւն. տե՛ս Աղշար.
 Ագրիանէ, Ագրանէ 227—228.
 Ադալէարիզա 333. տես Ողոտեղարիզա.
 Ադրաս (= Էնդէրէս) 298, 310—311. տես Էնդէրէս.
 Ադա բ. (Փոքր Հայոց) 339.
 Աթէնք 193, 197, 208, 219.
 Ալաբա գ. 50—51 (= Ուլուբաղ).
 Ալադալէարիզա, Ալադոյէարիզա եւն 333 (տ. = Ողոտեղարիզա).
 Ալալա գ. 165.
 Ալալամ (տ. = Զալիքոս-Ղեւնոյոպոլիս) 19, 142—143.
 Ալաջա գ. 17, 32, 34—35, 37, 38, 41, 42, 67, 176. դաշտը = Հիւսէլին-Օվա 87.
 Ալաջախան գ. 336.
 Ալաջակ (-եայլա) ամարանոց 281, 282, 392. — Ալաջակ գ. 338.
 Ալարապ գ. 63.
 Ալեւի գ. 68.
 Ալթըր-Աղաջ տ. 206.
 Ալիզադի (Թաղ Զիլէի) 211.
 Ալմուշ գ. 79.
 Ալմուշագիր տ. 392.
 Ալվիրան գ. 24, 31.
 Ալտիկին գ. 185—186.
 Ալտիկնդի գ. 335, 393.
 Ախիր գ. 85.
 Ածպտեր 298, 328, 392 (տ. = Էզրիդէր).
 Ակամփսիս, Ակամնիս գետ (= Ճորոխ) 361, 372.
 Ակ-գէօյ լիճ 140—141 (= Համամիլի-գէօլ).
 Ակ-Թաշ, Ակ-Տաշ գ. 72, 94—95.
 “Ակիլիսենէ” 354—355. տես Եկեղեցի.
 Ակ-Իրմոկ (= Ուլու-Իրմակ) գետ 323. հմմտ. Ակ-սու.
 Ակշար, Ակ-Շահր, Ակշերապատ, Ագշար, Ագ-Շհար, Ագշարապատ (նաեւ = Աշկար) 321, 324, 325.

Աղար-Օղա (նաեւ = Աղար-Օղա) 298, 309, 320, 321, 327, 328, 329, 332, տես նաեւ Աշխար, Աղար.
 Աղ-Շէհիր գ. 245—246.
 Աղ-Զամամ-Մահմուտ տ. 390.
 Աղալար տ. 391.
 Աղ-սու գետ (մերձ ի Թոսխաթ) 250—251, 253, 255. — Աղ-սու (մերձ ի Բուրգ) 325. Հմմտ. Աղ-Իրմակ.
 Աղ-Տաղ, Աղ-Դաղ լ. 37, 61, 73, 147. 169, 189, 203, 228.
 Աղրոյենոս 36.
 Աղրոպոլիս (Աթէնք) 208.
 Ահէտ-Սէրայ գ. 67, 97.
 Ահէտ-Ֆակիրլի գ. 46.
 Աղիւս գետ (= Կըզըլ-Իրմակ) 13, 15, 16, 19, 60, 70, 73, 100, 101, 102, 103, 112, 115, 117, 121, 123, 124, 127, 138, 140, 141, 147, 166, 176, 231, 235, 242, 327, 340.
 Աղուանիս, Աղվանիս, Աւանիս գ. 329—330. տես Այվանոս.
 Աղրաւիս գ. 321 (= Արգաւուզ).
 Աճէ-օղու գ. 290, 392.
 Ամասիա ք. Է, 13, 15, 17, 18, 19, 20, 21, 22, 24, 25, 28, 31, 33, 39, 48, 54—55, 65, 68, 83, 87, 92, 95, 100, 117, 120, 122, 138, 142, 145, 147, 155, 158, 159, 166, 167, 169—186, 187, 188, 193, 195, 199, 200, 204, 205, 206, 209, 222, 226, 231, 252, 253, 257, 258, 351, 385, 388, 391. — Հմմտ.

Հատածներս' (Ա. § 1) Իսկելիբէ Ամասիա' 13—31. — (Ա. § 7—11) Ամասիայէ Տաւիուս' 31—39. — (Ա. § 22) Ամասիայէ Սամսոն' 67—69. — (Բ. § 7—10) «Ամասիա քաղաքը», 159—204, յտկ. § 9 «Ամասիա», 169—186. — (Բ. § 11) Ամասիայէ Չիլէ' 204—212.
 Ամասարիս ք. 198.
 Ամնափրկիչ վ. 387.
 Ամերիս գ. 278.
 Ամրոս (= Սամսոն) Է, 17, 41, 69, 131—138, 140, 143, 144, 145, 147, 158, 205, 217, 381. — Հմմտ. (Ա. § 25—26) Ամրոս-Փանարէասէնկեարիս' 69—79. — (Բ. § 1—3) «Ամրոս», 131—145: Մնացեալք տես Սամսոն.
 Ամիասի Հովիտը 105, 133.
 Այազմա (ի Տրապիզոն) 387.
 Այատ գ. 90.
 Այնալը մաղարս (յԱմասիա) 178—179, 388.
 Այն-էլ-Բորջ բ. 365.
 Այվալը գ. 47.
 Այվանուս, Այվանոս գ. 107, 329—330, 331—332, 393 (= Ողրտեղարիզա): Տես Աղուանիս.
 Այրաթեփէ գ. 213.
 Անալիբա գ. 331. — Անալիբլա 107.
 Անաղիբոսորս գ. 343.
 Անատոլիս 5, 143, 159, 172 («Նադոլիս»), 177, 190, 278, 283, 337, 341, 344.
 Տես Արեւելք, Փոքր-Ասիա.
 Անդրաս, Անդրէս, Անդրիաս (= Էնդէրէս ք.) 298,

- 310—311. Տես Ադրաս. Էնդէրէս.
- Անկիւրիա ք. եւ գւ. 27, 34, 70, 119, 120, 121, 157.
- Աննիակոս 297 (տես = Կէոյ-լու-Հիսար).
- Անուրգիա 340 (տես Մէլիք-Շէրիֆ).
- Անտանիա 288.
- Անտրակա (ի Գափիրս) 157.
- Անտրապա (= Նէոկղա-զիոպոլիս, եւ Նէապոլիս-Փաղիմնն) 14, 19, 105, 109, 110, 111, 112, 127, 157—158. Մնացեալը տես Վէզիր-Քէօփրիւ, Փաղիմնն եւնն.
- Աշաղա Նարլի գ. 102—103.
- Աշիսար գ. (= Աշկար, Ակ-շար) 321.
- Աշկար-Օվա 298, 309, 320—321 (= Ակշար) 327, 328, 329, 332. տես Ակշար.
- Ապանա գ. 329 (= Արանա).
- Ապոզանիա (յէպիւրոս) 184.
- Առաւենեան ջէրմուկք 44, 49.
- Ասար-Կալէսի բ. 177.
- Ասարջիկ գ. 85.
- Ատիա (Զառաջակողման) 138, 363.
- Ատրիք 184, 200, 216.
- Ատար գ. 142.
- Ատողիկ Լ. 242—244. տես Երլորդ-Տաղ.
- Ավտան գ. 101, 103—104.
- Ատտագենացոց ք. (Ատայ-ենացոց) 339.
- Արարիա 347, 363.
- Արամօղլու խան 350.
- Արաւրակա ք., Արաբրակա, Արաւրակացիք, 331, 340, 341, 342—344, 362. Արաւրակէ, “Հերետիկէ” գւ. 344.
- Արգաւուզ (= Աղբաւիս) գ. 321.
- Արդէոս, Արդիաս Լ. 42, 247.
- Արդինուէտա 29.
- Արդիւրոպոլիս 374. տես Գիւմիւշիանէ.
- Արդոստի գ. 276, 280, 392.
- Արդասա, Արդասէ (= Տորուլ) ք. 372, 377, 378.
- Արեզական ք. 162—163. տես Հեղինոպոլիս.
- Արեւելք 152, 166, 205, 298, 379.
- Արծաթաքաղաք (= Գիւմիւշիանէ) 375.
- Արշամաշատ ք. 289, 315.
- Արպաջիկ, Արփաճրգ գ. 300.
- Արսլան-Տողուշ գ. 248, 392.
- Արտ-Օվա, Արտիկ-Օվա 29, 55, 61, 249—250.
- Արփաճրգ գ. 300.
- Արքելայիս 27. — Արքեղայիս (Գամրաց) 157.
- Աւանիս գ. 329—330. տես Աղուանիս, Այվանոս.
- Աւղատ, Աւրհատ գ. (= Ետտնիա) 25—28, 38—39, Աւղատ Հաջի-քէոյ տես Հաջիքէոյ եւ Ետտնիա.
- Աւուջուս գ. 371.
- Ափրիկէ 346, 363, 365.
- Աֆան գ. 292, 293, 295, 392.
- Բաբալի գ. 43.
- Բարա-օղլու գ. 16.
- Բարա-օղլու-թէքէէ 37 (= Հատապ).
- Բազար-քէոյ գ. 89.
- Բաթիւհաքս, զետահազիտ, 58 (= Կալան-սու).
- Բաթման-թաշ, Բատման-թաշ գ. 248, 249.
- Բաթում ք. 108.
- Բալլերան-սու, զետ. 295.

Բահլէ գ. 293.
 Բազդաս = Պազտաս 171, 252.
 Բազլիջէ գ. 31.
 Բայազիտ-Թերեկ գ. 225, 391.
 Բանդոյար գ. 359, 393.
 Բաշ-Էէնի-բէոյ գ. 345, 393.
 Բաշ-Չիֆթլիք գ. 282—283, 284, 392.
 Բաջիլէ գ. 206, 391.
 Բասգիդարիգա բ. 333.
 Բասիլիկա Թերմա 36. տես Թերմա, Զերմուկք.
 Բատմանթաշ գ. 248, 249.
 Բարզանիստ. 340.
 Բարձր-Հայք 314, 338. տես Հայք.
 Բաֆրա (= Վազելունիս) 100. (Բ, § 2) «Բաֆրա» 138—143.
 Բերուկ գ. 30.
 Բեդսիտան (Պեաղթթոյէ) գ. 2, 245.
 Բեդիր-կալէ գ. 56, 57, 59.
 Բելլանա լ. 259.
 Բերմիսա (= Սերամիսա) 265—266.
 Բէգ-տաղ լ. 327.
 Բէշ-գէօղ գ. 350, 393.
 Բէշ-կիլիսէ գ. 377.
 Բէյ-օրդու գ. 66.
 Բիան, Բիզանա (= Ղեւն-դուպոլիս, Յուսսինիանուպոլիս) 355.
 Բիզերի (= Պիզելի) գ. եւ Վ. 80, 264.
 Բիլիկք գ. 213.
 Բիրեյ գ. 84.
 Բիւզանդեանք 6, 8, 14 եւն (չաս յաճախ).
 Բիւթանիա 114, 117, 180, 197, 199, 200, 203.
 Բիւյիւկ-Էլվիս սրբատեղի 188, 194, 202.

Բիւյիւկ-Նիֆէղ (= Տաւի-ոււմ) գ. 27, 33—34. տես Տաւիոււմ.
 Բոզդոզան գ. 32.
 Բոյուս, Բոյուս (= Վէրիսա) 55—57, 58, 59, 60, 61, 83, 225, 248, 249—250, 392.
 Բոյի, Բոյ 56.
 Բոյոյ (= Տրապիզոնպոլիս) 56.
 Բոյաղ-Քէսան-կալէ (Բուզաղ-Հիսան) բ. 93.
 Բոյաղ-քէոյ գ. 34—35, 306.
 Բոյապատ գ. 167. Բոյապատի բերքը 177. Բոյապատ 102.
 «Բոսոսա» = Բոսորա (Սնազիրոսորա) 343.
 Բոսպոր, Բոսփոր 2, 70, 104, 341, 342.
 Բորարոյ գ. 78.
 Բորզուկ գ. 241, 391.
 Բորիւղա (= Վէրիսա, Բուլուս) 56.
 Բուզ-քէոյ գ. 77, 78, 89, 90.
 Բուլգար-սու 336, 337, 338, 344.
 Բուլիման-չայ (= Սիդնես) 294.
 Բուկելարեան բանակաթեմ 45.
 Բուզդաձոր = Պուզաձոր գ. 332, 335, 393.
 Բուրգ (= Նիկոպոլիս) 105, 308, 311, 312—320, 327—328, 333, 392. «Էսկի-շէրք» 315 եւն. «Բուրք» եւն' 318—319. — Հմմտ. (Բ, § 26) կարա-Հրաբէ Բուրգ' 308—320. — (Բ, § 27) Բուրգի շրջակայքը' 320—327. — (Բ, § 28) Բուրգէ Ռուֆայէ' 328—336: Տես Նիկոպոլիս.

Բուրուն-Էփրէն գ. 46.

Բոյսորջա գ. 311.

Պարլան գ. 150.

Պաղակենէ գ. 87.

Պաղարա գ. 163.

Պաղեղն 87, 163. — Պաղեղնիտիս գ. (= Բուֆրա) «Պաղեղնիտիս» 100, 140—143.

Պաղ-Օօղա 29, 70, 126 եւն. տես Կաղ-Օօղա.

Պաղեւա ր. (= Իրորա = Թուրհալ) 9—12, 86—88, 125, 126, 205: — Հմմտ. (Ա, § 31) «Պաղեւա-Իրորա», 86—89: Տես Իրորա, Թուրհալ, Տուրիալ.

Պաղատիս 12, 2, 3, 5, 27, 32, 33, 42—43, 45, 55, 105, 106, 112—120, 138, 156, 157, 177, 219, 226. — Պաղատական Պանտոս 15, 27, 32, 45, 49, 52—55, 76, 105, 112, 13, 181, 219. տես Պանտոս.

Պամրջճրգ գ. 63.

Պամրթ 9, 157 եւն. տես Կապպադոկիա.

Պալ 56, 76, 79, 89, 90, 92, 105, 266, 267—269, 276, 281, 290, 292, 295, 298, 299, 309, 310, 311, 312, 321, 327, 333, 344, 361, 371, 372. «Պալ-գետ» Կելիիս (Քէլքիս) 267 եւն. տես Կելիիս-Իրմակ.

Պանգրա ք. (Չանգրի = Պերմանիկոպոլիս) 13, 17, 20, 27, 39, 53, 55, 112, 115, 116, 156, 163, 197—198, 199.

Պանձակ ք. 87.

Պափգա 98 եւն. տես Խաւսա.

Պարա-Հիւար 333, 371 եւն. տես Կարա-Հիւար.

Պարսի 27, 35, 39. տես Կարիսա.

Պարս-գայա գ. 142.

Պեւփուր-Էփրէն գ. 43.

Պեղաղաղ գ. 57.

Պեղասա 320 (Հմմտ. Պոգասա).

Պելակա գ. 163

Պելասիա, Պելասէա, Պելսիս, Պեղասէա գ. 162—163.

Պելի-ին, Պելին գ. 90—91.

Պելմուպէ-սու 225.

Պերմէ-Կոզնիս, Հիերա-Պերմէ 290.

Պերմանիս 306, 346.

Պերմանիկոպոլիս (= Պանգրա) 58, 197. տես Պանգրա.

Պերջանիս, Կերճանիս (= Ռուֆայէ. Հմմտ. Կարսա-գա, Մելիք-Շէրիֆ) 107, 327, 332—333, 334, 336. Պերջանիս-սու 334: — Հմմտ. (Բ, § 28) Բուրգէ Ռուֆայէ՝ 327—336. — (Բ, § 29) Ռուֆայէ Մելիք-Շէրիֆ՝ 336—344. տես նոյն անունները.

Պէլ-Պիրաղ գ. 168, 169, 391.

Պէլլինգեան գաշա 206.

Պէմիշէմըէ-թէոյ գ. 73.

Պէրլիլի գ. 373.

Պէոլ-թէոյ գ. 308.

Պէոյ-կայա գ. 242.

Պէոկ-մէտրէսէ (ի Սերաստիս) 234.

Պէօփէշմէք գ. 249, 392.

Պէօք-Պէրէ-թէոյ գ. 66.

Պըլլըլ-թէոյ գ. 80.

- Գրգըճա-Էփրէն գ. 101.
 - Գրգըճա-Սէօյիւտ գ. 61.
 - Գրգըճէ խան 206.
 - Գըլգա-սու գետ 266.
 - Գըլլաճըգ գ. 213—214
 (մերձ ի Չէլթէք). — ու-
 բիշ գ. (մերձ յԱֆան) 293.
 տես Կիշլաջուկ.
 - Գիւղէլէ գ. 310.
 - Գիւղէ-տաղ Լ. 293.
 - Գիւմէնէկ-քէօյ 80, 263.
 տես Կոմանա.
 - Գիւմիւշ գ. 122. — Գիւ-
 միւշ-Մա՛ղէն 122. —
 Գիւմիւշ - Հաջիքէօյ Ք.
 (այլ՝ Աւղատ-Հաջիքէօյ)
 121, 122—123, 166, 284.
 տես Գիւկոպէնէ.
 - Գիւմիւշխանէ (Արծաթա-
 քաղաք, Արկիւրոպոլիս)
 375—377, 393.
 - Գողասա 320 (Հմմտ. Գե-
 դասա).
 - Գունդուղ (Կիւնտիւղ) գ.
 61.
 - Գուշ-սէրայ գ. 31. տես
 «Կուսուրա».
 - Գուրուճ-չէհէրի գ. 85.
 - Գուրջու գ. 16, 84, 85.
 - Դադասա բ. 256.
 - Դաղիւբրա Ք. 14 (տես Իս-
 կէիբ).
 - Դաղիմնն (= Եւդոկիա)
 82—83 (§ 29), 126, 167,
 251, 252. — Դաղիմննի-
 տիս (= Կաղ-Օվա) 2,
 29, 70, 83—86 (§ 30),
 126, 206, 251, 257: —
 Հմմտ. (Ա, § 27—32) Կո-
 մանա եւ Դաղիմննիտիս՝
 79—89. — (Բ, 18—21)
 Վերիսա, Դաղիմնն եւ
 Կոմանա՝ 248—269. —

(Բ, § 19) Եւդոկիա (Թո-
 խաթ) Դաղիմնն՝ 251—
 256: Տես Եւդոկիա, Թո-
 խաթ, Կաղ-Օվա:
 - Դաղայասոս 325.
 - Դաղոզէ, Դաղաց գիւղ. 258.
 - Դամասկոս 192.
 - Դանէ տ. 298.
 - Դանուբ գետ 107, 149,
 205, 361.
 - Դեղոս (ի Յունաստան) 288.
 - Դենեքոէ գ. 79, 267.
 - Դեստիկ գ. 73, 94.
 - Դերսիմ 345.
 - Դէլիկիւլ-Թաշ (ի Տրա-
 պիզոն 387.
 - Դէլի-չայ 102, 206.
 - Դէլիջէ-եայլա 291.
 - Դէլիջէ-Իրմակ, գետ 33
 (= Կապադոկի գետ).
 - Դէլիջէ-սու, գետ 286—
 287.
 - Դէլի-քէօյ գ. 168.
 - Դէլիբման-սու = Տէլիբմէն-
 սու 380, 383: — Դէրմէն-
 դէրէ = Տէլիբմէն-տիբէ
 գ. 344.
 - Դէվէջի-Տաղ Լ. 48, 61,
 63, 212, 215.
 - Դէվրէնտ-քէօյ գ. եւ Դէ-
 վրէնտ-չայ գետ 122.
 - Դէրէչայ գետ 214.
 - Դէրէ-քէօյ գ. 88.
 - Դէրմէնդէրէ գ. 344. տես
 վերը.
 - Դիւկոպէնէ գւ. 120, 121—
 122, 166: — Հմմտ.
 (Ա, § 42) Դիւկոպէնէ
 եւ Պիմնիսա՝ 120—126.
 — Տես Գիւմիւշ-Հաջի-
 քէօյ.
 - Դիդիւման Ապոզոն 210,
 385.
 - Դիմուրասա գ. 88.
 - Դինդիւմնէ գւ. 140.

Պիոսկորաց տ. (ի կոմանա) 261. — Պիոսկուրեանք (բլուրք մերձ ի Սամսոն) 144.
 Պիոսպոլիս 105 (= Նէոկե-սարիա. տես նոյնը).
 Պիոսպոնտոս գւ. 19.
 Պիլիկիա գ. 188.
 Պիքիլի-Թաշ (կոթող) 130. — այլ 372.
 Պիւզ-Տաղ Լ. 280.
 Պղուկ (Տէլլ-Պուլուկ) Լ. (ի կոմագենէ) 189.
 Պողուրգա գ. 57.
 Պոլիքէ (կոմագենեայ) 189.
 Պոմանա բ. 372—373, 374, 392 (= Քէօտէ). — Պոմանա գ. (նոր) 309.
 Պոյրան գ. 150.
 Պոնա 49. տես Ետոնիա.
 Պուման-կայա Լ. 309, 327.
 Պուրալդայլ գ. 66.
 Պրակոնէս տ. (= Վիշապք) 331—332.

Եազըլը-Թաշ տ. 42.
 Եակուր գ. 167—168, 391.
 Եաղջըլար գ. 46, 47.
 Եայլաջիկ-Տաղ Լ. 80, 266.
 Եանգի, Եանգը գ. 47, 49.
 Եաւարա գ. 290.
 Եափուլտակ բ. 177.
 Եգէական ծով 217.
 Եգիպոսս 180.
 Եգոնէ 44, 62. տես Եւա-գինա.
 Եէնի-խան ք. (մերձ ի Սե-բաստիա) 58—59, 60, 225, 227, 229—230, 241, 391 (= Սիարա).
 Եէնի-խան ք. (մերձ յԱծ-պտեր) 329, 392.
 Եէնիջէ գ. 32. — Եէնիջէ-չայ գետ 17, 32. — Եէնիջէ գ. (մերձ ի Խաււսա) 98.

Եէնի-քէոյ գ. (մերձ յԷրիմի) 187. — Եէնի-քէոյ գ. (մերձ ի Պուլտաձոր) 335. — Եէնի-քէոյ գ. (մերձ ի Սեբաստիա) 391. — (Բաշ-)Եէնի-քէոյ գ. (մերձ յԵրզնկայ) 345, 393.
 Եէշիլ-Իրմակ գետ 31, 170, 171, 172, 187, 253, 264. մնացեալք տես Հերիկ.
 Ելլարգ-Իրմակ գետ 230, 241, 242, 248. — Արեւ-ելեան Ելլարգ-սու գետ 242, 245. — Ելլարգ-չայ գետ 60. — Ելլարգ-Տաղ Լ. (= Ասողիկ Լ.) 207, 240, 242, 243, 244, 245, 247, 248. — Ելլարգ-քէոյ գ. 245. — Հմմտ. (Բ, § 17) «Ելլարգ-Տաղ» 240—247. — (Բ, § 18) Ելլարգ-Տաղէ Բողլուս Եւ Թոխաթ՝ 248—251.
 Եիւկիկ-խան, իջեւան 85.
 Ելեգիա 53.
 Ելեւսիս 211.
 Եկեղեաց գւ. 337, 353—354, 359, 360. «Կեղ-ցենէ», 355. տես Երզնկայ.
 Եոզլատ ք. 17, 40, 44—45, 48, 138, 225, 226, 230.
 Եուսուֆ-օղլու գ. 245.
 Եպիւրոս 184.
 Ետոնիա, «Տոնէա», 25, 27, 28—30, 33—34, 39, 126. «Պոնա», 49. — Հմմտ. (Ա, § 4) «Հաջի-քէոյ եւ Ետոնիա», 25—31.
 Երէզ 353—354. — Երիզա 341, 348, 353—356, 361. — Երզնկայ 324, 328, 329, 335, 336, 338, 341, 348, 350—352, 352—359, 367, 393. «Արզանջան», 338. — Հմմտ. (Բ, § 28—31)

- Հայաստանի սահմանա-
 գլուխը եւ Երիզա՝ 327—
 359. — (Բ, § 30) Մելիք-
 Շէրիֆէ Երզնկայ՝ 344—
 352. — (Բ, § 51) Երզն-
 կայէ Սատաղ՝ 352—359.
- Եւազինա, Եւզոնի, Եզոննէ**
 (Հմմտ. նաեւ «Փուբա-
 զինա», 44) 33, 39, 44—
 45, 46, 49, 57, 62, 126
 (= Վերինոպոլիս). —
 Հմմտ. (Ա, § 12) Միհր-
 դատինն-Եւազինա՝ 40—
 45. — (Ա, § 13—16)
 Եւազինայէ Սերաստոպո-
 լիս՝ 45—55. — (Ա, § 20—
 21) Ջելայէ Եւազինա՝
 62—66:
- Եւզոկիա** (Թոխաթ = Դա-
 զիմն) 2, 55, 65, 70, 79,
 80, 82—83 (§ 29), 84,
 86, 87, 89, 164, 225,
 230, 240, 250, 251—256,
 351, 370. — Հմմտ. (Բ,
 § 19) Եւզոկիա (Թոխաթ)՝
 251—256. — (Բ, § 20)
 Թոխաթէ կոմաննա՝ 256—
 263. տես Դազիմնն, Դա-
 զիմնիտիս, Թոխաթ, կազ-
 Օլա.
- Եւպատորիա - Մագնոպոլիս**
 (§ 23) 91—93, 105, 127.
 տես Մագնոպոլիս, Բո-
 դազ-բէսան-կալէ.
- Եւսենէ գ.** 139.
- Եւրոպա** 346, 363.
- Եւքայիտա** (= Էլվան-չէ-
 լէրի, Թեքեքէյ) 17—
 25, 126, 135, 162—163,
 164, 165, 167, 226, 344.
 Եւիսայիտա՝ 20, 162. —
 Հմմտ. (Ա, § 3) Չորուժ
 եւ Եւքայիտա՝ 17—25.
- Եւքսինոս Պոնտոս (Սեւ-
 ծով)** 193, 197, 203, 361.
- տես Պոնտոս եւ Սեւ-
 ծով.
- Եփեսոս** 150, 158, 201.
- Եփրատ գետ** 70, 104, 107,
 186, 217, 312, 327, 332,
 344, 345, 346, 349, 351,
 355—356, 359, 360, 361 +
 382.
- Եփրատեսիա գլ.** 6.
- Եօղուն - Հիսար, Եօղնիսա**
 (= Սիւա) 49, 50.
- Եօնջալըկ գ.** 50.
- Եօրիւկ-Շէհր գ.** 281.
- Ջալիքոս-Ղեւոնդոպոլիս** (=
 Ալաշամ) 19, 142—143 -
 Ջամա տ. 49.
- Ջամար գ.** 84.
- Ջարա ք.** 311, 323—324 +
 325, 327.
- Ջեզնիան գ.** 370.
- Ջելա, այժմ՝ Ջիլէ** 19, 28,
 41, 44, 48, 49, 50, 51,
 54, 60—62, 63, 64, 88,
 113, 126, 138, 176, 206,
 209, 210, 212, 216, 217,
 219, 226, 265: — Ջիլէ՝
 61—62, 176, 204, 207,
 208—212, 213, 216, 224,
 391. — Ջիլէ-սու գետ
 207. — Ջելիտիս գլ.
 204, 206, — Հմմտ. (Ա,
 § 19) Վերիսայէ Ջելա՝
 60—62. — (Ա, § 20—21)
 Ջելայէ Եւազինա՝ 62—
 66. — (Բ, § 11) Ամա-
 սիայէ Ջիլէ՝ 204—207.
 — (Բ, § 12) «Ջիլէ»,
 208—212. — (Բ, § 13)
 Ջիլէէ Սուլու - սերայ՝
 212—218. — (Բ, § 11—
 14) Ջելիտիս եւ Սե-
 բաստոպոլիս՝ 204—224 -
 Ջէյն-էդ-գին գ. 66.

- Զհարէթ (ի կոմանա) 81.
 — Զհարէթ գ. (մերձ յԱմասիա) 185.
 Զիգանա, Զիղանա, Զղանա 369, 378—379.
 Զիղանա գ. 300, 392.
 Զիդի գ. 90, 91.
 Զիդիմենէ (Գիւնդիւմենէ) 140.
 Զիլէ, տես Զելա.
 Զիլսոր գ. 90, 91.
 Զիղանա, տես Զիգանա.
 Զիմարա 107, 331.
 Զիպտի գ. 337, 338, 340, 393.
 Զիպրահան Լ. 300.
 Զղանա, տես Զիգանա.
 Զփռնիա 252.
 Զուգոյ գ. 159—160.
 Զուգա գ. 94.
 Զուտարիմ (Ղուտարիմ) գ. 321.
 Էրիմի գ. 187, 188, 191, 201, 203, 207, 277.
 “Ինոսի Մարտկի մնահեանը”, յԷրիմի (Բ, § 10) 187—204.
 Էգրի-էօղ գետ 41, 42.
 Էգրի-կալէ գ. 103.
 Էգրիդէր 298, 328—329, 392 (= Ածպտեր, տես նոյնը). — Էգրիդէր-սու գետ 329, 332.
 Էլիմին գ. 16.
 Էլվան Չէլէրի = Թէքէլ-քէոյ 21—25, 31, 163.
 տես = Էփայխա.
 Էկիջիկ գ. 225, 228, 391.
 — քովը՝ Քիւչիւք-Էկիջիկ գ. 227—228.
 Էմերի գ. 90, 91.
 Էմեր-Սայիդ գ. 84.
 Էրդեր գ. 57.
 Էյիւկ, Էյիւկ (աւերակք) 18, 35, 121, 306.
 Էնդէրէս, Անդրաս, Անդրէս, Ադրաս (= Սու-Շէհր) 298, 308, 310—311, 324, 327, 329, 335, 336, 392.
 տես Սու-Շէհր, Անդրաս եւն.
 Էնդիս գ. 89.
 Էսկի-Եպպար գ. 34—35 (Ա, § 9 = Կարիսա?).
 Էսկի-խան (աւերակ) 347.
 — այլ (մերձ ի Սատաղ) 370 (Հմմտ. Խանտէրէ).
 Էսկի-Շէհր գ. (մերձ ի Բուրգ-Նիկոպոլիս) 313, 315, 322—323. տես Բուրգ եւն.
 Էսկի-վիրան գ. 149, 390.
 Էսկի-քէոյ գ. 31.
 Էրզէս (Մէլէք-Շէրիֆ) 340.
 Էրէսկէ գ. 290, 292.
 Էօզվիրան գ. 65.
 Էյիւկ 306 եւն. տես Էյիւկ.
 Ըլըկու Լ. 392.
 Թաթար-կալէսի գ. 152.
 Թաթար-Մուսալ գ. 145.
 Թախթալի-Տաղ Լ. 79.
 Թաշ-Քէօփրիւ գ. 2, 102, 105 (տես = Պոմպէն-պոլիս).
 Թաշ-Օվա գւ. 71, 76, 90, 92, 147 (տես = Փանարէա).
 Թաւշան-Տաղ Լ. 15, 73, 100, 101, 108, 121, 166, 169.
 Թեմիսկիւրա (= Չարչէմէ) 92, 138.
 Թերմա-Բասիլիկա 36, 40, 42 եւն. տես Աաւենեան Զերմուկք, Տէրզէլի-Հա-

- մամ. — Թերմա (Խաւսայի) 98—100, 127 եւն. տես Փաղիմննիտացւոց Զերմուկք. — այլեւայլ գիւղեր տես Չերմիկ եւն.
- Թէփէ (բլուր մերձ ի Լադիկ) 95.
- Թէքէէ գ. (մերձ ի Գիւմիւշխանէ) 372, 374 (տես Սեդիսա).
- Թէքէէ-քէոյ = Էլվան-Չէլէրի գ. 21—25, 31, 163 եւն. տես = Եւքայիասա:
- Թէքէէ-քէոյ գ. = Թէքէէ գ. (Հարսադինի մօտ) 37, 39:
- Թէքէէ-Հատապ 37. տես Հատապ, Բարա-օղլու-Թէքէէ.
- Թէքիւր գ. 47. — Թէքիւր-էօզիւ գետ 46, 47.
- Թիւս տ. 377.
- Թոխաթ ք. 82—83, 84, 126, 176, 184, 204—205, 248, 251—256, 257, 259, 260, 273, 298, 392. — Հմմտ. (Բ, § 19) Եւգոկիւս (Թոխաթ) 251—256. — (Բ, § 20) Թոխաթէ կոմաննա 256—263, Մնացեալը տես Գաղիմնն, Էւգոկիւս.
- Թուղա գ. 57.
- Թուղուբուբուն գ. 16.
- Թուրհալ, Թուրխալ (= Գաղիււա-Իբորա) 65, 83, 85, 86, 88, 126, 164, 176, 205, 258, 259. տես Տուրհալ, եւ Գաղիււա եւն.:
- Թուրքեստան 337.
- Թուրք-քէոյ գ. 293.
- Թրակիա 133, 217.
- Թօփ-Թէփէ խան 143, 145.
- Իբորա բ. 19, 56, 126. — Հմմտ. (Ա, § 31) Գաղիււա-Իբորա 86—89. Մնացեալը տես Գաղիււա, Թուրհալ, Տուրհալ.
- Իզէբիւ, յիւկ գ. 47, 48, 65. Իկիզարի բ. 52, 72, 96—97. տես կիզարի.
- Իլիուպոլիս 162—163. տես Հեղիուպոլիս.
- Իղդիղ-Տաղ Լ. 295.
- Ինիւս, Ինիւս գ., Ինան-Օվա 110—111.
- Ինի-սու, գետ եւ հովիտը 176—177.
- Ինջէ-սու գետ (մերձ ի Սեբաստիա) 60, 241.
- Ինջէ-սու գիւղ (մերձ ի Փաղիմնն) 102.
- Իշկոզան գ. 85.
- Իպսալա տ. 37.
- Իսակլի գ. 65. տես Պղեւրամիս.
- Իսկելիք ք. 13, 14, 15, 109 (= Գաղիւբրա?). — Հմմտ. (Ա, § 1) “Իսկելիք, 13—15. — (Ա, § 1—6) Իսկելիքէ-Ամասիա՝ 13—31.
- Իսկէֆսիք-Տաղ Լ. 287.
- Իստաւրոս գ. 101. — Իստաւրոս-չայ 101. — Իստաւրոս-Իրմակ 149—150. Մնացեալը տես Ստաւրոս-Իրմակ, Ստաւրոս-քէօփրիւ:
- Իրիս գետ 16, 83 եւն. տես Հիրիկ, եւ Եւշիլ-Իրմակ:
- Լարրանդա 194—195, 196, 199.
- Լադիկ 67, 68 եւն. տես Լաւոդիկէ.
- Լապպա գ. 309.

Լաւիանսենէ գւ. 96.
 Լաւոդիկէ (Պոնտական),
 Լադիկ ք. 52, 67, 68,
 72, 89, 94, 95—97, 98,
 125, 127, 147, 156,
 169. — Լադիկ-կէօլ,
 Լադիկի լիճը (= Ստի-
 փանէ) 72, 94. — Հմմտ.
 (Ա, § 35) Լաւոդիկէ՝
 95—97.
 Լ(է)թառիճ գ. 333. տես
 Լուտարարիզ,
 Լիգրիա 188.
 Լիթրիւս լերինք 276.
 Լիւկաւոնիա 177.
 Լիւկիա 106.
 Լիւկոս գետ 56 եւն. տես
 Կայլ.
 Լոկման Լ. 187, 204.
 Լուսաղբիւր (ի Տրապիզոն)
 387:
 Լուսիորմոն տ. 333.
 Լուտարարիզա տ. 333. տես
 Ողոտէդարիզա, Լէթա-
 ռիճ.
 Խաղտեաց աշխարհ 375,
 376. բանականթեմ 378.
 — Խաղիք 176—178.
 Խալրէդգրին գ. 167.
 Խանտէրէսի, Խանաձոր տ.
 370.
 Խան-քէջ գ. 85.
 Խատ գ. 84.
 Խատարի գ. 73.
 Խարղըն գ. 242, 244, 245,
 248, 391, 392.
 Խարչուտ գետ, Խարչուտ-
 իրմակ, Քարսիտէս 374,
 375, 377—378, 379.
 Խաւսա, Հազա 68—69,
 70, 71, 85, 95, 97, 98 —
 100, 101, 110, 112, 115,
 12, 121, 127, 143, 146—

147, 148, 150, 153, 159,
 390, 391. — Հմմտ. (Ա,
 § 37) «Խաւսա» 98—100.
 — (Բ, § 4) «Խաւսա»
 146—147. — (Բ, § 5)
 Խաւսայէ Վէզիր-Քէօ-
 փրիւ՝ 147—154. — (Բ,
 § 7) Խաւսայէ Մարզուան՝
 159—165. — Տես =
 «Փաղիմնիտացւոյ Զէր-
 մուկք» 98, 146 եւն.
 Խորձեան, Խորձեն 339—
 340.
 Խորոզ-Թէփէսի, Խորոս-
 Թէփէսի (ք) 176, 255—
 256.
 Խօլայ գ. 90.

Ծանաց, Ծանարաց աշխարհ
 376.

Կարալը գ. 48—49.
 Կարիրա 105, 125, 243,
 270—271, 278—279:
 Մնացեալը տես Նէոկե-
 սարիա.
 Կադի-շէհէր գ. 48, 50.
 Կազ-Օվա, Կազ-Օվա 29,
 70, 83—86, 86—87, 88.
 (Ա, § 30) 126, 251, 257,
 258. տես = Դաղիմնի-
 տիս. դարձեալ՝ Եւդոկիա
 եւ Թոխաթ.
 Կայան-սու (= Բաթիւ-
 չոքս) գետ 58, 59, 60.
 — Կայան-չայ 229.
 Կայէ բ. 41—43. տես =
 Կերկեննիս-կայէ.
 Կայէ բ. (մերձ ի Չիբրիւք)
 63—64 (Հմմտ. Պղեւրա-
 միս).
 Կայէ բ. (մերձ ի Կաւակ) 69.
 Կայէ-Հիսար, Կարա-Հիսար
 (մերձ յԷ.յիւկ) բ. 18,

- 35—37 (Ա, § 10). Հմմտ. Քարսիանոն? — Կալէ-
Հիսար-քէօյ գ. 36.
- Կալէ-քէօյ գ. 93. մերձ բ.
= Բողազ-քէսան-կալէ.
տես նոյնը, Էւպատորիա-
Մագնոպոլիս.
- Կալէջիկ գ. 30, 85.
Կալին-քէօյ գ. 60.
Կալիւմնոս 29.
Կալիանջի գ. 135.
“Կաղնի” սրբավայր 165.
Կամախ 336, 344, 346.
Կամէթաշ գ. 335, 393.
Կամուշիկ (ԳամրշՃըդ) գ.
63.
Կանակ-սու գետ 41.
Կանդիլիա գ. 337.
Կապլան (Գարլան) գ. 150.
Կապու - Կայա (Գափու-
Գայա) գ. 142 (մերձ Ի
Բաֆրա).
- Կապուտակ գետ = Կապ-
պադովկ գետ 33 (= Գէ-
լիջէ-Իրմակ).
- Կապպադովկ 33. — Կապ-
պադովկիա (= Գամիրք)
45—46, 53, 54—55, 67,
119, 138, 157, 189, 192,
197, 202, 217, 219, 221,
222, 226, 256, 266, 291,
303, 341, 343, 347, 382.
Առաջին Կապպադովկիա
գւ. 36—37. Կապպա-
դովկեան Պոնտոս 105.
Կաստամունի գւ. 124.
Կատորոյ (աւերակ) 244.
Կատիքէօյ 135.
Կարա-բաշ ամարանոց 281.
Կարա-Բուտակ-սու 107 (=
Սարրինա գետ).
Կարադէօլ լ. 292.
Կարա-թաշ գ. 286. — Կա-
րաթաշ ամարանոց 325.
- Կարալար բ. 65, 177 (Հմմտ.
Մանեգորդոս).
Կարա-կայա գ. 228—229,
391.
Կարակուղ գ. 46.
Կարա-Հիսար, Շապին-Կա-
րա-Հիսար (= Կողոնիա)
176, 289, 295, 298, 300,
301—308, 310, 311, 324,
326, 333, 371, 387, 392.
Հմմտ. Սեւքերդ, Մաւրո-
կաստրոն 301, 304. —
Հմմտ. (Բ, § 25) “Կարա-
Հիսար” 301—308. —
(Բ, § 26) Կարա-Հիսարէ
Բուրգ՝ 308—320. —
(Բ, § 24) Կէօյլու-Հի-
սարէ Կարա-Հիսար՝ 295—
301, Տես Գարա-Հիսար,
Կողոնիա.
Կարա-Հիսար տես Կալէ-Հի-
սար.
Կարա-մաղարա գ. 48.
Կարանա (= Սերաստոպոլիս)
51—52, 113, 224. տես
Սուլու-սէրայ, Սերաստո-
պոլիս.
Կարաջէվրէն գ. 325.
Կարա-Սամսոն (Հին Սամսոն)
134—138, 144. տես Ամի-
սոս, Սամսոն.
Կարավլի գ. 85.
Կարա-Տաղ լ. 69, 73, 143.
— Կարա-Տաղի գղեակը
176.
Կարա-քէօյ գ. 122.
“Կարզանիսէ” գւ. 340.
Կարիա 195, 196, 198.
Կարին 6, 126, 336, 338,
355, 370, 372.
Կարիա 17, 34—35, 39,
126. Գարսի 27, 35, 39.
— Հմմտ. (Ա, § 9)
“Էսիկ-եապար” (Կարի-
սա?) 34—35.

- Կարմեղոս Լ. 152.
 Կարս 325.
 Կարսագա, Կարսատ 107,
 331—332, 338—339,
 339—342, 344. «Կեսա-
 րիա», «Կորսագեղեցիք»,
 339. տես Մէլիք-Շէրիֆ,
 Գերջանիս.
 Կաւալի գ. 71.
 Կաւագ-չայ 206.
 Կաւակ գ. (մերձ ի Սամսոն)
 67, 68—69, 71, 97, 98,
 143, 144—145, 391.
 Կաւակ գ. (մերձ ի Սե-
 բաստիա) 229.
 Կաւկաս 249, 361.
 Կափու-Կայա (մերձ յԱմա-
 սիա) 205, 206, 228—229,
 391. — Հմմտ. Կապու-
 կայա գ. (մերձ ի Բաֆրա)
 142.
 Կեգուշ գ. 295.
 Կեղցենէ (= Էկեղեաց) 355.
 Կեննորբիոն բ. 243.
 Կեստինէ-սու գետ 284.
 Կեսարիա 17, 36, 40, 42,
 44, 48, 50, 67, 138,
 232, 269. «Մագակա Կե-
 սարէա», (Մաժակ-Կեսա-
 րիա) 49. «Կեսարիա»,
 Փոքր-Հայոց = Կարսագա
 339.
 Կերասոն 182, 186, 304,
 313, 378.
 Կերգելէ-սու գետ 248.
 Կերկեննիս-Կալէ բ. 41—43.
 տես Միհրդատիոն. Հմմտ.
 Կալէ.
 Կերճանիս 332—333, 334,
 336. տես Գերջանիս եւ
 Ռուֆայէ.
 Կերքէոյ գ. եւ վ. 169.
 Կլէկ-քէոյ բ. 176
 Կլէկիտ-Իրմակ (= Գալլ-
 գետ) 267—269, 272, 279,
 286, 287, 290, 293, 298,
 300, 308, 309, 332, 334,
 335, 370, 371, 372. տես
 Գալլ.
 Կէօղէ-Տաղ Լ. 327.
 Կէօլասա 293, 392.
 Կէօլու-Հիսար բ. եւ բ.
 (= Աննիակա) 279, 293,
 295—297, 297—298, 299,
 300, 392. — Հմմտ. (Բ,
 § 23) Նիկսարէ Կէօլու-
 Հիսար՝ 279—295. — (Բ,
 § 24) Կէօլու-Հիսարէ
 Կարա-Հիսար՝ 295—301.
 Կէօհնէ, Կէօնէ բ. 40—43,
 45, 46, 63—64, 66, 67,
 126. — Կէօհնէ-Էօղ գետ
 66. Կէօհնէ-էօղիւ՝ 46.
 — Կէօհնէ-սու գետ 41.
 Կէօնէկ գ. 150, 151, 390,
 391.
 Կէօտի-քէոյ (Քէօթիւ-քէոյ)
 գ. 66.
 Կըզլ-Իրմակ (= Աղիւս)
 123, 138, 141, 151, 231,
 235, 241. մնացեալը տես
 Աղիւս.
 Կըզլ-Տաղ Լ. 327.
 Կըկըլ-Ջուբ (ի Տրապիզոն)
 387.
 Կըրկ-Կըզար (= Խ. Կու-
 սանբ) բ. 281.
 Կթանոց գ. 321.
 Կիակա տ. 289. (Քիակա)
 303.
 Կիանդրի 13. տես Գանգրա.
 Կիզարի, Իկիզարի բ. 52,
 72, 96—97. — Կիզարա
 96—97. — Հմմտ. Լաւո-
 դիկէ.
 Կիզիջա-էվրէն, Գըզլճա-
 էվրէն գ. 101. տես Գը-
 զլճա-, նոյնպէս յա-
 ջորդքս.
 Կիզիջա-Սէօյիւս գ. 61.

Կիզիլջէ խան 206 (Գրգըլճէ).
 Կիզիլ-բէօյ գ. 80 (Գրգըլ-
 բէօյ).
 Կիլիջէ գ. 369, 370, 393.
 Կիշաջուկ, Գրշաճըգ գ.
 (մերձ ի Չէլթէք) 213,
 214. — Կիշաջուկ գ.
 (մերձ յԱֆան) 293.
 Կիպրոս 188.
 Կիջիլէ գ. 34.
 Կիրթանոց գ., Կթանոց,
 Քրդանոց 321.
 Կիւնտիւզ գ. 61.
 Կշա. գիտպոյիս 119 եւն. տես
 Նէսիզաւգիտպոյիս.
 Կոզոնիա (= Կարա-Հիսար)
 291, 297, 298, 301—308,
 311, 314. — Հմմտ. (Բ, § 25)
 «Կարա-Հիսար»,
 301—308. — (Բ, § 25—
 27) Կոզոնիա եւ Նիկո-
 պոյիս Հայոց՝ 301—327.
 տես Կարա-Հիսար.
 Կոզոնիա, Գերմէ- 290.
 Կոզոպենէ գւ. 219, 225,
 235. — Հմմտ. (Բ, § 15—
 17) Սէրաստիա եւ Կո-
 ղոպենէ՝ 225—247.
 Կոզքիս 283, 376.
 Կոմանա (Պոնտական) 28,
 29, 44, 49, 54, 79, 80—
 82, 83, 84, 85, 126,
 215, 240, 248, 256, 257,
 258, 259—263, 264, 266,
 291, 298, 314, 388, 392,
 Պոնտական Կոմանա 44,
 57, 113. նոյն՝ «Կոնսանա
 Կոնտիկա», վրիպադրեալ՝
 265. Հերոկեսարիա-Կո-
 մանա 260. արդի Գիւ-
 մէնէկ-բէօյ 80, 263. —
 Հմմտ. (Ա, § 27—31)
 Կոմանա եւ Գազիմանի-
 տիս՝ 79—89, բուն՝ (Ա,

§ 28) Կոմանա՝ 80—82.
 — (Բ, § 18—21) Վե-
 րիսա. Գազիմանն եւ Կո-
 մանա՝ 248—269. — (Բ,
 § 20) Թոխաթէ Կոմոնա՝
 256—263. — (Բ, § 21)
 Կոմանայէ Նիկսար՝ 264—
 269.

Կոնոպիոն լիճ 141.
 Կոնդիլիա գ. 337, 393.
 Կոննակա-Մաճալէ, Կորմա-
 կա-Մաճալլէ գ. 377.
 Կոպտոս 52.
 Կոսմուշ-Թէքէ 212, 391.
 Կ. Պոյիս 108, 126, 136,
 172, 252, 344.
 Կոտալ գ. 41.
 Կորգանենէ, Կորձենէ գ.
 339—340. տես Խորձեան.
 Կորնթոս 263.
 Կորսագենացոց ք. 339.
 տես Կարսագա.
 Կուանէ գ. 286.
 Կուատ-սու գետ 302.
 Կուլա (ի Լիւդիա) 188.
 Կուլայ (մերձ ի Պտերիա) 34.
 Կուլմենոս գ. 142.
 Կումիալա, Քումիալա գ.
 167, 251—258.
 Կուսուրա = Կուշ-սէրայ
 գ. 31. տես Գուշ-սէրայ.
 Կուրբա-քէօփրիւ գ. 300,
 308.
 Կուրուբունար գ. 62—63.
 Կուրուշայ գ. 215, 391.
 Կօշ-Հիսար (Գօշ-) 20. —
 Կօշ-Հիսար գ. (յարեւելս
 Սէրաստիոյ) 37.
 Հազա (ի Փորր-Հայո) 331,
 332.
 «Հազարագիւղ» 166—167,
 169. տես Քիլիսկոմանն.
 Համամ (մերձ ի Կէօճէ)

46. — տես Տերգիլի-Համամ, Գերմուկք, Չերմիկ, Թերմա եւն.
- Համամիլի-գէօյ լիճ 140—141. տես Աղ-գէօլ.
- Համփտիէ գ. 293, 294—295. տես Մէլէտ.
- Հայք 178. Առաջին Հայք 230. Երկրորդ Հայք 220, 230. — Հայկական բանակաթեմ (Արմենիական) 158, 252, 297, 304. — Հայաստան 5, 186, 219, 221, 265, 297, 302, 314, 315, 320, 333, 337, 346, 349, 352, 356, 360, 361, 382. — Հայապետ 54—55, 313. — Մեծ Հայք 7. — Բարձր Հայք 314, 338. — Փոքր-Հայք տես Փոքր. — Համա. (Բ, § 25—27) կողոնիա եւ նիկոպոլիս Հայոց՝ 301—327. — (Բ, § 28—31) Հայաստանի սահմանազրուխը եւ Էրիզա՝ 327—359.
- Հաջիրէյ գ. 16.
- Հաջիար-Տաղ լ. 71, 73.
- Հաջի-Հասան գ. 122, 123.
- Հաջի-քէօյ Աւղատի, Աւր-հատ գ. 17, 20, 25—28, 29, 30, 31, 32, 38, 38—39, 65, 122. Հաջի-քէօյի գետ՝ 38—39 (համա. Մէլիտ-էօղիւ). — Համա. (Ա, § 4) Հաջի-քէօյ եւ Էտոնիա՝ 25—31. տես Աւղատ եւ Ետոնիա.
- Հաջի-քէօյ, Գիւմիւշ-Հաջի-քէօյ ք. 121, 122—123, 284. Հաջի-քէօյի վիճակ (= Գիւկոպենէ) 166. տես Գիւկոպենէ.
- Հալգա 196 եւն. տես Խաւսա:
- Հարսաղին գ. 32, 33, 37՝
- Հատապ, Թեքէէ-Հատապ (տես Բարա-օղու Թէքէէ) 37. — Հատապ-բողաղ կիրճ 37.
- Հելադա 201.
- Հէլենոպոնտոս 18—20, 30, 62, 158.
- Հեղեոպոլիս (ի Պոնտոս), Հելիուպոլիս, Իլիուպոլիս, Արեգական քաղաք՝ 162—163 (համա. ֆիլիսոփան). Հերակղէա, Հերակլիա 117, 194, 197, 199.
- Հերակղէոպոլիս 51, 221. տես Սերասոոպոլիս.
- Հերապոլիս (Փուլեգիոյ) 288. «Հերեթիկէ», գլ. Փոքր-Հայոց 344 (= Արաւրակէ). տես Նոյնը.
- Հերոկեսարիա-Կոմանա 260. տես Կոմանա.
- Հէրէկ 71, 78—79, 80, 90—91, 94, 95, 266.
- Հէրկիւմբէդ, Հէրկիւմպէտ գ. 77.
- Հիերա-Գերմէ 290. տես Գերմէ.
- Հիլաս գ. 95.
- Հիրիկ (Իրիս, նոր՝ Եէշիլ-Իրմակ) 16, 31, 62, 73, 79, 80, 83, 86, 89, 92, 105, 112, 138, 166, 170, 171, 172, 175, 181, 183, 186, 187, 199, 204, 206, 228, 229, 256, 258, 259, 260, 264, 265, 298, 327. Վերին Հիրիկ (= Տոգուշլու-սու) 206, 265, 298. տես Եէշիլ-Իրմակ եւն.
- Հիւսէին-Ղազի լ. 212. տես Ունսուշ-գաղի.
- Հիւսէյին-Օլա 37. տես Ալաջա.

Հնդկաստան 237.

Հոռոմք 321.

Հոսան գ. 90.

Հռենոս գետ 149.

Հռետիա 205.

Հռոմ 346, 376. Հռոմէական՝ 1, 3, 13, 15 եւն (շատ յաճախ).

Ղեւնդոպոլիս-Չալիքոս 19, 142—143 (= Ալաշամ).

Ղեւնդուպոլիս - Յուստինիանուպոլիս (ի Բիզանա) 355.

Ղուտարիմ = Չուտարիմ գ. 321.

Ճորթի գետ 361, 372. Հմմտ. Ակամփսիս.

Մա'ալուժ - Սէլիս - Թեքեէ 215, 217.

Մա'դէն-կալէսի, Մա'ադուն-կալէսի, Մաղոգուն գ. 282, 285, 286, 287, 392.

Մազնոպոլիս 77, 91—93, 94, 105, 127. — Հմմտ. (Ա, § 33) "Եւպատորիա-Մազնոպոլիս." 91—93. տես Եւպատորիա, Բոզազ-քէսան-կալէ, Կալէ-քէոյ.

Մաժակ-Կեսարիա 49. տես Կեսարիա.

Մալաթիա 271. Մնացեալքը տես Մելիտենէ.

Մանաս գ., Մանաս-դերէ գետ 90, 91.

Մանեգորդոս (Գաղատիոյ) 65, 177. Հմմտ. Կարալար.

Մատուակոյ տ. 294—295. Հմմտ. Մօղասու.

Մարագուժ, Մելեկոժ (մերձ ի Սերաստիա) 240—241.

Մարգուան, Մարզիֆան ք. 9, 17, 34, 39, 68, 120—121, 148, 154, 159, 160—165, 166, 167, 169, 184, 187, 287, 391. Հմմտ. Սուլու Օվա (նշ Փաղիմն).

Մաւրոկաստրոն, Սեւերք 301, 304. տես Կարա-Հիսար.

Մեդալոպոլիս ք. 52 (112), 114. տես Սերաստիա.

Մելանթիոս գետ 292—294. տես Մէլէտ-Իրմակ.

Մելիտենէ (= Մալաթիա) 106, 107, 205, 271, 289, 314, 331, 360.

Մեծ Հայք 7. տես Հայք. "Մենաստան", անձաւ վ., Մոնաստիրի (ի Սամոն) 135, 388.

Մեսիւլա 57 (= Վերիսա).

Մեսորուէ տ. 325.

Մէլէտ գ. 294—295, 298. տես Համիտիէ. — Մէլէտ-Իրմակ գետ 292—294. տես Մելանթիոս.

Մէլէք-Շէրիֆ գ. 106, 336, 338—342, 344, 393. տես Կարսագա. — Հմմտ. (Բ, § 29) Ռուֆայէէ Մէլէք-Շէրիֆ՝ 336—344. — (Բ, § 30) Մէլէք-Շէրիֆէ Երզնկայ՝ 344—352.

Մէհմետ-բէյլի գ. 43.

Մէջիդ-էօզլու գետ 17, 32, 38 (Հմմտ. Հաջի-քէոյ գետ 38—39).

Միլեսացիք 132.

Միլէտ 211.

Միհրդատիոն, Միհրդատա. կերտ բ. 41—43, (Եւա-գիւնա) 43—45, 126. —

- Հմնա. (Ա, § 12) Միհր-
դասինն - Եւագինա 40—
45. տես Եւագինա եւ
Կերկեննիս-կալէ.
- Միգրամանա (Մարիամ-Անա)
վ. 302, 387.
- Միջագետք 205, 216. վերին
Միջագետք 289.
- Միջերկրեայ Պոնտոս 54.
- Միրոնէս տ. 89.
- Միւլասա 196.
- Մհր բլուր (= Պող-թէփէ
ի Տրապիզոն) 385—386.
- Մոնաստրի վ. (ի Սաման)
135, 388.
- Մուղալէհ գ. 46.
- Մուշալէմ - կալէ բ. 227
(Հմնա. Սիրորա).
- Մուշենից գ. 321.
- Մուրատար-սու (Սերաստիոյ)
235.
- Մօղասու, Մօղասուն տ.
295, 298 (Հմնա. Մա-
տուասիոյ).
- Յոնիա 201.
- Յունաստան 152, 186, 195.
- Յուստինիանուպոլիս (յե-
կեղեաց) 355. տես Ղեւոն-
դուպոլիս, Բիզանա.
- Նագիանդոս, Նադիանդոս
140.
- Նարլի, Աշաղա Նարլի գ.
102—103.
- Նաւատաթմոս լիճ 141.
- Ներիան-Տաղ Լ. 73, 100,
147.
- Նեապոլիս-Փաղիմն (Հմնա.
Անարապա-Նեոկղաւդիո-
պոլիս = Վէղիւր-քէօփրիւ.)
52, 105, 109, 110, 111,
113, 114, 115, 116, 119,
121, 156, 166. — Հմնա.
- (Ա, § 41) Վէղիւր-քէօ-
փրիւ 108—120. — (Բ,
§ 5) Վէղիւր-քէօփրիւ
154—158. տես Փաղիմն,
Անարապա, Վէղիւր-քէօ-
փրիւ եւն.
- Նեոկեսարիա (= Նիկոսար)
2, 28, 49, 54—55, 81,
82, 89, 91, 92, 105, 126,
232, 240, 265—266,
269—279, 290, 291, 294,
313, 314, 315, 378 =
Գիսսպոլիս, Վարբրա եւ
Սերասուէ 105, 243, 270—
271 եւն (տես Նոյնները).
— Հմնա. (Ա, § 32—42)
Նեոկեսարիայէն Աղիւս
ղևա 89—126. — (Բ,
§ 22—24) Նեոկեսարիա
եւ Պարիադրէս 269—301.
— Մնացեալը տես Նիկ-
ոսար.
- Նեոկղաւդիոպոլիս (Անարա-
պա = Վէղիւր-քէօփրիւ.)
105, 109, 110, 111, 112,
113, 119 (Աղաւդիոպոլիս);
120, 127, 143, 146, 147,
149, 156, 157, 158, 205.
— Մնացեալը տես Ան-
արապա, Նեապոլիս, Փա-
ղիմն, Վէղիւր-քէօփրիւ.
- Նեջիւր գ. 84, 85.
- Նէֆէղ գ. 27. Բիւլիւկ-
Նէֆէղ 33—34. տես
Տաւիոււմ.
- Նիկիա 158, 362.
- Նիկոմեդիա 161, 197, 199,
252.
- Նիկոպոլիս (= Բուրգ) 105,
107, 290, 291, 294, 297,
298, 309, 311, 312—320,
321, 322, 323, 324, 325,
331—332, 337, 339, 341,
342, 361. «Եսկիւէհիւր»
313 եւն (տես Նոյնը). —

- Հմմտ. (Բ, § 25—27) Կոչոնիա եւ Կիկոպոլիս Հայոց 301—327. — Սնացեալքը տես Բուրգ. Կիկոսար (= Կեոկեսարիա) շ, 70, 76—78, 79, 82, 89, 90, 91, 94, 95, 103, 105, 126, 176, 243, 264, 265, 269—279, 280, 281, 282, 298, 325, 392. — Կերսար 126, 281, 392. — Կիկոսար-սու գետ 280. — Հմմտ. (Ա, § 26) Կիկոսար 76—79. — (Բ, § 21) Կոմանայէ Կիկոսար 264—268. — (Բ, § 22) Կիկոսար 269—279. — (Բ, § 23) Կիկոսարէ Կէոյլու-Հիսար 279—295. տես Կեոկեսարիա.
- Կիկոսար-Տաղ (ի Կոմագենէ) 201.
- Կիկոսա, Գրեգոր Կիկոսացի 36, 180, 181, 235, 261, 268—269, 279.
- Կոչոնիայի գ. 334.
- Կուսիկոս 346.
- Շամիրամայ լեռ (բլուր ի Չելյա) 62, 208.
- Շապին-Կարա-Հիսար 303 եւն. տես Կարա-Հիսար եւ Կոչոնիա.
- Շէհր-սու գետ 305, 308, 332.
- Շէյթան-տէրէ կիրճ 68.
- Շէյխ - Ալի - Թէքէ 226, 227.
- Շէյխ - Մուստաֆա գ. 37—38.
- Շէյրան-սու գետ 332.
- Ողիւմպէոն (յԱթէնս) 219. — Ողիւմպոս Լ. 195.
- Ողկասիւս (Պոփղագոնիոյ) 200.
- Ողոտեղարիզա (Ազալէարիզա, Այազալէարիզա, Այազադէարիզա. Հմմտ. Բասագիտարիզա, Լուտարարիզա) 107, 331—332, 333. տես Այվանոս.
- Ոսկէքար վ. 165—166.
- Որոճուկ գ. 213.
- Որսենէ գ. 339, 371. “Որփանենէ”, 339.
- Ուլուբաղ գ. 50—51. տես Այբա.
- Ուլու-Իրմակ գետ (= Ակ-Իրմակ. մերձ ի Ջէվիզի եւ Բուրգ) 323. Հմմտ. Ակ-սու.
- Ուլու-չայ գետ 155.
- Ուլու-բէյ գ. 165.
- Ունիէ ք. եւ բ. 65, 176, 241, 270, 280.
- Ունսուն-գաղի Լ. 212 (= Հիւսէին-Ղագի).
- Ուշակի-Հիւլիւկ գ. 47.
- Չալիջէ գ. 38.
- Չակալ, Չագալ գ. 71.
- Չակալար Լ. 172.
- Չակալէ գ. 143.
- Չակիր, Չագրր գ. 98.
- Չաղանա գ. 24.
- Չամլու-բէլ, Չամլը-բէլ Լ. 58—59, 215, 225, 228, 248, 249.
- Չալին-կայա Լ. 206.
- Չանգրի 13 եւն. տես Գանգրա.
- Չատ-սու գետ 335.
- Չարչէմբէ-Օվա, Չարչամբա (= Թեմիսկիւրա) 92, 138.
- Չարսսէս գ. 85.
- Չարտակլու-բէլ Լ. 229, 344,

- 345, 347—350. — **Չար-**
տակուլ-բողաղ կիրճ 348.
— **Չարտակուլ- սու գետ**
349, 350.
- Չարտաղ** գ. 290.
- Չէլթէք** գ. (մերձ ի Զիլէ)
213, 214, 391. — **Չէլ-**
թէք-սու գետ 242.
- Չէլթիք** գ. (մերձ ի վէզիբ-
քէօփրիւ) 101, 102, 103.
- Չէրնիքէլ-սու գետ** 329.
- Չէրչի** գ. 89.
- Չէրմիկ** (մերձ ի Մա'ադուն-
կայէսի) 287, 288—290,
392. — **Չէրմիկ. Չէր-**
միւկ, Չէրմուկ (= **Չեր-**
մուկ) ալլեւալլ տեղեր
(մերձ ի Սուլու-սերայ, ի
Կարա-Հիսար, ի Կիակա,
յԱրաբնէ Միջագետաց,
վիճակ մը Տիգրանակերտի)
289—290.
- Չէրքէզ-քէոյ** գ. 66.
- Չէքէրէք-Իրմակ գետ** 30,
46, 47, 50, 51, 61, 63,
206, 218, 224, 225. —
Չէքէրէք-սու 20. տես
Սկիւլարս.
- Չիթլար** գ. 176.
- Չիչիբ** գ. 248.
- Չիրիշի-թէփէսի** Լ. 145.
- Չիֆթիք** (մուսիլիք մերձ
ի Բոլուս) 56, 224, 250,
392. — **Չիֆթիք** գ.
(մերձ ի Զիլէ) 63. տես
(ուրիշ գ.) Բաշ-Չիֆթի-
իք.
- Չորանլու-սու գետ** 332,
384, 335.
- Չորում** ք. եւ գւ. 15, 16,
17, 18, 19, 25, 29, 31,
32, 37, 45, 68, 122, 126.
- Չորում-չայ գետ** 17. —
Հմմտ. (Ա, § 3) **Չորում**
եւ Եւրայիտա 17—25.
- Չուրուկ, Չուրիւք, Չուրիկ**
գ. 63, 65, 176.
- Չուքուր-գուրջու** գ. 352.
- Պաղտատ, Բաղդատ** 252.
— «Ռուսի Պաղտատ»,
(Ամասիա) 171.
- Պամիհիւլիա** 106.
- Պանոնիա** 205.
- Պասարգադա** ք. 193, 202.
- Պարխար, Պարիադրէս** Լ.
76, 89, 90, 269, 272,
279, 286, 290 298, 376.
— Հմմտ. (Բ, § 22—24)
Նէոկեսարիա եւ Պարիա-
դրէս 269—301.
- Պարսկաստան** 192, 211.
252, 265, 324. 328, 338,
346, 373, 377. — **Պար-**
սից ծոց 344.
- Պափղագոնիա** 15, 55, 104,
105, 112, 113, 114, 115,
116, 117, 148, 155, 156,
157, 163, 165, 166, 177,
178, 193, 197, 199, 200.
203.
- Պեսինոս** 36.
- Պերգամոն** 190, 201.
- Պերիստերա** (Աղաւնի) վ.
389.
- Պիդա** 89, 127.
- Պիդեւի, Բիդբրի** գ. եւ վ.
80, 264.
- Պիլազմէտ** գ. 374.
- Պիմոլիսա** (= **Օսմանջիկ**)
100, 120, 123—126. —
Պիմոլիսա բերդը 124,
125. — **Պիմոլիսենէ** գւ.
(= **Օսմանջիկ գաղա**) 166.
— Հմմտ. (Ա, § 42)
Գիակոպենէ եւ **Պիմոլիսա**
120—126.
- Պինիմուս** գ. 290.
- Պիսիդիա** 106, 257.

Պիւքսիտէս գետ 380 (= Տէյիբմէն-սու.)

Պղեւրամիս, Պղեւմարիս
(«Պտեմարիս») 63—65,
87, 129, 176. Հմմտ.
Խոակիլի, Կալէ.

Պոզանդոս 36.

Պող-Թէփէ (ի Տրապիզոն)
385—386, 387. տես
Մհեր-բուր.

Պողեմոնական Պոնտոս 54—
55, 105, 113, 313. տես
Պոնտոս.

Պողեմոնիում բ. 270, 295,
297, 314, 382.

Պոմպէոպոլիս 2, 102, 105,
113, 114, 115, 117. տես
Թաշ-քէօփրիւ.

Պոնտոս 1—5, 13, 15, 28,
40, 42, 54—55, 74, 84,
86, 104, 114, 115, 125,
129, 131, 136, 138, 148,
157, 161, 165, 166, 169,
172, 173, 178, 182, 184,
186, 193, 194, 197, 199,
200, 202, 203, 219, 222,
226, 232, 243, 247, 254,
256, 267, 270—274, 278,
282, 283, 291, 292, 303,
307, 313, 315, 337, 356,
374, 375, 381, 382—583,
388. — Պոնտապետու-

թիւն 54—55. — Պոն-
տական քաղաքներ, ուղիք,
վարչութիւնք 105—108,
112—120. — Պոնտական
կրմանա, Լաւողիկէ եւն
44, 52, 56, 57, 113,
265 եւն (տես իւրաքան-
չիւրը). — Պոնտական
տորմիղ 382—383. — Մի-
ջերկրեայ Պոնտոս 54—55.

— Վաղատական Պոնտոս
15, 27, 32, 52—55, 76,
105, 112, 113, 181, 219.

— Կապպադովկեան Պոն-
տոս 105. — Պողեմոնա-
կան Պոնտոս 54—55, 105,
113, 313. — Գիոսպոն-
տոս, Հիլենոպոնտոս՝ տես
նշմները. — Պոնտոս
Էւքսինոս (= Սել Մով)

193, 197, 203, 361.

Պուղտաձոր գ. 332, 335,
393.

Պտեմարի = Պղեւմարիս 62,

64. տես բուն՝ Պղեւ-

րամիս.

Պտերիա 34, 121.

Պրիւմեստոս 36.

Ջանալուսուոր 352.

Ջերմուկ, Չերմուկ գ. (մերձ
ի Սուլու-Սէրայ, Կարանա)
224, 225. — Չերմիկ,
Չերմուկ, Չերմիկ՝ այլ-
եւայլ տեղեր տես Չերմիկ.
— Ջերմուկ մերձ յԱր-
փաջիկ 300. — Արբուշի
Ջերմուկք 36, 40, 42 եւն.
Առաւելեան Ջերմուկք
44 եւն (տես Բասիլիկա
Թերմա, Թերմա, Տեր-
ղիլի-Համամ). — Փաղի-
մոնիտալոց Ջերմուկք
98—100 եւն (տես Խաւ-
սա, Փաղիմոնիտիս). —
Կէօհնէի Ջերմուկ 46 (տես
Համամ).

Ջէվիզի գ. 323.

Ջէվիզիի ք. (= Վիկեսի-
մում) 380.

Ջէրդիլէր գ. 280.

Ջինջիֆէ-քէջ գ. 80.

Ջիվէլի գ. 336.

Ռիգա, Ռիզենա 333.

«Ռոզմոր» (= Տրոկիմացիք)
44.

Ռուսի Պաշտօն, 177 (Ա-մասիս) .
 Ռուսիայի ջակ-թաշ 392 .
 Ռուսներայ գ. 358, 393 . —
 Ռուսներայ-սու 358 .
 Ռուսներին գ. 48 .
 Ռուսաստան 326 .
 Ռուսֆայե (= Գերջանիս, Կերճանիս) 327, 332—333, 335, 338, 339, 393 . —
 Հմմտ. (Բ, § 28) Բուրգե
 Ռուսֆայե 327—336 . —
 (Բ, § 29) Ռուսֆայե
 Մէլիք-Շէրիֆ 336—344 .
 տես Կերջանիս .
 Սարանէս գ. 153 .
 Սարրինա գետ 107 (= Կա-
 րա-Բուրգա-սու) .
 Սաղիւղինս բ. 100, 127 .
 Սայիթ գ. 97 .
 Սաղամինա (Կիպրոսի) 188 .
 Սամնատ 336, 360 .
 Սամոն 2, 17, 31, 32,
 40—41, 48, 55, 67, 68,
 69, 97, 131—138, 139,
 143, 144, 145, 151, 159,
 388 . — Կարա-Սամոն
 134, 144 . — Հմմտ. (Ա,
 § 22) Ամասիայե Սամոն
 67—69 . — (Ա, § 23—
 26) Ամիսոս-Փանարէա-
 Նէոկեսարիա 69—79 . —
 (Բ, § 1—3) Ամիսոս 131—
 145, յտկ. (Բ, § 1) Սամ-
 սոն 131—138 . (Բ, § 2)
 Բաֆրա 138—143 (Բ, § 3)
 Սամոնէ Խաւսա 143—
 145 . Մնացեալը տես Ամի-
 սոս .
 Սանդալ գ. 188 .
 Սասերա գ. 80 .
 Սատաղա, Սատաղ 2, 101,
 106, 107, 149, 279, 314,

328, 331—332, 341, 342,
 353, 359—369, 371, 376,
 382 . — Սատաղ 332,
 352, 353, 359, 367—369,
 370, 372, 393 . — Սա-
 տաղ-չայ 366, 369, 372 .
 — Հմմտ. (Բ, § 31) Եր-
 ղնկայե Սատաղ 352—359 .
 — (Բ, § 32—34) Սա-
 տաղա եւ Տրապիզոն 359—
 389, յտկ. (Բ, § 31)
 Երզնկայե Սատաղ 352—
 359 . (Բ, § 32) «Սա-
 տաղ» 359—369 . (Բ,
 § 33) Սատաղե Տրապիզոն
 369—380 .
 Սարարբակա 343 .
 Սարալոս, Սարալիոս 44—
 45, 49 .
 Սարիանէ, Սարու-Էէրի գ.
 245 .
 Սարին գ. 258 . Հմմտ. Սա-
 ւոն .
 Սարիշէլիս գ. 37 .
 Սարուծար, Սարուջար տ.
 326 .
 Սարուջա-Իրմակ գետ 311 .
 Սաւոն գ., Սարին 258 .
 Սաւրոմիսենա տ. 294 .
 Սերաստէ (Նէոկեսարիա)
 105 .
 Սերաստիա, Սըւաղ 6, 9,
 37, 40, 41, 46, 48, 55,
 56, 79, 82, 138, 205,
 217, 218, 219, 220, 225,
 226, 228, 230, 231—240,
 241, 242, 247, 248, 250,
 252, 255, 258, 271, 280,
 287, 295, 296, 311, 314,
 323—324, 327, 335, 336,
 338, 355, 364, 391 . —
 Սըւաղ 9, 234 . — Մե-
 զալուպոլիս 52, 113—114 .
 զւ. տես Կողոպենէ . —
 Սերաստիոյ լիճը 236—

238. — Հմնտ. (Ա. § 18) Սիարայէ Սերաստիա 58—60. — (Բ. § 15—17) Սերաստիա եւ Կողոպենէ 225—247. յտկ. (Բ. § 15) Սուլու-Սէրայէ Սերաստիա 225—231. (Բ. § 16) Սերաստիա 231—240. (Բ. § 17) Երլուղ - Տաղ 241—247.
- Սերաստոպոլիս (-Կարանա, Հերակղէոպոլիս = Սուլու-Սէրայ) 28, 29, 41, 44, 46, 48, 49, 50, 51—55, 56—57, 58, 61—62, 113, 126, 204, 212, 215, 216, 217, 218, 219, 220—224, 226, 227, 233. — Հմնտ. (Ա. § 16) «Սերաստոպոլիս» (Չրաբերդ, Սուլու-Սէրայ) 51—55. — (Ա. § 17) Սերաստոպոլսէն Սերաստիա 55—60. — (Բ. § 11—14) Չելիտիս եւ Սերաստոպոլիս 204—224. յտկ. (Բ. § 13) Չիլէէ Սուլու - Սէրայ 212—218. (Բ. § 14) Սուլու-Սէրայ 218—224. — (Բ. § 15) Սուլու-Սէրայէ Սերաստիա 225—231. — Տես Կարանա, Հերակղէոպոլիս, Սուլու-Սէրայ.
- Սեդիսա 374. տես Թեքեէ.
Սերամիսա, Բերմիսա 49, 265—266. տես Օմալա?
Սերմուսա 48—50, 126, 266 (= Քիլիսէ - քէոյ?) — Հմնտ. (Ա. § 14) «Սերմուսա» 48—50.
- Սեւ-բերդ, Մաւրոկաստրոն 301, 304. տես Կարա-Հիսար.
- Սեւինդուկ, Սէվինտիկ գ. 329, 392.
Սեւ Շուլ 41, 70, 193, 205, 292, 344, 360, 361, 376, 381. տես Պոնտոս Եւքսինոս.
Սէպէտլի-չայ, Սէփէթլի-չայ գետ 73. — Սէպէտլի-սու գետ 89, 94. — Սէպէտլի կիրճ 95.
Սէրայ գ. 33, 37.
Սիարա, «Սիմոս» 58—60, 126, 227, 229—230. — Հմնտ. (Ա. § 18) Սիարայէ Սերաստիա 58—60. տես Եէնի-խան.
Սիբերիա 337.
Սիբերիս գետ 77.
Սիբորաբ. 227 (Հմնտ. Մուչայլէմ-կայէ).
Սիդենոս գետ 294 (= Բուլիման-չայ).
Սիլիս, Սիլիս գ. (մերձ Ի Սուլու-Սէրայ) 61, 214, 391.
Սիլիկ կիրճ 31.
Սիման-կէօլ լիճ 285.
Սիմա-սու գետ 293.
Սիմոս (= Սիարա) 58, 227. տես Սիարա.
Սինայի Լ. 244.
Սինոպ ք. 19, 132, 140, 181, 297, 381, 385.
Սիներուա տ. 331.
Սիպիկոր գ. 359. — Սիպիկոր-Տաղ Լ. 358—359, 361, 393.
Սիվրի-Թէփէ Լ. 326, 327.
Սիվրի-Հիսար 36.
Սիվրի-քիլիսէ գ. 153.
Սիւա (= Եօղուն-Հիսար) 49—50.
Սիւ կէոն 77.
Սիւլթոպոլիս 301, 315.

Սկիւլաքս գետ 24, 47, 62, 63, 206, 218, 222. տես Չէքէրէք-Իրմակ.

Սորգա գ. 374.

Սորկուն գ 46, 66.

Սորուջա գ. 295.

Սուխա կայան 331, 341.

Սուլէյման-քէոյ գ. 149.

Սուլու-Սէրայ 46, 50, 51—55, 56, 62, 217, 218—224, 225, 226, 250, 391. — Հմմտ. (Ա, § 16) Սեբաստոպոլիս (Սուլու-Սէրայ) 51—55. — (Բ, § 13) Ջիլէէ Սուլու-Սէրայ 212—218. — (Բ, § 14) Սուլու-Սէրայ 218—224. — (Բ, § 15) Սուլու-Սէրայէ Սեբաստիա 225—231. տես Սեբաստոպոլիս.

Սուլու-Օջա 20, 67, 120—121, 159, 165, 166—169, 187. — Հմմտ. (Բ, § 8) Սուլու-Օջա 166—169. տես Քիլիկիանն.

Սուսելա գ. եւ Վ. 387, 389.

Սուսիսա գ. 89, 93—94, 127.

Սու-Շէհիր ք. 310, 312, 329, 334—335 (տես Էնգերէս). — Սու-Շէհիրու գետ 334.

Սուսա-ուչ, Սուսազուճ գ. 99—100.

Սուսա չամ-չայ գետ 97, 143. տես Տէրասկան-սու.

Ստարուլուճ կայան 49, 57, 265—266.

Ստաբոս-Իրմակ գետ 149—150, 151, 152, 153. — Ստաբոս-քէօփրիւ.

Ստաբոյ-քէօփրի. գ 50, 390—391. տես Իստաբոս գ. 101. Իստաբոս-չայ 101. Իստաբոս-Իրմակ 149—150.

Ստիփանէ յիճ՝ 72, 94. տես Լադիկ-կէօլ.

Վասելոն Վ. 389.

Վասկերտ. Վասակներտ գ 358, 393.

Վարազ գ. 89.

Վարատոյի գ. 150, 151.

Վարիմա գ. 258.

Վենասա (Գամրայ) 189.

Վերինոպոլիս 45, 126. տես Լադիկ.

Վերիսա (= Բոյուս) 55—57, 83, 126, 249—250. Բորիւզա. Վորիւզա. Սեպիւս 56—57. — Հմմտ. (Ա, § 17) Վերիսա 55—57. — (Բ, § 18—21) Վերիսա, Գազիմն եւ Կոմանն 248—269. տես Բոյուս.

Վէզիր-քէփրիւ (= Անտրապա-Նէոկղաւդիոպոլիս. եւ մերձաւոր Փազիմն-Նէոպոլիս) 14, 19, 98, 99, 100, 105, 108, 109, 111, 120, 143, 147, 150, 151, 154—158, 160, 167, 89. — Հմմտ. (Ա, § 41) Վէզիր-քէօփրիւ 108—120. — (Բ, § 4) Խաւսայէ Վէզիր-քէօփրիւ 147—154. — (Բ, § 5) Վէզիր-քէօփրիւ 154—158. Տես Անտրապա, Նէոկղաւդիոպոլիս. Նէոպոլիս, Փազիմն.

Վերմիչ գ. 204.

Վիկեսիմուճ կայան (տես Ջէվիզիկ) 380.

Վիչապ կայան 331—332. տես Գրակոնէս.

Վիչապի-աղբիւր (ի Տրապէզոն) 387.

Վորիւզա 56. տես Վերիսա.

Տախտան 213. 377.
 Տաճրա-Հասան գ. 33—34, 39. տես Տաճրա.
 Տանին գ. 38.
 Տաւրուժ (= Բիւրիւկ-Նէ-Փէղ) 27. 28. 32. 33—34. 38—39. 40. 43. 44—45. 55. 58. 120. 138. 219. 226. 228. 266. — Հմմտ. (Ա. § 8) Տաւրուժ 32—34. տես Նէ-Փէղ.
 Տաւրարս բ. 290. տես Տաւրարս.
 Տաւրա կիրճ (Մերձ Ի Սե-րաստիւ) 239—240. 242. 254. 388. — Տաւրա սու-զեա 235. 240.
 Տաւրիս 357.
 Տաւրլա գ. 290. տես Տաւ-րարս բ.
 Տաւրու լ. 184. 346. 355.
 Տաքնա գ. 151. 153. 89. 381.
 Տեփրեկէ (Տեփրեկ) 238
 Տէլ-Գաւուկ (= Գղուկ կամազնեայ) 189.
 Տէլիբաճն-սու. (= Պիւքսի-տե.) 389. 383.
 Տէլիբաճն-տեքէ. Գէրմն-դէրէ գ. 344
 Տէրգիւն-Համաժ գ. 40—41, 42. 44. 49—50. տես Բա-սիլիկա Երեքտա. Առաւե-նեան Զերմուկք.
 Տէրեքոյան գ. 38.
 Տէրսական - սու. գեա (= Սուսաչամ-չայ) 67, 97. 98. 143. 159. 170. 183.
 Տէրսուն'ա. 332.
 Տիւնա 259.
 Տիրաքնուցիք 376.
 Տիգրանակերտ 252.
 Տեփրեկ (= Տեփրեկէ) 234. 238.

Տիտուս գ. 154.
 Տիբերոյի ք. 378.
 Տոգունլու-սու. գեա (= Վե-րին Հիբրեկ) 206. 298. տես Հիբրեկ.
 Տոճրա կայան 33—34. 39. 44—45 (= Համրա-Հա-սան).
 Տսմեա գ. 372.
 Տսնէա տես Ետանիա.
 Տսոխա գ. 121.
 Տորուլ գւ. եւ ք. (= Ար-գասա) 377. 378.
 Տուա գ. 16.
 Տուրճալ. Տուրխալ 19. 56. 65. 83. 85. 86. տես Թուրճալ. Գաղիսա-իրորա.
 Տուրակուրդ - Իրմուկ գեա 132.
 Տուրնուկ գ. 168. 391.
 Տրապիզոն 6. 297. 306. 307. 313. 358. 360. 371. 373. 376. 377. 379. 380—389. — Տրապիզա 380. — Տրապիզոս 383. — Հմմտ. (Բ. § 32—34) Սատաղա եւ Տրապիզոն 359. 389. յակ (Բ. § 33) Սատաղէ Տրապիզոն 369—380. — (Բ. § 34) Տրա-պիզոն 380—389.
 Տրապիզոսոյիս (= Բոլոյ Գալլ զեաոյ յիւսյ) 56.
 Տրակմացիք 42. 44—45. Հմմտ. «Ռոպմոր».
 Փաղիման (= Նէապոլիս. մերձ՝ Անտարպա-Նէսկ-ղաւդիոպոլիս = Վէրիք-քէօփրիւ) 52. 109. 110. 111. 112—120. 121. 127. 147. 156. 160. 166. 167. — Փաղիման-Նէսկղաւ-

- գիտադրիս (Ինկղիթ՝ Ան-
 տրապոս - Փազիման) 109—
 120, 147 և. ն. — Փազի-
 մանիտիս գ. 72—7 94—
 96, 100, 109, 112, 113,
 116, 147, 153, 156, 157,
 159, 164. — Փազիմանի.
 տաղիք 111, 112, 116,
 146, 155. — Փազիմանի-
 տացւոց Զերմն. կք. Փա-
 զիմանեան թ. երմն (=
 Խաւսա) 98—100, 110,
 112, 127, 146—147 տես
 Խաւսա, թ. երմն. — Հմմտ.
 (Բ, § 4—6) "Փազիմանի-
 տիս. 146—158. (Բ, § 4
 տես Խաւսա. Բ, § 5—6
 և. Ա, § 41 տես Վեգիթ-
 քլօփրիս. տես գարսնեալ
 Անտրապոս, Նեկապոլիս,
 Նեկապոլիս (Գիտադրիս).
 Փանարեա գ. 29, 69, 71,
 76, 147, 267, 276. —
 Հմմտ. (Ա, § 23—26)
 Ամրոս - Փանարեա - Նեո-
 կեաորիս 69—79 տես
 Թաշ - Օփա.
 Փառնակեան Մէն 278.
 Փասիս 388.
 Փարզանիս գ. 340.
 "Փիարա" (Սիարա) 59.
 Փիշիշ - կայէ բ. 177.
 "Փուրազինա" 44 տես
 Էլազինա.
 Փոքր-Ասիա 6, 59, 95, 104,
 125, 141, 156, 176, 177,
 178, 194, 197, 199, 206,
 208, 217, 219, 227, 232,
 238, 240, 276, 284, 289,
 298, 306, 337, 360, 368,
 373, 382.
 Փոքր-Հայք 1—2, 4, 54—
 56, 106, 129, 131, 291,
 313, 339, 343, 361. —
- Հայապետ Փոքր - Հայք
 54—56, 313, տես Հայք.
 Փոխ. գիտ 110, 133, 177,
 288, 290.
 Քաղեան 306.
 Քաղիս 313.
 Քաւասուն Կաւասոյ բ.
 (=
 Կրկնգրաբ) 281.
 Քարո. անտերայ գ. 57.
 Քարսիանուն բ., Քարսեան
 բանակաթեմ 36, 45, 227.
 Քարսիտես գ. 374. տես
 Խարշուս.
 Քէլիքիս գետ 268 և. ն. տես
 Գալլ գետ, Կէլիքիս-Իր-
 մակ.
 Քէհեյլիս ամառանոց 291.
 Քէսթանէ - սու 284 (=
 Կեւ.
 տիւն - սու).
 Քէսիք - քեօփրիս կամ Բք.
 մերձ յԻգեթի. ի. կ. և Կա-
 բայլ 48. — Այլ մերձ
 Ի Չարուկ 65—66.
 Քէօթիս - քեօյ գ. 66.
 Քէօտ գ. 369, 371—372,
 373, 374 (=
 Գոմանա).
 Քէօտ - տաղ Լ. 373 (Քէօտի
 և Գեթիլիի միջեւ). —
 Քէօտ - տաղ Լ. (Չարուսի
 հարաւակաղբ) 32.
 Քէօտ - էյիբ գ. 30.
 Քիակա տ. 303 (=
 Կիակա
 287).
 Քիլիսկոման գ. 67, 163—
 164, 166, 167, 169, 193.
 — "Քիլիսկոման" 163.
 տես Սուլու - Օփա.
 Քիլիս - քեօյ գ. 49, 50.
 Քիւշի. կ. Էլիլիկ գ. 227—
 228. Հմմտ. Էլիլիկ.
 Քուսիարա, Կուսիարա գ.
 167, 267—268.
 Քուտուրա վ. 374.

Քուրա-քէոյ գ. 336.

Քրդանոց գ. 321. տես Աիր-
թանոց, Կ(ր)թանոց.

Քօշ-օղու գ. 153.

Օկտապ գ. 79, 266.

Օմայա գ. 79, 80, 264—
265, 266, 392. Հմմտ.

Սերամիսա.

Օսման-փաշա-թէքէ 41.

Օսմանջիկ ք. 20, 121, 128—
126. — Օսմանջիկ գաղա

166. տես Պիմոյիսա ր.
եւ Պիմոյիսենէ գ.

Օրդու, Օրտու ք. 295—
296.

Օրթա-էվրէն գ. 59.

Օրթա-քէոյ գ. (Ի Կաղ-
Օվա) 85. — Օրթա-քէոյ
գ. (մերձ յԱծպտեր) 329.

Օրտակլար գ. 101.

Օփլիմոս Լ. 276.

Յէրէնգի գ. 90.



- ԿԱ. Մեճեկիչեան Հ. Գ. Ժ. Վ., Հայերէն լեզուի
 ուղղագրութեան խնդիրը: 1910: էջ 73: Ֆր. 1.—
- ԿԲ. Գիւտեքոյ Կ., Բիւզանդիոն եւ Պարսկաստան
 եւ անոնց դիւանագիտական եւ ազգային-իրաւա-
 կան յարաբերութիւնները Յուսիսիսիանու ժամա-
 նակ: Թրգմ. Հ. Հ. Համբարեան: 1911: էջ Ը+162:
 Ֆր. 2.50
- ԿԳ. Սամուէլեան Խ., Մխիթար Գօշի Դատաս-
 տանագիրքն ու ինչ Հայոց քաղաքացիական իրա-
 ւունքը: 1911: էջ ԺԲ+344: Ֆր. 5.—
- ԿԴ. Առաքելեան Հ., Պարսկաստանի Հայերը, նրանց
 անցեալը, ներկան եւ ապագան: Ա. 1911: էջ Ը+97:
 Ֆր. 1.50
- ԿԵ¹. Յովնանեան Հ. Ղ. Վ., Միջնադարեան ազ-
 գային տաղաչափութիւն ուսմական. էջ 1-48:
- ԿԵ². Ալիանեան Հ. Ն., Յովնաթան Նաղաշ եւ Նաղաշ
 Յովնաթանեանք եւ իրենց քանաստեղծական եւ
 նկարչական աշխատութիւնք: 1911. էջ 49-117:
 Ֆր. 1.50
- ԿԶ. Մեճեկիչեան Հ. Գ. Ժ. Վ., Գրիգոր Մա-
 գիստրոսի «Գամագտականի», ամբողջական լու-
 ծումը: 1912: էջ ԺԱ+162: Ֆր. 1.50
- ԿԷ. Գաբրիէլեան Դ. Ս., Ակնայ Գա-
 ւառարարաւոր եւ Արդի Հայերէն լեզուն: 1912:
 էջ Է+416: Ֆր. 6.—
- ԿԸ. Մարկոսարտ Պրոֆ. Դ. Ս. Յ., Պատմութիւն
 Հայերէն նշանագրերու եւ վարուց Ս. Մաշթոցի:
 Թրգմ. Հ. Ա. Վարդանեան: 1913: էջ Է+59:
 Ֆր. 1.50
- ԿԹ. Աճառեան Հ., Հայոց գրերը, ընդ մամուլ:
- Հ. Մաթիլեան Հ. Ա., Անանունը կամ Կեղծ-
 Սեբէոս, քննական ուսումնասիրութիւն: 1913: էջ
 Է+91: Ֆր. 1.50
- ՀԱ. Թորգոմեան Տ. Վ. Յ., Երեմիա Չէլէպիի Քէօ-
 միւրճեան Ստամբուլոյ Պատմութիւն: 1913: էջ
 ԼԵ+412: Ֆր. 5.—
- ՀԲ. Վարդանեան Հ. Ա., Դասական մանր քնա-
 գիրներ եւ ձեռագրական համեմատութիւններ, Ա: :
 1913: էջ Ը+155: Ֆր. 1.75

- ՀԳ. Մարկոսյանի Պրոֆ. Դկտ. Յ., Հայ Բազրատունեաց Ծիղազրութիւնը ծանօթութիւններով: Թրգմ. Հ. Մ. Հապոզեան: 1913: Էջ 68:
- ՀԳ. Մարկոսյանի Պրոֆ. Դկտ. Յ., Վրական Բազրատունեաց ծագումը: Թրգմ. Հ. Մ. Հապոզեան: 1913: Էջ 69-150: Ֆր. 1.75
- ՀԴ. Վարդանանի Հ. Ա., Բառաքնական դիտողութիւններ, Ա. 1913. Էջ 120: Ֆր. 2.-
- ՀԵ. Գիւտեքոբ Կ., Հոովմէական Հայաստան եւ հոովմէական սատրապութիւնները Դ-Զ դարերուն: Թրգմ. Հ. Միրտիչ Վ. Նորշում: 1914: Էջ Է+94: Ֆր. 1.20
- ՀԶ. Վարդանանի Հ. Ա., Բառաքնական դիտողութիւններ, Բ. 1914: Էջ 104: Ֆր. 2.-
- ՀԸ. Սրապեան Հ. Ի.՝ Ս. Յակոբ ազգային հիւանդանոց: 1915: Էջ ԻԳ+477: Ֆր. 6.-
- ՀԹ. Գալեմբեարեան Հ. Գր. Ժ. Վ., Կենսագրութիւններ երկու հայ պատրիարքներու եւ տան եպիսկոպոսներու եւ ժամանակին հայ կաթողիկեայր: 1915: Էջ Ը+384: Ֆր. 4.-
- ՀՁ. Դաւիթ-Բեկ Մ. Ս., Արաքիքի զաւտարարաց: 1919: Ֆր. 5.-
2. Տաշեան Հ. Յ. Վ., Արշակունի դրամներ. Ա: 1919: Ֆր 3.-
- 2Ա. Տաշեան Հ. Յ. Վ., Պնտական Ուսումնասիրութիւնը: Ման Ա: Հետազոտական ուղեւորութիւն ի Պնտոս. Յ. Գ. Կ. Անդերսընի: Ման Բ: Ուղեւորութիւն նախօսական հետազոտութեան ի Պնտոս եւ ի Փոքր-Հայս Փր. եւ Եւզ. Կիւմն Եղբարց: 1919: Էջ Է+420: Ֆր. 6.-
- 2Բ. Փեղեաթեան Հ. Պ., Յուցակ Երոպական-Հայկական հրատարակութեանց 1896-1910: 1919: Էջ 273: Ֆր. 2.50
- 2Գ. Գալեմբեարեան Հ. Գր. Ժ. Վ., Նորագոյն աղբերք Եզնիկայ Կողբացոյ: 1919: Ֆր. 2.50
- 2Դ. Խաչաթեան Բ., Արաքցի մատնագրեր Հայաստանի մասին: 1919: Ֆր. 2.-
- 2Ե. Տեք-Պողոսեան Գր., Նկատողութիւններ Փաւստոսի պատմութեան վերաբերեալ: 1919: Ֆր. 2.-



